

Google


THE UNIVERSITY OF MICHIGAN
LIBRARIES
1817



Muradeantz Melkisedek
Patmut…

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ

Ի

Մ. ՎԱՐԴԱՊԵՏԷ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ
ՅԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒԽՏԷ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ
ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱՒ
ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
Տ. ԵՍԱՅԵԱՅ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ
Տ. ՄԿՐՏՉԻ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՐՈՒՍԱՂԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
1872

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՀՈԳԻՈՑ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԾՆՈՂԱՑ ԻՒՐՈՑ

ԵՐԱՄԱՑ ԵՒ ՀՌԻՓՍԻՄԵԱՑ

ԵՒ ՀՕՐԵՂԲՕՐ ԻՒՐՈՑ

ԿԱՐԱՊԵՏԻ

ՏՊԱԳՐԵՑԱՒ ՄԱՏԵԱՆՍ

ԱՐԴԵԱՄԲՔ

ԲԱՐԵՊԱՇՏ ՄԱՀՏԵՍԻ ԿԻՐԱԿՈՍԻ

ՔԱՐՈՒԿԵԱՆՑ ԲԻՆԿԵԱՆՑԻՈՑ

ՅՕԳՈՒՏ ԵՒ Ի ՊԱՅԾԱՌՈՒԹԻՒՆ

ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այլ մեք մխիթարեսցուք․ քանզի եթող մեզ շնորհք զթութեանն Քրիստոսի զսուրբ Եկեղեցին Հայաստանեայց, զսուրբ կենդանութեան և անբիծ աղաւաղման անձման ուղղքութեան, զկայան միջա, զշառաւեղեալն յանախա արժանոյն և զպատկերեալն ՚ի նմին իսկ ՚ի Փրկչէն ։

Միխայէլ Ասորի․ Ի ճառին Քահանայութեան ։

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ առաքելական սուրբ Եկեղեցւոյ պատմական կեանքն, որ, իւր նախնականութեամբ և բազմադարեան արիական նահատակութեամբ, մեծ և նշանաւոր տեղ կը գրաւէ հանուր Քրիստոնէութեան մէջ, խիստ սակաւ ուսումնասիրուած է իր բաղձնին մտադրութեամբ ։ Հայաստանեայց Եկեղեցւոյ քրիստոնէական զինուորութեան պատմութիւնն, որ իւրաքանչիւր Հայ զաւակի համար ամենակարեւոր ուսումն պիտի լինէր, տակաւին և ոչ ուսանելեաց կար-

գրի՛ն անցած է Ազգային Ժողովոյ մէջ ։ Նոյն
ատենուր անտարբերութիւնն փարատեց այդ են
գրաւած էր մեր ուշադրութիւնը ։ Ու ահա ,
երբ 1867 ին միջնակերպաւ մեզ, Ս. Նշան այս
Վան անդրանորդ Վարժարանի մէջ , կրթա-
կան ու ամենից դաստիարակութեան պաշտօն մա-
րեկ , անհրաժեշտ պարագայ համարեցինք ։ Թէ՛
՚ի սէր մայրենի Լեզուին ալ և թէ՛ ՚ի սէր Վա-
ռանց ուսոյ Ս. Անունց, Հին և Նոր Կտակարանաց
պատմութիւնն ուսուցանելու գիրք մը կազ-
մելու դաս առ. դաս աշխատասիրել, այն և եկեղե-
ցական պատմութիւնն և մի ս կարգեն ու ան-
դէլ աշակերտներուս ։ Այն աշխատասիրութիւնն
է առհե , զոր այսօր , տպագրութեան բարե-
պաշտ Սահակեան Ազգալեանի Ալմինեանցն այս ,
կը հրատարակեմ յաղ ու Ազգային Ժողովոյ և
՚ի վերջերս համարեն զաւ. ամբողջ Հոգաբարձութեան
Լեզուեգեղյ այս ։ Այս խոստովանեմ արդարեւ՝
որ մեծ գործ չէ մեր աշխատասիրութիւնն ,
և ոչ ամենայն մասամբ անթերի , սակայն կը
խոստովանիմ թէ ոչ ՚ի մեր , որ կարծեմ թէ ան-
պայման և օգտակար ամեն յաջող և հա-
ճելի ։

Խոստովանելով քննութեան ձեր մասին ՚ի ձեռնարկեն
անվճառութեան, որ ՚ի մեր ընթերցող աշխատասիրութեան
մէջ , եկեղեցական պատմութեան հետ ան-
ընդհատ կապակից , շարու՚նակել ամ ՚ի ՚նախ ։
աստուածային քաղաքական և ժամանակաց բաւական ՚ի վե-

չանաւոր անցից և փառաւորաց պատմութիւնն.
Այս ընթացքն յառաջ եկած է ինքնին, ոչ
թէ մեր մասնական կամքէն, այլ ազգային ե-
կեղեցական, քաղաքական և մատենագրա-
կան կենաց սերտ կապակցութենէն։ Այս ե-
րևոյթն այնչափ տեսանելի և զգալի է մեր
ազգային կենաց մէջ, որ Քրիստոնէութեան
սկզբնաւորութենէն 'ի վեր, մեր Հայրենեաց
և Ազգի անցքերն առաւել եկեղեցական
պատմութեան տիպար կը կրեն քան թէ քա-
ղաքական։ Հետևապէս, յուսով եմք, որ
մեր աշխատասիրութիւնն պիտի կարող լինի
ոչ միայն եկեղեցական, այլ և ազգային քա-
ղաքական և գրական կենաց նկատմամբ, ընդ-
գալի օգուտ մատակարարել ուսանողներուն,
թէ և չենք ժխտեր բնաւ պատմութեան նոյն
ճիւղերու առաւել ընդարձակ և առանձին
աւանդութեան կարևորութիւնն։

Պիտի նշմարեն ընթերցողք, որ մեր աշ-
խատասիրութիւնն նկարագիր մ'է Հայաս-
տանեայց Եկեղեցւոյ կենդանի զինուորու-
թեան. ինկ ծխից և արարողութեանց վերա-
բերեալ մասն, այն է իւրաքանչիւր տօնա-
կատարութեանց և ժամակարգութեան մէն
մի մասանց նախնական սկզբնաւորութեան,
հաստատութեան և գործադրութեան ժա-
մանակագրական պատմութիւնն, մեր փափա-
քանաց և հետազօտութեան համեմատ, չը

յաջողեցանք լիովին աւանդել։ Ուստի, յի-
շեալ պատմական ճիւղին նկատմամբ, մեր
յաշխատասիրութեան մէջ գտնուածներէն ար-
տաքոյ, ուր որ կարող լինի ստոյգ տեղեկու-
թիւններ հաղորդել մեզ վաւերական ժա-
մանակագրութեամբ հանդերձ, կը խոստա-
նամք սիրով և շնորհակալութեամբ ընդու-
նել և ամփոփելով ու կանոնաւորելով հրա-
տարակել, կամ առանձին և կամ մեր երկրորդ
տպագրութեան մէջ. վասն զի մեք ևս մեր
կողմէն պիտի աշխատիմք, որչափ հնար է,
այն կէտն առանց հետազօտութեան չը թո-
ղուլ։

Մեք արդէն, մեր այն գրաւոր գործը
բարեխիղճ կերպիւ կատարելու համար, ջա-
նացած եմք ամեն առ ձեռն գտնուած նախ-
նի և արդի պատմական աղբիւրներն հետա-
զօտելով օգուտ քաղել եւ կարեւորներն
քաղուածել, մերթ համառօտելով և մերթ
ընդարձակելով։ Եւ այս նկատմամբ, մեր
նախնի մատենագրութիւններէն զատ, ար-
դեան պատմական երկասիրութեանց մէջ,
յաւէտ նպաստած են մեզ՝ Հ. Յ. Գաթըր-
ճեանի Տիեզերականն, և Հ. Գ. Զ. Ազգային
Դպրութեան Պատմութիւններն, որոնք, բաց
'ի պապական խմորէն, որով դժբաղդաբար
խմորուած են մասամբ, ուսումնասիրութեան
արժանի գործքեր են իրենց տեսակին մէջ։

Հուսկ ուրեմն, կը պարտաւորիմք յայտնել, որ մեր սոյն աշխատասիրութիւնն գրուած է առաւել զգայուն լեզուաւ, զոր գիւցէ ոմանք անպատշաճ դատին պատմագրութեան. սակայն մենք փորձով դիտած եմք, որ ուսանողաց միտքն ու սիրտն համանգամայն զարգացնելու համար, խիստ արդիւնաւոր ազդեցութիւն ունին պատմական ճըշմարտութիւններն, երբ զուգախառն են կենդանի զգացմանց հետ։ Մանաւանդ որ մեր գրուածոյն մէջ, ոչ թէ բռնազբօսեալ, այլ ինքնաբուղխ է սոյն եղանակն և յառաջ եկած է այն նուիրական սիրոյ զգացումէն, զոր ունիմք առ Մայրն մեր Ս. Եկեղեցի, զոր 'ի մանկութենէ սիրած եմք և կը փափաքիմք 'ի բոլոր սրտէ, որ ամենքեան սիրեն և ճանաչեն զնա՝ որպէս ՅՕԴԱԿԱՊ ԱԶԳԱՅԻՆ ՍԻՐՈՅ ԵՒ ՄԻՈՒԹԵԱՆ, որպէս ՍԵՐՄՆ ԱԶՆՈՒԱԿԱՆ ԱՃՄԱՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ և որպէս ՇՆՈՐՀՔ ԳԹՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ, ՊԱՏԿԵՐԵԱԼ Ի ՆՄԻՆ ԻՍԿ Ի ՓՐԿՉԷՆ։

Մ. Վ. Մ.



Վասն զի ուղղափառ Հաւատոյ քո լոյս՝ ով Եկեղեցի Հայոց, ոչ նուազեցաւ. 'ի քարի սերմանս ցորենոյդ՝ որոմն ոչ խառնեցաւ. զաղբիւր յստակ աւանդութեանց քոց՝ աղտաղտուկ ջուր օտարոտի ուսմանց ոչ պղըտորեաց. 'ի ստուգութեան և 'ի ճշմարտութեան հայցն քո կենդանական՝ մեռելական խմոր և հերձուած քացախութեան չարութեանն ոչ զանգեցաւ. յոսկի անբիծ Հաւատոյն և յարծաթ լուսատեսիլ Բանին՝ պղինձ ժանգահոտ և կապար սեւաթոյր ոչ գտաւ։

Յովհան Եզնկայէ։



Եռեքսրբեան մի տէրութիւն,
Միով բնութեամբ Աստուածութիւն։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ՆԱԽԱԴԱՍԱԿԱՐԳ.

Ա.

Վիճակ և անկարողութիւն մարդկութեան. — Ծնունդ Յիսուսի Քրիստոսի. — Կեանք նորա. Վարդապետութիւն և Վերջաւորն.

Յիսուսի Քրիստոսի *մարդեղութենէն առաջ մարդկութիւնը խորին խաւարի մէջ էր։ Հեթանոսութիւնը կ՚առաջնորդուէր լոկ բնական լուսով. իսկ Հրէութիւնը ընդ-նմին և օրինական յայտնութեամբ։ Սակայն մարդկութիւնը անկարող էր ինքնին իւր հա-մար փրկութեան ճանապարհ պատրաստել, առանց աստուածային բարութեան, գթու-թեան և խնամատարութեան։ Այս պատճառաւ մարդկութեան վիճակը տխուր էր և թշուառ, և նոյն ինքն մարդն իւր արժանաւորութե-նէն ընկած և անասնոց հաւասարած։ Հը-ռովմէական կայսերութիւնը, որ Եփրատէն*

մինչեւ Դանուբ և Հռենոս կը տարածուէր և իւր մեծութեամբ կը պարծէր, զեղծեալ էր ամենատեսակ ապականութեամբ և կը ծառայէր ոչ միայն իւրոց՝ այլ և իւր տիրապետեալ ազգաց ամենատեսակ մոլորութեց, այն է եգիպտական անասնապաշտութեան, քաղդէական և փիւնիկեան աստեղապաշտութեան և մոգակրօնութեան։ Սուսերամարտկաց կռիւը ուրախութիւն էր դարձած ժողովրդեան։ Ամեն տեղ կանգնած էին Աստղկան և այլ չաստուածոց լկտի պատկերները։ Ամեն տեղ թէատրոնաց անամօթ խաղերը մարդը գրգռած էին յանցանութիւն։ Յունաստան, որ իւր փիլիսոփայութեամբ կը պարծէր, և որպէս թէ բազմաստուածութիւնը կործանած էր, հանդիսարան դարձած էր բարուց ապականութեան և աղծութեան։ Վասն զի, Ստոյիկեանց բարոյականը, թէպէտ և շատերը կը զարմացնէր, բայց նմանողներ ունենալու անկար էր, ըստ որում՝ նոյն իսկ փիլիսոփայից վարքը հակառակ էր իւրեանց վարդապետութեան։ Առաւել վատ էր և միւս հեթանոս ազգաց վիճակն։ Իսկ Հրէից ազգը, որ աստուածպաշտութեան աւանդապահ կոչուած էր, կը ձնանէր արդարեւ իւր ծոցէն ճշմարիտ աստուածպաշտներ և շատ անգամ նմանողութեան օրինակ կուտար ոմանց բարեբարոյ հեթանոսաց, բայց մեծա-

մասամբ շեղած էր յուղղութենէ։ Այսին, որ-դարեւ, Եգիպտոսի Մերիսեան լճի մօտ ըն-նակող Հրէայք, Թերապեւտք կոչեցեալ, ո-րոնք իրենց անձը նուիրած էին վարուց ըղ-դաստութեան, կը կերակրէին հացիւ ու ջրով և կըկրթէին 'ի պահս։ Այսին Մեռեալ Ծո-վու եզերքը բնակող Եսսէացի Հրէայք, որոնք կը պարապէին 'ի կրթութիւն վարուց, 'ի մը-շակութիւն, 'ի հլուութիւն, 'ի ձեռագործս, և հեռացած էին զոհից պաշտամունքէ։ Բայց կայսին ընդ նմին և Փարիսեցիք ու Սադու-կեցիք, որոց առաջինները, առանց հոգևորի, ըստ արտաքին պաշտամանց էին նախանձաւորք իւրեանց անձը կայսերով։ Եւ Գրոց ըսկ նշանա-գիրներու հետ. իսկ վերջինները կ'ուրանային անմահութիւնը. յարութեան յոյսը և ընդ նմին վարձքն և պատիժ յետ մահուան։ Այլ Թողունք Թուել Հրէութեան բազմադիմի փոփոխութիւնները, որ դաւաճանութենէ, հեթանոսական ընտանութենէ և գերու-թենէ յառաջացած էին։

Այսպէս էր ահա մարդկութեան վիճակը թէ Հրէից և թէ Հեթանոսաց մէջ Քրիս-տոսի ծնունդէն առաջ — ԽԱՒԱՐ և ԱՊԱԿԱՆՈՒԹԻՒՆ։ Բայց քաղաքակրթութեան և նորոգութեան կարօտութիւնը զգալի եղած էր։ Եւ խաւարի մէջէն փրկութեան անհրաժեշ-տութիւնը կը նշմարուէր. Հրէայք կը սպասէին

չփոթութեանց և քաղաքային հարստահա-
րութեանց ենթարկուած՝ լաւագոյն փոփո-
խութեան կը սպասէին և ժամանակը հասած
կը համարէին, թէպէտ և շատերը երկրաւոր
փառաւորութեան անձկալութեամբ: Հե-
թանոսաց մէջէն շատերը, իւրեանց ժամա-
նակի ապականութիւնն ու մոլորութիւնն
մարդկային ձեռքով ուղղուելու անհնարին
համարելով գուցէս երկնաւոր օժանդակու-
թեան կարօտութի կըզգային: Պղատոն կ՚ասէր.
«Մինչև երկնքէն մէկը չիջնէ, անհնարին է որ
մարդկութիւնն ուղղուի»: Վիրգիլիոս եկած
հասած կը համարէր այն երջանիկ դարը, ու-
րում կը փափաքէր Կումեացի Սիբիլլան:

Արդ՝ այն մխիթարութիւնը և աւետիքը,
որ խոստացուած էր մարդկութեան առաջին
նախահօրն և նախամօրն, այն՝ որ երկրորդ-
ուած էր Աբրահամին, Իսահակին և Յակոբին,
այն՝ որ Մարգարէքը յաճախ և յայտնապէս
գուշակած էին, ժողովուրդը քարութեան
յուսով մխիթարելու համար, ահա այն երա-
նական և մխիթարական աւետիքը կատարուե-
ցաւ ԾՆՆԴԵԱՄԲ ՄԵՍԻԱՅԻՆ և ՓՐԿՉԻՆ
ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ: Աստուած ինքն
յայտնուեցաւ մարդուն, որովհետև Պօղոս
առաքեալ ասածին մէջ. «Անհնարին էր մարդուն
զԱստուած գտնել, և մինչ առանց գտնելէն
զինքը՝ ամենայն ծանօթութենէն»:

Ո՛չ սա այն զարմանալի Մանուկը, զոր մարգարէն անուանած էր Աստուած, Հզօր, Հայր հանդերձելոյ յաւիտենին և Իշխան խաղաղութեան (1)։ Ո՛չ սա Բեթղեհէմի մ-սուրին մէջ Մարիամ սուրբ Կուսէն, որ Դաւթի տունէն էր, Նազարէթ գեղջէն, խօսեցած էր Յովսէփայ հետ, և կանխապէս աւետիք ընդունած էր հրեշտակէն՝ Հոգւով Սրբով ծնանելու համար։ Ո՛չ սա Որդին Աստուծոյ 'ի կնոջէ և մնաց օրինաց տակ, որ օրինաց տակ եղածները որդեգրութեան ստանան։ Անհասանելի էր աստուածային Մանկան ծը-նունդը, փառք որոյ և հրեշտակները երգեցին 'ի գոհութիւն փրկութեան, որ անհասան էր մեղաւորաց (2), և աւետարանեցին երկնքի և երկրի մէջ հաստատուած նորոգ խաղաղութիւնը և հաշտութիւնը (3)։ Հրէաստանի հովիւները և Արեւելեան իմաստունները եկին հասին և երկիր պագին Նորածին Փրկչին (4)։ Այսպէս, Հրէայք և Հեթանոսք — բոլոր մարդկութիւնն — Աստուծոյ Որդւոյ օրրանին շուրջը երկրպագեցան և իրե՛նց փրկութիւնն ողջունական ընծայեցին։

Քրիստոսի ամենայնիւ իւր եղանակը ծը-նանելու համար՝ Քրիստոնէութեան ութերորդ

(1) Եսայի. Թ. 6։
(2) Ղուկ. Բ. 9։
— Եբր. Ա. 6։

(3) Յովհ. Ա. 32։
(4) Մատթ. Բ. 11։
— Ղուկ. Բ. 16։

օրը և կոչուեցաւ ՅԻՍՈՒՍ (օգնութիւն Աստուծոյ)։ Արդարն և երկիւղածն Սիմէօն իր գիրկն առաւ Մանուկն տաճարի մէջ որպէս Փրկիչ Իսրայէլի և Լոյս հեթանոսաց, յայտնելով որ նա կայ 'ի գլորումն և 'ի կանգնումն բազմաց(1)։ Մարիամ և Յովսէփ Եգիպտոս փախուցին Մանուկը Հերովդէսի մոլեգնութենէն ազատելու համար, (որ իր թագաւորութեան նախանձորդ համարելով հետամուտ էր սպաննելու և Բեթղեհէմի մանկանց հետ արդէն սպանած կը կարծէր։) և հրեշտակի ակնարկութեամբ դարձան Նազարէթ(2)։ Յիսուս, իր 12 ամեայ հասակին մէջ, ցուցուց արդէն տաճարին մէջ իր աստուածեղէն իմաստութեան ճառագայթը, որով զարմացած մնացին Դպիրները և կարծուած Իմաստունները։ Որչափ աճեցաւ հասակաւ, այնչափ առաւել շողացուց իր իմաստութեան, ճշմարտութեան և շնորհաց ճաճանչը(3)։

Հրէական ազգը մարգարէութեանց զօրութեամբ հաւատացած էր, որ Մեսիայի գալստենէն առաջ Եղիա մարգարէն պիտի գայ նորա արքայութիւնը պատրաստելու համար(4)։ Եւ արդարեւ՝ երեւեցաւ Եղիա յանձն Յովհաննու, որոյ ծնունդն աւետե-

(1) Ղուկ. Բ. 21—38. (2) Մատ. Բ. 13—23. (3) Ղուկ. Բ. 40—51. (4) Մաղ. Դ. 5—6.

ցաւ Քրիստոսի ծննդենէն առաջ: Քրիստոսի երեւելէն առաջ կանխեց և ապարէզ եղաւ Յովհաննէս, իւր 30 ամեայ հասակի մէջ, և Տիբերեայ կայսեր թագաւորութեան ժամանակ հրապարակաւ կ'ուսուցանէր, որպէս վարդապետ ժողովրդեան, քարոզելով ապաշխարութիւն և երկնից արքայութեան մերձենալը, ջանալով հրէական թիւր կարծիքը ուղղել, որ Քրիստոսի թագաւորութիւնը աշխարհական փառաւորութեամբ կը կարծէին: Ինքն անապատներու մէջ կը բնակէր և խստամբեր կեանք կը վարէր. կը խոստովանէր, որ իրմէն վերջ եկողն իրմէն առաջ է, և ան ինքն դիմողները կը մկրտէր ջրով. Յիսուս ինքն ալ եկաւ մկրտուելու Յովհաննէսէն Յորդանանու մէջ. Մկրտելէն հայրական յաւիտենական բարբառը վկայեց Նորա սիրելի որդիութիւնը. Հոգին Սուրբ ըղգօն աղաւնոյ կերպարանաւ իջաւ Նորա վերայ, և այսպէս Աստուածութեան Երրորդութիւնը յայտնուեցաւ միաբանութեամբ. Յովհաննէս յայտնեց այնուհետեւ որ ինքը պէտք մեղմանայ և Յիսուս միայն աճի (1): Արդարև, շատ ժամանակ չանցաւ, Հերովդէս չորրորդապետը բանտը դրաւ զՅովհաննէս, յորմէ յանդիմանուած էր իւր եղբօր Փիլիպպոսի Հերովդիադա կնոջը յափշ-

(1) Յովհ. Գ. 30.

տակերուն համար, և Հերովդիայի նենգաւ-թեամբ գլխատել տուաւ։

Յիսուս մկրտութենէն յետոյ մեկնեցաւ յանապատ տեղի, իւր եղբարց — մարդկանց — նման փորձուեցաւ 40 օր սատանայէն և յաղթեց, ցոյց տալով մարդկութեան՝ փոր-ձանաց յաղթելու ամենամեծ օրինակ։ Նոյն սկսաւ հրապարակաւ քարոզել հրէական վարդապետաց նման։

Նախ կը քարոզէր ապաշխարութիւն, ինչպէս և Յովհաննէս, բայց յետոյ մի առ մի սկսաւ յայտնել իւր զարմանալի նպատակը։ Սկսաւ քարոզել, որ ինքն եկած է օրէնքը լրացնելու, յստակելու, լուսաւորագոյն գործելու և տարածելու համար (1)։

Այս ճշմարտութիւնները և պատուէրները կ'ուսուցանէր Յիսուս Քրիստոս իւր վարդապետութեամբ։

Յիսուս Քրիստոս կ'ուսուցանէր, որ Աստուած հոգի է, անտես և արդար է, որ երկրպագուները հոգւով և ճշմար-տութեամբ երկրպագանեն Աստուծոյ (2)։ Աստուած մի-այն բարի է, պարտ է սիրել զնա յամենայն սրտէ, յամե-նայն անձնէ և յամենայն զօրութենէ (3)։

Յիսուս Քրիստոս կ'ուսուցանէր՝ թէ Հայր Աստուած կը [illegible] մարդկան [illegible], կը հոգայ նոցա համար, կը լսէ նոցա աղօթքը, կը թողու նոցա մեղքը (4), և [illegible] կը

(1) Մատ. Ե—Է.
(2) Յով. Դ. 23—24.
(3) Մատ. ԻԲ. 36—38.
(4) Մատ. Զ. 7—14—25 —34։

ակերէ, որ Իւր Միածին Որդին առաքեաց նորա փրկութեան համար (1)։ Իսկ իւր անձին համար կ'ասէր, որ ինքն ճշմարիտ Որդի Աստուծոյ է, մի և փառակից ընդ Հօր (2). և 'ի նախանէ առաջեալ յաշխարհս։ Կ'ասէր, որ իւր խօսքերը՝ Հօր Աստուծոյ խօսքերն էին, և նորա պատուէրներն էին, զորս ինքն կը կատարէ երկրիս վրայ ճշմարտութեամբ, մարդկանց օգտի և բարութեան համար։ Եւ այնով գայ միւսանգամ յարուցանել և իւրաքանչիւրին հատուցանել ըստ գործոց (3). Միով բանիւ կ'ասէր որ ինքն է մեր ԿԵՐԱԿՈՒՐԸ, մեր ԼՈՅՍԸ, մեր ՎԱՐԴԱՊԵՏԸ, մեր ՀՈՎԻՒԸ, մեր ՃԱՆԱՊԱՐՀԸ, ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ, ԿԵԱՆՔԸ և մեր ԲԱՐԵԿԱՄԸ (4)։ Իսկ Հոգւոյն Սրբոյ համար կ'ուսուցանէր՝ թէ Հոգի է նա ճշմարտութեան, որ աշխարհս կարող չէ առնել, բայց այնով գայ և մնայ իւր աշակերտաց հետ. Պիտի Թարգմանն լինի վարդապետութեան և ուսուցիչ ամենայն ճշմարտութեան, փառաւորիչ իւր փառակցին և կշտամբիչ աշխարհի (5), և առանց օգնութեան և նորոգութեան Հոգւոյն հնար չկայ 'ի լաւ անդր փոխիլ (6)։

Յիսուս Քրիստոս կ'ուսուցանէր մարդկային ազգին նախակին վիճակի հանգամանքը, նորա անկումը, նորա վերստին կանգնելոյ միջոցը, նորա վախճանը և դատաստանը, նորա մնալութեանց պատճառները և անփոփոխութեան հաստատութիւնը. ասելով թէ՝ աշխարհս ապականելի է, որուն մէջ Աստուծոյ կամքին ցանկացած է անբիծ բարքն, իսկ չարութեան կամքին՝ արդին. բայց բարին և չարին խառն այնով ամենի մինչեւ հանդերձեալ դատաստանը (կատարած աշխարհի,) և այն դատաստան աւարտ է որոշութեան, ցորեանն (բարին) 'ի շտեմարանս Աստուծոյ, իսկ որոմն (չարն) 'ի հնոց հրոյն (7)։

(1) Յով. Գ. 16.
(2) Յով. Ժ. 30.
(3) Յով. Ե. 19—30. — Զ. 37—40. — Ը. 40—42.
(4) Յով. Զ. 35. 38. 48. 48. 51.—Ը. 12. 35. 51. —Ժ. 11. 14.—ԺԱ. 25. —ԺԴ. 6.—ԺԵ. 13. 14.
(5) Յով. ԺԴ. 10—17. 26. —ԺԵ. 26.—ԺԶ. 7—15.
(6) Յով. Գ. 5.
(7) Մատ. ԺԳ. 24—30. 36—43.

Յիսուս Քրիստոս կ՚ուսուցանէր դարձեալ՝ թէ երկնաւոր Հօր կատարելութիւնը մարդկային կատարելութեան չափն է, այսինքն աստուածային պատկերը և նմանութիւնը պէտք է կատարելագործուած ըլլի մարդոյ մէջ (1)։ Պարտինք անշուշտ խոնարհ և անմեղ մանկան միայն ունենալ երկնային արքայութիւնը մտնելու համար (2)։ Պարտինք մեր անձին տկարութիւնը ճանաչել, որ է հիմն ճշմարիտ մեծութեան (3)։ և իմանալ որ արդարութեան ցանկալն և փափաքն աւետաբեր հրեշտակ է. և անշուշտ այն փափաքն պիտի կատարուի։ Պարտինք սրտի սրբութիւն ունենալ Աստուծոյ ընտանի ըլլալու համար, խաղաղասիրութիւն ունենալ, որ նշանակ է Որդիութեան Աստուծոյ։ Պարտինք ընկերին ողորմիլ, որով Աստուծոյ գութը կը գտնենք։ Պարտինք Աստուծոյ սիրոյ համար համբերել հալածանաց, որ է դրաւական մխիթարութեան Աստուծոյ և երանութեան յերկինս (4)։

Յիսուս Քրիստոս կ՚ուսուցանէր և ս՝ թէ եղբայրսիրութիւնն նորա աշակերտաց կնիքն է. նորա պատուէրներն ճշգրտիւ կատարելն՝ զինքն սիրելու ցոյցն է (5). Թշնամիներուն 'ի բոլոր սրտէ բարերարելն՝ թշնամիներէն կրած զրկանաց միակ և գեղեցիկ հատուցումն է (6). Եղբայրսիրութեան պատուէրն հաւասար է աստուածսիրութեան պատուէրին (7)։ Առանց ցոյցի տուած տուրքն, 'ի մարդկանէ անտես աղօթքն, զուարթ երեսօք պահքն՝ գեղեցիկ մթերք են հատուցման մեծի աւուր համար ամբարուած (8)։

Յիսուս Քրիստոս կ՚ուսուցանէր՝ թէ ցանկանալու ծառատակա հայրին՝ շնորհութիւն է, սիրութիւնն՝ եղբայրասպասաւորութիւն, որով սիրոյն պղծութեան ազդեր կը լինի (9)։ Այս թերութիւնները խոտիլ պատերն՝ մեր անձը զատատանմ ենթարկել է. տալ և չառնելն, լսել և գործ չը գտնելն՝ մեծ

(1) Մատ. Ե. 14—16. 45. 48.
(2) Մատ. ԺԸ. 3.
(3) Մատ. Ե. 3.
(4) Մատ. Ե. 3—12.
(5) Յովհ. ԺԵ. 10—15. 17.
(6) Մատ. Ե. 43—44.
(7) Մատ. ԻԲ. 37—40.
(8) Մատ. Զ. 1—7. 16—21.
(9) Մատ. Ե. 28—29. —ԺԵ. 19.

յիմարութիւն է , որպէս թէ մարդ աւազոյ հիման վրայ տուն շինած լինի (1)։ Դարձեալ թէ՝ թեթեւամտութիւնն և արծաթոյ ու կերակուրի վրայ աւելորդ հոգալն առաքինութեանց սերմունքը հեղձուցանող փուշեր են (2)։ Մեղքը՝ բուն ծառայութիւն է և գերութիւն, չարագործութիւնն՝ որդիութիւն է սատանայի , որ իսկզբանէ մարդասպան է, սուտ է և հայր ստութեան (3)։

Յիսուս Քրիստոս կ'ուսուցանէր՝ թէ իբրեւ աշակերտ Քրիստոսի մեր կրած բոլոր վշտերը մշտնջենաւոր ուրախութեան երկունք են , և թէ՝ աղօթքով կարող ենք ստանալ ամէն բան . ինչ որ նորա կամաց համեմատ կը խնդրենք և կատարեալ վստահութիւն կ'ունենանք նորա վրայ (4)։ Քրիստոս զինքն ճշմարիտ որթոյ կը նմանեցնէ և բարեբարոյ քրիստոնեայքը՝ պտղաբեր բարունակներու . այնպէս որ նորա կամքը կատարողները կ'արժանանան նորա բարեկամութեանը ազգականութեանը . երկնաւոր Հօր որդիութեանը և միւս կենաց մէջ կը վայելեցանան նորա անմահութեամբ (5)։

Այս բարձր և փրկարար վարդապետութիւնը կ'ուսուցանէր Յիսուս Քրիստոս բանիւ և գործով, կը հաստատէր մեծամեծ նշաններով։ Այս հրաշքները կը գործէր գործակցութեամբ Հօր (6), որ աշխարհ ամենայն 'ի միտ առնու , որ նա է Մեսիայն (7)։ Յիսուսի միակ կամեցողութեամբ ջուրը իւր բնութիւնը փոխեց և գինի եղաւ Կանայի

(1) Մատ. Է. 1—5. 21. 26-27։
(2) Մատ. ԺԳ. 3—7. 19—22։
(3) Յովհ. Ը. 34—44։
(4) Յովհ. ԺԶ. 20—27։
(5) Յովհ. ԺԵ. 1—10։ —ԺԴ. 21—23։
(6) Յովհ. Ժ. 38—ԺԱ. 41։ —ԺԴ. 10—12։
(7) Յովհ. Ե. 36—Ժ. 25։

Հարսանեաց մէջ(1)։ Նորա բարութեանը և աճեցնող օրհնութեամբ միանգամ հինգ և միւս անգամ եւթն նկանակն այնչափ բազմացան, որ 4—5000 արք կերան, յագեցան, թողուինք աւել կանայքն ու մանուկները(2)։ Նորա բանիւ շատ հիւանդութիւններ բըժշկուեցան(3) և մարդասիրութեամբ շատ հոգեւոր ախտեր դարմանուեցան(4)։ Նորա ամենազօր ձայնով մահը իւր աւարը յետ տուաւ(5)։ Հողմերը և ալիքները հնազանդեցան(6)։ Չար այսերը հալածական եղան դիւահարներէն, սարսափելով և խոստովանելով՝ որ նա է Որդի Աստուծոյ(7)։ Բարձրագոյն մարգարէութիւն փայլեցոյց իւր մարգարէական պատիւն, վասն զի քաջ գիտէր մարդկան խորհուրդները(8)։ Յայտնապէս պատմեց իւր աշակերտացն ինչ որ պիտի կրէր ինքն և ինչ որ պիտի կրէին նոքա իւր վարդապետութեան

(1) Յով. Բ. 1—11։
(2) Մատ. ԺԴ. 15—21. —ԺԵ. 29—39։ —Մարկ. Զ. 34. 44։ —Ը. 1—9։
(3) Մատ. Դ. 23—24։ —Ը. 5—13. 2—15։ —Թ. 20—30։—ԺԲ. 10—13։ — Յով. Դ. 47—52։ — Յով. Ե. 5։ —Թ. 9.
(4) Մատ. Թ. 3—7։
(5) Մատ. Թ. 18—25։ —Ղուկ. Է. 11—17։ —Յով. ԺԱ. 11—44։ —Մատ. ԺԱ. 5։ —Ը. 16—17։ —Եսայ. ԼԵ. 5։
(6) Մատ. Ը. 23—27։
(7) Մատ. Ը. 28—34։ —Մարկ. Ա. 23—28։ —Ե. 1—7։—Ղուկ. Թ. 38—43։
(8) Մատ. Թ. 4։ — Յով. ԺԶ. 30։

համար(1)։ Մարգարէացաւ Եկեղեցւոյ հալածանաց եւ տարածմանն ազգերուն համար(2) նոյնպէս եւ Հրէական տէրութեան կործանմանն համար, Երուսաղէմի տաճարին աւերմանն եւ խառն ընդ նոցին վերջին դատաստանին համար(3)։ Պատմեց նա ինչպէս իւր աշակերտաց, նոյնպէս եւ իւր թշնամեաց կամ հալածչաց(4) ամեն բան, թէ ինչ որ մօտ ժամանակին մէջ պիտի կրէր(5)։

Թէպէտեւ Յիսուս Քրիստոսի վարքն ըստ ամենայնի համաձայն էր իւր վարդապետութեան, հեզ էր ինքն՝ եւ խոնարհ սրտիւ, եւ ոչ ոք կարէր յանդիմանել զնա վասն մեղաց(6)։ Թէպէտեւ տեղ չը մնաց, որ նորա երախտիքը չը վայելէր, այն ինչ ինքն գլուխ դնելու տեղ անգամ չունէր(7)։ Թէպէտեւ անհնար մարդասիրութեամբ մեղաւորաց հետ կը նստէր եւ կ՚ուտէր յուղղութիւն ածելու համար(8). սակայն խստասիրտ եւ անոպայ Հրէաները չը հաւատացին, եւ մանաւ-

(1) Մատ. Ժ. 16—25. —Յովհ. ԺԵ. 18—21. —ԺԶ. 1—4։
(2) Մատ. ԺԳ. 31—33. —ԻԲ. 2—10.—Ղուկ. ԺԳ. 27—30.—ԺԴ. 16—24։
(3) Մատ. ԻԴ. 1. 2. 15—36. —Մարկ. ԺԳ.
(4) Յովհ. Բ. 19—22.
(5) Մատ. ԺԶ. 21—22.
(6) Մատ. ԺԱ. 29. —Յովհ. Ը. 46.
(7) Մատ. Ը. 20.
(8) Մատ. Թ. 11—13. —Ղուկ. Է. 36—48. —ԺԵ.

ւանդ. Փարիսեցիք խոր խոցեցան իւրեանց կեղծաւորութիւնը ստէպ ստէպ յանդիմանելուն և կշտամբելուն համար (1) ։ Ուստի շատ անգամ դարան գործեցին և 'ի վերջոյ չորեքօրեայ մեռեալ Ղազարուն յարուցանելուն համար՝ հաստատապէս սահմանեցին սպաննանել զՅիսուս (2) ։ Արդարեւ՝ Յիսուս Փարիսեցիները չէր գրգռեր բնաւ 'ի սպանութիւն, բայց և երբեք ճշմարտութիւնը խօսելէն չէր խուսափեր ․ Պասեքատօնին Յերուսաղէմ չոքաւ և առաւել քան զառաջինն սկսաւ յայտնապէս խօսիլ իւր մահուան և երեքօրեայ յարութեան վրայ (3) ։ Ստուգապէս գիտէր ինչպէս իւր մահը, նոյնպէս և իւր գործոյն տեւականութիւնը և յաւիտենականութիւնը, ուստի Զատիկն ուտելու ժամանակ ցոյց տուաւ իւր անհուն սէրը և խոնարհութիւնը ․ ցոյց տուաւ որ ամենէն մեծը ամենուն սպասաւորն է ․ ցոյց տուաւ, որ թագաւորք, իշխանք, մեծամեծք, իմաստունք և օրէնսդիրք, ամենքն ալ հաւասարակ պարտք ունին ժողովրդին—իւրեանց եղբարցը—սպասաւորելու և ոչ թէ հրամայելու

(1) Մատ․ Ե․ 20։—ԺԲ․ 24—42։—ԺԵ․ 1—20։
(2) Մատ․ ԺԲ․ 14—15։ —Ղուկ։ ԺԱ․ 53․ 54։ —Յով․ Ե․ 32—45։ —ԺԱ․ 46—56։
(3) Մատ․ ԺԷ․ 21—22․ —Ի․ 18—19։—Մարկ․ Ժ․ 33․ 34․—Ղուկ․ ԺԸ․ 31—32։

և իշխելու․ ուստի անպատում խոնարհութեամբ լուաց աշակերտաց ոտքերը յօրինակ մարդկան, հաստատեց Գոհութեան կամ Հաղորդութեան խորհուրդը, որպէս իւր յիշատակ և Նշան Նոր Կտակարանի (1)․ որպէս զի մինչև ՚ի կատարած աշխարհի նոյն խորհրդով ժողովուրդն իւր աշակերտները և հաղորդութիւն ունենան իւր հետ հոգւով և կենդանւով, ինչպէս որ առաջ ասած էր թէ՝ «Մ՛արմին իմ ճշմարիտ կերակուր է և արիւն իմ ճշմարիտ ըմպելի (2)։»

Յիսուս Քրիստոս թէ ՚ի սկզբան իւր վարդապետութեան և թէ ՚ի կատարածին, փորձեցաւ մարմնոյ տկարութենէն, բայց միշտ յաղթող հանդիսացաւ․ Չարախօսուեցաւ Փարիսեցիներէն, Հրէից խորհրդականներէն և նոցա դրդմամբ ամբաստանուեցաւ ժողովրդէն (տգէտ և իւր բարերարն ու թշնամին չըճանաչող ժողովրդէն) որպէս հայհոյիչ օրինաց և որպէս վնասակար կայսեր։ Մ՛ատնուեցաւ իւր մի աշակերտէն, երիցս ուրացուեցաւ միւսէն, լքեալ մնաց մնացեալ աշակերտներէն, ոլոռն ոլոռն արտասուք թափեց անմեղն և անարատն, քա-

(1) Մատ․ ԻԶ․ 26—28։—Մարկ․ ԺԴ․ 22—24։—Ղուկ․ ԻԲ․ 7—20։—Յով․ Զ․ Ծ1—Ծ9։—ԺԳ․ 1։—Մաղաք․ Ա․ 11։—Եբր․ Է․ 9։—Ծնն․ ԺԴ․ 18։—Սաղ․ ՃԹ․ 4։
(2) Յով․ Զ․ Ծ6։

մեջ ցամաքեցոյց մարդկային անօրէնութեան դառն բաժակն, նախատանօք մեռաւ խաչի մահուամբ, և սակայն միշտ խոստովանեցաւ ճշմարտութիւնը, միշտ աղօթեց իւր հալածիչներուն համար. վասն որոյ և երբոր մարդկութիւնը անզգայացաւ և ապերախտ գըտաւ, անմռունչ բնութիւնը սարսեցաւ և շարժեցաւ, 'ի միջօրէի խաւար կալաւ պաշխարհ և հին օրինաց վարագոյրը պատառեցաւ, դժոխքը իւր աւարը դարձոյց և բերան հեթանոսի խոստովանեցաւ թէ՝ « Արդարեւ՝ այրս այս արդար էր և Որդի Աստուծոյ ։ »

Այսպէս կնքեց Յիսուս իւր կեանքը — արդարութեամբ, ճշմարտութեամբ, մարդասիրութեամբ, ներողութեամբ — Յովսէփ Արեմաթացին ձեռքով թաղուեցաւ նորափոր գերեզմանի մէջ, յաղթեց մահու, և երեք օրէն յետոյ յարութիւն առնելով երևեցաւ աշակերտաց և ընդ նոսին բովանդակ աշխարհի ։ Քաջալերեց իւր աշակերտները, Գնացէք, ասաց, յաշխարհ ամենայն, քարոզեցէք և մկրտեցէք. գնացէք և մի երկընչիք, զի ես յաղթեցի աշխարհի. զի ես ընդ ձեզ եմ մինչեւ 'ի կատարած աշխարհի։ Քաջալերեց, օրհնեց և յաղթական փառքով երկինքը վերացաւ ։

Բ.

Գալուստ Հոգւոյն Սրբոյ. — Նորոգութիւն մարդկութեան։

ՅԻՍՈՒՍ կատարեց իւր մարդասիրութեան ամենամեծ գործը. իսկ Հոգին Սուրբ պէտք է հաստատէր իւր փառակցի վարդապետած փրկարար ճշմարտութիւնները և նորոգէր մարդկութիւնը։ Հրէից Պենտեկոստէի տօնը հասած էր և հանդիսաւոր շքեղութեամբ կը տօնուէր, որպէս եօթնեբորդ շաբաթ Պասեքին, որպէս յիշատակ Սինէական օրէնսդրութեան և որպէս տարեգլուխ նուիրման նորահաս պտղոց և հնձոց։ Առաքեալները և աշակերտները, Մատաթիայի ընտրութեամբ լրացուցանելով երկոտասանից թիւն, 'ի նշան երկոտասան ազգացն Իսրայէլի, Սիոն վերնատան մէջ ժողովուած՝ անհամբեր կը սպասէին։ Յանկարծ երկնային հնչիւն մի եղաւ և բոլոր տունը սաստիկ հողմով լցուեցաւ։ Իջաւ Հոգին Սուրբ ժողովելոց վերայ հրեղէն լեզուաց կերպարանաւ և իւրաքանչիւրին վերայ նստաւ։ Այս նշան էր կատարեալ յաղթութեան, զօրութեան և եռանդեան, որով պիտի հաստատուէր Քրիստոնէութիւնը աշխարհիս վերայ։ Ընկաւ ուրեմն նորոգութեան երկնային սեր-

մը, որով պէտք է վերածնուէր մարդկութիւնը հոգեւոր վերածնելութեամբ։ Դըտաւ մարդկութիւնը իւր նորոգ արարչագործութիւնը, ըստ գեղեցիկ բանի Նախնի Հարց Եկեղեցւոյ։ Առաքեալները զօրացան աւետարանական քարոզութեան պաշտօնին մէջ։ Հաւատացելոց թիւը օր աւուր սկըսաւ բազմանալով (այն ինչ 120 էր միայն ցգալուստ Ս. Հոգւոյն)։

Յուզեցաւ և շարժեցաւ մարդկութիւնն ’ի հիմանց, որովհետեւ աներեւոյթ, անպատրաստ և խառնարամած անդունդներուն վրայ շըջող Ս. Հոգին իջաւ սրտերուն խորքը։ Մի կողմէն սրտերը կակղացան, բարքերը քաղցրացան և սիրով ու միաբանութեամբ կապուեցան. իսկ միւս կողմէն հալածանաց փոթորիկները սաստկացան։ Սակայն գարնանային հովերը օգտակար են երկրին քան թէ վնասակար։ Նոքա օդը կը մաքրեն, սերմերը կը սփռեն և կը պտղաբերեն։ Նոյնպէս եղան և Քրիստոնէութեան դէմ յուզուած հալածանաց մրրիկները։ Նոքա առաւել տարածեցին աւետարանական սերմերը և զօրացուցին Ճշմարտութիւնը։ Նոյն հալածմունքները սփռեցին առաքեալները յԱրեւելս, յԱրեւմուտս, ’ի Հարաւ և ’ի Հիւսիս, որով և Հրէութիւն ու Հեթանոսութիւն խոնարհեցան Քրիստոնէութեան

անյաղթ զօրութեան առջեւ, և փրկչի սքան-չելի խօսքը կատարուեցաւ թէ՝ «Ես յաղ-թեցի աշխարհի»։ Կազմեցան վաղվաղակի քրիստոնէական միաբանութիւններ — Եկե-ղեցիներ — և Քրիստոսի Խաչը որպէս յաղ-թական դրօշ փայլեցաւ Հեթանոսութեան աւերակներուն վրայ։

Այսպէս հիմնուեցաւ և մեր ՀԱՅԱՍՏԱ-ՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ՝ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՆ, որ շատ նշանաւոր է իր նախնականութեամբ և Արեւելից մէջ կրած հալածանքներով, ինչպէս պիտի տեսնենք իր Պատմութենէն։



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

Քրիստոնէութեան սկզբնաւորութենէն մինչեւ նորին յաղթական տարածումն բովանդակ Հայաստանի մէջ։

34–302

Ա.

Քարոզութիւն Աւետարանին և հաստատութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ. — Հալածանք. — Նահատակութիւնք. — Պատմական անստութիւն այն երեքդարեան շրջանին նկատմամբ. — Առաքելական պաշտամունք Եկեղեցւոյ։

Քրիստոնէութիւնն *աւետարանուեցաւ Հայոց Ազգին Թադէոս և Բարդուղիմէոս առաքելոց անձնադիր քարոզութեամբ՝ Աբգարու և Սանատրուկի թագաւորութեան ժամանակ։ Այս մասին միաբերան կը վկայեն, ինչպէս ազգային պատմական յիշատակարանք և աւանդութիւնք, նոյնպէս և եկեղեցական ու արտաքին ժամանակագ-*

րութիւնք օտարաց։ Ասորի և Հայաստանեայց Եկեղեցին կարէ բացարձակ անուանիլ Հեթանոսութեան մէջ հաստատուած ՆՈՒԱԶԻՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ, որոյ ըսկզբնաւորութեան պատմութիւնը այսպէս կ'աւանդեն պատմագիրք, առնլով Եդեսիոյ դիւանական մատեաններէն, զորս կարդացած են Եւսեբիոս Կեսարացին 4դ դարուն մէջ, իսկ Խորենացին 5դին մէջ։

Քրիստոսի քարոզութեանց և հրաշագործութեանց մխիթարական աւետիքները կը պատմուին Աբգար Հայոց թագաւորին, և նա, անբուժելի հիւանդութեամբ, (բորոտութեամբ, ըստ ասորական գրոց) վարակուած լինելով՝ հրեշտակութեամբ և թըղթագրութեամբ (1) կը թախանձէ զՅիսուս, գալ իւր աթոռանիստ քաղաքն Եդեսիա, բժշկել զինքն հիւանդութենէ և նոյն քաղաքին մէջ խաղաղական կեանք վարել, հեռի հրէական ատելութենէ և հալածանքէ, որոց ենթարկուած էր Պաղեստինի մէջ։ Յիսուս կ'երանէ Աբգարու մեծահաւատ բաղձանքը, որ առանց տեսնելու կըհաւատայ, և

(1) Աբգարու և Քրիստոսի թղթագրութիւնը, որոց մասին Խորենացին ընդարձակ կը խօսի, օտարազգի հնախօսըներէն ոմանք անվաւերական համարեցին. բայց շատ նշանաւոր պատմագէտներ ևս, ինչպէս են Տիլլմոն գաղղիացի, Քաւէ անգղիացի, Վելտէ գերմանացի և այլք, նոյն թըղթոյ վաւերականութիւնը արդարացուցին։

կը խոստանայ իւր Համբարձմանէն զկնի իւր աշակերտներէն մէկը անշուշտ առաքել առ թագաւորն, նորա հիւանդութիւնը բժշկելու և երկնաւոր մխիթարութեամբ մխիթարելու համար[1]։

Շուտով կը հասնի մխիթարական ժամանակակէտը. և ահա Թադէոս կը մտնէ Եդեսիա (որ Հայոց թագաւորութեան նոյն ժամանակեայ աթոռանիստն էր, ուր փոխադրուած էին մեհենական գրեանքն ու նախորդ աթոռակալաց դիւանները) և իւր առաքելական քարոզութիւնը կը սկսի նոյն իսկ արքունական պալատէն։ Աբգար կը հաւատայ, կը բժշկուի իւր հիւանդութենէն և կը մկրտուի. նորա օրինակին կը հետևին թագաւորական գերդաստանը, իշխանական արքունիքը նախարարներով հանդերձ, և նոցա հետ միասին Եդեսիոյ բնակիչները։ Շուտով կը փակուին մեհեանները և կռատունները. աւետարանական լոյսը կը ճառագայթի սրտերուն մէջ և Քրիստոսի յաղթական դրօշին տակ կը տողանցին բազմութիւնք հաւատացելոց, ջրով և հոգւով մկրտուած, և հաւատով, յուսով ու սիրով միացած, որով և կը հաստատուի Հայաստա-

(1) Աբգարու քրիստոնէական դարձին վրայ մանրամասնութեամբ կը խօսին՝ Ղերուբնա Եդեսացին, Մովսէս Խորենացին, Ճառընտիրք. [illegible] Վարք սրբոց և այլն։

նեայց Քրիստոնէական Եկեղեցւոյն, որուն և Տեսուչ կամ Եպիսկոպոս կը կարգուի Թա-գաւորի խոյրարար Ադդէն, հաւանութեամբ հաւատացելոց և ձեռնադրութեամբ Թա-դէոս առաքելոյն :

Աբգար այս երկնաւոր այցելութեամբ զմայլած, իւր գեղեցիկ օրինակին հետեւող-ները բաղձանքով կը գրէ թղթեր քանի մի աթոռակալաց, այն է Տիբերիոսին (եր-կիցս) Պարթեւաց Արտաշէս և Ասորեստա-նի Ներսէհ թագաւորներուն (1) : Իսկ ա-ռաքեալն Թադէոս, Եդեսիոյ բնակչաց դար-ձէն զկնի, կ'ուղեւորի Հայաստանի Շաւար-շան կամ Արտազ գաւառը, ուր կ'իշխէր Աբգարու հօրաքեռ որդին Սանատրուկ, որ-պէս հրամանատար զօրաց Հայոց աշխարհին, և այն տեղ եւս քրիստոնէական լուսով լու-սաւորելով զՍանատրուկ, նորա Սանդուխտ դուստրը, նախարարներ և բաւականին ժո-ղովուրդ, Զաքարիա անունով մէկը եպիս-կոպոս կը ձեռնադրէ հաւատացելոց վրայ, և քարոզելով վերին Հայոց մէջէն կ'անցնի Ա-ղուանք և անտի 'ի Կապադովկիա, ուր և Տեսուչ կը ձեռնադրէ իւր Թէոփիլոս աշա-կերտը :

Մինչդեռ Թադէոս այսպէս կը շարու-նակէ իւր առաքելական պաշտօնն, յան

(1) Խորենացի, Գիրք Բ. Գլ. ԼԳ :

կարծ իրերը կերպարանափոխ կը լինին ։ Աբ-
գար իւր գրած Թղթերուն տակաւին պա-
տասխան չընդունած՝ կը վախճանի և իւր
Անանէ կամ Անանուն որդին և Սանատրուկ
Հօրաքեռ որդին միմեանց հակառակ Թագ-
կաւորելով կ'ուրանան քրիստոնէութիւնը, ու-
րով և կը յուզին երկպառակութիւններ քա-
ղաքային կենաց մէջ և հալածանքներ քրիս-
տոնէութեան դէմ ։ Անանուն նահատակել
կը տայ Ադդէ եպիսկոպոսը, որ յանձն
չառնուր խոյր յօրինել այն գագաթին, որ
չերկրպագէր Քրիստոսին — և ինքն յետ սա-
կաւ ժամանակի արքայական պալատը նո-
րոգելու միջոցին սեան տակը հասելով կը
վախճանի ։ Սանատրուկ կը սիրէ Եդեսիոյ
այն երդումով, որ նորահաւատ քրիստոնէ-
ից մինս չը հացնէ, բայց իւր երդումն
դրժելով շատերը կը տանջէ և Աբգարու
դերդաստանը սրէ կ'անցունէ, բայց 'ի աղջիկ-
ներէն և Հեղինէ Թագուհիէն (յորմէ շատ
բարիք տեսած էր) որ երթալով իւր ծննդեան
երկիրն Խառան և անտի յԵրուսաղէմ, Կղոդ-
դիայի ժամանակ պատահած սովի միջոցին
կը դարմանէ շատ աղքատներ, և կը Թաղուի
հոյակապ շիրմի մէջ, ինչպէս և կը պատմէ
Յովսեպոս ։

Սանատրուկին հալածանաց հրդեհը բոր-
բոքած ժամանակ՝ Թադէոս իւր առաքելա-

կան այցելութիւնը կը շարունակէր և շատե-րը կ՚աշակերտէր Աւետարանին, ՚ի շուրս ա-րոց էին և Ոսկեանք, որք դեսպանութեամբ Հռովմէն Սանատրուկի մօտ գալով կը հան-դիպին Թադէոս առաքելոյն և նորա քարո-զութիւնը լսելով կը հաւատան ու կը մկրտին և իւրեանց մեծի անուանն Խրիւսի (Ոսկի) լի-նելով՝ ամենքը միասին Ոսկեանք կ՚անուանին։ Սոցա աշակերտներն են Սուքիասեանք, որ Ար-տաշէսի թագաւորութեան ժամանակ Ալա-նաց երկրէն եկան Հայաստան Սաթենիկ տիկնոջ ազգականութեան պատճառաւ, և Արտաշատ քաղաքի մէջ յարեցան Ոսկեանց քարոզութեանը։

Քրիստոնէութեան տարածման վրայ Սա-նատրուկի զայրոյթն առաւել սաստկանա-լով՝ կը նահատակէ Շաւարշանի մէջ Թա-դէոս առաքեալը, իւր Սանդուխտ դուստ-րը, որոց առաքինական կատարմամբ շատե-րը կ՚ընդունին Քրիստոնէութիւնը, ընդ որս էին Սամուէլ նախարար և Զարմանդուխտ տիկին։ Յետ ժամանակաց կը նահատակէ նոյնպէս Բարդուղիմէոս առաքեալը, (մոր-թազերծ մահուամբ Արեբանոս քաղաքի մէջ) որ Պարսկաստանի, Հնդկաստանի, Երջանիկ Արաբիոյ և Խորասանի մէջ Աւետարանը քա-րոզելէն վկնի՝ դարձած էր Հայաստան, և որպէս ամոլ և պաշտօնակից Թադէոսի, որ-

պէս հոգեւոր Հայր Հայաստանեայց՝ կը քարոզէր Մեծին Հայոց Պողթան գաւառի և Հերայ ու Զարեւանդի մէջ և աշակերտած էր շատերուն հետ միասին և Սանատրուկի Ոգոհի կամ Թագուհի քոյրը, որ նոյնպէս նահատակեցաւ իւր եղբօր ձեռքով։

Ինչպէս Թադէոսի և Սանդխտոյ, նոյնպէս և Բարդուղիմէոսի նահատակութիւնը առաւել բազմացոյց հաւատացելոց թիւը. վասն զի հալածանաց մէջ է քրիստոնէութեան աճումն, որպէս և ամենայն ճշմարտութեան։

Թադէոսի և Բարդուղիմէոսի Հայաստանի առաքելութեան գործակից կը համարուին Թոմմաս, Յուդայ—Թադէոս և Եղիշէ (Յակոբ Տեառնեղբօրէն ձեռնադրուած), որ աւետարանական քարոզութեամբ շատերը աշակերտելով՝ նահատակեցաւ Աղուանից աշխարհին՝ Ուտի գաւառին մէջ, (70 Թուականին)։

Այսպէս ուրեմն, եթէ պատկերացնենք մեր առջեւ Հայաստանեայց Եկեղեցւոյ ընկերնաւորութեան և հաստատութեան առաջին շրջանին առաջին դարերը, կը տեսնենք ակներև, որ Քրիստոնէութիւնը Հայոց Թագաւորական արքունիքէն սկսելով փրկարար կերպիւ յեղաշրջած է Հայաստանի երեսը, Միջագետքէն մինչեւ Աղուանք և Պողթանէն մինչեւ Կապադովկիա, եթէ ոչ համայն ժո-

ղովուրդը վերածնելով՝ գէթ աւետարանական հուրը հեթանոսութեան մէջ արկանելով։ Եւ թէպէտ Աբգարու յաջորդները հալածմամբ ընդդէմ զինեցան Քրիստոնէութեան յայտնի տարածմանը, բայց Քրիստոնէութիւնը անընդհատ շարունակեց իւր զօրաւոր ազդեցութիւնը։ Քանզի ոչ հովիւք պակասեցան Հայաստանէն մինչեւ Տրդատայ եւ Գրիգորի ժամանակները, եւ ոչ նահատակք, եւ որչափ որ խստիւ արգիլուած էր եկեղեցական յայտնի համախմբութիւններն ու քարոզութիւնները, դարձեալ կը կարդանք պատմական յիշատակարանաց մէջ հովուական անուններ, որոց մի քանիսն արդէն յիշեցինք եւ մի քանիսն եւս արժան կը համարինք յառաջ բերել ժամանակագրական կարգաւ։

Զաքարիա եպիսկոպոս, աշակերտ Թադէոսի, Մեծ Հայաստանին մէջ (40—70) [1]։

Զեփիրոս, եպիսկոպոս աշակերտ Թադէոսի, փոքր Հայաստանի կամ Կապադովկիոյ մէջ, (40—70) [2]։

Ատոմ եպիսկոպոս, Մեծ Հայաստանին մէջ. աշակերտ Բարդուղիմէոսի (67—90) [3]։

Բարսումա եպիսկոպոս Եդեսիոյ, Հայկազն (108—120) [4]։

Բաբիլաս եպիսկոպոս, յաջորդ Ատոմայ, ՚ի

(1) Վարք Սրբոց։
(2) Վարք Սրբոց։
(3) Օրբէլեան. Պատմ. Սիւնեաց։
(4) Վարք Սրբոց։

Գողթան և 'ի Սիւնիս (90–120)(1)։

Մելքոր վանահայր Թանահատի վանուց 'ի Սիւնիս (150–170)(2)։

Փաղմաս եպիսկոպոս Պոնտոսի, որ մերձակայ գաւառներէն 40 եպիսկոպոս հրաւիրելով (որոց մէջ կային անշուշտ և հայ եպիսկոպոսներ) ժողով կազմեց 150 թուականին(3)։

Զոտիկոս եպիսկոպոս Կոմանայ քաղաքի Հայոց (160–190)(4)։

Աղէքսանդր եպիսկոպոս փոքր Հայաստանի կամ Կեսարիոյ (210–230)(5)։

Փիրմիլիանոս եպիսկոպոս նոյն քաղաքի (230–270)(6)։

Ակակիոս եպիսկոպոս Ամթայ կամ Տիգրանակերտի (250–280)(7)։

Մերուժան եպիսկոպոս մեծ Հայաստանի (250–280)(8)։

Արքեղայոս եպիսկոպոս Միջագետաց Հայոց (260–280)(9)։

Կղէնդիոս եպիսկոպոս Կեսարիոյ (272–290)։

Վլասիոս եպիսկոպոս Սեբաստիոյ Հայոց (290–315)(10)։

Ղեւոնդիոս եպիսկոպոս (292), յորմէ ձեռ-

(1) Օրբէլեան, պատմ. Սիւնեաց։
(2) Օրբէլ. պատ. Սիւնեաց։
(3) Եւսեբիոս, պատ. եկեղ.
(4) Եւսեբիոս. պատ. եկեղ.
(5) Եւսեբիոս, պատ. եկեղ.
(6) Եւսեբիոս. Քաւէ և այլք.
(7) Վարք Սրբոց։
(8) Եւսեբիոս, պատ. եկեղ.
(9) Քաւէ. գերքի։
(10) Վարք Սրբոց։

նադրեցաւ Գրիգոր Լուսաւորիչ (302) (1)։

Եթէ մտածենք, որ Քրիստոնէութեան առաջին երեք դարերուն մէջ, (որ մենք առաջին շրջան անուանեցինք) ոչ թէ տաճարներն, այլ տուներն, գետնափորներն, մենաւոր անապատներն և այրերն էին ապաստանարան հաւատացելոց, որով. իւրաքանչիւր ոք յանձն իւր եկեղեցի էր, նոյն ինքն քահանայ, մարմինք իւրաքանչիւր սուրբ սեղան և հոգիք նոցուն պատարագ ընդունելի։ Եթէ մտածենք որ նոյն ժամանակները հաւատացեալք շատ անգամ կ'աքսորուէին անապատներ և անմարդաբնակ կղզիներ, որպէս զի իւրեանց կենաց և վարուց հետեւողներ չունենան։ Եթէ մտածենք որ նոյն ժամանակ դպրութիւնը ծաղկած չէր Հայաստանի մէջ, և եղած մեհենական մատեանները և քաղաքային յիշատակարանաց դիւանները առ հասարակ հալածիչներու ձեռքն էին, որոնք քրիստոնէից յիշատակը ջնջել կը ջանային, քան թէ դիւաններու մէջ մուծանել և անմահացնել։ Եթէ այս ամեն պատմական պարագաները մտաբերենք,

(1) Զարմանալի չէ, որ այն հովուաց մէջ կան այնպիսիք, որք հայազգի չեն. բաւական է որ քրիստոնէական հօտին առաջնորդ եղած են Հայաստանի գաւառաց մէջ, իրենց առաքելական յաջորդութիւնը Հայաստանի առաքեալներէն՝ Թադէոսէն և Բարթուղիմէոսէն շարունակելով. որովհետեւ այն ժամանակ քրիստոնէական ազգային եկեղեցեաց բաժանումներ չկային։

այն ժամանակ աւելի կը համոզուինք, որ Քրիստոնէութիւնը անընդհատ տեւականութիւն ունեցած է Հայաստանի մէջ, մանաւանդ երբ որ այն նահատակութեան և հալածանաց դէպքերը յառաջ բերենք. որոնք կը յիշուին պատմութեան մէջ մինչեւ Տրդատայ ժամանակը, և որոնք վերոգրեալ հովուական անուններէն աւելի մեծ ապացոյց են Քրիստոնէութեան յարատեւութեանը առաջին շրջանին մէջ։

Թողունք Ոսկեանց և Սուքիասեանց նահատակութիւնը, որ մոլեգինն Արտաւազդայ թագաւորութեան ժամանակ կատարուած է։ Խորենացին, առնելով Կեսարիոյ Փիրմիլիանոս եպիսկոպոսի Հալածանաց Պատմութեան անունով գրքէն, կ'ասէ որ, քրիստոնեայք այնչափ բազմացած էին Հայաստանի մէջ Խոսրովու (հօր Տրդատայ) թագաւորութե ժամանակ, որ նոյն արքային ստիպուեցաւ սաստիկ հալածանք յարուցանել։ Կը վկայէ նոյնպէս և Տերտուղիանոս թէ՝ 140 թուականին բազմաթիւ քրիստոնեայք կային Հայոց աշխարհին մէջ։ Իսկ Տրդատայ համար կը պատմուի թէ՝ այնչափ զայրացած էր քրիստոնէից ամման դէմ (իւր քրիստոնէական դարձէն առաջ,) որ հալածանաց երկու հրովարտակ հանեց, որ խստիւ արգելուի Քրիստոնէութիւնը։

Այս ամենը յայտնապէս կը ցուցնեն ուրեմն, որ Թադէոսի և Բարդուղիմէոսի առաքելական ջանքը և Թափած արիւնը անօգուտ չանցան Հայաստանի մէջ. այլ նոցա քարոզած աւետարանական հիման վրայ հաստատուած Հայաստանեայց Եկեղեցին (Հայ քրիստոնեայք) և հաւատը անխախտելի մնաց, Թէպէտ և երբեմն հալածուելով և երբեմն սրտերու ծածկութեան մէջ ամրանալով: Այս պատճառաւ է, որ մեր Եկեղեցին իւր հաստատութեան և առաքելականութեան քարինք կ'ընդունի զԹադէոս և զԲարդուղիմէոս, և նոյն առաքելականութեան մէջ է իւր նախնականութիւնն ու անկախութիւնն: Կը մնայ մեզ ուրեմն մի քանի խօսք ևս նոյն ժամանակեայ քրիստոնէական ներքին սովորութեանց վրայ խօսիլ:

Պատմական յիշատակարանք, Հայաստանեայց Եկեղեցւոյն նկատմամբ, առանձինն ոչինչ չեն աւանդեր քրիստոնէական ներքին սովորութեանց մասին: Սակայն անկասկած պարտինք ընդունել, որ մեր Եկեղեցին առաջին շրջանին մէջ կը վարուէր առաքելական սովորութեամբ, այն է կը կազմէր որպէս մի քրիստոնէական գերդաստան, որոյ անդամները կապուած էին իրարու հետ հայրական, որդիական և եղբայրական կապով, հպատակելով մի միայն աստուածային կա-

մաց և աւետարանական պատուիրանաց ։ Ամենէն ընդունականները և վարքով ու բարքով անարատները կ'ընտրուէին Տեսուչ և Սպասաւոր, միւսները ուսուցանելու և սպասաւորելու համար ։ Այս ընտրութիւնը կը լինէր վկայութեամբ հաւատացելոց, ձեռնադրութեամբ Առաքելոց կամ եպիսկոպոսաց ու աղօթիւք ամենեցուն, համգոյն ընտրութեան Մատաթիայի, եօթն սարկաւագաց և այլոց, ինչպէս կ'աւանդէ մեզ Գործք Առաքելոցն (1) ։ Նայելով տեսչութեան և սպասաւորութեան պաշտօնին ընտրուածները կը կոչուէին եպիսկոպոս, երէց, սարկաւագ, և շատ անգամ եպիսկոպոսութիւնը և երէցութիւնը անխտրաբար իրարու տեղ կը գործածուէին (2), ինչպէս և Առաքեալք անգամ երբեմն երէց կ'անուանէին (3) ։ Ընտրելոց անպայման պարտքն էր ուսուցանել և առաջնորդել աւետարանական լուսով և կատարել հոգեւոր պիտոյքներ ․ իսկ հաւատացելոց պարտքն էր իսպառ հրաժարիլ հեթանոսական պաշտամունքներէ և քրիստոնէական փրկարար վարդապետութեանը հպատակիլ, որ կը պատուիրէր ազատութիւն 'ի մեղաց, սէր, արդարութիւն, ճշմարտութիւն,

(1) Գործ. Ա. 21—26։—Զ. 2—7։
(2) Գործ. Ի. 17. 28։—Տիտ. Ա. 5—7։
(3) Ա. Պետ. Ե. 1։—Բ. Յով. Ա. 1։—Գ. Յով. Ա. 1։

ողորմածութիւն, և այլն ։

Քրիստոնէութեան մէջ նոր ընդունուողներէն, ըստ պատուիրանին Քրիստոսի (1), կը պահանջուէր կատարեալ հաւատ, յոյս, սէր և որդեգրութեան ջերմեռանդն բաղձանք, և ապա երեք անգամ ընկղմամբ (2) ՚ի ջուրս կը կատարուէր Մկրտութեան խորհուրդը յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ՚ի նշան լուացման և ազատութեան ՚ի մեղաց և որդեգրութեան ամենասուրբ Երրորդութեան ։ Երբ ամբողջ գերդաստաններ Քրիստոնէութեան ծոցը կը դիմէին, նորածիններն և նորահասակներն ևս կը մկրտուէին, այն պայմանաւ որ ընդ զարգացման հասակին անպատճառ կրթուին աւետարանական պատուիրանաց մէջ, որոյ մասին և կը պարտաւորուէին ծնողք և կնքահարք և մըկրտաղք ։

Յետ մկրտութեան հաւատացեալքն կը դրոշմուէին և կը կնքուէին խորհրդաւոր Դրոշմով (3), ՚ի նշան զօրութեան և զինուորութեան Յիսուսի Քրիստոսի։ Այսպիսի սրբութենէն յետոյ նոքա նա և Սուրբ կ՚անուանէին, ՚ի նշան սրբման ՚ի հեթանոսաց ։

Ընտանեկան կեանքը, որ հիմն է մարդկային ընկերականութեան և վառարան քը-

(1) Մատ. ԻԸ. 20 ։
(2) Յով. Զ. 4 ։
(3) Գործ. Ը. 17—18։—ԺԸ. 5—6։—Եբր. Զ. 2 ։

քրիստոնէական բարեպաշտութեան, կը սըր-
բուէր Ամուսնական խորհրդով, որ որչափ
եղծուած էր հեթանոսութեան ժամանակ,
ընդհակառակն այնչափ մեծութիւն ստա-
ցաւ Քրիստոնէութեան շնորհիւ, որ կոչե-
ցաւ նշանակ սիրոյն Քրիստոսի առ Եկեղե-
ցի[1]: Իսկ կուսութիւնն կամաւոր էր և գո-
վութեան արժանացած էր, մանաւանդ կու-
սութիւնն կատարեալ սրբութեամբ սրտի[2]:

Կեդրոն ժողովման հաւատացելոց էր
խորհուրդն Հաղորդութեան «Բեկանել հա-
ցին»[3], զոր միասին կը կատարէին ՚ի նշան
միութեան ընդ Քրիստոսի և ընդ միմեանս:
Եւ որովհետեւ անհնար է հաղորդութիւնն
ընդ Քրիստոսի առանց սրբութեան, որպէս
և անհնար է միութիւնն ընդ եղբարց, ա-
ռանց կատարեալ սիրոյ. ուստի պարտաւոր-
ուած էին նախ զղջալ, ապաշխարել, սրբիլ,
եղբարց հետ հաշտուիլ և ապա Գոհութեան
հացը բեկանել: Ի նշան կատարեալ սրբու-
թեան և հաշտութեան ողջունելով կըտային
միմեանց համբոյր սիրոյ կամ համբոյր սրբութեան[4]:

Վերոգրեալ բոլոր քրիստոնէական խոր-
հրդաւոր սովորութեանց (զորս մինչեւ ցարդ
ունի Հայաստանեայց Եկեղեցին) հետ միա-

(1) Ա. Կորն. Է. 11—39:
(2) Ա. Կորն. Է. 32. 34. 38:
(3) Գործ. Բ. 42. 46:—Ի. 7:
(4) Հռովմ. ԺԶ. 15:
— Ա. Կորն. ԺԶ. 20:

ռին վառուած էին հաւատացեալքն անմա-
հութեան սիրով, ներկայ կեանքը համարե-
լով միայն բարեգործութեան և առաքինու-
թեան միջոց. ուստի և աշխարհասիրութեան
և ընչասիրութեան ցանկութիւնը մեռու-
ցած էին իւրեանց մէջ։ Այս երկնային սէրն
էր, որ կը վառէր հաւատացեալները զոհել
իւրեանց ստացուածքը կարօտեալ եղբարց
համար, ուրախութեամբ կրել ամեն հալա-
ծանք ու տանջանք, և քրիստոնէական մահ-
ուամբ նահատակուիլն՝ համարել կատարեալ
ցնծութիւն։

Այսպէս ուրեմն, ինչպէս Քրիստոսի Ա-
ւետարանը, նոյնպէս և հաւատացելոց կեան-
քը, նոր էր հեթանոսաց համար. վասն որոյ
և անդադար հալածանաց մէջ էին, մանա-
ւանդ թագաւորաց և իշխանաց կողմէն, ո-
րոց առաւել ընդդէմ էր քրիստոնէական
հաւասարութեան սկզբունքը. վասն զի վար-
ժած էին նոքա ոչ միայն իշխել, այլ և ՚ի շարս
ստորուածոց դասիլ և ժողովրդէն պաշտօն
առնուլ։ Սակայն Քրիստոնէութեան առաջ
կայսերք և թագաւորք ևս նուաճեցան, ինչ-
պէս պիտի տեսնենք Երկրորդ շրջանին մէջ։



ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Քրիստոնէութեան յաղթական տարածմանէն Հայաստանի մէջ մինչեւ նորին դիմամարտութիւնը ջրադաշտական մոգակրօնութեան ։

302–450

Ընդհանուր տեսութիւն երկրորդ շրջանին վրայ։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ *այս երկրորդ շրջանը, որ դարուկիսեան ժամանակամիջոց միայն կը պարունակէ, շատ նշանաւոր է ոչ միայն Հայաստանեայց Եկեղեցւոյն նկատմամբ, այլ եւ ընդհանուր Քրիստոնէութեան. վասն զի Քրիստոնէութեան յաղթութիւնը հանդիսապէս կատարուած է այս շրջանին մէջ, թէ՛ ի Հայաստան, եւ թէ՛ նաեւ հռովմէական լայնածաւալ պետութեան մէջ։*

Այն երկնային Կրօնքը, որ ըստ պատուիրանի եւ ըստ քաջալերութեան Հիմնադրին, սկսան քարոզել երկոտասան աննշան եւ առանց դպրութեան մարդիկ, երեքդարեան տոկալի հալածանքներէն յետոյ, յաղթեց աշխարհի գիտութեանը եւ զօրութեանը։ Հե-

թանոսութիւնը յամենայն զօրութենէ զէնեցաւ Քրիստոնէութեան դէմ, որ սասանէ և բնաջինջ առնէ, բայց անհնարին եղաւ։ Թողունք Հայաստանի մէջ կատարուած հալածանքները, թողունք միւս անհատական տանջանարանները, տամն հանրական հալածանքներ գործ դրուեցան Հռովմէական տաճն կայսերաց ժամանակ — Ներոնի, Դոմիտիանոսի, Տրայանոսի, Մարկոս Աւրելիոսի, Սեպտիմ Սեւերոսի, Մաքսիմիանոսի, Դեկոսի, Վաղերիանոսի, Աւրելիանոսի, Դիոկղետիանոսի, Լիկիանոսի — և սակայն հուր, սուր, բանտ, կախաղան և հազարաւոր տանջանարանք չըկարացին քրիստոնէական կրօնի տարածմանը արգելք լինիլ։ Այլ ահա՛, այն ինչ Հայաստանի մէջ սէգն Տրդատ կը խոնարհէր աւետարանական հեզ լծոյն տակ, հռովմէական պետութեան մէջ՝ մեհապանծն Կոստանդիանոս կը նուաճի, և Բեթղեհէմի մսուրին մէջ խանձարուրուած Քրիստոնէութիւնը՝ արքայական աթոռներուն վրայ կը բարձրանայ. վասն զի Գողգոթայի վրայ տնկուած նախատանաց խաչը 'ի վեր քան զարեգակն կ'երեւութանայ Կոստանդիանոսին՝ սոյն նշանաբանիւ — Այսու յաղթեսցես։ Այս է, որ պիտի բռնաւորութիւնը խորտակէ, գերիները ազատէ, աղքատները սփոփէ և տկարները զօրացնէ։ Այս է, որ աշխարհի վայրա-

դութիւնը և զգայական ցանկութիւնները պիտի սանձահարէ, կռոց պաշտամունքը եղծանէ, անոպայ Հրէութիւնը մեղմէ և հեթանոսական կարծեցեալ իմաստութիւնը պաշտեցնէ ։ Նա արդարեւ՝ երկրորդ շրջանին մէջ յաղթեցաւ և պարտեցաւ աշխարհ տըկարաց մեղմական զգօնութեամբ․ յիմարեցաւ աշխարհի իմաստութիւնը․ անկան կործանեցան Խաչի առջեւ հրէական ժողովրդանոցը և. հեթանոսական բազմաստուածութիւնը ։ Ի զո՛ւր էր, որ կը ջրուէին և կը վըտարանդէին հաւատացեալները․ 'ի զո՛ւր հեղեղի նման կը թափէին քրիստոնէից արիւնը․ Վտարանդեալները քրիստոնէական ուսեաց պատգամաւորներ դարձան և մարտիրոսաց արեան կաթիլները սերմն Քրիստոնէութեան․ Ճինական խուղերէն մինչեւ հռովմէական ինքնակալութեան աթոռը գրաւեց Քրիստոնէութիւնը, բոլոր տիեզերաց մէջ հնչեցաւ Աւետարանի փրկարար բարբառը և թագաւորները դայեակ դարձան Քրիստոնէութեան, իսկ թագուհիք՝ մանկակալք․ ինչպէս գեղեցիկ գուշակուած էր մարգարէի բերանով — « Ահաւասիկ ամբարձից ըզձեռս իմ 'ի վերայ ազգաց, և 'ի կղզիս կանգնեցից զնշան իմ․ և ածիցեն զորդիս քո 'ի ծոցըս իւրեանց, և զդստերս քո 'ի վերայ ուսոց իւրեանց բարձեալ բերիցեն ։ Եւ եղիցին

Թագաւորք դայեակք քո, և իշխանք նոցա՝ ստնտուք քո(1)։

Բայց՝ եթէ մի առ մի հաշուենք թէ ինչ սոսկալի բռնութեանց և բազմահնար տանջանարանաց տոկաց Քրիստոնէութիւնը առաջին երեքդարեան շրջանին մէջ և յաղթեց․ կը դողանք և կը սարսուինք․ վասն զի, 'ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցայսօր, ոչ մի եղեռնագործութեան դէմ այնպիսի տանջանարաններ չը տեսնուեցան, ինչ որ քրիստոնէից անմեղութեան դէմ հնարուեցան․ և տակայն ոչ մի ինքնակալ այն փառքը չը ժառանգեց, ինչ որ ճշմարիտ քրիստոնեայք ժառանգեցին։ Թողնենք ընդհանուրը և 'ի մասնաւորի մեր Եկեղեցւոյն վրայ դարձնենք մեր նայուածքը։

Քրիստոնէութիւնը մի վսեմ և սքանչելի յաղթանակ կանգնեց մեր Հայոց աշխարհին մէջ յընթացս երկրորդ շրջանին։ Կործանեց նա կռապաշտութիւնը, սասանեցոյց քրմութիւնը և ծաւալեց լուսաւորութիւնը։ Այս շրջանին մէջ կը տեսնենք մեր Եկեղեցականութեան բուն նշանակութիւնը, պարտուց ճանաչումն և ժառանգաւորութեան կոչումն։ Այս շրջանին մէջ կը կատարուին, ինչպէս ազգային, նոյնպէս և տիեզերական երեք եկեղեցական Ժողովներ։ Այս շրջանին կը պատկանի հայկական գրոց գիւտը և հայ-

(1) Եսայ. ԽԹ. 22. 23.

րենի դպրութեան ոսկեղինիկ դարու արգասաւորութիւնը։ Այս շրջանին մէջ կը կատարուի Աստուածաշունչ Գրոց հայկական թարգմանութիւնը և կը բեղմնաւորի քրիստոնէական, բարոյական և մտաւոր դաստիարակութիւնը։ Այս շրջանին մէջ ծնունդ կ'առնուն քրիստոնէական ոգւով վառուած մատենագիրներ և ժամանակակից յառաջադիմութեան հետևող հայ զաւակներ։ Ասով բանիւ, այս շրջանն է մեր ազգային բարոյական և մտաւոր կենաց շղթային ամենամեծ և խորհրդաւոր օղը, որուն վրայ կարեւոր կը համարինք ընդարձակօրէն խօսիլ, և իւրաքանչիւր իրողութեան վրայ ուրոյն ուրոյն խօսիլ։ Բայց որովհետեւ այս վերանորոգութեան և լուսաւորութեան հայրը ԳՐԻԳՈՐ ՊԱՐԹԵՒԱՉՆ է, այն Աստուծոյ ընտրեալ մարդը, որ իրաւամբ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ կոչուած է, ուստի պարտ և արժան է Գրիգորի և իւր թագաւոր աշակերտ Տրդատայ դարձի պատմութենէն սկսիլ, որ այն Երկրորդ շրջանի դարագլուխը կը կազմէ։



Ա.

Ծնունդ և դաստիարակութիւն Գրիգորի. — Ծնունդ
կրթութիւն և թագաւորութիւն Տրդատայ. — Տան-
ջանք Գրիգորի. — Գալուստ Հռիփսիմեան և Գայիա-
նեան կուսանաց և նահատակութիւն նոցա. — Ելք Ս.
Գրիգորի 'ի վիրապէն. — Սկիզբն քարոզութեան և քր-
իստոնէական միաբանութեան. — Շինութիւնք
վկայարանաց. — Կործանումն մեհենաց.

ՍԱՍԱՆԵԱՆ Արտաշիր պարսիկ թագա-
ւորի խորհրդով Անակ պահլաւունին Հայաս-
տան գալով դաւադրութեամբ սուսերա-
հար կ'առնէ Հայոց Խոսրով թագաւորը, և
մինչդեռ 'ի փախուստ կ'աճապարէ, պաշա-
րուելով Հայոց զօրքէն՝ գետամէջ կը մե-
ռանի Երասխայ մէջ: Նորա ընտանիքը և
որդիքը Խոսրովի հրամանաւ սրով կը կոտո-
րուին, և այս կոտորածէն կ'ազատի միայն ե-
րեքամեայ մանուկ մի, զոր Աստուած պատ-
րաստած էր Թադէոսի և Բարդուղիմէոսի
առաքելութեանը յաջորդ հանդիսանալու
և աւետարանական կենդանարար լոյսը հա-
մօրէն Հայաստանի մէջ տարածելու համար:
Այս մանուկը, (որոյ յղութիւնը կ'աւան-
դեն Արտազու գաւառին մէջ, Թադէոս ա-
ռաքելոյն տապանին մօտ և ծնունդն Վաղար-
շապատ քաղաքին մէջ,) իւր Սոփիա անուն
հաւատացեալ սնուցի, սորա եղբայր Եւ-

Թաղիոս Գամիրացւոյ և Բուրդար անուն պարսիկ ամուսնոյն՝ խնամքով կը զերծանի ՚ի Կեսարիա Կապադովկացւոց և այն տեղ մկրտուելով կըստանայ ԳՐԻԳՈՐ անուն։

Յետ սակաւ ժամանակի Արտաշիր Սասանեան զօրանալով կը տիրէ Հայաստանի և սրամահ կ'առնէ Խոսրովի գերդաստանը. բայց երկու նախարարք—Արտաւազդ Մանդակունի և Օտայ Ամատունի—կ'ազատեն Խոսրովի երկու որդիքը. առաջինն կ'առնու զՏրդատ և կը փախցնէ հռովմէական պետութեան մէջ. իսկ երկրորդն կ'առնու զԽոսրովիդուխտ և կը տանի Անի ամրոցը։ Այսպէս, Տրդատ կը վարժի զինուորական կրթութեան մէջ Լիկ-կիանոս զօրավարի մօտ. իսկ Գրիգոր պահլաւունին կը զարդանայ քրիստոնէական հրահանգօք և իմաստասիրական հմտութեամբ. Գրիգոր 18 տարեկան հասակին մէջ կ'ամուսնանայ Դաւիթ անունով մէկ մարդոյ Մարիամ բարեպաշտ դստեր հետ, և կ'ունենայ երկու զաւակ՝ Վրթանէս և Արիստակէս։ Յետ ժամանակաց այս ճնաշխարհիկ ամուսինները հաւաձայնութեամբ կը մեկնին իրարմէ, Մարիամ կ'առնու Արիստակէս և իւր անձն ողջախոհութեան տալով կըսնուցանէ քրիստոնէական բարեպաշտութեան մէջ. իսկ Գրիգոր, թողլով զՎրթանէս դայեկաց մօտ, կ'ուղեւորի առ Տրդատ. «Օհայ

ընծեացն պարտս հաստատեցանել[1]. վասն զի տեղեկացած էր որ իւր հայրն Անակ սպանած է Տրդատի հայր Խոսրովը։ Տրդատ իւր քաջութեամբ փայլելով և մանաւանդ Գոթաց Հուչէ Թագաւորին հետ ունեցած մենամարտութեան մէջ յաղթող հանդիսանալով կը պսակուի արքայական Թագով և կը դառնայ Հայաստան իւր հօր տեղը Թագաւորելու։ Երբ կը հասնի Եկեղեաց Երեզւանը՝ գոհութեան զոհեր կը մատուցանէ Անահիտին իւր յաղթութեան և արքայական փառաւորութեան համար. ուստի և հրաման կը տայ Գրիգորին (որ իւր զօրաց մէջ կը գտնուէր և քրիստոնէութեամբ յայտնուած էր,) ընթրեաց սեղանի վրայ դրած ծաղկանց պսակներէն առնուլ, նոյնպէս և Թաւ ոստեր, և մատուցանել Անահիտ դիցուհւոյն, որ ըստ հեթանոսական հասկացողութեան «Մայր էր ամենայն զգաստութեան, և նովաւ կեայր և կենդանութիւն կրէր աշխարհն Հայոց, և էր փառք ազգին»։ Գրիգոր կը հրաժարի այս հեթանոսական պաշտամունքէն և Տրդատայ զայրոյթը սաստկապէս կը բորբոքի. վասն զի վարժած լինելով Հռովմայ հալածասէր կայսերաց մօտ և հրահանգուելով քրիստոնէութեան Թշնա-

(1) Թուղթ Արտիթեայ. խոր. Գիրք Բ. Գլ. Զ. Ագաթ.

մի փիլիսոփայից(1) օգնով, կը խորշէր Քրիստոնէութենէ և վնասակար կը համարէր տէրութեան(2). Տրդատ Գրիգորի մնաց հաստատութիւնը քայքայելու համար 'ի գործ կը դնէ ողոքանք, խոստմունք, սպառնալիք և հաճութեան նշոյլ անգամ չը տեսնելով կրկրտի մի գլխի միւսոյ 'ի կիր արկանել հռովմէական սարսափելի տանջանարանները և գուցէ հռովմայեցի լեգեոնաց ձեռքով, որոնք իւր հետ եկած էին Պարսից դէմ պատերազմելու համար. Առաւել կը կատարէ Տրդատ, երբ կ'իմանայ Տաճատ նախարարէն՝ թէ Գրիգոր Անակայ որդին է, որ սպանեց զԽոսրով, և կը հրամայէ արկանել մահապարտաց գուբն — 'ի խոր վիրապն Արտաշատու(3). Հրովարտակներ կը հանէ ծածուկ և կամ յայտնի քրիստոնեայքը որոնել և չարաչար մահուամբ պատժել և միանգամայն կը պատուիրէ ջերմեռանդն պաշտօն մատուցանել Արամազդին, զգաստ Անահիտին և քաջ Վահագնին(4).

Այս միջոցին յանկարծ Հայաստան կ'ապատտանի հռովմէական հալածանաց մրրիկներէն փախած սրբասէր կուսանաց գունդ մի, գլխաւոր ունենալով զԳայիանէ և նորա

(1) Ագաթ.
(2) Ագաթ.
(3) Ագաթ.
(4) Ագաթ.

առաքինութեան ընկերակից Հռիփսիմէ ա-
նուն մատաղ օրիորդը՝ Թագակալ տոհմէ, որ
ինչպէս կը պատմեն, փախած էր Դիոկղետիա-
նոսի հետ չը հարսնանալու պատճառաւ։
Այս կուսանքը կը պատսպարուին Վաղար-
շապատ արքայանիստ քաղաքի մէկ հնձանին
մէջ և իւրեանց ձեռուաց վաստակով կը կե-
րակրուին, վասն զի մէկը ապակեգործութեան
արուեստ գիտնալով՝ ուլունքներ կը յօրինէ և
զայն վաճառելով իւրեանց օրական պարէնը
կը հայթայթեն։ Յետ երկար հետազօտու-
թեան զայս կ՚ընդունի Տրդատ Հռովմայ
կայսերէն փախստականաց մասին և որոնե-
լով կը գտնէ իւր Թագաւորական կայան-
քին մէջ։ Երկու օր հետեւեալ զօրքով ա-
պարափակ առնելէն զկնի, ոսկիապատ զա-
հաւորակներով, սպասաւորներով և շքեղ
հանդերձներով իւր արքունիքը բերել կը
տայ Հռիփսիմէն, և սքանչելի գեղեցկու-
թեանը վրայ զարմանալով՝ կը ջանայ նորա
անմեղութիւնը զոհել իւր մոլեգնութեանը։
Բայց սրբասուն կոյսը կը յաղթահարէ Տըր-
դատին և կը փախչի պալատէն, գոհութիւն
մատուցանելով Աստուծոյ, որ պաշտպանն է
անմեղութեան։ Այս դահճապետան կը հա-
նի և տանջանօք Հռիփսիմէն կեանքէ
կը զրկէ, ընդ նմին և նորա ընկերներէն 33
հոգի, որոց մարմինքն կ՚ընկենուն արտաքոյ

քաղաքին։ Մ՚իւս օրը իւր երկու ընկերու-
հեաց հետ միասին տանջանքի կը մատնուի
և Գայիանէն, որ առաջ արքայական պալատն
կոչուած էր Հռիփսիմէն համոզելու համար,
բայց նա ընդհակառակն քաջալերած էր մա-
տաղ օրիորդը՝ տուաւել իւր մարմնաւոր կեան-
քը զոհել, քան թէ իւր կուսական անմեղու-
թիւնը։ Նոյնպէս կը կատարուին 37 կուսանք
և մնացեալները կը փախչին, որք մօտ 40 կը
համարուէին։ Սակայն Տրդատ շատ կը տրտմի
Հռիփսիմէի մահուան վրայ, որ առանց իւր
հրամանին և գիտութեան նահատակուած էր։

Վեց օրէն յետոյ որսի կ՚ելնէ Տրդատ
և կը մոլեգնի, որպէս վայրենի անասուն, իւ-
պառ կորուսանելով իւր բանականութիւնն։
Տրդատի զգաստ քոյրը՝ Խոսրովիդուխտ հըն-
դիցս տեսիլ կը տեսնէ, որով կը յայտնուի
թէ՝ Արտաշատու վիրապին մէջ ձգուած Գրի-
գորը միայն կարէ բժշկել զՏրդատ, եթէ
հանուի այն գբէն։ Օտայ նախարարը իսկոյն
Արտաշատ կ՚ուղարկուի, և նոր Գանիէլն
Հայաստանեայց՝ Գրիգոր, յետ երկարամեայ
կալանաւորութեանն, կենդանւոյն կը հանուի
վիրապէն, մարմինն թխացեալ և սևացեալ,
և լուացուելով և նոր հագուստներ հագ-
նելով կ՚ուղեւորի ի Վաղարշապատ։ Վայ-
րենացած թագաւորն ու նորա հետ միասին
բոլոր մոլեգնեալ և փրփրեալ իշխանները և

բազմաթիւ պատահարները Գրիգորի առաջք կ'ելնեն, որ ծունր կ'իջնէ, կ'աղօթէ և սակաւ ինչ կը զգաստացուցանէ ։ Իսկ երբ իրենց յանցանաց համար թողութիւն կը խնդրեն զգաստացածները, Գրիգոր կը յայտնէ, որ ինքն բնութեամբ՝ նոցա հաւասար մարդ է, ուստի և կը յորդորէ զԱստուած միայն ճանաչել Արարիչ երկնի և երկրի, զնա միայն պաշտել և 'ի նմանէ խնդրել թողութիւն և փրկութիւն (1) ։

Այս քրիստոնէական յորդորանքէն յետոյ՝ ժողովել կըտայ Գրիգոր նահատակուած կուսանաց մարմինները իւրաքանչիւրն իւր պատառոտուն պգեստով, (որ արքունական տանէն բերուած շքեղ պատանքներէն նախամեծար կը համարէր), կը նստի Թագաւորի հնձանին մէջ, ուր վկայուած էին կուսանքն, և կ'ըսկսի 66 օր քարոզել բազմախուռն ժողովրդին, որոնք ամեն կողմէն կը դիմէին աւետարանական ճշմարտութեան կենդանի ջրով իւրեանց պապակը զովացընելու ։ Այս քարոզութեամբ կը համոզէ Գրիգոր բոլոր բազմութիւնը դառնալ 'ի կռապաշտութենէ 'ի ճշմարիտ Աստուածգիտութիւն, խօսելով նախ Հօր Աստուծոյ և արարչագործութեան վրայ, երկրորդ Որդւոյն Աստուծոյ և նորա մարմնաւորութեան վրայ, և երրորդ Հո-

(1) Ագաթ ։

դուռն Աստուծոյ և միանգամայն Եկեղեցւոյ վրայ (1)։ Այս քարոզութիւնը կը լինի որպէս ընծայութիւն կամ պատրաստութիւն մկըրտութեան, որով այնչափ կը շարժի ժողովուրդը, որ համեմատ տեսլեան Գրիգորի խոկոյն կը սկսի շինել սուրբ Կուսանաց երեք վկայարանները, մէկը Հռիփսիմէի վըկայուած տեղը, միւսը Գայիանէի և երրորդը բնակութեան հնձանին տեղը։ Այն վըկայարանաց մէջ կ'ամփոփուին կուսանաց մարմինները իւրեանց հանդերձներով, Թէպէտ և դիզուած կային Գրիգորի առջեւ անուշ իւղեր, ազնիւ խունկեր և Թագաւորազուն օրիորդաց ու պատուական կանանց գոյնագոյն նարօտներ, ծիրանիներ և երկնագոյն ու սպիտակ դիպակներ։ Թագաւորն ինքն կը փորէ տապանաց տեղիքն և Աշխէն Թագուհին ու Խոսրովիդուխտ օրիորդը իւրեանց հանդերձներով բրած հողը կը կրեն և դուրս կը Թափեն։ Տրդատ հրաման կ'առնէ Գրիգորէն, մեծամեծ արձաններ կը բերէ Մասիս լեռնէն և իբրեւ կոթող յաղթութեան՝ կը տնկէ։ Գրիգորի տեսլեան համեմատ կը պատրաստուի և որմնափակ կը լինի այն տեղին, ուր պիտի կանգնէր առաջին Եկեղեցին—ԷՋՄԻԱԾԻՆ—յանուն Միածին Որդւոյն Աստուծոյ, և սեղանատեղւոյն վրայ

(1) Ագաթ.

Խաչի յաղթական նշանը կը բարձրացընեն ։ Այս տեղ կը դիմէ ժողովուրդը խուռն բազմութեամբ, որպէս 'ի կեդրոն Հայաստանեայց հոգևոր միութեան և կ'աշակերտի աւետարանական վարդապետութեան ։ Այս տեղ բազկատարած կը հայցէ Գրիգոր և Աստուած կը բժշկէ հոգւով և մարմնով խօթացեալները, անդամալոյծները, ջրգողները, բորոտները և ամեն ախտաժէտները (1). Քրիստոնէութիւնը կը յաղթանակէ և հոգւով ու ճշմարտութեամբ երկրպագուները կը բազմանան ։

Երբոր այսպէս նոր հոգին և նոր կեանքը ամենուն մէջ կ'արծարծի, կը ջանան այնուհետեւ Հեթանոսութիւնը իւր վառարաններուն մէջ շիջուցանել և մեհեանները յեկեղեցի փոխարկել ։ Սակայն Գրիգոր անպատեհ կը համարի այս հնարքը, մեհենական շինուածները կը կործանէ, և Խաչն միայն իբրև կեդրոն ժողովման՝ զանազան տեղեաց մէջ կը կանգնէ ։ Տրդատ մեծասաստ հրաման կը հանէ, որ դադրին հեթանոսական պաշտամունքները և ամենքեան Քրիստոսի ամենաքաղցր լծոյն հնազանդին ։ Առնու նա իւր հետ Գրիգորը, իշխանները և դրանիկ զօրքերը, կը շրջի բոլոր աշխարհին մէջ, կը բրէ կը կործանէ և կը հրդեհէ չաստուածոց մե-

(1) Ագաթ ։

հեանները, բագինները և պատկերները, այն է Տիւր (Հերմէս) դիցը՝ Արտաշատին մօտ, Բարշամինայինը՝ Դարանաղեաց Թորդանին մէջ. Արամազդինը՝ Անիի մէջ, Ոսկեմայր Անահիտինը՝ Եկեղեաց Երէզ աւանի մէջ, Նանէական դիցն՝ (Աթենաս) Թիլն աւանի մէջ, Միհրական դիցն՝ (Հեփեստոս) Բագայառիճի մէջ։ Անծագանձ մեհեաններու պարգեւներէն մասն կը հանեն աղքատաց և տառապելոց և քրմաց մանուկները քրիստոնէական հրահանգաց մէջ կըրթել կը ջանան։

Բ.

Ընտրութիւն Ս. Գրիգորի և հայրապետութիւն. — Քրմութեան պատերազմը և քրիստոնէութեան յաղթանակը. — Սքանչելի տեսարան հայրապետական վերադարձի Ս. Գրիգորի, և մկրտութիւն հաւատացելոց յԵփրատ. — Տարածումն աւետարանական լուսոյ. — Քրիստոնէական Դպրոցք. — Մենաւորական կեանք Ս. Գրիգորի։

Երբ որ կ'եռար այսպէս համօրէն ժողվուրդը քրիստոնէական սիրով, այնուհետեւ կը ժողովէին առաջի Թագաւորին նախարարք, իշխանք և բազմութիւն հաւատացելոց, և համակամ խորհրդով եւ հաւանութեամբ կ'ընտրեն հովուապետ կացուցանել համօրէն

Հայոց աշխարհին վրայ Թադէոսի և Բարդուղիմէոսի պարգեւական զաւակն Գրիգոր, որ յետ բազում դիմադարձութեան՝ ի վերջոյ կը զիջանի հաւատացելոց աղաչանքին, աստուածային կամքը տեսնելով ակներեւ իւր ընտրութեան մէջ։ Գրիգորի յանձնառութիւնը անպատում ուրախութեամբ կը լըցուցանէ հաւատացելոց սիրտը, ուստի և վաղվաղակի կը պատրաստուին Հայաստանի զանազան գաւառներէն գումարուած երեւելի Նախարարները և կուսակալները—(իշխանն Անգեղ տան, իշխանն Աղձնեաց, իշխանըն Մարդպետութեան, իշխանն Թագակապ Ասպետութեան, իշխանն Սպարապետութե̃ և Զօրապետութեան Հայոց աշխարհին, իշխանն Կորդուաց, իշխանն Ծոփաց, իշխանն Գարգարացւոց, իշխանն Ռշտունեաց, իշխանն Մոկաց, իշխանն Սիւնեաց, իշխանն Ծոդէից, իշխանն Ուտիացւոց, իշխանն Շահապ Հեր և Զարեւանդ գաւառին, իշխանըն Արծրունեաց աշխարհին)—և մեծաւ հանդերձանօք, բազմաթիւ հեծելովք և հրովարտակաւ Թագաւորին կը տանին ընտրեալն Գրիգոր Վաղարշապատ քաղաքէն Փոքրն Հայաստանի Կեսարիա քաղաքն Գամրաց, ուր կը ժողովուին եպիսկոպոսներ և քրիստոնէից բազմութիւն, և Գրիգոր կը ձեռնադրուի Ղեւոնդիոսէն ՀԱՅՐԱՊԵՏ բովանդակ Հա-

յաստանի, 302 թուականին Փրկչի։

Մեծ Հայրապետն Հայոց Կեսարիայէն կ'անցնի Սեբաստիա, իմաստուն գործակիցներ և վարդապետութեան պաշտօնեաներ կ'ընտրէ, և այն տեղէն եպիսկոպոսաց Թըրթով և Յովհաննու Սկրոչի և Աթանագինեայ վկայի նշխարներով՝ կը դառնայ իւր հօտը մխիթարելու (1)։

Բայց Տարօն հասած ժամանակ՝ օրհասական հեթանոսութիւնը զայրագին պատերազմ կը յարուցանէ Քրիստոնէութեան դէմ։ Զօրացած էին այն ժամանակ Տարօնոյ գաւառին մէջ Արձան և Դեմետրէ քրմապետները, որոնք քրմութեան մօտալուտ բարձումն տեսնելով՝ կը գրգռէին բոլոր քուրմերը և տեղւոյն ժողովուրդը և Քրիստոնէութիւնը հալածել կը ջանային նոյն երկրէն։ Սակայն երկու արիւնահեղ պատերազմներէն զկնի՝ քրմութիւնն ևս, այն հեթանոսական մթութեան խաւարամիտ սպասաւորութիւնը, ամօթահար կը յաղթուի և իւր վերջին շունչն կ'արձակէ (2)։ Հիմնայատակ կը կործանուին Վահագնի, Անահիտայ և Աստղկան մեհեանները և երեքմեհենեան Աշտիշատին մէջ կը հիմնուի Եկեղեցին Աստուծոյ, ուր կ'ամփոփուին Կեսարիայէն բերուած նըշ-

(1) Ագաթ.

(2) Զենոբ Գլակ. Պատմ. Երկրին Տարօնոյ։

խարները։ Այնդանօր կը մկրտուին նոր Հայրապետի ուղեկիցները, նախարարները, զօրքերը և բազմութիւն մարդկան 100 հազար, ուրանօր Ս. Գրիգոր առաջնորդ կը թողու հաւատացելոց համար Զենոբ եպիսկոպոսը, Անտոն ու Կրօնիդէս կրօնաւորները, և ինքն կ'ուղեւորի դէպ 'ի Արարատեան աշխարհը։

Տրդատ իմանալով Հայրապետի գալուստը՝ արքայական գերդաստանով և զօրքերով դիմաւորելու կը պատրաստուի, և ընդ առաջ ելնելով կը սպասէ Բագրեւանդ գաւառի Բագուան քաղաքի մէջ։ Երբ նոյն քաղաքը կը հասնի Ս. Գրիգոր, անպատում մեծարանօք կ'ընդունուի գունդագունդ բազմութենէն. ամսօրեայ քարոզութբ կը պատրաստէ բոլոր ժողովուրդը Մկրտութիւնն ընդունելու համար. կը պատուիրէ աղօթել և պահել պահս (Առաջաւորաց պահք), և ապա գումարելով Հայաստանի նոր Յորդանանու — Եփրատայ — ափանց վրայ, կը մկրտէ նոյն գետոյն մէջ զԹագաւորն, զԱշխէն Թագուհին, զԽոսրովիդուխտն, զօրագունդը և բոլոր բազմութիւնը աւելի քան 4,000,000 հոգի, պատարագ կը մատուցանէ և ամենքը կը հաղորդուին կենարար մարմնոյ և արեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և կը փայլին լուսով Աւետարանին (1)։

(1) Ագաթ.

Ատէն հաւատացելոց բազմութեամբ չրջապատուած կը գտնուի Ս. Հայրապետն Վաղարշապատ քաղաքը և սկիզբն կ'առնէ չինութեան հոյակապ տաճարին Էջմիածնի, որոյ տեղին առաջուց պատած էր որմով։

Այնուհետեւ կը սկսի մեծափառապէս մը-չակն Հայաստանեայց Եկեղեցւոյ տարածանել սփռել քրիստոնէական վարդապետութեան սերմունքը լայնատարած երկիրներու մէջ, որոյ քարոզութեանն սահմանք կը լինին Հիւսիսէն Սատաղ քաղաքը, Խաղտիք, Կաղարջք, Սագգութք և Կասպք. իսկ Հարաւէն Ամիդ, Մծբին, Նոր Շիրական, Մահքրտան և Կորդուք (1)։

Այսպէս ահա՛ Լուսաւորիչն Հայոց, բոլոր աշխարհը քրիստոնէական հաւատքով լուսաւորելէն զկնի, լաւ իմանալով որ ուղիղ գիտութիւնը երբէք չըհակառակիր Աւետարանին, կը ջանայ նաև հաւատոյ մշտնջենաւորութիւնը և տեւականութիւնը ապահովել գիտութեամբ, ուստի և Տրդատայ օգնութեամբ դպրոցներ կը բանայ զանազան տեղեր։ Առաջին դպրոցին մէջ կը պարապի նոյն ինքն Տրդատ և Արշակունեաց տոհմի որեարն 'ի վարժս վարդապետութեան, որ և Թագաւորական Դպրոց կ'անուանուի. իսկ միւս դպրոցներուն մէջ կ'ուսանին բազմա-

(1) Ագաթ. Սող. Եկեղ. Պատ. Գ. 8.

թիւ մանկունք և պատանիք յոյն և ասորի դպրութեամբ, որոց մէջ մանաւանդ քրմաց որդիքը յառաջասունք և ձեռասունք լինելով Ս. Գրիգորի, կը կարգուին պաշտօնեայք և սպասաւորք Եկեղեցւոյ: Սոցա կարգէն էր Աղբիանոս, որ արքունական դրան եպիսկոպոս կարգուեցաւ և ապա եպիսկոպոս 'ի կողմանս Եփրատական գետոյն: Դարձեալ սոցա կարգէն էին սոյն եպիսկոպոսները — Եւտաղիոս Բասենոյ, Բասոս, Մովսէս, Եւսեբիոս, Յովհաննէս, Ագապէս, Արտիթէս, Արտուկէս, Անտոքէս, Տիրիկէս և Կիւրակոս, թող միւս եպիսկոպոսները, որոց թիւը կը հասնէր մինչեւ 400, և երէցներն ու սարկաւագները, որոց թիւն բազում էր յոյժ:

Հայաստան աշխարհը քրիստոնէական լուսով լուսաւորելէն զկնի՝ Ս. Գրիգոր կ'առանձնանայ մենաւորութեան մէջ աղօթելու իւր հօտի հոգեւոր աճելութեան և քարոզած ճշմարտութեանց արգասաւորութեան ու հաստատութեան համար, և դարձեալ այցելութիւն կ'առնէ հաւատացելոց: Շատ բնական է սոյն օրինակ կեանքը աւետարանական վաստակաւորաց համար, այն է առժամանակ մի խոյս տալ աշխարհային աղմուկներէն, մենաւորութեան մէջ կազդուրիլ բարձրախոհ մտածութեամբ եւ վերստին

դառնալ առ ժողովուրդն նորոգ զօրութբ: Ս. Գրիգորի մենաւորութեան օթարանը Դարանաղեաց Սեպուհ լեառն էր, Մանեայ այրը, ուր ճգնած էր Հռիփսիմեանց ընկերակից Մանէ կոյսը և ՚ի վախճանին Ս. Գրիգորի ձեռամբ թաղուած:

Գ.

Ընտրութիւն և Ձեռնադրութիւն Ս. Արիստակիսի. —Ս. Գրիգորի և Տրդատայ Հռովմ երթալուն վրայ.— Ժողով Նիկիոյ. —Վախճան երկրաւոր կենաց Ս. Գրիգորի և Տրդատայ.— Հայրապետութիւն Արիստակիսի, Վրթանիսի, Գրիգորիսի. —Սկիզբն կաթողիկոսութեան Աղուանից և Վրաց. —Յուսիկ և Փառներսէհ:

ԹԱԳԱՒՈՐՆ ՏՐԴԱՏ, որպէս զի ժողովուրդը իւր Լուսաւորչի մենաւորութեան ժամանակ հոգեւոր կարօտութիւններ չըկրէ, քանի մի նախարարաց պատգամաւորութբ կը հրաւիրէ Կեսարիայէն Ս. Գրիգորի որդիքը՝ Վրթանէս և Արիստակէս, և հաւատացելոց առաջարկութեամբ եպիսկոպոս կը ձեռնադրուի Արիստակէս իւր առաքելանման հօրէն և նորան տեղապահ կը կարգուի:

Այս միջոցին ՄԵԾՆ Կոստանդիանոսի քրիստոնէական դարձի լուրը Հայաստան կը հաս-

նի և Տրդատ խնդակցութեան պատճառաւ կը պատրաստուի Հռովմ երթալ։ Կ'աւանդուի թէ՝ իւր հետ կ'առնու նաեւ զԼուսաւորիչն Գրիգոր, զԱրիստակէս և զԱղբիանոս (Թէպէտ և Գրիգորի մենաւորական կենաց բաղձանքին նայելով՝ անհաւան կը Թուի նորա երթալն Տրդատայ հետ 'ի քաղմախոսն Հռովմ,) և արքայավայել մեծարանք գտնելով Կոստանդիանոսէն կը դառնայ 'ի Հայաստան մեծամեծ ընծաներով։ Քրիստոնէական սէրը և խնդակցութիւնը ամենայն գովութեան արժանի գործ է, մանաւանդ երկու թագաւորաց մէջ, որոց օրինակը չինող և հաստատող է ժողովրդեան։ Սակայն վերջին դարուց հռովմէական կղերի իշխանասիրութիւնը ջանահնար եղած է տարօրինակ կերպարանք տալ նախնի դարուց քրիստոնէական եղբայրութեանը, և այս պատճառաւ կարկատած է Դաշանց թուղթ (1) անունով գրուած մի Հայաստանեայց եկեղեցւոյ առաքելական անկախութիւնը պա-

(1) Կ. Վ. Շահնազարեան, միաբան Ս. Էջմիածնի, հետաւոր և բազմակողմանի բանադատութեամբ ցուցած է Դաշանց Թղթոյն եղջերուաքաղ ստութիւնը, հրատարակելով իւր աշխատասիրութիւնը նախ Երկրագունդ օրագրի մէջ. և ապա առանձին տետրակով 1862 ին փարիզ տպագրուած։ Մխիթարեան միաբան Հ. Գար. Զ. նոյնպէս անվաւեր հրատարակած է յիշեալ Թուղթը։ Պատ. Հայերէն դպրութեան, պատգ. 1865 ամ, երես 121—124.

պետական վերացական գիտութիւնը հը-
պատակեցնելու ճարտարամտութեամբ ։ Ա-
կայն որչափ պապականութիւնը հեռի է նախ-
նի հռովմէական եկեղեցւոյ ուղղութենէն,
նոյնչափ հեռի է և բաղանց Լոուըին ճշմարտու-
թենէ, ինչպէս և Հայաստանեայց եկեղե-
ցին փառամոլութեան հպատակութենէ ։

Մ՚ինչդեռ Հայաստանեայց Եկեղեցին
Քրիստոսի անհաս մարդասիրութեան վրայ
կըզմայլի, հռովմէական պետութեան մէջ
արիոսական աղանդաւորութեան կասկած-
ները կը յուզին Քրիստոսի աստուածու-
թեան դէմ, և այս մոլորութեան առաջն առ-
նելու համար՝ 325 թուականին Նիկիոյ տի-
եզերական Ժողովը կը գումարուի, 318 հայ-
րապետաց ներկայութեամբ, ուր փոխանակ
Գրիգորի՝ ներկայ կը գտնուի Արիստակէս, և
նոյն Ժողովի Հանգանակն ու քանի մի Կա-
նոններ Հայաստան կը բերէ ։ Ինչպէս սոյն
Ժողովը, նոյնպէս և Ս. Գրիգորի վարդա-
պետական գրուածոց վրայ առանձին պիտի
խօսինք ՚ի կարգին ։

Ս. Գրիգոր մենաւորութեան մէջ կը կնքէ
իւր բազմարդիւն կեանքը, որոյ մարմինը
յեռանական հովիւները գտնելով կը թաղեն,
և յետ ժամանակաց կը յայտնուի Գառնիկ
Ճգնաւորին, ուստի և Արքոյն նշխարքը կը
բերեն ՚ի Թորդան և անտի ՚ի Վաղարշապատ։

Իսկ Տրդատ բաւական ժամանակէն յետոյ առանձնութեան փափաքով անգամ մը կը հրաժարի իւր թագէն, կրկին կը կոչուի և կը թախանձուի թագաւորելու և նախարարաց խստասրտութեամբ կը թիւնաւորուի և կը վախճանի։ Այսպէս կը կնքեն իւրեանց կեանքը Հայոց աշխարհի լուսաւորութեան երկու մեծ Տածիչները, մինը մենաւորութեան մէջ, իսկ միւսն թիւնաւորուելով։ Բայց իրենց անուանքը և արարքը անմահ կը մնան Հայոց Ազգի և Եկեղեցւոյ գոյութեան հետ. վասն զի մարդկութեան բարերարաց փառքը և վկայութիւնը ոչ կ'անյայտանան և ոչ կը թիւնաւորին։

Ս. Գրիգորի և Տրդատայ վախճանէն ըզկնի Հայաստան կը տարուբերի Հռովմէական և Պարսկական ազդեցութեան տակ։ Այս երկու ազդեցութիւնը իսպառ կը թուլցնեն Հայաստանի քաղաքական ոյժը և երկու կը բաժնեն, որով և խռովութիւնք, երկպառակութիւնք և կոտորածք կը յաճախեն։ Եկեղեցւոյ հովիւները մեծ դժուարութեան կը հանդիպին։ Մի կողմէն կը պարտաւորին երկու օտար պետութեանց հարստահարութիւնները մեղմելու միջնորդներ հանդիսանալ, միւս կողմէն կը ստիպուին նախարարաց և իշխանաց մոլութեանց դէմ մաքառիլ։ Վասն զի արտաքին հրապարակական կռա-

պաշտութիւնը բարձուելէն զկնի՝ Քրիստոնէութեան առջեւ պատերազմ կը բացուի ներքին մոլութեանց հետ, պատերազմ, որ ոչ թէ միայն նոյն ժամանակի, այլ Քրիստոնէութեան տեւական և իրական պատերազմըն է, որ աշխարհիս կատարածի հետ միայն կարէ վերջանալ։ Ուստի և Ս. Գրիգորի յաջորդները, մեծ մասամբ, իշխանաց մոլութիւնները կշտամբելու համար կը կատարին մահուամբ, ինչպէս պիտի տեսնենք յետագայ պատմութենէն։

Ս. Արիստակէս (332 ին) հայրապետանալով՝ իւր հօր նման հոգ կը տանի ամենատեսակ բարեկարգութեան, կը խրատէ ու կը ջանայ ուղղել իւր հօտը բարեպաշտութեան և ճշմարտութեան ճանապարհով, և սակայն Չորրորդ Հայոց վերակացու Արքեղայոս իշխանի վատ արարքը յանդիմանելու համար կը սպանուի սրով Ծոփաց գաւառի մէջ, և կը թաղուի Թիլն աւանի մէջ։

Ս. Վրթանէս կը յաջորդէ իւր կրտսեր եղբօրը Արիստակէսին (339) և Եկեղեցւոյ պայծառութեանը նախանձախնդիր կը լինի. Երուսաղէմի Մակարիոս Պատրիարքէն կանոնական թուղթ մի բերել կըտայ և յարմարելով զայն՝ Հայաստանեայց բոլոր եպիսկոպոսներուն կ՚ուղարկէ։ Շատ աշխատանք կը կրէ Պարսից հարստահարութենէն ազգը զերծ կա-

ցուցանել, և այս առթիւ Թուղթ կը գրէ Կոս-
տանդին կայսեր և օգնութիւն կ'ընդունի.
և ապա Տիրանայ Թագաւորութենէն ևս պատ-
ճառ կը լինի, ինքնին գնալով առ Կոստան-
դին։ Սակայն իւր հայրապետութեան առա-
ջին տարիներուն մէջ Նախարարաց Թելա-
դրութեամբ յարձակումն կը կրէ լեռնական-
ներէն, Տարօնոյ անդրանիկ Եկեղեցւոյ տօ-
նախմբութեան ժամանակ, և հազիւ հազ
սպանութենէ կ'ազատի. Նոյնպէս և Տիրա-
նայ ախտամոլութիւնը յանդիմանելու հա-
մար ոչ սակաւ կը նախատուի։

Վրթանիսի հայրապետութեան առաջին
տարին Աղուանք կը դիմեն առ Տրդատ և
իւրեանց երկրի համար առաջնորդ կը խնդ-
րեն. ուստի և Վրթանէս իւր երէց որդին՝
մանուկն Գրիգորիս՝ արքեպիսկոպոս կը ձեռ-
նադրէ և Աղուանք կ'ուղարկէ։ Ս. Գրիգո-
րիսէն սկիզբն կ'առնու Աղուանից և Վրաց
կաթողիկոսութիւնը (1), ուր կանխապէս քա-
րոզուած էր Աւետարանը Լուսաւորչի առա-
քելական խնամատարութեամբ և երկու կող-
մանքն ևս՝ Հայաստանի հայրապետական
աթոռէն կ'ընդունէին առաջնորդներ։ Վրա-
ստանի մէջ քարոզած էր Աւետարանը
Նունէ կոյսը, որ Հռիփսիմեանց նահատա-
կութեան ժամանակ փախած էր Վրաց աշ-

(1) Բուզ. Դպր. Գ. Գլ. Զ.

քայանիստ քաղաքն Մծխիթա, դարձուցած էր Նոյա Միհրան իշխանն 'ի քրիստոնէութիւն, և Լուսաւորչի հրահանգավ կործանած էր կուոց պատկերները, մանաւանդ ամպրոպային Արամազդայ պատկերը՝ մայրաքաղաքի հանդէպ եղած լերան վրայ, որոյ տեղը կանգնած էր Խաչի յաղթական նշանը. և ապա Ս. Գրիգորի ղրկած հովիւներու ձեռքով Վրաստանի բնակիչները ընդունած էին քրիստոնէական մկրտութիւն։

Գրիգորիս բանիւ և իւր առաքինական կեանքով քարոզիչ կը հանդիսանայ Աղուանից երկրին մէջ, սակայն իշխանները չըկարենալով տանիլ նորա արդար կշտամբանքները, ձիու ագիէն կը կապեն և Վատնեան դաշտի մէջ գետնաքարշ առնելով կը նահատակեն, որոյ մարմինը իւր աշակերտները կը բերեն և կ'ամփոփեն Ամենեաց գաւառի Ամարաս աւանի մէջ, ուր կանխապէս եկեղեցի կար հիմնուած Ս. Լուսաւորչէն (1)։

Վրթանիսի հայրապետութեան ժամանակ տառապանքներ կը կրէ նոյնպէս Ասորոց Յակոբը Մծբնայ հայրապետը, Լուսաւորչի հօրաքեռորդին, և կ'անիծանէ Հայոց Մանաճիհր զօրավարը, իւր աշակերտները ծովը ձգելու համար։

(1) Բուզ. Դպր. Գ. Գլ. Զ.

Վռթանիսին կը յաջորդէ իւր կրտսեր որդին Յուսիկ, (355ին, ունենալով երկու որդի Պապ և Աթանագինէ,) որոյ կաթողիկոսութեան ժամանակ ուրացողն Յուլիանոս իւր պատկերն Հայաստան կ'ուղարկէ, և մինչդեռ Տիրան կ'ուզէ յիշեալ դիւանկար պատկերը կախել Ծոփաց արքունական եկեղեցւոյ մէջ, անվեհեր Հայրապետը ձեռքէն յափշտակելով՝ կը խորտակէ և Տիրանայ հրամանաւ բրածեծ լինելով կը նահատակուի։ Դանիէլ Ասորին, որ քահանայ ձեռնադրուած էր Լուսաւորչէն և քորեպիսկոպոս կամ հիւպերէտ կարգուած, Տիրանայ արած անգթութիւնը կը կշտամբէ, և այս յանդիմանութեան պատճառաւ խեղդամահ կը մեռանի և կը թաղուի Հացեաց Դրախտ անուն մենարանին մէջ։ Թէպէտ և ինքն Տիրան ևս Հռովմայեցւոց ցուցած մտերմութեան համար յետ ժամանակաց կը կոչուի Պարսից թագաւորէն, աչքերը կը խարուի և կը բանտարկուի Կուաշ աւանի մէջ։

Յուսիկի տեղ Նախարարաց հաւանութեամբ կ'ընտրուի Փառներսէհ, Տարօնոյ Աշտիշատ գիւղէն, և չորեքամեայ կաթուղիկոսութենէն յետոյ կը վախճանի և Տարօնոյ մէջ կը թաղուի գեղեցիկ շիրմի մէջ։

Դ.

Ընտրութիւն և Հայրապետութիւն Մեծին Ներսիսի. — Մարդասիրական արարք նորա և բարեկարգութիւնք. — Ներսէս Հայրենեաց և օտարութեան մէջ. — Ներսէս պատերազմի դաշտին մէջ: — Շահակ. — Զաւէն. — Ասպուրակէս:

ՓԱՌՆԵՐՍԵՀԻ մահէն յետոյ Հայոց նախարարները, կուսակալները և զօրականները, ժողովրդեան մեծ բազմութեամբ հանդերձ, կը ժողվուին Արշակ Թագաւորի մօտ և միաձայն հաւանութեամբ հայրապետ կ'ընտրեն Մեծն և սքանչելին Ներսէս, Յուսիկի թոռն և Աթանագինէի ու Տիրան Թագաւորի Բամբիշ քրոջ որդին, որ ուսմամբ և բարեպաշտութեամբ զարգացած լինելով 'ի Կեսարիա, մտած էր զինուորական կարգի մէջ և կը ծառայէր Հայոց արքունեաց մէջ որպէս սենեկապետ և զինակիր Թագաւորի, բարուք քաղցր, հասակաւ բարձր և գեղանձնեայ: Ներսէս այս անակնկալ ընտրութենէն շփոթուելով կ'աշխատի հրաժարիլ, իւր անձը անարժան համարելով հայրապետական վսեմ կոչման, բայց մեծագումար ժողովի միաձայն աղաղակը զինքը կը պարտաւորէ: Ուստի Նախարարք, կուսակալք և զօրականք կը պատրաստուին և Թագաւորի հր-

րովարտակաւ կը տանին զՆերսէս 'ի Կեսարիա, ձեռնադրել կը տան Հայրապետ և բերելով կը կացուցանեն Հայաստանեայց հօտին վրայ ։

Ներսէս լիովին կը զգայ իւր անձին մէջ ազգի տարտամ վիճակը, որ արտաքուստ յունական և պարսկական ազդեցութենէն կը տագնապէր, և 'ի ներքուստ զեղծմանց և երկպառակութեանց մէջ կը տարուբերէր․ ուստի իւր բարձր կոչման համեմատ՝ արտաքնոց առջեւ կը հանդիսանայ ազգային իրաւանց իրաւարար, իսկ Ազգին մէջ՝ պարտուց կատարող հայր և ուղղութեան առաջնորդ․ այնպէս որ, երբ Ներսիսի կենաց և արարմանց համառօտագիծ պատկերն ներկայացնենք, կը տեսնենք ակներեւ, որ Ներսէս հայրապետութեան մի գեղեցիկ տիպար է, և կարեմք ըմբռնել՝ թէ ինչ է Կաթուղիկոսութիւն կամ Հայրապետութիւն ։

Ներսէս ժողով կը գումարէ Տարօնոյ Աշտիշատին մէջ համօրէն եպիսկոպոսներէ և բազմաթիւ աշխարհականներէ և կանոնական սահմանադրութեամբ կը ջանայ մարդասիրութիւնը և ողորմածութիւնը արմատացնել Հայաստանի մէջ և անգթութեան արմատը խլել ։ Կը շինէ աղքատանոցներ և հիւանդանոցներ ամեն գաւառաց մէջ՝ բորոտներու, ուրուկներու և հաշմերու պատսպարութեան

համար, որոնք մինչեւ այն ժամանակ պիղծ համարուած էին, և անգթութեամբ երեսէն փախչելով՝ ամայի անապատներու, քարանց ծերպերու և մացառներու մէջ կը բնակէին. և այս աղքատանոցներու և հիւանդանոցներու համար հաստատ կը նշանակէ աւաններէն, պտղաբեր ագարակներէն և արօտականաց կաթնէն և գեղմանէն, ընդհանուր վերատեսուչ կարգելով իւր Խադ անուն Կոռնեցի սարկաւագը։ Կը շինէ ամեն գիւղերու մէջ վանքեր կամ իջեւաններ, որպէս օտարանոց անծանօթ ճանապարհորդներու և հիւրերու համար, և որպէս տեղի ապաստանի որբոց, ծերոց և կարօտելոց։ Կը շինէ զանազան տեղերու մէջ մենաստաններ կամ միանձանց խրճիթներ, ժառանգաւորաց եղբայրանոցներ կամ դպրոցներ ամեն գաւառաց մէջ, յունարէն և ասորերէն դպրութեամբ գիտութիւն ծաւալելու համար. և տեսուչներ կը կարգէ Շաղիտա, Եպիփան, Եփրեմ, Գինդ և այլք, այնպէս որ Ներսէսի բարեգործական և ժառանգաւորական շինուածոց թիւը 2000 էն աւելի կը լինի։

Ներսէս ջնջումները եւ հեթանոսական սովորութիւնները բառնալու համար՝ յորդորանօք և կանոնական սահմանադրութեամբ կ'արգելու մերձաւորաց խնամութիւնք, կամ ամուսնական տոհմակից խառ-

նակութիւնը, որով եղծեալ էին մանաւանդ նախարարները, իւրեանց սեպհական ազատութիւնը և ստացուածքը այլոց չանցընելու ապահովութեամբ. կ'արգելու նոյնպէս մեռելոց վրայ կատարուած յուսահատական կոծումները, սեւազգեստին և այլ սնոտիապաշտ ոճիրները, և այսպէս ազգականութիւնը կը սրբէ, ընտանեկան կեանքը կը մաքրէ և քրիստոնէական յուսով կ'ամրապնդէ։

Ներսէս կը շրջի գիւղէ գիւղ, քաղաքէ քաղաք, գաւառէ գաւառ, և իւր հայրապետական խնամքը հաւասարապէս կը տարածէ ամենուն վրայ, հանապազօր սեղանակից կ'ընդունի ոչ միայն նախարարներ և կուսակալներ, այլ մանաւանդ աղքատներ, օտարականներ, կաղեր, կոյրեր, մարմնահարներ և հաշմեալներ, որոց վէրքերը շատ անգամ իւր ձեռքովը կը լուանայ, կ'օծանէ և կը դարմանէ, գիւղական խրճիթները և տանիքները իւր համար հայրապետական գահոյք առնելով։

Ներսէս հայր է հայրենեաց մէջ, իսկ ատարաց առջեւ՝ պաշտպան հայրենեաց. երբ կը լսէ թէ Թէոդոս զօրավարն կը դիմէ Հայաստանը աւերելու, ընդ առաջ կ'ելանէ, կը զիջուցանէ նորա զայրոյթը. կ'երթայ Բիւզանդիոն՝ Հայոց պատանդները յետ կ'առնու Վաղենտիանոսէն, կայսերական

տոհմէն կին կ'ամէ Ողոմպիադա կոյսը Արշակ Թագաւորին, Գնէլը (Արշակայ եղբօրորդին) պատանդութենէ հիւպատոսութեան կ'արժանացնէ, և կը դառնայ 'ի Հայաստան։

Ներսէս Արշակաւանի բնաջինջ կոտորածէն մատաղ մանուկները կ'ազատէ գոմի մէջ կրելով որթով (կողովով), դայեակներու կը յանձնէ, կը սնուցանէ և կը դարմանէ, յորոց և Արթունեաց Նախարարութիւնը կը յառաջանայ։

Ներսէս քաջ կը հասկնայ ազգային միութեան խորհուրդը և զօրութիւնը, և երբ Վաղէս Բիւզանդիոնէն, Շապուհ Պարսկաստանէն և Արշակայ ու Նախարարաց երկպառակութիւնը Հայաստանէն կործանումն կը սպառնան Ազգին և Եկեղեցւոյն, կը յորդորէ կը յանդիմանէ, Նախարարները Թագաւորի հետ կը հաշտեցնէ և ուխտել կուտայ՝ Ու Թագաւորը վարուի ուղղութեամբ և Նախարարները ծառայեն միամտութեամբ (1)։ Այս ինքն Խադ սարկաւագը Բագրեւանդայ և Արշարունեաց եպիսկոպոս ձեռնադրելով և Հայոց աշխարհի վերակացութիւնը իրեն յանձնելով երկրորդանգամ կ'երթայ Բիւզանդիոն Արշակայ Թըղթով Վաղէսի սպառնալիքները զիջուցանելու։

(1) Խոր. Պատմ. Գ. Գլ. ԻԲ։

Ներսէս հալածանք կը կրէ Վաղեսէն, արիոսականաց առաջարկութիւնը կը մերժէ, (որոնք նորա ամէն խնդիրները կը խոստանային կատարել հոգեմարտն Մակեդոն եպիսկոպոսի ձեռքով և վտանգէ ազատել՝ եթէ յօժարէր իրենց դաւանակից լինիլ.) կ'աքսորուի մի ամայի և անմարդաբնակ կղզւոյ մէջ, խոստաբուտ լինելով և տագնապելով 'ի սէր ազատութեան հայրենի աշխարհին:

Ներսէս Վաղէսի մահէն զկնի կ'ազատի աքսորանքէն, կ'արժանանայ Մեծին Թէոդոսի մեծարանացը, կընկերկայանայ Կոստանդնուպօլսոյ տիեզերական Ժողովին, ուր, 381 Թըւականին, գումարուած էին 150 հայրապետք. ապա կը դառնայ 'ի Հայաստան, կը լսէ սպանութեանց և անգթութեանց գուժեր, (մանաւանդ Գնէլի սպանումն Արշակայ ձեռքով և Ողոմպիադայի Թիւնաւորիլն Փառանձեմի սադրանօք և Մրջիւնիկ քահանայի ոճրագործութեամբ,) սիրտը կը ճմլի, կը յանդիմանէ, կը նախատէ և կը յորդորէ 'ի սէր և 'ի միութիւն:

Ներսէս երբ կը տեսնէ թէ Շապուհ Հայաստանը կ'աւերէ, բիւրաւոր քրիստոնեայք կը ջարդէ և կը գերէ. իսկ Հայոց կուսակալներն փոխանակ աւերման առաջն առնելու՝ Արշակէն կը բողոքեն, ամենքը կը ժողովէ, կը համոզէ, որ հնազանդ լինին

հայրենի թագաւորին և միաբան պատերազմին մոգեկրօնին Շապուհին դէմ, այս նըշանաւոր խօսքերը աւանդելով. «Եթէ բիւր չար իցէ Արշակ, սակայն աստուածապաշտ է. և եթէ մեղաւոր եւս իցէ, սակայն թագաւոր ձեր է [1]»։

Նոյնպէս կը տեսնէ Հայաստանի աղէտները, Շապուհի անգթութիւնները, Մերուժանի ուրացութիւնն, եպիսկոպոսաց կոտորանքներն, Նախարարազուն կանանց խեղդամահ կախումն բերդերու պարիսպներէն. սակայն չը յուսահատիր, Պապը կը թագաւորեցնէ Արշակայ տեղ՝ Թէոդոսի օգնականութեամբ, Հայոց բանակի հետ պատերազմի դաշտն կ'ելնէ 'ի Ձիրաւ, ահռելի ճակատամարտին ժամանակ՝ Նպատ լեռը կը բարձրանայ Մովսիսի նման, իւր հետ կը տանի և Պապը. ինքը բազկատարած կ'աղօթէ Հայաստանի փրկութեան համար, և զՊապ նոր տեսարանով յուղղութիւն ածել կը ջանայ. Պարսիկը կը յաղթուի, և Մերուժան, փախանակ թագի, եռացեալ շամփրով կը պսակուի Սմբատ ասպետէն։

Նոյնպէս կը կատարէ այսպէս իւր հայրապետական պարտքը, աղքատները սփոփելով իւրեանց խրճիթներուն մէջ, կայսրները ա-

(1) Բուզ. Դպր. Դ. Գլ. ԺԱ.

մտքերով իւրեանց պալատներուն մէջ, զօրականները քաջալերելով պատերազմի դաշտին մէջ. Թագաւոր և Նախարար խրատելով և կշտամբելով ազգային ժողովներուն մէջ, և 'ի վերջոյ Պապայ ձեռքով կը Թունաւորուի և կը Թաղուի Թ·իլն աւանի մէջ։

Ներսիսի մահէն յետոյ հայրապետ կ'ընտրուի (384 ին) Շահակ Մանազկերտացի, Ալբիանոսի ազգականութենէն, Հայաստանի մէջ ձեռնադրուելով և ոչ 'ի Կեսարիա, վասն զի Ներսիսի ժամանակ համօրէն ազգի հաւանութեամբ արդէն դադրած էր Կեսարիոյ մէջ ձեռնադրուելու սովորութիւնը։

Շահակին կը յաջորդէ իւր ազգականն Զաւէն, Վարազդատայ Թագաւորութեան ժամանակ։

Զաւէնին կը յաջորդէ իւր ազգականն Ասպուրակէս, այն աղետալի միջոցին, երբ Հայոց Թագաւորութիւնը արդէն երկու էր բաժնուած, և կ'իշխէին Պապայ երկու որդիքըն՝ Արշակ և Վաղարշակ, մէկը յունական բաժնի մէջ, իսկ միւսն պարսկական։

Ե.

Քաղաքական և կրօնական վիճակ Հայաստանի.—Բռնաւորութիւն յունական և պարսկական.—Երկու մեծ ախոյեանք Եկեղեցւոյ և Հայրենեաց՝ Սահակ և Մեսրոպ։

Մինչդեռ, մի կողմէն Հայաստանի քաղաքային շէնքը կը տատանի և կը քայքայի յունական և պարսկական քինախնդիր հարստահարութիւններէն, միւս կողմէն Քրիստոնէութիւնը իւր փրկարար ազդեցութեամբ հոգեւոր շինութեան հիմունքները կ'ամրացնէ, Արշակունի մոլի Թագաւորաց և խռովայոյզ Նախարարաց դէմ հանելով աւետարանական այնպիսի ընտիր Աշակներ, որոնք առանց յուսահատելու աղէտներէ և տագնապներէ, մի կողմէն կ'արտասուեն հայրենեաց իշխանական զօրութեան բաժանման և անկման վրայ, և միւս կողմէն արտասուքները կը սրբեն և բարոյական ոյժը զօրացնել կը ջանան։ Այս ընտիր Աշակներուն պարագլուխ կը դասուին Սահակ Պարթեւ և Մեսրոպ Մաշտոց, որոնք իբրեւ ամոլք Հայաստանի հոգեւոր մշակութեան, քրտամբք և արտասուօք կը ցանեն մտաւոր զարգացման սերմերը և իրենց յաջորդաց համար առատ և ուրախ հունձ կը պատրաստեն։

Սահակ, Մեծին Ներսէսի որդին էր, Բիւզանդիոնի մէջ հելլենական դպրութեամբ վարժուած, և համանման իւր հօրը՝ հայրենեաց ցաւը զգացող և լուսոյ ծաւալման համար խորհող ու աշխատող։ Իսկ Մեսրոպ էր Մեծին Ներսէսի աշակերտը, Տարօնոյ Հացեկաց գիւղէն, Վարդան անուն մի առաքինի մարդոյ զաւակ, որ Ներսէսի կենդանութեան ժամանակ նօտար էր հայրապետական գործքերու. իսկ նորա վախճանէն զկնի Հայոց արքունական դիւանին ատենադպիր կարգեցաւ, վասն զի գիտակ էր յոյն, ասորի և պարսիկ դպրութեանց, մանաւանդ զի հմուտ էր նա և աշխարհական կարգաց և իւր մեծանուն ուսուցչի նման զինուորական արուեստի մէջ վարժուած։

Սահակ Պարթեւ, Ասպուրակէս կաթողիկոսի մահէն զկնի, Խոսրով Գ-ի և Ազգի հաւանութեամբ հայրապետ կ՚ընտրուի. բայց որովհետեւ պարսկական մոգակրօնութիւնը իշխել կը ձգտէր ոչ միայն Հայաստանի քաղաքային վարչութեան, այլ և կրօնականին, ուստի նորընտիր հայրապետն ոմանց քսութեամբ կ՚ամբաստանուի և Խոսրովի հետ միասին Պարսից Դուռն կը կոչուին. սակայն կ՚ընդդիմանան և չեն երթար։ Արեաց թագաւորն Շապուհ Գ. (ըստ այլոց Արտաշիր Բ.) կը բարբոքի դառնագոյն ցասմամբ և իւր Ար֊

տաշիր որդին (ըստ այլոց Վռամ) մեծ զօրքով Հայաստան կ'ուղարկէ. շատ նախարարներ իշխանութենէ կը հանէ, Ս. Սահակը հայրապետութենէ կը դադրեցնէ և խօսրովը կապելով կը տանի և Անյուշ բերդին մէջ կը կալանաւորէ, որոյ տեղը կը թագաւորէ Հայոց՝ իւր եղբայրը Վռամշապուհ կամ Ստահրաշապուհ։

Շապուհին կը յաջորդէ Արտաշիր, և Ս. Սահակ վերստին իւր հայրապետական պաշտօնը կը շարունակէ և կ'ուղեւորի առ Արտաշիր՝ Հայաստանի դառն աղէտներուն դարման գտնելու համար։ Շատ մեծարանք կը գտնէ Արտաշիրէն, Կամսարական և Ամատունի նախարարութեանց պատիւն կը վերահաստատէ (Թէպէտ և նախնի կարգէն ստոր,) Մամիկոնեան ցեղը նախարարութեան 5դ կարգը կը բարձրացնէ, իւր Սահականոյշ դստեր ամուսինն՝ Համազասպ Մամիկոնեան սպարապետութեան կը հասցնէ և Արտաշէր հրովարտակաւ կը դառնայ 'ի Հայաստան։ Սակայն հաշտարարական և խաղաղասիրական պայմանները երկարատեւ և հաստատուն չէին մնար, և չէին կարող մնալ այն տեղ, ուր իւրաքանչիւր նոր թագաւոր նորանոր կրից և փոփոխութեանց էր ենթակայ, առանց օրինաւորութեան հպատակելու. և ուր յունական և պարսկական ազ-

դեցութիւնները անդադար կը մաքառէին իրարու ձեռքէ յափշտակել Հայաստանը և կամ իսպառ կործանել ։ Պարսիկները կ'աւերէին յայտնի յարձակումներով . իսկ Յոյնք կը պատրէին օգնականութեան սուտ խոստումներով , և Պարսից հետ աւելի կը թըշնամացնէին ։

Հայոց գրերու գիւտը կը կատարուի և Յունաց նենգ բարեկամութեան պատրուակը կը բացուի ։ Մինչդեռ Սահակ և Մեսրոպ Պարսից բաժնի մէջ անարգել վարժարաններ կը բանան հայրենի դպրութիւնը տարածելու , Յունաց բաժնի մէջ կ'արգելուին նոյնն առնելու ։ Պարսիկները կը կասկածին Հայոց քրիստոնէական կրօնակցութենէն Յունաց հետ , և Յոյնք կը կասկածին Հայոց քաղաքական միտումէն առ Պարսիկս . իսկ Հայք այս երկու կասկածոտ ազգաց մէջ անդադար կը տարուբերին ։

Վռամշապուհ կը մեռնի և Ս. Սահակ Պարսից Դուռը գնալով Խոսրովը կալանաւորութենէ կ'ազատէ և կրկին կը թագաւորեցնէ . բայց հազիւ թէ մի տարի կը տեւէ , կը վախճանի և տեղը կ'անցնի Պարսիկ իշխան , այն է Յազկերտի որդին Շապուհ , որ քանի մի տարի մնալով իւր հօր հիւանդութեան պատճառաւ Պարսկաստան կը դառնայ և այն տեղ կը սպանուի ։

Յազկերտ Ա. ի տեղ կը թագաւորէ Վըռամ Բ. կը բարեկամանայ Յունաց հետ և Հայաստանի մէջ կրօնքի հալածանաց հըրդեհը. վասն զի, ինչպէս Յունաց և Պարսից իրարու դէմ ունեցած թշնամութիւնը, նոյնպէս և իրարու հետ ունեցած ժամանակաւոր բարեկամութիւնը, երկուքն ևս վընասակար էին Հայաստանին. վասն զի թշնամութեան ժամանակ կուսակցութիւններ և պառակտումներ կը յարուցանէին. իսկ բարեկամութեան ժամանակ՝ երկու տէրութիւնքը իրարմէ չըկասկածելով՝ առաւել կը խստանային Հայոց ազգի վրայ, ուրոյն ուրոյն վրէժխնդիր և քինախնդիր լինելով։

Ս. Սահակ Վռամի հալածանքէն խոյս տալով՝ կ'անցնի Յունաց բաժինը, իւր հայրապետական գործունէութեանը ապահով ասպարէզ գտնելու և հայերէն դպրութեան ծաւալման համար աշխատելու ։ Սակայն յունական ոխերիմ ատելութիւնը արգելք կը լինի նորա հայրենասիրական սուրբ նպատակին ։ Ս. Սահակ այս կոյր ատելութեան առաջն առնելու համար՝ կը ստիպուի զՄեսրոպ և իւր թոռն Վարդան Մամիկոնեան Բիւզանդիոն ղրկել, թղթեր գրելով Թէոդոս կայսեր, Ատտիկոս Պատրիարքին և Անատոլիոս զօրավարին ։ Մեսրոպ, որ իւր ճանապարհորդութեանց մէջ անգամ միշտ կ'ուսուցանէր

և աշակերտաց հետ կը շրջագայէր, ներկայ ուղեւորութեան ժամանակ, նոցա մէկ մասը կը թողու Մելիտինէի մէջ, օրինաւոր դաստիարակներու յանձնելով, իսկ միւս մասով հանդերձ կը մտնէ Բիւզանդիոն և կը ներկայանայ Թէոդոս կայսեր, կանխապէս մեծարանք ու յանձնարարականներ ընդունելով Նեստորիոսէն և Ատտիկոսէն. Թէոդոս զմայլելով Մեսրոպի հմտութեան և քաղցրաբարոյութեան վրայ կը կատարէ նորա խնդիրները, Առաջին և Գերգգօն Վարդապետ (Ակըմիթէս կամ Ակումիտ) անուանելով. իսկ զՎարդան՝ ստրատելատութեան աստիճանի կը հասցնէ։ Մեսրոպ իւր հետ ունեցած աշակերտները կը թողու Բիւզանդիոնի մէջ յունարէն սորվելու համար և կը դառնայ Հայաստան, հետը բերելով Ս. Սահակայ թղթոց պատասխանները, որոց մէջ Թէոդոս և Ատտիկոս կը վշտանան և կը ցաւին, որ հայկական գրոց գիւտի համար Ասորեստան դիմած են և ոչ 'ի Բիւզանդիոն, ուր կը ծաղկէին ուսմունք ու գիտութիւնք և կ'աթոռակալէր Յովհան Ոսկեբերան։

Մեսրոպ կը սկսի այնուհետեւ վարժարաններ բանալ Արեւմտեան Հայաստանի մէջ. իսկ Ս. Սահակ կ'անցնի Պարսից մասն, Սմբատ և Վարդան նախարարներու հետ, անցած աղէտներու անյիշութեան դաշնա-

գիր մի կնքել կու տայ Վռամ Ե-ին, և Վռամշապուհի 18 ամեայ որդին Արտաշէս կը թագաւորեցնէ, որպէս զի չը բարձուի Հայաստանի արքունական թագը։

Յետ ժամանակաց Մեսրոպն ևս, աշակերտներ թողլով Յունաց բաժնի մէջ, կը դառնայ Արարատեան գաւառը և անտի ՚ի Գողթն, ուր առաջին անգամ վաստակած էր վարդապետութեամբ։

Շատ ժամանակ չանցնիր, սաստիկ խռովութիւն կը յուզի նախարարաց մէջ՝ մանուկ թագաւորի արարմանց դէմ, որոնք կը ջանան Ս. Հայրապետն ևս մասնակից առնել իւրեանց ազգասպանութեան խորհրդին և չարախօսել առ թագաւորն Պարսից։ Բայց հայրենի թագին պաշտպան՝ գթոտ հովիւը, թէ և կը խոստովանի Արտաշիսի մեղկ և մոլի վարքը, սակայն կը յիշեցնէ միանգամայն և Պարսից գազանութիւնը, կը մերժէ նախարարաց դաւադիր խորհուրդը, այս նշանաւոր խօսքերը արտասանելով. «Ինձ քաւ լիցի մատնել գայլոց զիմ մոլորեալ ոչխար և ոչ պատել զբեկեալն կամ զհիւանդացեալն, այլ դահավէժ առնել։ . . . Եւ զի՞նչ լինիցի այդ՝ փոխանակել զիմ ախտացեալ ոչխար ընդ առողջ գազանի, որոյ առողջութիւնն է մեզ պատուհաս» (1)։

(1) Խոր. Գ. ԿԳ.

Նախարարները, փոխանակ յետս կասեցնելու ազգամատնութենէ, կը միաբանին՝ Թագաւորութեան հետ հայրապետութիւնն եւս գահավէժ առնել։ Սուրմակ երէցի հետ Պարսից դուռն կ'երթան, կ'ամբաստանեն Թագաւորը և հայրապետը, երկուքն եւս այն տեղ կը կոչեն, և գահընկէց կ'առնեն. առաջնոյն տեղ Վեհ Միհրշապուհ պարսիկը Մարզպան ընդունելով, իսկ երկրորդին տեղ՝ Սուրմակ երէցը, 'ի վարձ իւր չարախօսութեան։

Սուրմակ շուտով կը մերժուի և կը յաջորդէ Բրքիշոյ, յորմէ տաղտկանալով՝ երկու կը բաժնուին նախարարները, ոմանք վերստին Ս. Սահակն կը խնդրեն, և ոմանք ուրիշ մէկը։ Պարսից Թագաւորը այս երկպառակութեան մէջ իւր յայտնի օգուտը նշմարելով, երկու կուսակցութեան առաջարկութիւնն եւս կը կատարէ։ Ս. Սահակը վերստին կը հաստատէ այն պայմանաւ, որ միայն վարդապետական և կրօնական գործքերու խառնուի, և Շմուէլ անուն մէկը կը կարգէ, որ Մարզպանաց հետ Հայոց աշխարհի հարկաց ժողովման և դատաստանական քննութեան մասնակցի։

Ս. Սահակ, Արշակունի Թագաւորութեան բարձման համար սիրտը դառնացած և հայրապետութեան աղէտներու վրայ կա֊

ընկէր խոցուած, սքանչելի կերպիւ կ'ատենաբանէ այն ամենատխուր աւուր մէջ, ուրուն վրայ կըլմայլի Վռամ, մոգերով հանդերձ, և կը հրամայէ տրծալթ տալ Ս. Հայրապետին. սակայն նա մերժելով կը մերժէ և համարձակապէս նախարարաց գահն ու պարսիկ մարզպանութեան բարձումն կըպահանջէ։ Ս. Հայրապետն կը դառնայ 'ի Հայաստան, և երբ իւր հակաթոռն Շմուէլ, մոլութեան ու ագահութեան մատնուելով և տաղտկալի դառնալով ժողովրդին, կը փախճանի, կրկին կը խնդրուի ընդհանուր հայրապետութեան պաշտօնը վարել, բայց նա յանձն չառնուր և սակաւ ժամանակէն յետոյ՝ հիւանդանալով՝ կը վախճանի Բլուր գիւղի մէջ և կը թաղուի Տարօնոյ Աշտիշատաւանքին մէջ։ Ս. Սահակին կը տեղակալէ Մեսրոպ. բայց վեց ամսէն զկնի կը փոխի աշխարհէս, որոյ երկրաւոր նշխարքն ոմանք կը փափաքին իւր բնադաւառն տանել 'ի Տարօն և անդ թաղել, ոմանք իւր նախկին վարդապետութեան տեղին՝ 'ի Գողթն, և ոմանք 'ի Վաղարշապատ, բայց 'ի վերջոյ Վահան Ամատունի կը տանի իւր Օշական գիւղն, մերձ Վաղարշապատու, և անդ կը հանգուցանէ։

Այսպէս կը կնքեն իւրեանց բազմարդիւն կեանքը Հայաստանի Լուսաւորու-

Թեան երկու աշակերտքն՝ Սահակ և Մեսրոպ, որոնք ուսումնասէր Վռամշապուհի հետ միասին հայրենի դպրութեան տաճարի նուիրական Ճռոտանին կը լինին: Այսպէս կը ներկայացնէ Սահակայ եւ Մեսրոպայ կենաց չքնաղ պատկերը համառօտաբան Խորենացին, Սահակայ համար ասելով. «Մանկանացու ծնեալ, անմահ զիւրն յիշատակ եթող. պատուեաց զպատկերն (զաստուածանմանութիւնն), պատկառեաց 'ի կոչնականէն, փոխանորդեաց զկենանն, և այսքան կենցաղավարեաց՝ իբր զի ոչ պակասութիւն իւրք մասն 'ի ծերութենէն եղանիլ և ոչ յախտից տռընդունել»: Իսկ Մեսրոպայ համար կը յաւելու թէ, «Գերազանցեալ քան զամենայն, որք զայնու ժամանակաւ էին առաքինիք: Բանզի ամբարտաւանութիւն և մարդահաճութիւն 'ի նորա վարս տեղի գտանել երբէք ոչ կարացին, այլ հեզ և լաւակամ և բարեխորհուրդ գոլով և երկնայնոցն զարդարեալ սովորութեամբք՝ զինքն բոլորից ցուցանէր: Վասն զի գոյր տեսլեամբ հրեշտակական, միտք ծննդական, բանիւք պայծառ, գործովք ժուժկալ, մարմնով արտափայլեալ, սարասիւք անճառ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերող, սիրով անկեղծաւոր, ուսուցանելով անձանձրոյթ»:

Իսկ մեք, այսքանը խօսելով Սահակայ և Մեսրոպայ այն գործոց վրայ, որոնք աւելի զուգակից էին Հայրենեաց քաղաքական վիճակին, անցնինք այժմ նոցա առաւել մեծ ախրագործութեան վրայ խօսելու, այն է հայերէնի գրոց գիւտի, վարժարանական հաստատութեանց և Թարգմանական մեծարդիւն պարապմանց ։

Ջ.

Բանասիրական հարեւանցի ակնարկ հին նշանագրաց վրայ. — Հայագիր մատենագրութիւն Հայոց՝ որպէս արգասիք կարեւորութեան քրիստոնէական ուսման. — Պատմութիւն գիւտի Հայկական գրոց. — Քրիստոնէական և ուսումնասիրական առաքելութիւնք Մեսրոպայ. — Նշանագիրք Վրաց և Աղուանից, որպէս պտուղ վաստակոց Մեսրոպայ. — Թարգմանութիւն Աստուածաշունչ Գրոց. — Գեղեցիկ ոճարան դասախօսութեան և կրթութեան. — Աշակերտք Սահակայ և Մեսրոպայ ։

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍՄԱՆ կարեւորութիւնը ծնաւ Հայաստանի մէջ հայկական գրաւոր մատենագրութիւնը, որ Քրիստոնէութեան ամենամեծ պարգեւներէն մին է մեր ազգի համար ։ Աւետարանական վարդապետութեանը հարկաւոր էր տեւականութիւն և խորարմատ հաստատութիւն, և տեւականութեան համար հարկաւոր էին

վարժարանք, զորս բացին Ս. Գրիգոր և Մեծըն Ներսէս ։ Բայց այս հայկական վարժարաններու իրական յառաջադիմութեան համար բաւական չէին յունարէն և ասորերէն նշանագիրները, հարկաւոր էր անշուշտ բնիկ հայեցի գիր և դպրութիւն ։ Ահա այս մեծ պիտոյքը լցուցին Սահակ և Մեսրոպ, ուսումնասէր Վռամշապուհ թագաւորութեան ժամանակ, հայկական գրերը գտնելով կամ կանոնաւորելով ։ Սակայն պատմական բանասիրութիւնը, զանազան փաստերու վրայ յենլով, շատ հին դարերու մէջ անգամ կը խոստովանի հայերէն գրերու գոյութիւն, թէպէտ և այլատարազ և անկատար ։ Պատմական բանասիրութիւնը կը հաւաստէ, որ Ասիոյ ընդարձակ գաւառները գրաւող հին ազգերը՝ գրեթէ Եգիպտացւոց նման խորհրդաւոր նշանագրեր կը բանեցնէին, որոց ներկայ ժամանակիս բանասէրները Սեպաձեւ կամ Բեւեռաձեւ անունը կուտան ։ Եւ որովհետեւ, Հայք եւս նոյն ազգերու նման քաղաքականութիւն ունէին, անշուշտ նոյն Բեւեռաձեւ գրերը կը գործածէին ։ Այս մասին կը վկայէ Փիլոստրատոս և աշակերտք Ս. Մեսրոպայ՝ Խորենացին, Փարպեցին և Կորիւն ։ Այս տեսակ նշանագրաց կիրառութիւնը Հայաստանի մէջ հաւանաբար Վաղարշակէն առաջ կը համարուի ։

Սակայն այս բաբելական կամ փիւնիկեան նշանագիրքը, զորս շատ ազգեր գործ կըդնէին, ինչպէս և Հայք, բաւական չէին Հայոց լեզուի համար, վասն զի քսաներկու հատ միայն էին։ Ուստի և Հայք, մինչեւ Լուսաւորչի և Մեսրոպայ ժամանակները ստիպուած էին քաղաքական դիւանագրութեանց համար Պահլաւացի գրեր գործ դնել (և ոչ Զենտի, ինչպէս ոմանք կը կարծեն), իսկ եկեղեցական գրուածոց համար Յունաց և Ասորոց տառեր։ Եւ սակայն այս ևս բաւական չէր Հայոց լեզուի լրական հնչմանց համար. ուստի սոյն պակասութիւնն էր, որ Մեսրոպ կը խորհէր լրացուցանել։

Այս տեղէն պարզ կը նշմարուի ուրեմն, որ եթէ Նախնի ժամանակաց մէջ Հայոց գրեր ևս եղած են, անկատարութեան պատճառաւ իսպառ անգործադիր մնացած են։ Թէպէտ և մեր պատմաբաններէն ոմանք կ՚աւանդեն, որ Մեսրոպ միայն ձայնաւոր գրերը գտած է. ոմանք կ՚ասեն, որ նորա ջանքը գլխաւորապէս մեր այբուբենին կրկնակ գրերուն համար եղած է, որոնք օտար լեզուաց մէջ չեն գտնուիր և մեր լեզուի հնչման ճոխութիւնը կը կազմեն. և ոմանք կ՚ասեն, տասն և չորս տառք միայն գտած է։ Սակայն այս անուրանալի է որ մեր գրերու անթերի գիւտը, կանոնաւորութիւնը և կատա-

րեալ կիրառութիւնը Սահակայ և Մեսրոպայ ջանից արդիւնք են, և այս արդիւնքը քրիստոնէական ուսման կարեւորութենէն ծնունդ առած լինելով՝ համարուած է որպէս աստուածային մտաց գործ, որպէս նուիրական միջոց սրտի և մտքի մշակութեան, որպէս հաստատուն անօթ՝ մարդուս հոգւոյ և լեզուի ճոխութիւնները երկար դարեր կրելու և յաւերժացնելու։ Պատմենք ուրեմն, թէ ի՛նչպէս կատարուած է այս շահաւէտ գիւտը։

Մեսրոպ, շուրջ եօթն տարի, Հայոց արքունեաց մէջ ատենադպրութեան պաշտօն վարելէն զկնի՝ կ՚անցնի Գողթան և Սիւնեաց գաւառները և ջանադիր կը լինի տեղւոյն վայրենաբարոյ և խուժադուժ ժողովուրդը կրթել աստուածային ուսման մէջ, բազմաթիւ աշակերտներ կը ժողովէ և յաւէտ Աստուածաշունչ Գրոց ուսման մէջ վարժելու կը ճգնի։ Սակայն Հայկական գրեր չըլինելու պատճառաւ՝ շատ դժուարութիւններ կը կրէ և խորին թախծութեամբ կը տրտմի, երբ կը տեսնէ թէ Ասորի և Յոյն բարբառով կը կարդացուի Ս. Գիրքը Հայաստանեայց եկեղեցիներու և վանքերու մէջ։ Պօղոս առաքեալի հառաչանքները կը հանէ Մեսրոպ իւր սրտի խորքէն. «Ուխտիւք խընդրէի նզով լինել ՚ի Քրիստոսէ վասն ազգա-

կանոնաց իմոց և եղբարց », և կը փափաքի Հայկական գրեր պատրաստել ։ Նոյն տուրք բաղձանքով լցուած՝ կը դառնայ ՚ի Վաղարշապատ , ու Ս. Սահակին կը հաղորդէ իւր սրտի իղձը , և նորա սրտին մէջ եւս նոյն եռանդը վառուած կը տեսնէ ։ Ս. Հայրապետը ժողով կը գումարէ , խորհրդակցութք ՚ի կատար հանել այս նուիրական գործը , ուր ներկայ կը գտնուի և Վռամշապուհ ուսումնասէր Թագաւորը ։ Թագաւորը կը պատմէ թէ ինքն Հաբէլ անուն մի քահանայէ լսած է , որ Դանիէլ ասորի եպիսկոպոսի մօտ կը գտնուին Հայերէն նշանագիրք ։ Ժողովը կը խնդրէ Թագաւորէն , որ մի մարդ ղրկէ Դանիէլ եպիսկոպոսէն ստոյգ տեղեկութիւն առնելու համար ։ Նոյն նըպատակաւ Թագաւորական տանէն իմաստուն և փութաջան իշխան մի կ՚որոշուի Վահրիճ անուն , որ Թագաւորէն և եպիսկոպոսներէն յանձնարարական թղթեր առնելով , կ՚իջնէ Միջագետք և այն տեղէն Հաբէլ քահանայի հետ միասին. կ՚երթայ Դանիէլի մօտ ։ Կը ստանան Դանիէլեան նըշանագիրքը , որ անշուշտ հին հայկական քսաներկու նշանագիրքն էին , բաբելականէն կամ փիւնիկականէն առնուած , և հրճըմունքները սովորելով՝ կը դառնան ՚ի Հայաստան և կը ներկայացնեն Թագաւորին և Ս.

Սահակին ու Մ՝եսրոպին։ Սահակ և Մեսրոպ Թագաւորի խորհրդով մանուկներ կը ժողովեն և երկու տարի անընդհատ կը ջանան նոյն գրերու կիրառութիւնը ընդհանրացնել. սակայն փորձով կը համոզուին, որ այն գրերը հայկական հնչման չեն յարմարիր, ուստի և կը խորհին, որ Մ՝եսրոպ անձամբ երթայ Դանիէլի մօտ, աւելի տեղեկութիւն ստանալու համար։ Մ՝եսրոպ իւր աշակերտներէն աւելի մտավարժները հետը առնլով կ'ուղեւորի դէպ 'ի Մ՝իջագետք։ Բաւական ժամանակ կը մնայ Դանիէլ եպիսկոպոսի մօտ և յուսացած օգուտը չը կարողանալով քաղել՝ կը տրտմի սաստիկ մտատանջութեամբ։ Բայց որպէս զի, իւր ուղեւորութիւնն անօգուտ անցած չը լինի, երկու կարգ կը բաժնէ իւր աշակերտները և կը թողու անդ, որ մի կարգը՝ Ասորի, իսկ միւսը՝ Յոյն դպրութեանց մէջ վարժին և ինքը հետն առնլով իւր աւագագոյն աշակերտները՝ Յովհան Եկեղեցացի, և Յովսէփ Պաղնացի, կը խորհի Հայաստան դառնալ։

Մ՝եսրոպ կը լսէ որ Եդեսիա քաղաքին մէջ Պղատոս անուն մի հանճարեղ և ճարտարամիտ մարդ կայ, քաղաքական դիւանին վերակացու, որ կարող է իրեն ձեռնտու լինիլ Հայկական գրոց գիւտի համար։ Մեսրոպ ուրախանալով ուղղակի կ'երթայ Պղա-

տոսքին մօտ և իւր մնաց խորհուրդը կը յայտնէ ։ Պղատոս Մեսրոպայ հետ երկար խորհրդակցելէն յետոյ՝ կը խոստովանի որ իւր կարողութենէն վեր է նորա բաղձանաց կատարումն, ուստի և կ'առաջարկէ իւր վարդապետ Եպիփանոսին երթալ, գուցէ օգուտ մի քաղելու ։ Մեսրոպ յանձնարարական թղթեր կ'առնու թէ Պղատոսէն և թէ տեղւոյն Ասորւոց կամ Բաբելաց եպիսկոպոսէն և կ'իջնէ Փիւնիկաստան, ուր լսելով որ Եպիփանոս արդէն վախճանած է, շատ կը տրտմի ։ Սակայն, առանց յուսահատելու, այն տեղէն կը դիմէ Սամոսացւոց քաղաքը, ուր մեծ համբաւ ստացած էր Հռոփանոս, Եպիփանոսին աշակերտը, և դարձեալ յոյսը ունայն կ'ելնէ ։

Մեսրոպ այնուհետև մարդկային հնարագիտութենէ յոյսը կտրելով՝ միմիայն աստուածային օժանդակութեան կը դիմէ. և այս երկիւղած ապաւինութեան ժամանակ, կ'աւանդեն պատմիչք, որ կը յափշտակուի տեսլեամբ և իւր առաջին քար մի կը տեսնէ, որուն վրայ աներևոյթ թաթ մի այլ և այլ տառեր կը գրէ, և որոց ձևերը Մեսրոպի սրտին մէջ կը պատկերանան ։ Մեսրոպ իսկոյն կը դիմէ Հռոփանոսին, իւր մտքի մէջ տպաւորուած կերպերը կը յայտնէ, և Հռոփանոս գրի առնլով վայելչուչ ձևեր կու տայ.

և այսպէս կը կատարուի Հայկական գրոց գիւտը։ Բայց թէ ինչ մեծութիւն ունի այս տեսլեան կերպարանութիւնը երկիւղած սրտերուն համար, և ինչ նշանակութիւն քանասիրական հետազօտութեան առջև, այդ կը թողունք որ իւրաքանչիւր մարդ ինքն խելամտէ։

Մեսրոպ հայկական նոր գրերով կսկսի թարգմանել Աստուածաշնչէն Առակաց գիրքը, իբրև նախապատուղ իւր քրտնաթոր մշակութեան և ուրախանալով յաջողութեան վրայ՝ կը դառնայ 'ի Հայաստան (1)։ Վռամշապուհ թագաւորն և Սահակ հայրապետն սոյն ուրախական լուրն առնելով կը դիմա-

(1) Մեսրոպեան նշանագիրք, (ինչպէս գրուած է Հ. Գ. Զ. Հայերէն դպր. Պատմութեան մէջ) ըստ ձեւոյն զանազան կերպարանափոխութիւններ կրած են զանազան դարուց մէջ, և պէսպէս անուններ առած, որոց գլխաւորներն երեք են, Երկաթագիր, Բոլորագիր և Նօտրգիր։ Երկաթագիրը որ Մեսրոպայ հնարածն է, տեւած է մինչեւ ԺԳ դարը, և երկաթի գրչով կամ երկաթի ոքսիտէ շինուած թանաքով գրուելուն համար երկաթագիր կոչուած է. սակայն ԺԴ դարէն՝ վերին և ստորին կողմերը կարճուելով կոչուած է նոյնպէս և Միջին Երկաթագիր. իսկ նախնականները գլխագրի տեղ գործածուած են. Ընթերցման դիւրութեան համար ԺԲ դարու մէջ փոփոխուած են նշանագիրք և առած Բոլորագիր անուն, որ կամաց կամաց կանոնաւորուելով այժմեան տպագրութեան սովորական գիրն դարձած են։ Բոլորագրոյն աւելի դիւրացած ձեւն է Նօտրայ կամ Նօտր գիրն, որ հասարակ գրութեանց մէջ կը գործածուէր և այժմ կը գործածուի։ Միջին Երկաթագիրը հնարուելէն յետոյ Երկաթագրի գործածութիւնը մասամբ դադրած է, նոյնպէս և բոլորագրոյն գտնուելէն յետոյ Միջին Երկաթագիրը խափան-

ւորէն Մեսրոպին Սահակ գետի ափանց վրայ, բազմութեամբ նախարարաց և աւագանի մարդկան, կ'ողջագուրեն զնա անպատում հոգեզմայլութեամբ, և ցնծութեան երգերով Թագաւորանիստ քաղաքն կը դառնան, ուր քանի մի օր կը տօնեն Տօն ցնծութեան հայկական նորագիւտ նշանագրաց և հայեցի դպրութեան դարագլխոյն համար։

Հրաման կը հանէ այնուհետեւ Թագաւորն, հաճութեամբ հայրապետին վարժարաններ հաստատել ամեն տեղ, մանուկներ ժողովել հայերէն դպրութեան և գրչութեան մէջ վարժելու և յունարէն ու ասորերէն գրուած մատեանները հայագիր գաղափարելու։ Իսկ Մեսրոպ հրաման ընդունելով կ'անցնի Մարաստան, տեղւոյն անկիրթ ժողովուրդը հրահանգելու, և թէ նոցա և թէ հանուր Հայաստանի օգտին համար ձեռնամուխ կը լինի Աստուածաշունչ Գրոց Թարգմանութեանը, օգնական ունենալով Տիրայր Խորձենացին, Մուշէ Տարօնացին և այլք, և անտի կ'իջնէ 'ի Գողթան, իւր նախկին վարդապետութեան տեղին, և Շաբիթ իշխանի ձեռնտուութեամբ

ուած է, բայց Նոր գրի հնարուելէն յետոյ՝ Բոլորագիրը ամեննեւին վերջացած չէ, այլ գործածուած է ընտիր ձեռագրաց մէջ։ Մեսրոպեան նշանագրաց այս կերպարանափոխութիւնը ակներեւ կը նշմարուի զանազան դարուց ձեռագրաց մէջ։

կըսկսի քարոզել և ուսուցանել։ Գողթանէն կ՚անցնի Սիւնեաց աշխարհը, օգնութիւն կը գտնէ Վասակ Սիւնեան և Վաղինակ իշխաններէն, կը խրատէ վայրենագոյն ժողովուրդը և Անանիա եպիսկոպոսը տեսուչ կը թողու այն տեղ կրթութեան խնամք տանելու համար։

Անկէ ժամանակէն զկնի՝ կ՚անցնի Վըրաց աշխարհը, նորա համար նշանագրեր կը պատրաստէ, իւր աշակերտներէն հետը առնլով կը ներկայանայ Վրաց Թագաւորին և Մովսէս եպիսկոպոսին, մեծ ընդունելութի կը գտնէ բոլոր աշխարհէն. Ջաղայանուն մէկը Վրաց լեզուի թարգման որոշելով աշակերտաց բազմութիւն կը ժողովէ և նորա տեսչութեանը կը յանձնէ. իսկ ինքն վերադարձ այցելութիւն առնելով իւր աշակերտած աշխարհներուն, կը դառնայ ՚ի Հայաստան, Յունաց բաժնի Հայոց համար խորհելու, որոյ պատճառաւ և Բիւզանդիոն կ՚երթայ Սահակայ թղթերով, և անտի Հայաստան կը դառնայ, կատարումն առնելով իւր խնդրուածոցն, որոց վրայ առաջ խօսեցանք արդէն։

Մինչդեռ անձանձրոյթ աշխատութեամբ կ՚ուսուցանէ, կը գրէ Ս. Մեսրոպ և եկեղեցական Հայոց մատեանները կը թարգմանէ, Աղուանից երկրէն Բենիամին անուն

մէկը նորա մօտ կը գայ, որուն նոր նշանա-
գրեր կ'աւանդէ և իւր Դանան և Ենովք
աշակերտները հետը դնելով կրկին Աղուա-
նից երկիրը կ'ուղեւորէ, որ նոյն աշխարհին
մէջ իւրեանց յատուկ գրերով դպրութիւն
ծաւալէն։ Յետ ժամանակաց Մեսրոպ Յու-
նաց բաժնէն Վաղարշապատ կու գայ Ս.
Սահակայ և Թագաւորին մօտ, և անտի
կ'անցնի Աղուանք, կը վարդապետէ և կ'ու-
սուցանէ, յորդորելով տեղւոյն Երեմիա ե-
պիսկոպոսը և Արսվաղէն Թագաւորը, որ խը-
նամք տանին դպրութեան և կրթութեան,
որոնք իսկոյն արքունի ծախքով դպրոցներ
կը բանան; բազմաթիւ մանուկներ կը ժողո-
վեն ուսանելու և ինքն Երեմիա եպիսկոպո-
սըն Աստուածաշունչ Գրոց թարգմանու-
թեան կը պարապի։ Մեսրոպ իւր Յովնա-
թան աշակերտը այն տեղ վերատեսուչ թող-
լով, կ'անցնի Վրաց աշխարհը և ուղեւո-
րութեան ժամանակ նախ Գարգմանից Խուրս
և ապա Տաշրոյ Աշուշա իշխաններէն ձե-
ռնտուութիւն գտնելով կրթարաններ կը հաս-
տատէ դպրութեան և ճշմարտութեան տա-
րածման համար, և Սամուէլ եպիսկոպոսի
տեսչութեանը յանձնելով վերստին կը դառ-
նայ ՚ի Հայաստան։

Այնուհետեւ կը միանան Հայաստանի
դպրութեան և գրագիտութեան երկու ա-

մուքն՝ Սահակ և Մեսրոպ, և կլսկսին միասին գրել և թարգմանել և իւրեանց աշակերտներէն երկուքը՝ Յովսէփ Պաղնացի և Եզնիկ Կողբացի Եդեսիա կ'ուղարկեն, որ ասորական Հարց գրուածները հայերէնի դարձնեն և եկեղեցական մատենից ընտիր օրինակներ որոնեն։ Բայց նոքա ուսումնասիրութեան եռանդով վառուած կ'անցնին Բիւզանդիոն, հելլենական դպրութեամբ և թարգմանութեամբ պարապելու, ուր յառաջագոյն ուղեւորուած էին նոյնպէս Յովհան և Արձան, և փոքր ժամանակէն յետոյ Հայաստանէն կ'ուղեւորին նոյնպէս Ղեւոնդ և Կորիւն, իրարու հետ կը միանան, կ'ուսանին մեծ եռանդով, և ապա Աստուածաշնչի յունական մի ընտիր օրինակ առնլով, ընդ նմին և նիկիական և եփեսոսական ժողովոց կանոնները, կը դառնան իրենց հայրենիքը և իւրեանց երանելի վարդապետաց կը մատուցանեն նոյն գեղեցիկ աւանդները։

Սահակ և Մեսրոպ Աստուածաշնչի նոր օրինակն ընդունելով՝ կլսկսին Եզնիկի հետ վերստին "Թարգմանել զմիանգամ թարգմանեալն" ընդ նմին և շատ եկեղեցական գրուածքներ, և որպէս զի իւրեանց յաւերժական աշխատութեան մէջ ամենեւին թերութիւններ չգտնուին, խորհուրդ կը կազմեն և աշակերտներ կ'ուղեւորեն Աղեք-

սանդրիա, Ատտիկէ և Աթէնք, ուր կը ծաղկէին աղէքսանդրեան և աթենեան իմաստասիրութեան հռչակաւոր դպրոցները, որոց մէջ եօթն տարի կ'ուսանին Հայաստանի ուսումնախնդիր զաւակները և իմաստասիրական ճոխ գանձերով կը դառնան 'ի Հայաստան. ուր թէպէտ յաշխարհէս փոխուած կը գտնեն ուսումնասէր Վռամշապուհն և երանաշնորհ Սահակն ու Մեսրոպը, կ'ողբան և կ'արտասուեն, սակայն երբեք չեն յուսահատիր, այլ անխոնջ հետեւելով իւրեանց վարդապետաց շաւղին, կը թարգմանեն և կը գրեն, և մանաւանդ որ նոցա նուիրական իղձը լցուցանելով Աստուածաշնչի թարգմանութիւնը կը զտեն և կը կատարելագործեն, քաջ իմանալով որ յառաջադիմութեան խորհուրդը այն տեղ է, ուր աշակերտք իւրեանց վարդապետաց՝ և որդիք իւրեանց հարց՝ կիսակատար թողածը կը շարունակեն և պակասը կը ջանան.

Հայկական նշանագրաց գիւտէն զկնի՝ մի ուսումնասիրական եռացումն և մտաւորական շարժումն կը յուզէ ոչ միայն Հայաստանի, այլ և Վրաց և Աղուանից աշխարհներուն մէջ. կը բազմանան վարժարանք, կ'աճի զարգացումն դպրութեան, կ'աղբերանան թարգմանութիւնք հեղինակութիւնք, և կը ծաւալին բանաւոր և գրաւոր վարդապետու-

թիւն և ուսումն Քրիստոնէութեան, որուն համար զմայլելով կ՚ասէ ականատես պատմագիրն Կորիւն. «Յայրարատեան գաւառին ՚ի կայս Թագաւորացն և քահանայապետացն բղխեցին Հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ: . . . . Ահա կրթութիւն քաղցրուսոյց ընթերցուածոց՝ հոգեպատում գրոց: Ահա քաջալերութիւն յորդորական վարդապետութեանն՝ առ ՚ի յառաջադէմ ընտրութեան՝ պսակահաս քրիստոսադիր կիտին: Ահա եռալ հոգւով աստուածապաշտ ծառայութեամբ»:

Այս ամէն բարեաց աղբերակն այն էր, որ Վռամշապուհ իւր արքունական գանձը, ոյժը և ազդեցութիւնը աշխարհի յառաջադիմութեան համար կը գործածէր, և Սահակ ու Մեսրոպ նորա ջանիցն և փութոյն արժանաւոր կը հանդիսանային. Հայաստանի վարժարանները բաւական չը համարելով Հայոց տրամախոհ քաջուշեղ, փափկավանդ և երկարոգի պատանիները Եդեսիա, Կեսարիա, Աղէքսանդրիա, Աթէնք, Հռովմ և Բիւզանդիոն կ՚ուղեւորէին (ուր ուսմունք և գիտութիւնք կը ծաղկէին,) և ժամանակին ուսումնականներուն մէջ համբաւաւոր և շատերէն գերազանց կ՚երեւէին: Անյաղթն Դաւիթ, իւր յունական իմաստասիրութեամբ, յաղթութեան պարծանքը կը յափշտակէր:

Խոսրով, յոյն եկեղեցականաց մէջ, Ս. Բարսղի օրհնութիւնները կը կարդար։ Մամբրէ Ոսկեբերանի ճառերը կ՚արտասանէր. իսկ Ղազար և այլք այնչափ խորամուխ էին յունական գիտութեան մէջ, որ Աթենացի կոչուելու պարծանաց կ՚արժանանային։

Պատմական յիշատակարանք, երբ Հայաստանի հոգեւոր և մտաւոր վերակենդանութեան պատկերը կը ներկայացնեն, ակներեւ կը նշմարուի, որ Սահակեան և Մեսրոպեան վարժարաններէն շատ աշակերտներ ծնած են, բայց սակաւուց անուններն միայն մեզ հասած են, որոնք Թարգմանիչք կ՚անուանին և երկու կարգ կը բաժնուին։ Առաջին կարգէն նոքա են, որոնք նշանագրաց գտնուած ժամանակ բաւական հասակաւոր էին և իւրեանց վարդապետաց գործակիցք՝ Թարգմանութեանց մէջ։ Իսկ երկրորդ կարգէն նոքա են, որոնք իւրեանց վարդապետաց մօտ վարժուելէն զկնի՝ ուղեւորեցան այլ և այլ քաղաքներ կատարելագործուելու համար, և շատերը իւրեանց վարդապետաց մահէն յետոյ դարձան Հայաստան։ Առաջնակարգ աշակերտք կը համարուին՝ Յովսէփ ՚ի Վայոց Ձորոյ, Յովհան, Ղեւոնդ երէց ՚ի Վանանդայ, Եզնիկ Կողբացի, Կորիւն, Մուշէ Տարօնացի, Տիրայր Խորձենացի, Յովսէփ Պաղնացի, Յով֊

հան Եկեղեցացի, Ենովք, Դանան, Երեմիա սարկաւագապետ Սահակայ, Թաթիկ, Արձան Արծրունի, Աղան Արծրունի, Պազարիկ կամ Պազրիկ։ Իսկ կրտսերներն սոքա են՝ Մովսէս Խորենացի, Մամբրէ Վերծանող՝ եղբայր նորին, Դաւիթ Անյաղթ, Գիւտ, Յովհան Մանդակունի, Եղիշէ, Ղազար Փարպեցի, Եզրաս Անգեղացի, Սահակ, Յովհաննէս, Աբրահամ կամ Աբէլ, Անանիա, Յովնաթան, Խաչիկ կամ Խաչատուր, Անդրէաս, Թաթուլ, Վարոս։ Երկու դասն ևս գլխաւորապէս աշխատած են Ս. Գրոց և եկեղեցական գրուածոց թարգմանութեան մէջ։ Ոմանք իւրեանց վարդապետաց հետ՝ վարժարանաց և հաւատացելոց վերակացութեան պաշտօն վարած են։ Ոմանք կաթողիկոսութեան անգամ արժանացած. ոմանք ազգային քաղաքական հարստահարեալ ժամանակին՝ հայրենեաց և եկեղեցւոյ պաշտպան ախոյեաններ դարձած են, և ոմանք ինքնագիր երկասիրութիւններ թողած են։ Թարգմանութիւնք առանձինն և ոչ մէկուն անունը կը կրեն, ուրեմն և մենք ամենուն գործակցութեանը կը նուիրենք զայն. իսկ ինքնագիր հեղինակութեանց վըրայ ուրոյն ուրոյն պիտի խօսինք, որպէս եկեղեցական մատենագրաց վրայ։

Է.

Աւետարանի իմաստութիւնը մարդկային իմաստութեան հանդէպ. — Շարժառիթ եկեղեցական ժողովոց. — Երեք տիեզերական ժողովք. — Ազգային ժողովք Հայոց առաջին շրջանին մէջ։

Մենք տեսանք արդէն, Եկեղեցական Պատմութեան առաջին շրջանին մէջ (ըստ մեր բաժանման) որ հալածանքները կ'արգիլէին քրիստոնէից հրապարակական գումարումներ ունենալ, ուստի և միութեան կամ ժողովման կեդրոն միայն Գոհութեան կամ Հաղորդութեան խորհուրդն էր, որ այն ևս շատ անգամ ծածուկ կը կատարուէր հեթանոսական հալածասիրութեան պատճառաւ։ Բայց երբ հալածիչ ինքնակալները, թագաւորները և իշխանները Քրիստոնէութեան հեզ լծոյն տակ խոնարհեցան, այնուհետեւ հաւատացեալք իրաւունք ստացան, ոչ միայն ազգային մասնաւոր, այլ և տիեզերական համագումար ժողովներ ունենալ զանազան եկեղեցական խնդիրներու պատճառաւ։

Քրիստոնէութիւնը, պատերազմելով աշխարհի նիւթական զօրութեան դէմ, այն է մարմնաւոր տիրապետութեան, բռնակալութեան և անիրաւութեան, կը դիմադրա-

ւէր մարտիրոսական բիւրաւոր զոհերով և նահատակութեան արեան հեղեղներով ։ Իսկ պատերազմելով մարդկային մտաւոր ուժին դէմ, հարկ էր, որ դիմագրաւէ քրիստոնէական իմաստութեամբ և աւետարանական վարդապետութեամբ ։ Առաջին պատերազմը արտաքին էր, Հեթանոսութենէ արծարծուած, որ փոխանակ տկարացնելու զՔրիստոնէութիւնն՝ առաւել կը զօրացնէր և կ'ամրացնէր հաւատացելոց հոգեւոր կապը, սէր առ Աստուած և սէր առ մարդիկ ։ Իսկ վերջինը ներքին պատերազմ էր, թերակատար քրիստոնէութենէ կամ վայրապար հետազօտութենէ ծնունդ առած, որ կը քայքայէր հաւատացելոց միութիւնը և հակառակութեամբ կը տկարացնէր ։ Այս վերջին պատերազմը կը շարունակուէր մանաւանդ Յունաստանին մէջ, ուր հեթանոսական իմաստասիրութե̃ և քրիստոնէական վարդապետութեան դիմահարութենէն մի նոր խառնորդ ձեւանալով, շատերու սիրտերը կը յուզէր և կը շփոթէր ։ Հեթանոսական իմաստասիրութեամբ վարժուածներէն ոմանք, քրիստոնէութիւնն ընդունելէն և նաև եկեղեցական բարձր աստիճաններու հասնելէն զկնի, դարձեալ վայրապար կը հետազօտէին այնպիսի քրիստոնէական խորհուրդներ, որոնք մարդկային մտաց սահմա-

նէն շատ բարձր էին։ Իսկ ողջամիտ Հայրա-
պետներն և զգայուն Քրիստոնեայքն ևս,
ցանկալով այս աղէտներու առաջն առնուլ,
ժողովներու և հետեւապէս միաբանու-
թեանց կը դիմէին, որով աւելի կը զայրա-
նար հակառակութիւնը և տեղի կը տար մե-
ծամեծ խռովութեանց։ Արդարեւ՝ շատ
գեղեցիկ յատկութիւն է ճշմարտութեան
ծարաւը, ամեն բանի մէջ խոր թափանցելու
եռանդը և ամեն բան ճշգրտելու քաղցը.
բայց բան կայ, որ կարող ենք քննել ու դա-
տել, և բան կայ, որ միայն կարող ենք զ-
գալ և ոչ քննել։ Վասն զի, ինչպէս մար-
դուս զգայարանքները (տեսանելիք, լսելիք
և այլն) այլ և այլ պաշտօն ունին, նոյնպէս
և մեր միտքն ու սիրտն, որոց միոյն պաշտօ-
նը միւսին փոխանակելով՝ ամեն բան կը
խանգարուի։ Ոչ թէ միայն Քրիստոնէու-
թեան նկատմամբ է այս ճշմարտութիւնը,
այլ և բնութեան մէջ անգամ՝ այնպիսի գե-
ղեցկութիւններ կան, որ զգալ միայն կա-
րող ենք և ոչ պատմել կամ բացատրել։ Յու-
նաստանի մէջ յուզուած մոլորութեանց և
հակառակութեանց բուն աղբիւրն այն էր, որ
սրտի պաշտօնը մտքով կը ջանային կատարել
այն է Աստուածային Երրորդութեան, Քրի-
ստոսի Մարդեղութեան և Հոգւոյն Սր-
բոյ Շնորհաբաշխութեան անհաս խորհուրդ-

ները փոխանակ սրտով զգալու և սքանչանալու, մտքով կ'աշխատէին քննել, ուստի և այլանդակ մտածութեանց մէջ կը մոլորէին։ Կա՛ն, կա՛ն արդարեւ Քրիստոնէութեան մէջ լուսաւորող ճշմարտութիւններ, գեղեցիկ պատուէրներ և երջանկաւէտ սկըզբունքներ, որոց քննութիւնը մարդուս միտքը կը լուսաւորէ, սիրտը կ'ազնուացնէ, հոգին կը պարարէ անսպառ վայելչութեամբ, և աստուածանմանութեան սքանչելի ճաշակ կը մատակարարէ։ Բայց կա՛ն և գաղտնիքներ, որոնք Աստուծոյ գիտութեանը միայն պահուած են, և որոց քննութիւնը անհաս է մարդկային մտաց, և որչափ ջանայ քննել, այնչափ պիտի շփոթի և տատանի։ Իւրաքանչիւր քրիստոնէի պարտքն է խորհիլ քննել ինչ որ յայտնած է Աստուած մարդկային մտաց լուսաւորութեան և կատարելագործութեան համար. և դարձեալ իւրաքանչիւրի պարտքն է զգալ և խոնարհիլ ամէն խորհուրդներու առջեւ, որոց բանալին Աստուծոյ ձեռքն է, և ոչ մարդկային մտաւոր հետազօտութեան։ Վասն զի պարզապէս վճռուած է Ս. Գրքի մէջ. «Ծածուկքն Տեառն Աստուծոյ մերում՝ և յայտնիքն՝ մեզ և որդւոց մերոց» (1)։ Այս է ա-

(1) Բ. Օրին. ԻԹ. 29։

հան Արարչի և արարածի մէջ եղած գեղեցիկ սահմանը—ծածուկները Աստուծոյն Թողուլ, իսկ յայտնուածները ուսանիլ, ճանաչել և իւր որդւոցն ուսուցանել։ Վասն զի Աստուած այնքան ճշմարտութիւններ և պատուէրներ յայտնած է, որոնք բաւական են բովանդակ մարդկութիւնը երջանկացնել։

Եթէ այս սքանչելի սահմանը պահպանուէր, ամենեւին պիտի չը լինէին այն ուրացութիւնները, հերետիկոսութիւնները, աղանդները և հերձուածները, այն հրէշական մտաց ծնունդները, որոնք Քրիստոնէութեան դէմ կը յաճախէին և Եկեղեցւոյ ողջամտութիւնը կը տագնապէին, որով և քրիստոնէական սէրը և ներողութիւնը կը նուազէր և ահագին գժտութիւնք, նզովք և բանադրանք տեղի կ'ունենային։ Ոմանք կը գլորէին և ոմանք կը կանգնէին, ոմանք կը յիմարէին և կը գայթակղէին, և ոմանք կ'իմաստնանային և կը զօրանային։ Վասն զի, այնպէս իսկ էր Քրիստոնէութեան խորհրդաւոր կնիքը — Հաւատացելոց համար իմաստութիւն, փրկութիւն և զօրութիւն. իսկ անհաւատից համար՝ յիմարութիւն և գայթակղութիւն։ Վասն զի, վաղուց արդէն գուշակած էր Սիմէօն Ծերունին, գիրկն առնելով Քրիստոնէութեան հիմնադիր Մանուկը. «Սա կայ 'ի գլորումն և 'ի կանգնումն

բազմաց ։ . . . . Սա կայ 'ի նշան հակառա-կութեան » (1)։

Այս հակառակութիւններ, որ կը յուզ-ուէր Քրիստոսի Աստուածութեան վրայ և երկար տարիներ կը տեւէր, և գուցէ պիտի տեւէ մինչեւ 'ի կատարած աշխարհի։ Այս հակառակութիւններ, որով յունական և հը-ռովմէական եկեղեցիները կը տագնապէին։ Մի կողմէն հերետիկոսները կը բազմանային, և միւս կողմէն ժողովները մի զկնի միւսոյ կը յաջորդէին։ Բայց մեք անդէպ համարե-լով, քանի մի եկեղեցական պատմագրաց նը-ման, հերետիկոսական մոլորութիւնները մի առ մի թուել, որոնք տաղտկալի են լսելեաց, և նոյն իսկ հերետիկոսները, որպէս տկարա-միտ մարդիկ, առաւել կարեկցութեան՝ քան թէ թշնամանաց և դատապարտութեան արժանի, (վասն զի իւրեանց անճաշակ մնա-լըն Քրիստոնէութենէ՝ արդէն մեծ դատա-պարտութիւն է իւրեանց անձին,) համա-ռօտիւ կ'ամփոփենք մեր խօսքը միայն երեք Տիեզերական Ժողովոց վրայ, որոց գումար-մամբ մերժուած են երեք ամենամեծ մո-լորութիւնք՝ Քրիստոսի Աստուածութեան դէմ, Անձնաւորութեան դէմ և Հոգւոյն Սրբոյ Աստուածութեան դէմ։

(1) Ղուկ. Բ. 34.

Առաջին տիեզերական ժողովին գումարեցաւ Բիւթանացւոց Նիկիա քաղաքին մէջ, 325 թուականին Քրիստոսի, 318 Հայրապետաց ժողովմամբ, ուր մերժեցաւ Արիոսական ուրացութիւնն ընդդէմ աստուածութեան Քրիստոսի, խմբագրուեցաւ Հաւատոյ Հանգանակն և սահմանեցան ինչ ինչ եկեղեցական կանոններ:

Երկրորդ տիեզերական ժողովին գումարեցաւ Կ. Պոլիս մայրաքաղաքին մէջ, 381ին, 150 Հայրապետաց ժողովմամբ, ուր հերքուեցաւ Մակեդոնեան հոգեմարտութիւնը կամ մոլորութիւնն ընդդէմ Հոգւոյն Սրբոյ:

Երրորդ տիեզերական ժողովին գումարեցաւ Ասիացւոց Եփեսոս քաղաքին մէջ, 431 թուականին Քրիստոսի, 200 եպիսկոպոսաց ժողովմամբ, ուր մերժուեցաւ Նեստորեան մոլորութիւնն ընդդէմ անձնաւորութեան և որդիութեան Յիսուսի Քրիստոսի:

Հայաստանեայց եկեղեցին ընդունեց այս ժողովներէն Հաւատոյ Հանգանակն և ինչ ինչ կանոններ Ս. Արիստակիսի, Մեծին Ներսիսի և Թարգմանչաց աշակերտաց ձեռքով, որոց վրայ արդէն խօսած ենք: Բայց որովհետեւ մեր Եկեղեցին իւր առաքելական ուղղութեան վրայ կը յարատեւէր, բոլորովին անմասն այն մոլորութիւններէն որոնք կը յուզուէին այլ և այլ տեղեր և աշ-

խարհ ամենայն կը խռովէին, ուստի Նիկիական Հանգանակին ընդունելէն զկնի՝ իւր առաքելասարաս Լուսաւորչի ձեռքով յաւելցուց իւր համառօտ և պարզ հանգանակը. — «Իսկ մեք (Հայքս) փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկիրպագանելով Սրբոյ Երրորդութեանն և միոյ Աստուածութեանն, Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն »: Վասն զի առաքելական Հանգանակն եւս այսչափ էր. «Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ». և Նիկիական Հանգանակի մասունքն զանազան մոլորութեանց դէմ յաւելցած էին, որոնք Յունաստանին մէջ կը յուզուէին և ոչ Հայաստանի: Ժողովական կանոններն եւս յապաւեցան և մեր Եկեղեցւոյ վիճակին յարմարեցան, վասն զի շատ կանոններ այնպիսի իրողութեանց կը վերաբերէին, որք Հայաստանեայց Եկեղեցւոյն նկատմամբ նշանակութիւն չունէին (1):

Նիկիական Ժողովի մէջ, երկար վիճաբանութիւններէն յետոյ, Զատկական տօնախմբութեան ժամանակն եւս փոխած էին. բայց մեր Եկեղեցին դարձեալ նոյն նախնական աւանդութեան վրայ ընթացաւ, որով

(1) Խոր. Բ. Գիրք. Գլ. ՁԹ. Ղ:

մինչեւ ցայն վայր ընթացած էր քրիստոնէական բովանդակ Եկեղեցին ըստ առաքելական սովորութեան։

Բաց 'ի երեք տիեզերական ժողովներէն, զանազան ժամանակաց մէջ գումարեցան այլ ժողովներ եւս, թէ յԱրեւելս և թէ յԱրեւմուտս, որոց շատերը, թէ և Տիեզերական անուն կը կրեն, բայց և ոչ կէս — տիեզերական են, ըստ որում ուղղակի յունական և հռովմէական եկեղեցիներուն կը պատկանին։ Այս տեսակ ժողովներուն մէջ նշանաւոր է մանաւանդ Քաղկեդոնի ժողովն, իւր խըռովայոյզ անցքերով, որ գումարեցաւ Եփեսոսի Ժողովէն յետոյ, 451ին։ Այս ժողովի մանրապատում դէպքերը կարդացողը սոսկմամբ կը պաշարուի. վասն զի քրիստոնէական երկիւղածութիւնն չէ, որ կը պայքարի հաւատոյ պաշտպանութեան համար, այլ իշխանասիրութիւնն և գահասիրութիւնը։ Նախնի հայրապետաց անփառասէր և ներող ոգին չէ որ կը գործէ, յորմէ մոլորամիտք կը պատկառէին եւ կայսերք անգամ կ'ակնածէին, այլ ոգին գահերէցութեան և ձգտումն հալածասիրութեան, որով ժողովուրդը կը խռովի և 'ի սիրոյ կը ցամաքի։ Այն ժողովի գումարմանց խռովութիւնները տարիներ կը տեւեն, յորոց մէջ զանազան կուսակցութիւններ,այն է Դիոսկո-

բոսեանք , Լեւոնեանք , Փլաբիանոսեանք , և այլք , մի զմիւսն կը զնովէն , կը մերժեն և մինչեւ անգամ կ'աքսորեն ։ Քանի մի Թագաւորներ , այն է Թէոդոս Փոքր , Մարկիանոս , Լեւոն և Զենոն կը ստիպուին շարունակ , երբեմն այս և երբեմն այն կուսակցութեանը պաշտպան հանդիսանալ ։ Ժողովի գումարումները շատ անգամ զօրախումբով կը պաշտպանուին՝ 'ի շնորհս այս ինչ և այն ինչ կուսակցութեան , վասն զի , բաց 'ի աքսորներէն , սպանութիւնք եւս կը լինին այս ժողովին պատճառաւ ։ Երբեմն կ'ընդունուի այս ժողովը յիշեալ կուսակցութիւններէն, և շատ անգամ եւս կը մերժուի և կը նզովուի որպէս շեղեալ քրիստոնէական ճշմարիտ հոգիէն և ուղղափառութենէն (1) ։ Եւ ահա այս առթիւ , Հայք ջանացած են միշտ հեռի մնալ Քաղկեդոնի ժողովի մասնակցութենէն ։

Եւ եթէ հազիւ ուրեմն մեր վարդապետներէն ոմանք , կամ 'ի շնորհուկս Յունաց , կամ քաղաքական օգնութեան ակնկալութեան յուսով , և կամ ձանձրալի Թախանձանքէ և ստիպմունքէ բռնադատեալ , հա-

(1) Այս ժողովի խռովայոյզ անցքերուն վրայ երկարօրէն կը խօսին Բարոնիոս , Ֆլէօրի և այլ եկեղեցական պատմիչներ , Նմանապէս և Մխիթարեան ուխտէն Հ . Պօղոս Ցօմչեանեան , ի Պատմութեան փէնղէրաջեան ժողովոյ ։

մակրութիւն ցուցած են Բաղկեդոնի ժողովքի մասին, այն եւս միշտ անընդունելի եղած է մեր ընդհանուր Ազգի և Եկեղեցւոյ կողմէն, վասն զի բովանդակ Ազգի կամ Եկեղեցւոյ համակամութենէն չէ բղխած։ Արդ՝ հետեւ ակներեւ կը տեսնենք մեր ազգային պատմագրութեան մէջ, որ ոչ թէ միայն բազմաթիւ պատմաբանք [1] զայրութիւ կը խօսին Բաղկեդոնի ժողովքին վրայ, այլ և Եկեղեցին զանազան դարուց մէջ յայտնի ժողովներով մերժած է, որոց վրայ առանձինն պիտի խօսինք՝ ըստ տեղւոյն և ըստ ժամանակին։

Պատմութեան անաչառ դատաստանը կը համոզէ զմեզ խոստովանիլ, որ Հայաստանեայց Եկեղեցւոյն բռնած գիրքը Բաղկեդոնի ժողովքի նկատմամբ խիստ օրինաւոր է։ Նախ՝ որովհետեւ Հայաստանեայց Եկեղեցին իսպառ անմասն լինելով այն մոլորութիւններէն, որոնք Յունաստանի մէջ կը յուզուէին, և իւր առաքելական ուղղութեամբ ընթանալով, հետեւապէս կարօտութիւն չունէր բնաւ Բաղկեդոնեան ժողովի հակառակութեանց մասնակցիլ և այս ինչ կամ այն ինչ որոշման հպատակիլ։ Երկ-

(1) Մովսէս Կաղանկատուացի, Ստեփաննոս Սիւնեցի, Ղեւոնդ, Յովհաննէս կաթողիկոս, Թովմայ Արծրունի, Ասողիկ, Մատթէոս Ուռհայեցի, Ուխտանէս և այլք։

րորդ՝ որովհետեւ Քաղկեդոնեան ժողովը շարժառիթն քրիստոնէական հաւատոյ եւ վարդապետութեան պաշտպանութիւնն չէր, այլ յունական եւ հռովմէական եկեղեցականաց գահերէցութեան փառասիրութիւնը, որոնք, նախագահելու համար, աշխարհ կը յուզէին եւ քրիստոնէական եղբայրսիրութիւնը բառական տարապարտ վիճաբանութեանց կը զոհէին։ Եւ երրորդ՝ որովհետեւ արտաքոյ քրիստոնէական ազատասիրութե̃, Քաղկեդոնեան ժողովն ստացած էր տեսակ մի մոլեկրօնական յատկանիշ, ձգտելով նըւաճել այս ինչ կամ այն ինչ եկեղեցւոյ ինքնուրոյն գոյութիւնը եւ հպատակեցնել ոչ թէ Քրիստոսին, այլ Հռովմայ Պապին կամ Յունաց Պատրիարքին։ Բուն պատճառն այս էր, որ Հայք չը կամեցան երբէք մասնակցիլ Քաղկեդոնեան ժողովին։ Թէպէտ ոմանք յառաջ կը բերեն, իբր թէ Հայք Վարդանանց պատերազմին պատճառաւ էր որ չը կարացին իրենց կողմէն վարդապետ կամ եպիսկոպոս մի ուղարկել նոյն ժողովն, սակայն այս կարծիքը պատմական քննութեան առջեւ ամենեւին արժէք չունի։ Վասն զի. մի վարդապետի կամ եպիսկոպոսի բացակայութիւնը Վարդանանց պատերազմին արդելք չէր կարող լինիլ, եւ եթէ Հայք համամիտ լինէին նոյն ժողովին, գէթ

պայազատայ գաւառուն մէջ Խուրեանց հաւատարմութիւնը կը յայտնէին, (մանաւանդ որ շարունակ կը ստիպէին Յունաց և Հռովմայեցւոց կողմէն,) և ոչ թէ մերժելով կը մերժէին, ինչպէս որ մինչև ցայսօր ևս կը մերժեն։

Բայց ՚ի Նիկիոյ, Կ. Պօլսոյ և Եփեսոսի երեք տիեզերական ժողովներէն, զորս կընդունի և կը տօնէ Հայաստանեայց Եկեղեցին, առաջին շրջանին մէջ կատարուած են Հայոց ազգային առանձին ժողովներ ևս, այն է կամ կաթողիկոսաց ընտրութեան, կամ Եկեղեցւոյ պայծառութեան և կամ որ և իցէ ազգային կարևոր գործոյ համար. և այս ժողովներն ևս գումարուած են եկեղեցականներէ և աշխարհականներէ, առանց խտրութեան։ Այսուհետև երբեք մեր Ազգի և Եկեղեցւոյ օգուտը իրարմէ չեն բաժնուած, Եկեղեցին Ազգ. հաւաքուած է, և Ազգը՝ Եկեղեցի։ Ուստի կաթողիկոսական ընտրութեան ժողովները, որոնք իւրաքանչիւր կաթողիկոսի ընտրութեան համար կատարուած են, առաջին շրջանին մէջ եղած ազգային ժողովներն՝ հետևեալներն են։

1. Վաղարշապատու ժողով Ա. որ գումարեցաւ 325ին, Լուսաւորչի և Տրդատայ ժամանակ, Նիկիական ժողովոյ Հանգանակի և կանոնաց ընդունելութեան և նկատողութեան համար, ըստ Ս. Հայրապետն՝ Հա

յառաջանեաց Եկեղեցւոյ հոգւոյն կնքեց Հանգանակը «Նիկ» մեր փառաւորեցուցին, յաւելնելով և կանոններն եւս յարմարեցուց մեր Եկեղեցւոյ վիճակին։

2. Աշտիշատու ժողովն Ա. որ գումարեցաւ 365ին, Մեծին Ներսիսի և Արշակայ ժամանակ, անկելանոցներ, հիւրանոցներ, վանքեր և մենանոցներ շինելու համար, և մերձաւորաց խնամութիւն ու մեռելոց վրայ եղած հեթանոսական կոծումները վերցնելու համար, որոց մասին արդէն ընդարձակ խօսած ենք։

3. Վաղարշապատու ժողովն Բ. որ գումարեցաւ դարձեալ Մեծին Ներսիսի Հայրապետութեան ժամանակ, որով և սահմանուեցաւ որ Հայոց կաթողիկոսն Ազգի եպիսկոպոսներէն ձեռնադրուի և ոչ Կեսարիոյ եպիսկոպոսէն։ Այս ժողովի մասին կը խօսին Բուզանդ և աւելի ընդարձակօրէն. Յովհաննէս կաթողիկոս և Վարդան պատմիչ, կաթողիկոսական դիւաններէն և գաւառագրերէն առնլով։

4. Վաղարշապատու ժողովն Գ. որ գումարեցաւ 333ին, նոյնպէս Մեծին Ներսիսի Հայրապետութեան ժամանակ, ուր Թագաւորն, նախարարք և իշխանք ուխտեցին սէրով և աստուածպաշտութեամբ վարել և Ներսէսի ու Եկեղեցւոյ բարօրութիւնը չը դանել

անձնական կրից, այլ իրարու հետ ունեցած փոխադարձ պարտքերը անթերի կատարելով միութեան և զօրութեան ամբարտակ կանգնել արտաքին թշնամեաց դէմ։

5. Վաղարշապատու ժողով Դ. որ գումարեցաւ Ս. Սահակայ հայրապետութեան և Վռամշապուհի թագաւորութեան ժամանակ, 402ին, հայկական նշանագրաց պատրաստութեան համար, որպէսզի առաջին գրագիտութիւնը զարգանայ և ծաղկի Հայաստանի մէջ, և Հայաստանեայց Եկեղեցին հայկական ընթերցուածներով պայծառանայ։

6. Վաղարշապատու ժողով Ե. որ գումարեցաւ 426ին, դարձեալ Ս. Սահակայ հայրապետութեան ժամանակ, ուր ընդհանրական Թղթեր գրուեցան եպիսկոպոսաց, քորեպիսկոպոսաց և քահանայից, և կանոններ խմբագրուեցան եկեղեցական բարեկարգութեան համար, Թէպէտ և այս կանոններէն մի քանիքը Լուսաւորչի ժամանակին կ'ընծայուին։

7. Շահապիվանու ժողով Զ. որ գումարեցաւ 432ին, երբ Ս. Սահակ դարձաւ Պարսկաստանէն և ցանկացաւ իւր հօտը ապահովել բարեկարգութեամբ։ Այս ժողովի մէջ կարգադրուեցան Եփեսոսի ժողովի կանոնները (զորս բերած էին Թարգմանիչ

աշակերտանօքը) և միջամտեցաւ Նեստորեան մոլորութեան ։

8․ Աշտիշատու ժողով Գ․ որ գումարեցաւ 435 ին, դատապարտել Ս․ Սահակայ ժամանակ, ժողովուրդը Նեստորեան մոլորութենէ զգուշացնելու համար․ վասն զի Նեստորի վարդապետ Թէոդորոս Մոպսուեստացւոյ և Դիոդոր Տարսոնացւոյ գրքերը պարսկերէն ասորերէն և հայերէն թարգմանուելով զանազան տեղեր սփռած էին Նեստորականք ։ Ուստի Աշտիշատու ժողովի գումարմանն առաջին առթին, «Զի մի՝ ի լուսաւոր վարդապետութիւն ծուխ ինչ սատանայական յարեսցէ», ինչպէս կ՚ասէ Կորիւն ։ Այս ժողովի մէջ մի թուղթ ալ գրուեցաւ Կ․ Պօլսոյ Նորընտիր Պրոկղ Պատրիարքին և աշակերտաց ձեռքով ուղարկուեցաւ ի Կ․ Պօլիս, որոյ մասին գոհանալով յիշեալ պատրիարքն ուրախական պատասխանն գրեց ։

Ը․

Վարդապետութիւն Ս․ Գրոց յաղագս Աստուածային Բնութեան և Ս․ Երրորդութեան ։

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ և ազգային ժողովներու վրայ այսչափ խօսելէն զկնի՝ համառօտենք այժմ Ս․ Գրոց վարդապետութիւնը Աստուա-

ծոցին քրիստոնէութեան վրայ. քանզի եթէ ծանր է և դառն մարդկային տկարութենէ ծագած մոլորութեանց վրայ խօսիլը, ընդհակառակն՝ շատ քաղցր է և մխիթարական Ս. Գրոց յայտնած ճշմարտութեանց վրայ ճառելը, որ միակ աղբերակն է անսպառ վարդապետութեան, և որուն մէջ ապաստանած են եկեղեցական Ս. Հարք հաւատոյ պաշտպանութեան համար:

Սուրբ Գիրքը կ'ուսուցանէ Աստուածային քրիստոնէութեան վրայ երկու բան. նախ՝ որ Աստուած մի է և չը կայ այլ Աստուած բաց 'ի նմանէ (1), և երկրորդ՝ որ Աստուածային բնութիւնը հասարակ է Հօր, Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, և այս երեք անձինք ունին մի Աստուածութիւն: Այս է քրիստոնէից հաւատը, համաձայն բազմաթիւ բանից Ս. Գրոց (2): Այս Երրորդութիւնն է հիմն քրիստոնէական հաւատոյ, և երեք անձինք ունին մի ներգործութիւն մեր փրկութեան համար, բայց զանազան կերպով. այն է — ՀԱՅՐՆ կը կոչէ զմեզ և կը մօտեցնէ իւր Որդւոյն (3), զոր 'ի յաւիտենից ծնաւ և որոյ գալուստը պատրաստեց: ՈՐԴԻՆ եկաւ երկնքէն, միացաւ մարդկային բնութեան հետ, որ մեզ

(1) Բ. Օրին. Զ. 4—Եփես. Դ. 6:

(2) Բ. Կորն. ԺԳ. 13—Ա. Պետ. Ա. 2—Ա. Յովհ. Ե. 7: —Մատ. ԻԸ. 19:

(3) Յովհ. Զ. 44:

ի մեղաց փրկէ և մեր հոգւոյն տայ կեանք յաւիտենականս (1)։ Այս ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ մեր Նորոգիչն է, որ վերստին հաստատեց մեր մէջ Աստուծոյ նմանութիւնը, ընդունակ առնելով Աստուծոյ տուած փրկութեանը (2)։

Սուրբ Գիրքը կ'ուսուցանէ, որ ինչպէս աստուածային բնութիւնը հասարակ է երեք անձանց, նոյնպէս և աստուածային կատարելութիւնները, այսինքն Հօր ունեցած կատարելութիւնները ունին հաւասարապէս և Որդին և Սուրբ Հոգին, օրինակի համար՝ Յաւիտենականութիւն և Անմահութիւն (3), Ամենակարողութիւն (4). Ամենագիտութիւն (5). Ամենուրեքութիւն (6). Արարչագործութիւն (7). Նախախնամութիւն (8). Անփոփոխութիւն (9). Աստուածային պաշտօն (10) և այլն։

Սուրբ Գիրքը կ'ուսուցանէ, որ Քրիստոս

(1) Յով. ԺԴ. 6։
(2) Յով. ԺՁ. 13։—Կորն. ԺԲ. 3։
(3) Յով. Ը. 58։—Յայտ. Ա. 8։
(4) Ծնն. ԺԷ. 1։—Մատ. ԺԹ. 26։—Երեմ. ԼԲ. 17։—Յով. Ե. 12։
(5) Եբր. Դ. 13։—Եսայ. ԽԴ. 7։—Յով. Բ. 25։ ԻԱ. 17։—Յայտ. Բ. 23։ Ա. Կորն. Բ. 10, 11։
(6) Երեմ. ԻԳ. 24։—Սաղ. ՃԼԸ. 7—8։—Մատ. ԺԸ. 20։—ԻԸ. 20։
(7) Ծնն. Ա. 1։—Սաղ. ԼԲ. 9։—Եբր. ԺԱ. 3։—Յով. Ա. 3։—Կող. Ա. 16։—Ծնն. Ա. 2։
(8) Կող. Ա. 17։—Յով. Ե. 17։—Եբր. Ա. 3։
(9) Սաղ. ՃԱ. 26. 27։—Եբր. ԺԳ. 8։
(10) Մատ. ԻԸ. 19։—Բ. Կորն. ԺԳ. 13։

իւր յաւիտենական ծննդեան համար 'ի Հօրէ՝ կոչուած է Որդի Աստուծոյ, իսկ 'ի ժամանակի մարդեղութեան համար՝ Որդի Մարդոյ, եղբայր մարդկան, որով խրատունք ստացած ենք մենք Հայր կոչել զԱստուած, և այս պատճառաւ եկեղեցին կը խոստովանի Քրիստոսի անձնաւորութեան մէջ երկու բընութիւն — Աստուածային և Մարդկային (1) անշփոթ և անբաժանելի միաւորութեամբ: Այս Մարդեղութեան խորհուրդը՝ սիրոյ մեծ խորհուրդ է աշխարհի համար (2). և որչափ անիմանալի է և անհաս մարդկային մըտաց, այնքան բնական է աստուածային սիրոյն և ամենակարող բնութեան (3): Այս մեծ խորհրդեան մէջ էր մարդկային ազգի փըրկութիւնը, սմա կը պատրաստէր բովանդակ մարդկութիւնը, ուստի և որով լցան օրէնք և մարգարէք: Վասն զի Քրիստոս, որպէս ճըշմարիտ խոստացեալ Մեսիա, կատարեց Մարգարէական, Քահանայական և Թագաւորական երեք պաշտօնը, (որոց վերայ խօսած էին մարգարէքն,) և եղեւ մեզ համար ճշմարիտ ՄԱՐԳԱՐԷ (4), ճշմարիտ ՔԱՀԱՆԱՅ (5), և ճշմարիտ

(1) Յով. ԺԲ. 27: — ԺԴ. 10:
(2) Տիմ. Ա. Թուղ. Գ. 16 — Հռով. Ա. 3 — Հռով. Թ. 5:
(3) Յով. Ա. 14 — Կորն. Ա. Թուղ. Ա. 30:
(4) Ղուկ. ԻԴ. 19 — Կող. Բ. 3:
(5) Եփես. Ե. 2 — Յով. Բ. 1 — Եբր. Թ. 24: Եբր. Է. 28 — Եբր. Ե. 10:

ԹԱԳԱՒՈՐ (1), ուսուցանելով մխիթարար վարդապետութիւններ, և պարգևելով մարդկութեան անցեալն, ներկայն և ապառնին, քաւելով զմեղ և փրկելով իւր անձին պատարագաւը, և Թագաւորելով մեր վրայ երկնաւոր և հոգևոր Թագաւորութեամբ :

Սուրբ Գիրքը կ'ուսուցանէ, որ Հոգին Սուրբ կ'ելանէ և կը բղխի 'ի Հօրէ, ոչ իբրև հասարակ զօրութիւն Աստուծոյ, այլ որպէս անձն Ս. Երրորդութեան, նոյնպէս անսահման, յաւիտենական և ճշմարիտ Աստուած (2) : Իսկ վերաբերելով առ մեզ՝ Հոգին սուրբն է Աղբիւր Միութեան Աստուծոյ ընդ մարդկան (3). և Նշան, որով քրիստոնեայ կը ճանաչուին (4). վասն զի մենք առանց Հոգւոյն մեր մէջ բնակութեան (5), օգնութեան և առաջնորդութեան (6), լոկ շնչաւոր մարդիկ ենք միայն (7) ; վասն զի Հոգին Սուրբ գործակից է Հօրն և Որդւոյն մեր փրկութեան համար (8). և ինչպէս Աստուծոյ յայտնութիւն աշխարհին Քրիստոսով կը կոչուի ՓՐԿՈՒԹԻՒՆ

(1) Եսայ. Թ. 7: — Ղուկ. Ա. 32: — Յով. ԺԸ. 36:
(2) Գործ. Ե. 3—4: — Յով. Ա. Թղ. Ե. 7—8: — Կորն. Բ. Թղ. ԺԳ. 13: — Ա. Կորն. ԺԲ. 4:
(3) Ա. Կորն. Ե. 11.
(4) Եփես. Դ. 30:
(5) Ա. Կորն. Գ. 16:
(6) Հռովմ. Ը. 9:
(7) Ա. Կորն. Բ. 14:
(8) Ա. Կորն. ԺԲ. 11: — Ա. Կորն. Բ. 12: — Հռովմ. Ը. 16:

ճշմարտէս և Աստուծոյ յայտնութիւնն զայնքան տեսանք հօրդւոյն՝ կ'անուանի ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ և ՍՐԲՈՒԹԻՒՆ։ Այս է համառօտն Ս. Գրո-րոց յայտնած վարդապետութիւնը աստ-ուածային բնութեան և երրորդութեան վրա-յայ։ Նոյն մարդ փրկուած է աստուածային սիրով, նորա համար պարզ է և յաւիտեան Ս. Գրոց վարդապետութիւնը. իսկ երբ ցանկա-ցած է 'ի միտս, այն ժամանակ ամեն բան մթին է և աղօտ, քան որով մաքուր պատե-րը և ուղիղ մտքերը միայն կարեն զգալ և տեսանել զԱստուած և ոչ թէ կասկածանօ-քը և թերահաւատները։

Թ.

Ս. Գիրք. — Համառօտ պարունակութիւն Հին և Նոր Կտակարանաց. — Յատկանիշք Ս. Գրոց. — Կարեւորութիւն ուսման Ս. Գրոց 'ի դաստիարակութեան.

ՈՐՈՎՀԵՏԵՒ եկեղեցական հարց ըն-տիր գրուածները բոլորը քաղած են Ս. Գրոց-քէն, ինչպէս ամենաջինջ աղբերականէ, և ա-մէն տարակուսանք եւս Ս. Գրքով լուծ-ուած են եկեղեցական ժողովոց մէջ. ուստի և մենք հարկ կը համարինք համառօտիւ խօ-սիլ Ս. Գրոց վրայ, եկեղեցական պատմու-

թեան ներկայ շրջանին մէջ, յորում և կատարուած է Ս. Գրոց հայկական թարգմանութիւնը։ Մեր նպատակը չէ գովաբանել Ս. Գիրքը, վասն զի իւր Աստուածաշունչ անունը արդէն ամեն մարդկութեան գովեստներէն 'ի վեր է. այլ միայն կամիմք նորա բովանդակութեան համառօտ գծերը պատկերացնել, որոնք ամենահարկաւոր են եկեղեցական մատենագրաց հոգին հասկանալու համար, որոց վրայ ակնարկ խօսիմք յետագայ գըլուխներուն մէջ։

Սուրբ Գիրքը կը տայ մեզ լիուլի ծանօթութիւն Աստուածային կատարելութեանց վրայ, նորա գործոց և խորհրդոց վրայ, և այնպիսի վսեմ և անթերի ծանօթութիւն, որուն վրայ մարդուս միտքը կը յափշտակուի ու կը զարմանայ և սիրտը կը խանդաղատի ու կ'ըզմայլի, բաւականութիւն գտնելով իւր ամեն կարօտութեանց։ Վասն զի, եթէ արարչագործութեամբ յայտնած է Աստուած իւր յաւիտենականութիւնը, ամենակարողութիւնը և աստուածութիւնը. Ս. Գրքով, աւելի պայծառ կերպիւ, յայտնած է իւր ամեն կատարելութիւնները և մանաւանդ ամենադերագոյնը — Աստուած սէր է։

Արդարև զանազան ազգեր, 'ի հնուց անտի ունին զանազան սուրբ անուանեալ գրքեր. ինչպէս՝ Չինացիք՝ Կինկս անունով, Հնդկա-

ցնէ՞ — Վէդա, Գարաֆէլք — Զենդ — Աւեստա, Նշանագրէ՞ Ղուրան, Սակամոնիմունեանք՝ Նշաւոր բայց միայն Նստուածաշունչն է միակ Նստուածոյ խօսք, որ կը պարունակէ ճշմարիտ աստուածապաշտութիւն. իսկ յիշեալ սուրբ կոչուած գրեանց մէջ մարդկային գաղափարաց հասարակ շղթան կը նշմարուի, և եթէ քանի մի ճշմարտութիւններ կը պարունակեն իւրեանց մէջ, այն եւս Աստուածաշունչէն առնուած կը համարուի, որով և պարզ կ'երեւի, որ աստուածային Գիրքը մարդկային հանճարի գործ չէ։ Ուստի և երկու կարենք բաժանել աշխարհիս բոլոր գրքերը — Աստուածային և մարդկային։ Առաջինն է յայտնութիւն աստուածային կամաց, որուն վրայ տարածուած է Աստուծոյ զօրութիւնը. իսկ երկրորդն է յայտնութիւն մարդկային մտաց, որուն վրայ տարածուած է մարդոյ տկարութիւնը (1)։

Սուրբ Գիրքն ունի երեք գլխաւոր յատկանիշ — Շնորհական, Պատմական և Մարգարէական։ Ա. Գիրքը Շնորհական է, այսինքն պայծառացնող և կանգնեցնող երկրի, վասն զի ամենե-րեւ կը տեսնենք, որ ինչ տեղ Աւետարանը տարածուած է, այն երկիրները լուսաւոր

(1) Պ. Շ. Համառօտութիւն Քրիստ. Ուսման Հայոց. Առաջ. Ց. Եփրեմեանց։

ուած են. իսկ ընդհակառակն՝ անքրիստո-նեայ կամ հեթանոս աշխարհները զրկուած են լուսաւորութենէ և յառաջադիմութեան տարրէ։ Սուրբ Գիրքը Պատմական է, վասն զի Ծննդոց Եղիցի լոյս խօսքէն մինչև Յով-հաննու Յայտնութեան Տեսի երկին նոր և երկիր նոր խօսքը՝ մի մեծ և սքանչելի շղթայ է, ո-րով աշխարհիս սկիզբը կը կապուի միւս աշ-խարհի սկզբան հետ, կամ պարզապէս ասել, աշխարհի ստեղծագործութեամբ կամ ծը-նընդեամբ կը սկսի և կատարածով կը վերջա-նայ։ Աստուծոյ ընտրած ազգը ինքնին կը պահպանէր աշխարհիս պատմութիւնը, այն է Ճանաչողութեան Աստուծոյ, Արարչագործութեան նորա, Ընկման մարդոյ ընդ մեղօք և յոյս փրկութեան։ Ահա քեզ ամենակարևոր նիւթ աստուածութեան կամ պատմութեան, որ մայր է կրօնի։ Սուրբ Գիրքը Մարգարէական է, որ կատարուած է և այսօր իսկ կը կատարուի մեր առջև։ Աս-տուածային Գրոց մարգարէութեան կենդա-նի նշան է արդէն Իսրայէլցի ազգը, որ մարգա-րէից փրկութեան յուսով լքուած Աստուա-ծաշունչը ձեռքը բռնած՝ տակաւին կըսպա-սէ փրկութեան։ Այս Իսրայէլցի ազգը Քրի-քրիստոնէութեան համար մարգարէական նշա-ն է անցեալ ժամանակի. իսկ Քրիստո-նեայք նշան են ներկայ և ապառնի ժամա-նակաց մարգարէութեան, որոց կատարումն

անիրաւադատութեան կը շարունակի. Քրիստոսի այս խօսքերն. — «Կեցէք, ես ըսի ձեզ ես. և թէ՝ Քաջալերեցարուք, զի ես՝ յաղթեցի աշխարհի (1). Այս մարգարէական երկու կենդանի նշանն եւս — Իսրայելացիք և Քրիստոնեայք — այսօր մինան մինչեւ աշխարհիս վերջը, և երբ անցեալն և ապառնին միանան, այնժամ միասին վկայեն մարդկային ցեղին՝ մին անցեալ ժամանակի մարդասիրութեան կատարումն, իսկ միւսն՝ ապառնոյն. և ինչպէս Հին ազգը, նոյնպէս և Նոր ազգը, այսօր տեսնեն աշխարհիս քանդումն, այն է մարդկութեան վերջն։

Սուրբ Գիրքը դիտաւորապէս կը բաժնուի երկու, — Հին և Նոր Ուխտարան. Առաջինն յայտնուած է Մովսէսով և միւս մարգարէներով, որոնք դաստիարակներն են Նոր Ուխտարանի. իսկ երկրորդը բացուած է առաքեալներով. Հին և Նոր Ուխտարանները կը պարունակեն իւրենց մէջ Պատմական, Բարոյական և Մարգարէական Գիրքեր և այն պատճառաւ կը կոչուին Ուխտարան; որ Աստուած կը յայտնէ նոցա մէջ իւր կամքը և կը բացատրէ ամենայն իւր բարութիւնը և ողորմութիւնը։ Հին Ուխտարանը կը խօսի աստուածային գործոց վրայ, կրօնի զանազան վիճակի վրայ, աշխարհի սկզբէն մինչեւ Փրկչի գալուստը, որ

(1) Յով. ԺԶ. ԼԳ.

խոստացած էր ՚ի սկզբանէ և յայտնած Իսրա-յելեան ազգին ։ Այս միութեան ամենա-կալութիւնը և միանակցութեան յոյսը , այս երանաւէտ բանն Աստուծոյ՝ էր նիւթ հա-ւատոյ , մխիթարութիւն մարգարէից և յոյս ճշմարիտ աստուածպաշտից [1] ։ Իսկ Նոր Ուխ-տակարանը կը խօսի և կը հաստատէ ամեն բան, ինչ որ Աստուած Հին Կտակարանի մէջ խօսած է իւր գործոց և կամաց համար , որ կատարուեցաւ մարդեղութեամբ խոստա-ցեալ Բանին , այսինքն փրկութիւն մեր ՚ի ձեռն Քրիստոսի , և այս պատճառաւ կը կոչ-ուի Աւետարան , այսինքն՝ աւետիք բարու-թեան ։

Թէպէտ Հին և Նոր Կտակարանքը բա-ղադրուած են զանազան ժամանակ և զանա-զան մարդիկներով , բայց նոցա վարդապե-տութեան հոգին մի է . վասն զի աստուա-ծային է , և ամեն հաւատով ընդունողներ և կարդացողներ զգացած են նորա մէջ զօրու-թիւն Աստուծոյ , գտած են կեանք , կերա-կուր հոգւոյ , խաղաղութիւն խղճի , կենդա-նի յոյս , ճաշակ յաւիտենական կենաց և կարողութիւն համբերելոյ նեղութեանց , այնպիսի զգացումներ և հոգեկան վայելչու-թիւն , որ անհնարին է մարդկային գրքէ

(1) Ղուկ . Բ . 28 ։

վերջին ստանալ։ Հին և Նոր Կտակարանքը կը շինեն մի հաւատ. վասն զի ոչ այլ ինչ են երկու Կտակարանքը եթէ ոչ Նորը Հնոյն մէջ ծածկուած է, և Հինը Նորոյն մէջ յայտնուած (1), և Հինը դաստիարակ է Նորոյն։ Հնով օրէնք աւանդուած է, իսկ Նորով շնորհք և ճըշմարտութիւն (2)։

Ուստի և կարենք համարձակ ասել, որ ինչպէս Քրիստոնէութիւնն մարդկային ազգի երկրաւոր և երկնաւոր ճշմարիտ երջանկութեան միակ կրօնքն է, նոյնպէս և Աստուածաշունչը բոլոր աշխարհի միակ Գիրքը, որ կը պարունակէ մարդկային մտքէն բարձր յայտնութիւններ, լուսաւորող ճշմարտութիւններ և փրկաւէտ պատուէրներ, որոնք կարեն մարդկային հոգեկան կեանքը ազնըւացնել, կատարելագործել և աստուածանմանեցնել։ Այս պատճառաւ է, որ Քրիստոնէական Եկեղեցին, իւր հիմնադրութեան օրէն 'ի վեր, առաջին պարտք համարած է Ս. Գրոց ուսմունքը ծաւալել քարոզելով, բացատրելով և այն երկնահոս աղբիւրէն հազարաւոր առուակներ հանելով։ Եւ այսօրուան օրս, գիրք մի չկայ, յորմէ մտաւոր աշխարհը այնքան լոյս և բարիք լինի ստացած մարդկային ընկերականութեան իսկական բարօ-

(1) Օգոստինոս։ (2) Յովհ. Ա. 17։

բութեան և յառաջադիմութեան համար, ինչպէս Աստուածաշունչը․ Գիրք մի չը կայ և չէ կարող ըլլալ, որ այնքան ընդունելի թարգմանուած և տպագրուած ըլլայ, ինչպէս Աստուածաշունչը։ Այս մեծ կարեւորութիւնն էր զոր զգացին և մեր անմահ Թարգմանիչքը, և ազգի լուսաւորութեան և զարգացման առաջին քայլափոխը Ս. Գրոց թարգմանութիւնը և ուսումը եղաւ. որոց թարգմանութիւնն է՝ այնքան ընտիր է, որ Ներկայ դարուս Եւրոպացի հայագէտ բանասիրաց այլ և այլ գովեստից հետ միասին, կը կոչուի նաև Թագուհի Թարգմանութեանց։ Սակայն այս գովեստէն աւելի մեծ գովեստ տուած կը լինինք մեր Նախնեացը, եթէ Ս. Գրոց ուսմունքը մեր ժողովրդեան մէջ ընդհանրացնենք և գործնականութեան վերածենք նոյն հաստատուն հիման վրայ կառուցանենք։



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.

Յատկական նկարագիր ընդհանուր եկեղեցական մատենագրութեան Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ դարուց. — Ներքին որոշիչ նկարագիր արեւելեան և արեւմտեան եկեղեցական մատենագրութեանց. — Տեսութիւն Հայոց եկեղեցական մատենագրութեան վրայ։

ԴՊՐՈՑՆԵՐՈՒ յառաջ բերած գլխաւոր արգասեաց մին է Մատենագրութիւնը։ Որովհետեւ Սահակեան և Մեսրոպեան դպրոցաց վրայ արդէն խօսեցանք, կը մնայ մեզ արդ՝ խօսիլ նոյն դպրոցներէն ծնած եկեղեցական մատենագրութեան վրայ։ Բայց այս ազգային եկեղեցական մատենագրութիւնն և ս ճշդիւ գնահատելու և իւր որոշ տիպարով պատկերացնելու համար՝ կարեւոր է նախ և առաջ, եթէ ոչ մանրազննին (որ մեր մանաւորած ընթացքէն արտաքոյ է,) գէթ հարեւանցի ակնարկ մի ձգել եկեղեցական ընդհանուր մատենագրութեան ընթացքին վրայ, որով ընթացած է մինչեւ հինգերորդ դարը։

Եկեղեցական ընդհանուր մատենագրութիւնն այս յատկական նկարագիրը կը պատկերացնէ մեզ դարական կարգաւ։

Առաջին դարուն մէջ կ'երեւին միայն հատակոտոր թղթեր, գրուած 'ի յորդոր և 'ի խրատ զանազան դիպաց պատճառաւ, որոց մէջ ոչ թէ գիտութեան նշմարանք, այլ քրիստոնէական քաղցր օծութիւն և եթ կ'երեւի։

Երկրորդ դարուն մէջ մատենագրութիւնն առաջնոյն պէս միակերպ չէ։ Ժամանակի հանգամանքները յառաջ կը բերեն նիւթոց պէսպիսութիւն մատենագրութեան մէջ։ Վասն զի Քրիստոնէութիւնը կըսկսի արդէն սոյն դարուն մէջ հալածանքներ կրել ոչ միայն արտաքուստ Հեթանոսներէն և Հրէաներէն, այլ և 'ի ներքուստ ազգի ազգի աղանդաւորներէ, որոնք կը զրպարտեն Քրիստոնէից վարքը և վարդապետութիւնը, և Հռովմէական տէրութիւնն ևս, ինչպէս արտաքուստ, նոյնպէս և 'ի ներքուստ օգնական կը լինի Քրիստոնէութեան դէմ պայքարող հալածասէր ոգւոյն։ Ասոր Եկեղեցւոյ պաշտպան վարդապետք կը ստիպուին հասարակ թղթերով չը շատանալ, այլ և պատմական, պատասխանատուութեան, մեկնական և վիճական գրուածներով և ճառերով ասպարէզ ելնել։

Չորրորդ դարուն մէջ եկեղեցական մատե-
նագրութիւնն առաւել բազմակողմանի ըն-
թացք կըստանայ, որովհետեւ կարեւորու-
թիւնը կըստիպէ Քրիստոնէական ուսմանց
հետ հետամուտ լինիլ միանգամայն և ար-
տաքին գիտութեանց։ Վաղուց արդէն հե-
թանոսական փիլիսոփայութիւնը կը յառա-
ջէր, բայց Քրիստոնէութեան տարածմանէն
առաւել զօրոյթ ստանալով և շփոթուելով, կը
ձգնէր սոյն դարուն մէջ դիմագրաւել ահա-
գին յոխորտանօք, երբեմն Հեթանոսու-
թեան և Քրիստոնէութեան մէջ համաձայ-
նութիւններ երազելով, երբեմն Քրիստո-
նէութիւնը յանդգնաբար պախարակելով,
և երբեմն ձգտելով Քրիստոնէութենէն
բարձր և եղած հեթանոսականներէն առա-
ւել նորագոյն կրօնք մի ստեղծաբանել։ Այս
պատճառաւ որչափ հակառակութիւն-
ները կը բորբոքին և Նորանոր աղանդաց կամ
վարդապետութեանց տեղի կը տան, այնչափ
Քրիստոնեայք կը սոսկան արտաքին ուսմունք-
ներէ, մանաւանդ փիլիսոփայականէն, և կը դըժ-
կամակին իւրեանց մանուկները կայսերական
կամ հասարակաց դպրոցները ուղարկել,
թիւնաւոր համարելով յունական և հռով-
մէական դասական մատենագրութիւնը։
Բայց ժամանակը կըստիպէ, որ Եկեղեցւոյ
վարդապետք միայն քրիստոնէական վարդա-

պետութեամբ չըմաքառին հեթանոսական մտաւոր ուժին դէմ, այլ և մտաւոր ուժով. ուստի և օգտաւէտ քան թէ վնասակար կըր համարին դպրոցներ բանալ և այն դպրոցներուն մէջ Սուրբ Գրոց ուսման հետ ուսանդել միանգամայն և փիլիսոփայութիւն, երկրաչափութիւն, քերականութիւն, ճարտարախօսութիւն, և այլն։

Այս տեսակ դպրոցներու առաջինն կըր լինի Աղեքսանդրիոյ Եկեղեցական դպրոցը, որուն կը հետեւին և ուրիշ շատ տեղեր. և եթէ չենք սխալիր, սոյն օրինակ դպրոցներու մէջ կը վարժին և մեր Թարգմանիչ Աշակերտներն յԱղեքսանդրիա, 'ի Բիւզանդիոն, յԱթէնս և այլն։ Աղեքսանդրիոյ մէջ վաղուց արդէն հռչակաւոր էր գեղեցիկ ուսմանց Մուսայարանը, ուր կը դիմէր ուսումնասէր մանկտին Հռովմէական պետութեան ամեն կողմերէն, և այս կերպով Աղեքսանդրիա համարուած էր իբրեւ Կայան Գիտու-Բնան։ Այն կայանին մէջ ահա կը հաստատուի և Եկեղեցական դպրոցը, յորմէ ականաւոր մարդիկ կը յառաջանան, և 'ի տեղիս տեղիս ականաւոր աշակերտներ կ'ունենան, ինչպէս են՝ Կղեմէս, Որոգինէս, Գրիգոր Սքանչելագործ, Դիոնէսիոս Աղեքսանդրացի և այլք, որոնք իւրեանց գրուածներով կը մաքառին նոյն ժամանակի զանազան փիլիսոփայական

և ուելի աղանդական կարծեաց դէմ։

Բայց եկեղեցական առաւել ընտիր մատենագիրները Չորրորդ դարուն մէջ կ'երեւին, որոց գրուածքները քրիստոնէական ազնիւ համեմատ են, և որոնք եկեղեցական մատենագրութեան գլխաւոր և օրինակելի գործքեր կըհամարուին. Այս արժանաւորութիւնն ունին Աթանասի, Բարսղի, Գրիգորի Նիւսացւոյ, Գրիգորի Նազիանզացւոյ, Կիւրղի, Եփրեմի, Ամբրոսիոսի, Հերոնիմոսի, Ոսկեբերանի և Օգոստինոսի գրուածքները։ Այս ակնաւոր անձինքներէն ոմանց (ինչպէս՝ Բարսղի, Ոսկեբերանի, Օգոստինոսի) քրիստոնէական զգայուն և բարեհամբոյր ճաշակի զարգացմանը օժանդակող եղած է, ոչ այնքան դպրոցական, որչափ մայրական արգասաւոր կրթութիւնք։ Եթէ մեր բըռնած մասնաւոր ընթացքը չը ներեր մեզ ընդարձակօրէն խօսիլ այս ընտիր անձանց մատենագրական աշխատութեան վրայ, գէթ այս չափը կ'ասենք, որ մեր Թարգմանիչները սոցա ժամանակակիցներին կըհամարուին, և նոցա մատենագրական ճաշակը սիրողներ, ինչպէս և նոցա երկասիրութեանց շատերը հայկական թարգմանութեամբ մեզ աւանդած են։ Եւ որովհետև առանց ժամանակակից անցքերուն տեղեակ լինելու, անհնարին է հիմնովին ըմբռնել յունական և հռոմէա-

կան երրորդ, չորրորդ և հինգերորդ դարուց եկեղեցական մատենագրութեան հոգին, ուստի կը պարտաւորինք գէթ այսչափ ասել, որ մեծ մասամբ գրուած են նոյնժամանակեայ յուզուած խնդիրներուն նկատմամբ, այն է մոլորութեանց, աղանդաւորութեանց և փիլիսոփայական վիճմանց և կարծեաց. վասն որոյ և առաւել այն մասները չինողական են և տեսական, որոնք արտաքոյ են վիճաբանական նպատակէ։ Մեր նախնեաց թարգմանածները առաւել երկրորդ կարգին կը վերաբերին։

Իսկ ներքին ընդհանրական նկարագիրը, որով կ՚որոշուին իրարմէ արեւելեան — յունական և արեւմտեան — հռովմէական եկեղեցական մատենագրութիւնքը, այս համեմատութեան մէջ կը կայանայ, որ յունականին մէջ քրիստոնէութիւնը բացատրուած է առաւել տեսական գիտութեամբ, իսկ հռովմէականին մէջ՝ գործնական գիտութեամբ։ Այս նկարագրով կ՚որոշուի նոյն իսկ յունական և հռովմէական փիլիսոփայութիւնը։ Բայց ընդհանրապէս յունական եկեղեցական մատենագրութիւնը առաւել ճոխ է քան հռովմէականն։

Իսկ Հայոց եկեղեցական երկրորդ շրջանի մատենագրութիւնը (բաց ՚ի յունական Հարց ոմանց ինչ ինչ թարգմանութիւննե-

րէն,) առ հասարակ պարզ յորդորական է և մեծ մասամբ պատմական, հեռի վիճաբանական ընթացքէ, որով յայտնի կ'երևի թէ հայկական մատենագրութիւնը առիթ չէ ունեցած մոլորամտութեանց դէմ պայքարելու, ըստ որում և ոչ իմաստասիրական դըպրոցներու յուզած խնդիրները կային Հայաստանին մէջ և ոչ նոցա դէմ մաքառելու կարեւորութիւնն:

Այսպէս ուրեմն, եթէ առ հասարակ մատենագրութիւնը որ և իցէ ազգի մտաւոր և բարոյական զարգացման արդար կշիռն է, եկեղեցական մատենագրութիւնն ևս Եկեղեցւոյ վիճակի և գործունէութեան ճշգրիտ պատկերն է: Այն վերանորոգութիւնը, որ կը կրէ Հայաստան երկրորդ շրջանին մէջ, թէ՛ քրիստոնէական լուսաւորութեամբ և թէ՛ մատենագրական զարգացմամբ, այն ազգային պատմական կենաց նշանաւոր դարագլխոյ երեւոյթը գրաւած է բոլոր մատենագրաց մտադրութիւնը, և մանաւանդ Ս. Գրրոց թարգմանութեան գեղեցիկ և միաբանական աշխատասիրութիւնն ևս խիստ մեծ ազդեցութիւն գործած է ամենուն երկասիրութեանց մէջ: Քանի մի մատենագիրներ նոյն շրջանին մէջ խօսած են մի և նոյն նիւթոյն վրայ հաւասար եռանդով և զգացմամբ: Մատենագրութեան պատմական մա-

սըն անգամ առաւել քրիստոնէական նախատակութեան պատկերներ կը ներկայացնէ, քան թէ քաղաքական իրողութիւններ։ Նշանաւոր պատճառն ոչ թէ հեղինակաց եկեղեցական լինելն է, այլ ժամանակը և հայրենեաց վիճակըայնպէս ազդած են։ Նոյնպէս ուրեմն, որչափ որ ազգային գրագիտական պատմութիւնը կը վերաբերի մեր մատենագրաց վրայ խօսիլ, նոցա գրաւորական արժանաւորութիւնը գնահատել, ժամանակագրական և պատմական ճշդութիւնները հետազօտել և լեզուի յատկութիւնը կշռել, սակայն միւս կողմէն եւս Եկեղեցական Պատմութիւնը չէ կարող զանց առնել նոցա յորդորական և վարդապետական կողմները նկատողութեան առնուլ և պատմականին մէջէն գէթ եկեղեցականին վրայ խօսիլ։

Ակնինք ուրեմն յառաջ բերել թէ՛ մատենագիրները և թէ՛ իւրեանց երկասիրութեանց համառօտ բովանդակութիւնը, առաւել ընդարձակ հետազօտութիւնը գրագիտութեան կամ դպրութեան պատմութեանը թողլով։

Բ.

Մատենագրական երկասիրութիւնք Ս. Գրիգորի Լուսաւորչին, Ագաթանգեղոսի և Զենոբայ. — Ներքին նըկարագիր պարունակութեան իւրաքանչիւրոց։

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ — Այս չնաշխարհիկ անձն, ինչպէս քրիստոնէական հաւատոյ հաստատութեան, նոյնպէս և ազգային եկեղեցական մատենագրութեան հայրն է, որոյ քրիստոնէական ուսմունք տարածելու ջանից և առաքելական վաստակոց վրայ արդէն խօսած ենք, և կը մնայ մեզ այժմ խօսիլ նորա գրաւոր երկասիրութեանց վրայ։

Գրիգոր Լուսաւորչի երկասիրութեան ծնունդ են Յաճախապատում գիրքն և Ագաթանգեղոսի պատմութեան մէջ գտնուած Վարդապետութիւնը։ Նորա կ'ընծայուին նմանապէս ինչ ինչ կանոններ, Թուղթ երեսուն, (գուցէ այն, զոր յաւելցուց Նիկիական կանոնաց վրայ (1) ինչպէս և Իսկ Ձեր փառաւորեցուցին, Հանգանակի վրայ). Ժամագրքի մէջ Առաւօտ ծեծ և Հզօր մաղթանքը, որ կ'աւանդուի թէ Հռիփսիմեանց և Գայիանեանց մարմինները ամփոփելու ժամանակ ասած է. Նմանապէս և երկու աղօթք, — Օրհնեալ է մարդասիրութիւն քո, Տէ՛ր իմ. և Աղաչեմ զքեզ։

(1) Խոր. Բ. Գիրք. Ղ.

Յաճախապատումն, որ ոմանք յունարէն և ոմանք աւելի հաւանական, հայերէն լեզուով և յունարէն տառերով գրուած կը համարեն (ըստ որում հայկական գրոց գիւտէն առաջ է), կը պարունակէ իւր մէջ քսան երեք ճառեր Երրորդութեան խորհրդոյն և աստուածածանօթութեան վրայ, արարչական սիրոյն և անպատում գթութեան վրայ, մարդոյ առաքինական հանդիսից և բարեպաշտութեան վրայ, հովուաց պարտուց և արթուն տեսչութեան վրայ, և այլն և այլն։ Իսկ Ագաթանգեղոսի մէջ աւանդուած քարոզութիւնը պարզ և ընտիր վարդապետութիւն է, Ս. Գրոց պատմական ընթացից հետեւողութեամբ, ուր կը խօսուի մարդոյ ստեղծագործութեան և պատուիրանազանցութեան վրայ, աստուածային ուխտի հաստատութեան և դար առ դար կրկնութեան կամ նորոգութեան վրայ, Աստուածային անպայման սիրոյն կամ Քրիստոսի մարդեղութեան վրայ, ամեն փրկագործ տնօրէնութեանց վրայ, աշխարհի կատարածի և յարութեան ու դատաստանի վրայ, Հոգւոյն Սրբոյ գալստեան և աշխարհի նորոգութեան վրայ, Առաքելոց գործոց և քարոզութեանց վրայ, և Քրիստոնէական Եկեղեցւոյ տեւականութեան և խաւարի հետ ունեցած պատերազմին վրայ։

Գրիգոր Լուսաւորչի քարոզութեան կամ վարդապետութեան բովանդակութիւնը, թէ Ագաթանգեղոսի և թէ Յաճախապատումի մէջ, սքանչելի պարզութիւն և գեղեցկութիւն ունի։ Ասացուածները հաստ և վճռական, դարձուածները առանց սեթեւեթի և պաճուճանաց, նմանութիւնները բնական և ընտանի, իմաստները սրտաշարժ և զգայուն։ Ակներեւ կը տեսնուի, որ աստուածային և մարդկային սիրով վառուած սրտէ կը բղխին և ոչ իմաստասիրական կարծիքներու մէջ տատանող մտքէ։ Վարդապետական եղանակը դասախօսական է, և ըստ ամենայնի գործնական։ Ցամաք իմաստասէր չէ, որ կը տրամաբանէ, և ոչ արուեստակեալ պերճախօս, որ կը ճարտարախօսէ, այլ գթոտ հայր, որ իւր սրտին մէջ յուզուած բոլոր աստուածային զգացմունքները կը ջանայ իւր որդւոցը հաղորդել և տկար ու սխալական արարածները յորդորելով ՚ի հաւատ, ՚ի յոյս և ՚ի սէր՝ կապել Արարչի հետ, որ ամենակարողն է և անփոփոխ բարի։ Նա մեզ մի կողմէն Աստուծոյ ամենակարողութիւնը կը պատկերացնէ և գթութիւնը, միւս կողմէն մարդոյ տկարութիւնը և կարօտութիւնը. մի կողմէն Աստուծոյ բարութենէն բղխած անթիւ բարիքները, միւս կողմէն մարդկային անձնիշխանական ապստամբութեան չարաչար գոր-

ծաղրութեանէն բղխած չարիքները։ Նոյն այսպէս, աստուածային ամենաբարի կամքը միայն անսայթաք ուղեցոյց կ՚ընծայէ մարդկային բոլոր գործողութեանց։ Առաքինութիւնը և առաքինիները գոված ժամանակ՝ մարդոյ աստուածանմանութիւնը կը տեսնես, կըզգաս և կ՚ուրախանաս. իսկ մոլութիւնը և մոլիները պարսաւած ժամանակ՝ մարդոյ անասնական վիճակը կը տեսնես, կը հառաչես ու կ՚արտասուես։

Գրիգոր Լուսաւորչի վարդապետութեան հաստատուն խարիսխը Ս. Գիրքն է, համոզակեր և շարժիչ մասն՝ Աստուծոյ խնամոց և մարդասիրութեան կենդանի պատկերացուցումն, իսկ յորդորողն ու քաջալերողն՝ իւր հայրագորով սրտի ձայնն։ Միով բանիւ, ժողովուրդ մի քրիստոնէական ուսման մէջ կրթելու համար ինչ որ կարեւոր է; ամէնը լիովին կը տեսնուի առաքելանման Հայրապետի քարոզութեան մէջ, որոյ բովանդակութիւնը այսպէս կարող ենք համառօտել. —Սէր և խնամք Արարչին և պարգևաւորութիւնք արարածոյն։

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ.—Տրդատ թագաւորի արքունի քարտուղարն, ազգաւ հռովմայեցի, հռոմարէն և յունարէն դպրութեան հը-

մուտ (1), հրամանաւ Տրդատայ կը դրէ Հայոց քրիստոնէական դարձի պատմութիւնը, այնպիսի ընտիր կարգաւորութեամբ, որ յետագայ դարուց պատմիչք, ոչ միայն կը գտնեն, այլ և շատ տեղ Խորենացին իւր համառօտախօսութեան պակասորդը կը յորդարէ, որ ընթերցողք լրացնեն Ագաթանգեղոսէն, մանրապատում տեղեկութիւններ քաղելով: Ագաթանգեղոս գլխաւորապէս Ս. Գրիգորի և Տրդատայ կենաց, գործոց և բարեկարգութեանց վրայ կը խօսի, թէպէտ և իւր պատմութիւնն նոյն ժամանակ պատահած անցքերէն առաջ կըսկսի: Կը խօսի Հռիփսիմեանց և Գայիանեանց նահատակութեան վրայ, Տրդատայ հալածասիրութեան և քրիստոնէական հրաշալի դարձին վրայ: Կը նկարագրէ Հայաստանի քրիստոնէական լուսաւորութեան կամ վերակենդանութեան սրտառուչ պատկերը, այն է

(1) Ագաթանգեղոսի թէ՛ հայերէնը կայ և թէ յունարէնը, և այս պատճառաւ ոմանք կը պնդեն թէ՝ սկզբնագիրը յունարէն գրուած է և ապա թարգմանչաց ձեռքով Հայերէն թարգմանուած. իսկ այլք կը պնդեն թէ՝ Ագաթանգեղոս Հայոց արքունեաց մէջ հայերէն սովորելով հայերէն գրած է: Այս վերջին կարծիքը բաւականին հաւանական ցուցած և պաշտպանած է Հ. Գար. Զար. իւր յօրինած Հայերէն դպրութեան պատմութեան մէջ, հայերէն և յունարէն օրինակները իրարու հետ համեմատելով և սկզբնականութիւնը հայերէնին տալով:

ժողովրդի հոգեւոր յուզմունքը, գունդագունդ խռնումն 'ի լուր քարոզութեան Աւետարանի, վկայարանաց շինութեան համագործ. հրճուանքը, Հայրապետի ընտրութեան և ձեռնադրութեան համար եղած գումարումները, և մանաւանդ բիւրաւոր ժողովրդոց մկրտութեան սքանչելի տեսարանը Եփրատ գետին մէջ, Ս. Գրիգորի հագեպարար քարոզութիւնը և Էջմիածնի տաճարին շինութիւնը, և այլն, որոց վրայ արդէն իւր տեղը խօսած ենք:

Հայաստանի քրիստոնէական վերադարձի գեղեցիկ պատմութիւնը կարդացողը, Ագաթանգեղեան մատեանին մէջ, կըսքանչանայ աստուածային սքանչելեաց վրայ, կը խանդաղատի ժողովրդի քրիստոնէական եռանդագին յուզման և միահաղոյն վերածնելութեան վրայ, և կը յափշտակուի այն երախտագէտ խորհրդածութեամբ, որով Ոսկեբերան (1) յափշտակեցաւ մարգարէի գեղեցիկ խօսքը կրկնելով Հայոց հոգեւոր ծնընդեան համար. «Ո՞ ետես, ո՞ լուաւ, եթէ երկնեաց երկիր օր մի, և ծնաւ ազգ մի ողջոյն»:

ԶԵՆՈԲ ԳԼԱԿ — Ազգաւ ասորի, առաջնորդ

(1) Ոսկեբ. Ներբողեան առ Գրիգոր Լուսաւորիչ

և փոնահայր Տարօնոյ Իննակնեան կամ Սուրբ Կարապետի վանուց, ուր կարգուած էր Գրիգոր Լուսաւորչէն՝ Կեսարիայէն դառնալէն յետոյ։

Զենոբայ երկասիրութիւնը, որ Պատմութիւն Տարօնոյ կը կոչուի, կը պարունակէ իւր մէջ նախ քանի մի թղթեր և ապա Տարօնոյ գաւառին մէջ կատարուած քրմական պատերազմին և քրիստոնէական վերանորոգութեան պատմութիւնը, նամակի ձևով։

Առաջին թուղթն է Գրիգոր Լուսաւորչի գրածն առ Ղեւոնդիոս հայրապետ Կեսարիոյ, որով շնորհակալ կը լինի Անտոն և Կրօնիդէս կրօնաւորաց համար, և կը խնդրէ նոցա նման ուրիշներն ևս ուղարկել, մանաւանդ զՏիմոթէոս և Եղիազար, որք նշանաւոր էին սրբութեամբ վարուց։

Երկրորդն է Ղեւոնդիոսի պատասխանը, որով ուրախակից կը լինի Լուսաւորչին, Հայաստանի քրիստոնէական դարձի աստուածահրաշ հանդիսին համար և կը յայտնէ որ խնդրած կրօնաւորները ներկայ չեն, որ ուղարկէ, այլ գնացած են մին 'ի Հռովմ և միւսն յԵրուսաղէմ և անտի 'ի Բիւզանդիոն։

Երրորդն է Գրիգոր Լուսաւորչի թուղթն առ Տիմոթէոս և Եղիազար, որով կը յիշէ Հայաստանի հարիւր քսան գաւառաց կարօտութիւնը քահանայից և հովուաց, և կը

խոստանայ Նոցա տեսչութեանը յանձնել Մամիկոնեան երկիրը — Տարօն — եթէ հաճին գալ։

Իսկ երրորդն է խնդրագիր քանի մի ասորի կրօնաւորաց (Եպկտորի, Անաստասայ և այլոց) որոնք Բիւզանդիոնի մէջ լսելով Տարօնեցի անձներէ, որ Հայաստան՝ քրիստոնէական գեղեցիկ կերպարանափոխութեան հանդիսարան դարձած է, կը գրեն առ Լուսաւորիչ և կը թախանձեն, որ բոլոր անցքերու պատմութիւնը գրով իրենց հաղորդէ։ Այս առթիւ Ս. Գրիգոր կը հրամայէ Զենոբին կատարել յիշեալ կրօնաւորաց խնդիրը և Տարօնոյ պատմութիւնը գրով իրենց հաղորդել։

Այս նամականեաւ Պատմութեան առաջին պատճէնին մէջ կը յիշատակուի համառօտիւ, Գրիգորի և Տրդատայ ծննդեան դէպքերը, միոյն չարչարանքը և միւսոյն դարձը. Արձան և Դեմետրէ քրմապետ իշխանաց յարուցած պատերազմը և պարտութիւնն 'ի Քրիստոնէութենէ։ Իսկ երկրորդ պատճէնին մէջ պատմութիւնը կը շարունակուի և աւարտմամբ լրումն կ'առնու գիրքը։ Արտաքոյ պատմութեան խիստ հաւցաւիրական տեղեկութիւններ · կ'աւանդուին գրքի մէջ, մանաւանդ Տարօնոյ գաւառի գեղեցիկ, ջրաւէտ, օդազուարճ, խո-

տաքուղին և մեղրաքուղին դրից վրայ ։ Զենոբայ գրած պատմութեան մէջ կը յիշատակուին քանի մի անծանօթ պատմագիրներ (Մարդա կամ Մարդեձան և Պիսիդոն Թարգմանիչ), և տեղ տեղ կը յորդորէ Զենոբ իւր համառօտ անցածին պակասորդը լրացնել նոցա պատմութիւնները կարդալով ։ Արդէօ շարայարութիւն Զենոբայ պատմութեան, Յովհան Մամիկոնեան վեցերորդ դարուն մէջ շարունակած է Տարօնոյ պատմութիւնը, որուն վրայ իր ժամանակին պիտի խօսինք ։ Բայց որովհետեւ երկուսի գրաւոր ոճոյն մէջ համանմանութիւն կը նշմարուի, հաւանական կը կարծուի որ Զենոբ իւր պատմութիւնը ասորերէն գրած լինի (ըստ որում Ասորիք էին խնդրողները) և յետոյ շարայարիչն թարգմանած լինի ։ Զենոբայ և Ագաթանգեղոսի պատմութեան մէջ տեղ տեղ տարբերութիւն կը նշմարուի ինչ ինչ անցից նկատմամբ, և որոյ պատճառն այն է որ ի բարու գրուածք կարդացած չէն, և Զենոբ ինքն կ'ասէ, որ Ագաթանգեղոսէն առաջ գրած է ։

Գ.

Երկասիրութիւնք Մեծին Ներսիսի. Փաւստոսի Բիւզանդայ. Սահակայ Պարթեւի և Մեսրոպայ Մաշտոցի. Ներքին նկարագիր պարունակութեան իւրաքանչիւրոց.

ՆԵՐՍԷՍ ՊԱՐԹԵՒ. — Արդէն տեսանք որ Մեծն Ներսէս շարունակ զբաղած էր Հայաստանի բարեկարգութեամբ, և ազգային քաղաքական իշխանութեան տկարութեան պատճառաւ՝ ստիպուած էր երբեմն յունական և երբեմն պարսկական արքունեաց մէջ գեգերիլ. այս պատճառաւ գրաւոր երկասիրութեան կողմանէ իրեն ընծայուածները միայն քանի մի խրատներ են Կանոնագրաց մէջ և քանի մի աղօթքներ և այն ևս աւանդութեամբ։ Իսկ պատմագրութիւնք կը հաւատեն, որ Ներսիսի ամենամեծ և քաջըր երկասիրութիւնք եղած են ուսուցանել բանիւ և իւր կենաց օրինակով. վասն զի այսպէս կ'ասէ Բիւզանդ. «Նա առն ճշմարտութեան մինչեւ 'ի մահ մարտնչէր և զաջողակ արդարութեան քաջալերեալ խնդացուցանէր և իւրով վարդապետութեան անձրեւովն պարարէր.... ։ Ընդ ամենայն տեղիս սահմանացն Հայոց մեծաց, ընդ որ էր յառաջադոյն նորուն հարցն սերմանեալ զքարոզու-

թիւն Բանին կենաց, զնոյն և սա ուսուցեալ անձրեւումն ..... : Զ Թադէական Աթոռն միւսանգամ ելից .... զբոյսն աճեցոյց· մշակ հնձող եղեալ գործակից սերմանողաց· և բազմացոյց զպտղաբերս արդիւնս ՚ի շտեմարանս արքայութեան .... : Նախ ինքն առնելով առ իւր անձն բարի և ապա այլոց օրինակ բարեաց դնելով· առ հասարակ վարդապետական բանիւն զամենեցուն զփակեալ դրունս մտաց ՚ի բարին յորդորելով՝ բանայր զամենայն բարի : Ուսուցանէր ըզսէր, զյոյս, զհաւատ, զսրբութիւն, ըզքաղցրութիւն, զհեզութիւն, զանոխակալութիւն, զխնամ ունել դարմանոյ աղքատաց, և այլն և այլն »(1).

ՓԱՒՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ. — Բիւզանդայ գիրքը բաժնուած է չորս դպրութեան և կը կոչուի Բիւզանդարան : Պարունակած նիւթն է 29 տարուան Պատմութիւն, Խոսրով երկրորդի (որդւոյ Տրդատայ) ժամանակէն սկսեալ մինչեւ Խոսրով երրորդի Թագաւորութեան և Ասպուրակէսի կաթողիկոսութեան վերջը : Բիւզանդ գլխաւորապէս եկեղեցական՝ քան թէ քաղաքական իրողութեանց վրայ կը խօսի, և ուղղակի երրորդ դպրութենէն կը

(1) Բիւզանդ. Դպրութիւն Դ. Գլ. Ժ.

սկսի, գուցէ առաջին և երկրորդ դպրութիւնք համարելով իրմէն յառաջ եղած պատմագրաց գրածները, և կամ գուցէ ինքնին գրած է առաջին և երկրորդ դպրութիւնքը, բայց կորուսուած են։

Երրորդ Դպրութիւնը (որով կը սկսի Գիրքը) կը պարունակէ Գրիգոր Լուսաւորչի և իւր Որդւոց և Թոռանց Հայրապետութեան ժամանակի պատմութիւնը, մանրապատում և օրինաւոր կարգաւորութեամբ։ Չորրորդը (որ առաւել նշանաւոր մասն է) կը պարունակէ գլխաւորապէս Մեծին Ներսէսի պատմութիւնը, կենսագրական յատկութեամբ, Հայրենեաց և Եկեղեցւոյ շինութեան համար կատարած սխրագործ արարքները, մարդասիրական և աստուածսիրական յորդորները և նորա ժողովրդասէր և խնամոտ կենաց մանրանկար պատկերը, որոյ զննութիւնը ընթերցողի սիրտը կը գրաւէ։ Հինգերորդ Դպրութիւնը առաւել քաղաքական իրողութիւններ կը պարունակէ և ընդ նմին Մեծին Ներսէսի մահուան աղետաբեր դէպքը։ Իսկ վեցերորդը կը պարունակէ Հայոց Թագաւորութեան երկու բաժանումին (յունական բաժին և պարսկական) և քանի մի ժամանակակից եպիսկոպոսաց վարքագրութիւններ։

Բիւզանդայ երկասիրութիւնը շատ հե-

տաքննական դէպքեր կը պարունակէ իւր մէջ նախարարութեանց վրայ, ազգային սո–վորութեանց վարուց և աւանդութեան վը–րայ. որոց մանրազննին հետազօտութիւնք բաւականին լոյս կարող է տալ նոյն ժամա–նակեայ ժողովրդային կենաց վրայ: Սակայն Բիւզանդայ անձին և գրաւոր վաստակոց վրայ զանազան կարծիքներ կան. ոմանք զինքը Յոյն կը համարին և պատմութեան սկզբնա–գիրը յունարէն, և ապա հայերէն թարգ–մանուած. ոմանք Հայ կը համարին և իւր երկասիրութիւնը հայերէն յօրինուած. ո–մանք Յոյն կը համարին իւր անձը, բայց մի–անգամայն և հայագէտ և հայերէն աշխա–տասիրած. և այլն: Այսօրինակ կարծեաց լու–ծումն բանասիրութեան և ազգային պատ–մական գրագիտութեան առարկայ համարե–լով՝ անդէպ կը համարիմք հետազօտել այս տեղ:

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ.—Այս մեծանուն և մե–ծագործ անձի վրայ արդէն խօսած ենք, ո–րպէս հայրենասէր և ուսումնասէր հայրապե–տի վրայ, խօսինք այժմ որպէս եկեղեցական հոգեպատում մատենագրի վրայ: Ս. Սա–հակ, իւր գրաւորական աշխատանքը զահած է գլխաւորապէս այլ և այլ թարգմանութեանց և մանաւանդ թարգմանութեան Աստուա–

ծաշուն Գրոց, որ՚ի վեր է քան զամենայն մատենագրական երկասիրութիւն: Սակայն ունիմք նմանապէս Սահակայ քանի մի ինքնագիր գրուածքներ, այն է Կանոնք, մեծ գըլուխ բաժնուած, որ Ս. Աշտարշապատու ժողովէն զկնի գրուած է Հայաստանի զանազան առաջնորդական գաւառներ: Այս Կանոնաց մէջ ամենայն ուսուոր կերպով քացատրուած է եպիսկոպոսաց, քորեպիսկոպոսաց, քահանայից և վանականաց պարտքը առ ժողովուրդն և ժողովրդոց պարտքն առ Աստուած, առ եկեղեցին և առ իրեարս, աւանդուած են ուսումնասիրութեան և ողորմածութեան անհրաժեշտ պատուէրներ, և ընդ հակառակն սաստիկ յանդիմանուած է սուտ մեծատեցութիւնը, կաշառակերութիւնը և անգթութիւնը. բացատրուած է ժողովրդոց եկեղեցական նուիրապետութեան և երէխայրեաց հաստատութիւնն ՚ի Լուսաւորչէն, և ընդ նմին տաճարաց, վանուց և ինչ ինչ տօնից սկզբնաւորութիւնը և նշանակութիւնը, և այլն և այլն:

Հինգ Թուղթք, ուղղած Կ. Պօլսոյ Պրոկղ և Ատտիկոս պատրիարքաց, Փոքր Թէոդոս կայսեր, Ակակիոս եպիսկոպոսին և Անատոլիոս զօրավարին: Ազգային եկեղեցական գըրոց կարգաւորութեան համար եւս շատ աշխատած է Ս. Սահակ, և Օրհնութիւնք

ցուցակին մէջ մանաւանդ որպէս այս խօսքերը կը յիշուին. «Իսկ զխաղաղայօրհնեան Ս. Սահակայ գծեալ՝ յետ քսան և մի ամի աքքեպիսկոպոսութեան իւրոյ ՚ի Նաւասարդ ամսոյ, որ օր մի էր. և ՚ի ջահանայաբողն այլ յաւելլ եօթն աւետարան, նոյնպէս և զողջորհաբողն, ՚ի քաղաքս դաշտի (այն է ՚ի Վաղարշապատ) ՚ի վկայարանս Ս. Հռիփսիմեանց, յետ հարիւր և քսան և մի ամին Ս. Գրիգորի, զի մինչեւ ցայն վայր հնովն վարէին»(1). Ս. Սահակայ կ'ընծայուի նմանապէս Նուագ Շաբաթու մէջ երգուած շարականը, որ խոր հոգեբուղխ իմաստներով և աստուածային բանաստեղծութեան վսեմախոհ և եռանդուն դարձուածներով բովանդակ Շարակնոցի ընտիրն ալն կը կազմէ: Ասոն զի աստուածային անհուն մեծութեան և մարդասիրական անհուն խոնարհութեան սքանչելեօք կըզգածի մարդ, երբ խորհրդաւոր հայրապետին հետ կը դիտէ, որ Պարգեւատուն՝ պարգեւ կը խնդրուի, Կենսատուն՝ գերեզմանի մէջ կ'ամփոփուի, Անմահութեան Տէրողն՝ կը խոնարհի ՚ի հող մահու, Արժանն բնութեամբ՝ մահացելոյ մէջ կը ննջէ, բա-

(1) Յովհան իմաստասէր կը խօսի այս մասին և նմանապէս Ս. Սահակայ կ'ընծայէ գիշերային ժամակարգութեան շատ աղօթքները. բայց իւր մէջ բերած աղօթքները այժմ մաշտոցներէն կը պակսին.

վանդակ աշխարհի Ցնծութիւնը՝ կ'արտասուէ տկար արարածներէն, և այս սքանչելիքը կը կատարուի 'ի սէր մարդկային ազգի, որ ամէն կերպով մեղանչած է իւր Արարչի և Փրկչի դէմ։

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ.— Ինչպէս Ս. Սահակայ նոյնպէս և Մեսրոպայ վրայ արդէն խօսած ենք որպէս Հայաստանեայց դպրութեան և լուսաւորութեան Հօրց վրայ, որպէս Աստուածային Գրոց նախկին Թարգմանչաց վրայ, խօսինք այժմ Մեսրոպայ մասնաւոր ինքնագիր երկասիրութեանց վրայ։

Հաւանականօրէն Մեսրոպայ կ'ընծայուի մեր ազգային եկեղեցական Ժամարանին ակրգբնաւորական կազմաւորութիւնը, այլ և այլ ինքնագիր և կամ թարգմանական յօրինուածով, որ և Մաշտոց անուն կը կրէ. թէպէտ և վերջին դարերուն մէջ փոփոխութիւն կրած է և մանաւանդ 8դ. դարուն մէջ Մաշտոց կաթողիկոսին օրով, որուն վրայ 'ի ժամանակին պիտի խօսինք։ Մեսրոպայ կ'ընծայուին նմանապէս քանի մի աղօթքներ և Մեծի Պահոց Ապաշխարաբեան կարգի շարականները։ Այս շարականները, չընայելով իմաստից միակերպութեանը, քրիստոնէական բարեպաշտութեան ամենագեղեցիկ և բնական աղերսանք են։ Երիտասնեայ մի, որ

քովէն կ՚ըղձայ մարդկային յանցանքներն ու աստուածային գթութիւնը, աշխարհային փորձանաց վտանգներն ու երկնային խնամակալ օգնութիւնը. մարդկային հոգեւոր և մարմնաւոր ախտերն ու աստուածային խնամոտ և բժշկարար զօրութիւնը, մարդկային քարասրտութիւնն ու աստուածային անհուն սէրը, մարդկային մոլորութիւնն ու աստուածային ամենագիտութիւնը և ճըշմարտութիւնը, երբ կ՚ըղձայ իւր հեռաւորութիւնը և կը փափաքի մօտենալ և միանալ Աստուծոյ հետ, ի՞նչ կարօղ է խնդրել, եթէ ոչ գթութիւն, թողութիւն, օգնութիւն, բժշկութիւն, արտասուք, փրկութիւն և միութիւն Աստուծոյ հետ: Այս արտաշունչ զգացմունքներով զեղուն են Սաղմոսարանին շարականները, որոնք աստուածասէր սրտի խորոց կենդանի և շարժուն պատկերը կը ներկայացնեն, որ երբեմն կրից ալիքներէն կը յուզի, կը սասանի և կը հառաչէ առ Աստուած — Էր անձին խնդ տաղտէն. երբեմն կը սխալի, կը մոլորի և դառնալու բաղձանքով կը գոչէ — Դարձո՛ զիս. երբեմն իւր զառանցանքները ճանաչելով և Աստուծոյ բարութենէն պատկառելով՝ կը խոնարհի և կ՚աղաղակէ. — Մեղայ, Տէ՛ր, մեղայ. երբեմն զգալով, որ առանց Աստուծոյ՝ միշտ կը տագնապի, կ՚անկանի և կը գայթակղի, եռանդա-

գին կ'աղերսէ և կը պաղատէ — Մի՛ թողուր զիս, Աստուած իմ, զի՛ չկանեմ. և երբեմն աշխարհի չարիքներն ու աղէտները տեսնելով՝ բոլոր մարդկութեան համար կը հայցէ և կը թախանձէ — Աշխարհին ողորմեա՛, Աստուա՛ծ։

Դ.

Երկասիրութիւնք Եզնիկ Կողբացւոյ. Կորիւնի և Դաւթի Անյաղթի. — Նոցին նկարագիր պատուականութեան թարգմանչաց.

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ. — Եզնիկի վրայ արդէն խօսած ենք որպէս Սահակայ և Մեսրոպայ երիցագոյն աշակերտի վրայ, որ Յովսէփ պաղնացւոյն հետ Եդեսիա ուղեւորեցաւ ասորական գրքեր թարգմանելու և կամ հայագիր օրինակելու նպատակաւ, և անտի անցաւ Բիւզանդիոն, ուր իւր ուսմունքը կատարելագործելէն զկնի՝ դարձաւ ի Հայաստան և գործակից եղաւ Ս. Սահակին, Ս. Գրոց և այլ թարգմանական աշխատութեանց մէջ. խօսինք այժմ նորա ինքնագիր երկասիրութեան վրայ։ Եզնիկ, որ եպիսկոպոսական աստիճանի ևս հասաւ և Բագրեւանդայ վիճակին հովիւ կարգեցաւ և որ Ս. Յովսէփայ կաթողիկոսութեան ժա-

մանաւանդ գումարուած Աշտիշատի ժողովին եւս Ներկայ գտնուեցաւ. և ինքն հմուտ էր Հայ, յոյն, պարսիկ և ասորի լեզուաց, թողած է ամենագեղեցիկ ինքնագիր երկասիրութիւն մը. Եղծ Աղանդոց անունով, որ իւր բազմակողմանի պարունակութեամբ արժանի է խորին մտադրութեան.

Եզնիկի երկասիրութիւնը չորս Գիրք կը բաժանուի — Եղծ աղանդոց հեթանոսաց. Եղծ աղանդ Պարսից. Եղծ կրօնից Յունաց իմաստնոց և Եղծ աղանդոց Մարկիոնի: Եթէ պատմաբանական յաջողութիւնը դիմադրող թշնամւոյ զօրութեամբ կը կշռուի, քննադատի յաջողութի և հմտութիւնն եւս իւր քննութեան առած առարկայէն կը չափուի: Եթէ այս համեմատութեամբ նկատենք Եզնիկի եղծմանց հերքման նիւթերը, կը տեսնենք որ խիստ բազմաթիւ են և դժուարամատոյց — հեթանոսութիւնը իւր բազմաստուած ձևովը, պարսկական քէշը կամ կրօնքը իւր հնադարեան տարբերքով, յունական իմաստասիրութեան կրօնքը իւր հետաքրքիր և բազմախնդիր վարդապետութեամբ և Մարկիոնեան աղանդը իւր հրապուրիչ և գայթակղեցուցիչ երեւութով: Սակայն Եզնիկ ամենայն վստահութեամբ և յաջողութեամբ քննութեան և եղծման եղած է այս տարբերացած կրօնական գրութեանց դէմ և իւր վստահութիւնը

իւր բազմակողմանի հմտութեանց մէջ է, որոնք ակներեւ կը տեսնուին իւր երկասիրութենէն։

Եզնիկի երկասիրութեան մէջ կը տեսնուի Աստուածաբանական խորին եւ մեկին հմտութիւն, որով ողջամտօրէն կը խօսի Աստուծոյ գոյութեան վրայ, նորա կատարելութեանց կամ ստորոգելեաց վրայ, կը բացատրէ մանաւանդ Աստուծոյ կանխագիտութիւնը խիստ լուսաւոր տեսութեամբ եւ երկիւղած զգացմունքով եւ կը ջրէ այն հեթանոսամիտ եւ մոլար կարծիքները, որով ոմանք տգիտաբար Աստուծոյ ամենաբարութիւնը կը թշնամանեն եւ մարդկային անձնիշխանութեան չարաչար գործածութենէն հետեւած չարիքները, աղէտները եւ պատահարները՝ Աստուծմէ նախասահմանուած կը կարծեն։

Եզնիկի երկասիրութեան մէջ կը նշմարուի Բնագիտական եւ Բնապատմական հմտութիւն, որով կը ճառէ տարերաց եւ օդերեւութից վրայ, եղանակաց վրայ, բուսոց եւ կենդանեաց յատկութեանց վրայ եւ սքանչելի կերպով կը բացատրէ՝ թէ ինչպէս հակառակատարր բնութեան մէջ կը թագաւորէ միանգամայն եւ զարմանալի կարգաւորութիւն ու անխռով դաշնակաւորութիւն, որ ամենաբարի Արարչապետի ամենակարողութեան

և նախախնամութեան գործն է ։

Անգլիկի երկասիրութեան մէջ կը նշմարուի Աստղային հմտութիւն, թէպէտ և քանի մի սխալներով, որ առաւել իւր ժամանակի սըխալանքը կը համարուին, քան թէ իւր սեպհականը ։ Ժամանակակից գրութեան նայելով՝ Անգլիկ շարժումն արեգական տուած է և ոչ երկրին, և այս զարմանալի չէ, վասն զի մենք գիտենք, որ Անգլիկէն յետոյ շատ դարեր հոլոված էին, երբ ուսողական գիտութիւնը պարզեց ինչպէս երկրի շրջանառութիւնը, նոյնպէս և այլ տիեզերախօսական ճշմարտութիւններ ։

Անգլիկի երկասիրութեան մէջ կը տեսնուի Աստուածաբանական հմտութիւն, որով Յունաց իմաստնոց — Պիւթագորեանց, Պղատոնեանց, Ստոյիկեանց և Էպիկուրեանց — վարդապետութիւնները համառօտիւ մէջ բերելով՝ նոցա ուղիղ կամ թիւր տեսութիւնքը կը զանազանէ, կը գովէ նոցա ջանքը՝ բնական լուսով զԱստուած որոնելու համար և կը պարսաւէ բազմաստուածեան մոլորութիւնը ։ «Ի խնդրելն փիլիսոփայից (կ'ասէ) զԱստուած 'ի բնական օրինաց, որ 'ի միտսն անկեալ է, գովութեան արժանի է, բայց 'ի բազում աստուածսն անկանել և զաշխարհս նման մըրջիւնշենաւորակից դնել, անհնարին ամբարըշտութիւն է» ։ և թէ՝ «Զկամսն Պղատոնի

տիրեմ վասն զԱստուածն խնդրելոյ և զամբաստանութիւնն ոչ գովեմ»(1)։

Եզնիկի երկասիրութեան մէջ կը տեսնուի կրօնափիլիսոփայական հմտութիւն, ոչ միայն քրիստոնէական, այլ և հեթանոսական բազմաստուածեան կրօնից նկատմամբ, մանաւանդ պարսկական Պէշլին, որոյ վրայ տուած լիակատար և մանրապատում ծանօթութիւնքն այժմեան Եւրոպական հետաքննին աշխարհին անգամ(2) նոր լոյս կուտան պարսկական հին կրօնի վրայ։

Եզնիկի երկասիրութեան մէջ կը տեսնուի Հնախօսական հմտութիւն, որով կը խօսի ազգային աւանդելոց վրայ (յարալէզի, վիշապազանց, ծովային նհանգաց, ծովացուլի, պայի և բնական ազդեցութեան նկատմամբ եղած գուշակութեանց), այլ և պարսկական կրօնի տարարողութեանց և աւանդելոց վրայ, Զրուանի և Մոգական կրօնից վրայ, Նախնի Յունաց, Հերակլեան արձանաց և գրուածոց վրայ, Հեսիոդի, Հոմերոսի և Պղատոնի վրայ, և այլն։

Եզնիկի երկասիրութեան մէջ կը տեսնուի Բժշկական հմտութիւն անգամ (որ խիստ կարեւոր է ժողովրդական հովուի համար,)

(1) Եզնիկ. Գիրք Դ. յօդ. Զ. ժէ։

(2) Եզնիկ թարգմանուած է Գաղղիերէն և մասամբ Անգղիերէն և Ռուսերէն։

որով՝ կը բացատրէ քանի մի կենդանեաց և բուսոց յատկութիւնները, այսահարութեան կամ ըկանաց և այլ հիւանդութեանց բնական պատճառները և կը զգուշացնէ զանազան սնոտակարութիւններէ ։

Նոյնպէս Եզնիկ իւր բովանդակ քննաբանութեան մէջ՝ մոլորութիւնները և նախապաշարումները եղծելու համար՝ ձեռք առած է երկու ամենամեծ զէնք — Ս. Գիրք և արտաքին հմտութիւնք . — վասն զի ինքն Եկեղեցւոյ կողմէն զինուած է և նոյնօրինակ զինուորութիւն ճշմարտութեան համար՝ Եկեղեցւոյ գործ և պաշտօն կը խոստովանի. «Ինչ արդ՝ Եկեղեցւոյ Աստուծոյ գործ այն է, զարտաքինսն իւրով ճշմարտութեամբ առանց գրոց յանդիմանել և զկարծեցեալսն ներքինս և ոչ ճշմարտեալս Գրովք Սրբովք յանդիմանել» (1).

Ինչպէս ամեն շահաւէտ և ժամանակին պատշաճ հեղինակութիւնք, նոյնպէս և Եզնիկի երկասիրութիւնը ազդուած և գրուած է ժամանակի ոգիէն և ժողովրդի ներքին վէրքերէն . վասն զի Եզնիկ որպէս զգուշացուցիչ և արթուն հովիւ գրած է իւր երկասիրութիւնը (քանի՛ պատիկ ընդարձակութեամբ արդեօք նոյնը և բանիւ քարոզած չէ)

(1) Եզնիկ, Ա. Գիրք. յօդ. ԻԸ.

այն ժամանակ, երբ մի կողմէն սկսած էր մեր Ազգը ծանօթանալ յունական մատենագրութեան հետ, և երկիւղ կար, որ մի՛ գուցէ քրիստոնէական վարդապետութեան տեղ՝ յունական մատենագրութեան հին դասական ոգին ընդունէ և լուսոյ փափաքով ծուխ գրկախառնէ. ինչպէս կը պատահի երբեմն նոր արթնցած ժողովրդներուն, որ յառաջադէմ ազգի մի նմանելու եռանդով, շատ անգամ, առանց ընտրութեան, խարխափելով առաքինութիւնները կը թողուն և մոլութիւնները կը գրկեն. միւս կողմէն Պարսկաստան սկսած էր ազդել Հայաստանի վըրայ, և արքայից արքաները հետամուտ էին իրենց դէնին դարձնել հպատակ ազգերը, ընդ որս և մեր Ազգը. և երրորդ կողմէն Մարկիոնի աղանդը օր աւուր կը յուզէր միտքերը և կը տարածուէր քրիստոնէից շատերուն մէջ։ Նոյն ժամանակ, արդարեւ, աւետարանական փրկարար լոյսը տարածուած էր Հայաստանի մէջ, բայց հեթանոսական կրօնի ներքին նախապաշարումները, հմայութեանց և կախարդութեանց հաւատընծայութիւնները և մանաւանդ ճակատագրի և բախտի խորհրդաւոր տպաւորութիւնները տեղ տեղ տակաւին կը ճարակէին։

Եզնիկ իւր կորովի աչքերով տեսնելով այս արտաքին և ներքին վտանգները, և զգալով՝

թէ հեթանոսական նախապաշարումները որ-չափ անարգանք են աստուածային բարու-թեան և նախախնամութեան և միանգամայն նուաստացուցիչ քրիստոնէական ոգւոյ, ու-տի և գրած է իւր անմահ երկասիրութիւնը։

Սակայն որչափ պիտի զարմանար և ար-տասուէր Եզնիկ, եթէ յառնէր և տեսնէր, որ իւր ժողովուրդը, 18 դարեան քրիստո-նէութենէն զկնի, այսօր շատ տեղ բաղդի և ճակատագրի կը հաւատայ, շատ տեղ ան-մխիթար կը յուսահատի, որպէս թէ ինքն չար աստղի տակ ծնուած է և իւր ճակտին աղէտք և տառապանք գրուած են, շատ տեղ հմայական պատրանքներով իւր յաջո-ղութիւնը և ձախորդութիւնը կը կշռէ, և կ՚ամաչենք ասել, շատ տեղ անմիաբանու-թիւնը և հետեւապէս տկարութիւնը Հայու դատապարտութիւն կը խոստովանի, իսկ հա-տակոտոր քարոզիչներէն շատերն ևս, փո-խանակ նոյն օրինակ նախապաշարմանց դէմ զինելու և աստուածային բարութեամբ ըս-փոփելու, լոկ դժոխային սպառնալիքներով կը սարսափեցնեն։

Բաց ՚ի Եղծ աղանդոց գրքէն, Եզնիկին կ՚ըն-ծայուին նմանապէս և ընտիր Խրատք զանա-զան կարգի անձանց և մանաւանդ կրօնաւո-րաց և առաջնորդաց համար գրուած։ Բայց ոմանք նոյն Խրատները Ս. Նեղոսին կ՚ընծայեն

և Եղնիկ միայն Թարգմանիչ կը համարեն-ինչ ինչ յաւելմամբ ։

ԿՈՐԻՒՆ. — Առաջին Թարգմանչաց դասէն է, որ Բիւզանդիոնի մէջ ուսումն լրացնելէն յետոյ՝ Բնձակայ հետ Երուսաղէմ գնաց և այն տեղէն Կիւրղի Երուսաղէմացւոյ Ապախարող. արջակէլը — կարգը Հայաստան բերաւ ։ Կորիւն ուղեկից գտնուեցաւ Մեսրոպայ ուսումնասիրական և վարդապետական ճանապարհորդութեանց և Սահակ հայրապետէն ձեռնադրուեցաւ եպիսկոպոս Վրաց ։ Թարգմանական վաստակէն 'ի զատ Կորիւն գրած է Մեսրոպայ Պատմութիւնը, Յովսէփ Կաթողիկոսի և իւր միւս ընկերաց խնդրանօք, վասն զի ինքն միշտ ականատես էր իւր վարդապետի առաքելական վաստակներուն, որոյ համար և կ'ասէ. «Ոչ եթէ 'ի հին համբաւոց տեղեկացեալ, այլ որոց մեր իսկ ականատես եղեալ կերպարանացն և առ ընթերակաց հոգևոր գործոցն և լուռ շնորհապատում վարդապետութեանն և նոցին (Սահակայ և Մեսրոպայ) արքանեակք ըստ աւետարանական հրամանացն» ։ Կորիւնի երկասիրութեան մէջ Թէպէտ և կը պակսի Մեսրոպայ կենսագրութեան այն մասը, որ անցուցած է Հայաստանի արքունեաց մէջ, սակայն վարդապետական ընթացից վրայ այն-

պիտի ստուգապատում տեղեկութիւններ կ'աւանդուէին, որ վարդապետական կոչման և պարտաւորութեան վրայ գաղափար ունենալու համար՝ բաւական է միայն Կորիւնի երկասիրութեան մէջ Մեսրոպայ կեանքը կարդալ, որ այս նշանաբանը կը պատկերացնէ մեզ. — Սիրել ժողովուրդը, ապրել ժողովրդի մէջ, դաստիարակել ու լուսաւորել ժողովուրդը և տգիտութիւնըն ու խաւարը հալածել, որոնք ժողովրդի ամենավտանգաւոր թշնամիներն են.

ԴԱՒԻԹ ԱՆՅԱՂԹ. — Տարօնոյ Հարք գաւառի Հերեթ կամ Հերիան գիւղէն, կամ ըստ այլոց Ներգին աւանէն, և ըստ ոմանց Ներգինացի, Մովսէս Խորենացւոյ քեռորդին, կրտսեր Թարգմանչաց դասէն, որ իւր իմաստասիրական և աստուածաբանական հմտութեան և բնաւորութեան համար կը կոչուի Իմաստասէր, Անյաղթ, Փիլիսոփայ, Նախամեծ Փիլիսոփայ, Աստուածաբան, որ Յունաստանի մէջ իւր հայկական տաղանդը ճանչցնելէն և փայլեցնելէն զկնի դարձաւ Հայաստան, հայրենեաց դառն վիճակը տեսաւ և աղօթքը արտասուաց հետ խառնելով և հանճարը գրոց՝ մեռաւ և թաղուեցաւ Տարօնոյ Ղազարու վանքին մէջ, որոյ գերեզմանը կը դիմեն տակաւին իմաստասիրութեան և ճարտարախօսութեան ձիրք խնդրողները մեծ փափաքով.

Դուրին երկասիրած է ինքնագիր եւ թարգմանեալ գրուածքներ։ Ինքնագիր երկասիրութեան մէջ նշանաւոր է Խաչէ Նշխողը, որ գրած է Պիւտ կաթողիկոսի խնդրանօք, ինչպէս նոյն կաթողիկոսի նամակը և ճառէ յառաջաբանը կը ցուցնեն, Թէպէտ և ոմանք կ'ասեն թէ՝ Աթենքի մէջ Խաչի նշանին առջեւ խօսած է սեան կամ աշտարակի վերեւէն, որպէս աւարտական ցոյց իւր եօթնամեայ ուսումնառութեան. ոմանք կ'ասեն թէ՝ Աթենքէն Բիւզանդիոն դարձած ժամանակ Խաչի Վերացման տօնին խօսած է իւր ընկերաց խնդրանօք, և ոմանք թէ՝ Երուսաղէմ Ս. Խաչին առջեւ խօսած է։

Յիշեալ Ներբողին մէջ գեղեցիկ պերճախօսութեամբ կը գրուատի Խաչը որպէս լոյսն հին Կտակարանին մէջ պատուած բոլոր օրինակաց, այն է որպէս տունկ, որոյ պտղովն ամենայն տիեզերք լցան, որպէս կենսաբեր ծառ Եդենայ. 'ի կենդանութիւն մահացելոց, որպէս ցուպ և գաւազան մխիթարութեան, որպէս տապան և լաստ ապրեցուցիչ 'ի ծփական ալեաց աշխարհի, որպէս ծառ Սաբեկայ, յորմէ կախեալ զոհիւն փրկեցան ծնունդք Ադամայ՝ որպէս սանդուխք վերելութեան յերկինս, որպէս գաւազան, որով վիմացեալ սիրտք հոսանուտ գործին և պատառին ծովք մեղաց, որպէս

ուն՝ կրող անտանելի լուծոյն և հրոյն, և այլ-լքն և այլն։ Բայց յայտնանէ կը բացատրուի նոյն ներբողին մէջ թէ ի՛նչ զգացմունքներ պարտին ունենալ քրիստոնեայք Խաչի նշա-նին առջեւ. — «Հոգւոյս ակամբ իբր աչօք մարմնոյ յայտնապէս նկատելով՝ հաւատացի իբր թէ այժմիկ իսկ Միածինն Հօր բազկա-տարած ՚ի սմա բեւեռեալ տեսանէի. և տա-կաւին իբր թէ ցնցուղ փրկական աղբեր սուրբ արեանն ՚ի կենարար տնօրինեցելոյն կողէ այժմիկ իսկ առաջի աչաց մերոց կայ-լակացեալ հրաշիւք յաներեւոյթս զբանաւոր երկիրս առոգելով փրկագործէ . . . Քան-զի ուր խաչ՝ անդ և խաչեցեալն, և ուր խա-չեցեալն՝ անդ և խաչելութիւնն . . . առե-լով խաչ՝ ասա իմացի Գողգոթա և ասանէն խաչելութիւնն, ասա զենումն և ՚ի սմին փրկագործութիւն . . . որ և երկնայնոցն առա-տանօր յայտնապէս ցուցեալ թարգմանեցի աստուածութին յերկրի և մարդիկ յերկինս»։

Խաչի ներբողէն զատ՝ Գուշթի միւս եր-կասիրութիւնքն առաւել գիտական են և ի-մաստասիրական, ուստի և եկեղեցական պատմութեան հետաքրքրութենէն արտա-քոյ, ինչպէս են — Պարծառ շաղագս քերականութեան. Սահմանաց Գիրք կամ՝ սահմանք իմաստասիրութեան, որ գրուած է Պիւռոնի յոյն փիլիսոփայի վարդապետութեան դէմ, որ ամեն բանի

վրայ տարակուսիլը կամ վարանիլը իմաստութիւն համարած էր և ստացած էր շատ հետեւողներ։ Սահմանաց գրքի յունարէն գտնուելու պատճառաւ՝ ոմանք կը կարծեն թէ Դաւիթ նախ յունարէն գրած է և ապա հայերէն թարգմանած, ոմանք զԴաւիթ միայն թարգմանիչ կը համարեն և ոչ հեղինակ, որովհետեւ նոյն գրքին վերջին գլուխը Գրիգոր Նիւսացու գործոց մէջ կը տեսնեն և ոմանք սկզբնագիրը Դաւթայ կուտան և թարգմանութիւնը Եր դարու գործ կը համարեն։ Ներածութիւն Պորփիւրի, Ստորոգութիւնք Արիստոտելի, Արիստոտելի յաղագս Մեկնութեան (Պերիարմենիաս), Մեկնութիւն Դաւթի ի վերլուծականն Արիստոտելի, Արիստոտելի Թուղթ առ Աղեքսանդրոս Թագաւոր յաղագս աշխարհի և յաղագս առաքինութեանց։ Այս ամենը թարգմանութիւնք են ինչ ինչ մեկնութեամբ, որոց մէջ կ'երեւի Դաւթի յունական իմաստասիրութեան հմտութիւնը, բայց դժբաղդաբար շատ տեղ խապառ անհասկանալի են, վասն զի առաւել հելլենաբանութեան՝ քան թէ հայաբանութեան տիպ կը կրեն, նորաստեղծ բառերով և դարձուածներով։

Է.

Երկասիրութիւնք Գիւտայ. Յովհաննու Մանդակունւոյ, Մովսիսի Խորենացւոյ և Մամբրէի Վերծանողի — Ներքին յատկական նկարագիր պարունակութեան իւրաքանչիւրոց։

Գիւտ. — կրտսեր Թարգմանչաց դասէն, Տայոց գաւառի, Արահեզայ գիւղէն, որ կաթողիկոսութեան աստիճանի ևս հասաւ, սակայն կաթողիկոսութեան վրայ երրորդ Շրջանին մէջ կը խօսինք, իսկ այժմ միայն իւր գրաւոր մնացորդքը նկատենք։

Գիւտ մատենագրութիւն ունեցած է Ժամագրոց և հասարակաց աղօթից կարգադրութեան մէջ. վասն զի նոյն գրոց խորագրին մէջ իւր անունը դրոշմուած է։ Ունի Թուղթ մի առ Դաւիթ անյաղթ Խաչի Նշխարը խնդրելու համար (ինչպէս վերը յայտնեցինք) որոյ ստորագրութիւնը այսպէս կը վերջանայ. —«Գիւտ գագաշեալ և գերեզման 'ի դարշապար և մահու մերձաւոր, դրուատ հայցեմ, Հայոց հօտի հովուապետ և վերադիտող տանն Արշակունեաց»։ Ունի դարձեալ Թուղթ մի քրիստոնէական զգացմամբ և պերճախօսութեամբ գեղուն, որ գրած է Աղուանից Վաչէ Թագաւորին, երբ նա առաւելլու համարած էր իւր Թագը և մա-

գութեան կրօնքը զոհել, քան թէ ուրացութեամբ թագաւորել։

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ.— Արշարունեաց Ծախնոտ գաւառէն, Սահակայ և Մեսրոպայ աշակերտներէն, որ եօթանասուն հինգ տարուան հասակին մէջ Վահան Մամիկոնեանի և ազգի թախանձանքով կաթողիկոսական աթոռը նստաւ, որոյ հայրապետական գործոց վրայ խօսիլն երրորդ Շրջանին թողլով՝ այժմ միայն կը խօսինք իւր գրաւոր երկասիրութեան վրայ։

Մաշտոցի կարգաւորութեան մէջ Յովհան Մանդակունին կ'ընծայուին — Մկրտութեան կանոնը, խաչ օրհնելու, պսակի, եկեղեցւոյ հիմնարկէից օրհնութիւնը, տաճարի սրբութիւնն և աւազանի օրհնութիւն պատարագամատոյցին մէջ — զանազան քարոզներ և աղօթքներ և Ս. Աթանասի կոչուած պատարագամատոյցը. Ժամագրոց մէջ — գիշերային ժամու Զարթուցեալք և Զմէն գոհանամք հոգեւորական աղօթքները և Ճաշու ժամու երեք քարոզներն և աղօթքները։

Ղազար Փարպեցին իւր պատմութեան մէջ աւանդած է Յովհան Մանդակունիի մի Ատենաբանութիւնը, զոր խօսած է Դունայ եկեղեցւոյն մէջ մեծագումար բազմութեան առջեւ Վահան Մամիկոնեանի մարզպա-

նական իշխանութիւն սահմանալու ուրախա-
կան հանդիսին առթիւ ։ Ծերունի հայրա-
պետը այս ատենաբանութեան մէջ երբեմն
կըզմայլի և կըհիանայ Աստուծոյ և իւր եկե-
ղեցւոյ սքանչելեաց վրայ՝ հրաւիրելով ըղ-
բաղմութիւնն յօրհնութիւն . « Յեկեղեցիս
օրհնեցէք զԱստուած և զՏէր յաղբերացն
Իսրայէլի ։ Ահա՛ սիրեցէք զեկեղեցիս և սի-
րեցայք յեկեղեցւոյ, զԹագաւորս քաղցրա-
ցոյց եկեղեցի, զզաւակս ընտրելացոյց, ըղ-
դայլս դառինս արար, զձեզ պայծառացոյց,
զԹշնամիս ճշմարտութեան ամաչեցոյց »։ Եւ
երբեմն բազկատարած կ՚աղաղակէ, որ հայ-
րենեաց երկարատեւ անտէրութենէն և
պարսկական հալածանքէն յետոյ՝ Հայ մարզ-
պան կը տեսնէ Հայաստանի վրայ, կ՚աղա-
ղակէ գոհութեամբ . « Օրհնեալ տէր Աստ-
ուած Իսրայէլի, որ ետ ինձ տեսանել զոր-
դիս եկեղեցւոյս, որ ինձ հաւատացաւ, պա-
տուով չքեղութեամբ պայծառացեալ ՚ի
Քրիստոսէ »։ Եւ այս աղաղակը արձագանգ
կըտայ ունկնդրաց սրտին մէջ, որոնք ատե-
նախօսութենէն զկնի՝ խնդութիւն և արտա-
սուք իրար խառնելով կ՚ողջագուրեն զՄա-
հան և կ՚ուխտեն ՚ի սէր և ՚ի միաբանական
աշխատութիւն ։

Բաց ՚ի վերոգրեալ գրաւոր մնացորդնե-
րէն, Յովհան Մանդակունին երկասիրած է

Նոյնպէս աղօթք, կանոնք, խրատք և քսանու-թի չափ խրատական և վարդապետական ճառք կամ քարոզք զանազան նիւթոց վրայ, այն է խոստովանութեան, աղքատաց մխիթարութեան, սիրոյ, քահանայի տեսչութեն, չկոտի տեսարանաց կամ խաղուց, գիւթական հմայից, ոխակալութեան, արբեցութեան և այլ ահռելի մոլութեանց, և այլն և այլն։ Թէպէտ և ինչ ինչ ձեռագրաց մէջ այս ճառերէն մի քանիսն Եփրեմի և Աղեքսանդրի անունը կը կրեն, բայց որովհետեւ նոցա գրուածոց գործոց մէջ չեն գտնուիր. ուստի և Յովհաննու կ'ընծայուին։

Այս ճառերու պարունակութենէն պարզապէս կը տեսնուի որ միայն գրով գրուած չեն, այլ և կենդանի բարբառով խօսուած են 'ի լուր ժողովրդեան։ Վասն զի մի կողմէն կը տեսնուի սաստիկ յուզմունք, սոսկումն, դողումն և զայրոյթ ժողովրդի մէջ գտնըւած մոլութեանց դէմ, իսկ միւս կողմէն հայրական յորդոր և հրաւէր 'ի դարձ և յառաքինութիւն։ Մէկ կողմէն հօտի անօրէնութիւնքը և միւս կողմէն հովուական պարտաւորութեան և պատասխանատուութեան լիովին զգացումն ծանրացած կ'երևին առաքինի հովուին վրայ. որ կը հեծէ, կըզարհուրի, արտասուք կը խնդրէ իր գլուխը լալու և բազմիցս կը պատկառի և կը կարկամի

մոլութեանց զաղղութիւնները թուել։ Նոյնպէս խօսած են ամեն ընտիր հովիւներ, որոնք կորովի աչքերով թափանցած են ժողովրդի շարժմանց և գործոց խորքը, և պարտք համարած են սրբել և մաքրել Աստուծոյ սեպհական հօտը ամեն աղտեղութենէ և մարդը իր աստուածային պատկերով տեսնել

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ. — Տարօնոյ Խորնի կամ Խորօնք գիւղէն, կրտսեր թարգմանչաց դասէն, Սահակայ եւ Մեսրոպայ հրամանաւ ճանապարհորդեց 'ի Միւնիս, յԵդեսիա, 'ի Բիւզանդիոն, յԱնտիոք, յԱթէնս, 'ի Հռոմ, 'ի Պաղեստին, յԱղէքսանդրիա, և իւր հայկական հանճարը ճոխացոյց պատմագրական և բանասիրական հմտութեամբ, որով և իրաւամբ Հայր հայ պատմագրաց անուանեցաւ իւր ժամանակակիցներէն և յետագաներէն։ Երբոր վերադարձաւ Մովսէս իւր ուսումնասիրական ճանապարհորդութենէն, վախճանած գտաւ իւր երանելի վարդապետները Սահակ և Մեսրոպ և Թագաւորն Վռամշապուհ և Հայ հայրենիքը քաղաքական աղէտներու մատնուած, ուստի և ընկալուչ խնամակալութիւն մի չըտեսնելով իշխանաց և մեծամեծաց կողմէն՝ իւր անձը տխուր և վշտակիր առանձնութեան տուաւ, արտասուելով

հայրենեաց և եկեղեցւոյ բազմաշէտ վիճակը
Թէպէտ և կ'աւանդուի, որ երկար տարիներէն յետոյ Մովսէս անակնկալ կերպով յայտնուեցաւ, որպէս աղքատիկ մուրացկան, իւր աշակերտակից Գիւտ կաթողիկոսէն սիրալիր ընդունելութիւն գտաւ և Տղնիկի մահուանէն յետոյ Բագրեւանդայ և Աշարունեաց գաւառներուն վրայ եպիսկոպոս կարգուեցաւ. բայց Ղազար Փարպեցւոյ առ Վահան Մամիկոնեան գրած Թղթէն յայտնապէս կ'երեւի, որ Մովսէս ոչ միայն 'ի կենդանութեան շարունակ տառապանաց մէջ անցուցած է իւր կեանքն, այլ և յետ մահուան՝ ուսումնատեաց և տարամոլ եկեղեցականք ոսկերքը գերեզմանէն հանելով ջուրը Թափած են. այսպէս անարգաբար հալածելով այն անզուգական անձը, որ Հայոց ազգի անունը անմահացուցած է աշխարհի վրայ:

Մովսէս նուիրած է իւր գրիչը Թարգմանական աշխատութեանց, վասն զի զինքն կ'անուանէ, “Այր ծեր և անպարապ 'ի Թարգմանութեանցդ. բայց յականէ յանուանէ որոշուած չեն իւր Թարգմանական աշխատութիւնքը ինչպէս և այլոցը: Ուստի և մենք համառօտիւ կը խօսինք միայն Մովսէսի ինքնագիր երկասիրութեան վրայ:

Մովսէսի ինքնագիր երկասիրութեանց

մէջ գլխաւորն և միանգամայն Եւրոպական գիտնոց գովեստից արժանացածն է Նորա Պատմութիւնն (1), որ գրած է Սահակ Բագրատունի իշխանի խնդրանօք ։ Այս պատմութիւնը արդէն մանրազննին քննադատութեամբ գնահատուած է արժանապէս քանի մի հայ և օտարազգի բանասէրներէ, մանաւանդ Վիկտոր Լանգլուա արեւելագէտ և հայասէր գաղղիացին, ուստի և մենք այս քննադատութեան ամփոփումն գրագիտութեան պատմութեանը թողլով համառօտ գծերը միայն յառաջ կը բերենք ։

Մովսիսի երկասիրած պատմութիւնը կը սկսի Հայկազանց նահապետական հարստութեան սկզբնաւորութենէն և կ'աւարտի Արշակունեաց թագաւորական հարստութեան անկումովն, այն է կը պարունակէ մեր ազգի 2780 տարուան պատմութիւնը ։ Սակայն որչափ որ պատմական ժամանակամիջոցը երկար է, այնչափ և պատմութիւնը համառօտ . և այս համառօտախօսութեան պատճառ գլխաւորապէս պատմագրի ծերութիւնն եղած է (զոր տեղ տեղ ինքնին յառաջ կը բերէ,) և ոչ իւր հմտութեան պակասութիւնը, վասն զի պատմութեան իւրաքանչիւր գլխէն

(1) Խորենացւոյ պատմութիւնը թարգմանուած է Լատիներէն, Գաղղիարէն, Իտալերէն և Ռուսերէն, հետաքննին ծանօթութեամբք հանդերձ ։

կը նշմարուի Մովսիսի բազմակողմանի հըմտութիւնը։ Արդարեւ՝ Խորենացին իբրեւ ազգային պատմութեան Նախահայր՝ բաց ՚ի աւանդութիւններէ չէ ունեցած ուրիշ ազգային պատմագրական աղբիւր, բայց հետազօտած է բազմաթիւ օտարազգի պատմիչներ (որոց անունները կը յիշուին իւր պատմութեան մէջ) և զանազան աղբիւրներ, այն է Յունական, Քաղդէական, Ասորական, Աստուածաշունչ Գրոց և Հրէական։

Խորենացւոյ Պատմութիւնը երեք գիրք բաժանուած է, որոց առաջինն կը կոչուի Ծննդաբանութիւն Հայոց Մեծաց, որ կը պարունակէ պատմագրի Ընծայականն առ Սահակ Բագրատունի, Ս. Գրոց ծննդաբանութիւնն և ապա (Մարիբասայ հետեւողութեամբ) Հայկազանց տանուտիրական կամ նահապետական պատմութիւնը, Հայկէն մինչեւ Վահէի վախճանն, ամփոփելով մի փոքր յաւելուած եւս Բիւրասպի Աժդահակայ նըկատմամբ եղած պարսկական առասպելախառն դէպքին վրայ։ Երկրորդ Գիրքը կը կոչուի Բան Միջին պատմութեան Նախնեաց Մերոց, և կը պարունակէ մեր ազգային պատմութեան ամենէն ճոխագոյն մասը մեծին Աղեքսանդրի աշխարհակալութեան ինչ ինչ դէպքերէն և Արշակունեաց հարստութեան սկըզբնաւորութենէն մինչեւ Տրդատայ Թագա-

ւորութիւնը։ Իսկ երրորդ Գիրքը կը կոչուի Աստուածաբանութիւն Մերոյ Հայրենեաց, որ կը պարունակէ Տրդատայ թագաւորութենէն մինչեւ Արշակունեաց հարստութեան անկման պատմութիւնը։ Այս վերջին գլխոյն մէջ քաղաքականին հետ խառն է և ազգային եկեղեցական պատմութիւնը, այն է Տրդատայ Գրիգորի և իւր յաջորդ հայրապետաց ժամանակ կատարուած քրիստոնէական և եկեղեցական եղելութիւնները, որոց վրայ արդէն խօսած լինելով՝ աւելորդ կը համարինք կրկնել։

Խորենացւոյ պատմութիւնը կ'աւարտի մի սրտաշարժ Ողբով Հայրենեաց և եկեղեցւոյ վիճակի վրայ, որուն մէջ արտասուաթոր և անմխիթար կը ներկայանայ այն հայրենասէր ծերունին, որ Հայկայ, Արամայ, Տիգրաններու և այլ ընտիր անձանց պատմութիւնը աւանդած ժամանակ՝ կարծես մանկանալով կը խայտայ։ Երբոր կը յիշէ Հայրենեաց մեծութիւնը, եկեղեցւոյ պայծառութիւնը և ներկայ աղէտները, թագաւորութեան բարձումը, արտաքին արհաւիրքները և ներքին զեղծումներն՝ սիրտն կը մորմոքի և միանգամայն ընթերցողը յարտասուս կը շարժէ։

Թովմա Արծրունին չորրորդ Գիրք մի ևս կը յիշատակէ Խորենացւոյ պատմութեան, բայց այս Գիրքը մեզ չէ հասած, ինչպէս և

«Տաղքն չափու յինքն և ՚ի Սահակ Բագրատունի»։

Պատմութենէն յետոյ Խորենացւոյ անուանի եղած երկասիրութիւններն են — 1. Աշխարհագրութիւն, որ աւելի թարգմանութիւն քան թէ ինքնագիր երկասիրութիւն դատուած է բանասէրներէն. 2. Պիտոյից Գիրք. տասն ճառէ բաղկացած, Թէոդորոս անուն աշակերտին համար իբրեւ ճարտասանական ուսման օրինակներ աւանդուած, որ առաւել գրողին պատանեկան հասակի խաղալիք կը համարուին քան թէ հիմնաւոր աշխատասիրութիւն։ 3. Պատմութիւն Սրբուհւոյ Աստուածածնի, և պատկերի նորա, որ գրած է, նոյնպէս Սահակ Բագրատունւոյ խնդրանօք, այն աւանդութեան հիման վրայ, որով կը պատմուի թէ Ս. Կուսի պատկերը Յովհաննէս աւետարանիչն փորագրած էր կիպարիս փայտի վրայ և Բարդուղիմէոս առաքեալն առնելով միւս առաքեալներէն բերած էր ՚ի Հայաստան և դրած Հոգեաց վանքի մէջ։ 4. Ներբող ՚ի Ս. Հռիփսիմէ, վառվռուն իմաստներով և զգացմունքներով ղեղուն, և 5. Ճառ Վարդավառի։

Բաց յայսմանէ Մովսէսի անուամբ կը գտնուին այլ և այլ մեկնական և քերականական երկասիրութիւններ, բայց Խորենացւոյ սեպհական լինելուն համար տարակուսա-

թիւն կայ, որովհետեւ Մովսէս անուանով շատ հեղինակներ եղած են ։

Աւանդութեամբ Մովսէս Խորենացւոյ կ՚ընծայուին նմանապէս քանի մի Շարականներ, ինչպէս են՝ Ճրագալուցի ուրախացիրն, Տեառնընդառաջի կանոնն, Հոգեգալստեան առաջին պատկերն, և այլն ։

ՍԱՄԲՐԷ ՎԵՐԾԱՆՈՂ.—Խորենացւոյ կրտսեր եղբայրն, որ իւր եղբօր նման ճանապարհորդած է զանազան քաղաքներ ուսումնասիրութեան փափաքով ։ Սամբրէի անուամբ գտնուած երկասիրութիւնք միայն երկու Ճառ են — ՚ի Յարութիւնն Ղազարու և ՚ի Գալուստն Քրիստոսի յԵրուսաղէմ ։ Կ՚աւանդէ Թովմա Արծրունին, որպէս թէ Սահակ Արծրունեաց հրամանաւ պատմութիւն եւս երկասիրած է Սամբրէ, բայց այսպիսի փափաքելի աշխատութիւնը դուցէ ՚ի կորուստ մատնուած է ։ Սամբրէի յիշեալ ճառերէն ՚ի Յարութիւնն Ղազարու գրածն պերճախօս է և միանգամայն քրիստոնէական իմաստութեամբ զեղուն ։ Աւետարանական վսեմ ըսքանչելիքը արձագանգ գտած է Սամբրէի սրտին մէջ, որով և նուագած է աստուածային սիրոյ մեծութիւնը և մահու թագաւորութեան կործանումն, հռչակելով յարութիւն և անմահութիւն. « Ողբացէ մահ

զկործանումն իւրոյ թագաւորութեան (կ՚աղաղակէ Սամբրէ), կոծեսցեն և դժոխք ըզքակտումն իւրոյ զօրութեանն ... Նախ հարցեն հաւատացեալք ՚ի Նորոգմանն Պազարու. սուգ առցեն դեւք զինքեանց տեսանելով զկործանումն: Աւետարանեսցին՝ որոց ՚ի գերեզմանս բնակին յոյս յարութեանըն — մի այսուհետեւ զարհուրեցուսցէ ըզմեզ մահ»:

Զ.

Երկասիրութիւնք Եղիշէ վարդապետի և Ղազարայ Փարպեցւոյ. — Ներքին յատկական նկարագիր պարունակութեան իւրաքանչիւրոց:

ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ. — Կրտսեր Թարգմանչաց կամ երկրորդ աշակերտաց դասէն, Վարդան Մամիկոնեանի ատենադպիրն, որ թէպէտ իւր գրուածոց խորագիրներուն մէջ սովորաբար Վարդապետ կը կոչուի, բայց Մամիկոնեան նախարարական տան եպիսկոպոսն էր, որ և Արտաշատու ժողովին եպիսկոպոսաց կարգին մէջ կ՚անուանի Եղիշէ եպիսկոպոս Ամատունեաց: Հայաստանի հարստահարութեան և հալածանաց օրերուն ականատես եղաւ Եղիշէ, տեսաւ Ս. Վարդանայ և նորա քաջ ընկերաց նահատակութիւնը, տեսաւ ընտիր ընտիր նախարարաց բանտար-

կուսութիւնն եւ փերութիւնը, հայ տիկնանց քրիստոնէական արիութիւնն եւ գեղեցիկ աստուածասիրութիւնը. տեսաւ հայրենեաց աւերումը պարսկական բռնութենէն, եւ սրտին ցաւէն առանձնացաւ Մոկաց լեռները եւ այն տեղէն Մշտունեաց գաւառը, ուր եւ կնքեց իւր կեանքը։

Եղիշէ թողած է ինքնագիր ընտիր երկասիրութիւններ, որոց մէջ կը փայլին իւր ազնիւ զգացմունքները եւ քրիստոնէական իմաստութիւնը։ Այս երկասիրութեանց մէջ ամենէն նշանաւորն է Պատմութիւնն վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, զոր գրած է Մամիկոնեան Դաւիթ երիցու հայցմամբ։ Այս պատմութիւնը կը բաղկանայ մէկ Ներածականէ առ Դաւիթ երէցն եւ ութն յեղանակներէ կամ գլուխներէ, պատմական անցից յաջորդութեան կարգաւ, որոց վերջինը առաւել սուրբ քահանայից չարչարանքները եւ հայ կանանց քրիստոնէական բարեպաշտութիւնները կը պարունակէ, ասոր եւ կը կոչուի [illegible] եօթն յեղանակին։ Եղիշէի պատմութեան մէջ նոյնպէս կը գտնուին 1. Յազկերտի շրջաբերական Հրովարտակը, որով իւր տէրութեան հպատակ ազգերը կը հրաւիրէ 'ի պատերազմ ընդդէմ Քուշանաց. 2. Միհրներսեհ հրամանատարի Նամակը, զոր մոգերու խորհրդով կը գրէ Հայոց ազգին նախ-

պատմական դէնը բացատրելով և Քրիստոնէութիւնը պախարակելով և ապա ստիպելով Հայոց ազգը ՚ի մոգութիւն և յարեւապաշտութիւն։ 3. Հայոց մերժողական Պատասխանը, զոր կը գրեն Արտաշատու ժողովին մէջ գումարուած եպիսկոպոսները նախարարաց և բոլոր բազմութեան հաւանութեամբ և քրիստոնէական անվեհեր ազատութեամբ։ 4. Հրովարտակ կամ Գիր պաղատանաց Հայոց աշխարհին, զոր կը գրեն Յունաց Թէոդոս կայսեր և օգնութիւն կը խնդրեն. բայց Թէոդոս կը մեռանի և Մարկիանոս Թագաւորելով փոխանակ Հայոց օգնելոյ, ընդ հակառակն կը բարեկամանայ Պարսից Թագաւորի հետ և դաշնակցութեան ուխտ կը հաստատէ։ 5. Վարդան Մամիկոնեանի և Ղեւոնդ երիցու քաջալերական ճառեր Աւե-[illegible], որով Հայ ազգը կը խրախուսէն ՚ի պատերազմ վասն պաշտպանութեան հայրենի օրինաց և ազատութեան Եկեղեցւոյ։

Եղիշէի երկասիրութիւնը չը նմանիր ամեններուն այն պատմագրութեանց, որոնք լոկ Թագաւորաց կամ իշխանաց յաջորդութիւններ և գործքեր կը Թուարկեն, այլ կը պատկերացնէ ամբողջ ազգի կամ ժողովրդի պատմութիւնը, մանուկէն մինչեւ զառամեալ ծերունին, փափկասուն տիկնոջէն մին-

չեւ զհաստատուն զօրականը եւ անարգէն մինչեւ պատուականը, միով բանիւ, Եղիշէի երկասիրութիւնը Հայոց բոլոր ազգի նահատակութեան կամ քրիստոնէական զինւորութեան պատմութիւնն է ընդդէմ զրադաշտական մոլեռանդն մոգակրօնութեան, եւ մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրն կը տեսնենք այս խօսքերու կատարումն. «Ոչ երեւէր այնուհետեւ տղայն լալ քան զծառայ, եւ ոչ ազատ փափկացեալ քան զգեղջուկ վշտացեալ, եւ ոչ ոք քան զոք նուազեալ 'ի յարութենէ. Մի սիրտ յօժարութեան էր. ամենեցուն՝ արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց եւ ամենայն միաբանելոց 'ի Քրիստոս. Քանզի առ հասարակ զմի զինուորութիւն զինուորեցան եւ զմի ագան զրահս հաւատոց պատուիրանին Քրիստոսի. միով գօտեաւ Ճշմարտութեան պնդեցին զմէջս արք եւ կանայք.... Տեսանէին զանձինս իւրեանց իբրեւ զմեռեալ դիակունս եւ զիւրաքանչիւր գերեզմանս ինքեանք փորէին. եւ կեանք իւրեանց 'ի մահ համարեալ էին եւ մահք իւրեանց անշուշտ կեանք» (1).

Եղիշէի երկասիրութիւնը այն ընտիր պատմագրութիւններէն է, որոնք պատմելէն աւելի կ՚ուսուցանեն — գործքէն շարժառիթը բացատրելով եւ հետեւանքէն պատ-

(1) Եղիշէ. Գ. Եղանակ.

ճառը, և կամ անդրադարձօրէն ։ Վասն զի Եղիշէն Եկեղեցւոյ ուխտի նահատակութեան պատմութեանը հետ՝ կ՚ուսուցանէ միանգամայն և Քրիստոնէական Եկեղեցւոյ նշանակութիւնը և էական պաշտօնը աշխարհիս վրայ, աստուածատէր առաքինեաց անձնազոհութեանը հետ՝ աստուածային սիրոյ մեծութիւնը, ուրացողաց և անմիաբանից արարմանց հետ՝ թերահաւատութեան և անզգուգութեան դժնդակութիւնը, և նա և մոգական պաշտօնէից չարագործութեան հետ՝ մոգական դենի կամ կրօնի խաւարամիտ վարդապետութիւնը ։ Եւ այս պատմական ընտիր յատկութիւնը զգալի է մանաւանդ այն ներհական պատկերներուն մէջ, որոց մանրանկար յատկանիշները կը պատկերացնէ Եղիշէ ։ Ինքնակալ թագաւոր մի (Յազկերտ) իւր արքայական աթոռէն կ՚որոտայ և միանգամայն կը դողդողայ, վասն զի մոգապաշտ է և անհաստատ խորհրդներով կը շարժի. իսկ ընդհակառակն՝ հպատակ ազգի զօրավար մի, Նախարար մի (Վարդան և այլք) կը խրախուսի և կը խրախուսէ. վասն զի ըզՔրիստոս զօրավար և զօրագլուխ կը տեսնէ ճշմարտութեան պատերազմին, և երկիւղը՝ թերահաւատութիւն կը ճանաչէ ։ Թագաւորաց խորհրդական և պատգամատու մոգերը կը յուզին և կը տագնապին, վասն զի

թանձրամած խաւարի մէջ են և ոգիները մարմնոյ մէջ արգիլուած, ինչպէս կենդանի գերեզմանի մէջ։ Իսկ ընդհակառակն՝ Յովսէփ, Պետրոս և այլք, Խաչն 'ի ձեռին անվեհեր՝ պատերազմի դաշտը կ'իջնեն, վասն զի Ճշմարիտ Աստուծոյ քահանայ են և Ճըշմարտութեան համար մեռնիլը՝ կեանք կը խոստովանին և կը քարոզեն։ Ընդարձակ նահանգի իշխան մի (Վասակ՝ տէր Սիւնեաց) բարձրանալու ձգտման հետ՝ կը քննի և կը շոյէ, վասն զի ուրացող է և հաւատը մարմնաւորին մէջ է. իսկ ընդհակառակն՝ մատաղ մանուկ մի, տկար կին մի՝ վայելքը և փառկութիւնը կ'արհամարհեն, վասն զի Ճշմարիտ վայելչութիւնը և մեծութիւնը աստուածային սիրոյ մէջ կը դաւանին։

Առհասարակ, եթէ մի կողմէն նկարագրուած է մոգակրօնութիւնը իւր աղետաբեր չարիքներով, միւս կողմէն եւս կենդանի պատկերացած է Քրիստոնէութեան Ճըշմարիտ ոգին մի ամբողջ ժողովրդի ուրախական զինուորութեամբ, որով և ակներեւ կը տեսնուի Եղիշէի երկասիրութեան մէջ, որ Հայ ազգը սիրած է իւր երկրաւոր հայրենիքէն բարձր հայրենիք, այն է իւր ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ, պաշտած է իւր մարմնաւոր ազատութենէն բարձրագոյն ազատութիւն, այն է ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԽՂՃԻ, և

հաստատված է մարդկային օրէնքներէն բարձրագոյն օրինաց, այն է ՕՐԻՆԱՑ ԱՍՏՈՒԾՈՑ։ Վասն զի այս է եղած նորա նախահաստատութեան նշանաբանը. «Հայր մեր զՍուրբ Աւետարանն գիտեմք և մայր առաքելական Եկեղեցի կաթողիկէ։ . . . Օրէնք Աստուածային-կացցեն թագաւոր 'ի վերայ ամենայնի» (1)։

Եղիշէ ոչ միայն ականատես եղած է իւր նկարագրած պատմական անցքերուն, այլ և լիովին զգացած է իւր սրտին մէջ, ինչպէս քաջութեան ուրախական հանդէսները, նոյնպէս և հայրենեաց աւերման տխուր տեսարանները, ուստի և ճառագրած է իւր պատմութիւնը սրտի լեզուով — արտասուաքով։ Վասն զի ինքնին կ'ասէ. «Ահա ոչ ըստ կամաց արտասուալից ողբովք ճառագրեմք զբազում հարուածս, յորում պատահեցաք և մեք իսկ ականատես լինելով»։ որով կ'ազդէ ոչ միայն Հայու՝ այլ և օտարականի սրտին, ինչպէս և ճշմարտիւ խոստովանած է օտարազգի բանասէրներէն մին, ասելով. «Երբ Եղիշէ կը կարդամ, կը հայանամ» (2)։

Պատմութենէն զատ՝ Եղիշէ երկասիրած է այլ և այլ Ճառեր և Մեկնութիւններ, որք

(1) Եղիշէ. Գ. յեղանակ։

(2) Եղիշէն թարգմանուած է Անգղիարէն, Իտալերէն, Գաղղիարէն և Ռուսերէն։

են, 1. Ճառ խրատու միանձանց, որ պատմութենէն յետոյ ամենէն ընտիր, սրտաշարժ և միանգամայն վսեմ գրուածքն է, որով նախ մենաւորական կենաց գեղեցիկ նկարագիրը կը պատկերացնէ, ապա զեղծումները, և ապա կը յորդորէ յուղղութիւն և ի զգաստութիւն։ Միանձանց ճառը այն գեղեցիկ յատկութիւնն ունի, որ հեղինակը միշտ խօսած է առաջին դէմքով և ուրիշները յանդիմանած ժամանակ՝ երբեք բացառութիւն տուած չէ իւր անձին, թէպէտ և իւր գործքերէն կ'երեւի որ անբասիր է իւր կեանքը։ Այս ձեւ բանախօսութիւնը այն փափկանկատ հեղինակներու յատկութիւնն է, որոնք իւրեանց եղբարց թերութիւնը իւրեանց սեպհականը կը համարեն։ 2. Մեկնութիւն Յեսուայ և Դատաւորաց. 3. Մեկնութիւն Տէրունական աղօթից. 4. Կանոնք. և 5. Ճառք ի Մկրտութիւն Քրիստոսի, ի Մատնութիւնն, ի Չարչարանսն, ի Խաչելութիւնն եւ այլն, որոնք մեկնական և յորդորական պարզ գրուածքներ են հաւատացելոց հոգեւոր շինութեան համար և պատմութենէն ժամանակաւ կանխագոյն կ'երեւին։

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ. — Արագածոտն գաւառի Փարպի գիւղէն, իւր մանկութեան հասակին մէջ նախնական կրթութիւն կ'առ-

նու Վրայ Աշուշայ բդեշխի տանը. (որ ա-
մուսնացած էր Վահան Մամիկոնեանի Ա-
նոյշ — Վռամ հօրաքրոջ հետ,) որով եւ-
զինքն Վահանայ մանկակից և խաղակից կը
կոչէ. Յետոյ կ՚աշակերտի Վասակ Արծրու-
նեաց Աղան որդւոյն, որ տեսնելով իւր հօր
բարեկամութիւնը Մեհրուժանայ հետ և
ուրացութեան կասկածը, զինուորութեան
պաշտօնը թողած՝ Գողթն գաւառի մէջ մե-
նաւորական կեանք կը վարէր. Ղազար այս
նուիրական կրթութենէն յետոյ, Սահակայ
և Մեսրոպայ հրամանաւ Յունաստան կ՚եր-
թայ և ուսելի հռետորական արուեստի հե-
տամուտ կը լինի, և այս պատճառաւ է որ
Ճարտասան կը կոչուի. Յունաստանէն դառ-
նալով Մամիկոնեանց ազգական Կամսարա-
կանաց մօտ կը մնայ և հայրենեաց հարուած-
ներուն չը կարենալով հանդուրժել, վշտակիր
սրտիւ կ՚անցնի Սիւնեաց աշխարհը. Երբոր
Վահան Մամիկոնեան մարզպանութեան
իշխանութիւն կ՚ընդունի Վաղարշ թագա-
ւորէն և կը ջանայ հայրենիքը բարեկարգել
և վանքերը նորոգել, կը կոչէ իւր սննդակից
բարեկամն՝ Ղազար և հաւանութեամբ Յով-
հան Մանդակունւոյ (որ այն ժամանակ կա-
թողիկոս էր), Էջմիածնի կաթուղիկէի շի-
նութիւնը նորա տեսչութեանը կը յանձնէ
մի քանի անձանց հետ. Ղազար վանքի նիւ-

Թական չինութիւմը լռացնելէն զկնի, բարոյական բարեկարգութեամբ կը զբաղի, և Հայաստանի զանազան կողմերէն պատանիներ կը ժողովլին այնտեղ, ուսմամբ զարգանալու, որուն օժանդակ կը լինին Վահանայ եղբարքն, Ներսէհ և Հրահատ Կամսարականները, Մամիկոնեան Համազասպն և Աբեղենից Գազրիկ իշխանը։

Այս ուսումնասիրական բարեկարգութեան վրայ վանքի միաբանից ոմանց նախանձը կը շարժի, կըսկսին պախարակել ոչ միայն Ղազարու գիտութիւնը, այլ և հաւատոյ վարդապետութիւնը, և ամբաստանութիւնը մինչեւ Վահանայ ականջը կը հասցնեն, որ կըսպառնայ թէ՛ Ղազարը և թէ բոլոր միաբանները արտաքսել։ Ղազար չը կարենալով ուսումնատեաց զրախօսաց բերանը կապել՝ օգնութիւն կը խնդրէ Մանդակունի կաթողիկոսէն և իւր խնդրանաց կատարումն չը տեսնալով, ինքնին կը դիմէ առ կաթողիկոսն որ արդէն վրդովուած լինելով չարախօսներէ՝ տեսութեան անգամ չարժանացներ զՂազար։ Թշնամիները կաթողիկոսի սառնութիւնը պատեհ առիթ համարելով Ղազարը վանքէն կ'արտաքսեն և իւր ունեցած յունարէն և այլ գրքերն անգամ ձեռքէն կը յափշտակեն, որուն համար Ղազար ցաւելով կ'ասէ. «Երանի թէ գոնէ ի

րենք կարդան և լուսաւորին և ուրիշները լուսաւորեն, և ոչ թէ ընկեցեալ մնան 'ի կերակուր ցեցոյ »: Ղազար աքսորանքէն սիրտը խռոված, Ամիթ քաղաքը կ'երթայ և այն տեղէն Համազասպ Մամիկոնեանի ձեռքով կ'ուղարկէ առ Վահան իւր նշանաւոր Թուղթը, որով Թշնամեաց ամբաստանութիւնները կը մերժէ, նոցա անկարգ վարքը և ագիտութիւնը կը նշաւակէ և իւր անմեղութիւնը կը պաշտպանէ հաստատապացոյցներով: Ուստի և Վահան համոզուելով իւր մօտ կը կոչէ զՂազար և կ'առաջարկէ իւր ժամանակակից անցից պատմութիւնը գրել, որուն պարունակութեան վրայ այժմ պիտի խօսինք, իբրեւ Ղազարու ինքնագիր երկասիրութեան վրայ:

Թէպէտ և Ղազարու բուն նպատակն եղած է գլխաւորապէս Վահան Մամիկոնեանի Մարզպանութեան ժամանակ պատահած անցքերը արձանագրել, բայց իւր պատմական երկասիրութիւնը կը սկսի Հայոց Թագաւորութեան երկու բաժնուելէն, 'ի ներքոյ յունական և պարսկական գերիշխանութեան: Ղազար Փարպեցին իրմէն առաջ եղած պատմագիրները յիշելով, ինչպէս են Ագաթանգեղոս և Բիւզանդ, (վերջնոյն գրուածքը այլոց ձեռքով խարդախած կը կարծէ), և իւր երկասիրութիւնն համարելով

որպէս շարայարութիւն նոցա պատմածնե-
րուն, կը պատմէ Հայաստանի բաժանեալ
իշխանութեան աղէտները, կը նկարագրէ
Արարատեան գաւառի բարեբերութիւնը,
և Սահակայ ու Մեսրոպայ ուսումնասիրա-
կան և հայրենասիրական արարքները և մահը:
Կը պատմէ Արշակունեաց թագաւորութեան
բարձումն և Վարդանանց ու Ղևոնդեանց
ժամանակի քրիստոնէական զինուորութեան
հանդէսը, որ իրմէն յառաջ Եղիշէ գրած
էր առաւել ընդարձակ, բայց անտեսած էր
Յազկերտի մահուըն և նախարարաց դարձուըն
'ի Պարսկաստանէ: Ղազար յառաջ կը տա-
նի իւր պատմութիւնը և կ'աւանդէ Գիւտ
կաթողիկոսի ամբաստանութիւնը Պարսից դրան
առջև, արդարանալն և երկար ժամանակ
Պարսկաստանի մէջ մնալն հրամանաւ թա-
գաւորին: Կը պատմէ թէ՝ ինչպէս անուանի
եղաւ Վահան Մամիկոնեան և Գադիշոյ
Մախազի և այլ ուրացեալ նախարարաց
ձեռքով մատնուեցաւ Պարսից թագաւորին,
և ինչպէս ան երեւս ուրացաւ իւր հաւատ-
քը, մեծարանօք դարձաւ 'ի Հայաստան,
կրկին զղջաց իւր ուրացութեան վրայ, միա-
բանեց իւր հետ հաւատացեալ նախարար-
ները և արքական պատերազմներ մղելով՝
խորտակեց պարսկական զէնքն ու զօրութիւ-
նը, թագաւորի հետ հաշտութեան դաշինք

ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Քրիստոնէութեան դիմադրութիւնն մոգակրօնութեան դէմ մինչեւ Մահմետականութեան եւ յունական աններողութեան հալածանքները :

450–640

Ա.

Ընդհանուր գծագիր այն շրջանին. — Խորհուրդ Պարսից Քրիստոնէութիւնը բառնալու համար. — Վասակ Սիւնի և համախոհք իւր. — Քրիստոնէութիւն և ախոյեանք իւր. — Պարսից պատերազմը Հոնաց հետ և քրիստոնէից օգնութիւնը. — Տառապանք քրիստոնեայ զօրականաց. — Նահատակութիւն Աղուանից. — Դենշապուհի հարստահարիչ պարտքները. — Պարսից Հազարապետի հրովարտակը. — Արտաշատու ժողովը և պարսկական հրովարտակի պատասխանը. — Պարսից թագաւորի զայրոյթն Հայոց պատասխանւոյն վրայ. — Նախարարաց կոչուիլն և երթալն ՚ի դուռն Պարսից. — Թագաւորի ուրախութիւնն Նախարարաց առ երեսս ուրացութեան վրայ. — Նախարարաց և պարսկական մոգախումբ բանակի ուղեւորութիւնն ՚ի Հայաստան. — Պարսից թագաւորի պատուէրները :

ՆԱԽԸՆԹԱՑ շրջանին մէջ տեսանք, որ Արշակունեաց Թագաւորական հարստութեան երկու բաժնուելովն՝ Հայաստանի քաղաքային ոյժը տկարացաւ, և սակաւ ժամանակէն զկնի, բոլորովին բարձաւ արքայական

անունն ու իշխանութիւնը, նախ յունական և ապա պարսկական բաժնին մէջ։ Այս բարձման պատճառը այնքան ներքին երկպառակութիւնները չէին, որքան յունական եւ պարսկական տէրութիւնները, որոնք առիթ տալով ներքին խռովութեանց՝ Հայաստանը իրարու ձեռքէ յափշտակել կը ջանային։ Բայց որովհետեւ Յունաստան արդէն տկարանալու վրայ էր, հետեւապէս Հայաստան առաւել հզօրագունին պիտի մնար, որպէս և եղեւ իսկ։ Յունաստան տկարանալու վրայ էր, ասացինք, վասն զի Արշակունի Թագաւորութեան բարձման միջոցին Ալանք և Հոնք Եւրոպա արշաւելով և ուրիշ բարբարոս ազգաց հետ միանալով՝ սկսած էին տապանեցնել Արեւմտեան և Արեւելեան (Հռովմէական և յունական) կայսրութիւնները, որոնք արդէն, կրօնական վէճերով, հերետիկոսական յուզմունքներով, և մանաւանդ բարուց ապականութեամբ ու ներքին զեղծմամբ, կործանման անդունդը հասած էին։ Այս աշխարհասասան վրդովմանց եւ աւերանաց ժամանակին էր, որ Պարսիկները Յազկերտ Բ-ի օրով պատերազմի ելան Յունաց դէմ (Թէոդոս Բ-ի թագաւորութեան ժամանակ) և յաղթող գտան, այնպէս որ, Յոյնք ստիպուեցան իրենց երկիրը փախած քրիստոնեայքը (զորս կը պահպանէր Ստափ-

նոս Պատրիարքը, յետ դարձնել և Անատոլիս արեւելեան սպարապետի ձեռամբ մեծ գանձ տալ Պարսից. և խաղաղութիւն հաստատել։

Պարսիկները, այս յաղթութեան պարծանքով, Արեւմուտքէն Արեւելք դառնալով՝ Քրիստոնէութիւնը բառնալու խորհուրդներ կը յղանան, և աներկիւղ գործադրել կը ջանան, վասն զի յունական ազդեցութենէն եւս ապահովացած էին, յորմէ առաջ կը կասկածէին։ Մոգերը և Քրիստոնէութեան ոխերիմ Թշնամի Միհրներսեհ հազարապետը խորհուրդ կուտան Թագաւորին պարսկական տէրութեան բոլոր քրիստոնեայ ազգերը մոգութեան դենին դարձնել։ Կը համոզեն մանաւանդ՝ թէ Հայաստան մեծ և պիտանի աշխարհ է և յունական կայսերութեան սահմանակից և ըստ քրիստոնէութեան կրօնակից, ուստի եթէ Հայք մոգական կրօնին ընտանենան, այնուհետեւ կը սիրեն Արեաց աշխարհը և Թագաւորները, և իսպառ կը հեռանան Յունաց ազգէն, և երբ այս ընթացքը յաջողի, անշուշտ Վրացիք, Աղուանք և այլք նոցա օրինակին կը հետեւին։

Պարսկական այս խորհրդին մասամբ կը նպաստէր Հայաստանի մէջէն Սիւնեաց նախարարական հռչակաւոր Տունը, վասն զի այս

միջոցին Հայոց աշխարհի Մարզպան (Պառա-
ռակալ) էր Վասակ Սիւնին (Վեհ-Միհրշա-
պուհ պարսկի մարզպանութենէն յետոյ,) որ
թէպէտ 'ի սկզբան Մեսրոպի առաքելութեը
օժանդակած էր Արիական աշխարհին մէջ,
դպրոցներ հաստատելով մանկանց համար և
Մատենադարան Գեղարքունւոյ մէջ, և ա-
կանաւոր էր իւր իմաստութեամբ և վար-
չական խոհեմութեամբ, բայց մարզպանու-
թեան միջոցին պատրուած էր իշխանական
փառասիրութեան տենչանքով, յուսալով
յինքն դրաւել ուրացութեամբ Հայոց աշ-
խարհի թագաւորութիւնը. որ թէ և բար-
ձուած էր, բայց յիշատակը տակաւին կեն-
դանի էր շատերու սրտին մէջ։ Վասակայ
տենչանքին և ուրացութեանը գրգիռ տը-
ւած էր մանաւանդ նորա փեսան, Վարազ-
վաղան Սիւնին, որ, աներոջ ձեռամբ իւր
աշխարհէն մերժուելով (կնոջ հետ գժտու-
թեամբ վարուելուն պատճառաւ) ընդունած
էր Մազդեզանց կրօնքը և Միհրներսեհին
խորհրդակից դառնալով՝ կը ջանար մարզպա-
նութենէ ձգել զՎասակ, և սա իշխանու-
թեան մէջ հաստատ մնալուն նպատակա-
ւ ուրացութիւնը միայն գտած էր դիւրին մի-
ջոց։ Վասակայ կողմը շահուած էին, 'ի միջի
այլոց, Բագրատունեաց տոհմէն Տիրոց ա-
պետ՝ իշխան պարսկային Բագրատունեաց

Տարօնոյ, և Վասակ Մամիկոնեան՝ կուսակալ Մարզին Հայոց 'ի Յունաց բաժնի ։ Նոյնը պատուաւոր երեւոյթները բաւականին ուժ կը տային մոգական մոլեռանդութեան եւ Պարսիկները Հայաստան արդէն մոգակրօն դարձած կ'երազէին ։ Բայց Գրիգորի, Ներսիսի, Սահակայ և Մեսրոպայ առաքելական քրտունքը 'ի զուր հոսած չէին ։ Այժմ Հայաստանի մէջ, ոչ միայն Վարդան, Հմայեակ և Համազասպեան, որոնք իրենց հաւուն՝ Ս. Սահակայ հետ քրիստոնէական ուսմամբ դաստիարակուած էին և տոհմային տանուտէրական իշխանութիւն կը վարէին ։ Այժմ ոչ միայն ընտիր ընտիր նախարարներ և իշխաններ —Վահան Ամատունի հազարապետ, որ հայր համարուած էր բոլոր աշխարհին, Արշաւիր Կամսարական, Ներշապուհ Արծրունի և այլք, —որոնք վառուած էին 'ի սէր քրիստոնէական կրօնի ։ Այժմ ոչ միայն արթուն և անձնադիր հովիւներ —Յովսէփ, որ 'ի քահանայութենէ 'ի կաթողիկոսութիւն կոչուած էր, Սահակ եպիսկոպոս Ռշտունեաց, Ղեւոնդ երէց և այլ բազումք —որոնք քրիստոնէական աղ և լոյս էին Հայոց աշխարհի համար ։ Այժմ ոչ միայն իշխանութեամբ և աստիճանաւ ականաւոր մարդիկ, այլ և միլիօնաւոր զաւակունք Եկեղեցւոյ, արք և կանայք, ազատք և շինականք, ծերք և մանկունք, որոց

հոգիներուն մէջ եռացող քրիստոնէական հուրը, հալածանքները սաստկանալուն պէս, պիտի դուրս բռնկէր և սքանչելի երեւութով մոգութիւնը շուարեցնէր։

Այսպէս ահա, թէպէտ մի կողմէն մոգակրօն Պարսկաստանը սպառազինած էր տէրապետական ուժով և աշխարհային խոստումներով սակաւաթիւ տկարամիտներ իւր կողմը որսացած էր. սակայն միւս կողմէն եւս քրիստոնեայ Հայաստանը կ'եռար հաւատոյ աննկուն ոգեւորութեամբ։ Պարսկաստան սպառազինած էր բանտով, տանջանքով, գերութեամբ, մահուամբ և արեամբ՝ Քրիստոնէութիւնը բառնալ. իսկ Հայաստան պատրաստուած էր նոյն արհաւիրքներուն դիմադրել և իւր երկնային կրօնքը պաշտպանել։ Վաղուց արդէն Պարսից խորհուրդները յայտնի էին Հայոց, բայց Պարսիկները 'ի սկզբան կը ջանային ծածկել. ուստի և հալածանքն այլ կերպարանքով ըսկսաւ։

Յազկերտ Բ. Միհրներսեհ հազարապետի և մոգերու խորհրդով պատերազմի պատրաստուեցաւ Բուշանաց կամ Հոնաց դէմ, և քրիստոնէից զօրութիւնը տկարացնելու և դիւրաւ 'ի մոգութիւն փոխելու համար՝ հրովարտակներ ուղարկեց Արեաց և Անարեաց (Իրան և Տաներան) տէրութեան հը-

պատակ բոլոր քրիստոնեայ ազգերուն և մանաւանդ Հայոց, որպէս զի իւրաքանչիւրն իւր այրուձիով, նախարարներով և իշխաններով Ապար աշխարհը դիմեն։ Հայք, Վիրք, Աղուանք և այլք հպատակեցան Թագաւորի հրամանին և իւրաքանչիւրն իւր այրուձիով ժամադիր եղած տեղին հասան և միանալով պարսկական զօրաց հետ՝ արշաւեցին Բուշանաց վրայ։ Երկու տարի պատերազմեցան, բայց չը կարացին յաղթել, ուստի և Յազկերտ մարզիկ զօրքերը արձակելով և ուրիշները նոցա տեղ փոխանակելով, եօթըն տարի պատերազմեցաւ և յաղթութեան յուսով իւր համար արդէն բնակութեան քաղաք շինած էր այն տեղ։ Ի վերջոյ Հոնք յաղթուեցան, Պարսից ապստամբները տակնու վրայ արին Հոնաց գաւառները, գերելով և աւերելով, ուրախութեան աւետիքներ ուղարկուեցան ամեն ատրուշաններուն, սպիտակ ցուլեր և գիսաւոր նոխազներ զոհուեցան կրակին և մոգերն ու մոգպետները պատկուեցան։ Մինչդեռ պատերազմները կը շարունակուէին Հոնաց դէմ՝ Թագաւորն 'ի մոգութիւն կը հրապուրէր քրիստոնեայքը զանազան միջոցներով. մերթ պատիւներ տալով նախարարաց, մերթ քրիստոնէութիւնը պախարակելով և մոգութիւնն ու քաւդէութիւնը ջատագովելով, և մերթ

կռապաշտները և անարգները նախամեծարելով, քան ուղղները և պատուականները։ Սակայն Քրիստոնէութիւնը տակաւին ազատ էր և քրիստոնեայ զօրաց հետ պատերազմի մէջ գտնուած եկեղեցականները հրապարակաւ պաշտօն կը կատարէին բանակին մէջ և ՚ի Պարսկաստան ևս Քրիստոնէութիւնը տակաւին կը տարածուէր առանց դիմահարութեան։ Իսկ Քուշանաց նուաճմանէն ընդկրնի մոգերը և քաւդեանները հրապուրեցին Թագաւորն ասելով՝ այն աստուածները, որոնք յաղթութի՛ տուին քեզ, միայն մի հատուցումն կը պահանջեն քեզմէն, այն է Քրիստոնէութիւնը բառնալ և բոլոր ազգերը ՚ի մոգութիւն դարձնել։ Ուստի և վաղվաղակի պատգամաւորներ ուղարկուեցան պարսկային տէրութեան բոլոր ազգերուն, որ մի միայն արեգակը պաշտեն, կրակին սպաս տանեն և մոգութիւնը ընդունեն։ Հայոց, Վրաց և Աղուանից այրուձին արգիլուեցաւ ՚ի ներքըս պահ դրան (դուռն Ճորայ, ուստի արշաւած էին դէպ ՚ի Քուշանք,) և սաստիկ հրաման տրուեցաւ դռնապանաց, որ նոյն դռնէն Արեւելք դիմողները թողուն, իսկ Արեւմուտք դիմողները արգիլեն։ Երբ այսպէս փակուեցաւ Քրիստոնէից այրուձին տար աշխարհի մէջ, այնուհետեւ ձեռն արկին տագնապել, տանջել, անարգելով, թոշակը պանել.

անցնելով, ձմեռոցաց դժնեայ վայրերուն մէջ խոշտանգելով. երբեմն ստիպելով որ յաղեալ միս ուտեն և երբեմն գունդա-գունդ պատերազմի տանելով դէպ ՚ի հիւսի-սային անապատները և արոյ ճարակ տալով։ Միայն Ատոմ Գնունի և Մանաճիհր Ռշ-տունի իւրեանց զօրքով ՚աճապարեցին Հա-յաստան փախչել, սակայն Պարսից զօրքերը հանելով ամենքը նահատակեցին, և այս նա-հատակաց յիշատակն է, զոր Եկեղեցին կը տանէ Ատոմեանց զօրավարաց անունով։

Մինչդեռ հալածանքները այսպէս կը շարունակուէին, Յազկերտ իւր Դենշա-պուհ (Վեհ դենշապուհ) պաշտօնատարը Հայաստան ուղարկեց, որ առաջ կեղծաւո-րեցաւ, իբր թէ ողջոյն բերած է թագաւո-րէն և եկած է աշխարհագիր առնելու, հար-կը թեթևցնելու և այրուձին նուազեցնե-լու համար, բայց յետոյ ընդհակառակն այս աղետները հասոյց Հայոց աշխարհին։

1. Եկեղեցին, որ ազատ էր, ծառա-յութեան տակ դրաւ։

2. Մենակեաց քրիստոնեայք, որ ապա-հարկ էին, վանօրէիւք հանդերձ, աշխար-հագրի և հարկաց ենթարկեց։

3. Աշխարհի հարկը ծանրացոյց կրկնա-պատկելով, և մուտք, սակք, բաժք և հարք նշանակեց ոչ միայն շինից, լերանց, դաշտաց

և մայրեաց, այլ և աւերակաց։

4. Բանսարկութեամբ նախարարները ի-րարու դէմ յարոյց և ամէն տան մէջ խռո-վութիւն ձգեց։

5. Մքաստանութիւն յարոյց Վահան Ամատունի հայրաքարոյ հազարապետին դէմ, պաշտօնէ ձգեց և նորա փոխանակ պարսիկ դրաւ (Մշկան անուն)։

6. Դատաւորութեան համար մոգպետ կարգեց, որպէս զի եպիսկոպոսաց տեղի մէջ եղած դատաստանները խափանուին։

Երբ այս ամէն հնարքները 'ի գործ դրը-ուեցան աշխարհի միաբանութիւնը քայքա-յելու, վանքնականները փախցնելու, Եկե-ղեցւոյ ուխտը քակտելու և շինականները ցրուելու համար, որպէս զի աղքատու-թեան վտանգէն ստիպեալ մոգութիւնն ըն-դունին, այնուհետեւ Արեաց և Անարեաց հազարապետը հրովարտակ գրեց Հայոց, ո-րոյ մէջ կ'աւանդէր զրադաշտական ուսումն և դենիմազդեզն, — այն է միութիւն (Զրու-ան կամ Ժամանակ,) այս միութենէն ա-մատական երկուորականութիւն կամ ծը-նունդ երկու արարիչներու (Որմզդի և Արհ-մենի) և այս արարիչներէն ծնունդ և ստեղ-ծագործութիւն բարի և չար արարածոց — և կը յանդիմանէր Քրիստոնէութիւնը իբրեւ մարդկային մտաց և զգացմանց հակառակ

վարդապետութիւն։

Միհրներսեհի նամակը Հայաստան հասնելով՝ գրաւեց համայն ազգի մտադրութիւնը, վասն զի բացարձակ վճռուած էր —կամ՝ պատասխանել նամակին քան առ քան, և կամ՝ Պարսից դուռն գնալ և յանդիման լինել մեծ հրապարակին (Թագաւորական ատենին)։ Ուստի և ժողովատեղի որոշելով Արտաշատ Թագաւորանիստ քաղաքը, գումարեցան այնտեղ ամեն գաւառներէն մեծամեծ Եպիսկոպոսունք, (Յովսէփ եպիսկոպոս Արարատայ կամ կաթողիկոսն, Մեղետ Մանազկերտայ, Սահակ Ռշտունեաց, Եզնիկ Բագրեւանդայ, Մուշէ Արծրունեաց, Եղիշէ Ամատունեաց և այլն). բազմաթիւ Քորեպիսկոպոսունք, նշանաւոր Երիցունք (Ղեւոնդ, Դաւիթ, Խորէն ի Սրենայ և այլք), աւագ Վանականք (Եղան Արծրունի և այլք). մեծատոհմ Նախարարք և Տանուտեարք (Տէրն Սիւնեաց Վասակ Մարզպան, Տէրն Արծրունեաց Ներշապուհ, Մալխազն Վրիւ, Սպարապետն Հայոց Վարդան Մամիկոնեան, և երբեմն Հազարապետ աշխարհին Վահան Ամատունի և այլք). աւագ Սեպուհք իւրաքանչիւր Տոհմի և մեծաղումար բազմութիւն մարդկան։

Այս աշխարհաժողովի բոլոր բազմութիւնը, մեծամեծք և փոքրունք, միաբան հա-

ւանութեամբ աշխարհին՝ ուխտեցին հաստատուն մնալ ՚Քրիստոնէութեան մէջ կենօք և մահուամբ, և միաբանական վկայութեամբ պատասխանեցին Միհրներսեհի նամակին, բան առ բան ջրելով զրադաշտական վարդապետութիւնը — երկուորականութեն դէմ հաստատելով Աստուածութեան միութիւնը, արարչութիւնն յոչընչէ, անձնիշխանութիւն մարդոյ, սկիզբն չարեաց, անկումն մարդկութեան և փրկութիւնն ՚ի ձեռն Յիսուսի ՚Քրիստոսի — և ապա կնքեցին իւրեանց քրիստոնէական ճշմարտութեանց խոստովանութիւնք այս նշանաւոր խօսքերով. "Յայսմ հաւատոյ զմեզ ոչ ոք կարէ խախտել, ո՛չ հրեշտակք և ո՛չ մարդիկ, ո՛չ սուր և ո՛չ հուր, ո՛չ ջուր ո՛չ ամենայն զինչ և են դառն հարուածք։ . . . Արդ եթէ յետ այսր մեծի վկայութեան այլ ինչ հարցանես, աւասիկ կամք, զըոլոր մարմին տուեալ ՚ի ձեռս քո, փաղփաղակի արա զինչ և կամիս։ Ի քէն տանջանք և ՚ի մէնջ յանձնառութիւնք, սուր քո և պարանոցք մեր։ . . . Ոչ եթէ անմահք իսկ էաք և մարթ էր մեզ մեռանել վասն սիրոյն ՚Քրիստոսի, արժան էր, քանզի և նա անմահ էր և այնչափ սիրեաց զմեզ, մինչև մահ ՚ի յանձն էառ, զի և մեք նորա մահուամբն յաւիտենական մահուանէն ապրեսցուք։ Եւ եթէ նա իւր անմահութիւնն ոչ

խնայեաց, մեք զի կամօք եղաք մահկանացուք, կամօք մեռցուք վասն սիրոյ նորա . . . . : Զի ոչ եթէ ընդ մարդոյ է ուխտ հաւատոց մերոց, եթէ պատրեցիմք իբրեւ ըղ-տղայս, այլ անլուծութեամբ ընդ Աստուծոյ, որում չիք հնար քակել և 'ի բաց ելանել, ոչ այժմ, և ոչ յապա, և ոչ յաւիտեանս, և ոչ յաւիտենից յաւիտեանս »:

Այսպէս սկսաւ առհա՛ Քրիստոնէութեան աներկիւղ դիմադարձութիւնը զրադաշտական ուսման և պարսկական բռնութեան դէմ։ Այսպէս յայտնեց ամբողջ ազգ մի իւր ազատ համոզումը, Քրիստոնէական կրօնի մէջ խոստովանելով իւր երկնաւոր և երկրաւոր երջանկութիւնը, իւր միութիւնը և ազատութիւնը, և այսպէս, 450ին գումարուած, Արտաշատու ժողովին սկիզբն եղեւ փառաւոր նահատակութեան վասն քրիստոնէական ճըշմարիտ հաւատոյ։

Հայոց համարձակ պատասխանուոյն վրայ սաստիկ սրտմտեցաւ Թագաւորն և մանաւանդ աւելի զայրացաւ հազարապետի և մոգերու դրդմամբ. ուստի և նոցա խրատով սպառնալից հրովարտակ գրեց Հայոց, Աղուանից և Վրաց, որով Պարսից դուռը կը կոչէր Մարզպանն, Սպարապետն, երբեմն Հազարապետն և այլ երեւելի նախարարները յականէ յանուանէ։ Թէպէտ և

այս կոչուածներու երթալովն՝ սակաւաթիւ Տանուտէրներ միայն պիտի մնային Հայաստանի մէջ, բայց որում նախարարաց կէսն արդէն Թագաւորի մօտ արքունի ձմերոցին մէջ էին և կէսն հիւսիսային կողմը Հոնաց պահակին մէջ, այնու ամենայնիւ փութահալար խորհեցան և որոշեցին երթալ 'ի Դուռըն: Ուստի և երեք ազգերը (Հայք, Վրացիք և Աղուանք) պատգամաւորութեամբ իրարու հետ ուխտ դրին հաստատուն դաշնաւորութեան մէջ մնալ: Ա. Յովսէփ ինքնին ուղեւորեց գնացականները, օրհնելով եւ քաջալերելով:

Նախարարները Պարսկաստան հասան, բայց Դուռը նոյն պատուով և մեծարանքով չընդունեց, ինչպէս առաջ սովորաբար կ'ընդունէր. զօրագլուխ և այրուձի ընդառաջ ուղարկելով, զօրական հանդէսներ կատարելով և իւրաքանչիւրոց նախնեաց վաստակները յիշելով և քաջութիւնները գովելով: Նախարարները 'ի զուր յիշեցուցին Թագաւորին Նորա հաւուն Շապուհ Բի և յաջորդաց շնորհած ազատութիւնները. 'ի զուր յիշեցուցին նախնեաց և իւրեանց ցուցած հաւատարմութիւնը և զինուորական վաստակները 'ի փառս պարսկական տէրութեան. 'Ի զուր յիշեցուցին այս ամենը. վասն զի Թագաւորն ամենեւին չըգիջաւ իւր կատա-

զօրութենէն, այլ անարգանօք մերժեց Նախարարները իւր երեսէն, սպառնացաւ Ակադատան աքսորել, անթիւ զօրք ուղարկել յիւրաքանչիւր աշխարհ. Նոցա կանայքը և որդիքը Խուժաստան տարագրել, եկեղեցիները և վկայարանները քակել, քանդել և աւեր դարձնել։ Այս խստաղութեան աշխարհաւեր սպառնալիքը շատերու համարձակութիւնը քայքայեց, վասն որոյ և ժամանակ խնդրեցին պատասխան տալու համար. և 'ի վերջոյ, ոչ թէ անձանց ազատութեան այլ մանաւանդ աշխարհի աւերանաց առաջն առնելու և առաւել ուժգին դիմադրելու խորհրդով, աղօթեցին, իւրեանց սիրտն ծածկագէտ. Աստուծոյն յանձնեցին և արտաքուստ խոնարհեցան գէթ առ երես և առ ժամն պաշտօն մատուցանել ստութեան, ուստի և ազդ արարին Թագաւորին իւրեանց այս հաճութիւնը։

Զուարճացաւ Թագաւորն, բերկրեցաւ արքունիքն, պատուեցան Նախարարք, տօնեցաւ օրն, և աւետիք ցնծութեան առաքեցաւ մոգաց և մոգպետաց, ատրուշանաց և ամեն մեծամեծաց, որպէս թէ դիք օգնութիւն հասան և որոշուեցաւ Նախարարները իւրեանց հայրենիքը դառնալ։ Բայց որովհետեւ տակաւին խաղաղ անկասկած չէր Թագաւորն, ուստի և պատանդ պահեց

իւր մօտ Վրաց Վազգէն և Աղուանից Վաչէ թագաւորները, Գուգարաց Աշուշայ բդեշխն և Վասակայ երկու որդիքը՝ Բաբիկ և Ամիրներսէհ. իսկ միւսները հետ գնելով բազմաթիւ այրուձի և 700 մոգեր ուղեւորեց, ինքնին բաւական տեղ ուղեկից լինելով և պատուիրելով, որպէս զի վաղվաղակի հանեն և աշակերտեն մոգութեան Հայք, Վիրք, Աղուանք և այլ Քրիստոնեայ ազգերը։ Մոգերը խնդութեամբ կը վազվազէին, վիճակ կը ձգէին ճանապարհին և փայտ կ'ընկենուին, թէ ո՞ր լեզու կամ ո՞ր ազգ որո՞ւ վարդապետութեանը պիտի աշակերտէ։ Ունէին իւրեանց հետ արքունի հրովարտակ եւս, որով հրամայուած էր, մինչեւ Նաւասարդ ամիսը, ամեն բան 'ի կատար հանել, այն է եկեղեցեաց դռները փակել և կնքել, սպասները գրով և համարով յարքունիս գրաւել, եկեղեցական պաշտամունքները և Ս. Գրոց ընթերցմունքները դադարեցնել, քահանայից արգելուլ, որ ժողովուրդը չուսուցանեն. հաւատաւոր մենակեցաց արանց և կանանց հանդերձները փոխել ըստ աշխարհական կարգի. Նախարարաց կանանցը և ազատաց ու շինականաց դստերացը ուսուցանել ուսումն մոգութեան, (վասն զի կանանց քրիստոնէական բարեպաշտութիւնը առաւել արգելք էր

մոդապաշտութեան). ըստ Քրիստոնէական օրինաց ամուսնութիւնն կարծել և բազմակնութիւն հաստատել ազգապղծութեամբ հանդերձ, (որպէս թէ Հայոց ազգի բազմանալու համար). պատրուճակներն անյագ չը զենուլ, հայք առանց փանդամի չը զանգել, ծիւզք և քակոքք 'ի կրակ չընկենուլ, և ձեռքերը չը լուանալ առանց կովմիզը, որուն զրադաշտական մատեանը սրբիչ զօրութիւն կ'ընծայէ։

Նոյնպէս էր ահա Յազկերտի հրամանը, որով կը ձգտէր Քրիստոնէութիւնը բառնալ և պարսկական սովորութիւնները Քրիստոնէից մէջ մուծանել։ Նոյնպէս է գոգցես և ամեն տիրապետ բռնակալաց ընթացքն, որոնք իւրեանց իշխանութեան հետ կը ջանան իւրեանց սովորութիւնները, ծէսերն և մոլութիւններն ևս մուծանել որ և իցէ հպատակ երկրի կամ ազգի մէջ։

Բ.

Մուտ մոգախուժք բանակին հանդերձ Նախարարօք ՚ի Հայաստան, և դիմադիր յուզումն ժողովրդեան. — Շուարումն մոգպետին. — Նենգութիւն Վասակայ. — Ուխտ սուրբ քահանայից և Նախարարաց ՚ի Շահապիվան. — Ուրացութիւն և դարձ Վասակայ. — Յաղթանակ քրիստոնէութեան. — Գործ հալածանաց յերկրէն Աղուանից. — Մերժումն Յունաց զխնդիր օգնութեան Հայոց. — Բաժանումն հայկական զօրուն յերիս մեծ զօրաբանակս. — Յաղթութիւն Աղուանից աշխարհին մէջ. — Փախուստ Վասակայ յերեսաց Վարդանայ. — Պատգամաւորութիւն Վարդանանց և Վասակեանց ՚ի Տիզբոն. — Նենգ թողութիւն պարսկական արքունեաց և ահեղ պատրաստութիւն պատերազմի։

ՆԱԽԱՐԱՐԱՑ յանձնառութեան վրայ ոչ միայն դառնացած էին բանակի մէջ գըտնուած ուխտապահ երէցները, այլ և Պարսիկներէն՝ շատերն ևս ՚ի ծածուկ կըցաւակցէին։ Նոյն ուխտապահ երէցները դառնապէս լալէն և Նախարարները սաստիկ կշտամբելէն զկնի (ըստ որում անտեղեակ էին նոցա ծածուկ խորհրդէն), արդէն նոցա չար յանձնառութեան և պարսկական պատրաստութեան գոյժը պատգամաւորի ձեռքով վաղագոյն հասուցած էին հայրենի աշխարհը։ Տակաւին մոգական բանակն և Նախարարք Հայաստան հասած չէին, որ բովանդակ աշխարհն սկսաւ խռովիլ և յուզիլ։

Եպիսկոպոսները շուտով սփռեցան իւրաքանչիւր գաւառաց մէջ, քորեպիսկոպոսները տարածուեցան գիւղերու և ագարակներու մէջ, քարոզեցին և դրդեցին բոլոր ժողովուրդը — արք և կանայք, ազատք և շինականք, քահանայք և մենակեացք — և քաջալերեցին, որ ամենքը ընդդիմանան և չը թողուն ամենևին, որ Պարսկաստանէն դիմող խումբը Հայաստան մտնէ։ Այս պատճառաւ երդուեցան և ուխտեցին ամենքը, որ մի միայն աստուածային օրինաց հպատակին և չը խնայեն բնաւ, ոչ ազգականք՝ ազգականին, ոչ ծառայն՝ տիրոջը, ոչ կինը՝ առն, ոչ որդին՝ հօրը, և ոչ եղբայրը՝ եղբօրը, եթէ ուրացած են քրիստոնէական կրօնքը. և այս ուխտով ամենքը զէնք առին, արք և կանայք, զրահ հագան և պատրաստուեցան։

Մինչդեռ այսպէս կազմ և պատրաստ էր բոլոր Հայաստան աշխարհն իւր հաւատոյ և հայրենի օրինաց պաշտպանութեան համար, Նախարարները պարսկական զօրաց և մոգուց հետ Հայաստան հասան և բանակեցան Ծաղկոտն գաւառի Անգղ գիւղաքաղաքի մէջ։ Դադար առին այն տեղ 25 օր, և ապա Մոգպետը մոգերովը հանդերձ փորձ փորձեց Միաշաբաթի օրը եկեղեցին մտնել և գրաւել։ Ս. Ղևոնդ, որ ուրիշ երիցանց հետ միասին, պաշտօն կը մատուցանէր նոյն

եկեղեցւոյն մէջ, ընդդիմացաւ մոգական խուժբին և իսկոյն ժողովուրդը յուզեցաւ եւ մեծ բազմութեամբ յարձակեցաւ մոգերուն վրայ: Բրածեծ և գլխապատառ վանեց ամենքը և սարսափ ձգեց մոգակրօններուն սիրտը: Մոգպետը զարմացաւ Հայոց հաւատոյ հաստատութեան վրայ և միանգամայն յուսահատեցաւ տեսլով մարզպանին (Վասակայ) և այլոց. «Թող գրեմ և ցուցանեմ մեծ Թագաւորին, զի 'ի բաց Թողացուցանէ զայսպիսի կրաց առաջարկութիւն. զի եթէ ինքեանք աստուածքն եկեղեցին յօգնութիւն, չէ հնար օրինացս մոգութեան 'ի Հայս տանել զհաստատութիւն, որպէս զփորձ առի միաբանութեան ուխտին Եկեղեցւոյ: Զի եթէ էին զօրք աշխարհիս մոգք, ոչինչ խընայէին սոքա 'ի նոսա սատակմամբ՝ ոչ միայն զարտաքինսն, այլ և յեղբարս և յորդիս և յամենայն մերձաւորս իւրեանց, նա և ոչ յանձինս իւրեանց: Մարդք՝ որք ոչ 'ի կապանաց զանգիտեն և ոչ 'ի տանջանաց երկընչին, և ոչ 'ի ստացուածոց պատկառին. և որ յետոյն չար է քան զամենայն չարիս, մահ քան զկեանս ընտրեն. ո՞վ է որ կարէ նոցա դիմակաց լինիլ» (1): Յիշեց նմանապէս մոգպետը Շապուհ Թագաւորի ժամանակ

(1) Եղիշէ, Գ. յեղանակ:

Հայոց յուցած քրիստոնէական անվեհերու-թիւնը և արիութիւնը (զոր լսած էր իւր նախնիքներէն) և յանդիմանեց մարզպանը , որ 'ի մանկութենէ անտեղեակ էր իւր ազգի հաստատամտութեանը և յառաջագոյն իմաց-ուած չէր, որ նոյն օրինակ առաջարկութիւն չառնեն Հայոց ։

Սակայն Նենգամիտն Վասակ քաջալերեց մոգպետն երկայնամիտ լինելու և սկսաւ իւր հնարագիտութիւնները գործ դնել ։ Մի կողմէն զօրք հանեց Միւնեաց աշխարհէն և իւր գունդը ստուարացուց . միւս կողմէն սկսաւ նենգել և պատրել , ոմանց սիրտը շահել պատիւներով և յարքունուստ բեր-ուած կարասիներով, ոմանց միտքը ողոքել պարգևներով և ռոճիկներով, շինականնե-րը վախցնել սպառնալիքով , իսկ ազատաց համար խնճոյքներ կազմել և բոլոր գիշերը պարուց, ըմպութեան և արբեցութեան մէջ մաշել և քրիստոնէական եռանդը զեղխու-թեամբ թուլացնել ։ Մոգեր բաժնեց նա-խարարաց տներու մէջ, ռոճիկները առատա-ցոյց, պատրուճակներ զոհել տուաւ, յաղա-ծոյ միս կերցնելով և յերկրպագութիւն ա-րեգական հրապուրելով ։ Հալածանքը կարող չէ քրիստոնէութիւնը թուլացնել, բայց հեշ-տութիւնը և աշխարհասիրութիւնը կարող են քրիստոնէական հուրը մարել, և այսպէս

իսկ եղաւ․ որովհետեւ Վասակայ հնարքնե-
րով շատերը մոլորեցան եւ շուտով քանի մը
ատրուշաններ շինուեցան, եւ նոյն իսկ քրիս-
տոնէից մէջէն քրմապետ կարգուեցան Շա-
ւասպ Արծրունի եւ Շերոյ, որդին Վնտոյի։
Այս ամէն չարագործութեանց մէջ Վասակ
տակաւին կը կեղծաւորէր եւ զինքն կը ծած-
կէր եւ անհամամիտ կը ցուցնէր։ Բայց ե-
պիսկոպոսները շուտով յաջողեցան ուխտա-
պահ եւ ուրացող նախարարները իրարմէ բա-
ժանել եւ մանաւանդ Վարդանայ մտաց հաս-
տատութեանը հասու լինելով՝ մեծ վստահու-
թիւն ստացան։ Վարդան առնելով Վասա-
կայ եւ նորա գործակցաց պատրուակեալ ազ-
գամատնութիւնը եւ չը ժուժալով՝ ծածկա-
բար ուղեւորեցաւ իւր տունով Յունաց
բաժինը անցնելու․ սակայն շուտով պատ-
գամաւորներ ուղարկուեցան Վասակայ թղ-
թով եւ Բասենոյ սահմանէն յետս կոչուե-
ցաւ։ Նախարարները խորհրդի ժողովեցան
Շահապիվանի զօրանիստին մէջ, Սպարապետի
(Վարդանայ) մօտ, եւ եպիսկոպոսներն եւս
իւրեանց սրտի նեղութենէն յանդէտս նոյն
տեղը դիմեցին աղաղակելով․ « Աղաչեմք ըզ-
ձեզ զամենեսեան սուրբ Աւետարանաւս,
եթէ ձերով խորհրդով գործեն զայն անօրէ-
թեան չարիս մարզպանն եւ մոգպետն․ նախ՝
զմեր պարանոցս հատէք, եւ ապա յեկեղեցին

ձեռնարկեցէք։ Այս թէ առանց ձեր կամաց նոքա զայն չարն գործեն, այսօր խնդրեսցի վրէժդ այդ ի նոցանէ »(1)։ Նախարարները միաբերան յայտնեցին, որ անքակ են հաւատոյ սուրբ ուխտին վրայ և նախանձախնդիր են փառաց Եկեղեցւոյն։ Աստի ամենքը գլուխը գետին հարկանելով և Աւետարանն ու եպիսկոպոսները ողջունելով՝ ուխտեցին տանուտէրքը և սեպուհք, և որոշեցին Յունիս ամսոյն մէջ պատրաստել խաչանիշ դրօշը ի պաշտպանութիւն քրիստոնէական կրօնի։ Այս խորհրդին անհաւան գըտաւ Օղանդան անուամբ սեպուհ մի, կամակից մարզպանին, և առժամայն քարկոծեցաւ, որով և սարսափ տիրեց ամեն տեղաց։

Այնուհետև բոլոր բազմութիւնը սուրբ նախանձով բորբոքուած՝ վառեցան ի վէճ և ի գրաւ, և գունդը երեք բաժնելով շըղապատեցին Վասակայ զօրքը, կամակորները կոտորեցին և զնոյն ինքն Վասակն ձերբակալ արարին. սակայն նա եպիսկոպոսաց ոտքը ընկնելով թողութիւն խնդրեց. երդումն կնքեց և կապեց Աւետարանէն, և որոնք տակաւին Աւետարանը մատանեաւ չէին կընքած, կնքեցին և եպիսկոպոսաց տուին։

(1) Եղիշէ. Գ. յեղանակ.

Սոդպետը արդէն իւր զօրութիւնը կեդրոնացուցած էր Բագրեւանդի մէջ, Հայք յարձակեցան Զարեհաւանի (Արեգաւանի) կրակատան վրայ, ուր էր մոգերու բազմութիւնը, ատրուշանը քանդեցին, կրակը խափուցին, մոգերը բռնեցին եւ միւս օրը շատեր սպանին, Աշկան հազարապետն, Շաւասպ եւ Շերոյ ձերբակալ արարին Նըրնայ մէջ եւ ահ ու սարսափ տարածեցին։ Վաղվաղակի դիմեցին Պարսից գրաւած բերդերուն եւ աւաններուն վրայ, առին Արտաշատ, Գառնի, Անի, Արտագերք, Խորանիստ, Ծախանիստ, Վաստակաշատ եւ այլք, ագարակներով եւ ամրոցներով հանդերձ։ Նշեւելի Պարսիկները բերդերու մէջ կալանաւորեցին իւրեանց պատանդներու փոխարէն, զորս թողած էին Պարսկաստանի մէջ։ Բոլոր ատրուշանները կործանեցին, Քրիստոսի Խաչը վերստին ամեն տեղ կանգնեցին, սեղան ուղղեցին, կենարար Խորհուրդը մատուցին եւ երկնաւոր ուրախութեամբ զմայլելով ցնծացաւ ամենայն երկիրն առհասարակ։ Նոքա, որ եկած էին Հայաստանը աւերելու եւ եկեղեցիները կողոպտելու՝ իւրեանց գանձերը եւ աւարները թողլով փախան, եւ ոմանք եւս մոգաւթեան կրօնքն ուրանալով Աւետարանը խոստովանեցան։ Այսպէս սըրբեցին հայրենիքը կռապաշտութեան պըղ-

ծութիւնէն, և ոմանք մինչև Նորպատական արշաւեցին և մոգութեան գործութիւնք խորտակեցին. «Վասն զի ամենայն տղայք աշխարհին իբրև զօրս պատերազմողս խիզախէին. վասն զի, այս բարբառ ստէպ ստէպ ընթանայր — քաջութեամբ միայն մեռցուք զանուն և զոգիս և եթ ժառանգեսցուք. զի կենդանի կցէ ՚ի մեզ Քրիստոս»[1]։

Մինչդեռ այս յաղթութեամբ կը ցնծար Հայաստան աշխարհ, Նշուանից հազարապետը մի եպիսկոպոսի հետ գնաց բերաւ, որ Հոնաց աշխարհի պարսիկ գունդը Սեբուխտ զօրավարի առաջնորդութեամբ և երեք հարիւր մոգերով դարձած և մտած են Նշուանք. աշխարհը կը պառակտեն, կըստիպեն մոգութիւնն ընդունիլ և ընդունելու համար կը խոստանան հարկը թեթևցընել, իսկ եթէ չընդունին, կըսպառնան բռնի ամեն գեղերու և աւաններու մէջ ատրուշաններ շինել, Վռամական կրակն ՚ի ներքս մուծանել, մոգպետներէն օրէնսդիրներ կարգել, և ստահակները՝ որդւով և կանամբ տարաշխարհիկ տանել։

Հայք ամենեքին չըլլան այս հաստատութեան դուժէն, այլ քաջալերեցին Նշուանից հազարապետն ու եպիսկոպոսը և

(1) Եղիշէ, Գ. յեղանակ։

չեա դարձուցին, որ առժամանակ մի ան-
բանից առաջին առնուլ և մանաւանդ եկե-
ղեցիները պահպանեն։ Իսկ իրենք Ատոմ
Գնունին և Վարդանայ եղբայր Համայեակն
շտապաւ Արեւմուտք առաքեցին, իւրեանց
կատարած քաջութիւնը իմացնելու Թէո-
դոս կայսեր և օգնութիւն խնդրելու, որոյ
մասին Յովսէփ կաթողիկոսը Մարզպանի,
Սպարապետի և մեծամեծ նախարարաց հա-
ւանութեամբ նամակ եւս գրեց։ Սակայն
Թէոդոս յանկարծամահ լինելով և տեղը
Մարկիանոս թագաւորելով, չար խրատո-
ւաց թելադրութեամբ, ոչ միայն անտես
արար Հայոց խնդիրը, այլ և դաշն հաստա-
տեց Պարսից հետ։ Բայց Յունաց և Պար-
սից այս դաշնաւորութիւնն անգամ չըկա-
րաց խախտել Հայոց քրիստոնէական ուխ-
տը և արիական ոգին։ Իւրաքանչիւր նախա-
րարական և ոստանիկ (արքունի) տանէ ժո-
ղովեցաւ բազմաթիւ այրուձի և հասարա-
կաց հաւանութեամբ զօրքը երեք մեծ գունդ
բաժնուեցաւ։ Առաջին գունդը յանձնուե-
ցաւ Ներշապուհ Ռմբոսեան Արծրունի իշ-
խանին և ուղարկուեցաւ ի Հեր և ի Զա-
րեւանդ, որ Ատրպատականի սահմանին
վրայ Հայոց աշխարհը պարսկային արշաւան-
քէ պաշտպանէ։ Երկրորդ գունդը յանձնը-
ւեցաւ Վարդան սպարապետին և առա-

ջնցաւ Պրաց սահմանը, Խորայի մարզպա-նին (Սեբուխտի) դէմ, որ Հոնաց երկրէն արշաւած էր Աղուանից վրայ։ Իսկ երրորդը յանձնուեցաւ Վասակին, որ Սիւնեաց աշխարհի մէջ՝ ժողովրդի անդորրութեանը հսկե-լու ։ Վասակ գումարած էր իւր շուրջ իւր գաղտնի համախոհները, ուստի և պատըր-ուակաւ Սիւնեաց աշխարհը քաշուեցաւ, որպէս թէ գարանամուտ լինելու և ըստ հարկին յանկարծուստ պարսկային գնդի վը-րայ յարձակելու և Վարդանին օգնելու։ Սակայն, ընդհակառակն սկսաւ ծածկաբար տեղեկութիւն տալ Սեբուխտին Հայոց աշ-խարհի վիճակին և Վարդանայ զօրաց սա-կաւութեան վրայ։ Սեբուխտ, քանի մի թա-գաւորազանց հետ, Խորայի կողմէն անցաւ Կուր գետի այս կողմը և Ուտէացւոց Խաղ-խաղ քաղաքի հանդէպ ճակատեցաւ Վար-դանայ հետ։ Պարսից գնդի աջ թեւն խոր-տակեցաւ և փախստականներէն ոմանք գե-տավէժ եղան և ոմանք Լափնաս գետի դա-բափոստերուն մէջ կոտորուեցան և գործը խա-կոյն Նիւշապուհի պարսկային բանակին հա-սաւ ։ Իսկ Հայոց կողմէն Մուշ սեպուհն միայն ճախճախուտ ձորերուն մէջ կորաւ։

Հայոց զօրքերը մտան Աղուանից երկիրը, Պարսից գրաւած ամրոցները պատերազմաւ առին, կրակատունները կործանեցին և մե-

գերը կոտորեցին. Աղուանից ազատները և չինականները, որոնք Պարսից երկիւղէն ամրացած էին լերանց և անտառաց մէջ, դարձան միացան Հայոց զօրաց հետ և յարձակեցան Հոնաց կամ Ճորայ պահակին վըրայ, (զոր չինած էր Պարսից Թագաւորը Հոնաց արշաւանքը արգիլելու համար) պահակապանները կոտորեցին, և դուռը յանձնեցին Վահանայ, որ Աղուանից Թագաւորաց ազգէն էր, և որ պատգամաւոր գնաց Հոնաց աշխարհը, և դաշինք հաստատեց նոցա հետ Պարսից դիմագրաւելու համար.

Մինչդեռ Վարդան կը շարունակէր իւր յաղթութիւնները Աղուանից երկրին մէջ, յանկարծ դոյժ հասաւ, որ Վասակ քրիստոնէութեան ուխտէն յետս կալով, հրձիգ կ՚առնէ գիւղերը, կը կործանէ բերդերը, կը գրաւէ զօրաց կայանքները և ձմերոցները, ուխտապահ նախարարաց կանայքը և ընտանիքը կը կալանաւորէ ամրոցներու մէջ, եկեղեցիները կը կողոպտէ, քահանայքը կը կապէ, և Ներշապուհ Ռմբոսեանի գունդը հեռու լինելով տակաւին չը կարաց օգնութիւն հասնել աշխարհի նեղութեանը:

Սպարապետն Վարդան այս գոյժն առնելով՝ ժողովեց իսկոյն իւր զօրքերը և երկու օրուան մէջ (ըստ այլոց մի ամսուան), շտապաւ Հայաստանի սահմանը հասաւ,

որոյ յաղթութեան հռչակէն և ահէն սարսափելով Վասակ, թողաւ գերին և աւարը և աճապարանօք Այրարատեան գաւառէն փախաւ և ապաստանեցաւ իւր երկրին՝ Սիւնեաց աշխարհին մէջ ։ Սպարապետն և իւր նիզակակիցները առին միւսանգամ թագաւորանիստ տեղերը և ամրոցները և երկիրը անդորրացուցին ։ Բայց որովհետեւ ձմեռը հասած էր, զօրքը սփռեցին աշխարհի մէջ, և սակաւաթիւ գունդ միայն առաքեցին Սիւնեաց աշխարհն՝ ուրացեալները հարուածելու ։ Եպիսկոպոսապետն Յովսէփ պատուիրեց որ բոլոր Քաղոց ամիսը պահք պահեն և Աստուծոյ օգնութիւնը խնդրեն երկրի խաղաղութեան և քրիստոնէական յաղթանակի համար, և ապա 'ի նշան գոհութեան և 'ի յիշատակ մեծ յաղթութեանն սահմանեց տօնել տօն տարեկան Քրիստոսի Յայտնութեան տօնին հետ ։

Բոլոր ձմեռը բովանդակ Հայաստան աշխարհն երկու բաժնուած էր. — Արարատեան կողմն ունէր Սպարապետն Վարդան իւր ուխտապահ նիզակակիցներով, որք էին Ներշապուհ Արծրունի, Խորէն Խորխոռունի, Արտակ Պալունի և այլ նախարարք և արքունի գործակալք իւրաքանչիւր զօրքով, ուրացելոց տեղը ընտրելով նոցա եղբարքն ու եղբօրորդիքը ։ Միացած էին սոցա հետ բո-

լոյ եկեղեցականք 'ի մի շուրջ և 'ի մի հոգի. Գրաւած ունէին աշխարհի ամուր տեղերը և ունէին շատ զէնք, զոր մանաւանդ ձեռք բերած էին Աղուանից պատերազմէն զկնի։ — Իսկ Արեւելեան կողմը գրաւած ունէր Մարզպանն Վասակ, որոյ հետ միացած էին պատրուած նախարարները — Արտակ Ռշտունի, Գադիշոյ Խորխոռունի, Գիւտ Վահեւունի և այլք, որոց կամակից էր նա և Վասակ Մամիկոնեան կուսակալ յունական բաժնի Հայոց։

Երկու կողմէն եւս պատգամաւոր առաքեցին Տիզբոն Պարսկաստանի արքայանիստ քաղաքն, նախ Վասակեանք և ապա Վարդանանք։ Վասակեանք ուղարկած էին սեպուհ մի, իսկ Վարդանանք նշանաւոր Պարոյկ մի, զոր կալանաւորութենէ արձակեցին, յայտնեցին որ թագաւորը 'ի զուր և յանիրաւի կը ներդէ քրիստոնէական կրօնքը ուրանալ, ցուցին որ այս բռնի հրամանն է պատճառ երկրի աւերանացն ու արքունի զօրաց կոտորածին, պատմեցին նմանապէս Վասակայ ստապատութիւնքը, յայտնեցին որ Հայք նորա հետ ամենեւին միաբան չեն, և խնդրեցին որ այս ամենը մի առ մի պատմէ թագաւորին։ Երբ Վարդանանց պատգամաւորը Տիզբոն հասաւ, (ուր կանխած էր արդէն Վասակեանցն), և պատմեց

ամէն աղէտից պատճառները, Թագաւորն ակամայ ինչ մեղմացաւ և իսկոյն արքունեաց խորհրդով Թողութեան հրովարտակ հանեց, չարչարանաց մատնուած քրիստոնեայքն ազատեց, կալանաւոր նախարարազուններն արձակեց և ռոճիկներով ու ստացուածներով մեծարեց և քահանաներուն հըրաման տուաւ, որ ազատաքար պաշտոն կատարեն: Բայց այս արքունի Թողութիւնը կամ ազատութիւնն առ ժամանակեայ էր, Հայերը հանդարտեցնելու համար, (որուն և Հայք չըհաւատացին). վասն զի շուտով իւր խորհուրդը փոխեց Թագաւորը և հաստատ որոշեց, որ հնարագիտութեամբ չըյաջողածները, զէնքի զօրութեամբ կատարէ. ուստի և մեծ բանակ կազմելով Միհրըներսեհի հրամանատարութեամբ Հայաստան ուղարկեց: Պարսկական այս ահագին զօրախումբը փղերու երամակով հանդերձ եկաւ և բանակեցաւ Փայտակարան քաղաքի մէջ, 'ի մօտուստ դիտելու Հայաստանի վիճակը և Վասակայ ձեռամբ ստոյգ տեղեկութիւն առնալու Հայոց զօրութեան և զինուորական հմտութեան վրայ: Միհրներսեհ մերձակայ տեղերաց, Լփնաց, Ճղբաց, Վատաց և այլոց վարձկաններով իւր բանակը ըստուարացուց, յանձնեց Մուշկան Նիւսալաւուրտին, որուն օգնական կարգեց Դոլէճն

և Ատրորմիզդ, (որ առաջ գործակալ էր Հայոց մէջ) և պատուիրեց որ միշտ Վասակայ խորհրդով շարժին, (վասն զի իւր անձէն աւելի նորա վրայ էր վստահացած, Հայոց աշխարհին թագաւորեցնելու յուսով մխի Թարեւլէն զկնի) և հրաման տալով որ 'ի գարնան անշուշտ պատերազմն սկսին, ինքն փութով դարձաւ Տիզբոն թագաւորին մօտ։ Այսպէս էին ահա՛ հանգամանքները, և ձմեռը վերջանալու վրայ էր։

Գ.

Ահեղ դիմամարտութիւն քրիստոնէութեան ընդդէմ մոգակրօնութեան։ — Նահատակութիւն Վարդանանց — Վշտակրութիւն և արիութիւն քրիստոնէից յետ մեծի նահատակութեան — Զքնաղ տեսարան քրիստոնէական կենաց — Լերինք և անտառք՝ իբրեւ ապաստանարան քրիստոնէից. — Մարզպանութիւն Ատրորմիզդի. — Կապանք սուրբ քահանայից. — Ճամբով 'ի Դուին. — Կաթողիկոսութիւն Մելիտէ Մանազկերտացւոյ. — Կապեալ քահանայք և նախարարք 'ի ձմերոցն արքունի. — Ատեան վասն դատապարտութեան Վասակայ. — Նախարարք և քահանայք 'ի բանտն Նիւշապուհ քաղաքի. — Տանջանք կապելոց և գարշ մոգպետին. — Նահատակութիւն Ս. Ղեւոնդեանց։

ԱՅՆ ԻՆՉ Հայք ուրախութեամբ կը-տօնէին զատկական օրերը՝ յանկարծ լուր

Հասաւ որ պարսկային գունդը Հեր և Զա-
րեւանդ հասնելով բանակ բոլորած են սահ-
մանին վրայ, փոս հատանելով, պատնէշ
կանգնելով, շերտաւոր փակելով, և ասպա-
տակներ սփռելով աշխարհի մէջ: Հայա-
տան խռովեցաւ. Նախարարաց սիրտը թըն-
դաց և ահն վաղվաղակի իւրաքանչիւրն իւ-
րեանց զօրքով Արտաշատ գումարեցան, ո-
րոց թիւը 66,000 հազարի կը հասնէր: Սպա-
րապետն յարդարեց այս զօրախումբը, զի-
նուց, երիվարաց և հանդերձից պակասու-
թիւնը լրուցանելով և զօրական հանդէս-
ներ կատարելով: Նուանձար սեպուհն առա-
քեցաւ, որ թշնամեաց զօրութիւնը և դիրքը
դիտէ յառաջագոյն, որ յանկարծ 300 (ըստ
Փարպ.) 2000 (ըստ Եղիշ.) հեծելովք յար-
ձակեցաւ թշնամեաց վերջապահ թեւոյն
վրայ և կէսը կոտորելով՝ շուտով Հայոց բա-
նակը դարձաւ: Ուրախացան Հայք այս յա-
ջող դէպքին վրայ, և երբ իմացան թէ թըշ-
նամին պատրաստուած է աշխարհի միջոցը
մտնել, որոշեցին ընդառաջ ելանել սահմա-
նին վրայ և ասպատակութեան ու աւերա-
նաց տեղի չըտալ: Բայց թշնամի բանակը
արդէն աշխարհի միջոցը գրաւելով՝ բանա-
կած էր Արտազ գաւառի Աւարայր դաշտի
մէջ, Տղմուտ գետի ափանց վրայ: Հայոց զօ-
րախումբը հասաւ և բանակեցաւ դէմ յան-

դիմանս Այն տեղ եկած էին նոյնպէս Ս. Յովս-
էփ և Ղեւոնդ երէց, ուրիշ եպիսկոպոսա-
ներով հանդերձ պատերազմին գործակից
լինելու ։ Վասակը պատգամաւորներ կ'ու-
ղարկէր և զօրաց միտքը լքուցանելու համար
Թողութիւն կը հրատարակէր Թագաւորէն,
բայց Հայք չը հաւատացին ուրացեալ ստա-
խօսին ։ Վարդան զօրքը կարգին դրաւ, սրտա-
ռուչ ատենաբանութեամբ ոգեւորեց ա-
մէնքն և Մակաբայեցւոց Գիրքը կարդալով
բանակին առջեւ՝ խրախուսեց 'ի պաշտպա-
նութիւն հայրենի օրինաց և 'ի զոհ վասն
սիրոյն Աստուծոյ ։ Ղեւոնդ երէցն ևս քա-
ջալերական ճառ խօսեցաւ Ս. Յովսէփայ և
այլ ընկերակցաց հրամանաւ պատերազմէ
նախընթաց երեկոյին ։ Նոյն գիշերը չը մկըր-
տուածները մկրտուեցան և զինուորեցան
հաւատոյ զինով ։ Սեղան ուղղեցաւ, ամենա-
սուրբ խորհուրդն կատարեցաւ, և Հոգե-
գալստեան եօթներորդ աւուր խորհրդաւոր
առաւօտուն հաղորդեցան ամէնքը, զօրք և
զօրականք, վառեցան հոգւով և երկնաւոր
նահատակութեան սիրով և ամենայն բաղ-
մութիւնն աղաղակեց միաբարբառ. « Հա-
ւատարեսցի մահ մեր ընդ մահ արդարոցն,
և հեղումն արեան մերոյ ընդ արիւն սուրբ
մարտիրոսացն, և հաճեսցի Աստուած 'ի կա-
մաւոր պատարագս, մի՛ տացէ զեկեղեցի

ջեր՝ ՚ի ձեռս հեթանոսաց » (1)։

Իսկ Պարսից զօրավարը կը յիշեցնէր իւր զօրականներին Թագաւորի հրամանը, իւղը, պսակը ուռն և առատաձեռն պարգևները, որ արքունուստ պիտի տրուէին։ Կը յիշեցնէր իւրաքանչիւրի կինը և որդին, անդն ու ագարակն և փախստէից պատուհասները։ Կը կարգէր, կը կազմէր Մուշկան Նիւսալաւուրտ իւր ճակատն և փղերով հանդերձ կը կացուցանէր ընդ երկայնութիւն դաշտին, իսկ ինքն կ՚ամրանար Մառենիկ գնդին մէջ։

Վարդան ևս արդէն իւր զօրքը երեք գունդ բաժնած, կարգած և սպառազինած էր՝ ոչ միայն ՚ի զէն նիւթական, այլ մանաւանդ ՚ի զինուորութիւն հոգեւոր։ Պայծառ առաւօտը ծագեցաւ, փողարափողները հընչեցան ՚ի նշան պատերազմին, զօրաց աղաղակները բարձրացան երկու կողմէն եւ կռուին սկսաւ նետաձգութեամբ գետի երկու եզերքէն։ Հայոց գունդը յառաջեց գետին անցաւ։ Մէկ կողմէն Պարսից զօրքը կը ցրուէր և միւս կողմէն Մառենիկ գունդը կը քայքայուէր։ Ահագին էր պատերազմն, նիզակները կը ճօճային, հրաձգութիւնք կ՚եռային, աղեղունք կը ճայթէին, վահանք կը կոփէին և ահաւոր ձայնէն և աղաղակներէն

(1) Եղիշէ, Ե. յեղանակ։

գոգցես լերինք և անձաւք կը շարժէին։ Թան-
ձրամիտքն կը յիմարէին և վատասիրտքն կը
լքանէին , քաջքն կը խիզախէին և նահա-
տակքն կը գոչէին , և երկու կողմէն շատ վէ-
րաւորներ դիաթաւալ կը խաղային։ Եւ մինչ-
դեռ յաղթութիւնն Հայոց կ՚երեւէր, Պար-
սիկները սաստիկ յարձակմամբ վերջին ճիգն
կը թափէին և զՎարդանանք աղմկելով շուր-
ջանակի կը փակէին։ Աստանօր մեծ նախճիր
կը գործէր կորովին Վարդան իւր քաջ նիզա-
կակիցներով և կ՚առնուր ՊՍԱԿ ՆԱՀԱՏԱԿՈՒ-
ԹԵԱՆ։ Պատերազմը կը շարունակուէր, գար-
նանային ծաղկալից դաշտը արեան հոսանքով
կը ներկուէր , որը կը տարածամէր և զօրքը
կը վատնուէր կը ցրուէր լեռնադաշտերուն
և ամուր ձորերուն մէջ։ Այսպէս կը կատա-
րուէր այն ահագին պատերազմը (2 Յունի-
սի 451), յորում Պարսիկներէն և Վասակեան
գնդէն կ՚անկանէին 3544 անձինք, իսկ Հայոց
գնդէն 1036 (ըստ Փարպ. 1035) ոգիք միա-
համուռ նահատակեալք վասն քրիստոնէու-
թեան, որոց երեւելիքն էին քաջն Վարդան,
կորովին Խորէն, արին Արտակ, զարմանալին
Տաճատ, իմաստունն Հմայեակ, հրաշակեր-
տըն Ներսեհ, մանուկն Վահան, արդարն
Արսէն, և յառաջադէմն Գարեգին։ Այսպէս
զոհեցին իւրեանց անձը աստուածային սի-
րոյ և հայրենի օրինաց համար այն ընտիր

նահատակները, որոց անմահ յիշատակը կը տօնէ Եկեղեցին անուամբ Վարդանանց զօրավարաց, յանուանէ քաջին Վարդանայ։

Այս նշանաւոր պատերազմէն և նահատակութեններէն զկնի՝ Հայք ամրացան պահապան ամուր տեղեաց մէջ և Մուշկան Նիւսալաւուրտ խաղաղ յուսահատեցաւ, տեսնելով որ անհնարին է մոգութեան օրէնքը Հայաստան մտցնել։ Սակայն Վասակայ խորհրդով փորձ փորձեց Քրիստոնէութեան ազատութիւն խոստանալ պատրանօք և ամբոխները պատերազմաւ գրաւել։ Պաշարեց բերդ մի, ուր ամրացած էր Հայոց մի գունդը սուրբ երէցներով հանդերձ, և երդմամբ խոստացաւ անվնաս թողուլ, եթէ կամովին անձնատուր լինին։ Բայց անուն սպուհը ստապատիր երդմանը չը հաւատալով 700 զօրականով գիշերը փախաւ և նոյն բերդէն ազատեցաւ, իսկ մնացեալները անձնատուր եղան, յորոց 213 անձինք նահատակեցան. և Ս. Յովսէփ և Ղեւոնդ կալանաւորեցան ուրիշ ընկերներով, զորս գանել տուաւ Մուշկան Նիւսալաւուրտ և հրամայեց զգուշութեամբ պահել, վասն զի բողոքեցին ի դուռն Թագաւորին այս նենգութեանց համար և զՎասակ ամբաստանեցին։ Թէպէտ և Մուշկան Նիւսալաւուրտ ազատեց շատ քահանայք, որ աշխարհի շինութեանը և

խաղաղութեանը հոգ տանին և արքունուստ թողութիւն հրատարակեց, բայց Հայք այնուհետև ամենևին չըհաւատացին. յիշեցին իւրեանց քրիստոնէական ուխտը և ընտիր ընտիր նահատակաց կոտորումն, և մարմնաւոր սրտով սկսան մէկզմէկ քաջալերել. «Ո՞ւր պիտոյ է մեզ բնաւ կեանք անցաւոր աշխարհիս. և կամ ընդէ՞ր տեսանեմք զարեւ յետ մերոց սիրելեացն: Ո՜ր եթէ քաջ նահատակքն մեր անկան 'ի մեծ պատերազմին և բազում վիրաւորք տապալեցան յարիւն ապաժոյժ 'ի մէջ դաշտին, և ամենեցուն մարմինք եղեն գէշ թռչնոց և կերակուր գազանաց, և պատուական նախարարք մեր հասին յանարգութիւն թշուառութեան. լքին զիւրաքանչիւր իշխանութիւն և են 'ի հալածանս նեղութեան, և ամենայն փափկութիւն Հայոց եհաս 'ի վիշտս վտանգի և յանհնարին ապականութիւն, ոչ անսամք խաբեբայ հրամանաց թագաւորին և անկանիմք 'ի ձեռս անօրէն իշխանաց (1) »: Թ՚ողլին այնուհետեւ իւրեանց գիւղերը, աւանները և ագարակները. Հարսները եղան առագաստներէն և փեսաները սենեակներէն. ծերերը անկան աթոռներէն և տղայքը մարական գրկերէն: Երիտասարդներն ու կու-

(1) Եղիշէ. Է. յեղանակ.

տաճարները և աշխարհի բոլոր բազմութիւնը ապաստանեցան լեռները և անապատները։ Այս համարեցին աստուածպաշտութեամբ խոտաբուտ ըլլալ և գետնախշտի, քանթէ ուրացութեամբ փափկանալ։ Իւրեանց միակ մխիթարութիւնն էր Ա. Գրոց ընթերցուածները և Սաղմոսաց մրմունջները։ Այնպէս որ, «Ամենայն մարդ յանձն իւր եկեղեցի էր, նոյն ինքն քահանայ, մարմինք իւրաքանչիւր սուրբ սեղան և ոգիք նոցունց պատարագ ընդունելի[1]»։ Ոմանք ամրացած էին Տմորեաց անմատոյց սարաւանդակներուն մէջ. ոմանք Արցախոյ թանձրախիտ անտառներուն մէջ. ոմանք Խաղտեաց և Պարխարու լեռներուն մէջ, և ոմանք աշխարհի միջավայր ամրոցներուն մէջ, որոց ամենեցուն խնդրուածքն այս էր միայն. «Այն տեսանել զաւուր սուրբ եկեղեցեաց[2]»։

Պարսիկ զօրավարն աւելցնելով իւր այրուձին կը յարձակէր այս ամրոցներուն վրայ, և Թէպէտ ճակատ առ ճակատ չէին մարտընչէր, բայց կտորածները կը շարունակէին։ Կապուտ լերան մէջ Հայք խորտակեցին Պարսից հրոսակը և միայն Արշէն երէցը կալանաւորեցաւ, որ իջած էր Վասակայ սիրտը մեղմացնելու։ Նմանապէս Տմորա-

(1) Եղիշէ. Ե. յեղանակ. (2) Եղիշէ. Ե. յեղանակ.

կան ամրոցէն յարձակեցան և պարսկային գունդը ջարդեցին։ Տայոց ձորագաւառին մէջ ևս յաղթութիւն գործեցին Հայք ՚ի վրէժխնդրութիւն երկու այրած եկեղեցիներու, ուր նահատակեցաւ Վարդանայ Հմայեակ եղբայրն։ Նոյնպէս Արցախայ անտառներուն մէջ ապաստանածները ըստ դաշնադրութեան օգնութիւն տանալով Հոնաց կողմէն՝ պարսկային գնդի վրայ կը յարձակէին և կը խորտակէին։

Այս մանր պատերազմաց մէջ եղած կոտորածներն ևս առաւել վհատեցուցին Մուշկան Նիւսալաւուրտի սիրտը, ուստի յարձակումները դադարեցոյց և Թագաւորին տեղեկութիւն տուաւ անօգուտ կոտորածներուն և Հայոց դիմադարձութեան մասին։ Թագաւորն շատ տրտմեցաւ, ուստի և Միհրներսեհի խորհրդովը հրաման առաքեց, որ Մուշկան Նիւսալաւուրտ բոլոր բանակով Հայաստանէն ելնէ և Հոնաց վրայ երթայ, Վասակ պարսկաստան դառնայ և մարզպանութիւնը Ատրորմիզդին յանձնուի, որուն և պատուիրեցաւ ջանալ աւելի սիրով քան թէ պատերազմաւ երկիրը նուաճել։ Ատրորմիզդ արքունի թողութիւն հրատարակեց Հայաստանին մէջ և իւր մօտ կոչելով եպիսկոպոսներն և երէցները, (Սահակ եպիսկոպոս Ռշտունեաց,

Մուշէ երէց Արծրունեաց, Սամուէլ և Աբրահամ քահանայք, Յովսէփ կաթողիկոս, Ղեւոնդ երէց, Քաջաջ սարկաւագ և Արշէն երէց), որոց ոմանք ատրուշաններ աւերած էին և ոմանք երկրի աւերանաց համար առ Թագաւորն բողոքած, և չղթայակապ տանելով արքունիքն առաքեց իւրեանց աշակերտներով հանդերձ, որոց մէջ երեւելի էին Խորէն երէց Արարատոյ և Աբրահամ երէց Տայոց: Այս անձնադիր հովիւներն և ուրացեալն Վասակ ճանապարհին իրարու հանդիպեցան և ողջունեցան, բայց սոքա ուշացան ճանապարհորդութեան մէջ, որովհետեւ կապուած կ'երթային. իսկ Վասակ մեծ ակնկալութե պատիւ յուսով խաբուած, շուտ հասաւ Պարսկաստան, և զինքն արդարացնելու համար՝ ամեն հնարք 'ի գործ դրաւ, մեղադրելով մանաւանդ Սպարապետն Վարդան: Սակայն Թագաւորն յետաձգեց ամբաստանութեան դատը մինչեւ կոչուածներուն գալուստը:

Նորորմիզդն կապեալները արքունիքը ուղեւորելէն զկնի՝ Հայոց աշխարհի միւս եպիսկոպոսները ազատ թողուց, որ իւրաքանչիւրն հրապարակաւ վարէ իւր տեսչական պաշտօնը, երկրի հարկը առ վայր մի թեթեւացոյց, մենակեցներուն և փախըստականներուն հրաման տուաւ, որ իւրեանց

տեղերը դառնան և նաև արքունի հրամանաւ թողութիւն հրատարակեց, որ քանի մոգութեան կրօնքը ընդունողները՝ վերըստին իւրեանց քրիստոնէութիւնը համարձակ պաշտեն։ Նախարարները տեսնելով այս արքունի շնորհումներն և երկրի շինութեան և խաղաղութեան փափաքը, դարձան ամրոցներէն և հեռաւոր օտարութենէն իւրեանց կալուածները։ Շատ չանցաւ, նախարարք արքունի դուռն կոչուեցան, իբր թէ ամէն աղէտից պատճառներն քննելու և խաղաղութեան դաշն հաստատելու համար։ Նախարարք համաձայնութիւն ցուցին, մանաւանդ որ իրենք ևս կը ցանկային Ս. Եպիսկոպոսաց և Երիցանց հետ Վասակայ դատին ներկայ լինիլ։ Ուստի և ամենեքեան ժողովեցան Դուին քաղաքը, ժողով կազմեցին եպիսկոպոսաց և տանուտերանց հետ և միաբան հաւանութեամբ Մելիտէ Մանազկերտացին ընտրեցին կաթողիկոս Յովսէփայ տեղ. (յորմէ հաւանութիւն ունէին,) կաթողիկոսական աթոռը Դուին փոխեցին և ապա 'ի շնորհս մարզպանին թողին բոլոր աշխարհը, իւրեանց կանայքը, որդիքը և ստացուածքը և ուղեւորեցան 'ի ձմերոցն արքունի, առաւել չարչարակից լինելու սուրբ կապելոցն, քան թէ բարիք քաղելու մոգպաշտ արքունիքէն։

Նախարարներն հասան արքունի ձմերո-
ցըն, ուր կային ոչ միայն սուրբ եպիսկոպոսներն
ու երէցները, այլ և ուրիշ նախարարազուն-
ներ յառաջագոյն արգելուած նոյն տեղը, ո-
րոց մէջ էին Ատոմ և Վարդանայ Հմայեակ եղ-
բայր երեք մատաղահաս որդիքը Վասակայ
հրապուրանօք կալանաւորուած։ Բայց Վրաց
և Աղուանից Վազգէն և Վաչէ Թագաւոր-
ները մոգութեան կրօնքը ընդունելով դար-
ձած էին արդէն իւրեանց աշխարհը։ Վաչէ
ու երեսս միայն ուրացած էր, որ և յետոյ
պատերազմներ մղեց Պարսից դէմ և Թագա-
ւորութենէ հրաժարելով կրօնաւորեցաւ.
իսկ Վազգէն 'ի բոլոր սրտէ, որ և իւր բա-
րեպաշտ ամուսինը (Մեծին Վարդանայ
Շուշանիկ դուստրը) վեց տարի նեղութիւն-
ներ տալով հրապուրեց 'ի մոգութիւն եւ
երբոր չըկարաց տանջանօք նորա հաստատուն
հաւատքը խախտել, նահատակել տուաւ,
որոյ գերեզմանը կայ մինչեւ ցայսօր Տփխի-
սի Մետեխ ամրոցի եկեղեցւոյն մէջ։

Նախարարները փոխանակ ընդունելու-
թիւն գտնելու Թագաւորէն և Միհրներսեհ
հազարապետէն, կապանօք մահապարտաց
բանտն դրուեցան, ուր էին ուխտապահ ե-
րիցունք և այլք։ Քանի մի օրէն զկնի հարցա-
փորձի ատեան բացուեցաւ, նախ Միհրներ-
սեհի և ապա Թագաւորին առջեւ հրապա-

բակաւ ։ Ատեան կոչուեցան ինչպէս Վասակ եւ այլ ուրացեալները, նոյնպէս եւ ուխտապահ կապեալները, նախարարք եւ երիցունք։ Վասակ ամբաստանուեցաւ ոչ միայն նախարարներէն եւ երէցներէն, այլ իւր ազգականներէն, այլ եւ մոգերէն եւ Նիւսալաւուրտէն, ուստի եւ Թագաւորի առջեւ կողոպտուեցաւ իւր ամեն պատուանշաններէն եւ պատուազգեստէն, կապուեցաւ որպէս պատժապարտ, եւ 'ի նշան անարգութեան մատակ ձիու վրայ հեծած տարուեցաւ մահապարտաց բանտն, եւ նորա փոխանակ Սիւնեաց իշխան կարգուեցաւ Վարազվաղան ։ Բայց նախարարներն եւ երէցները եւս չազատեցան, այլ կապանօք վերստին բանտը դրուեցան ։ Ուխտապահները ուրախ էին եւ զուարթ իւրեանց կալանաւորութեան մէջ անգամ, վասն զի երկնաւոր սիրով վառուած էին. իսկ Վասակ կը հաչէր եւ կը մաշէր, վասն զի երկնաւոր սէրն ուրացած էր եւ երկրաւոր փառքէն եւս զըրկուած, ուստի եւ դառն ցաւերով մահացաւ. «Եւ այն, որ կամէրն Թագաւոր լինիլ մեղօք՝ Հայոց աշխարհին, ոչ երեւեցաւ տեղի գերեզմանի նորա ։ Ոչ յիշեցաւ անուն նորա 'ի մէջ սրբոց եւ ոչ մատեան յիշատակ նորա աւաջի սուրբ սեղանոյն յեկեղեցւոջ» (1)։

(1) Եղիշէ, Է. յեղանակ.

Յազկերտ պատրաստուեցաւ խաղալ պատերազմաւ Քուշանաց դէմ, հրամայեց կապանօք տանել սուրբ քահանայքն ու նախարարները և կալանաւորել Ապար աշխարհի Նիւշապուհ քաղաքի ամուր դղեկին մէջ և նոյն երկրի մեծ դենպետին կամ մոգպետին պատուիրել, որ ողոքանօք կամ տանջանօք մոգութեան դարձնէ։ Քահանայից հետ կապուած և բանտի մատնուած նախարարաց գլխաւորներն սոքա էին — Սիւնեաց տոհմէն Բաբգէն և Բակուր եղբարք, Արծրունեաց տոհմէն Շաւասպ, Արսամ, Մեհրուժան, Պարգեւ և Տաճատ. Մամիկոնեան տոհմէն Համազասպեան (եղբայր Վարդանայ) Համազասպ, Արտաւազդ և Մուշէ. Կամսարականաց տոհմէն՝ Արշաւիր, Թաթ, Վարձ, Ներսեհ և Աշոտ. Ամատունեաց տոհմէն՝ Վահան, Առանձար և Առնակ. Գնունեաց տոհմէն՝ Ատոմ. Դիմաքսեան տոհմէն՝ Թաթուլ և Սատոյ. Անձեւացեաց տոհմէն՝ Շմաւոն, Զուարէն և Առաւան. Առաւեղեան տոհմէն՝ Փափակ, Վարազդէն և Գազ. Մանդակունեաց տոհմէն՝ Սահակ և Փարսման. Տաշրացեաց տանէն Վրէն. Ոսխենից տանէն՝ Բաբիկ և Յոհան։

Մոգպետը ամեն տանջանք և տառապանք 'ի գործ դրաւ ուխտապահ կապելոց հաւատքը խախտելու և մինչեւ անգամ քա-

հանոյքը բաժանելով Նախարարներէն՝ առաւել գիճին. և տարապարտական բանտի մատնեց, բայց անհնարին եղաւ իր նպատակին հասնելու, և 'ի վերջոյ բանտարկելոց քրիստոնէական զուարթուն նորանշան կեանքէն ինքն ստիպուեցաւ քրիստոնեայ դառնալ աստուածային ազդմամբ և թեթեւցնել քահանայից տառապանքը։ Մինչդեռ Նիւշապուհի բանտին մէջ այս իրողութիւնք կը կատարուէր, Թագաւորն յաղթուելով Հոնաց պատերազմին մէջ, մօտերու խրատով գաղտ սպանել տալով Սամուէլ երէցը և Աբրահամ սարկաւագը իր կարաւանին մէջ, և Թամթիկ եպիսկոպոսը Ասորեստանի մէջ, ուր աքսորուած էր որպէս մշտական տէրութեան, ուղեւորած էր Պրենշապուհ ամբարակապետն, որ Նիւշապուհի կալանաւորները կամ մոգացնէ և կամ ծածկաբար չարչարել և նահատակել տայ, որ քրիստոնեայք չիմանան։ Պրենշապուհ իմանալով մոգպետի քրիստոնէական դարձը, գաղտնի առաքեց հեռաւոր երկիր և խոր վհի մէջ ձգել տուաւ. իսկ կալեալ քահանայքն ծածուկ հանել տուաւ բանտէն, տարաւ հեռաւոր անապատ տեղի, երկար հարցափորձեց Մովան հանդերձապետի, Գնիկան մարզպետի և մոգպետի առջեւ, և երբ փոխանակ համոզելու, առաւել սաստիկ պա-

տասխաններ ստացաւ, հրամայեց ամենաւ-դաւն տանջանքներով և ապառաժներուն վըրայ քարշելով կենագլուխ առնել, որոց նշխարքը յետոյ ծածկաբար ամփոփուեցան վեց տապանի մէջ քրիստոնէից ձեռամբ ։ Այս են այն երանելեաց անուանքը, որոնք իւրեանց անձը դրին իւրեանց հօտի և խոստովանած ճշմարտութեանց վրայ — Յովսէփ, Սահակ, Ղեւոնդ, Մուշէ, Արշէն, Քաջաջ, Սամուէլ, Աբրահամ, Թաթիկ, (վերջին երկուքն առանձին նահատակուած) որոց անմահ յիշատակը կը տօնէ Եկեղեցին Ղեւոնդեանց անուամբ ։

Դ.

Խորէն և Աբրահամ աշակերտք Ղեւոնդեանց. — Նախարարք պարսկական բանտերումն մէջ և կանայք նոցա Հայաստանի մէջ. — Չքնաղ պատկեր քրիստոնէական կենաց երկոցունց կողմանց. — Ազատութիւն և դարձ Նախարարաց 'ի Հայաստան. — Կաթողիկոսութիւն Մովսիսի Մանազկերտացւոյ և Գիւտայ. — Գիւտ մատնութեամբ կ'ամբաստանուի Պարսից դուռն և կաթողիկոսութենէ կը հրաժարի. — Կաթողիկոսութիւն Քրիստափորի Արծրունւոյ. — Բարձումն պարսիկ. — Վահան Մամիկոնեան և Մանդակունի Յովհան կաթողիկոս. — Վերջին դիմամարտութիւնք քրիստոնէից և մոգակրօնից և յաղթանակ Քրիստոնէութեան. — Թագաւորութիւն Վաղարշայ և մարզպանութիւն Նեխորի. — Նշանաւոր դաշն Վահանայ. — Սպարապետութիւն և Մարզպանութիւնն Վահանայ. — Հանդէս քրիստոնէական ուրախութեան յեկեղեցին Դունայ. — Աւեր կռատանց և նորոգութիւն եկեղեցեաց. — Կաթողիկոսութիւն Բաբկենի և Շուփհաղիշէի Աղուանից կաթողիկոսի. — Գիւտ նշխարաց Գրիգորիսի։

Ղ ԵՒՈՆԴԵԱՆՑ նահատակութենէն զկնի, Նոցա աշակերտներէն երկուքն, Խորէն և Աբրահամ բանտէ հանուեցան, գանուեցան, ականջները կտրուեցան և Բաբելաստանի Շահուղ գաւառը աքսորեցան արքունի մշակութեան համար։ Նախարարները մնացին բանտի մէջ տառապանաց և կապանաց մատնուած. իսկ Հայաստան մնաց քրիստոնէական սուրբ նախանձով վառուած, թէ-

պէտ և իւր ընտրելագոյն հովիւներէն և ա-
ռաջագոյն նախարարներէն զրկուած։

Խորէն և Աբրահամ Բաբելաստան հա-
նելով և կապանքէ ազատ լինելով կը շրջէին Ասորեստանի և Խուժաստանի մէջ, անդուոյն քրիստոնեաներէն տուրք կը ժողովէին եւ Նիւշապուհի կապելոց (նախարարաց) կը տանէին կամ կ'ուղարկէին ։ Այս տեսակ ջղջագայութեանց ժամանակ Խորէն տկարա-
ցաւ Խուժաստանի խորշակէն և վախճանե-
ցաւ ։ Իսկ Աբրահամ երկու տարիէն զկնի նախարարաց խնդրանօք և Ասորեստանի քը-
րիստոնէից երաշխաւորութեամբ Հայաս-
տան դարձաւ, երկիրը մխիթարեց իւր քա-
ջալերական վարդապետութեամբ, և այս կարգուեցաւ եպիսկոպոս Ռշտունեաց գա-
ւառին ։

Նախարարներն և նախարարազանց որ-
դիքն երկար ժամանակ մնացին բանտի մէջ, բայց ամեն գաւառ տառապանք քաղցրացու-
ցին աստուածային սիրով ։ Հայաստանի ծաղ-
կաբեր լեռանց փափուկ և ընդարձակատուն բնակիչները ընտելացան արեւելից բոցակէզ խորշակներուն և խաւարագէլ, անվերա-
կու և գետնախշտի ապրեցան ։ Սանկագոյն-
ներն ուսան հայրենի դպրութիւն և Ս. Գը-
րոց ընթերցանութեամբ, իբրեւ հոգեւոր կերակրով, զօրացան ։ Իսկ ծերունիքը փափ-

կացան, մատաղացան, մանկացան, երգակցելով մատաղերամ նախարարազուններուն և Աստուծոյ մարդասիրութիւնը փառաւորելով։ Որչափ սքանչելի էր այս կապելոց քրիստոնէական կեանքը պարսկական բանտերուն մէջ, նոյնչափ սրտաշարժ էր նոցա ընտանեաց և կանանց կեանքը Հայաստանին մէջ։ Հայոց փափկասուն տիկնայք՝ դիւցազնուհիք և առաքինութեան հարսներ դարձած էին։ Կենդանւոյն մահակից էին նահատակելոց մահուան, և ազատութեան մէջ՝ բանտակից և շղթայակից էին բանտարկեալներուն։ Վասն զի մոռացած էին իւրեանց կանացի փափկութիւնը, իւրեանց վայելքները և բարեկենդանութիւնը, մեռուցած էին մարմնասիրութիւնը և պճնասիրութիւնը։ Իւրեանց մատներով կ'աշխատէին և կը կերակրուէին, և արքունուստ նշանակուած ռոճիկը բանտարկելոց կ'ուղարկէին և կը մխիթարէին։ Թէպէտ և աւերուած էր Հայոց աշխարհը մոգական հարստահարութենէն, թէպէտ և վրդովուած էր պարսկական հալածանքէն, բայց երջանիկ էր միանգամայն. վասն զի քրիստոնէական սէրը կը վառուէր իւր կապեալ և ազատ որդւոց սրտին մէջ և սրբութիւնն ու ողջախոհութիւնն կը թագաւորէին ընտանեկան ծածկութին տակ և ամուսնական առագաստին մէջ։ Անհնար էր

որ Քրիստոնէութիւնը նուաճուէր, ինչտեղ ալքը բանաերէն և կանայք ընտանեկան յարկերէն իրարու քաշվելեր կը կարդային և այս միայն կը հայցէին. «Օ՜ի որպէս սկսանն քաջութեամբ՝ 'ի նմին կատարեսցին երկնաւոր սիրով» (1):

Յազկերտ շատ ջանաց ողոքելով և ազատութեան խոստումներով կապելոց հաստատուն հաւատքը քայքայել, բայց չը յաջողեցաւ: Ի վերջոյ նախարարաց երկարատեւ բանտարկութենէն և քրիստոնէական վառեռանդէն գոզցես պատկառեցաւ մոգպաշտութիւնը: Աշուշայ բդեշխը կարաց ազատել Համայեկի երեք մատաղահաս որդիքն՝ Վահան, Վասակ և Արտաշէս (որոց Վարդ եղբայրը Տայոց գաւառին մէջ դայեկաց մօտ էր արդէն) և տանել իւր տունը, ուր իւրեանց Զուիկ մօր և Անուշ Վռամ (բդեշխի կինը) մօրաքրոջ մայրական դաստիարակութեամբ և խնամքով դաստիարակուեցան և հաւատոյ ու հայրենեաց ախոյաններ դարձան: Նմանապէս Հրեայ Շղոմշապուհ Պարսիկ իշխանը կարաց Յազկերտի սիրտը ամոքել, Նախարարները բանտէ հանել տալ, ռոճիկ սահմանել և նաև իւրեանց հայրենիքը դարձնելու խոստումն առնուլ: Բայց

(1) Եղիշէ վասն կանանց:

Յազկերտ մեռաւ և խոստումն անկատար մնաց։ Վասն զի մի կողմէն ապստամբեցաւ Աղուանից Վաչէ թագաւորն Պարսից դէմ, միւս կողմէն գահակալութեան համար խռովութիւն ծագեցաւ Յազկերտի երկու որդւոց մէջ և Պարսկաստան յուզեցաւ, ուստի և Նախարարաց դարձը յետաձգեցաւ։ Յուսկ յետոյ Պերոզի թագաւորութեան ժամանակ Հայաստան դարձան Նախարարք 12 ամեայ վտարանդութենէն զկնի, որոց դարձը անպատում ուրախութեամբ լցուց բոլոր երկիրը։

Մելիտէ կաթողիկոս արդէն վախճանած էր և նորա տեղ կ՚աթոռակալէր Մովսէս Մանազկերտացին։ Նախարարք քաջալերեցին հայերը և ջանացին նորոգել, ինչ որ խախտեալ էր և աւերեալ. բայց իւրեանց դարձէն յետոյ, հազիւ մի տարի անցած էր, Մովսէս կաթողիկոսն վախճանեցաւ և նորա տեղն ընտրուեցաւ Գիւտ։

ԳԻՒՏԻ կաթողիկոսութեան սկզբէն մինչեւ Յովհան Մանդակունւոյ կաթողիկոսութեան վերջը (465—487) քրիստոնէական դիմամարտութիւնը զրադաշտական ուսման դէմ միօրինակ կը շարունակուի, այն է. հալածանքներ և պատրանքներ մոգակրօնութե̃ն և ուրացելոց կողմէն, իսկ անվեհեր դիմա-

դարձութիւն քրիստոնէութեան կամ ուխտապահ հաւատացելոց կողմէն ։ Նախարարաց ջանիւք և Պիւռ կաթողիկոսի հայրապետական արթուն հսկողութեամբ շատերը կը մխիթարին և կ'արիանան, իսկ ոմանք կը նահատակին, ուրացութեամբ կրօնքեանան Պարսից և մտանութիւններ կ'առնեն ։ Որչափ ուխտապահներու քրիստոնէական եռանդը կը զօրանայ, նոյնչափ և վատասիրտները կը գրգռին. և այս խռովայոյզ միջոցին ցաւակից հայրենասէրներէն ոմանք, ինչպէս Մովսէս Խորենացի և Եղիշէ, կ'առանձնանան մենաւորութեան մէջ արտասուօք և գրաւոր վաստակներով մխիթարութիւն և սփոփանք գտնելու ։ Հոնաց դաշնաւորութիւնը կը խախտի նոր թագաւորի անթոռակալութեամբ, և Վրաց ու Աղուանից մէջ նահատակութիւններ կը լինին ։ Հայք աշխարհը ապահովելու համար կը խորհին Պիւռ կաթողիկոսի հետ և Յունաց Լեւոն կայսերէն օգնութիւն կը խնդրեն, բայց նպաստ չեն ընդունիր, այլ միայն քանի մի նախարարք Յունաց բանակը կը գաղթեն ։ Պիւռ ուրացողները յանդիմանելու պատճառաւ Պադիշոյ Խոռխոռունի Մալխազէն կ'ամբաստանուի և Պարսից դուռը կը կոչուի ։ Առաքինի ծերունին անվեհեր կ'աճապարէ Տիզբոն, մեծ յարգանք կը գտնէ Խուժաստանի ե-

Հրեւի քրիստոնեաներէն, կը մատնուի հար-ցափորձի ատենին Պերոզի հրամանաւ, ատե-նակալները կը սարսափեցնէ իւր համարձակ պատասխաններով և 'ի վերջոյ կ'առաջար-կուի իրեն կամ կաթողիկոսութենէ հրաժա-րիլ և կամ մոգակրօնութիւնն ընդունիլ : Գիւտ կաթողիկոսութենէ կը հրաժարի, տե-ղւոյն հաւատացելոց համար ծածուկ եպիս-կոպոսներ և քահանաներ կը ձեռնադրէ, կը դառնայ Հայաստան և անձանձրոյթ կը շա-րունակէ ժողովրդեան հոգեւոր պիտոյքը հոգալ : Գիւտի հրաժարած լինելուն պատ-ճառաւ կաթողիկոս կ'ընտրուի Քրիստափոր Արծրունին, որոյ կաթողիկոսութեան երկ-րորդ տարին Գիւտ կը վախճանի և կը թա-ղուի Վանանդայ գաւառի Օթմուս գիւղին մէջ :

Այս միջոցին Բարծուման անուն պարսի-կըն, Եդեսիոյ մէջ Նեստորականաց մոլորու-թեան աշակերտելէն զկնի, Հայաստան կը գայ պատրանօք իւր թիւր ուսմունքը տա-րածելու, զանազան ձեռագիր մատեան-ներ' կը ժողովէ, Եղիշէի հետ եւս կը տես-նուի, և երբ կը յանդիմանուի նախարարնե-րէն, մանաւանդ Ծերունի Ներշապուհ Ար-ծրունիէն, Պարսկաստան կը դառնայ և կ'ամ-բաստանէ Պերոզի առջեւ Արծրունեաց Տոհ-մը, և սրտի մախանքէն (ըստ ասելոյ Թովմայ

Արծրունի պատմագրին), կը զեղջէ Եղիշէի պատմութենէն Արծրունի տոհմի պատմական բաժինը։

Մոգութեան հալածանքներն ու հրապուրանքներն որ աւուր կը նորոգին, Յունաց բաժնի մէջ եւս Հայք կը տառապին և տանուտերական կամ նախարարական ազատ իշխանութիւնը կը բռնագրաւուի Զենոն կայսերէն, և այսպէս երկու կողմէն եւս Հայաստանի վիճակը կը ծանրանայ։ Սակայն այս միգամած ժամանակին, աստղ մի կը ցոլանայ Մամիկոնեան տանէն — եղբօրորդին Վարդանայ Վահան։ Վահան երկու անգամ կը մտանուի Պարսից դուռն, առաջին անգամին կը տկարանայ հաւատքին մէջ և իւր Վարդ եղբայրը պատանդ թողլով կը դառնայ Հայաստան. իսկ երկրորդ անգամին մեծամեծ պատիւներու կ'արժանանայ. բայց միշտ կը խղճահարի և կը մտամտանջի իւր ուրացութեան համար, և գոգցես պատեհ ժամու կը սպասէ այս վատ անունն ջնջել իւր վրայէն։ Այս պատեհ ժամն ինքնին կը հասնի. Պարսիկները կը յաղթուին Հոն Հեփթաղներէն. Վախթանգ, ուրացեալ Վազգէնը սպանելով, կը թագաւորէ Վրաց և կ'ապստամբի Պարսից դէմ. Քրիստափոր կը վախճանի և կը յաջորդէ Յովհան Մանդակունին, նախանձաւորն փառաց և ազա-

տութեան Եկեղեցւոյն, մեծ խնամակալն կրթութեան ժողովրդեան և առաքինի դաստիարակն Նախարարազգւոյն մանկանց՝ մանաւանդ Մամիկոնէից և Կամսարականաց։ Նա յառաջքերէն կը յղանայ Հայոց մէջ դիմադարձութեան համակամ խորհուրդ Պարսկական մոլեկրօնութեան դէմ։ Վահան կը զղջայ և կը միանայ ուխտապահ Նախարարաց հետ, ամենքը կ՚երդուին յանուն ազատութեան և կ՚ողջունեն ազատութեան պատգամախօս մասնաւոր Նուարսանն, զոր մէջ կը բերէ Նթիկ քահանան և կը պատրաստին Վահանայ իմաստուն խորհրդով և յաջողառաջնորդութեամբ դիմադրաւել պարսկական խորխտ ուժին դէմ։ Քանի մի պատերազմներ կը մղեն Հայք շարունակ, քանի մի պարսիկ մարզպանաց և հազարապետաց դէմ, և մեծ մասամբ յաղթող կը հանդիսանան, թէպէտ և իրենք սակաւաթիւ ու թշնամին զօրաւոր և ուրացելոց նենգութիւնն անպակաս։

Նախ հալածական կ՚առնեն Հայաստանէն Ատրպճնասպ պարսիկ մարզպանն և Վեհնամ հազարապետն իւրեանց բանակով (ուր էին և բազմաթիւ ուրացեալներ), Դուին մարզպանական քաղաքը կը գրաւեն. Վահան Սպարապետ կը կացուցանեն և Սահակ Բագրատունին Մարզպան, որ Խորենացւոյն

Մեկենեան էր, խնդրողն Հայոց Պատմութեան։

Երկրորդ՝ կը պատրաստին նոյն Ատրվըշնասպին դէմ, որ դարձած էր Ատրպատականէն մեծ բազմութեամբ և Երասխ գետին մօտ բանակ կազմած. կ'ողջունեն Աւետարանը և ծերունի Կաթողիկոսն, ահագին կոտորած կը տան պարսկական բանակին, Ատրվշնասպ կըսպաննեն ուրիշ գլխաւորաց հետ, և Դունայ եկեղեցւոյն մէջ յաղթութեան գոհութիւն կը մատուցանեն Աստուծոյ. Այս պատերազմին մէջ կ'առաջնորդեն Հայոց բանակին Սիւնին Բաբկէն, Վասակ եղբայր Վահանայ, Ներսեհ և Հրահատ Կամսարականք, Ատոմ և Արսամ Գնունիք և Գարջոյլ Խորխոռունի, ըստ որում Վահան և Սահակ 'ի Դուին մնացած էին։

Երրորդ՝ կը դիմեն Հայք պարսկական բանակին վրայ, որ Հեր և Զարեւանդ հասած էր, իրենց հետ կ'առնուն նաև ծերունի հայրապետն Մանդակունի, կը բանակին Արտազ գաւառի Ներսեհապատ գիւղին մօտ, կ'օրհնին կաթողիկոսէն, կը յարձակին թըշնամեաց վրայ, կը սպաննեն, կը վիրաւորեն, կը ցրուեն և յաղթանակ կը կանգնեն, որուն վրայ կըզուարթանայ ծերունի հովուապետն. «Ոչ այնչափ ընդ յաղթութիւնն ուրախ լինելով, որչափ ընդ այն, զի հաշտ զԱստու-

տուած ընդ նոսա տեսանէր»։ Այս յաղթա-կան ուրախութիւնը կը պսակէ մանաւանդ Վահանայ Վարդ եղբօր գալստեամբն, որ պատանդութեան կալանաւորութենէն ա-զատելով և Պարսկաստանէն անցնելով անա-կընկալ կերպով կ'երեւի Ողկոտն գաւա-ռի մէջ և կը խառնուի Հայոց բանակին հետ․ ծառաներով հանդերձ։

Չորրորդ՝ յօգնութիւն դիմելով Վրաց Վախթանգ թագաւորին, կը պատերազմին Միհրան պարսիկ զօրավարին դէմ Կուր գե-տի դաշտավայրին մէջ, արիական մարտէն զկնի՝ կը նահատակին Սահակ ասպետն և մարզպանն, Վահանայ Վասակ եղբայրն. Բարկէն Միհրի կը վիրաւորի կարեվէր և Հը-րահատ կը կալանաւորի և յետոյ կ'արձակի։

Հինգերորդ՝ կը պատերազմին Հայք Դու-նայ մօտ Զարմիհր Հազարաւուխտ պարսիկ զօրավարին հետ, որ դիմած էր Հայաստան մեծ բանակաւ, կը սասանեցնեն պարսկային զօրախումբը, մեծ հարուած կը տան գոչե-լով. «Հարցուք զթշնամիսն հաւատոյ եւ մեռցուք սոսա ՚ի պարծանս Եկեղեցւոյ»։ Հայրապետն Յովհան կը վիրաւորի, դի-ականց մէջ կը մնայ և ապա կը զերծանի. Հազարաւուխտ կը դառնանայ կատորածին վրայ և հետամուտ կը լինի Վահանը կալա-նաւորել, (որ իւր ընկերաց հետ կ'ամրա-

նայ Խաղտեաց սահմաններուն մէջ և ասոր այլուր), նորա պատճառաւ զանազան անեղեր աւար կը հարկանէ, բայց միանգամայն և կը յուսահատի Վահանէն ամօթահար լինելուն համար. և այսպէս Շապուհ մարզպանը կը թողու Հայաստանի մէջ զօրախումբով և ինքն Պերոզի հրամանաւ կը գիմէ 'ի Վրաստան:

Իւր մեկնելովը՝ արիաբար կը պատերազմին Հայք Շապուհ մարզպանին դէմ, որուն օգնական էր ուրացեալն Գդիհոն Սիւնի, քանի մի ճակատներու մէջ կը հարուածեն մօգակրօնիկներու և ուխտանենգներու զօրութիւնը, թէպէտ և իւրեանց կողմէն եւս նահատակներ կը թողուն պատերազմի դաշտին մէջ, Շապուհ Պերոզի սպանութեան գոյժն առնելով Պարսկաստան կը դառնայ և Հայք գոհութեան ուխտ և պատարագ կը մատուցանեն Էջմիածնի եկեղեցւոյն մէջ, զոր և կը սկսանին նորոգել խնամակալութեամբ Վահանայ և Մանդակունի կաթողիկոսին:

Այս պատերազմներէն և Պերոզի մահուանէն յետոյ իրերը կերպարանափոխ կը լինին, Վաղարշ կը թագաւորէ Պարսից, և Նիխոր կ'ուղարկուի Մարզպան Հայաստանի: Նիխոր պատգամաւորներ կ'առաքէ առ Վահան, և Վահան հաւանութեամբ Ազգին այս

դաշինքը կ՚առաջարկէ Նիխորին, (զոր առաջ համառօտիւ յիշեցինք), Թագաւորէն հաստատելու պայմանաւ։

1. Քրիստոնէութեան հայրենի օրէնքը ազատ թողուլ, հայ ոք չըդարձուցանել ՚ի մոգութիւն, ուրացութեան համար գահ և պատիւ չըտալ և կրակարաններ չըշինել Հայաստանի մէջ։

2. Հայոց ազնուականներն ու ազատները թողուլ ըստ հայրենի օրինակին, վաստակաւորներն ու անվաստակաւորները քննել ու ճանաչել, և ազգուրացները կամ անարգները յառաջ չըմատուցանել։

3. Քսուներու և սուտակասաններու խօսքին միտ դնելով մարդ չըդատել, այլ արքայական ատենին մէջ ամէն գործ և գործող յականէ յանուանէ տեսնել, նկատել և ապա դատաստանը վճռել։

Այս առաջարկութենէն յետոյ՝ Վահան պատանդներ կ՚առնու Նիխորէն քանիմի նշանաւոր պարսիկներ, ապա տեսութե կ՚երթայ Նիխորին իւր զօրականներովը, կը մտնէ Արեաց բանակին մէջ փողեր հնչեցնելով, կը մեծարի ուխտապահներով հանդերձ, ամօթահար կը լինին ուխտանենգները, քինթրիկներ կը կազմուին Վահանեանց համար և Նիխոր բանիւ Թագաւորին՝ կը խոստանայ անյիշութեան տալ անցեալ անցքերը։

Այս խաղաղասիրական տեսակցութենէն զկնի Վահան ինքնին կ'երթայ ՚ի Պարսկաստան, կը տեսնուի Վաղարշ թագաւորին հետ, շքեղ մեծարանք կ'ընդունի եւ ուխտապահ նախարարաց պատիւը կը վերահաստատէ, իւր առաջարկած ազատական դաշինքը եւ այլ խնդրոց կատարումն կ'ընդունի, Սպարապետ կը կարգուի Հայկական զօրաց եւ ուրախութեամբ կը դառնայ ՚ի Հայաստան, որուն համար եւ գոհութեան հանդէս կը կատարուի ՚ի Ս. Էջմիածին։

Սակայն ժամանակէն զկնի Վահան Մարզպան կը կարգուի Հայաստանին, ջատագովութեամբ Անդեկան պարսիկ Մարզպանին եւ հրովարտակաւ թագաւորին։ Կ'ուրախանայ Վահան աստուածային յաջողութեան վրայ, բայց միանգամայն եւ կը մտմտի, որ ուրացողաց նախանձը պիտի շարժուի։ Դառնայ Եկեղեցին կը մտնէ, Մանդակունի ծերունի հայրապետին հետ, գոհացողական մաղթանք մատուցանելու Աստուծոյ, կը համախմբէ մեծ բազմութիւն, ուրախութիւնը կը փայլատակի ամենեցուն երեսներուն վըրայ, հայրապետն կ'աւետաբանէ եւ կը հրաւիրէ Ազգն Աստուծոյ այցելութիւնը փառաւորելու, որ երկարատեւ հալածանքէն յետոյ կը մխիթարէ իւր սեպհական ժողովուրդը, ուրախական եւ տօնական աւետաւորնքներ

իրար կը խառնուին, — ուրախական՝ ճշմար-
տութեան գեղեցիկ յաղթութեան համար,
և տրտմական՝ ուխտանենք եղբարց համար։
«Ձեռն տուք գթալով, կը գոչէ գթոտ Հայ-
րապետն, չէ ատ 'ի քարեղէն սալս գրեալ
անթողութիւնք օրինացն։ Քրիստոս է ատ՝
որ ասէ՝ ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղա-
ւորս յապաշխարութիւն (1) », որով և հաշ-
տութիւնք և գրկախառնութիւնք կը լինին։

Երբ այսպէս սակաւ մինչ շունչ կ'առնու
Հայաստան, կը սկսի այնուհետեւ Վահան,
Մանդակունի Հայրապետի հետ, կու տաուն-
ները կործանել, խախտուած վանքերն ու
տաճարները նորոգել և ամեն կերպով աշ-
խարհի շինութեան հոգ տանիլ։

Մանդակունի Հայրապետը կը վախճանի
խորին ծերութեան մէջ վեցամեայ կաթողի-
կոսութենէն զկնի և կը յաջորդէ իւր աշա-
կերտն Բաբկէն, Վանանդայ գաւառէն,
Ոթմսոյ գեղջէն։ Իսկ Հայրապետի մի աշա-
կերտն Շուփհաղիշէ Սգրեանից կաթողիկոս
կ'ընտրուի, որ և Վաչէի որդի Վաչական
հայկազուն թագաւորի հետ եկեղեցական
ժողով կը կազմեն և ինչ ինչ բարեկարգու-
թիւններ կ'առնեն և դպրոցներ կը բանան։
Այս ժամանակ կը գտնուին նաև նշխարք

(1) Փարպ. Էջ — 245 — 317.

Պէրիգորիսի, առաջին կաթողիկոսին Աղուանից և Թոռան Ս. Լուսաւորչի, ինչպէս կը պատմեն Մովսէս Կաղանկատուացի և Ստեփաննոս Օրբէլեան ։

Ե.

Ակնարկ Քաղկեդոնի ժողովին վրայ. — Բաբկէն կաթողիկոս. — Ժողով Վաղարշապատու. — Մերժումն Ժողովոյն Քաղկեդոնի. — Շարժառիթ յունական և հռովմէական մասնաց և հեռանալը. — Կաթողիկոսութիւն Սամուէլի, Մուշէի, Սահակայ Բ., Քրիստափորի Բ., Ղեւոնդի, Ներսէսի Բ. — Ժողով 'ի Դուին և կանոնական սահմանադրութիւնք. — Կաթողիկոսունք՝ Յովհաննէս Բ., և Մովսէս Եղիվարդեցի. — Ժողով 'ի Դուին և կարգաւորութիւն հայկական Տօմարի. — Հալածանք 'ի Պարսից և Թուղթ Մովսիսի առ Խոսրով արքայ Պարսից. — Պատերազմ յունական և պարսկական. — Քաջութիւնք Հայկազունն իշխանաց. — Սմբատ՝ մարզպան Հայոց. — Ուսումն Հայերէն լեզուի յաշխարհն Վրկանաց ։

ՄԻՆՉԴԵՌ Հայոց, Վրաց և Աղուանից աշխարհներն, երկար տարիներ մոգակրօնութեան դէմ արիաբար դիմադրաւելէն և արեամբ ողողուելէն զկնի, առ վայր մի կը խաղաղին և եկեղեցական բարեկարգութեանց կը ձեռնարկեն, փութով սկիզբն կ'առնու պարսկական հալածանքէն առաւել վնասակար յուզմունք քաղկեդոնական

ժողովին։ Քաղկեդոնական ժողովի աշխար-
հայոյզ խնդիրները քառասուն տարի (451-
491) յունական և հռովմէական եկեղեցեաց
մէջ Քրիստոնէութիւնը խռովելէն զկնի,
կ'անցնին Հայաստան. Հայաստան որ իւր
նախարարները հազարներով պարսկական
սրոյն ճարակ կը տար իւր առաքելահիմն
հաւատոյ պաշտպանութեան համար և ա-
մէնևին նոր վարդապետութեան կարօտ
չէր և ոչ որ և իցէ ժողովի նոր վճռոյ, մա-
նաւանդ Քաղկեդոնականին, որ նոյն իսկ յու-
նական և հռովմէական քրիստոնէից մէջ շա-
տերէն ընդունուած չէր, և որոյ ապօրինաւո-
րութեան դէմ Զենոն կայսրն, բազմաթիւ
եպիսկոպոսաց ստորագրութեամբ շրջաբե-
րական հրովարտակ հանած էր, միայն Նիկիոյ
Կ. Պօլսոյ և Եփեսոսի տիեզերական ժողով-
ներուն օրինաւոր խոստովանելով. իսկ Անաս-
տաս կայսրն այնչափ զզուած էր Քաղկեդո-
նեան յուզմունքներէն, բառական բանա-
կռուութեանց խաղերէն և մեծամեծ երկ-
պառակութիւններէն, որ հրաման հանած էր
ամենևին չըխօսիլ Քաղկեդոնի ժողովին վը-
րայ։ Նաև զի այս ժողովի վճռաբանութեանց
և կուսակցութեանց բորբոքմանէն ոչ միայն
անհաշտ ատելութիւնք մնացած էին քրիստո-
նէից մէջ, այլ և աքսորանք և սպանութիւնք
անգամ եղած էին, ինչպէս արդէն խօսած

ենք երեք տիեզերական ժողովոց պատմական տեսութեան մէջ։

Աւստի, երբ Քաղկեդոնական ժողովէն դաժան խնդիրները կը սկսին Հայաստանի մէջ սպրդիլ, Բաբկէն աչալուրջ կաթողիկոսը կ'աճապարէ առաջին առնուլ խորհրդով և հաւանութեամբ Հայոց, Վրաց և Աղուանից աշխարհաց, որոնք Քաղկեդոնի ժողովէ երկարամեայ և տարօրինակ անցքերը մասամբ լսած լինելով կը զարհուրէին իբրև Քրիստոնէութեան նախատինք բերող իրողութիւններէ։ Բաբկէն ժողով կը գումարէ Վաղարշապատին կամ Էջմիածնին մէջ, ուր բաց 'ի Հայ, Աղուան, Վրացի և Հոռոմ բազմաթիւ ժողովականներէն, յատկապէս կը գտնուին Աղուանից կաթողիկոսն իւր եպիսկոպոսներով, Վրաց Գաբրիէլ կաթողիկոսն իւր եպիսկոպոսներով, Մուշէ եպիսկոպոս Սիւնեաց՝ յաջորդ Ստեփաննոսի, և այլ ականաւոր անձինք։ Երկար բանախօսութենէ զկնի՝ կը կարդացուի այս ժողովին մէջ Նմանապէս և Զենոնի Հրովարտակն, և ապա բոլոր ժողովականաց հաւանութեամբ կը մերժուի Քաղկեդոնի ժողովն և կը սահմանուի, 'ի մասին հաւատոյ վարդապետութեան և եկեղեցական օրինապահութեան, շատանալ Առաքելոց քարոզածներով և երեք Տիեզերական Ժողովոց առաքելաւանդ որո-

շուշմներով։ Սակայն նոյն այս մերժումէն (որ խիստ օրինաւոր էր Բաղկեդոնեան ժողովէ վայրապար վէճերուն և խռովայոյզ անցքերուն նայելով), կը սկսի յունական և հռովմէական ոխերիմ ատելութիւնը Հայոց դէմ. և դժբաղդաբար կը տեւէ մինչեւ ցայսօր։ Այս ատելութեանը զոհ գնացին, եթէ չենք սխալիր, Հայոց Բագրատունի և Ռուբէնեան թագաւորական հարստութիւններն ու ազգային արքայական իշխանութեան թագն ու գաւազանը։ Այս ատելութեան մախանքէն բազմիցս նախատակած եղաւ և կը լինի Հայաստանեայց առաքելական Եկեղեցին — Քրիստոնէութեան նախկին և բազմաչարչար Վկայուհին ասիական ազգաց հալածանաց մէջ։ Այս ատելութեան բորբոքումէն տարուբերեցան շատ հայրապետներ և վարդապետներ և գումարեցան զանազան ժողովներ, որոց վրայ պիտի խօսինք կարգաւ ըստ ժամանակին։ Այս ատելութիւնը տեղի տըւաւ դարաւոր վէճերու և խռովութիւներու և գրաւեց շատ մատենագիրներու միտք ու մատեաններու էջեր։ Այս ատելութեան հրապուրանքէն շատ զաւակներ թողլին Հայաստանեայց եկեղեցւոյ մայրենի գիրկը և օտարներուն հետ խառնուելով անյայտացան և կամ խորթացան, և մինչեւ ցայսօր կը թաղուին նոյն մայրենի ծոցը և կը խորթանան։

Վերջապէս Բաղկեդոնի ժողովին մերժումն և Հայաստանեայց եկեղեցւոյ բանած անկախ և ազատական դիրքը՝ գայթակղութեան քար դարձաւ յունական եւ հռովմէական եկեղեցեաց համար, որոնք ամենայն զօրութեամբ ջանացին և կը ջանան սասանել։ Բայց քանի որ Հայաստանեայց եկեղեցին բաղմադարեան փորձերով համոզուած է, որ իւր տեւականութիւնն իւր անկախութեան կամ ինքնուրոյն գոյութեան մէջ է, յուսով ենք, որ կը յարատեւէ իւր ընթացքին մէջ, վասն զի հակառակորդաց յարձակումներն ուղղակի նորա ինքնօրէնութեան դէմ են և ոչ թէ նորա քարոզած վարդապետութեան և հաւատալեաց, զորս ունէին համօրէն քրիստոնէական եկեղեցիք մինչ 'ի ժողովն Բաղկեդոնի։ Բայց մենք թողունք առ այժմ Քաղկեդոնեան ժողովի տխուր հետեւանքները, որոց շատ անգամ պիտի հանդիպինք դըժբաղդաբար, պատմութեան յետագայ շրջաններուն մէջ, և շարունակենք մեր պատմութեան թելը։

Բաբկէն-կաթողիկոսը, հնգամեայ հայրապետութենէն զկնի, կը մեռանի և տեղը կը յաջորդէ Սամուէլ, Եղնունեաց գաւառէն՝ Արծկէոյ գեղջէն։

Սամուէլի կաթողիկոսութեան ժամանակ պարսկական հալածանքները վերստին կ'սկս-

ծարծին Հայաստանի մէջ։ Պարսից Կաւատ Թագաւորը զօրք և մոգեր կը հանէ Հայոց աշխարհը, որ կրակատուններ շինեն զանազան տեղ և ժողովուրդը հրապաշտութեան ստիպեն, բայց Վահան մարզպան սատուածապաշտ նախարարները ժողովելով կը յարձակի Պարսից զօրքերուն և մոգերուն վրայ, կը հարուածէ և կրակատունները կը կործանէ. իսկ Կաւատ մինչդեռ Հայոց աշխարհը աւերելու կը պատրաստուի, իւր իշխանաց ձեռքով աթոռէն կը զրկուի։

Սամուէլ տասնամեայ կաթողիկոսութենէն զկնի կը վախճանի և կը յաջորդէ Մուշէ, Կոտէից գաւառէն, Այլաբերից գեղջէն։ Մուշէին կը յաջորդէ Սահակ Բ. Հարք գաւառէն, Ուղկայ գեղջէն։ Սորա հայրապետութեան ժամանակ կը մեռանի Վահան Մամիկոնեան, 25 տարի Հայաստան կառավարելէն զկնի, և մարզպան կը կարգուի Նորա Վարդ եղբայրն, որ մի տարիէն զկնի կը հանուի։

Սահակ Բ. կաթողիկոսին կը յաջորդեն Քրիստափոր Բ. Տագրեւանդ գաւառի Տիրառիճ գիւղէն, Ղեւոնդ Առբերանի գաւառի Ռաստայ գիւղէն, և Ներսէս Բ. Աշտարակեցի։ Ներսէս եկեղեցական ինչ ինչ ներքին բարեկարգութեանց համար ժողով կը գումարէ Դուինայ մէջ, ուր 'ի միջի բազմա-

Թիւ ժողովականաց կը գտնուին Ներշապուհ եպիսկոպոս Մամիկոնեան և Պետրոս եպիսկոպոս Սիւնեաց, քերթող, յաջորդ Մուշէի։ Այս ժողովին մէջ վերստին կը մերժեն Քաղկեդոնի ժողովը և կը սահմանեն երեսունէն աւելի կանոններ, մեծ մասը Ս. Սահակայ կանոններէն առնլով, մանաւանդ որոնք կը վերաբերին եպիսկոպոսաց, քահանայից, վանականաց և աշխարհականաց ուղղութեանն և առ միմեանս և առ ժողովուրդն ունեցած պարտաւորութեանց։ Այս ժողովի մէջ կը սահմանեն նոյնպէս շաբաթական պահք իւրաքանչիւր ամսուան համար, որ և մինչև ցայսօր կան, ոմանք շարժականապէս և ոմանք անշարժ, այն է Ա. պահք Եղիական. Բ. պահք Ամարայնոյ կամ Լուսաւորչի. Գ. պահք Վարդավառի. Դ. պահք Աստուածածնի. Ե. պահք Խաչի. Զ. Պահք Վարագայ խաչի. Է. պահք Յիսնակաց. Ը. պահք Ձմերայնոյ կամ Ս. Յակոբայ. Թ. պահք Յայտնութեան. Ժ. պահք Առաջաւորաց (Լուսաւորչի ժամանակէն սահմանուած, որ անգիտութեամբ կը կոչուի նաև Ս. Սարգսի պահք), իսկ երկու ամսոց շաբաթական պահքը քառասնորդական պահոց հետ կը հաշուին։ Ներսէս ինն ամեայ կաթողիկոսութենէն յետոյ կը վախճանի և տեղը կ՚ընտրուի Յովհաննէս Բ. Գաբեղենից գա-

ւառէն Սիւնձեղուան գիւղէն, որոյ հայրապետութեան ժամանակ կը բորբոքին պարսկական հալածանքները։ Դենշապուհ մարզպանը Դունայ մէջ կրակատուններ կը բանայ, պարսկաստանէն բազմաթիւ մոգեր բերել կու տայ և Հայերը կրակապաշտութեան կը ստիպէ։ Հայք կ'ընդդիմանան և յուզմունքը կը սաստկանայ երկու կողմէն։ Այս խռովութեան միջոցին կը վախճանի Յովհաննէս, 17 ամեայ կաթողիկոսութենէն զկնի և տեղը կ'ընտրուի մեծիմաստն Մովսէս, Արագածոտըն գաւառի Եղիվարդ գիւղէն։ Սորա առաջին գործը կը լինի հայկական Տոմարը կարգաւորել, որոյ համար արդէն իւր նախորդի օրով աշխատանքներ եղած էին Գլակայ վանուց Աթանաս առաջնորդի ձեռամբ և անկատար մնացած։ Մովսէս ժողով գումարելով Դունոյ մէջ հմուտ եկեղեցականներէ և աշխարհականներէ՝ կը կարգաւորէ հայկական Տոմարը, և ապա առանձին թուական եւս կը սահմանեն, որ կըսկսի փրկչական 551 թուականէն և կը կոչուի Թուական Հայոց, որ և գործ կը դրուի մատենագրութեանց և արձանագրութեանց մէջ, միշտ փրկչական թուականէն 551 տարի պակաս հաշուելով։

Մովսէս կը ջանայ նմանապէս կրակապաշտական բռնաբարութեանց առաջն առնուլ, որ կը շարունակուէր իւր նախորդի

ժամանակէն 'ի վեր և նահատակութիւններ եղած էին, որոց մէջ Նա և մոգպետի որդին որ հաւատալով մկրտուած էր և Յեզիտբուզդ (Աստուածատուր) անուանուած ։ Պատգամաւորներ կ'առաքէ առ Խոսրով և ընդ նմին աղաչանաց թուղթ քրիստոնէական կրօնքն ազատ թողելու և մոգութեան հրապուրանքները դադրեցնելու ։ Այս թղթի մէջ կը յիշեցնէ Մովսէս Խոսրովին՝ Վաղարշի շնորհած ազատութիւնները և դաշն խաղաղութեան, որով և իւր խնդրանաց կատարումն կըստանայ, ըստ որում իսկոյն մարզպանութենէ կը փոխուի Դենշապուհ և առժամանակ մի հալածանքները կ'ընդհատին ։ Սակայն շատ չանցնիր, Հայաստան անհնարին աղէտից տեսարան կը դառնայ. որովհետեւ սարսափելի պատերազմներ կը բացուին Յունաց և Պարսից մէջ և Հայաստան երկու ձեռքէ յափշտակել կը ջանան ։ Հայերը Յունաց յարելով 'ի Պարսից կը տառապին, և Պարսից յարելով 'ի Յունաց ։ Վարդան Բ. Մամիկոնեան քանի մի պատերազմներու մէջ Պարսից զօրքը կը ջարդէ, և Խոսրով զայրանալով կըսպառնայ բոլոր Հայաստան աւերել և Յունաց բաժնին եւս գրաւել, որով և ահագին աւերմունքներ կը լինին Տարօնոյ գաւառին մէջ, մինչեւ որ Պարսկաստանի մէջ ներքին խռովութիւններ կը ծագին և

սակաւ ինչ կ՚անդորրանայ. Հայոց աշխարհն։ Այս պարսկական խռովութեանց մէջ արէ-ական պատերազմներ կը մղեն. Հայկազուն իշխանքը՝ Ներսէս յունական զօրքով և Մուշեղ Մամիկոնեան և Սմբատ Բագրատունին իւրեանց զօրքերով, Խոսրով Բ. Թագաւորեցնելու համար,.(որուն հայկազուն կայսրըն Յունաց Մօրիկ նեւս օգնական էր,) ուրով և Սմբատ մարզպան կը կարգուի և կը դառնայ ՚ի Հայաստան։ Նոր Վրկանաց աշխարհը կը համնի Սմբատ, կը տեսնէ որ տեղւոյն Հայ բնակիչք՝ իսպառ մոռացած են իւրեանց մայրենի լեզուն, ուստի և կ՚աճապարէ ուսուցիչներ բերել տալ հայերէն դպրութեան համար, և Աբել անուն երէց մի կ՚ուղարկէ առ Մովսէս կաթողիկոսն և Վրկանաց վրայ եպիսկոպոս ձեռնադրել կը տայ, որով և նոյն երկիրը Հայոց կաթողիկոսութեան վիճակ կը դառնայ։

Նախնի քրիստոնէական ընտանութիւն Հայոց, Վրաց և Աղուանից. — Կիւրիոն Ջաւախացի. — Քաղկեդոնական յուզումն 'ի Վրաստան. — Հակառակութիւն Կիւրիոնի և Ցուրտաւայ Մովսէս եպիսկոպոսի. — Թղթակցութիւնք Աբրահամ կաթողիկոսի Հայոց և Կիւրիոնի. — Բաժանումն Վրաց 'ի դաւանակցութենէ Հայոց. — Ժողով 'ի Կ. Պոլիս հրամանաւ Մօրիկ կայսեր. — Յովհաննէս հակաթոռ կաթողիկոս Յունաց բաժնի Հայոց վրայ. — Պատերազմ Յունաց և Պարսից. — Նոհատակութիւնք 'ի Տարօն — Կոմիտաս կաթողիկոս և բարեկարգութիւնք իւր. — Քրիստափոր Գ. — Եզր կամ Եզրաս Փառաժնակերտացի. — Գաւառաժողով 'ի Կարին բռնաւ հրամանաւ Հերակլ կայսեր. — Եզր կ'ընդունի Քաղկեդոնի ժողովն, և հաւանութեամբ Ազգին իւրոյն կը մերժուի կաթողիկոսութենէ. — Յովհաննէս վարդապետ՝ ախոյեան հայրենի աւանդութեանց. — Յունական մոլեկրօնութիւնք Յունաց բաժնի Հայոց մէջ. — Յարձակումն Պարսից 'ի Տարօն. — Վերջ անցից Երկրորդ Շրջանին։

ԱՌԴԷՆ պատմած ենք, որ Վրաստան ընդունեց Հայաստանէն, ինչպէս քրիստոնէական լոյսը Լուսաւորչի ժամանակ, նոյնպէս և իւր ազգային դպրութեան տարերքը՝ նշանագիրքը — մեր երանելի Թարգմանչաց Ս. Սահակայ և Մեսրոպայ ժամանակ։ Վրաստանի դրացիութիւնը Հայաստանին և Վրաց դաւանակցութիւնը Հայոց հետ՝ այնպիսի սերտ մտերմութիւն հաստատած էր երկու

ազգաց մէջ, որ Հայք ոչ միայն իւրեանց հայրենեաց՝ այլ և Վրաստանի մէջ Քրիստոնէութիւնը պաշտպանելու համար նահատակութեան արիւններ կը թափէին, ինչպէս տեսանք մանաւանդ Վարդանանց պատերազմին ժամանակ։ Երկու ազգաց այս քաղաքական և կրօնական ընտանութենէն ցնծութեամբ կը կատարուէին սէր և խնամութիւն մարմնաւորական և հաղորդութիւն հոգևորական։ Հայք կը դիմէին ուխտ Մծխիթայի խաչին և Վրացիք կը դիմէին ՚ի Ս. Էջմիածին։ Չըկար ամենեւին կրօնական խտրութիւն եւ բռնաբարութիւն։ Վրաց կաթողիկոսը կ՚ընտրուէր իւր ազգէն և կ՚օծուէր Հայոց կաթողիկոսէն, ինչպէս և Աղուանիցն։ Սակայն իւրաքանչիւր ազգ իւր լեզուաւ կը կատարէր իւր եկեղեցական պաշտամունքն ազատօրէն։ Հայոց կրօնական ազատութիւնը միշտ Յունաց ազգէն կը բռնաբարուէր, բայց Հայք երբէք Վրաց և Աղուանից նկատմամբ սիրոյ և միաբանութեան ճանապարհէն չէին հեռանար։ Նոյնպէս որ Վրաց և Աղուանից կաթողիկոսութիւնները Հայոց հայրապետութեան երկու մեծ թեմեր համարուած էին և կաթողիկոսները յամենայնի աջակից և գործակից Հայոց հայրապետին։

Բայց դժբաղդաբար քաղկեդոնեան յաւ-

մունքները Վրաց ազգը պառակտեցին Հայոց ազգէն և ատելութիւն սերմանեցին երկու եկեղեցեաց մէջ։ Վրացիք Հայոց տառապակիր ազգի դաւանակցութենէն բաժանուեցան և Յունաց յարեցան պաշտպանութիւն գտնելու նպատակաւ, բայց նոյն պաշտպանութիւնք իւրեանց ազգայնութեր շատ սուղ նստաւ, և ով գիտէ թէ 'ի ժամանակին բոլորովին չը պիտի զոհուէր նոյն ազգայնութիւնը։ Վրաց բաժանման դժբաղդանցից դէպքերը այսպէս կը սկսին, ինչպէս կ'աւանդեն ամենայն պատմիչք։

Մովսէս Եղիվարդեցւոյ կաթողիկոսութեան ժամանակ շփոթութիւն կը ծագի Վրաց մէջ կաթողիկոսի ընտրութեան համար. ուրի ազգովին կ'առաջարկեն Մովսէս Հայոց կաթողիկոսին, որ ինքնին Վրաց համար կաթողիկոս ընտրէ, ձեռնադրէ և առաքէ 'ի Վրաստան, և ինքեանք կը խոստանան առանց հակառակութեան ընդունիլ։ Մովսէս կ'ընտրէ և կը ձեռնադրէ Կիւրիոն անուն մէկը, Պաւխաց գաւառէն, ազգաւ վրացի, հմուտ հայերէն, յունարէն, պարսկերէն և վրացերէն լեզուաց։ Կիւրիոն երբ Վրաստան կը գտնուի, գուցէ Յունաց ազգէն ատեպուելով և պաշտպանութեան խոստմունքներէ խաբուելով, կը քարոզէ իւր ազգին՝ Քաղկեդոնի ժողովն ընդունել և կայսեր

հպատակիլ։ Ցուրտաւ քաղաքի Մովսէս եպիսկոպոսն, (ձեռնադրուած Կիւրիոնէն,) անհամաձայն կը գտնուի իւր ձեռնադրողի ընթացքին և գրով կ'իմացնէ Հայոց Վրթանէս վարդապետին, որ նշանաւոր էր Հայաստանի մէջ, օգնական էր Մովսէս կաթողիկոսին կենդանութեան ժամանակ, և նորա վախճանէն զկնի կաթողիկոսական գործքերը կը տնօրինէր, որպէս տեղապահ։ Վրթանէս կ'աճապարէ և թուղթ կը գրէ Կիւրիոնին յետս կալ քաղկեդոնեան հաղորդակցութենէն, բայց Կիւրիոն կը յամառի և աւելի ճանապարհ կը բանայ ատելութեան։ Այս միջոցին Ռշտունեաց Աբրահամ եպիսկոպոսը (Աղբաթան գիւղէն) Սմբատ մարզպանի և այլ նախարարաց խորհրդով և ազգի հաւանութեամբ կաթողիկոս կ'ընտրուի Հայոց. և մինչդեռ Կիւրիոն Ցուրտաւայ Մովսէս եպիսկոպոսն առ ինքն կոչէ, որ դատէ ամբաստանութեան համար, նա կը փախչի և կ'ապաւինի Աբրահամ կաթողիկոսին և մի առ մի կը յայտնէ Կիւրիոնի արարքները։ Աբրահամու և Կիւրիոնի մէջ երկար գրագրութիւններ կը բացուին, որոց հաւաքածոյն աւանդած է Ուխտանէս պատմագիրը։ Աբրահամ կը յորդորէ զԿիւրիոն քաղկեդոնական բաժանմամբ չըվրդովել Հայոց և Վրաց դարաւոր սէրը և խաղաղութիւնը,

իւն նա փոխանակ զինջանելու՝ անարգական պատասխաններ կը գրէ. ուստի և Աբրահամ կաթողիկոսն կը ստիպուի ժողով գումարել և իսպառ մերժել զԿիւրիոն և նորա հետեւողները 'ի հաղորդութենէ Հայաստանեայց եկեղեցւոյ: Կիւրիոն սաստիկ կը վիրաւորի և կը քաջալերէ Յունաց Մօրիկ կայսեր, և սա Հայոց և Յունաց եպիսկոպոսներէն ժողով կը գումարէ Կ. Պօլսոյ մէջ, ուր 'ի միջի այլոց կը գտնուին Վրթանէս աթոռակալն և Գրիգոր եպիսկոպոսն: Եպիսկոպոսներէն ոմանք կայսեր ահէն հաւանութիւն կը ցուցնեն Քաղկեդոնի ժողովին և շատերը ընդդիմանալով կը դառնան 'ի Հայաստան: Մօրիկ զայրանալով Յունաց բաժնի Հայոց համար Յովհաննէս անուն մէկը, Բագարան գիւղէն, կաթողիկոս կը կացուցանէ, որպէս հակաթոռ Աբրահամու կաթողիկոսին Հայոց: Երբ հայրապետութիւնը այսպէս կը բաժանուի յունական նենգութեամբ, մեծ յուզմունքներ կը լինին Հայոց մէջ 'ի վնաս հանրութեան ազգին: Այս միջոցին սաստիկ պատերազմական կոտորածներ կը լինին Յունաց և Պարսից մէջ, որով և Երուսաղէմը կ'առնուի, Խաչափայտը կը գերուի 'ի Պարսկաստան, ընդնմին և Զաքարիա Պատրիարքն և 30,000 անձինք: Այս պատերազմաց ժամանակ Հայոց

Տարօնոյ գաւառն եւս ահագին կոտորածնե֊րու ասպարէզ կը դառնայ, ուր Մուշեղ և Գայլ — Վահան Մամիկոնեանք հարուածներ կը տան պարսկական հրոսակներուն ։ Այս պարսկական ապստամբութեան մէջ կը նա֊հատակուին եօթն խոստաճարակներն, որ Յունաստանէն Գլակայ վանքն եկած էին և ճգնողական կեանք կը վարէին խոստաբուռ կենօք ։

Յունաց բաժնի մէջ Յովհաննէս Հաւու֊թառն կը վախճանի և իրեն չը յաջորդեր ոք ։ Այնկայ ժամանակէն զկնի կը մեռանի նոյն֊պէս և Աբրահամ կաթողիկոսն, որ իւր կեն֊դանութեան ժամանակ ամեն կերպով աշ֊խատեցաւ Հայոց, Վրաց և Աղուանից կրօ֊նական ամբողջութեան համար և նամակներ գրեց ինչպէս Վրաց՝ նոյնպէս և Աղուանից, բայց դժբաղդաբար Վրացիք չը կարացին նոյն վաղեմի միաբանութիւնը պահպանել, զոր պահպանեցին Աղուանք ։

Աբրահամու տեղ կ՚ընտրուի կաթողիկոս Տարօնոյ Մամիկոնեանց եպիսկոպոսն և Գլա֊կայ վանից առաջնորդն՝ Կոմիտաս, Արագա֊ծոտն գաւառի Աղց գիւղէն ։ Սա կը ձեռ֊նարկէ Հռիփսիմեանց վկայարանի և Էջմի֊ածնի գմբէթի նորոգութեանը ։ Առաջնոյն մէջ կը գտնուին Հռիփսիմեանց նշխարքը՝ Ս. Լուսաւորչի և Սահակայ մատանիներով.

ընկղուած տապանի մէջ՝, զոր առանց բանա-լու վերնատին կ'ամփոփէ Կոմիտաս, շքեղ հանդէս կատարելով և Անձինք նուիրեալք գե-ղեցիկ Շարականը երգել տալով, զոր ինքն շա-րագրած և նուիրած էր Ս. Կուսանաց փա-ռացն ու յիշատակին, որպէս վայելուչ և արտաշարժ ներբող։ Կոմիտաս այլ և այլ ե-կեղեցական բարեկարգութիւններ կ'ընէ, և եօթնամեայ կաթողիկոսութենէն զկնի կը վախճանի և իւր տեղը կ'ընտրուի Քրիստափոր Գ. Ապահունեաց գաւառէն, ազատ տանէ, խորհրդով Վարազտիրոց մարզպանին, Թէ-ոդորոս Ռշտունի իշխանին և այլ նախարա-րաց և հաւանութեամբ ազգին։ Սակայն ե-րեք տարիէն յետոյ՝ իւրովի կը հրաժարի կա-թողիկոսութենէ և առանձնանալով՝ կրօնա-ւորական կեանք կը վարէ։

Քրիստափորին կը յաջորդէ Եզր կամ Եզրաս, Նիգ գաւառի Փառաժնակերտ ա-ւանէն, որ սնուած էր կաթողիկոսարանի մէջ և փակակալ էր Ս. Գրիգոր եկեղեցւոյն։ Սորա կաթողիկոսութեան ժամանակ Հա-յաստանեայց եկեղեցին չարաչար կը տագ-նապի քաղկեդոնական մոլեկրօնութենէն։ Հերակլ Յունաց կայսրը Պարսից հետ հաշ-տուելէն և Խոսրով Թագաւորէն Խաչափայ-տը առնելէն զկնի (որ գերուած էր Խոս-րովի ժամանակ), կը դիմէ ՚ի Կարին (որ և

Թէոդուպոլիս), և կը հրամայէ գաւառական ժողով գումարել Յունաց և Հայոց եպիսկոպոսներէն, առանց մասնակցութեան բոլոր ազգին Հայոց, ուր կը կոչէ նոյնպէս և Եզր կաթողիկոսն՝ Մժեժ Գնունի նախարարի պատգամաւորութեամբ, ազդ առնելով միանգամայն, որ եթէ չը հաճի երթալ, Յունաց բաժնի մէջ այլ կաթողիկոս պիտի նստուցանէ և չը թողու որ Եզր կաթողիկոսական իշխանութիւն վարէ: Եզր այս բռնական ազդարարութենէն ստիպուած, կ'ուղեւորի դէպ 'ի Կարին և կը ցանկայ իւր հետ տանել Մաթուսաղա Մեծիմաստ վարդապետը նախարարաց խորհրդով, սակայն նա Երասխաձորի վարդապետարանին մէջ զբաղած լինելով դաստիարակութեամբ՝ կը հրաժարի և միայն դաւանութեան գիր կ'ուղարկէ և կը պատուիրէ որ կայսեր առջեւ կարդան ժողովի մէջ: Որբելեան իւր պատմութեան մէջ կ'աւանդէ այս դաւանութեան գիրը ամբողջապէս, որ ընտիր և ողջախոհ իմաստներ կը պարունակէ հաւատոյ էական մասանց վրայ): Եզր Կարին կը հասնի քանի մի եպիսկոպոսներով և վարդապետներով: Ժողովը կը գումարուի (629ին), ուր մէջ կը բերուին Հայոց դաւանութեան Թուղթն (Մաթուսաղայի գրած) և Յունաց դաւանագիրը ստորագրութեամբ Հե-

րանկը կայսեր և քանի մի եպիսկոպոսաց։ Եր-կար վիճաբանութիւններ կը լինին առանց համաձայնութեան։ Եզր առանձին կը խոր-հի հայ եպիսկոպոսաց ու նախարարաց հետ և քանի մի առաջարկութիւններ կ'առնէ կայսեր։ Կայսրը կը մերժէ և միայն կը ստի-պէ որ Քաղկեդոնեան ժողովը ընդունուի, սպառնալեաց հետ պատուաւորական պար-գեւներ ևս խոստանալով Եզրին։ Եզր, կայսեր հրապուրանքներէն ստիպուելով, կ'ըն-դունի Քաղկեդոնի ժողովը և ընդ նմին Կողբ գիւղաքաղաքը՝ որպէս պարգեւ։ Բայց սոյն այս փառատիրութիւնը առիթ կը լինի, որ յետ ժամանակաց իւր իշխանական փառքէն կը զրկուի և կաթողիկոսաց շարքին մէջ իւր ա-նուան գլխագիրն գլխիվայր և ներհակ կը գրուի, ըստ որում փոխանակ իւր ընդհա-նուր ազգի համոզմանը հետեւելու՝ հպա-տակ եղաւ յունական հրապուրանքներուն (1)։

Եզր Յունին կը դառնայ մեծամեծ պար-գեւներով և փառքով, բայց, ըստ պատմելոյ Օրբելեանի, Կապուտ կողոպուտ 'ի կայքենի փա-ռաց և 'ի Ճշմարիտ հաւատոց, և կ'աշխատի նոր ժողովով հաստատել իւր ընդունած դաւա-

(1) Մեր ամեն պատմագիրներն միաբան կը կշտամբեն Եզրի թուլամտութիւնն ու ագահութիւնը։ Սեբէոս, Գլ. ԻԹ. Ասողիկ, Բ. Գիրք Գլ. Բ. — Սամուէլ. — Վարդան — Կիրակոս. — Օրբէլ.

նութիւնը, սակայն սաստիկ չըլլալ կը տարածուի ազգին մէջ, կաթողիկոսարանի նշանաւոր վարդապետն և Ս. Գրիգոր եկեղեցւոյն փականակալն՝ Յովհաննէս՝ յայտնապէս կ'ընդդիմանայ Նզըրին, կ'անարգուի և այս խօսքերը կ'ասէ. «Յիրաւի կոչեցաւ անունդ Նզըր, վասն զի յեզր տարեալ հաներ զհայաստանեայս, քակեալ զսահման հաւատոյ հարցն մերոց ուղղափառաց և խրամատեալ զպանկն առաքելական և 'ի մարդադաւան տումարն Լեւոնի (Հռովմայ Պապին) կործանեալ»[1]: Նզըր կը հրամայէ զան հարկանել զվարդապետն, բայց նա ելնելով կ'աղաղակէ. «Ահաւասիկ գնացի խնդալով յերեսաց ատենին, զի վասն անուան Տեառն արժանի եղէ անարգելոյ»[2], որ և այս աքսորանքէն յետոյ կ'առանձնանայ Սայր վանքին մէջ, սակայն այն տեղէն ևս կը հալածուի դէպ 'ի Ողուանք, և իբր 'ի նախատինս՝ յիշեալ վանքը կը կոչուի Գոմ (Սպրագոմ) և վարդապետն՝ Սպրագոմեցի:

Մինչդեռ այնօրինակ ընդդիմութեամբ կը տագնապի Նզըր Դունայ մէջ, յունական բաժնի Հայոց մէջ ևս սաստիկ խռովութիւն կը ծագի, որովհետև քաղկեդոնիկութեան միտողներն արդէն սկսած էին ընդդէմ ա-

(1) Յովհաննէս կաթողիկոս: (2) Նոյն:

ռաքելական ուղղութեան Հայոց՝ Հաղորդութեան բաժակի մէջ ջուր խառնել, հացը՝ խմորուն առնել, Ծննդեան, Յայտնութեան և Մկրտութեան տօնից նախնական կարգը փոխել, Սուրբ Աստուածն՝ առանց Խաչեցարի երգել, և այլն, որոց համար և խռովութիւնն այնչափ կը զայրանայ, որ ընդունողներն անգամ՝ վերստին կը մերժեն Քաղկեդոնի ժողովը։

Այս կրօնական շփոթութեանց միջոցին, որ Յունաց շնորհիւ ճարակուած էր, Պարսիկները կը յարձակին Տարօնոյ գաւառին վրայ, գրգռելով յունական արտաքին մտերմութեան ցոյցերէն առ Հայս, և հարուած կը կրեն Հայոց կողմէն։ Պարսից յարձակումներն իսպառ կը դադարին Վահան Կամսարականի (այսպէս կը կոչուի, Թէպէտ և Մամիկոնեան ցեղէն), և իւր Տիրան որդւոյն ժամանակ, որոնք պարսկական զօրքին կը դիմադրաւեն և կը ցրուեն։ Տարօնական վերջին պատերազմին կը մասնակցին, նոյնպէս Գլակայ վանուց 300 կրօնաւորներն՝ խաչադրօշ նշանաւ մոգպաշտութեան դէմ զինելով։

Այսպէս կը վերջանան, ինչպէս պարսկական հալածանքներն, նոյնպէս և եկեղեցական պատմութեան Երրորդ Շրջանը (450—640), սակայն քրիստոնեայ Հայաստան դար-

ձեռաղ հանդստութիւն չը գտներ. վասն զի քաղկեդոնական ատելութիւններն անընդհատ կը շարունակէին Յունաց կողմէն, և մազդակրօնականին կը յաջորդեն հագարական հալածանքները կամ արաբական արշաւանքները, որոց վրայ խօսիլն յաջորդ Շրջանին թողլով, այժմ հարեւանցի ակնարկ ձգենք միայն՝ թէ ի՞նչ վիճակ ունեցաւ. ազգային մատենագրութիւնը Թարգմանչաց ժամանակէն կամ հինգերորդ դարէն զկնի։



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.

Ընդհանուր տեսութիւն Երրորդ Շրջանի մատենագրութեան վրայ. — Ուսումնասիրութիւնք. — Երկասիրութիւնք Մամիկոնեան Աբրահամ եպիսկոպոսի, Սիւնեաց Պետրոս եպիսկոպոսի, Մովսէս, Աբրահամ և Կոմիտաս կաթողիկոսաց, Մաթուսաղայի, Յովհաննու Մայրավանեցւոյ, Յովհաննու Մամիկոնեան և ճոն Բարոյի.

Մատենագրութեան *բարգաւաճանքն կամ նուաղութիւնն կախումն ունի ժամանակակից դէպքերէն, որոց ենթարկուած է ազգ մի կամ ժողովուրդ։ Այս նկատմամբ եթէ պատկերացնենք մեզ Երրորդ Շրջանի բուն նկարագիրը, ակներեւ կը տեսնենք, որ մեր ազգն ամենեւին ժամանակ չունէր ուսման և գրագիտութեան մէջ ծաղկելու. վասն զի մոգակրօնութեան հալածանքէն ամենեւին հանգստութիւն չըկար, ոչ հայրենեաց մէջ, ոչ ընտանեաց մէջ և ոչ անապատներուն մէջ անգամ։ Ամբողջ ազգի վիճակը շարունակ զինուորութիւն էր հաւա-*

տոյ պաշտպանութեան համար ։ Արդարեւ՝ հալածանքը մի գեղեցիկ դպրոց էր քրիստոնեայ Հայաստանին համար, ուր զգացմունքները կ'ազնուանային, հոգիները կը վառուէին երկնաւոր սիրով և միտքերը միշտ արթուն էին աստուածպաշտութեան խորհրդներով, բայց գրաւորապէս բարգաւաճելու ժամանակ չը կար. ուստի նոյն Շրջանի Հայերը իւրեանց նահատակութեան և ջերմ քրիստոնէութեան յիշատակը միայն կարացին աւանդել յետագայից և ոչ գրաւոր հարստութիւն ։ Թողունք ասել, որ քաղկեդոնական տարապարտ խնդիրներն եւս եկան խառնեցան մոգակրօնական հալածանաց հետ և սկսան վիճաբանութեամբ ըզբաղեցնել միտքերը ։ Ուստի ինչպէս պիտի տեսնենք, 6դ և 7դ դարերուն մէջ նուազ են թէ մատենագիրք և թէ մատենագրական ճոխութիւնք ։

Գլխաւոր ուսումնավայրքն էին 6դ դարուն մէջ Սիւնեաց վարդապետարանը. իսկ 7դ դարուն մէջ Արշարունեաց Երասխաձորի Վարդիկ-Հայր կոչուած վարդապետարանը, Շիրակայ Դպրեվանքը և Կարնոյ Խաչկայ վանքը ։ Իսկ նոյն դարուց մէջ գրաւոր երկասիրութեամբ յայտնի հեղինակներն են սոքա ։

ԱԲՐԱՀԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՄԻԿՈՆԵԱՆՑ. — Աղուանից Վաչական Թագաւորի խնդրանօք գրած է քանի մի խրատներ և Թարգմանած է Եփեսոսի տիեզերական ժողովի պատմութիւնը, զոր երկասիրած է Մաբուգ քաղաքի Փիլիքսիանոս եպիսկոպոսն։ Ոմանք այս պատմութիւնը կը համարեն նոյն ինքն Աբրահամու ինքնագիր երկասիրութիւն, վասն զի ձեռագրաց վրայ կը գտնուի Վաչագանայ անունը, որուն նուիրուած է, առանց յիշուելու, որ Թարգմանութիւն է։

ՊԵՏՐՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՒՆԵԱՑ. — Ասոր վերայ մեծ գովեստով կը խօսի Ս. Օրբելեան և Մովսէս Խորենացւոյ աշակերտ կը համարէ, (ժամանակագրութեան նայելով աւելի տոյգ է աշակերտի աշակերտ համարել,) սակայն իւր երկասիրութիւններէն շատերը մեզ չեն հասած, ինչպէս են՝ Պատմութիւն մի և Ներբող Վասակայ հայր Բաբիկին վրայ, որք կը յիշատակուին պատմագրութեանց մէջ։ Պետրոսի անուամբ մեզ հասած երկասիրութիւնքն են — Ներբողեան Աստուածածնի վերայ այլափոխ սկզբնաւորութեամբ «Բազմութիւնք քրիստոսասէր ժողովրդոց» — Ճառ Քրիստոսի ծննդեան վերայ, «Ծնանի Էմմանուէլ՝ Աստուած մարդացեալ», և Պատասխանիք առ Հարցմունս Վաչագանայ իշխանի, որուն

մէջ կը խօսուի ընդհանրապէս Քրիստոսի մարդեղութեան վրայ ։ Պետրոս, իբրեւ ժամանակակից նշանաւոր գիտնական, մասնակցութիւն ունեցաւ Հայոց Տօմարի ուղղութեանը, որ կատարեցաւ Մովսէս Եղիվարդեցի կաթողիկոսի օրով ։

ՄՈՎՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՂԻՎԱՐԴԵՑԻ. — Սորա ուսումնականութիւնը յայտնի է Հայոց Տօմարի ուղղութեան գիտնական հետազօտութենէն ; բայց մասնաւոր երկասիրութիւն չունի, բաց 'ի այն Թուղթը, զոր գրեց առ Կիւրիոն, նախնի Հայոց շաւղին մէջ մնալու եւ ոչ թէ քաղկեդոնիկութեան յարելու ։

ԱԲՐԱՀԱՄ ԿԱԹՈՂԻԿՈՍ. — Մովսէս կաթողիկոսի մահէն յետոյ՝ Աբրահամին վիճակեցաւ թէ կաթողիկոսութիւնը եւ թէ Վրաց բաժանման առաջն առնելու պարտաւորութիւնը ։ Ուստի Աբրահամ զանազան Թղթեր գրեց առ Կիւրիոն եւ նոյնպէս առ Աղուանս ։ Այս Թղթերը, զորս ժողոված է Ուխտանէս պատմագիրը, կը պարունակեն իրենց մէջ զգուշացուցիչ յորդորներ եւ դաւանաբանական տեղեկութիւններ ։

ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ. — Եօթներորդ դարու սկիզբն հայրապետ ընտրուելով՝ Հռիփսիմեանց վկայարանը նորոգել տուաւ։ Սորա մտաց և զգացմանց ծնունդն է Հռիփսիմեանց Շարականը — Անձինք, ինչպէս և առաջ ասացինք։ Այս համառօտ ներբողին մէջ կը նկարագրուի կուսանաց պատմութեան գլխաւոր մասերը, մանաւանդ Հռիփսիմէ հրաշագեղ կուսին, որուն գեղեցկութեան վրայ կը յիմարի Թագաւորը. Հեթանոսները կըսքանչանան՝ աշխարհը արհամարհելուն համար. իսկ հրեշտակները կը տանեն ուրախութեամբ անմեղ կուսի մահը։ Արեւմուտք և Արեւելք — Դիոկղետիանոս և Տրդատ — յայտնապէս իրարու կը խոստանան և ծածուկ իրարմէ յափշտակել կը ջանան Հռիփսիմէն, բայց նա աշխարհի սէրը և մեծութիւնը կը զոհէ երկնաւոր սիրոյն։ Աշխարհի հզօրներու զէնքերը և բազուկները կը թուլանան և տկար կանայքն աստուածային սիրով կը զօրանան և կուսական ձեռքերով կը յաղթահարին պերճաշուք թագաւորները։ Միով բանիւ Աստուծոյ տըկարները կը զօրանան աշխարհի հզօրներէն և յիմարները կ'իմաստանան աշխարհի իմաստուններէն։ Կոյսերը իրենց քրիստոնէութեամբ կը ծնանին շատ ազգեր և մանուկ մայրերը՝ ծերոց հրապարակներ (բազ-

մանթիւ ծերեր)։ Բայց 'ի այս գեղեցիկ շարականէն Սոմիտաս գրած է Նմանապէս քանի մի թղթեր հաւատոյ դաւանութեան վըրայ, և ինչ ինչ քննադատական կամ աստուածաբանական համառօտ գրուածքներ։

ՄԱԹՈՒՍԱՂԱ. — Մինչդեռ Հերակլ Յունաց կայսրը Կարնոյ ժողովին մէջ կը յուզէր քաղկեդոնական խնդիրները Եզր կաթողիկոսի հետ, Մաթուսաղա առանձնացած Երասխաձորի վարդապետարանին մէջ գիշեր ցերեկ կ'աշխատէր աշակերտելոց յառաջադիմութեան համար, ուր կարգուած էր Սոմիտաս կաթողիկոսէն։ Եզր կամեցաւ Մաթուսաղան ևս իւր հետ Կարնոյ ժողովը տանել, իբրև նոյն ժամանակի բազմահըմուտ անձն, բայց նա իւր տկարութիւնն պատճառ բռնելով՝ առաւել լաւ համարեց իւր վարժապետութիւնը շարունակել՝ քան թէ տարապարտ վէճերու խառնուիլ, որոց մէջ աւելի տիրապետական բռնութիւն կը նշմարէր քան թէ քրիստոնէական խորհրդածութիւն և ճշմարտութեան հետազօտութիւն։ Մաթուսաղա բաւական համարեց Դաւանութեան Գիր միայն ուղարկել Կարնոյ ժողովին մէջ կարդալու, որ իբրև միակ երկասիրութիւն Մաթուսաղայի հասած է մեզ. թէպէտ և կը կարծուի որ ուրիշ գրուածք-

ներ եւս ունեցած լինի, որոնք 'ի կորուստ մատնուած են. վասն զի իւր համբաւը շատ մեծ եղած է ժամանակակցաց մէջ, ինչպէս և կըտեսնենք Ս. Օրբելեանի խօսքերէն. «Անձ քերթող և անյաղթ փիլիսոփայ, զարդացեալ ամենայն առաքինութեամբ. ուսեալ զքերթողութիւն և վարժեալ ճարտասանականւոյն, հմտացեալ փիլիսոփայական արուեստից, լի ամենայն իմաստութեամբ և կատարեալ գիտութեամբ.... կացուցանեն (զՄաթուսաղա) յաստիճան վարդապետութեան եկեղեցւոյ և նստուցանեն գլուխ ամենայն վարդապետացն 'ի վերայ բարձր ահարկու ամբիոնի ռաբունարանին, յորմէ բղխէր գետորէն աստուածային իմաստութիւնն և փարթամացուցանէր զամենայն աշակերտեալսն» (1). Մաթուսաղա իւր աժանաւորութեամբ եպիսկոպոս դարձաւ Սիւնեաց, որ Հայոց կաթողիկոսութեան մեծ թեմն էր.

ՅՈՎՀԱՆ ՄԱՑՐԱՎԱՆԵՑԻ. — Սա Եզր կաթողիկոսին ընդդիմացաւ Քաղկեդոնի ժողովին ընդունելու համար և աքսորուեցաւ. Այս առանձնութեան մէջ երեք գիրք շարադրեց, (ինչպէս կ'աւանդեն Ասողիկ եւ

(1) Ստ. Օրբել. Գլ. ԻԸ.

Վարդան պատմիչը) Յունաց և քաղկեդոնական վարդապետութեան դէմ այսպիսի անուններով — Խրախ Վարոյ, Հատապարմար և Նոյեմոյ, և Թէոպէտ փախնալով, իբրեւ իւր հեղինակութիւն չէր հրապարակ հանած, սակայն իւր հակառակորդները (քաղկեդոնականք) անհետացուցին: Յովհան այնչափ նշանաւոր էր, որ նախարարք, ինչպէս Մաթուսաղայի, նոյնպէս և սորա համար, խորհուրդ տուին Եզրին որ հետը տանի Կարնոյ ժողովն, սակայն նա չը կամեցաւ տանել: Այս մասին կը խօսին Յովհաննէս կաթողիկոս, Կաղանկայտուացի, Օրբէլեան և այլք:

ՅՈՎՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ. — Սա Մամիկոնէից եպիսկոպոսն էր և Ներսէս Շինող կաթողիկոսի օրով գրած է Տարօնոյ պատմութիւնը իբրեւ Շարայարութիւն Զենոբայ երկասիրութեան, որուն վրայ արդէն խօսած ենք: Յովհաննու պատմական գրուածքի յիշատակարանին մէջ կը յիշուի, որ ինքն Տարօնոյ պատմութեան հաւաքածոյն աւանդած է երեսուն գլուխներով: Սակայն այժմեան գտնուածն ու տպագրուածը միայն ութ գըլուխներէ կամ պատճէններէ բաղկացած է, որոց հինգն յանուն Զենոբայ, և երեքն միայն յանուն Յովհաննու, իսկ մնացածներն

կամ կորուսեալ են, կամ մեզ չեն հասած։

Յովհաննու երկասիրութեան գլխաւոր նիւթն է՝ այն անցքերուն կամ պատերազմներուն պատմութիւնը, որոնք պատահեցան Մուշեղ Մամիկոնեանի և նորա որդւոյն Գայլ Վահանայ ժամանակ։ Պատմութիւնը գրուած է աշխոյժ գրչով, բայց տեղ տեղ ժամանակի և անձանց շփոթութիւններ կան, որոնք պատմական ստուգութիւնը կ'աղաւաղեն։ Այլ կարծուի որ յետին ժամանակաց գրիչներ պատճառ եղած լինին այս անտեղութեանը, որովհետև նոյն պատմութեան յիշատակարանին մէջ ազատութիւն տրուած է, որ կամեցողն իւր ժամանակի պատմութիւնը աւելցնէ։

ԲԱՐՍԵՂ ՃՈՆ. — Սա Դպրեվանից առաջնորդն էր և իւր ժամանակին նշանաւոր։ Երկասիրած է մեկնութիւն Մարկոսի աւետարանին և այլ գրուածքներ, նմանապէս մասնակից եղած է Դունայ ժողովին, որ գումարեցաւ Ներսէս Շինողի օրով, և 'ի միջի այլ խնդրոց, ընտրութիւն եղաւ Շարականաց։

Բ.

Երկասիրութիւնք Սեբէոս եպիսկոպոսի. Մովսէսի Կաղանկայտուացւոյ, Դաւթի Բագրեւանդացւոյ, Անանիայի Շիրակացւոյ. Թէոդորոսի Քռթենաւորի. Մովսէսի Սիւնեցւոյ. Գրիգորի Արշարունւոյ. Փիլոնի Շիրակացւոյ. Սահակ կաթողիկոսի Ձորափորեցւոյ. — Համառօտագրութիւն պարունակութեան իւրաքանչիւրոց.

ՍԵԲԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ. — Բագրատունեաց ցեղի եպիսկոպոսն, ինչպէս և յիշուած է Ներսէս Շինողի ժամանակ գումարուած Դունայ ժողովի եպիսկոպոսաց կարգին մէջ: Երկասիրած է Պատմութիւն Հերակլի, որուն մէջ խառն են և Հայոց ականաւոր իշխանաց արարքներն: Սեբէոսի պատմագրութեան գլխաւոր նիւթն են Խոսրով Բ, Կաւատ, Մօրիկի և Հերակլի ժամանակ կատարուած պարսկական և յունական պատերազմները. բայց համառօտ կերպիւ աւանդուած է մինչեւ նոցա օրերը Հայոց պատմութիւնը 'ի Հայկայ սկսեալ: Սեբէոս կը պատմէ նմանապէս Պարսից Սասանեան տէրութեան տկարանալն և Մահմետականաց զօրանալն:

Բաց 'ի քաղաքական անցքերէն Սեբէոս կը պատմէ Յունաց և Հայոց մէջ պատահած եկեղեցական խնդիրները, նոցա տարամունքները Քաղկեդոնի ժողովն ընդունելու համար և Հայոց մերժումն: Կը յիշէ նմա-

նապէս Կոմիտաս և ուրիշ քանի մի կաթո-
ղիկոսաց գործքերը։ Կ'աւանդէ Երուսաղէմի
պատրիարքական տեղապահ Մոդեստոսի գը-
րած թուղթն առ Կոմիտաս և սորա պա-
տասխանն։ Սեբէոսի երկասիրութիւնը քա-
նի մի մասամբ արժանի է մտադրութեան,
մանաւանդ այն անցքերով, որոնք ուրիշ
պատմագրաց մէջ չեն յիշուիր։

ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑԻ. — Ուտի գա-
ւառի Կաղանկայտուց քաղաքաւանէն, մօտ
Պարտաւ վաղեմի մայրաքաղաքին և Տրտու
կամ Թարթառ գետոյն։ Մովսէս մատենա-
գրական յիշատակարանաց մէջ կոչուած է,
նոյնպէս Կաղանկատուացի, Կաղկանտուացի և եր-
բեմն Աղուանեցի։ Նշանաւոր է սա եօթնե-
րորդ դարու մատենագրաց մէջ իւր երկա-
սիրութեամբ, որ է Պատմութիւն Աղուանից։

Այս պատմութիւնը բաղկացած է երեք
Գրքէ, բայց ժամանակագրական հաշուով՝
երկու Գիրքը միայն Մովսէսին կը պատկա-
նին, իսկ երրորդը անանուն հեղինակի շա-
րայարութիւն է. վասն զի Մովսէս ապրած
է Աղուանից Ջևանշէր թագաւորի և Վի-
րոյ կաթողիկոսի ժամանակ, Էդ դարուն մէջ,
որոց գործքերը իբրև ականատես կը պատ-
մէ. իսկ երրորդ Գրոց պատմական անցքե-
րը մինչև Ժդ դարուն վերջերը կը հասնին։

Մովսէսի երկասիրութիւնը պատմագրական մեծ արժէք ունի. վասն զի Աղուանից ծագման, վարուց, բարուց և երկրի բերքերուն վրայ այնպիսի ծանօթութիւններ կու տայ, զորս ուրիշ պատմագրաց մէջ անօգուտ է որոնել: Կը պարունակէ Աղուանից աւանդութիւնները և նոյն աշխարհին մէջ պատահած պատերազմները Պարսից, Հայոց, Հոնաց, Արաբացւոց, Խազրաց, Թուրքաց և այլոց: Սակայն Մովսիսի պատմութեան քաղաքային, ցեղային և երկրային ծանօթութեանց հետաքրքրութիւնը մեր նպատակէն արտաքոյ լինելով՝ կը թողունք բանասիրական և գրագիտական պատմութեան (1), և միայն կը համառօտագրեմք եկեղեցական պատմութեան վերաբերեալ ծանօթութիւնները:

Մովսէս կը խօսի Աղուանից (կամ աւելի լաւ ասել Հայ-Աղուանից) քրիստոնէական դարձի վրայ, առաքելութեամբ Եղիշէի, հաւատոյ վերանորոգութեան և կաթողիկոսական սկզբնաւորութեան վրայ քարոզութեամբ Ս. Լուսաւորչին և իւր թոռան Գրիգորիսի, որ նահատակեցաւ Մազքթաց ազգէն. նոյնպէս կը խօսի Մեսրոպայ և իւր

(1) Մովսիսի պատմութեան փարիզի տպագրութիւնը, Շահնազարեան Կ. պատմագէտ վարդապետի ձեռամբ, ունի ընդարձակ յառաջաբան, յորմէ ընթերցողք մեծ լոյս կարեն առնել Աղուանից ազգի, երկրի, պատմագրի և նաև հին ժամանակներից ազգաց վրայ.

աշակերտաց գրագիտական, վարդապետա-կան և դաստիարակական վաստակոց վրայ 'ի շինութիւն Աղուանից աշխարհին: Մովսէս կը խօսի Աղուանից երկրին մէջ կատարուած քրիստոնէական նահատակութեանց, եկե-ղեցական ժողովոց և բարեկարգութեանց, վանօրէից և եկեղեցեաց շինութեան, քրիս-տոնէական վկայից մարտիրոսութեան, անա-պատականաց կրօնաւորութեան, կաթողի-կոսական աթոռոյ վիճակի և փոխադրութեան և սրբազան նշխարաց յայտնութեանց վրայ: Մովսէս կը խօսի տեղատեղ գտնուած հեթա-նոսական սովորութեանց, դիւթական ա-ղանդոց և մանաւանդ մատնահատութեան չար աղանդոյն բարձման վրայ ձեռամբ Վա-չագանայ: Կը խօսի Աղուանից կաթողիկոսաց, բարեպաշտ իշխանաց և եպիսկոպոսաց վա-րուց, գործոց և Հայոց հայրապետութեան հետ ունեցած յարաբերութեանց վրայ, ո-րոյ մասին և կ'աւանդէ զանազան թղթեր, ինչպէս են Թուղթք Կիւրա կաթողիկոսի, Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպոսի, Մա-թէ երիցու առ Վաչագան, Յովհաննէս կա-թողիկոսի Հայոց առ Աբաս կաթողիկոս Ա-ղուանից, Աբրահամ կաթողիկոսի Հայոց վասն զգուշացուցանելոյ 'ի քաղկեդոնակա-նութենէ, Թուղթ Ջեւանշէրի առ կայսրն Յունաց Կոստանդին և Նորին պատասխանին

Թուղթ Դաւիթ և Յովէլ Երիցանց և պա-տասխանի Ուխտանէս կաթողիկոսէն և Ջե-ւանշէրէն, գրուած իւր Մայրավանեցւոյն, Ըստ Դաւթակայ 'ի Ջիւանշէր մեծագործ Թագաւոր, որ Կաղանկատուացւոյ պատմա-կան դիւցազն է, և այլն։

Մովսէս կը խօսի առաւել ընդարձակօրէն քանի մի եկեղեցական հովուաց քրիստոնէա-կան և ուսումնասիրական ջանից վրայ, մանա-ւանդ Մեծկունեաց գաւառի Իսրայէլ եպիս-կոպոսի, որ Հոնաց ազգը ծառայաշտու-թենէ և Թանդրի—Խան հսկայ չաստուածոյ պաշտամունքէն Քրիստոնէութեան կը դար-ձընէ և եկեղեցիներ անգամ կը շինէ նոցա համար, բայց յետագայ ժամանակաց հովիւ-ներու անհոգութենէն վերստին կռապաշ-տութեան կը դիմեն։ Կը խօսի վերջապէս Երուսաղեմի եկեղեցեաց և 'ի յիշատակ Ա-ղուանից եղած վանօրէից վրայ։

Իսկ Մովսիսի երկասիրութեան անանուն Շարայարիչն (ըստ ոմանց Մովսէս Դասխու-րանեցին) կը պատմէ զանազան կրօնական դէպքեր Քաղկեդոնի ժողովոյն նկատմամբ, և Հայոց Եղիա կաթողիկոսի երթալն յԱ-ղուանս, միաբանութեան համար եղած ժո-ղովներու գումարումներն և Արաբացւոց արշաւանքները։ Վերջապէս համառօտիւ կը թուէ Աղուանից կաթողիկոսաց անուն-

ներն և գործքերը, Եղիշէ առաքեալէն և Լուսաւորչի Թոռն Գրիգորիսէն սկսելով և հասուցանելով մինչեւ տէր Մովսէս առաջնորդ Փառաւասիայ վանաց, որ ժգ դարու վերջերը կաթողիկոս եղաւ Աղուանից։

ԴԱՒԻԹ ԲԱԳՐԵՒԱՆԴԱՑԻ. — Բագրեւանդ գաւառի Բագաւան գիւղէն, իմաստասէր և Գծ փիլիսոփայ կոչուած Սողիկէն։ Կոստանդին Յունաց կայսեր հրովարտակաւ պատգամաւոր եղաւ առ Ներսէս Շինող կաթողիկոս և առ Աշոտ Կիւրապաղատ Վարագուրացեան։ Շարագրած է Ճառ մի Քրիստոսի աստուածային և մարդկային բնութեան վրայ, Աշոտ պատրիկի խնդրանօք, որ ցարդ տպագրուած չէ։ Նմանապէս Թարգմանած է Ս. Բարսղի քանի մի ճառերը։

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ. — Մանկութեան ժամանակ կը հմտանայ բարոյական ուսմանց և Աստուածաշունչ Գրոց, և ապա հետամուտ կը լինի ուսողական (մաթէմատիկական) գիտութեան։ Այս նպատակաւ կ՚ուղեւորի ՚ի Կարին, ՚ի Չորրորդ Հայաստան առ Քրիստոսատուր գիտնական, ՚ի Պոլիս, և ապա ՚ի Տրապիզոն առ Տիւքիկոս։ Ութ տարի կը մնայ Տրապիզոն Տիւքիկոս գիտնականի մօտ և համարողական ուսմանց մէջ վարժելով Հայաս֊

տան կը դառնայ և շատ աշակերտներ կ'ունենայ ։

Անանիայի երկասիրութեանց մէջ նշանաւոր են Աստեղաբաշխութիւն կամ Աստեղագիտութիւն, որ սովորաբար Յաղագս Երկնից կը կոչուի. Ժամանակագրութիւն ընտիր կարգաւորութեամբ. Յաղագս չափոց և կշռոց. իբրեւ մեկնաբանութիւն Ս. Գրոց մէջ յիշուած և գործածուած չափուց և կշռոց ։ Անանիայի երկասիրութեանց հետազօտութիւնը մեր նպատակէն արտաքոյ համարելով կը թողունք առանց դիտողութեան ։ Միայն այսչափը կ'ասենք, որ նախնեաց մէջ համարողական գրուածք չըլլալուն պատճառաւ, շատ յարգի եղած է Անանիայի երկասիրութիւնը, մանաւանդ աստեղագիտութիւնը, ինչպէս կը կարդանք Մագիստրոսի մի թուղթը, որով կը խնդրէ Պետրոս Գետադարձ կաթողիկոսէն Անանիայի գրուածքն իրեն ղրկել ընթերցասիրելու ։

ԹԷՈԴՈՐՈՍ ՔՌԹԵՆԱՒՈՐ. — Արագած լերան ստորոտը շինուած Աստուածածին վանքին վանահայրն, որ կը համարուի Մաթուսաղայի աշակերտ և Կոմիտաս կաթողիկոսի եղբօրորդին ։ Երկասիրած է քանի մի ճառեր, այն է Ներբողեան ի սուրբ խաչն Աստուածընկալ, նմանողութեամբ Դաւիթ Անյաղթի ճառին.

[illegible] Նեստորականներուն և [illegible] Մ[illegible], և Ո՛ւր — ինչ ինչ մոլորութեանց դէմ։ Թէ-ոդորոսին աշակերտած են Սահակ և Յովհան (Իմաստասէր) կաթողիկոսները, յորոց վերջինն Թէոդորոսի վրայ խօսած ժամանակ «Սարժանայեա վեհապայն և Յոսկեբերան պար-գեւեալ հայր» կ՚անուանէ և կը դրուատէ նորա աննախանձ և մեծաջան ուսուցչու-թիւնը։

ՄՈՎՍԷՍ ՍԻՒՆԵՑԻ. — Հայկականին հետ եկեղեցական և յունական դպրութեան, որ և եր-բեմն Քերթող կոչուած է քանի մի մատենա-գրաց մէջ։ Միւնեցւոյն կ՚ընծայուին ձեռա-գրաց մէջ ճարտասանական և քերականական գրուածքներ և նա և խորհրդածութիւնք Պետրոս Գէորգ։

ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ. — Սահակ կաթողիկոսի ձեռնադրութեամբ եպիսկոպոս կը կար-գուի Արշարունեաց գաւառին և Վահան Կամսարականի խնդրանօք կը շարագրէ Ընթ-ներցուածոց, որուն մէջ կը խօսի ազգային և յունական տօներուն վրայ։ Կը ցաւինք որ այն օրինակ երկասիրութիւնն տակաւին տպագրուած չէ։ Նոյնկ կ՚ա-սէ որ Ներսէհ Կամսարականի խնդրանօք գրած է, իսկ Կամրջաձորեցին՝ Յովհան Իմաստասիրի, սակայն գրուածքին մէջ Վա-

հան Կամսարականը գրուատուած է՝ որպէս Հասակաւ և իմաստութեամբ ծերունի և յԱստուծոյ պարգևեալ Թագաւոր ազգին, և Նորան Նուիրուած է երկասիրութիւնը : Գրիգոր Ներկայ գտնուած է Յովհան Օձնեցւոյ կամ Իմաստասիրի 'ի Մանազկերտ գումարած ժողովին, որուն վրայ պիտի խօսինք իւր ժամանակին :

ՓԻԼՈՆ ՏԻՐԱԿԱՑԻ ԿԱՄ ՇԻՐԱԿԱՑԻ · — Ներսէս Կամսարականի խնդրանօք յունարէնէ հայերէն Թարգմանած է յոյն եկեղեցական պատմիչ Սոկրատ Սքօլաստիկոսի գրուածքը, որ եօԹն գիրք բաժնուած է և Եւսեբիոսի համանուն գրոց շարայարուԹիւնն կարէ համարուիլ, Կոստանդիանոսի մահէն մինչև Թէոդոսի կայսրուԹիւնը : Այս Թարգմանական աշխատուԹեան մէջ իւր կողմէն խօսած է Փիլոն՝ Փլաբիանոսի, Նեկտարիոսի և Եփեսոսի ժողովոյն վրայ (1) :

ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՁՈՐԱՓՈՐԵՑԻ · — Բրդեննաւորի աշակերտ, որոյ անձնադիր հայրապետուԹեան վրայ պիտի խօսինք յաջորդ Շրջանին մէջ. իսկ նորա երկասիրուԹիւնքն

(1) Սոկրատայ գրոց հարազատ Թարգմանութիւնը կը գտնուի սուրբ Աթոսայ գրատան մէջ :

են Հագարացի Մոհամմատ ատրիկանին վրայ գրած Թուղթն, զոր կ՚աւանդէ Պետրոս Ն.-բաքացւոց Նըշաւանայ պատմիչն. Ճ՚ու Նը-մաւեննեաց կամ Սղոզոմեան (Օ՚ազկապարդի) տօնախմբութեան վրայ և Շ՝որոխանք նաւա-կատեաց Ս. Խաչի. Որչափ որ մնացիր ենք պատեհ աւթիւ առանձինն խօսիլ Հայաստանեայց Եկեղեցւոյ աստուածպաշտական Նուագարանի կամ Շ՝արակնոցի և Ժամագրքոց պարունակութեան վրայ, այնու ամենայնիւ աւելորդ չենք համարիլ Ամենայն երկրպագեալ Խաչի շարականաց վրայ քանի մի խօսք աւել։ Խաչի շարականները մեր Եկեղեցւոյ աստուածպաշտութեան ընտիր նուագները կը կազմեն, որոց իմաստները վսեմ են և սքանչելի, քրիստոնէական ոգին ողջամիտ և ուղղափառ, ներբողական դարձուածները վայելուչ և սրտառուչ։ Վասն զի, համարեմ թէ իւրաքանչիւր տան մէջ կը յիշուի Խաչի և Խաչելութեան մեծ խորհուրդը մարդկութեան համար. իւրաքանչիւր տան մէջ մը խիթարութիւն և քաջալերութիւն փրկութեան։

Խաչը նկարագրուած է որպէս վէմ հիմանն Եկեղեցւոյ և միանգամայն որպէս ըղհարան և սեղան սրբութեան, ուր մատուցաւ Ճշմարիտ պատարագ և՝ընենուածն անապական։

Խաչը նկարագրուած է որպէս պսակ փառաց Եկեղեցւոյ, որպէս պսակ եդեալ 'ի գլուխ մեղուցելոց, վայելուչ երանգաք ներկեալ — արեամբ և ջրով։

Խաչն նկարագրուած է որպէս նշան Եկեղեցւոյ 'ի հոգեւոր զինուորութեան և որպէս զէն յաղթութեան՝ սրեալ արեամբ Որդւոյն Աստուծոյ։

Խաչն նկարագրուած է որպէս աթոռ և բազմոց տէրունի, որպէս կառք անպատում և ընդունարան անքննելի խորհրդոյն մարդասիրութեան Յիսուսի և փրկութեան տիեզերաց։

Խաչն նկարագրուած է որպէս փայտ կենաց՝ զՔրիստոս պտղաբերող, որպէս յոյս հաստատութեան, որպէս գաւազան մեղաց ծովու անդունդը պատառող, որպէս առաջնորդ և կարապետ քրիստոնէական կենաց և բանալի արքայութեան։

Խաչն նկարագրուած է որպէս աշխարհակեցոյց նշան և զօրութիւն աշխարհի մէջ տնկուած՝ խաչելութեամբ Փրկչին, որ բազկատարած կը կոչէ իւր մարդասէր թեւոց տակ վաստակեալները և բեռնաւորները — առհասարակ վշտաչարչար մարդկութիւնը։ Կը կոչէ աշխարհականները, որ գան և մարդասիրութիւն սովորին Խաչի պատուանդանին տակ։ Կը կոչէ աշխարհասէրները և անձ-

նասէրները, որ գան ողորմածութիւն և անձ-
նանուիրութիւն ուսանին Խաչի առջեւ։ Կը
կոչէ Ճշմարտութեան և արդարութեան հա-
մար հալածեալները, որ գան Խաչելոյն նային
և սփոփուին։ Կը կոչէ մեղաւորները աշ-
խարհի մէջ վշտացածներն ու յուսահա-
տածները, որ գան Թողութիւն և ապաւէն
գտնեն ներող Փրկչէն և ուսանին, որ սրտի
խաղաղութիւն և հոգւոյ երջանկութիւն չը-
կայ առանց Խաչի։

Ո՜չ ապաքէն այս փրկչական հրաւէրնե-
րու գեղեցիկ պատասխանն է այն մխիթա-
րական և քաղաքակրթական տողերը, որ Խաչի
չարականաց իւրաքանչիւր տան մէջ կը կրկ-
նուին. — Եկէ՛ք ժողովուրդ, երկիրպագենք
Քրիստոսի Աստուծոյ, որ Խաչիւ պարգեւ-
շնորհեց աշխարհի։ Եկէ՛ք, յաղթական և
նոր օրհնութիւն երգենք Քրիստոս Թագա-
ւորին, որ իւր Խաչիւ յաղթեց աշխարհի
և Ճանապարհ բացաւ մեզ յաղթութեան։
Եկէ՛ք, ժողովուրդ, սուրբ Խաչն օրհնենք,
որ մեր փրկութեան համար կանգնեցաւ։
Այսպիսի իմաստներով զեղուն են Խաչի շա-
րականները, որ յայտնապէս կը քարոզեն հե-
ղինակի քրիստոնէական զգացմանց կատա-
րեալ զարգացումն։

Ահա կաթողիկոսով կը վերջանան ԺԳ և
ԺԴ դարերու մատենագիրները, որոց անուն-

ները և գրուածքները նշանակեցինք. սակայն կը ցաւինք որ շատերու վաստակները տպագրուած չը լինելուն և ձեռագիրներն անձեռն չունենալուն պատճառաւ՝ չը կարացինք աւելի ընդարձակ ծանօթութիւն տալ։



ՉՈՐՐՈՐԴ ՏՐԶԱՆ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Յունադաւանութենէ եւ Մահմետականութենէ կրած հալածանքներին մինչեւ կաթողիկոսական Աթոռոյ փոխադրութեան՝ եւ բաժանման ներքին յուզումներն ։

640–1080

Ա.

Ընդհանուր ակնարկ այս Շրջանին վրայ. — Արշաւանք Արաբացւոց 'ի Հայաստան. — Կաթողիկոսութիւն Ներսէսի Շինողի. — Ժողով 'ի Դուին. — Յարձակումն Արաբացւոց 'ի Հայաստան. — Կրօնական հալածանք Կոստանդին կայսեր Յունաց. — Ժողով 'ի Դուին, — Ժողով 'ի Մանազկերտ. — Հաստատութիւն տօնի Վարդանայ Ս. Խաչի. — Կաթողիկոսունք Անաստաս, Իսրայէլ և Սահակ Ձորափորեցի. — Տառապանք Եկեղեցւոյն Հայոց 'ի Յունաց և 'ի Հագարացւոց. — Կալանաւորութիւն Սահակ կաթողիկոսի և Թուղթ աղաչանաց առ Մահմետ զօրավար. — Կաթողիկոսութիւն Եղիայի Արճիշեցւոյ. — Կոչմ տաճկան և այրումն Նախարարաց և ժողովրդոց յեկեղեցին Նախիջեւանի. — Նահատակութիւն Վահանայ Գողթնացւոյ. — Երթ Եղիա կաթողիկոսի յԱղուանս ։

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ պարսկական մոգակրօնութենէն կրած հալածանքներէն աւելի սաստիկ հալածանքներ կը կրէ Արաբացի Խալիֆայից, Ամիրապետաց և Ոստիկանաց տիրապետութեան ժամանակ։ Հազարներով և բիւրերով սպանութիւնք, գե-

րեվարութիւնք, և ընդ նմին հրճգութիւնք և աւերմունք դարերով կը շարունակին Հայաստանի մէջ։ Ցաւ է ասել, որ քրիստոնեայ Յունաց ատելութիւնն եւս Մահմետականի հարստահարութեան հետ անընդհատ կը զայրանայ Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակաց դէմ և մեծամեծ վրդովմանց և աղէտից պատճառ կը դառնայ։ Հայոց իշխաններն ու եկեղեցական հովիւները, ժողովրդեան և Հայրենեաց անդորրութեան համար կը ստիպուին երբեմն Յունաց կայսերներուն դիմել և երբեմն արաբացի Ամիրապետաց, բայց երբէք երկիրը տեւական խաղաղութիւն չըստանար։ Թէ Յոյնք և թէ Արաբացիք միշտ կը ջանան Հայոց ազգն ու Եկեղեցին ստրկաբար հպատակեցնել և քաղաքական ազատութեան հետ հոգեւոր ազատութիւնն եւս բառնալ։ Այս ժամանակաց մանրամասն դէպքերը, որոնք սոսկումն կը պատճառեն, Ազգային Պատմութեան կը թողունք, և միայն Եկեղեցւոյն հասած հարուածները կը պատմենք. Թէ եւ գիտենք, որ անհնարին է բաժանել Ազգային և Եկեղեցական Պատմութիւնը, ըստ որում երկուքն շարունակ մի հոգի և մի մարմին կազմած են և Հայոց դիմադրութիւնն ու կրած կոտորածներն առաւել խղճի և կրօնի ազատութեան համար եղած նահատա-

կութիւններ են, քան թէ աշխարհային իշխանութեան համար եղած պատերազմներ։

Մինչդեռ քաղկեդոնական հրապուրանքները կը յուզէին Եզրի կաթողիկոսութեան ժամանակ՝ Արաբացիք Տարօն կ՚արշաւեն և բազմաթիւ Հայք կը կոտորեն, որոնք, հաւատոյ պաշտպանութեան համար, Վահան Կամսարականի առաջնորդութեամբ դէմ ելած էին, որով և կոտորածի տեղին Սուրբ բանակ կը կոչուի։ Տարօնէն կ՚արշաւեն ՚ի Դուին, ուր էր կաթողիկոսական աթոռն, և Եզր վախճանած՝ տակաւին կաթողիկոս չէր ընտրուած։ Ահագին աւերմունքներ և կոտորածներ կը հասցնեն, 12,000 հոգի կը սպաննեն և 35,000 հոգի գերելով՝ կը դառնան յԱրաբիա։ Տակաւին անկելոց դիակները անթաղ՝ կը ժողովին Հայք՝ Տայոց Ներսէս եպիսկոպոսը կաթողիկոս ընտրելու, բայց նա, Եկեղեցւոյ և Ազգի դառնաղէտ վիճակէն զարհուրելով, կը հրաժարի։ Ի վերջոյ Թէոդորոս Ռշտունւոյ և այլ նախարարաց աղաչանքէն ստիպուելով՝ կ՚ընդունի Ազգի առաջնորդութիւնը և կաթողիկոս կը ձեռնադրուի։ Նորընտիր հայրապետը լալով կը թաղէ անկեալ դիակները, և ապա կըսկսի քանդուած տաճարները նորոգել և եկեղեցիներ շինել ՚ի Վաղարշապատ և յԱրտաշատ, որոց համար և Շինող կը կոչուի։

Ներսէս, (645 ին) իւր կաթողիկոսութեան ՁԳ տարին, եկեղեցական ինչ ինչ խնդրոց համար, ժողով կը գումարէ Դունայ մէջ, ուր կը հաւաքուին 70 եպիսկոպոսունք բազմաթիւ եկեղեցականք և իշխանք։ Այս ժողովին մէջ նախ կը մերժուի քաղկեդոնական ժողովը, որոյ յուզած երկպառակութիւնքը տակաւին կը շարունակուէին, և եկեղեցական ժառանգաւորաց պարտուց համար կանոններ կը խմբագրուին և այսպէս ընտրութիւն կը լինի Շարականաց, որոց թիւը խիստ բազմանալով տեղի տուած էր ժամերգութեան խանգարման և երկարաձգութեան։

Հագարացիք վերստին կը յարձակին ի Հայաստան և Հայք հպատակիլ կը խոստանան, եթէ ազատ թողուն իրենց Կրօնը և Եկեղեցին։ Սակայն Յոյնք կը կատաղին Հայոց հպատակութեան վրայ, և Կոստանդին կայսրն բազմաթիւ զօրքով Հայաստան կը դիմէ ապստամբ ջնջել ազգը։ Հայք յերկիւղէ մտերմութիւն կը խոստանան Յունաց (և այս մտերմութեան լուրն յետ ժամանակաց Արաբիա հանելով Միհրապետը Հայոց 1775 պատանդները կոտորել կը տայ), սակայն կայսրն այս խոստումով չը բաւականանալով և Հայոց նեղ վիճակը յարմար առիթ համարելով իւր հետ բերած քահանայից կը հրա-

մայէ պատսպարելու և զՆերսէս կաթողիկոսն կըստիպէ հաղորդելու ըստ յունական արարողութեան, որուն անկարող կը հնազանդի խեղճ հայրապետն. բայց եպիսկոպոսներէ մին Հաղորդութեան համար կ՚ընդդիմանայ կայսեր և պատճառ կը բերէ, որ կաթողիկոսի հաճութիւնն ևս անկարող է, վասն զի ինքն յատուկ ժողովով մերժած է քաղկեդոնիկութիւնն։

Կայսրը բազմաթիւ զօրք կը թողու Հայաստանի մէջ, որպէս զի գինու զօրութեամբ ազգը յունական ծիսից վարժեցնեն։ Հայք այնչափ կը զզուին այս զօրականաց անարգական և լկտի վարմունքէն, որ կըստիպուին քաղկեդոնիկութիւնն և անհաւատութիւն համանուն ճանաչել։ Զօրական վերակացուները կը բողոքեն կայսեր, և նա սպառնալեօք հրովարտակ կը գրէ Հայոց հայրապետին և նախարարաց։ Այս հրովարտակին համար վերստին ժողով կը գումարուի Դունայ մէջ, ուր բոլոր ժողովական բազմութիւնը միաբարբառ կ՚աղաղակէ. «Մեք նոր աւանդութիւն ոչ ընդունիմք, զոր ինչ ընկալեալ եմք վարդապետութիւն հաւատոյ յառաքելոց մերոց ՚ի Թադէոսէ և ՚ի Բարդուղիմէոսէ և ՚ի սրբոյ Լուսաւորչէն և յերից ժողովոց և ՚ի սուրբ Թարգմանչաց մերոց, զայն միայն ունիմք հաստատուն, զայլ

ինչ ոչ կարեմք յանձն առնուլ»։ և կայսեր վերայ Թուղթ կը գրեն և կ՚աղաչեն, որ Թոյլ տայ իրենց հաւատոյ մէջ մնալու, ինչպէս Պարսից Թագաւորներն Կաւատ և Խոսրով Թոյլ տուեր են։

Այս Թղթէն յետոյ Յունաց վերակացուքն. եւս առաւել կը նեղեն Հայերն և Ներսէս իւր հայրապետութենէն կը հրաժարի և Յովհաննէս Մանազկերտացին կը տեղապահէ։ Յովհաննէս, մայրենի եկեղեցւոյ նախնականութեան նախանձով վառուած, տեսնելով թէ յունական սովորութիւններ կը սպրդին տեղ տեղ և ինքն չէ կարող յայտնի ժողով գումարել Դունայ մէջ, ուր կը բնակէր Յունաց զօրքն, կը հեռանայ Մանազկերտ և ժողովով կը պատուիրէ իւր հօտին անփոփոխ պահպանել նախնական աւանդութիւնքն, ինչպէս են՝ Հաղորդութեան Խորհուրդն (անջրախառն և անխմոր), Ծննդեան և Յայտնութեան տօնի կատարման ժամանակն (6 յունուարի), և պահոց հայկական առանձին սովորութիւններն։

Ներսէս վեցամեայ հրաժարմանէն զկնի վերստին կը շարունակէ իւր հայրապետութիւնն և կը հաստատէ տօնախմբութիւն Վարագայ Ս. Խաչի, որ Վարագայ լերան վրայ լուսեղէն նմանութեամբ երեւեցած էր

Թոդիկ Ճգնաւորին (1)։ Ներսէս (661) կը վախճանի և ընտրութեամբ Ազգին տեղը կը յաջորդէ նորա սենեկապետն Անաստաս Ակոռի գեղջէն։ Սա հիւրանոցներ և մենաստաններ կը հաստատէ քանի մի տեղ, (որուն աջակից կը լինի Գրիգոր Մամիկոնեան, Արագածոտն լերան ստորոտն Արուճ աւանի մէջ նոյն օրինակ շէնքեր կառուցանելով) և Անանիա Շիրակացուն կը յանձնէ Հայոց Տոմարը կատարելագործել, որոյ ինչ ինչ խանգարմունքներն զգալի էին, բայց տակաւին գործոյն վախճան չեղած՝ ինքն կը վախճանի և տեղը կը յաջորդէ Իսրայէլ Վանանդեցի, Ոթըմսոյ գեղջէն, որ ներկայ եղած էր Դուինայ ժողովին, Ներսէս Շինողի հայրապետութեան ժամանակ։ Իսրայէլ տասնամեայ կաթողիկոսութենէն զկնի կը վախճանի և կը յաջորդէ Սահակ Ձորափորեցի, (677)։

Սահակայ հայրապետութեան ժամանակ աղէտները կը սաստկանան։ Մի կողմէն կը յարձակին Խազերը, մի կողմէն Յուստինի-

(1) Ազգային աւանդութիւնը կը պատմէ, որ այս խաչը պահուած էր Վարագայ լերան մէջ, Հռիփսիմեանց կուսանաց հալածանաց ժամանակէն. բայց որովհետեւ Գիւտ խաչին Մեծին Կոստանդիանոսի օրով եղած է, Հռիփսիմեանց նահատակութենէն զկնի. ուստի կ՚աւանդուի որ յԱռաքելոց ժամանակէն մասն ինչ խաչափայտին ձեռքէ ձեռք անցնելով հասած է Հռիփսիմեանց, որոնք իրենց փախստեան ժամանակ ծածկած են Վարագայ լերան մէջ։

անոս Բ. կայսրն Յունաց բազմաթիւ զօրք կ'ուղարկէ Հայաստան, որք հրով և գերութեամբ կը քանդեն Հայաստանի 25 գաւառներն և 8.000 տուն գերելով կը փոխառեն յոտար երկիր, և միւս կողմէն Հագարացիք, Մոհմատ զօրավարի առաջնորդութեամբ, կ'ասպատակեն մեր երկիրն, և ժողովուրդը դառն հարուածներէն ստիպուած հպատակութիւն կը խոստանայ: Սակայն Յուստինիանոս առաւել զայրանալով այս հպատակութեան վրայ՝ ինքնին զօրօք Հայաստան կ'արշաւէ, Սահակ կաթողիկոսը հինգ եպիսկոպոսաց հետ կը կալանաւորէ, և ապա արձակելով խստիւ հրամաններ կը տայ և կը դառնայ 'ի Պօլիս պատանդներով հանդերձ:

Հայաստանեայց Եկեղեցին այսպէս կը տառապի յունական և հագարական երկուսուրին մէջ, իշխանք և կաթողիկոսունք կը շուարին և կը տատանին: Յուստինիանոսի գործած անգթութիւններէն մի քանի տարի յետոյ արաբացի Ամիրապետն՝ Աբդլլա անուն զօրավար մի կը ղրկէ, որ նախ քաղցրութեամբ կը վարի, ապա շատերը կը գերէ, Սահակ կաթողիկոսը շղթայակապ Դամասկոս կ'առաքէ և Արարատեան գաւառի բոլոր եկեղեցեաց սպասները կը կողոպտէ: Կը նահատակէ Դաւիթ Դունեցի, որ պարսիկ

զարմէ էր և 'ի հայ մօրէ, և Անաստաս կաթողիկոսի ժամանակ, Գրիգոր Մամիկոնեանի կնքահայրութեամբ քրիստոնեայ դարձած էր և 'ի Դուին նահատակուելուն պատճառաւ՝ Դունեցի կը կոչուի ։

Ապդլլայէն զկնի՝ կը դիմէ 'ի Հայաստան Մոհմատ Ոգբայ, Ամիրապետէն հրաման ունենալով, եթէ հնար է Հայ ազգը իսպառ ջնջել ։ Սահակ կաթողիկոսն, Դամասկոսի մէջ կալանաւորուած, այս աղէտալի գոյժն լսելով, կը ցանկայ Մոհմատին հետ տեսնուիլ և հրաման առնելով, չղթայակապ ընդառաջ կ'ելնէ զօրավարին. սակայն ճանապարհին հիւանդանալով՝ կը վախճանի ։ Մեռանելէ հայրապետը հիւանդ ժամանակ աղաչանաց գիր կը գրէ և կը պատուիրէ մեռած ժամանակը իւր ձեռքը դնել ։ Մոհմատ, հայրապետի վախճանը լսելով, ինքն տեսութեան կը գայ, ողջունելով՝ աղաչանաց գիրը ձեռքէն կ'առնու իբրեւ 'ի կենդանւոյ ։ Անգթութիւնը կը խոնարհի կարեկցութեան առջեւ, հազարացի զօրքերով երանելոյն մարմինը Հայաստան կ'ուղարկէ Մոհմատ և կը խոստանայ գրած աղանչանքը կատարել, որով և Ամիրապետի հրամանը, Հայ ազգը ջնջելու համար, 'ի բաց կը թողու ։

Սահակէն կը յաջորդէ Եղիա Արճիշեցի, Բզնունեաց գաւառէն (704)։ Սորա կա-

թաղիկոսութեան ժամանակ, անլուր չարիք կը գործէ Հայաստանի մէջ Կաշմ ոստիկանը, որ բոլոր նախարարները Նախիջեւանի եկեղեցին կը գումարէ, որպէս թէ խաղաղութեան դաշն կապելու համար, սակայն յետոյ անգթաբար եկեղեցին կը հրդեհէ և բոլոր բազմութիւնը հրոյ ճարակ կը տայ։ Անմեղ զոհերը կը ճենճերին լափլիզող բոցերու մէջ, ճիչն ու աղաղակը մինչեւ երկինք կը բարձրանան և 'ի վերջոյ եկեղեցւոյ փլատակներուն տակ կը փոշիանան, եկեղեցւոյ ազատութիւնն ստրկութեան չը մատնելու համար։ Անգութ բռնաւորներն այս տեղէն կը դիմեն Դունայ վրայ, կ'աւերեն և կ'աւպատակեն, շատ այր և կին կը գերեն և շատերը կը նահատակեն չուրանալու համար, ինչպէս էր Վահան Կամսարականի Շուշան դուստրն։

Այս դառնաղէտ հալածանքներէն յետոյ Հագարացիք բոլորովին կը տիրեն Հայաստանին, Օմարի Ամիրապետութեան ժամանակ, և աշխարհի կառավարութիւնը Ոստիկանաց ապաստան կը լինի։ Արաբիայէն կը դառնան Հայոց կենդանի մնացած գերիները, ընդ որս և Վահան Գողթնացի, Գողթանայ տեառն Խոսրովի որդին, որ 'ի տըղայութեան բռնի տաճկացած լինելով՝ կրկին իւր քրիստոնէութիւնը կը շարունակէ,

տակայն յետ ժամանակաց կը կոչուի Ամիրապետէն և Ռուծափ քաղաքի մէջ կը գլխատուի հաւատոյ մէջ հաստատուն մնալուն համար։

Եղիա կաթողիկոս, որչափ ժամանակը և դէպքերը կըներեն, հայրապետական ծանր պարտքերը կատարելու կը ջանայ, կը ճանապարհորդէ Աղուանք՝ ինչ ինչ խռովութեան պատճառաւ, տեղւոյն Սիմէօն նորընտիր կաթողիկոսի հետ ժողով կը գումարէ եկեղեցական բարեկարգութեան համար և մօտ 15 ամեայ կաթողիկոսութենէն զկնի՝ կըվախճանի և իրեն կը յաջորդէ (718) Յովհաննէս Դ. Օձնեցի, Տաշրաց գաւառէն, Իմաստասէր մականուանեալ։

Բ.

Կաթողիկոսութիւն Յովհաննու Իմաստասիրի.— Պաւլիկեանք, Արեւորդիք և Եզնիկ.— Ժողով 'ի Դուին.— Յովհան իմաստասէր առաջի Ամիրապետին.— Կաթողիկոսունք՝ Դաւիթ Ա. և Տրդատ Ա.— Տառապանք 'ի Հագարացւոց.— Կաթողիկոսունք՝ Տրդատ Բ. և Սիոն.— Ժողով 'ի Պարտաւ Աղուանից.— Եսայի կաթողիկոս.— Նահատակութիւն Արծրունի իշխանացն Համազասպայ և Սահակայ.— Բողոք առ Ամիրապետն.— Կաթողիկոսունք՝ Ստեփաննոս Ա. Յովաբ, Սողոմոն, Գէորգ Հոլորբուկ. Յովսէփ Բ. և տառապանք իւր.— Կաթողիկոսունք՝ Դաւիթ Բ. Յովհաննէս Ովայեցի.— Տառապանք Եկեղեցւոյն և Ազգի 'ի Բուղայ Ոստիկանէ.— Նահատակութիւնք.— Ստեփաննոս կոն, Սմբատ Խոստովանող.— Կաթողիկոսութիւն Զաքարիայի Կոտայեցւոյ։

ՅԱՌԱՋՔԱՆ Յովհան Իմաստասիրի հայրապետութեան ժամանակի դէպքերու և եկեղեցական վիճակի վրայ խօսիլը՝ կարեւոր կը համարինք ըսել, որ Ներսէս Շինողէ ժամանակէն 'ի վեր Հայաստանի հարստահարութեան միջոցին քանի մի տեսակ նորամուտ աղանդներ յղացած էին, քաղկեդոնականաց յուզած տարապարտ վիճմանց և Մանիքեցի Պաւլիկեանց դարանամուտ որոմնացանութեանց շնորհիւ, որոց հակած էին և ոմանք պարզամիտ հայերէն։ Այս մոլորութեանց հետախուզութիւնը և նկարագրութիւնը մեր նպատակէն արտաքոյ է,

վասն զի ժամանակակից պատմութեանց նայելով խիստ այլանդակ խոտորմունքներ կը պարունակեն։ Միայն այսչափ հարկ կը համարինք ասել, որ սոցա խումբը զանազան ազգերէ կազմուած էր և հետեւապէս տհաս մտաց զանազան քմածին խառնուրդէ, որոնք մեր ազգի բազմատագնապ վիճակը ապահով միջոց համարելով՝ զանազան երկիրներէ ժողոված դարանակալած էին Գրկայ լճակին մօտ։ Սոցա մէկ մասն Մըծ-ղըդի կը կոչուէին, գուցէ արեգակն և լուսին յօգնութիւն կոչելու համար. ոմանք Եզիդք, Հագարացւոց կրօնքէն քանի մի բան ընդունելուն համար. և այսպէս բազմանալով եկած էին Ասորոց, Արաբացւոց և Հայոց աշխարհին մէջ տեղ տեղ յուզել պարզամիտներու սիրտը։ Թողունք ասել քաղկեդոնականաց բորբոքած խռովութիւնքը, որ երկար ժամանակէն 'ի վեր կը շարունակուէր։

Յովհան Իմաստասէր երբ հայրապետութեան աթոռը կը բարձրանայ, առաջին մտածութիւնն կը լինի այս ներքին շարեաց առաջն առնուլ, որ արտաքին հալածանքներէն առաւել կործանական էր։ Իւր հայրապետութեան երկրորդ տարին ժողով կը գումարէ Դուին մայրաքաղաքին մէջ, և հանգիստականաց առջեւ ընդարձակ ատենաբանութեամբ կը սկսի պատկերացնել

Եկեղեցւոյ վիճակը, կ'առաջարկէ երեսուն երկու կանոններ, որոնք կ'ընդունուին ժողովականներէն. կը մերժուի նաև սոյն ժողովին մէջ քաղկեդոնիկութիւնն, որ տեղ տեղ ընդունուած էր Յունաց բաժնի Հայոց մէջ (1), և այս կ'արձակուի ժողովը.

Ինչպէս Յովհան Իմաստասիրի, նոյնպէս և այլ ազգային ժողովական կանոնաց վրայ չենք ուզեր խորհրդածել. վասն զի չունինք առ ձեռն նախնական ձեռագիրներ և Վենետիկեան տպագրութեանց ևս չենք կարող անկասկած հաւատ ընծայել: Ուրեմն կանոնական քննութիւնը զանց առնելով պատմութեան թելը շարունակենք:

Վլիթ ոստիկան կը դառնայ առ Ամիրապետն և կը ջատագովէ զՅովհան իմաստասէր, այնպէս որ Ամիրապետն կը փափաքի իր աչքով տեսնել և առ ինքն կը կոչէ զՀայրապետն: Յովհան Իմաստասէր կ'երթայ Ամիրապետին և իր պատկառելի կերպարանքով, շքեղ հագուստով և փայլուն վարմունքով ազդեցութիւն կ'առնէ Հագարացի տիրապետին վրայ և մեծ ընդունելութեամբ կը մեծարուի: Սակայն Ամիրապետն արտաքոյ կարգի շքեղութիւն նշմարելով Հայրապետի վրայ և քրիստոնէական կրօնի քարոզած պարզութեան և աշխարհային անփառասիրու-

(1) Ստեփան Ասողիկ. Միխայէլ Ասորի.

թեան վրայ մանաւանդ ծանօթութիւն ունենալով՝ կը հարցնէ Իմաստասիրին. «Ի՞նչ է պատճառն, որ ձեր կրօնքը պարզութիւն և անձնուրացութիւն կը քարոզէ, և սակայն դուք շքեղութեամբ կը փայլիք»։ «Պատճառն այն է, կը պատասխանէ հայրապետն, որ առաջին դարուց քրիստոնէական սքանչելիքները չեն կատարուիր մեր ձեռքով, և ժողովուրդն եւս մեր արտաքին կերպարանքէն և հանդերձէն միայն կ'ակնածէ. ուստի այսպէս կը զգեստաւորիմք, որ գոնէ այսու նուաճեմք ժողովուրդն 'ի բարին»։ Եւ ապա մեկուսանալով՝ կը ցուցնէ Էմիրապետին 'ի ներքուստ զգեցած խարազն, որով և կը համոզէ թէ 'ի ներքուստ դարձեալ կը պահպանեն կրօնի պատուէրը, առանց անձնատուր լինելու փափկասիրութեան։ Էմիրապետը կը զարմանայ, մեծ պարգեւներով կ'արձակէ, և 'ի պատիւ այս սրտաշարժ տեսակցութեան անդորրութիւն կը խոստանայ Հայաստանին։

Յովհան Իմաստասէր 11ամեայ կաթողիկոսութենէն զկնի կը վախճանի և (729) տեղը կ'ընտրուի Դաւիթ Ա. Կոտէից գաւառէն Արամոնս գիւղէն։

Դաւիթ կաթողիկոս սաստիկ կը նեղէ Մոհմատ խուովարար ոստիկանէն և ստիպուած կ'առանձնանայ իւր գեղն, կը կառու-

ցանէ հոյաշէն եկեղեցի գեղեցիկ բնակա-
րանօք և յետ քանի մի ժամանակաց վերստին
Դուին կը դառնայ և 12ամեայ կաթողիկո-
սութեան պաշտօն վարելէն զկնի՝ կը վախճանի։

Դաւթին կը յաջորդէ Տրդատ Ա. Վա-
նանդ գաւառի Ոթմայ գիւղէն, որոյ պար-
կեշտասէր վարուց վրայ գովեստիւ կը խօսին
պատմիչք։ Տրդատայ կաթողիկոսութեան
ժամանակ Հագարացիներէն սաստիկ տառա-
պանքներ կը հասնին Հայաստանին։ Այլ հը-
րամայուի եկեղեցեաց խաչերը վերցնել,
գանձատուները կնքել, սուրբ սպասները
վաճառել, գիշերային պաշտամունքներն ար-
գիլել, ուսումն գրոց խափանել, մորուա-
ները գերծուլ, երկար գլխարկներ ծածկել
արտաքոյ հայրենի սովորութեան, և կապա-
րեայ կնիք կախել իւրաքանչիւր պարանոցէ
ի նշան ստրկութեան։ Այս չարիքները կը
գործուին ինչպէս Աբդլազիզի, նոյնպէս և
Եզիտի ոստիկանութեան ժամանակ։ Այսօ-
րինակ հարստահարութենէ ստիպուած՝ կա-
թողիկոսն և նախարարները բողոք կը բառ-
նան առ Ամիրապետն, բայց շահ չեն ստա-
նար։ Ուստի և ողորմելի կաթողիկոսն այս
աղէտներէն և սրտացաւութենէն հիւան-
դանալով կը վախճանի անմխիթար։

Տրդատ Վանանդեցւոյն կը յաջորդէ Տըր-
դատ Բ. Դասնաւորեցի, Տուրուբերան գա-

ւառէն, ունենալով իւր կաթողիկոսարանի մէջ մի անուանի եպիսկոպոս Սիոն անունով։

Սիոն, որ արդէն յայտնի էր իւր հմտութեամբ եւ առաքինութեամբ, Տրդատի մահէն զկնի (767) կաթողիկոս կը ձեռնադրըւի Դուին քաղաքի մէջ փառաշուք հանդիսիւ, որուն ներկայ էր Սիւլէյման ոստիկանը։

Սիոն Աղուանից Պարտաւ քաղաքի մէջ ժողով կը գումարէ, ուր ցականէ յանուանէ ներկայ էին Գէորգ՝ Ոստան եպիսկոպոս, Սատովկ՝ Սիւնեաց եպիսկոպոս, Եսայի Գողթան եպիսկոպոս. այլովք հանդերձ. և քանի մի իշխանք — Սահակ պատրիկ Բագրատունի, Ատրներսեհ Սիւնեաց տէր. Սմբատ Բագրատունի, Մերուժան Արծրունի, Վահրամ Խորխոռունեաց տէր, Արտաւազդ Աշոցայ տէր, Վահան Վանանդայ տէր, Սահակ Գողթան տէր և այլք, — որոց հաւանութեամբ կը խմբագրուին 24 կանոնք, (որոց մեծ մասն առաջուց կային) գլխաւորապէս հովուաց և առաջնորդաց պարտուց վրայ, և ապա Ս. Գրոց ընթերցանելի Գրքերը կ՚որոշուին։

Հայք դարձեալ կը նեղուին Հագարացիներէն, 700 հոգի կը կոտորուին և 12,000 կը գերուին։ Կաթողիկոսը կը վախճանի և կը յաջորդէ Եսայի, Նիգ գաւառի Եղիպատ-

թուշ գիւղէն ։ Եսայիի համար կը պատմուի՝ որ մայրն մանուկ հասակէն կը սնուցանէր Պռունայ կաթողիկոսարանի դրանը, և երբ կը հարցնէին՝ թէ ինչո՞ւ այդպէս բացօդեայ կը սնուցանես և տուն չես մտներ, կը պատասխանէր թէ, «Կաթողիկոսութեան համար կը սնուցանեմ, և արդէն իսկ տառապանաց կը վարժեցնեմ»։ Եւ արդարեւ ազգի և եկեղեցւոյ տառապակիր օրերուն մէջ՝ անձնադիր հայրապետներն ամենէն աւելի տանջանքներ կրած են ։

Եսայիի կաթողիկոսութեան ժամանակ հագարական անգթութիւնքը կը զայրանան ։ Հարուն Ամիրապետի հրամանաւ և Եզիտ ոստիկանի (1) ձեռքով Արծրունեաց երեք իշխաններն — Համազասպ, Սահակ և Մերուժան տանջանաց կը մատնուին և չարաչար կը խոշտանգուին՝ հաւատը ուրանալու. վերջինը կ'ուրանայ, իսկ առաջին երկուքն ըսքանչելի արիութեամբ միմեանց խրախոյս կարդալով կը գլխատուին Յայտնութեան տօնին ։ Նմանապէս քառասունէն աւելի քահանայք և կրօնաւորք կը խողխողուին Բագուան գիւղի մէջ, և տեղւոյն Ս. Գրիգոր անուամբ եկեղեցին կը կողոպտուի ։ Այսքան տառապանաց և հարկաց ծանրու-

(1) Ըստ Ղեւոնդ պատմագրի — հրամանաւ Մուսէի և ձեռամբ Խուզիմայ ։

թեան համար նախարարք Եսայի կաթողիկոսին հետ միասին կը բողոքեն Ամիրապետին, բայց անօգուտ։ Հայրապետն կը վախճանի, եկեղեցւոյ ստացուածքն ու սպասները քննութեան կ'առնուին Հազարացի հրամանատարի ձեռքով, եկեղեցականներն ատեան կը կոչուին, որ բան չը ծածկեն։ Ոսկեղէն ու արծաթեղէն անօթներն, ականակուռ զգեստներն և Թագաւորաց հանդերձները, որոնք պահուած էին գանձարանի մէջ, հրամանատարի արիւնարբու ագահութեանը զոհ կը լինին, որ կ'իւրացուցանէ պատուականները և ընտիրները, իսկ մնացեալներն 'ի պահեստի կը դնէ։

Եսայիին կը յաջորդէ (788) Ստեփանոս Ա. Դունեցի, որ ըստ պատմութեան Ղեւոնդի կաշառքով կաթողիկոսանալով՝ կը ստիպուի 'ի վերջոյ բոլոր ստացուածքները ծախել և գրաւ դրած գիւղերն ու ծառաներն ազատել։

Ստեփանոս երկու տարի հազիւ կը մնայ կաթողիկոսական աթոռոյ վրայ՝ կը վախճանի և տեղը կը յաջորդէ Յովաբ կամ Յոբ Դունեցի, որ 16 ամիս միայն կ'աթոռակալէ։

Յովաբին կը յաջորդէ Սողոմոն Գառնեցի Գեղարքունի գաւառէն, որ մենաւորական կեանք վարած էր ցծերութիւն Մաքենոցաց (1) կամ Մաքենեաց մենաստանի մէջ։

(1) Այս անունը եկած էր միաբանից հագուստէն, որ

Երբ կ'ասէին ծերունւոյն ընտրութեան ժամանակ՝ թէ դու ծեր ես, ինչպէ՞ս պիտի երթաս Դուռն և աթոռակալես. պատասխանեց. «Երթամ, զի գերապատճառ դերով նկարողաց սեւել զիս ընդ այլ հայրապետութեան յորմն եկեղեցւոյ» (1)։ Այսինքն կ'երթամ, ոչ թէ հայրապետութեան համար, այլ իբրեւ ստուեր հայրապետաց, և կ'երթամ մեռնելու համար, որով միայն պատկերս պիտի մնայ եկեղեցւոյ որմին վրայ (2). և արդարեւ մի տարիէն յետոյ վախճանեցաւ։

Սողոմոնի տեղը կ'ընտրուի տէր Գէորգ (որ և Ջղորբուկ) Աշտարակ կամ Օշական գիւղէն, որ երեք տարիէն զկնի կը վախճանի։

Գէորգէն կը յաջորդէ Յովսէփ Բ. Արագածոտն գաւառէն։ Սորա հայրապետութեան ժամանակ Խուզիմայ ոստիկանը կը ջանայ կաթողիկոսարանի կալուածները գրաւել, և երբ կաթողիկոսը սաստիկ կ'ընդդիմանայ, կը ցանկայ ծախու առնել. բայց կաթողիկոսը կը պնդէ որ եկեղեցական կալուածները ծախելու իրաւունք չըկայ. վասն

մաքիներու բուրդէ կամ ասուէ էր սովորաբար։

(1) Յովհ. կաթողիկոս։

(2) Գուցէ սովորութիւն կար նոյն ժամանակ՝ եկեղեցւոյ պատին վրայ նկարել կաթողիկոսաց պատկերնին իբրեւ պատմական յիշատակարան։

զի մեծ մասը կոտորուած են յարատեւ պահպանութեան յիշատակագրերով։ Սուքիանք կարեւէր լսուելով եղեռնական չարութեան կը դիմէ, իւր ծառայն ծածուկ կըսպանանէ և յետ քանի մի աւուրց յանցանքը Դունեցւոց վրայ կը ձգէ, կաթողիկոսն և այլ մարդիկ շղթայակապ կ'առնէ և կը նեղէ, և 'ի գին արեան կալուածները կը պահանջէ, բայց հայրապետը դարձեալ չը զիջանիր։ Ի վերջոյ բանտէ հանել կը տայ, Ամիրապետի առջեւ ամբաստանութեան ենթարկուելու երկիւղէն, և կաթողիկոսական կալուածներէն բունի իրեն կը գրաւէ Արտաշատ աւանը։ Զանազան չարիքներ կը հասցնէ աւանդապահ հայրապետին, եղբայրը սպանել և ծովակը ձգել կը տայ, և ողորմելի կաթողիկոսը վշտահարութենէն կը հիւանդանայ և կը վախճանի 11ամեայ հայրապետութենէն զկնի։

Յովսէփին կը յաջորդէ (806) Դաւիթ Բ. Կակաղեցի, Մաղազայ գաւառէն, որոյ կաթողիկոսութեան ժամանակ կը նահատակուին Սահակ և Յովսէփ 'ի հայ մօրէ և 'ի պարսիկ հօրէ։

Դաւիթ 27 ամեայ կաթողիկոսութենէն զկնի կը վախճանի և տեղը կ'ընտրուի Յովհաննէս Ե. Ովայեցի, Կոտայից գաւառէն, Բագարատ Բագրատունւոյ պատրկութեան կամ վերակացութեան ժամանակ։ Յովհան-

նիսի վրայ ապիրատ մարդիկ զրաբանութիւն կը յարուցանեն, որուն կ'անսայ և Բագարատ, ուստի և կաթողիկոսն ինքնին կը հրաժարի աթոռէն։ Բայց երբ զրպարտողաց մեղադրանքները քննութեամբ սուտ կ'ելնեն, կրկին կը վերակոչուի խնդրանօք ազգին և կը շարունակէ իւր պաշտօնը։

Յովհաննիսի կաթողիկոսութեան ժամանակ Ամիրապետի հրամանաւ Բուխայ արիւնարբու և անգութ բռնաւորը մեծաթիւ զօրքով Հայաստան կ'արշաւէ այն պայմանաւ, որ հայ իշխանները կալանաւորէ և Ամիրապետին ղրկէ, երիտասարդները (մանաւանդ վայելչահասակները եւ քաջաբազուկները) մահմետականութեան դարձնէ, իսկ միւսները սրամահ ընէ։ Բուխայ (850) Հայաստան մտնելով, արտաքոյ կարգի անգթութեամբ կը կատարէ Ամիրապետի հրամանը, ասպատակ կը սփռէ Սասունի և Տարօնի գաւառներուն մէջ, ուրիշ նախարարազանց հետ, Բագարատի Աշոտ և Դաւիթ որդիքն ու գերդաստանը և Արծրունեաց Աշոտ իշխանի կինն ու որդիքն Ամիրապետին կը ղրկէ, Վասպուրական նահանգի մէջ եւս, ինչպէս և 'ի Տարօն, շատերը տանջանքով յուրացութիւն կ'ըստիպէ և անխնայ կը կոտորէ։ Այնօրինակ և առաւել դժնդակ աղէտներու կը հանդիպին նմանապէս Արարատեան աշխարհն, Ու-

տի, Աղուանք և Դուքին կաթողիկոսական աթոռանիստն, ուր անլուր արհաւիրքներէն սոսկալով ոմանք կը տկարանան հաւատոյ մէջ. բայց բազմաթիւ վայելչահասակ իշխանք և չքնաղկանք, երիտասարդք և կուսանք հաւատոյ հաստատութեան համար զէրար կը քաջալերեն, Մեռցուք վասն Քրիստոսի, կը գոչեն և կը նահատակուին ուրախութեամբ : Նապէս արիւնով կը ներկուի Հայաստանեայց Եկեղեցին — քրիստոնէական հաւատոյ բազմադարեան և բազմաչարչար Վկայուհին, — որոյ գլխին հալածանաց շանթեր և կարկուտներ կը տեղան. սակայն քրիստոնէական սիրով ամենուն կը դիմագրաւէ և արիւնաթաթաւ վէրքերով աննկուն կը մնայ իր կոչման մէջ :

Թուխա, անպատում կոտորածներէն զկնի բազմաթիւ կալանաւորներ Ամիրապետին կը ղրկէ, որոնք դարձեալ բանտից և տանջանաց կը մատնուին և շատերը կը մարտիրոսանան, որոց մէջ յայտնի են մանաւանդ Ստեփաննոս Կյոն և Սմբատ, որ հաւատը չուրանալու համար՝ երկար ժամանակ բանտի մէջ կը մնայ և այն տեղ կը վախճանի, որ և այս մասին կը կոչուի Խոստովանող, որոյ որդի Աշոտէն, յետ սակաւ ժամանակի, կը սկսի Բագրատունեաց թագաւորական հարստութիւնը :

Թուխայի արիւնահոս ապստամբութեան

և աւերանաց ժամանակ Յովհաննէս կաթողիկոս աթոռանիստը թողլով և դաւառներու մէջ տառապեալ ժողովրդին այցելութեան և մխիթարութեան երթալով կը հիւանդանայ Գեղարքունւոյ Սաքինոցաց մենաստանի մէջ և 22 ամեայ կաթողիկոսութենէն զկնի կը վախճանի։ Իսկ Սմբատ, որ տակաւին Բուխային չէր ներկայացած, կ'աճապարէ և նոր կաթողիկոսի ընտրութեան համար ժողով կը գումարէ Նորագաւառս կամ Շիրակաւան գիւղի մէջ (որ միայն էր ապահով նոյն դառնաղէտ միջոցին) ուր բազմաթիւ ժողովոյ հաւանութեամբ կ'ընտրուի Զաքարիա Կոտայեցին, և մի աւուր մէջ (854ին) կը ձեռնադրուի սարկաւագ, քահանայ, եպիսկոպոս և կաթողիկոս։ Վան զի կաթողիկոսութեան ընտրական իրաւունքն ամենեւին խտրութիւն չըդնէր եկեղեցականի և աշխարհականի մէջ, ըստ առաքելական սովորութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ, ինչպէս յայտնի է նոյն իսկ Լուսաւորչի և Մեծին Ներսիսի ընտրութեան պատմութենէն։

Դարձ գերեալ նախարարաց. — Թղթակցութիւնք Զաքարիա կաթողիկոսի Հայոց և Փոտ պատրիարքի Յունաց. — Ժողով 'ի Շիրակաւան. — կաթողիկոսութիւն Գէորգայ Գառնեցւոյ և թագաւորութիւն Աշոտոյ. — Ակնարկ Բագրատունի թագաւորութեան վրայ. — Գէորգ կաթողիկոս իբրև հաշտարար. — կալանաւորութիւն նորա. — Մաշտոց Բ. Եղիվարդեցի. — Յովհաննէս Դրասխանակերտացի. — կալանաւորութիւն նորա Յուսուփ ոստիկանէն. — Հալածանք և տառապանք 'ի Յուսուփայ. — Նահատակութիւն Սմբատայ խոստովանողի. — Պաշարումն Երնջակայ և կալանաւորութիւն Հայ իշխանաց. — Բարբարոսութիւնք Յուսուփայ, և քրիստոնէական վկայութիւն բազմաց. — Տօն նահատակաց:

ԶԱՔԱՐԻԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ եօթնեերորդ տարին (862) գերուած և առ ահի հաւատոյ մէջ տկարացած նախարարները Հայաստան կը դառնան և Սմբատ խոստովանողի Աշոտ որդւոյ Իշխանաց Իշխան կարգուած ժամանակ՝ կըսկսին համարձակապէս իրենց քրիստոնէական կրօնքը պաշտել, որով և ըստ ասելոյ Յովհաննէս պատմաբան կաթողիկոսի՝ Եկեղեցին կը սփոփի իւր դառնակաց դարձին և բարեպաշտութեան վրայ: «Զայն հարսի և փեսայի լսելի լինէր. ծնան որդիս և արարին պտուղ»:

Սակայն այս միջոցին Կ. Պոլսոյ Յունաց Փոտ Պատրիարքը կը սկսի իւր առաջնորդաց

ձեռքով նզովել յունական բաժնի Հայերն, որուն համար և Զաքարիա կըստիպուէր թուղթ գրել առ Փոտ, մերժելով նորա կարծիքները Հայոց դաւանութեան մասին և կը հետեւցնէ, որ Հայք հետեւողք են երեք նախկին տիեզերական ժողովոց՝ և Ս. Գրիգորի Լուսաւորչին։

Փոտ երկու պատասխանական թուղթ կը գրէ Զաքարիային և Աշոտին, որով Հայաստանեայց Եկեղեցւոյ առաքելական անարատ աւանդապահութիւնը գովելէն զկնի՝ կը յորդորէ ՚ի միութիւն ընդ Յունաց։ Այս թղթոց պատճառաւ Զաքարիա ժողով կը գումարէ Շիրակաւանի մէջ (862), ուր կը գտնուի ՚ի միջի այլոց և Նանա սարկաւագ Ասորին, որ ժամանակակցաց մէջ հըմուտ համարուած էր։ Այս ժողովը ստիպողական կերպարանք կ'առնու Յունաց կողմէն, որովհետեւ Փոտի թղթերը բերող Նիկիոյ Վահան յոյն եպիսկոպոսն ինքնին երկար ատենաբանութիւնն կ'առնէ, Քրիստոսի մարդեղութեան խորհրդոյն վրայ և կանոններ կ'առաջարկէ, և յետ ժողովոյն կարծելով թէ արդէն Հայք միաբանեցան ընդ Յունաց, կը դառնայ ՚ի Պօլիս։ Բայց այս ժողովի լուրը մեծ այլեկոծութիւն կը պատճառէ Հայաստանի մէջ և Տայոց Սահակ եպիսկոպոսն (Մռուտ կոչեցեալ) ՚ի դիմաց Ա-

շատոյ Իշխանաց Իշխանին սատարիկ Թուղթ կը գրէ Փոտին, նոյնպէս կը գրէ և Զաքարիա առ Վահան եպիսկոպոս, Ծննդեան տօնի կատարման ժամանակի համար։ Իւր այսպէս յունական կարծեցեալ միութիւնը մեծ ընդդիմութեան կը հանդիպի Հայոց կողմէն և ապարդիւն կը մնան հետամտողաց նենգ ջանքերը։

Զաքարիա իւր 21ամեայ կաթողիկոսութեան մէջ ազգի խաղաղութեանը խնամ կը տանէ, Ամիրապետէն անգամ կը պատուի գրաւոր երկասիրութիւններ եւս կը թողու. և ապա վախճանելով իրեն կը յաջորդէ ընտրութեամբ ազգին Գէորգ Գառնեցի, որ սնուած էր կաթողիկոսարանի մէջ։

Գէորգ Գառնեցւոյ կաթողիկոսութեան ժամանակ Աշոտ հանդիսիւ թագաւոր կ՚օծուի, Անի քաղաքին մէջ, (885) թագ ընծանալով Ամիրապետէն և Յունաց Վասիլ (Արշակունի) կայսերէն, և օծագիրն կը լինի նոյն ինքն կաթողիկոսն. և այսպէս Արշակունեաց թագաւորական հարստութեան վերջանալէն 452 տարիէն զկնի կը կանգնի թագաւորական նոր հարստութիւն Բագրատունի ցեղէն, այսինքն այն ցեղէն, որ Քրիստոսի թուականէն շատ առաջ, Հրաչէի թագաւորութեան կամ նախապետութեան ժամանակ Հրէաստանէն գաղթելով և առանց

ձին նախարարական ցեղ կազմելով Թագադիր ասպետութեան պատիւն ունէր Հայաստանի մէջ, ինչպէս յայտնի է ազգային պատմութենէն ։ Զօրացած էր այս ցեղը թէ հարստութեամբ և թէ իւր նշանաւոր նախարարաց և արի զօրավարաց մեծագործութեամբ ։ Սակայն այս Բագրատունի Թագաւորական հարստութեան ժամանակ ոչ սակաւ կը տառապէր Հայաստանեայց Եկեղեցին որպէս և 'ի ժամանակս Մարզպանաց և Ոստիկանաց ։ Արտաքին խռովութեանց հետ կը յաճախէին և ներքին խռովութիւնք և այն Թագը, որ օտարաց ձեռքով տրուած էր Հայաստանին, երկու հարիւր տարի անդամ չը տեւեր, դարձեալ օտարաց ձեռքով կը բարձուի ։

Մեր նպատակէն արտաքոյ լինելով Բագրատունի Թագաւորութեան կարճատեւութեան վրայ երկարօրէն և հիմնովին խորհրդածել, միայն այսքանը կ'ասենք, որ օտարները Թագ տալով Հայաստանին՝ հետամուտ էին տեսակ մի Խնամատարական տէրութեան մէջ պահել Հայոց ազգը, ուստի եթէ կը գըտնուէին ազգաշէն և եկեղեցաշէն Թագաւորներ, և կամ ազգի ինքնուրոյն և անկախ իշխանութեան ջանադիրներ, շուտով նոյն օտարները ուրիշ ատրկասէր իշխանի կամ նախարարի մի Թագ խոստանալով և նաեւ ․․

Ժամանդակելով կը յարուցանէին ներքին խռովութիւններ և կոտորածներ ։ Այս էր պատճառն որ երբեմն քանի մի իշխանք իրարու հակառակ թագ կը կապէին և իրարու դէմ կը զինէին ։ Ողորմելի հայրապետներն ևս, ինչպէս պիտի տեսնենք, ստիպուած էին երբեմն ներքին խռովութեանց հաշտութեան համար ջանալ, և երբեմն Հագարացւոց, Պարսից և Յունաց տիրապետաց անգթութիւնները մեղմելու աշխատիլ։ Վասն զի Ազգը և Եկեղեցին մի մարմին կազմելով՝ վնասն և հարուածները կրողը դարձեալ նոյն մարմինն էր ։

Այսպէս ահա Սմբատ Ա. Թագաւորի-Աբաս սպարապետի (որ կ'ուզէր Թագաւորական իշխանութիւնը յափշտակել) և կուսակցութեան բաժնուած նախարարաց մէջ սաստիկ գժտութիւն կը ծագի, և Գէորգ կաթողիկոսն իբրև հաշտարար մէջ կը մըտնէ ։ Սակայն Աբաս զրպարտութեան կը մատնէ զհայրապետն, եպիսկոպոսները նորա դէմ կը գրգռէ, կաթողիկոսութիւնը Եղիվարդեցի Մաշտոց վարդապետին կը խոստանայ, եթէ իրեն համակցի, բայց արդարասէր վարդապետէն յանդիմանական և յորդորական պատասխան ընդունելով՝ հազիւ հազ կը հաշտուի հայրապետի հետ ։

Նոյն Գէորգ կաթողիկոսն կը ջանայ Սըմ-

բատ Թագաւորի և Ատրպատականի Ափշ-
չին ոստիկանի մէջ ծագած գժտութիւնը վեր-
ցընել և այս մասին շղթայի կը զարնուի Ոս-
տիկանէն և երկու ամիս տառապանաց կը
մատնուի ։ Մինչդեռ ոստիկանը կ'ուզէ ըզ-
Հայրապետն շղթայակապ Ատրպատական տա-
նիլ, Հայ Նախարարներն ու Իշխաններն ոս-
կի և արծաթ տալով՝ կալանաւորութենէ
կ'ազատեն և իւր կաթողիկոսական աթոռը
կը դարձնեն ։

Հայաստանի մէջ ներքին խռովութիւն-
ներ կը յուզին և Ափշին ոստիկան պատեհ
միջոց գտնելով բազմաթիւ զօրքով վերստին
կ'արշաւէ զանազան գաւառներու վրայ և
ահագին կոտորածներ կ'առնէ, որուն վրայ
և Հայրապետն իւր սրտի ցաւէն առանձնանա-
լով 'ի Վասպուրական կը վախճանի (897) 21
ամեայ կաթողիկոսութենէն զկնի ։ Գէորգ
կը թաղուի Ձորոյ վանքին մէջ, ուր Յով-
հաննէս կաթողիկոս կը պատմէ, թէ ամփոփ-
ուած էր Լուսաւորչի գաւազանն և տէրու-
նական խորհրդոյ սեղանն, զոր տակաւին
եկեղեցիներ չը շինուած ժամանակ՝ իւր
հետ կը շրջեցուցանէր ։

Գէորգին կը յաջորդէ Մաշտոց Բ Եղի-
վարդեցի, Արագածոտն գաւառէն, 60 տա-
րեկան հասակին մէջ, և 7 ամսէն յետոյ կը
վախճանի ։ Աս կաթողիկոսութենէն առաջ

վարժելով Մաքենոցաց մենաստանի մէջ և սուրբ Գրոց ուսմամբ ճոխանալով նորոգած էր Սեւանայ մենաստանն և հոգեւոր ուսումանց և բարեպաշտական վարուց վարժարան դարձուցած, աշակերտելով շատերը: Աշտոց կը Թաղուի Գառնի գիւղաքաղաքին մէջ, ուր էր Տրդատայ հոյակապ հովանոցն, որոյ արտասուաշարժ փլատակները և գեղաքանդակ սիւներն ու խոյակները տակաւին կը տեսնուին և հնասէրները կը զարմացնեն:

Աշտոցի տեղ կաթողիկոս կ'ընտրուի· (897) Նորա աշակերտն (ըստ ոմանց քեռորդին) Յովհաննէս Զ Դրասխանակերտացի կամ Դասհոնակերտացի, պատմաբան: Սա որպէս ականատես, մանրամանաբար գրած է իւր ժամանակի բոլոր անցքերն ու այն տառապանքները, զորս կրած է Հայաստանեայց Եկեղեցին: Յովհաննու երկարութեան մէջ պարունակուած անցից ընդարձակ հետազօտութիւնն ընթերցողաց թողլով, մենք միայն գլխաւոր կէտերը կը քաղուածենք:

Յովհաննէս կաթողիկոս ըստ ամենայնի ներհակ է քաղկեդոնականութեան, որոյ յուզած երկպառակութիւններն այնչափ խոր ազդած են սրտին, որ միշտ պախարակելով կը խօսի իւր պատմութեան մէջ, որոյ պարունակութեան մասին 'ի ժամանակին պիտի քանի մի խօսք ասենք:

Յովհաննէս իբրեւ հաշտարար հայր մը հանդիսանայ ազգին մէջ և Թագաւորի ու Նախարարաց գժտութիւնները վերցնելու կը ջանայ արդարամէտ միջնորդութեամբ։ Կ'երթայ նմանապէս մեծամեծ ընծաներով առ Յուսուփ ոստիկանն Ատրպատականի և աղերսականն բանիւ կը խնդրէ խաղաղութեան դաշն հաստատել Սմբատ Թագաւորին, Նախարարաց և բովանդակ Հայոց աշխարհի հետ։ Նախ սիրով կ'ընդունուի ոստիկանէն և ապա կը կալանաւորուի և կը բանտարկուի։ Յուսուփ բազմաթիւ զօրքով Հայաստան կ'արշաւէ և զկաթողիկոսն շղթայակապ իրեն հետ կը բերէ, կը յարձակի Նախ Սիւնեաց աշխարհի վրայ և Զատկի տօնին (909) շատ մարդիկ կը կոտորէ, և ապա դիմելով 'ի Դուին, Երասխայ ափանց վրայ բանակ կը կազմէ։ Կը յարձակի Սմբատայ վրայ և չը կարենալով բռնել, բովանդակ ամառն կ'աւերէ Հայաստան. իսկ ձմեռն Դուին կը մնայ, տառապեցնելով շղթայակապ հայրապետն, որ ինքնին այսպէս կը գրէ իւր համար. "Կրեցի այնուհետեւ 'ի դահճաց անտի մահահոտ իմն լուտանօք դանս և բանտս և գեղարանս և արգելարանս 'ի խաւարչուտին տեղւոջ և յանձուկ վայրս, այլ և 'ի վերապս և 'ի վիհս խորոց ընկեցայ սաստիկ և դառն կտտանօք։ Եւ պահապանացն սաստիկ աղա-

ձայն և ճիչն դատափետ ոչ հեռացեալ հատանէր 'ի լսելեաց իմոց յերեկորեայ մինչեւ ցառաւօտն, և սակս այսորիկ բարձեալ էր յինէն նինջ արտասուանաց և հանգիստ կրանաց իմոց»։

Ոստիկանն ոսկի և արծաթ կը խնդրէ կաթողիկոսէն, և սա պատեհ առ իմ համարելով ազատութիւն կը խնդրէ, որ երթայ ժողովէ և հատուցանէ։ Բանտէ կ'արձակուի, այլ ոչ կապանքէ, և ընդ հսկողութեամբ պահապանաց շղթայակապ կը շրջի ազգին մէջ և արծաթ ու ոսկի կը ժողովէ անգութ բռնաւորին համար։ Յաջող միջոց գտնելով կը փախչի Աղուանից երկիրը. Սահակ իշխանի և Ատրներսեհ Թագաւորի մօտ, և ապա դառնալով անտի կը բնակի Գուգարաց աշխարհի մէջ։

Յուսուփ միանալով Վասպուրականի ինքնակալ Թագաւոր Գագիկ Արծրունւոյ հետ., կը հետամտի Սմբատը կալանաւորել կամ սպաննել։ Հուր և սուր կը շողան ամէն ուրեք. եկեղեցիները կը կողոպտուին, եկեղեցականք և աշխարհականք կը գերուին, և հանգոյն Վարդանանց դարուն, աշխարհի բընակիչները կը ստիպուին թողուլ իրենց բընակարանները և լեռներն ու անտառներն ապաւինիլ։ Շատ իշխանք ձերբակալ կըլլանին. Սմբատ Թագաւորի Մուշեղ որդին

և Սմբատ եղբօրորդին հաւատը չուրանալու համար կը Թիւնաւորուին անագորոյն բըռնաւորներէն ։

Սմբատ կ՚ապաստանի Կապոյտ ամրոցն իւր Թիկնապահ զօրքով և Յուսուփ պաշարելով, քրիստոնեայ զօրականները յառաջ կը վարէ որ նետաձիգ լինին ։ Երկու կողմէն նետահարութիւնը կը շարունակի, և Սմբատ, խնայելով քրիստոնէից արիւնն ու կոտորածն որոնք իր պատճառաւ կը նետահարէին զմի՚մեանս, անձնատուր կը լինի, ստիկանէն խաղաղութեան երդումն խնդրելով ։ Սակայն յետոյ ընդդէմ երդման կը կալանաւորուի Յուսուփէն, շղթայակապ խաւարչտին բանտի կը մատնուի և տանջանքներու կ՚ենթարկուի հաւատն ուրանալու ։ Ապա կը տարուի Գողթան գաւառն և Երնջակ բերդի հանդէպ, ուր ղօղուած էին նախարարազուն կանայք և որդիք, Յուսուփ կամելով բերդի մէջ ամրացածներուն ահ և սոսկումն պատճառել և հնարքով կալանաւորել, սաստիկ տանջանաց կը մատնէ զՍմբատ ։ Սմբատ հաստատուն կը մնայ իւր քրիստոնէական հաւատքին վրայ և կը հաղորդուի մի ծըպտեալ քահանայէ ։ Անտանելի տանջանքներէն յետոյ գլուխը կը կտրեն և մարմինը կը տանին ՚ի Դուին, կը բեւեռեն խաչափայտի վրայ, իբր ՚ի նախատինս իւր քրիս-

տոնէութեան, և այսպէս կը կատարի Թագաւոր Նահատակին Սմբատ (914), որոյ արիական մարտիրոսութիւնը, ըստ Յովհաննու կաթողիկոսի, պատճառ կը դառնայ շատ այլազգիներու քրիստոնէական դարձին։

Յուսուփ, սոյն անգթութենէն զկնի, Երընջակի պաշարումն առաւել սաստկացնելով վերջապէս կը գրաւէ նենգութեամբ, և այնչափ կոտորած կ'առնէ գիշերը քաղաքին մէջ, որ առաւօտուն արիւններն կը գտնուի քաղաքն։ Այս տեղէն շատ մեծամեծաց կանայք կալանաւորուելով Դուին կը տարուին և այնպիսի դժնդակ բանտարկութեան կը մատնուին, որ փափկասուն տիկնայք, սակաւ ժամանակէն զկնի, կըմեռնին բանտերու մէջ։

Աշոտ, որդին Սմբատայ, կը թագաւորէ, բայց սակաւ ժամանակէն զկնի Յուսուփ՝ հազարացի աստապաններ կը սփռէ Հայաստանի մէջ և այնքան կոտորածներ և աղէտներ կը հասուցանէ և այնպիսի բարբարոսական տանջանքներով կը տանջէ հաւատացեալները, որ ընթերցողը կը սոսկայ և կը քստմնի, երբ կը կարդայ Յովհաննէս կաթողիկոսի պատմութեան մէջ, այս աղէտից դառն նկարագիրը։ Եօթն տարի անընդհատ կը շարունակին այս անգթութիւններն և հարցափորձական ատեաններու և տանջանարանաց խստութեան առջեւ աներկիւղ

կը խոստովանին Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակները իրենց քրիստոնէութեան սըրբութիւնն ու ճշմարտութիւնը և ամենայն խոստմունք ուրացութեան առ ոտն կը հարկանեն։ Նավմաթիւ արք և կանայք, ծերք և մանկունք կը մարտիրոսանան, որոց մէջ կը յիշուին քանի մի պատանի նահատակներ, — Անքայէլ Գուգարացի և Գնունեաց ազգէն երկու եղբարք՝ Գաւիթ և Գուրգէն—որոնք ամենայն դահճական արհաւէքը և իշխանական խոստումն կը քամահրեն և ուրախութեամբ մահ կը ճաշակեն 'ի սէր Աստուծոյ։

Այս ամեն նահատակներու յիշատակն, որոնք Յուսուփի ժամանակ կը մարտիրոսանան, կը պատուի Եկեղեցւոյ մէջ, որուն համար այսպէս կը գրէ ինքն Յովհաննէս կաթողիկոս. „Ամենքեան սոքա սուրբք, յիրաւի տարեւորական տօնախմբութեամբ պատուին միշտ յեկեղեցիս սրբոց՝ որ յիշատակի սոցա սահմանեալ Մարերի ամսոյ՝ որ օր 27”. և ասպա կամելով ցուցանել թէ աստուածային սիրով վառուածներն երկիւղ և ցաւ չեն զգար արհաւիրքէ և տանջանքէ, կը յաւելու. „Զիք ինչ ահաւոր, ուր սէր Հօր է, և ո՛չ այն ինչ որ ցաւեցուցանէ, ուր փառքն Քրիստոսի են”։

Դ.

Սով 'ի Հայաստան. — Թուղթ մխիթարանաց 'ի Նիկողայոս պատրիարքէն Յունաց. — Թուղթ Յովհաննէս կաթողիկոսին առ կայսրն Յունաց. — Ներքին խռովութիւնք և երեք թագաւորք 'ի Հայաստան. — Նեղք ոստիկան և կաթողիկոսն Յովհաննէս. — Նահատակութիւնք և գերութիւնք. — Գրաւումն կաթողիկոսարանին Դունայ. — Կաթողիկոսունք՝ Ստեփաննոս Բ և Թէոդորոս Ա. — Թագաւորութիւն Աբասայ և շինութիւն վանօրէից. — Կենցաղ վանականաց. — Եղիշէ կամ Եղիազ Ա և Անանիա Մոկացի. — Աբաս և Թագաւորն Ափխազաց՝ Բեր. — Հրդեհ մոլեկրօնութեան Յունաց. — Թագաւորութիւն Աշոտ Ողորմածի. — Գծագիր կենաց նորա. — Շինութիւն Հաղբատու և Սանահնի վանաց

ՅՈՒՍՈՒՓԻ զօրքերէն, Պարսից կուսակալներէն, Յոյներէն և Կովկասեան հիւսիսաբնակ ազգերէն հասած հարստահարութեանց և վրդովմանց պատճառաւ երկրագործութիւնը կը դադարի Հայաստանի մէջ ուստի և սաստիկ սով կը տիրէ բոլոր աշխարհին, որոյ աղէտալի պատկերը, զոր կը նկարագրէ Յովհաննէս պատմաբան կաթողիկոսըն, սարսուռ կը պատճառէ ընթերցողին: Այս աւերանաց և աղէտից համբաւներն ամէն տեղ կը տարածուին և Յունաց Կոստանդին Պերփիւռուժէն կայսրը կը յանձնէ Կ. Պօլսոյ յունական Նիկողայոս պատրիարքին մխիթարանաց և ցաւակցութեան գիր

գրել առ Յովհաննէս կաթողիկոս, որ Վրաց աշխարհի մէջ էր, Ատրներսեհ թագաւորի մօտ։ Այս թղթէն կը նշմարուի, որ Վրացիք, չընդունելով Կիւրոնի ժամանակ պատահած բաժանման, տակաւին Հայաստանեայց կաթողիկոսական իշխանութեանը կը հպատակէին, վասն զի Նիկողայոս այս խօսքերը կը գրէ առ Յովհաննէս կաթողիկոս. "Յոյժ տրտմութիւն և անպակաս ցաւք են սրտից մերոց յաղագս Հայոց, Վրաց և Աղուանից միահամուռ քոյդ հաւատացեալ հօտիցդ"։

Այս թուղթը ստանալէն վկնի Յովհաննէս կաթողիկոս Վրաստանէն կը դառնայ ՚ի Տարօն և տեսնելով երկիրը տակաւին թըշնամիներէ պաշարուած, ցաւօք և հեծութեամբ սրտի (920), երկար թուղթ մի կը գրէ Յունաց կայսեր և Հայաստանի բոլոր աղէտները պատմելով՝ օգնութիւն կը խնդրէ։ Կայսրը կաթողիկոսի թուղթը կարդալով՝ պատգամաւոր կը ղրկէ՝ Հայոց Աշոտ թագաւորն և կաթողիկոսն ՚ի Պոլիս հրաւիրելու։ Թագաւորը կայսեր հրաւէրին համեմատ Պոլիս կ'երթայ և մեծ պատուով ու թագով կը պսակուի. իսկ կաթողիկոսը չըհաճիր երթալու, որպէս զի իւր անձը իւր հօտին առջեւ կասկածանաց չենթարկէ և քաղկեդոնիկութեան համախոհ չհամարուի. ուստի և Տարօնէն կ'ուղեւորի ՚ի Դերջան

իւր հօտին այցելութեան։ Տառապակիր Հայրապետը Հայաստանի գաւառներուն մէջ շրջելէն և աղէտներուն ականատես լինելէն զկնի՝ չը կարենալով տոկալ կ'առանձնանայ։ Արտաքին արհաւրաց հետ ներքին խռովութիւնք ևս կը յաձախեն Հայաստանի մէջ։ Երեք Թագաւորներ միմեանց ներհակ Թագ կը կապեն, այն է Աշոտ երկաթ Սմբատեան որ արդէն Պօլսէն դարձած էր և կը Թագաւորէր Շիրակ, Աշոտ Շապուհեան, որ Յուսուփէն Թագ ստանալով՝ կը բռնակալէր Դուին, և Գագիկ Արծրունի, որ կ'իշխէր Վասպուրական աշխարհին։ Խաղաղասէր հայրապետն իւր առանձնութեան մենարանէն դառնալով շատ անգամ կը ջանայ այս ազգաւեր անիշխանութեան առաջն առնուլ բայց անօգուտ հաշտութեան չարժանանար աշխարհը. ուստի և արտաքին թշնամիները ներքին խռովութիւններէն աւելի օգուտ քաղելով, որ արդէն իրենց բորբոքածն էր, աւերմունքները կը շարունակեն։ Հայրապետի հաշտարարական միջամտութեանց ժամանակ Նսըր ոստիկանը կը հետամտէ հայրապետն կալանաւորել, ինչպէս կալանաւորած էր Հայոց երկու մեծ իշխանները՝ Սահակ և Բաբգէն և ուրիշները։ Հայրապետը Գեղարքունի գաւառի Այրիվանից մէջ լինելով՝ այն տեղէն կ'անցնի Սևան կղզին և

վարդապետաց՝ խորհրդով զանազան ընծա-
ներ կը ղրկէ Սարիկանին զայրոյթը զիջուցա-
նելու համար և երդման թուղթ ստանալով
կը յօժարի երթալ 'ի Դուռն կաթողիկոսա-
րանն ։ Սակայն Սարիկանը կը ստէ իւր երդ-
մանը , զօրք կը ղրկէ Էջմիածին կողոպտե-
լու , ուր պահուած էին կաթողիկոսական
գանձերը և եկեղեցական սպասներ և զար-
դեր ։ Կրօնաւորները կը դիմադրեն և բոլորը
զանազան տանջանքներով կեանքէ կը զրկուին ։
Այս զօրք կը ղրկէ Թիւրական բերդը , ուր
էր կաթողիկոսն , որպէս զի կալանաւորեն
և իւր մօտ բերեն ։ Կաթողիկոսը մօտահաս
վտանգէն կ'ազատի փախչելով , կարծելով
թէ միայն իւր անձին համար է զօրականաց
հետամտութիւնը . սակայն թշնամիք բերդը
կը պաշարեն , ուր բաւական բազմութիւն ,
քահանաներով և եպիսկոպոսով հանդերձ
ամրացած էին ։ Ամրոցը կը մատնուի թշնա-
մեաց ձեռքը , 200 հոգի սրով կը խողխողին
հաւատոյ մէջ հաստատուն մնալու համար ,
և սպանելոց գլուխները արանց և կանանց
հետ գերի կը տարուին Սարիկանին ։ Այս
գործը կաթողիկոսի ականջը կը հասնի և յե-
տոյ տեղեկանալով , որ գերիներուն ազա-
տութիւն եղած է , իսկ տասն մանուկներ
թշնամիքն իրենց տներուն մէջ պահած են ,
արծաթով կը գնէ և կ'ազատէ ։

Նոյնը կը գրաւէ Դունայ կաթողիկոսարանը և բնակարանն կը դարձնէ իւր ծառայից համար, իսկ Յովհաննէս կաթողիկոս տեսնելով թէ՝ վերստին ժառանգելոյ յոյս չկայ, կ'ուղեւորի ՚ի Վասպուրական առ Գագիկ Արծրունի և անդադար կը տառապի այն տեղ Եկեղեցւոյ և Ազգի վիճակին վրայ։ Այս թախծութեան մէջ, արտասուօք և հեծութեամբ կ'աւարտէ իւր պատմական երկասիրութիւնը, որ վաղուց սկսած էր և որոյ համար յատկապէս խնդրած էին Գագիկ և Աշոտ, և կը կնքէ մի յորդորական սրտաշարժ վերջաբանով։ Ինքն եւս բազմաչարչար հայրապետն սակաւ ժամանակէն զկնի կը վախճանի, 27 տարի կաթողիկոսական պաշտօն վարելէն զկնի, և կը թաղուի Վասպուրականի մէջ (924)։

Յովհաննիսին տեղ կաթողիկոս կ'ընտրուի Ստեփաննոս Բ. որ կը նստի Աղթամար կղզւոյ մէջ, վասն զի Դունայ կաթողիկոսարանն արդէն գրաւուած էր Հագարացի ոստիկանէն։ Ստեփաննոս մի տարիէն յետոյ կը վախճանի և իրեն կը յաջորդէ Թէոդորոս Ա. Սորա կաթողիկոսութեան երկրորդ տարին, երբ Աբաս կը թագաւորէ իւր եղբայր Աշոտի տեղ, Դունայ կաթողիկոսարանը կ'առնուի, բայց Թէոդորոս Աղթամար կը նստի։

Աբասի թագաւորութեան ժամանակ Հա-

յաստան աշխարհը սակաւ ինչ խաղաղութիւն կը գտնէ, լեռնական պատսպարեանները կը դառնան, եկեղեցեաց և վանօրէից շինութեան ձեռնարկութիւնք կը լինին, որք արդէն շատ տեղ աւերուած և այրուած էին։ Այս վանօրէից շինութեանը պատճառ կը դառնան մանաւանդ այն վարդապետներն, որոնք Հայաստանէն ցրուած էին Եգերացւոց և Հոռոմոց երկիրներուն մէջ և հալածուելով իրենց հայրենիքը դարձան։ Այն ժամանակին մէջ շինուած գլխաւոր վանքերը սոքա են. — Կամրջաձորոյ վանք, Արշարունեաց գաւառի Երասխաձորի մէջ. — Հոռոմոսի վանք, Շիրակ գաւառի մէջ, որ Հոռոմոց երկրէն հալածուած կրօնաւորաց ձեռքով շինուեցաւ. — Խծկոնքի վանք, Դերջան գաւառի մէջ. — Նարեկայ վանք, Ռշտունեաց գաւառի մէջ. — Սաղմոսավանք, Խարբերդի մօտ. — Հնձոց վանք, Կարնոյ մօտ. — Ցախացքար վանք, Վայոց ձորոյ մէջ. — Կապուտաքար վանք, Արշարունեաց մէջ. — Նորոգեցաւ նմանապէս և Շիրակ գաւառի Դպրեվանքը։

Այս վանօրէից շինութեանը կ՚օժանդակէ Աբաս Թագաւորն, որոց մէջ կը ծաղկին զանազան ուսումնափնդիր վարդապետներ և ՚ի ժամանակին զանազան գաւառներու մէջ առաջնորդ կը կարգուին, որոց գրագիտական արդեանց և ընթացից վրայ առանձին

պէտի խօսինք ։ Այս վանուց միաբանից կեն-
ցաղին վրայ ծանօթութիւններ կ'աւանդէ Ասողիկ, ասելով, որ գլխաւորապէս երեք կանոն խստութեամբ կը պահպանէին, այն է պարապիլ ընթերցման և աղօթից, օրը մի անգամ ճաշել և իսպառ անստացուած մնալ։ Այս էր պատճառն որ բարեպաշտ մարդկանց կողմէն մեծամեծ նուէրներ կ'ընծայուէին, ոչ թէ կրօնաւորաց համար, որոնք ուխտած էին չհարացուցանել բնաւ, այլ իբրեւ պահեստի տրուած հարստութիւն Եկեղեցւոյ, ի ժամանակին ազգային հոգեւոր պիտոյից համար գործածելու։

Թէոդորոս 10 ամեայ (ըստ Ասողկայ 11) կաթողիկոսութենէն յետոյ կը վախճանի (935) Աղթամարայ մէջ, և կ'ընտրուի նորա եղբայրն Եղիշէ կամ Եղիսէ Ա. որ եօթը տարի միայն կաթողիկոսական պաշտօն կը վարէ (թէ և երկու տարին իբրեւ հրաժարեալ) և կը վախճանի (943)։ Եղիշէին կը յաջորդէ Անանիա Մոկացի, Վարագայ ուխտի առաջնորդը, որ Աղուանից և Սիւնեաց աշխարհն եւս կը ճանապարհորդէ ինչ ինչ խռովութիւններ անդորրացնելու համար։

Ինչպէս արդէն սկսուած էին զանազան վանորէից շինութիւններ, նոյնպէս Աբաս թագաւորը հիմնարկել կը տայ Կարսայ կաթուղիկէ եկեղեցին և 5 տարիէն յետոյ կ'ա-

ւարտի ։ Ափխազաց Բեր Թագաւորը կը դիմէ Հայաստանի վրայ և խրոխտալով կը պահանջ Նորաշէն եկեղեցին Վրացւոց ծիսով օրհնել տալ, իբրեւ արհամարհանք Հայոց կանոնական արարողութեանց ։ Աբաս հայոց եպիսկոպոսներն և վարդապետները կը ժողովէ իմանալու՝ թէ ուստի՞ են Հայոց եկեղեցւոյ օրհնութեան կանոնքն, և երբ պատասխան կըստանայ թէ 'ի Ս. Լուսաւորչէն են և երանելի Մեսրոպէն և ճոխացուցած են վերջին դարուց վարդապետներն, կը զայրանայ և կը պատերազմի Ափխազաց Թագաւորի հետ և կալանաւորելով կը բերէ Կարսայ Նորաշէն եկեղեցին և կ'ասէ. "Տես այժմ սորա գեղեցկութիւնը, վասն զի միւսանգամ չը պիտի տեսնես". և յետոյ աչքերը հանել կը տայ ։

Մինչդեռ Աբասի Թագաւորութեան ժամանակ սակաւ ինչ խաղաղացած էր Հայաստան աշխարհը հարստահարութենէ և հալածանքէ, յանկարծ բորբոքեցաւ յունական մոլեկրօնութիւնը, որ սովորաբար կը գրգռուէր միշտ այն ժամանակ, երբ Հայք կըսէին փոքր ինչ ներքին բարեկարգութեամբ զբաղիլ, փոքր ինչ անդորրանալով հագարական և պարսկական տառապանքներէ ։ Այնչափ կը զայրանայ Յունաց կրօնական ատելութիւնը, որ կըսկսին Հայերը նզովել իբրեւ

Եւտիքեան, եկեղեցւոյ խորհուրդները պախարակել, բռնադատել ազգային ծէսերը փոխելու, իրենց յարողները վերստին մկրտելու դրոշմել և եթէ քահանայք են՝ վերստին ձեռնադրել, և այսպէս առիթ տալ չարաչար խռովութեանց։ Յունաց բաժնի Հայերէն շատերն այս անհանդրողամտութեան հալածանքէն զզուելով կը տեղափոխին Մեծ Հայոց Շիրակ և Վանանդ գաւառները, որոյ համար ատելութիւնն աւելի կը զայրանայ և երկար դարեր կը տեւէ։

Վասն այս յունական հալածանաց և այլ բարբարոս ազգաց ասպատակութեան միջոցին կը վախճանի։ Նախարարք Անանիա կաթողիկոսին հետ կը խորհին շուտով թագաւոր օծել Աբասի որդի Աշոտն, և այս պատճառաւ պատգամաւորաց ձեռամբ կը հրաւիրեն Աղուանից Փիլիպպոս հայկազուն թագաւորն ու Յովհաննէս կաթողիկոսն, և երբ կը ժողովին ամենքն, ուր էին 40 էն աւելի եպիսկոպոսունք, (961) Անի քաղաքի մէջ Աշոտը թագաւոր կ'օծեն, և նոյն քաղաքն արքայական աթոռանիստ կը դառնայ։

Աշոտ մեծ խնամք կը տանի Եկեղեցւոյ պայծառութեան և իւր մարդասիրական խնամքներով առաւել հայր կը հանդիսանայ Հայաստանին քան թէ թագաւոր։ Կըսափռփէ Եզգի տառապեալներն ու կարօտեալնե-

րը ։ Սեղանակից կ՚առնէ իրեն՝ կաղերը, կոյրերը, ցաւագարները և շատ անգամ ինքը կըսպասաւորէ, իւր բոլոր արքայական հարըստութիւնը ազգի կարօտելոց համար գործադրելով, այնպէս որ մահուան ժամանակ մի դրամ գոնէ չըգտնուիր գանձատան մէջ։ Այս մարդասիրութեան խնամոց և գթութեան համար կըկոչուի Աշոտ Ողորմած։ Աշոտի նման ողորմած կըլինի նմանապէս և Խոսրովանոյշ թագուհին, որ Սեւորդեաց աշխարհին մէջ կառուցանել կը տայ Հաղբատ և Սանահին հոյակապ վանքերն, որոնք մինչեւ ցայսօր կանգուն կան։ Խոսրովանոյշ գթած մայր կը հանդիսանայ բոլոր ազգին և արժանաւոր թագուհի Բագրատեան թագաւորութեան։

Իսկ Անանիա կաթողիկոսն Աղթամարայ, Վարագայ և ապա Անիի մէջ հայրապետական պաշտօն վարելով կը վախճանի 22 ամեայ կաթողիկոսութենէն զկնի։



Ե.

Վահան կաթողիկոս. — 'Ի Յունաց արծարծեալ խնդիր միութիւն. — Ժողով յԱնի. — Փախուստ Վահանայ 'ի Վասպուրական. — Ընտրութիւն Ստեփաննոս Գ-ի. — Երթ Ստեփաննոսի առ Վահան եւ արգելանք իւր յԱղթամար. — Խաչիկ Ա. — Կրօնական հալածանք 'ի Յունաց. — Թշնամութիւնք. — Բարեկարգութիւնք Խաչիկի. — Ժողով յԱնի եւ ընտրութիւն Սարգսի Ա. — Մոլորութիւն Թոնդրակեցւոց. — Ժողով յԱնի. — Պետրոս Ա. — Գաղթականութիւն 'ի Սեբաստիա. — Յուղարկել Սենեքերիմայ եւ Վասակ Պահլաւունի. — Հարեւանցի ակնարկ ազգային կրօնական եւ քաղաքական վիճակի վրայ։

ԱՆԱՆԻԱՅԻ տեղ, ժողովական հաւանութեամբ (ուր էր եւ Խղուանից Յովհաննէս կաթողիկոսն), կաթողիկոս կ'ընտրուի (965) Սիւնեաց Բաղաց գաւառի Զուանշէր իշխանի որդին Վահան կամ Վահանիկ, որ առաջ եպիսկոպոս ձեռնադրուած էր նոյն գաւառի վրայ Անանիայի ձեռամբ։ Վահան կաթողիկոսանալով կը նստի Արգինայ գիւղաքաղաքի մէջ, վասն զի տակաւին Անիի կաթողիկոսարանն պատրաստուած չէր։ Վահան իւր կաթողիկոսութեան միջոցին, յունական ատելութենէն ստիպուած, որ ամենայն հալածանքով կը շարունակուէր, կամ ինքնին աւելի հակամիտ լինելով նոյն կողմը, առանց հաւանութեան եւ գիտութեան Աղ-

գին, կը միաբանի Յունաց հետ և առանձինն իւր կողմէն գիր գրելով և պատկեր քերելտալով կը դնէ Հայոց եկեղեցւոյն մէջ. իբր 'ի նշան անխտրութեան։ Վահանայ արարմունքը սաստիկ խռովութիւն կը յուզէ Ազգի մէջ, որոնք կը սոսկային յունական միակերպութենէն և միաստակար կը համարէին ազգային Եկեղեցւոյ դաւանութեանը, որ իւր առանձին ծէսերով և սովորութեամբ կը պարծէր։ Այս խռովութեան առթիւ մեծ ժողով կը գումարուի Անիի մէջ (ուր յականէ յանուանէ կը լինին — Տէր Խաչիկ Արշարունեաց եպիսկոպոս, հայր Պօղիկարպոս Կամրջաձորոյ վանական, հայր Սարգիս Հոռոմոսի վանուց վանական և այլ եպիսկոպոսունք և բազմաթիւ մարդիկ) Վահանայ ինքնահաճ գործը քննելու։ Վահան տեսնելով Ազգի յուզմունքը և ժողովի գումարումն, որուն ինքը պատճառ տուած էր, կը փախչի Վասպուրականի Աբուսահլ Թագաւորի մօտ, որ Գագիկ Արծրունիի որդին էր։ Յիշեալ ժողովն հաւանութեամբ և Վահանայ փախստեան պատճառաւ կաթողիկոս կ'ընտրուի Ստեփաննոս Գ. Սեւանայ վանուց վանական։ Երկար գժտութիւններ կը լինին Վահանի և Ստեփանի մէջ, մինչեւ որ վերջինը կըստիպուի անձամբ Վասպուրական երթալ և Վահանն ու իր պաշտպանն Աբու-

տաճկ յանդիմանել. Ստեփաննոս իւր ուղեկից վարդապետաց հետ կ'աքսորուի Աղթամար կղզին և անտի կը տարագրուի Միայնակ Կոտորոց բերդը, ուր և կը վախճանի երկամեայ կաթողիկոսութենէ վերջ։

Յունականութեան յարուցած ուրիշ արդիւնք չէր կարող ունենալ Հայոց համար, եթէ ոչ ներքին վրդովմունք և երկպառակութիւնք եկեղեցւոյ զաւակաց մէջ, ինչպէս կը տեսնենք Վահանի և Ստեփաննոսի պատմութենէն։

Ստեփաննոսի տեղ կաթողիկոս կ'ընտրուի, (972) Խաչիկ Ա. Արշարունեաց եպիսկոպոսն, Անանիայի քեռորդին, որոյ մասին պատմաբաններէն ոմանք կ'ասեն թէ Վահանի կենդանութեան ժամանակին ընտրուեցաւ, իսկ ոմանք կ'ասեն թէ Վահան արդէն վախճանած էր։ Խաչիկ ևս Արգինայ գիւղաքաղաքի մէջ կը նստի, ուր և հոյակապ եկեղեցի կը կառուցանէ և բազմաթիւ մատեաններ ժողովելով հարուստ թանգարան կը պատրաստէ։ Սա զանազան օտար երկիրներու մէջ գտնուած Հայոց համար եպիսկոպոսներ կը հաստատէ հայկական հօտի օտարութեան մէջ ցրուած խումբերը հովուելու։

Խաչիկ կաթողիկոսի խորհուրդը շատ օրինաւոր էր, վասն զի ուր հօտն է, այնտեղ պէտք է լինի և հովիւն։ Ինչ ժամանակ որ այս

օրինաւորութիւնը գործադրուած չէ, մինչ կորուստ եղած է Ազգին և շատ տեղ և շատ անգամ անխնամակալութենէ պարզամիտ ժողովրդէն շատերն օտարաց հետ խառնըւելով անյայտացած են։

Խաչիկի կաթողիկոսութեան ժամանակ Յոյնք սաստիկ կը տագնապէին Հայերը դաւանաբանական խնդրոց համար։ Սեբաստիոյ Յոյն մետրապօլիտը բռնաբար կը տանջէ Հայ քահանայքը և նոցա գլխաւորները երկաթի կապանքներով կայսեր կը խրկէ ՚ի Պոլիս, ուր ոմանք բանտերու մէջ կը մեռանին և ոմանք յակամայս կը ստիպուին Քաղկեդոնի ժողովն ընդունիլ։ Յունական մետրապօլիտները զանազան թղթեր կը գրեն Խաչիկ կաթողիկոսին՝ մոլեկրօնութեան ժանտախտով տոգորուած և կը պախարակեն Հայաստանեայց Եկեղեցին, և յունական բաժնի Հայոց մէջ կ'արգելուն ժամհարութիւնն ու աղօթատեղին ժողովելը։ Հայոց վարդապետները կը ժողովին Խաչիկ կաթողիկոսի հրամանաւ և կը պատասխանեն Յունաց գրած թղթերուն։ Հայոց պատասխաններէն մին, որ բաւական ընդարձակ է. կ'աւանդէ Ասողիկ ժամանակակից պատմագիրն իւր երկասիրութեան մէջ, (Գլուխ ԻԱ), յորմէ պարզապէս կ'երեւի թէ որչափ այլանդակ եղած են Յունաց գրած թղթերն առ Խաչիկ կաթո-

ղիկոս ։ Նոյնպէս Թուղթ կը գրէ Թէոդորոս Յոյն մետրապօլիտն, որուն կը պատասխանէ Սամուէլ Կամրջաձորեցին, Խաչիկ կաթողիկոսի հրամանաւ ։

Այս ամէն յուզմունքներն և Թղթակցութիւնները պարզապէս կը յայտնեն մեզ թէ որչափ աղէտներ կարող են հասնիլ քրիստոնէական Եկեղեցւոյն, երբ սէրը՝ միաբանութեան փոխուած է և քրիստոնէութեան ճշմարիտ հոգին՝ ծիսական վիճաբանութեան ։ Այս պատկերով կը ներկայանայ մեզ նոյն ժամանակեայ յունական եկեղեցականութիւնը, որ հակառակ Աւետարանի հոգւոյն, օրհնութեան տեղ՝ անէծքներ կը տեղայ Հայոց վրայ և տառապակիր Ազգ մի տարապարտ վէճերով կը զբաղեցնէ ։

Խաչիկ յունական ատելութենէն չը տատամսելով՝ ներքին բարեկարգութեանց և ջանք կը տանի և Տրդատ անուն նշանաւոր ճարտարապետի ձեռամբ կը շինէ Անիի կաթողիկէ եկեղեցին, ուր և կը հաստատուի կաթողիկոսարանն ։ Նմանապէս Գագիկ Ա. Աշոտ Ողորմածին երէց որդին, Կատրամիդէ Թագուհւոյ լծակցութեամբ զանազան եկեղեցիներ կը շինեն Անիի մէջ, որոց մէջ նշանաւոր էր մանաւանդ Նրաշխաձորի մէջ կառուցածն՝ նմանութեամբ Էջմիածնի ։ Այս եկեղեցեաց մէջ Գագիկ Շահնշահ իւք-

նին շատ անգամ եկեղեցական պաշտօնէից հետ ժամասացութեան կ'երգակցէր ։

Խաչիկ 19 ամեայ կաթողիկոսութենէն ըզկնի՝ իւր արդիւնաւոր կեանքը կը կնքէ և կը թաղուի Արգինայի հանգստարանին մէջ և ապա Գագիկ Շահնշահ մեծ ժողով կը գումարէ Անիի մէջ նոր հայրապետի ընտրութեան համար, ուր և բոլոր ժողովականաց հաւանութեամբ կ'ընտրուի (992) Սարգիս Ա Սեւանայ վանուց առաջնորդն, որոյ համար կ'ասէ Ասողիկ․ «Ոչ ինքն զկնի պատուոյն, այլ պատիւն զկնի ինքեան ընթացաւ»։ Սորա հրամանաւ է որ Ասողիկ կը գրէ իւր պատմական երկասիրութիւնն, որոյ վրայ առանձինն պիտի խօսինք ։

Եկեղեցական Պատմութեան անաչառ հարցասիրութենէն քաջ յայտնի է, որ իմաստակութենէ և մոլեկրօնութենէ ծագած վէճերը միշտ կը խանգարեն հաւատացելոց սրտերն՝ եկեղեցական պաշտելի խորհրդներն առարկայ ընելով տկար մտքերու շաղակրատութեան, կը ցամաքեցնեն բարեպաշտական զգացմունքներն և հետեւապէս կը ծնուցանեն այլանդակութիւններ ։ Այս յայտնի է քրիստոնէութեան սկզբնաւորութենէն 'ի վեր, որ միշտ մոլորութիւններ յառաջացած են, երբ Աստուածութեան անհաս խորհրդները մարդկային տկարամիտ-

հետազօտութեան ենթարկուած են։ Կը ցաւինք ասել, որ Յունաց ազգի կրօնական աններողամտութիւնն ու հակառակասիրութիւնը մեր ազգի մէջ ևս շատ մտքեր պղտորեց և քանի մի անբարեպաշտ մտածութիւններ յերևան հանեց, որոց մէջ նշանաւոր են Թոնդրակեցիք կամ Թուլայլեցիք։ Սոցա խմաստակութիւնքը, մօտ 200 տարի կը տևէ, Յովհաննէս Օձնեցի կաթողիկոսի օրէն սկսեալ մինչև Սարգսի և Պետրոս Գետադարձի ժամանակներն, երբեմն մարելով և երբեմն արծարծուելով։ Թոնդրակեցւոց մոլորամիտ կարծիքներուն վրայ երկարապատում լինիլ մեր նպատակէն արտաքոյ է, միայն այսչափ կ'ասենք, որ բաւական խռովութեան և մտայուզութեան տեղի տուաւ Հայաստանի մէջ։ Սարգսի կաթողիկոսութեան ժամանակ այնքան սաստկացան այս վրդովմունքները, որ ստիպուեցաւ ժողով գումարել առաջն առնելու համար։ Ժողովը չըկարաց իւր նպատակին հասնիլ, բայց յետ ժամանակաց Գրիգոր Մագիստրոս Միջագետի Դուքսը ջրուեց այս աղանդաւորութեան գլխաւոր ապաստանարաններն, որք էին Թոնդրակ, Թուլայլ և Խնուն կամ Խնուս գիւղերն, ուր ամրացած էին նոքա և երբեմն տարածուելով պարզամիտ ժողովրդի մէջ որոմն կը սերմանէին և համախոհն.

ներ կը շահէին, մինչև անգամ իշխաններէն քահանաներէն և կիներէն։ Գրիգոր Մագիստրոսի ահէն կը դառնան իրենց մոլորութենէն և Հարք գաւառի Ժողովքին մէջ մօտ հազար հոգի միասին կ'աշակերտին ուղիղ վարդապետութեան, որոց կը հետևէին ապա և շատերն։

Այս մոլորութեան առաջին սերմանողն կը լինի Սմբատ մի, Զարեհաւան գաւառէն, որ ուսած էր մի պարսիկ մոգ բժշկի մօտ։ Սմբատին հետևեցան յաջորդաբար զանազան անձինք, որոնք առանձին դաստիարակութիւն կը կազմէին նախագահով հանդերձ։

Սարգիս Ա. իւր կենդանութեան ժամանակ, հաւանութեամբ ազգին իրեն յաջորդ կ'ընտրէ (1019) Պետրոս առաջին իւր ծերութեան պատճառաւ և. ինքն 27 ամեայ կաթողիկոսութենէն զկնի կը վախճանի։ Պետրոսի կաթողիկոսութեան շրջանը մօտ 40 տարի կը տևէ և կը համարուի Հայաստանեայց Եկեղեցւոյ և Ազգի արհաւրալից տառապանաց միջոցը։ Այս ժամանակին մէջ Վասպուրականի վերջին Թագաւորն Սենեքերիմ Յունաց կայսեր հետ դաշն կը կապէ, իւր երկիրներն կը յանձնէ և Սեբաստիան փոխարէն ընդունելով Վասպուրականէն այն տեղ կը փոխադրուի, որուն կը հետևի Պետրոս կաթողիկոսն և շատ կրօնաւորներ, մանաւանդ

Նարեկայ վանքէն, իրենց հետ տանելով Վարագայ խաչն և բաւականին ժողովուրդ, որոնք Ակն և Արապկեր քաղաքները կը շինեն, ինչպէս և Նոր եկեղեցին Վարագայ խաչի անուամբ: Այս Թշուառ ժամանակին մէջ Սկիւթացւոց Տուղրիլ բէգը Հայաստան կ'արշաւէ և գաւառները կ'ապատակէ, շատերը կըստիպէ հաւատն ուրանալ և եկեղեցիները կ'այրէ, որով և կըբացուի նահատակութեան նոր ասպարէզ: Գրիգոր Մագիստրոսի հայրն՝ Վասակ Պահլաւունի, Հայոց սպարապետը, հրաման կը հանէ իրեն հետ միանալ, ով որ կը փափաքի քրիստոնէական հաւատոյ պաշտպանութեան համար մեռանիլ: Այս հրաւէրը տարածուելուն պէս կը գումարուի մեծ բազմութիւն, 5000 էն աւելի, ամենքը կը հաղորդուին, խրախոյս կըտան միմեանց և Վարդանանց նման կըգոչեն. «Մեր պատերազմն Եկեղեցւոյ պարծանաց համար է, չերկնչինք ուրեմն հաւատոյ Թշնամիէն և մեր մահը՝ քաջութիւն համարենք»: Կը ճակատին Տուղրիլի բազմախուռն հրոսակին հետ և մեծ արիւնհեղութիւն կը լինի, և ապա երկու կողմէն ետ կը ցրուին: Մինչ Վասակ պատերազմէն յետոյ գոհաբանական աղօթք կը մատուցանէ Աստուծոյ, դարան մտած Թշնամին քարով կը զարկէ և կը մեռցնէ քաջ նահատակը:

Դարձեալ Պետրոսի կաթողիկոսութեան թշուառ ժամանակին՝ ներքին խռովութիւններն և արտաքին արհաւիրները, ներքին թուլութիւնն ու անհաւատարմութիւնն և արտաքին թշնամեաց բարբարոսութիւնն իրար խառնուելով Բագրատունի թագաւորութեան կործանումը կը պատրաստեն։

Այն ժամանակի սոսկալի անցքերու, աւերանաց և կոտորածներու մանրապատում նկարագիրը կը թողունք ազգային քաղաքական պատմութեան (մանաւանդ Մատթէոս Ուռհայեցւոյն և Արիստակէս Լաստիվերտացւոյն), և միայն մեր պատմական թելն չընդհատելու համար՝ մի հարևանցի ակնարկ կը ձգենք Անիի և Եկեղեցւոյ կրած տառապանաց վրայ, որուն պատճառ կը լինին արտաքուստ Յունաց նենգութիւնն և Պարսից ու այլ բարբարոս ազգաց անգթութիւնն. իսկ 'ի ներքուստ Սմբատեան Յովհաննէս թագաւորի երկչոտութիւնը, Պետրոս կաթողիկոսի անքաղաքագիտութիւնը, Կիրակոս քահանայի արծաթամոլութիւնը, Վեստ Սարգսի փառամոլութիւնն ու տիրանենգութիւնն և Գրիգոր մագիստրոսի իշխանասիրութիւնը։

Զ.

Յովհաննէս Խանձրամիտ և Պետրոս Գետադարձ. — Դարձ Պետրոսի 'ի Պոլսոյ 'ի Հայաստան. — Սենեքերիմ Արծրունի. — Կալանաւորութիւն Պետրոսի. — Խռովութիւն Դեոսկորոսի Սանահնեցւոյ — Ժողով յԱնի. — Հալածանք Ապուսուարայ և արիական դիմադրութիւն քրիստոնէից. — Պահանջ Միքայէլ կայսեր Յունաց. — Թագաւորութիւն Գագկայ. — Վեստ Սարգիս. — Երթ Գագկայ 'ի Պոլիս և տարագրութիւն. — Անի կը մատնուի Յունաց. — Դքսութիւն Մագիստրոսի. — Բարձումն Բագրատունի թագաւորութեան. — Նկարագիր Աղէտից. — Թակարդ Յունաց վասն բարձման կաթողիկոսութեան Հայոց. — Կալանաւորութիւն Պետրոսի Գետադարձի եւ երթն 'ի Պոլիս. — Դարձ նորա 'ի Սեբաստիա:

ՅՈՎՀԱՆՆԷՍ *թագաւորն մի կողմէն Յունաց Վասիլ կայսերէն երկնչելով, որ Վրաց Գէորգի թագաւորին յաղթելէն զկնի Հայաստանի վրայ կ'արշաւէ, և միւս կողմէն երկրաշարժութեան և լուսնի խաւարման բնական երեւոյթներէն սարսափելով և կորուստներ գուշակելով (որ տգէտ ու նախապաշարեալ գլուխներու գործ է), Անի քաղաքը, Պետրոս կաթողիկոսի միջնորդութեամբ և առանձին նամակաւ, կը խոստանայ իւր մահէն յետոյ Վասիլ կայսեր թողուլ, որպէս զի Հայաստանը չը նեղէ: Կաթողիկոսն այս միջնորդական վնասակար գործողութեան մէ-*

Ջոցին բաւական ժամանակ կը մնայ կայսեր մօտ և ըստ պատմելոյ Մատթէոսի Ուռհայեցւոյն և Լաստիվերտցւոյն, օր մի, կայսեր խնդրանօք Հայաստանեայց Եկեղեցւոյ ծիսով Ջրօրհնէաց հանդէսը կատարելու ժամանակ, երբ կը խաչակնքէ Կենաց Փայտիւ, Ջուրը կը կանգնի իւր ընթացքէն և լոյս կը փայլի, ուստի և այս պատճառաւ է ինքն կը կոչուի Գետադարձ։

Պետրոս կաթողիկոսը Պոլսէն կը դառնայ Սենեքերիմ Թագաւորի մօտ և այն տեղէն Անի քաղաքը։ Անիէն վերստին կը դառնայ Սեբաստիա Սենեքերիմի հիւանդութեան պատճառաւ, որ վախճանելով, իւր կենդանութեան ժամանակ աւանդած պատուէրին համեմատ Վարագայ Նշանը յետ կը դարձուի իւր առաջին տեղն և իր մարմինը կը տարուի 'ի Վասպուրական և այն տեղ կը թաղուի, որով և կը վերջանայ Վասպուրականի Թագաւորութիւնը։ Հայրենասիրութեան պարտքը կը պահանջէր, որ Սենեքերիմ իւր կենդանութեան ժամանակ ամենեւին չը տեղափոխուէր Վասպուրականէն, քան թէ յետոյ իւր մարմնաւոր մնացորդը կըտակէր հայրենեաց մէջ թաղելու։

Պետրոս Գետադարձն, որ իւր կենաց մեծ մասը Սեբաստիա և այլ տեղեր կ'անցընէր, երբ Անի կը դառնայ, մեծ գժտու-

Թիւն և ստուտունք կը ծագի ազգի մէջ նորա երկար բացակայութեան համար, որով և կը ստիպուի նա Վասպուրական երթալ, ուր կ՚իշխէին Յոյն վերակացուք։ Վերստին կը կոչուի Անի, որ իւր կաթողիկոսական պաշտօնը շարունակէ և Յովհաննէս Թագաւորի հրամանաւ Բջնայ բերդին մէջ կ՚արգելուի, որպէս կալանաւոր։ Սանահնայ վանուց առաջնորդ Դէոսկորոսը կաթողիկոս կ՚ընտրուի և սորա պատճառաւ ժողովուրդը սաստիկ կ՚երկպառակի և 1036ին մեծ ժողով կը գումարուի Անի քաղաքին մէջ, 4000 եկեղեցական և աշխարհական անձներէ, ուր կը գըտնուի և Աղուանից Յովսէփ կաթողիկոսն իւր եպիսկոպոսներով։ Դէոսկորոս պաշտօնէ կը ձգուի իբրև հակաթոռ և իւր վանքը կ՚ուղարկուի, իսկ Գետադարձ վերստին պաշտօնի կը հրաւիրուի։

Այս կաթողիկոսական երկպառակութեան միջոցին Դունայ Ապուսվար Ամիրայն սաստիկ հալածանքներ կը հանէ Հայ քրիստոնէից դէմ, եկեղեցիներն այրելով, խաչերը խորտակելով, շատերը բռնի թլփատելով և այլ տառապանքներ տալով։ Քրիստոնեայք կրօնական ազատութիւնը պաշտպանելու համար կը դիմադրեն այս եկեղեցաւեր բռնակալութեանն, աշխարհիկ բազմութիւնը զէնքերով, իսկ եպիսկոպոսաց, երիցանց և վա-

նականաց դասը խաչիւ և Աւետարանաւ Ապուսվարի զօրաց դէմ ճակատելու կամ լաւ եւս ասել նահատակուելու պատրաստութեամբ։ Երբ պատերազմը կըսկսի, քրիստոնէից բազմութիւնն միաբարբառ կ՚աղաղակէ. «Արի՛ Տէր, օգնեա՛ մեզ և փրկեա՛ զմեզ վասն անուան քո.դ.» և աներկիւղ կը դիմէ՝ ի նահատակութիւն, որով և թշնամեաց բանակը կը ցրուի։ Այս տագնապը տակաւին չանդորրացած՝ Յունաց Միքայէլ կայսրը Յովհաննէս թագաւորի մահը լսելով դեսպան կը ղրկէ և Անի քաղաքը կը պահանջէ ըստ դաշնագրին։ (Զմոռանանք ասել, որ Վասիլ կայսեր վախճանելու ժամանակ, սոյն պայմանագիրը Կիրակոս հայ քահանային յանձնուած էր, որ դարձնէ իւր թագաւորին (Յովհաննիսին), բայց ապիրատ քահանայն մօտը պահելով վաճառած էր Վասիլի յաջորդ Միքայէլ կայսեր, փոխարէնն արծաթ ընդունելով)։ Հայք կ՚ընդդիմանան Միքայէլ կայսեր պահանջմանը։ Յոյնք բանակ բանակի վրայ Հայաստան կը ղրկեն, որով սարսափելի կոտորածներ կը լինին։ Հայոց նախարարները Վահրամ սպարապետի խորհրդով, ազգի հաւանութեամբ և Պետրոս կաթողիկոսի ձեռքով Յովհաննէս թագաւորի Աշոտ եղբօր որդին՝ Գագիկը թագաւոր կ՚օծեն (1042), 16 կամ 17 ամեայ

հասանկին մէջ, որ 'ի մանկութենէ կրթուած էր իմաստութեան և բարեպաշտութեան մէջ։ Յոյնք Գագիկէն կը պահանջեն Անին, և նա բոլորովին կ'ընդդիմանայ, որով և Յոյնք նորանոր նենգութեանց կը պատրաստուին։ Միքայէլի յաջորդն զԳագիկ Բ 'ի Պոլիս կը կոչէ և խոստումն կը լինի Անի քաղաքի դառնագիրն իրեն յանձնուելու, բայց նա կը կասկածի երթալու։ սակայն տիրանենգն Վեստ Սարգիս (որ Վասակայ նման ազգը մատնելով թագաւորական պատուոյ արժանանալու տենչ կը սնուցանէր սրտին մէջ.) կը յորդորէ նախարարներն ու Պետրոս կաթողիկոսն, որ թագաւորը համոզեն Պոլիս երթալու, և ոսքս կը միաբանին և կը խոստանան Գագիկի իրաւունքը պաշտպանել, միայն թէ ինքը Պոլիս երթայ կայսեր զայրոյթը աւելի չը գրգռելու համար։ Գագիկ զինքը յորդորողներուն խոստմանը և հաւատարմութեանը վստահելով կ'ուղեւորի 'ի Պոլիս, նախ մեծ պատուով կ'ընդունուի և ապա երկար խօսք կը բացուի Անի քաղաքի համար։ Թագաւորն իւր իրաւունքն ջրխաարութեամբ պաշտպանելու համար առ ժամանակ կը տարագրուի մերձակայ կղզի մի, որպէս կալանաւոր։ Այս լուրը Հայաստան կը հասնի և նախարարներն ու կաթողիկոսը, փոխանակ իրենց խոստումը պահպանելու՝ թուղթ կը

գրեն կայսեր, Անի քաղաքն իրեն յանձնելու և Անիի 40 բանալիները Վեստ Սարգսի ձեռքով Կայսեր կը ղրկուին ։ Մոնոմախոս կայսրը վերստին Գագիկն իրեն մօտ կը կոչէ և վիճաբանութեան ժամանակ բանալիները կը ցուցնէ, որով և խեղճ Թագաւորը կը շուարի որպէս կայծակնահար ։ Այն միջոցին Գրիգոր Մագիստրոս Պոլիս կ'երթայ, ուրանած էր 'ի մանկութենէ, որպէս թէ խաղաղական ելք մի գտնելու համար, բայց նա ևս կը տկարանայ իւր հայասիրութեան և իրաւանց մէջ, և իւր հայրենի ժառանգական երկիրը կայսեր տալով, 'ի փոխարէն Ասորոց կողմը նոր երկիր կ'ընդունի և դքսութեան պաշտօն առանալով կը փոխադրուի այն տեղ. ուր և կը պատահի Թոնդրակեցւոց աղանդին բարձումն, որուն վրայ արդէն խօսած ենք ։

Այսպէս ահա Հայոց Թագաւորանիստ և մեծահռչակ ու հոյաշէն քաղաքն Անի Յունաց ձեռքը կ'անցնի և 'ի փոխարէն Պիզու քաղաքը կը տրուի Գագիկին, որով և կը բարձուի Բագրատունեաց ցեղէն Թագաւորութիւնը, որ 160 տարի միայն տեւողութիւն ունեցաւ ։ Հայաստանի առիւծասիրտ և յունական նենգութեանը մատնուած Գագիկ Բ. Թագաւորն 25 տարի պանդխտական կեանք կը վարէ և օր աւուր կը յաճախեն

Հայրենեաց և Եկեղեցւոյ աղէտները։ Թշնամիները, մանաւանդ Պարսից Տուղրիլ և Ալփասլան թագաւորաց հրոսակներն, ընդ-նմին և Յունաց զօրքերը, Հայաստան տակնու վրայ կ'ընեն, զանազան բազմամարդ քաղաքներ, Անի, Արծն, Մանազկերտ, Պաղին, Տարօն և այլք կ'աւերեն և արիւնհեղութեան ասպարէզ կը դարձնեն, որով Կարսայ կամ Կարուց թագաւորութիւնն ալ կը վերջանայ, վասն զի նոյն տեղի թագաւորն՝ Գագիկ Աբասեան Յունաց երկիրը կը քաշուի։ Այս արհաւիրքներուն կը յաջորդէ Հայոց տխուր գաղթականութիւնն, որով երկիրը կը նուազի իւր բնակասուն զաւակներէն, եկեղեցիներն աւերակ կը դառնան և հայրապետութիւնը տառապանաց կը մատնուի, որուն վրայ այսպէս կը խօսի Արիստակէս Լաստիվերտցին իւր ողբական պատմութեան մէջ. "Արդ՝ այժմ թագաւորն անկեալ 'ի պատւոյ՝ իբրև զգերի կալանաւոր նստի 'ի հեռաւորնակ տեղիս։ Այսպէս և հայրապետական աթոռն ամայացեալ 'ի բնակողէն՝ ցուցանի տխուր դիմօք՝ իբրև զկին նորահարսն մնացեալ յայրութեան։ Հեծելազօրն անտերունչ շրջեալ՝ ոմն 'ի Պարսս, ոմն 'ի Յոյնս, ոմն 'ի Վիրս։ Սեպուհզունդն ազատաց ելեալ 'ի հայրենեաց, անկեալ 'ի ճոխութենէ, մնացին՝ ուր և են

իբրեւ ձկորիւն առիւծուցն 'ի խշտիս իւրեանց ։ Արքունական ապարանքն աւերակ անմարդի ։ Մարդաբնակ աշխարհն թափուր 'ի բնակչացն ։ . . . . . Եղին թշնամիք 'ի վերայ Երուսաղէմի, եղին և Պարսիկք 'ի վերայ մեր ։ Աւերեցան և քաղաքք մեր ։ Մտին հեթանոսք 'ի տաճարն սուրբ, մտին և յեկեղեցիս մեր և կապուտ կողոպուտ արարին զզարդս նորա ։ Հրայրեաց եղեւ տաճարն սուրբ, այրեցան և 'ի մեզ փոխանակ միոյ տան՝ բազում եկեղեցիք ։ Առանց համարոյ անկան քահանայք նոցա (Հրէից) 'ի սուր, և ըզմերոյս ո՞վ բերէ զհամար . . . . . .» ։

Կը տեսնենք ահա, որ Բագրատունի թագաւորական հարստութեան բարձման աղէտներուն հետ անբաժան կերպով խառն էին և Եկեղեցւոյ տառապանքներն, այս պատճառաւ է որ մին պատմած ժամանակ անհնարին էր միւսը 'ի բաց թողուլ ։ Ոչ միայն Պարսիկներն և այլ բարբարոս ազգեր, այլ և Յոյներն շարունակ հետամուտ էին Հայաստանի թագաւորութեան հետ՝ Հայաստանեայց հայրապետութիւնն ևս բառնալ, և նոյն իսկ աթոռէն զրկուած Գագիկ Բ. միայն իւր թագը պաշտպանելու համար չէր հոգար, այլ և Եկեղեցւոյ անկախութեան համար, ինչպէս ակներեւ յայտնի է ազգային պատմագրաց աւանդած անցքերէն ։

Քանի որ կենդանի էր Մեծն Փահրամ Պահլաւունին, Յոյնք սակաւ ինչ կ'ակնածէին, իսկ նորա վախճանէն զկնի ջանահնար կը լինէին կաթողիկոսութիւնն եւս այն անդունդը գլորել, ուր գլորած էին թագաւորական իշխանութիւնն։ Յոյն վերակացուի ստիպմամբ Պետրոս Գետադարձն, որպէս ժողովրդեան ապստամբեցուցիչ ընդդէմ Յունաց, Անիէն Արծն քաղաքը կը տարագրուի, իր քեռորդին Խաչիկ եպիսկոպոսն իրեն տեղապահ թողլով Անիի մէջ։ Արծնէն կ'աքսորուի Արփաւիչ բերդը. իսկ Խաչիկ 'ի բերդ Սեւաւոր կոչուած, յունական նենգութեամբ։ Խաչիկ կ'ազատուի, իսկ Պետրոս 'ի Պոլիս կը կոչուի, որուն կ'ուղեկցին 17 եպիսկոպոսներ և վարդապետներ։ Երեք տարի Պոլսոյ մէջ կը մնայ, որպէս արգելական և ամենակերպ պատուասիրական ցոյցերով կը ջանան սիրտը գրաւել, որով և մեծ տրտունջ կը յուզէ Հայաստանի մէջ. վասն զի կը կարծէին թէ Անի քաղաքի մատնութեան գլխաւոր դերը՝ Պետրոս խաղացած է, որ այսքան պատիւ կ'ընդունի կայսերէն և յունական ազգէն։ Սակայն այս պատրողական պատիւները նոր միջոցներ էին կաթողիկոսութիւնը բառնալու համար։ Պետրոս, Սենեքերիմի որդւոց և Գագիկ թագաւորի երաշխաւորութեամբ, Պոլսէն կ'ա-

ղատի և կը դառնայ 'ի Սեբաստիա, ուր հինգ տարի մնալէն յետոյ կը վախճանի։

Է.

Խաչիկ Բ. — Հալածանք Կոստանդին Տուկիծ կայսեր և հարկապահանջութիւն 'ի կաթողիկոսէն. — Երթ Սենեքերիմեան Ատոմ և Աբուսահլ իշխանաց 'ի Պոլիս. — Բռնաբարութիւն առ ընդունել զդաւանութիւն Յունաց. — Յակոբ յունամիտ վարդապետ. — Գագիկ Թագաւոր և ժողով աստուածաբանից Յունաց 'ի Սոփիա եկեղեցին. — Պարտք Եկեղեցւոյ իւրաքանչիւր զաւակին. — Ազատութիւն Խաչիկ կաթողիկոսի և դարձ 'ի Հայաստան. — Հետամտութիւն Յունաց հայկական կաթողիկոսութիւնն իսպառ բառնալու համար. — Գրիգոր Բ. Վկայասէր. — Հակառակութիւն Վկայասէրի և Գէորգայ Լոռեցւոյ. — Ժողով 'ի Սեաւ լեառն։

ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁԻՆ կը յաջորդէ իւր տեղապահն Խաչիկ կամ Խաչատուր (1058), որոյ կաթողիկոսութեան ժամանակ Յունաց Կոստանդին Տուկիծ (Դուկաս) կայսրը չարաչար կը նեղէ Հայերը. Պետրոս կաթողիկոսի թողած ստացուածներն ու կալուածները յարքունիս կը գրաւէ. Խաչիկ կաթողիկոսն Անիէն Պոլիս կը կոչէ և մեծ գանձ կը պահանջէ, որպէս թէ Պետրոս Գետադարձ և Գագիկ շատ գանձ թողած են նորա մօտ։

Այս բռնաւորն իւր ակնկալած գանձուց ստացման տենչանքէն զրկուելով՝ կը ստիպէ զկաթողիկոսն իւրաքանչիւր տարի հարկ վըճարել, ապա թէ ոչ, ամենեւին չէ կարող Պոլսէն զերծանիլ և իւր Աթոռը դառնալ։ Կաթողիկոսը կը մերժէ այս բարբարոսական պահանջմունքն, որ մինչեւ ցայն վայր և ոչ Պարսիկներէն և Հագարացիներէն եղած էր, Կայսրը կը սպառնայ մինչեւ անգամ իւր իշխաններէն երկուսը Հայաստան ղրկել, մին կաթողիկոսական իշխանութեամբ և միւսն Կիւրապաղատութեան, բայց անկատար կը մնայ այս չար հնարագիտութիւնը, սակայն Խաչիկ երեք տարի Պոլիս կը մնայ, որպէս արգելական։

Հայոց ամենանեղ վիճակը յարմար առիթ բռնելով՝ Յոյնք կը դրդեն զկայսրն, որ ամեն միջոց 'ի գործ դնէ և ամբողջ Հայոց ազգը յունադաւանութեան դարձնէ։ Կոստանդին Տուկիծ, այս նոր Յազկերտն, իւր նենգաւոր նպատակին հասնելու համար, բարւոք կը համարի հայ իշխաններէն սկսիլ դաւանափոխութեան գործն, ուստի և Պօլիս կը գոչէ Սենեքերիմ Թագաւորի որդիքն —Ատոմն և Աբուսահլ—որոնք արդէն գուշակելով կայսեր չարահնար խորհուրդը, գիտնական կարծուած վարդապետ մի կ'առնուն իւրեանց հետ, այն է Յակոբ

Սանահնեցի կամ Քարափնեցի։ Հայ իշխանազունքը սիրով և մեծարանօք կ'ընդունէին Պոլսոյ մէջ և շուտով կայսեր հրամանաւ յունաց վարդապետները կը ժողվին, որպէս զի հաւատոյ խնդրոյ վրայ վիճին հայ վարդապետի հետ 'ի ներկայութեան կայսեր։ Յակոբ Սանահնեցին, խոտորելով իւր հայրենի աւանդութիւններէն, կը յանդգնի բոլոր Ազգի անուամբ թուղթ տալ յունադաւանութիւնն ընդունելու համար։ Կայսրը կ'առաջարկէ Ատովմ և Աբուսահլ իշխաններուն մկրտիլ վերստին ըստ յունական ծիսի։ Նոքա կը մերժեն կայսեր անարգ առաջարկութիւնը և կը յայտնեն, որ առանց Գագիկին և Ազգի գիտութեան չեն կարող այսպիսի նորութիւն ընդունիլ. ուստի և բարւոք կը համարուի, որ Գագիկը Պոլիս կոչուի։ Կայսրը կը դժկամակի Գագիկը կոչելու, բայց հայ իշխանքն գաղտնի կ'իմացնեն Գագիկին Պոլիս գալ, և նա, ըստ պատմելոյ Ուռհայեցւոյն, արծուոյ պէս շուտով Պոլիս կը հասնի։ Կայսրն իսկոյն կ'առաջարկէ Գագիկին Յակոբ վարդապետի տուած դաւանագիրն երկուց եկեղեցեաց միութեան համար։ Գագիկ կը պատառէ նոյն թուղթը կայսեր առջեւ և գետին կը ձգէ, ասելով. «Յակոբ մի վարդապետ է, որոյ նման հազարաւորներ կան Հայաստանի մէջ, և իրաւունք չունի ընդ-

հանուր Եղծի անուամբ այսպիսի մի թուղթ մատուցանել ձեզ, որ անհնարին է թէ ընդունուի Հայաստանի բազմաթիւ վարդապետաց և միլիոնաւոր ժողովրդեան կողմէն ։, և ընդ նմին ստուգիւ կը յանդիմանէ զՅակոբ ։ Յետոյ Գադիկ կ'աւէ կայսեր, որ ինքն որպէս որդի թագաւորի և թագաւոր միանգամայն և որպէս զաւակ Հայաստանեայց առաքելական Եկեղեցւոյ, 'ի մանկութենէ վարժած է Հին և Նոր Կտակարանաց ուսման մէջ և գիտէ իւր մայրենի Եկեղեցւոյ վարդապետութիւնն, որուն կարեն վկայել բոլոր Հայք, ուստի և պարտք կը համարի իւր Եկեղեցւոյ դաւանութիւնը գրով աւանդել կայսեր ։ Գադիկ իւր ձեռքով կը գրէ Եկեղեցւոյ դաւանաբանական գլխաւոր մասունքը, նոյնը բանիւ բերանոյ կը խօսի Սոփիա եկեղեցւոյն մէջ գումարուած Յունաց բազմաթիւ վարդապետաց առջեւ, ամենքն ալ 'ի բերան առնելով, և ապա կը մատուցանէ զայն կայսեր և Պատրիարքին, և այսպէս յաղթական կերպով Պոլսէն կը դառնայ 'ի Կեսարիա Գամրաց ։ Գադիկ մի գեղեցիկ օրինակ է, որ Եկեղեցւոյ իւրաքանչիւր զաւակ, հովիւ և հովուեալ, իշխան և շինական, պարտաւոր է, կարեւ առաջին և նուիրական պարտք, քաջ իմանալ իւր Եկեղեցւոյ վարդապետութիւնն ու դաւանանքն և ամեն.

պատահման մէջ պատրաստ գտնուիլ պաշտպանելու ։ Հայաստանեայց Եկեղեցւոյ հագին այս պարտքը միայն եկեղեցականաց վերայ չը դներ, այլ իւր ամէն որդւոց. կարող է պատահիլ որ եկեղեցականը տկարանայ, ինչպէս Յակոբ վարդապետն, և աշխարհականը կարող է արիանալ և պաշտպանել, ինչպէս Գագիկ ։ Եկեղեցւոյ անարատութիւնն, անկախութիւնն և քրիստոնէական ճշմարտութիւններն պաշտպանելու համար՝ ամէնքն հաւասարապէս պարտք ունին ։ Այս է Հայաստանեայց Եկեղեցւոյ առաքելական և նախնական սկզբունքը ։

Խաչիկ Բ, որ տակաւին Պոլիս էր, Գագիկ Թագաւորի եւ Ատոմ Արծրունեաց խնդրանօք կ'ազատի և կը դառնայ 'ի Հայաստան, բայց Անի աթոռանիստ քաղաքի և այլ քաղաքաց աւերման գոյժը լսելով՝ կը նստի Թաւբլուր աւանի մէջ և սակաւ ժամանակէն զկնի կը վախճանի, մինչեւ վերջին շունչը հեծեծելով և հառաչելով Անիի և Եկեղեցւոյ համար, որոց վրայ կուտակուած արհաւիրներն իւր աչքով կը տեսնէր, և ադէն ինքը մեծամեծ տառապանքներ կրած էր Յունաց ազգէն ։

Խաչիկի մահէն յետոյ Յոյնք չեն թողուր որ նոր կաթողիկոս ընտրուի, որպէս զի կաթողիկոսական աթոռն պարապ մնալով կա-

մեծ կասկած Հայ ժողովուրդը կը հաւատու-
թիւն դարձնեն, ինչպէս և յետ ժամանակաց
կը դրէ Ներսէս Շնորհալին իւր միաբանու-
թեան մէջ. «Ո՛չ ի մինչ յաւուրսն յայն
հասեալ, Հայոց հովուացն վախճանեալ,
տանն Պետրոսեան (Պետրոսի Գետադարձի)
'ի բաց բարձեալ, որպէս Հեղինեայն այն ծե-
րացեալ, որով Յունաց ընդ մեզ գլորեալ,
այլում լինիլ ոչ թոյլ տուեալ. զի անտե-
րունչ աւեն եղեալ, լեզին 'ի կրօնս մեր դար-
ձեալ»: Յունական ատելութիւնն, որ եր-
կար դարերէն 'ի վեր վէճերով և տառա-
պանքներով կը տագնապէր Հայաստանեայց
Եկեղեցին և կը սպառնայէր իւր ներքին
ձգտումներն Հայոց հայրապետական իշխա-
նութիւնը բառնալու համար, Խաչիկի մահէն
յետոյ, կը տեսնենք, որ անասնոթ միջնու-
թեամբ երկու ամ կ'ըլլայ: Արդէն ամենայն
ինչ կը յայտնուի, ամենայն գաղտնիք իրա-
կանութիւն կը ստանան և ամէնքը կը հա-
մոզուին, որ Բիւզանդական ժողովը և այլ
ծիսական խնդրոց մասին յուզած վէճերն
ուրիշ նպատակ չունէին, եթէ ոչ Հայաստա-
նեայց Եկեղեցւոյ անկախութիւնը բառնալ
և առաքելական ժողովրդին խիղճը ստրկա-
ցնել: Այս անկներեն հալածարարութենէն
ազատելու, Գագիկ Աբասեան, Կարսի թա-
գաւորն, որ Յունաստան քաշուած էր, նոյն

ակեղը ժողով կը կազմէ, ուր, երկար քննու-թենէն յետոյ, կաթողիկոս կ'ընտրուի Գրի-գոր Մագիստրոսի որդին Վահրամ, (որ կը թարգմանէր անխոնջ) որ կը պայազատէր իւր հօր իշխանաւորութիւնը գրասիրութեան աստիճա-նաւ ։ Վահրամ իւր կեանք հանճարութեամբ հրաժարելով ամուսնական յարաբերութե-նէ՝ կաթողիկոս կ'օծուի (1065) և կ'անուանի Գրիգորիս կամ Գրիգոր Բ ։ Զանազան թարգմանութեանց և բարեկարգութեանց ձեռնամուխ կը լինի և յունական ու ասորա-կան լեզուներէն կը թարգմանէ Աթոռոց Վկա-յաբանութիւնքը, որոց համար և կը կոչուի Վկայասէր, որոյ գրաւոր վաստակոց վրայ ա-ռանձին պիտի խօսինք ։

Գրիգոր Վկայասէրի կաթողիկոսութեան ժամանակ, Բիւզանդեան պարագաներէն Դոյները և յունական ուխտագնացներն ու հարուածողներ-ըը կը շարունակէին Հայաստանի մէջ. մանաւանդ և նոյն միջոց ցաւէն զրկումով՝ կը խորհի հրաժարիլ կաթողիկոսութենէ և առանձ-նանալ լերանց մէջ և իւր այս խորհուրդը կը յայտնէ իւր աշխատակցին Ռուբէն Պետրոս վարդապետին, յորմէ և հաւանութիւն կը ստանայ։ Յետոյ Վկայասէրն հանգաւ կը ձեռ-նէ, որ կամքի ձեռնամուխ եղեալ, ուստի և Գրա-գիկ Արշակունի և Կալափարայ Պետրոս վար-դապետի միջոցաւ հաստատել կաթողիկոս կ'ընտ-

տարեն, որ և կ՚ծռուի Թուրքերու ձեռքին մէջ, Սկայանիրի ձեռամբ, իսկ ինքն Սկայա-ներ կ՚ազատնանան Տաճկաց տանջանքէն վրայ Խարամանիայի (կամ Կիլիկիոյ) Սեաւ լերանը։ Յետոյ մեծ խռովութիւն կը ծագի Գրիգորի և Գէորգի մէջ, որ կամէր ժողով գումարել և Սկայանէն ատարինձանէ դրկել. որովհետև ժողովրդէն ոմանք կը դիմէին նորա մօտ իբ-րև առ կաթողիկոս, որ ինքնին հրաժար-ուած էր։ Խռովութիւնը կը սաստկանայ և Գրիգոր կը յաջողի իւր ձեռնադրածը կա-թողիկոսութենէ ձգել և վերստին կաթո-ղիկոսական աթոռը վարել։ Այս անցքը կը կատարուի ժողովով, որ կը գումարուի Սեաւ լերան վրայ, իսկ Գէորգ, Թուրքերը թող-լով, կ՚անցնի Տարսոն, ուր և կը վախճանի։ Այս ժամանակէն կը սկսին Հայք գաղթել 'ի Կիլիկիա։ Այս գաղթականութեան յա-ճախելուն պատճառաւ կաթողիկոսական ա-թոռն ևս յետոյ ժամանակաց կը փոխադրուի 'ի Կիլիկիա, որոյ աթոռակալը Հայրապետաց վրայ յառաջիկայ Հինգերորդ Շրջանին մէջ պիտի խօսինք։

Ը.

Տագնապ կաթողիկոսական Աթոռոյ և փոփոխութիւն 'ի տեղւոջ տեղւոյ. — Սարգիս' և Թէոդորոս աթոռակից կաթողիկոսունք. — Նենգութիւն Յունաց. — Գագիկ տառապանօքն և ստորագրէ. — Բարսեղ կաթողիկոս. — Գրիգոր առաջորդին կաթողիկոս. — Բարսեղ կաթողիկոս 'ի Պարսկաստան. — Սան փոխանորդական և ... — Գրիգոր Գ. Պահլաւունի. — Վերջ Զօրութեան Ըրեմի.

Կը տեսնենք ահա, որ Հայոց Անիին և Սելջուկեան հասած սաստիկ հարստահարութեան պատճառաւ կաթողիկոսութիւնն ևս շարունակ կը տատանէր և կը փոխադրուէր զանազան տեղեր և հայրապետական միութիւնը քանդուելով կը կրէ երկպառակութեանց։ Գրիգոր Վկայասէր առաքելութեան կենդանութեան, Փիլարտոս իշխանին ատենակալութեամբ (որ ազգաւ Հայ էր և դաւանութեամբ Յոյն) Ջահան գաւառի Հոռոմ քաղաքին մէջ կաթողիկոս կը ձեռնադրուի Պետրոս Գետադարձի քեռորդին Սարգիս (1073)։ Իսկ Գրիգոր կասկածելով Փիլարտոսի նենգութեանը, (որ իւր մօտ կոչած էր զԳրիգոր և գնացած չէր) կ'անցնի Անի և այն տեղ քանի մի ամսէն յետոյ կաթողիկոսական տեղապահ կարգելով իւր քեռորդին Տէր Բարսեղ՝ վերստին կը դառնայ 'ի Սև լեռան։ Սկայանէր այս տեղէն

կը ճանապարհորդէ ՚ի Կ. Պօլիս. ՚ի Հռոմ (Գրիգոր ԺԶ պապութեան ժամանակին) կը դառնայ յԱնգիրապոս, ուր մի տարի մնալով Նախինի միաբանից ճգնաւորական անդքերը կը ունենէ, և առաջնորդ կարգելով առաջնական Հայոց վրայ (որոց թիւը 30;000 կը հանէր ըստ Սուռհայեցւոյն) իւր Պետրիգորիաս քեռորդին՝ Աբրահամ Շնորհաղբոյ հօրեղբայրն. կը դառնայ ՚ի Հայաստան և կը բնակի Սեւաներքին բնակարանին մէջ. ընթերցման պարապելով.

Այն միջոցին Սարգիս կաթողիկոսն կը փոխանակի և տեղը կը յաջորդէ Ջահան գաւառի Հոնի քաղաքի եկեղեցւոյն Փակակալ Տէր Թորոս կամ Թէոդորոս, որ մականուամբ Ալախօսէկ կը կոչուի, քաղցրաձայն Աքէլուխայ առելուն համար. Սակայն Սարգիս և Թէոդորոս ՚ի շարս օրինաւոր կաթողիկոսաց չեն համարուիր, ինչպէս և Գէորգ Լոռեցին.

Այս կաթողիկոսական երկպառակութեան՝ ախուր միջոցին յունական ատելութիւնն ամենայն մախանօք կը շարունակուէր և ծանրակշիռ գուն կը գործէին Յոյնք՝ Հայ իշխաններէն ոմանք ապականել. ինչպէս Բաղանին Վկայաւորի Վասակ եղբայրն և Վեստ Խաչատուր իշխանն. որ մի Յոյն կրօնաւոր աբեղայի ձեռքով թարգմանել կը խնդրուի քննած ժամանակ. Իսկ այնպիսութեան Պաղբիկ

Աշոտեան, որ տակաւին տասնամեայ կը շըր-ջէր և իւր աչքով կը տեսնէր Յունաց կող-մէն կատարուած չարիքները, միտքը կը դնէ Պարսկաստան անցնիլ, որ գուցէ կարող լինի իւր թագաւորութիւնը վերստին ձեռք բերել։

Այս միջոցին էր որ Գագիկ Հայրենասի-րական տոգորեալ վրէժխնդրութեամբ սպաննել տուաւ Կեսարիոյ Յոյն մետրապոլիտն Մար-կոս, որ յանդգնաբար Հայոց ազգին՝ իր շան անունն տուեր դրած էր։ Սակայն և Գա-գիկ ինքն ևս կալանաւորեցաւ Կիզիստրա ամրոցի մէջ, և երբ Հայ իշխանք, մանաւանդ Սենեքերիմի որդիքն՝ Ատոմ և Աբուսահլ սկսան պահանջել, բերդապահ Յոյները — եղբարքն Մանդալեանք — սպաննելով զԳա-գիկ, մարմինն կախեցին բերդի պատէն, և այսպէս Գագիկ (1079) զոհ եղաւ իւր հայ-րենասիրութեան։

Աշխարհի տառապանաց հետ Եկեղեցին ևս տագնապի մէջ էր, և որովհետև Գրի-գոր Վկայասէր Սելեւկիայի լերանց վրայ էր և Մեծն Հայաստան առանց կաթողիկոսի, ուստի Աբուլեխեան Հայք խնդրեցին Վկայա-սէրէն, որ կամ ինքն գայ Անի կաթողիկո-սական աթոռը նորոգէ և կամ հանձնութիւն տայ իւր աշակերտին Տէր Բարսեղը կաթողի-կոս ձեռնադրելու։ Վկայասէրի հաւանութեան [illegible]

եւս Աղուանից։ Արշակունեաց թագաւորելովն եւ նորա ձեռքով կաթողիկոս կ'օծեն, Հայաստանոյ մէջ, զՏէր Բարսեղ, որ կը գտնուի եւ յԱնի կը նստի։ Հայաստան եւս մեծ թեմ կը դառնայ, որովհետեւ Հայոց եւ Աղուանից մէջ խաղաղութիւն չկենալուն պատճառաւ, Աղուանից Կորիկէ թագաւորը զբան երեցն առ ան-նորդ կը գտնուի նոյն վանքին եւ քարեկար-գելու կը ջանայ։

Յունաց Ալէքս Կոմնենոս կայսրն Հալածանք կը դրդուէ Հայոց դէմ եւ Վկայասէր կը ստիպուի Պոլիս երթալ, ուր կը բանտուի եկեղեցեաց միութեան առաջարկածն խոտելուն, բայց անհնարին կը լինի։

Թէոդորոս կաթողիկոս Փիլարտոսէն կը ստիպուի Դաւան դառնալը թողուլ եւ գալ Մարաշ, նա յանձն չառներ, ուստի այն ատեն եւս Պօղոս վարդապետ մեն կաթողիկոս կ'ընտրուի, որով եւ 1085 ին չորս անձինք կաթողիկոս անուն կը կրեն — Գրիգոր Վկայասէր ի կողմանս Տարսոն, Տէր Բարսեղ յԱնի, Տէր Թէոդորոս ի Հոնի եւ Տէր Պօղոս ի Մարաշ։ Սակայն [illegible] իրենին կը թողնուր կաթողիկոսութիւնն. եւ կը քաշուի իւր վանքն ի Վարագ։ Այսու մէջ միայն Տէր Բարսեղն էր նոյն ժառանգաւորեալ [illegible] կաթողիկոսն, որ երբ կը տեսնէ Թէ Գրիգորեանները [illegible] Հայաստանեայց Աղուա-

ւէց մի մասին և կը նկարէր նորա կենսագրութեամբ
և բանհանաներով Համազգերա Վարդապետեան
կ'երթայ . կը ներկայանայ Սպիտակատի որդի
Սենեքէ Շահ Թագաւորին . որ քաղցրաբարու-
բոյ մարդ էր և կը խնդրէ որ այն Հայրենա-
հայրութիւնէն բարձանցին . որ նորա գործա-
կալաց ձեռքով կը գործուէին : Սենեքէ Շահ
կաթողիկոսի խնդրանաց համեմատ հրամա-
տակ կը հանէ Հայաստանի ամեն որդութեան
և Հայոց թեմերու նկատմամբ համար և մե-
ծապատիւ կը պատուէ զՏէր Սարգսեղ . Թող
տալով որ իւր աթոռէն խաղ կրէ և անդորրութէ
իւր Նշխարքներու գործերուն ինչպէս և կամիս Տէր
Սարգսեղ դասաւորող Մնի . բայց մի ամիս կը
մնայ այն տեղ և տարա Հանի երթալով կա-
թողիկոսական բաղն ու դաւարանը կ'առնէր.
Խմէողառոմն և խոնարհութենէ կը ձգէ : Սին
տեղէն կ'անցնի Եղեսիա և Տէր Պօղոսն մեռ-
նելն կորերով կը սպասուէր խաղաղ հրաժա-
րանն մնալ կաթողիկոսութենէ, ինչպէս ինք-
նին առաջէն հրաժարած էր : Սինչդեռ Վրա-
ժամքն սփոփելով այլոց բութեամբ կամաց մերձ-
ավին դառնալ Մնի . բայց մի վարդապետ
կ'ամբաստանէ Սանեփանիա անունն 18 ամեայ
բանհանոյ մի իւր բարողութեան համար :
Տէր Սարգսեղ կը կոչէ Ատեան բանհանան մե
կը հրամայէ իւր աթոռէն բերել և այնչափ
կրզանիլ կաթողիկոսն, որ փոխանակ ատեանը

[illegible]

տու) պատանեկին, որոյ վրայ պիտի խօսինք առաջիկայ Հինգերորդ Շրջանին մէջ։ Բարսեղ կաթողիկոս, որ Քեսուն անապատի վանաց մէջ կը բնակէր, փափաքելով յԵրուսաղէմ երթալ, կը կոչէ Հայոց եպիսկոպոսները ու իշխանները Մորդուհեր տանը, զանազան յանձնարարութեանց համար, և որ մի տանեաց վրայ քահանայիւք և սարկաւագօք պաշտօն մատուցանելու ժամանակ, տանիքն կը կործանի և ինքն ալ ասոնց կը վտանգուի։ Կը պատմուի շուտով զինքն ի Սեւլեռան տանել, ուր տակաւին չը վախճանած, Հայոց եպիսկոպոսաց և իշխանաց համաձայնութեամբ կաթողիկոսական քօղը և գաւազանը Գրիգորին կը տայ, հայրապետ ձեռնադրելու պատուէր տալով, ինչպէս և ինք ըրած էր Վ. կայսերը. և ինքն կը վախճանի, 30ամեայ կաթողիկոսութենէն յետոյ։

Յառաջ քան Գրիգորի կաթողիկոսութեան վրայ խօսիլը, որ ըստ մեր պատմական բաժանման, ինչպէս տեսանք, Հինգերորդ Շրջանին կը պատկանի, հարկ կը համարինք Չորրորդ Շրջանի պատմութեանը լրութիւն տալու համար, սակաւ մը խօսիլ ազգային Մատենագրութեան վրայ, սկսեալ Յովհան Իմաստասիրէն մինչեւ Գրիգորի ու Ներսիսի ժամանակակիցները, կամ այսպէս ըսել Ը. դարէն մինչեւ ԺԲ. դարը։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.

Ընդհանուր տեսութիւն մատենագրութեան վրայ. — Աս-տուածաբանք Ը դարու. — Երկասիրութիւնք Յովհան-նու Իմաստասիրի. Ստեփաննոսի Սիւնեցւոյ. Ղեւոնդի և պարունակութիւնք իւրաքանչիւրոցն.

ՏԵՍԱՆՔ այն ամէն հագարական՝, յու-նական՝, պարսկական և սկիւթական հա-լածանքներն, որով Չորրորդ Շրջանին մէջ — 640-1110 — շարունակ տառապեցա-ւ Ազգն ու Եկեղեցին. Տեսանք Ազգա-յին թագաւորական հարստութեանց կործա-նումն և անկումն. Տեսանք այն ամէն ա-ղէտներն, որոց մէջ տառապեցան Հայա-ստանեայց հայրապետներն, մերթ տարա-գնական թափառելով իրենց զաւակաց հետ, մերթ յունական հակառակութեան դարա-ճառաւ միաբանութեանց մէջ մտնելով, մերթ հաշտարարներ դառնալով և մերթ ողբալով ու մխիթարելով իրենց զաւակնե-րը. Տեսանք միանգամայն՝ թէ ինչպէս Ազգ-[illegible]

ւերանաց միջոցին հայրապետութիւնը փո-խադրեցաւ քաղաքէ ՚ի քաղաք և լեռնէ ՚ի լեառն, այն է ՚ի Դուին, յԱնի, ՚ի Թաւ-Ըլուր, ՚ի Սեաւ լեառն և՝ այլն. և ինչ վը-տանգներ ապառնացան կաթողիկոսական գո-յութեանն ու միութեանը : Այս ամենը տեսանք, զգացինք և վերահասու եղանք՝ թէ ինչպէս մեր Եկեղեցին հաստատուն մնաց իւր կոչման և աւանդութեանց մէջ. և ինչ պէս հալածանաց ժամանակ ամեն տառա-պանք կրեց և իւր անկախութիւնն երբէք չը զոհեց հարստահարող ազգաց կրիցն ու բռնակալութեանց : Տեսանք այժմ, թէ այս երկարատեւ հալածանաց մէջ, ինչ մշակու-թիւն և ինչ պատրաստութիւն ունեցաւ ազգային մտաւոր կեանքը, ինչ մատենագ-րական յիշատակարաններ թողուց մեզ և ինչ է իրենց պարունակութիւնն ու արժէ-քը. Այս տեսութիւնը մեզ խիստ կարեւոր է, թէ մեր ցայս վարը պատմածներուս լրու-թեան համար, թէ այն աղբիւրները ցու-ցնելու համար, (որոնցմէ քաղած ենք մեր պատմութիւնը) և թէ Զօրաւոր Շրջանի ազգային և եկեղեցական մատենագրութեան ոգւոյն ու ընթացից վրայ հաստատուն ծանօ-թութիւն ունենալու համար :

[illegible] ժողովրդի մտաւոր զարգա-ցումը և մատենագրական բարգաւաճումը.

կախուած ունի ազատութենէ, և մեր ազա-
տութեան տարիները համարեալ թէ չը ան-
ցանք Չորրորդ Շրջանին մէջ, ուստի կա-
րող ենք նոյն չափով և ս կշռել մեր ազգա-
յին մատենագրութեան վիճակը։ Ժողովուր-
դը հալածանքներով կը տառապէր, հետե-
ւապէս մեզ հասած նոյն ժամանակաց գրա-
ւոր մնացորդները եւս ոչ այլ ինչ են, եթէ
ոչ պատմագրական ինչ ինչ յիշատակարաններ,
որոնք միայն նկարագիր են տառապանաց և
ողբոց։ Եկեղեցին յունական վիճաբանու-
թեանց մէջ կը պատաղէր, ուստի և գրա-
ւոր մնացորդաց պարունակութիւնն է, մեծ
մասամբ, ժողովոց և վիճաբանութեանց նը-
կարագիր, թղթակցութիւնք, դաւանութա-
նական գրուածոյք և այլ այսպիսիք։ Սո-
ղունք ասել ինչ ինչ մեկնողական և աղօթա-
կան մատենաւոր երկասիրութիւններն։ Եթէ
մատենագրութիւնն իւր մեծ նշանակու-
թեամբ ընդունինք, որ ժողովրդի մտաւորա-
կան կենաց հայելին է, առանց տարակու-
սելոյ կարող ենք ասել, որ մեր Ազգն հայա-
ծանաց պատճառաւ ժամանակ չէ ունեցած
համազգային մտաւոր կեանքն զարգացնել.
վասն զի եղած գրաւոր մնացորդները
մասնաւոր անձանց երկասիրութիւնք են,
որոնք հալածանաց երեսէն խոյս տալով և
այս ինչ կամ այն ինչ վանաց մէջ ապաստա-

նորով. Հազիւ հազ կարողացած են արհեստն
բանից ժամանակէն անհետացողին մասն փր-
կանել և ուսմանց ու գիտութեանց թէական
պարապմանց. Մենք եւս ուրիշ բան չենք կր-
նար խօսիլ ազգային մատենագրութեան վը-
րայ, բայց միայն դարաւոր կարգաւ ցոյց
տալ ուսման պատմութեան վիճակերը և նշա-
նել մէջէն յառաջացած մատենագիրները ու-
րիշներ երկասիրութիւնները, զանց չառնելով
նմանապէս և այն մասնաւոր պատմութիւն-
ները, զորս ունեցած են քանի մի մատենագիր-
ներ, առանձին իրենց ուսումնականն ըն-
թացից մէջ հմտանալու.

Ութերորդ դարու գլխաւոր ուսումնա-
վայրերն էին — Մաքենոց կամ Մաքենեաց մենաս-
տան Գեղարքունեաց մէջ, Օձնոյ կոչուած
տեղը ուխտն Շիրակայ մէջ, [illegible]
վանք կամ [illegible], Թանահատ, Հերմոնավանք,
[illegible] վանք, [illegible] վանք՝ Վայոց ձորոյ
մէջ, Ջրաձորոյ կամ Ջրաձորի վանքը՝ 'ի [illegible].

Այս դարու գլխաւոր մատենագիրները
սոքա են.

ՅՈՎՀԱՆ ԻՄԱՍՏԱՍԷՐ, Տաշրաց գաւառի
Օձուն գիւղէն, որ կը կոչուի Օձնեցի. Սա ա-
շակերտ էր Թէոդորոս Քռթենաւորին, զոր
կը գտնես իբրեւ ընտիր և արդատաւոր վար-
դապետ. Յովհան Իմաստասիրի կեանքը

կատակման գործոց մէջ այդ ազդէն խառնած են , նաև խեղ երգիծաբանութիւններն , որոց մէջս այլ-ած խաղեր , են այսք . — 1 . Սովորականի զոր Պոնտոս Ժողովոյն մէջ խաղացած , յորդոր ընելով զուամբոխ բազմութիւնը , որ Եկե-ղեցւոյ բարեկարգութեանը հակեն և ազատ պահպանէին եկեղեցական ազատութենէ . 2. — Ընդդէմ եպիսկոպոսաց , որով ընդդէմ կը գինի առնել մի մեծապատիւներու , որոնք Քրիստոսի անօրէնութիւններն առ աչք կամ կերեւութական կը հաստատէին , առանց ի բանկան ճշմարտութեան , և այս պատճառաւ իրենք և Եպիսկոպոսնք կը կոչուէին . 3. — Ընդ-դէմ Պապականաց , որոց ազգանքը առնել մի խառնուրդ էր Յունականաց , Եգիպտա-ցեանց , Սարկինեանց և Արաբեցւոց . Նյուա-ղանց նորը , Քրիստոնէութեան առաջին դա-րերուն մէջ , մերժուած էին ՚ի կայսրութենէ Հռովմայեցւոց և Յունաց . բայց ժամանակ առ ժամանակ երբեմն ՚ի վեր կ՚երեւէին հե-տեւողներ : Յովհան իմաստասէր իւր հայ-րապետութեան ժամանակ երկնցելով , որ նոյնն ՚ի Հայաստան եւս չտարածուի և զա-ցէ այդէն նշաններ տեսնելով գրած է իւր մէջերը ճառը : Պաւղիկեանց անուններն առ-նուած կը համարեն ոմանք Պօղոս Սամո-սատացւոյ անուանէն և ոմանք երբեմն էր , Պօղոս անուն մի Հայէ , ինչ լաւ մեր առաջիններ առ

ներքև հաւաքւած են ։ Իմաստասէրի խօսքե-
րէն կ՚երեւայ, որ իւր ժամանակի Պաւլիկեան-
ները յարձակմանց տակ՝ կասկածելի Թուին կը
հաւանորէ թէ և ճարտարաբանութեան շնոր-
հաւ շատեր կը պաշտպանէին, ուստի և Իմաստա-
սէրը կրօնական աղանդաւորաց դէմ իւր
ճառը գրեց ։ 4. — Յաղագս կարգաց Եկեղեցւոյ,
որ կը բաժանուի երկու մասն, առաջինին
մէջ հաւատոյ սահմանուած է Յովհաննէս
գումարեալ գիշերային պաշտամանց մինչեւ
ճաշու ժամը, իսկ երկրորդին մէջ ճաշու ժամէն
մինչեւ երեկոյեան ժամերգութիւնը ։ 5.
— Ճառ յաղագս Գեղի ... , յաղա-
գս կարգաց Եկեղեցւոյ և Հիմնարկէից ։ 6. — Ընդ
..., որոց մէջ հաւանաբար միայն կրնե-
ծայուծին Իմաստասէրին Ընդ. Յոնից չարա-
փառներին, այն է Պաւլիկեաններին, Յա-
կոբայ առաքելոյն, Սահմանադրութեան Նախնեաց
կանոնի, Պօղոսի և Պետրոսի առաքելոց և
Սրբոյ Աստուածն ։

Յովհան Իմաստասէրի մի գլխաւոր աշխա-
տութիւնն եւս եղած է Նախնի Հայոց ժողո-
վական կանոնները ամփոփել և դասաւորել,
խորհրդական գլուխ առ գլուխ բաժանել,
և կանոնաց ժամանակը ու պատճառները
ծանուցանել. հիշեցնէ ինքն կը խօսի Ընդ-
հանրական ... մէջ, «Կանոնաց գրքոյ ...
... ի նորանց (ի Հայոց) կանոնադրութիւն ...

մնանելով բան 'ի միասնամ առնելով զնորեցնելովորդ. մատանեքու 'ի հայրապետականացն մասն արժանացուցանելով, և այլն։ Անշուշտ այն կանոնաներու, Նոյնպէս և մերթընդմերթ ծառերու վրայ բաց կը ցանկացնեն երկրագործն խորհրդածել, այսպէս Հնդացն ձեռագիր չունենալով և Վենետիկեան մատենադարանի Հայրապետութեան մէջ ման չը գտնելով՝ կը թողունք ուրիշ ժամանակի համար։

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ. — Նոյնպէս կաթողիկոսարանի մէջ իւր նախնական ուսմունքները առնելէն յետոյ՝ կը փախչի նոյնպէս նախ Աղթամարայ կրօնաստանի և ապա Սիւնեաց վարդապետարանի մէջ, ուր Սիւնեաց Մովսէս եպիսկոպոսի ձեռքով քահանայական աստիճանը բարձրանալով՝ կը մտնէ աշակերտաց՝ Սուրբ Պետրոսի։ Մովսէսի մահէն զկնի Սիւնեաց վարդապետարանի հոգաբարձութիւնը կը մնայ Ստեփաննոսի վրայ, որ իւր հետ առնելով Անանիա անուն ոմն կ'երթայ 'ի Պոլսին, եպիսկոպոսի ձեռնադրութեան կը մնայ և կը դառնայ 'ի Սիւնիս. իսկ իրեն կը մնայ կաթողիկոսարանի մէջ և կը դասաւանդէ Հինն և Նոր Կտակարանաց ընթերցասիրութեան և մեկնութեան։

Ստեփաննոսի համար կը պատմուի, որ Պոլսին քաղաքէն Կեսարիոյ կը դառնայ, մի մի

այժմեաններցի մօտ յունարէն և լատիներէն կ'ու-
սանի , Սոփիա եկեղեցւոյն մատենադարա-
նի գրքերը կ'ընթերցանէր և այն ատեն
կ'անցնի Աթէնք , ուր կը պարապի թարգ-
մանութեանց ։ Ստեփաննոս կ'երթայ նաև
նակէս և ՚ի Հռոմ , և այն ատեն ուղղակի
կը դառնայ ՚ի Հայաստան , ուր կը գտնէ
Հայրապետներէն հաստատուած ,.. Հայ-
րապետական Աթոռն Ստեփաննոս փոխա-
րուած և Իմաստասիրին տեղ կ'աթոռակալէ
Դաւիթ Արամօնցի ։ Ստեփաննոս կը մա-
տուցանէ կաթողիկոսին իւր թարգմանական
աշխատասիրութիւնները և Գերմանոս Պատրի
մի թուղթը , որուն կը պատասխանէ ։ Նոյն
ինչն Ստեփաննոս , կաթողիկոսի հրամանաւ ։
Սիւնեաց Եպիսկոպոսին \ բեհանին առաջնորդու-
թեանց և Դաւիթ կաթողիկոսի հաճութեամբ
Ստեփաննոս եպիսկոպոս կը ձեռնադրուի և
Սիւնեաց աշխարհի եպիսկոպոսաց գահերէց
կը կարգուի ։ Բայց հազիւ թէ մի տարի այս
պաշտօնը վարելէն զկնի կսպանուի մի կնոջ
ձեռամբ (որոյ վարքը յանդիմանած էր) և կը
թաղուի Սիւնեաց Թանահատի վանուց մէջ ։

Ստեփաննոսի երկասիրութիւններն են .— Գեր-
մանոս պապին գրած Պատասխանն և Անտիո-
քայ պատրիարքին գրած Թուղթը , որով կը
պաշտպանէ Հայոց եկեղեցւոյն ուղղափառութիւնը
ու միաբնակութեան ... Յունաց ...

Նաւագ Օրհնութեանց Շարականները (բաց 'ի փոքր մասէն, որ Շնորհալւոյ երգածն է,) Խաչի կարգին մէջ՝ Սեբաստիայն Սրբոց եւ այլ երկասիրութիւնք, որոնք թէեւ պատմագրութեանց մէջ կը յիշատակուին, բայց մեր ձեռքը հասած չեն։ Ունի Ստեփանոս քերթականական գրուածներ, որոց համար իսկ Քերթող կոչուած է. իսկ իւր թարգմանական աշխատութիւնքն են՝ Դիոնեսիոս Արիսպագացւոյն գրուածքը, Ս. Կիւրղի Գլափիւրաց գիրքը, Գրիգոր Նիւսացւոյն Յաղագս բնութեան մարդոյն գիրքը եւ Ղեւտական Գրոց Մեկնութիւնն։

Ստեփանոսի երկասիրութեանց մէջ ամենէն ընտիրն Նաւագ Օրհնութեանց շարականներն են, զորս ոմանք կը կարծեն թէ թարգմանչաց աշակերտներէն Ստեփաննոս անուն մէկը երկասիրած է. սակայն սոյն Ստեփանոս Սիւնեցւոյն համար Օրբէլեան կա-սէ թէ՝ "Բաժանեաց եւ զութ ձայնն եւ կարգեաց շարեաց շարականս՝ զյարութեան օրհնութիւնսն. երգեաց եւ կցորդս քաղցրահամս, յարմարեաց եւ զխառողդին յինանցն, եօթն եղանակօք յոյժ յարմարաւոր"։ Նաւագ Օրհնութեանց շարականները այնպիսի հոգեբուղխ նուագներ են, որոնք հիմնուած են Սուրբ Գրոց պատմական իմաստներուն վրայ, ուստի եւ փոխաբերական ու սըր-

տաւուշ դարձուածներ կը պարունակեն ։ Այն շարականաց իւրաքանչիւր տողին մէջ կարծես թէ Դաւթի Սաղմոսաց և միւս Մարգարէից ոգեպարար և հոգեբուղխ նուագներն ու սքանչելահրաշ իմաստները կը ցոլանան զգայուն սրտի մէջ ։ Անով բանիւ աւաղ Օրհնութիւնները այն տեսակ ակունք են մեր Շարակնոցի մէջ, որ երբէք չեն հընանար և անչքանար, այլ միշտ պիտի մնան փայլուն և սրտագրաւ ։

ՂԵՒՈՆԴ ՊԱՏՄԱԳԻՐ. — Թէպէտ սորա ծննդեան և մահուան տարին յայտնի չէ, ինչպէս և իւր կենսագրական պարագաները, բայց իւր գրած պատմութենէն կ'երեւի, որ եկեղեցական եղած է, և ապրած է մինչեւ ութերորդ դարուն վերջերը ։ Ղեւոնդ գրած է յատկապէս Արաբացւոց արշաւանքին 'ի Հայաստան, սկսելով նոյն ազգին կոչուած պատերազմէն, զոր հրատարակեցին Ապուպէքիր, Օմար և Օսման՝ խալամիկանութեան չը հետեւողներուն դէմ ։ Ղեւոնդ իւր պատմութեան մէջ կ'ամփոփէ այն անցքերը, որոնք 661 էն մինչեւ 788 թուականը պատահեցան Հայաստանի մէջ, Արաբացւոց արշաւանաց և ոստիկանաց ժամանակ, և պատմածներու մեծ մասին ինքն ականատես եղած է ։

Բ.

Ուսումնականք Թ դարու. — Երկաբնութիւնք Զաքարիա կաթողիկոսի. Նանայի Ասորւոյ. Շապըհւոյ Բագրատունւոյ, Մաշտոցի կաթողիկոսի, Յովհաննիսի կաթողիկոսի, Թովմայի Արծրունւոյ և պատմութիւնք իւրաքանչիւրոյն. — Յովհաննէս բըժիշկ. Դաւիթ վանահայր և Գուրգէն Արծրունի:

ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ գլխաւոր ուսումնավայրքն էին — Աղթամար, Խոտակերից վանք, Սեւան և Տաթեւ: Սոցա մէջ անուանի էին մանաւանդ վերջին երկուքն: Սեւանայ համար Ասողիկ կ'ասէ. «Աստ ժողովեցան եղբարց բազմութիւն կանոնադրութեամբ սրբոյն Բարսղի, միաբանք 'ի տանն Աստուծոյ եղեալք, ստանալով զբազմութիւն Գրոց Սրբոց»: Իսկ Տաթեւու կամ Ստաթէի վանուց համար կ'ասէ Օրբէլեան. «Ոսկամատոյց փիլիսոփայիւք երաժշտական երգոց (որ էր մեծատատանն), ճոխ էր և վարժարան դըպրոցացն վարդապետական կրթութեամբն, նաև արուեստաւորք նկարչացն և գրողաց անհամեմատք»: Վերջին խօսքերէն պիտի իմանանք ձեռագիր մատենից օրինակողներն, որոնք զանազան երանգներ և ծաղիկներ կը նկարէին ձեռագրաց վրայ, որոնք մինչեւ ցայսօր կ'երևին:

Այն դարու մատենագիրներն սոքա են.

Զաքարիա Կաթողիկոս. — Ինչպէս արդէն պատմած ենք, մի օրուան մէջ սարկաւագ, քահանայ, եպիսկոպոս և կաթողիկոս ձեռնադրեցաւ: Սա երկասիրած ունի քանի մի Ճառեր Քրիստոսի Ծննդեան, Մկրտութեան, Գալստեանն Երուսաղէմ, Տէրունական Ընթրեաց, Չարչարանաց, Թաղման, Խաչի և Եկեղեցւոյ վրայ, նմանապէս և Թուղթ մի առ Փոտ Պատրիարք Յունաց, պաշտպանելով Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնը:

Նանա Ասորի. — Ասորի սարկաւագ էր և Հայաստանի մէջ կը բնակէր: Տարոնոյ Բագարատ իշխանի խնդրանօք տեղեկութիւններ կը ժողովէ Յովհաննու Աւետարանի մեկնութեան վերաբերեալ, և արաբական լեզուով թարգմանելով Բագարատայ կ'ընծայէ. յետոյ երբ Բագարատ Հագարացւոց ձեռքը կը մատնուի, Նանայի գիրքը Սմբատ Բագրատունիին կ'անցնի, որ և հայերէն կը թարգմանուի:

Շապուհ Բագրատունի. — Աշոտ Անտիպատրկի որդին էր, որ գրած է պատմական երկասիրութիւն, որ մինչեւ ցայսօր

տանկութիւն երեւան եկած չէ։ Հայոց այս պատմական երկպառակութեան յիշատակութիւնը կը տեսնենք Յովհաննէս կաթողիկոսի գրած պատմութեան մէջ, ուր 'ի մէջի այլոց կ'ասէ․ «Նայց զմնացորդս բանիցս այսոցիկ՝ զօրութեանց եւ քաջութեանց եւ մեծարանաց եւ պատերազմաց եւ պատուաւ քաջի ոճանից, անհաւատալի գրեալ է 'ի գիրս պատմութեան Շապհոյ Բագրատունւոյ, բաւական ընդ կարգաւորանել տեղեկագրին տանն բարեպաշտութեան ․․ այսինքն Սմբատեանց Աշոտ Երկաթին վարուցը, որ թոռն էր Աշոտ Բագրատունի առաջին թագաւորին։ Յովհաննէս կաթողիկոսի խօսքերէն յայտնի է, որ Հայոց պատմագիրը պատուագրաւորութեամբ եւ արժանահաւատ է, որ եւ ինքն չուզէր նորա գրածները երկրորդել, այլ միայն բաւական կը համարի ընթերցողի ծանօթութիւնը դարձնել Հայոցի երկպառակութեան վրայ։

ՄԱՇՏՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ․ — Մեր կաթողիկոսական գործոց վրայ արդէն խօսած ենք, եւ կը մնայ մեզ խօսք երկպառակութեանց վրայ քանի մի խօսք ասել։

Մաշտոցի ուսումնասիրութեան, հեզութեան եւ բարի վարուց վրայ մեծ գովեստով կը խօսին ազգային պատմագիրք, այն է Յովհաննէս կաթողիկոս, Օրբէլեան

և Թովմայի Արծրունւոյ, և քանի մի ժամանակագրութիւններ ևս կը յիշէին նորա անուանքը, որոնք՝ ցարդ գտնուած չէին։ Նոյն ամսոյս միացած գրուածոց կարգէն են Թուղթ մի, որ բառ Օրբելեանի, Հայոց, Վրաց, Աղուանից և Յունաց մէջ յառաջացած երկպառակութեան պատճառաւ գրուած է [illegible] խնդրոց և Եղերգեցւոյ ինն դատապարտութեանց վրայ, և Պատմագրական [illegible] մի։ Իսկ յայտնի եղածներն են յանդիմանական Թուղթ առ Սահակ պատրիարքին, որ կ'առաջարկէր Մաշտոցին՝ յանձն առնուլ Գէորգի տեղ կաթողիկոսանալը. մինչ զի Սահակ կը ջանար Գէորգն կաթողիկոսութենէ ձգել, որ իւր Սմբատ եղբօրորդին Բագրատունեաց թագաւոր օծած էր։ Նոյն թուղթը, զոր կ'աւանդէ Յովհաննէս կաթողիկոս իւր պատմութեան մէջ, այն բան յայտարարութեան պաղեց Սահակի վերայ, որ ներողութեան խնդրեց Մաշտոցէն և Սմբատի հետ ևս հաշտուեցաւ։ Նոյնպէս ունի Մաշտոց մխիթարական Թուղթ առ Գառնեցիս, որոց 894 թուականին Հոկ. 18, սաստիկ աղէտներ կրեցին երկրաշարժութենէ։ Մեր պատմագրաց ամենց խօսքերէն կ'երեւի, որ Մաշտոց մեր ազգային եկեղեցական Օրինացն մէջ ինչ ինչ յաւելուածներ արած է, մինչ զի Թէև ազգային սահմանադրութեան եկեղեցական Օր-

առաջին կազմ Մաշտոցի սկզբնական կազմութիւնը Ս. Մեսրոպայ կ՚ընծայէ, բայց այն ևս յայտնի է, որ երբեմն փոփոխութիւններ կրած է յառաջընթացներով տարածմանց, աղօթից և այլն, ինչպէս և եղած է անշուշտ Մաշտոց կաթողիկոսի օրով, որ ունինք այս պատճառաւ բովանդակեալ Ծիսարանի կազմութիւնը կամեցան տալ ընծայել։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ. — Իւր պատմական երկասիրութեան պատճառաւ կը կոչուի Պատմաբան։ Սա, ինչպէս պատմած ենք, Մաշտոց կաթողիկոսի աշակերտն և ազգակիցն էր, որ հաւատարմութեամբ զինքն անարժան յաջորդ կը համարէ Մաշտոցի, նորա առաքինութիւնը գովելէն և մահուան վրայ ողբալէն զկնի։ Յովհաննէս կաթողիկոսի պատմական երկասիրութիւնը հարիւր ութսուն և եօթն գլուխ կը բովանդակէ, որոց առաջին երկուքին մէջ գլխաւորապէս իւր աշխատութեան նպատակին վրայ կը խօսի։ Պատմութիւնը կը սկսի աշխարհի ստեղծմանէն, բայց մինչև իւր կաթողիկոսութեան ժամանակները համառօտի կ՚անցնի, որովհետև իրմէն յառաջ շատերը արդէն պատմած էին, ինչպէս Խորենացին, Եղիշէն, Փարպեցին, Շապուհ Բագրատունին և այլն։ Իսկ իւր ականատես և ժամանակակիցից անց-

քերթուած վրայ խօսիմ ընդարձակ և որոշակիօրէն կերպով կը խօսի Յովհաննէս և մի առ մի կը պատկերացնէ Հայաստանի աղէտները, որոց մէջ ինքն ևս կը տառապէր։ Յովհաննէս կաթողիկոսի երկասիրութիւնը մի գըլխաւոր արժանաւորութիւն ունի, որ է պատմական հաւատարմութիւնն, և այս պատճառաւ յետագայ պատմիչներըն՝ Թովմա Արծրունի, Ասողիկ և Կիրակոս Գանձակեցի յարգանօք և գովեստիւ կը խօսին Յովհաննիսի վրայ, Գեղեցկաբան լեզուին և ճարտասան պարզութիւնը անուանելով, որ անշուշտ ժամանակակից անցից կենդանի նկարագրութեան համար է այս գովեստն։

ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ. — Սխալ այնպիսի կարծիք կայ ոմանց գրագիտաց մէջ, որ Թովմա Արծրունին Եղիշէի աշակերտն է, որովհետև իւր պատմական երկասիրութեան վերնագիրն այսպէս է. «Պատմագիր վասն Արծրունեաց ազգին, զոր արարեալ է Թովմա վարդապետի՝ աշակերտի Եղիշայի»։ Սակայն իւր պատմութեան պարունակութիւնէն պարզապէս երևեցաւ, որ Թովմա ոչ թէ Վարդանանց պատերազմի պատմագիր Եղիշէի, այլ ուրիշ համանուան անձի աշակերտ է։ Վասն զի Թովմաս իններորդ դարու մէջ ծաղկած է, Յովհաննէս կաթողիկոսին

ժամանակակցից և սակաւ ինչ կրտսերագոյն։ Յովհաննու երկասիրութեան բուն նպատակը եղած է Արծրունեաց ցեղի մանրամասն պատմութիւնը գրել, որուն համար յատկապէս առաջնորդութիւնն ընդունած էր Արծրունեաց Տեր և Վասպուրականի իշխան Գրիգորէն կամ Դերենիկէն և Նորա որդի Գագիկ Արծրունի Թագաւորէն, առ որս կ'ուղղէ և իւր պատմութեան Ընծայականն, ինչպէս Խորենացին կ'ուղղէ առ Սահակ Բագրատունի։

Յովմա իւր երկասիրութեան մէջ հետազօտած է զանազան պատմագիրներ, թէ ասորւոցն և թէ ազգայնոցն, որոց անունները կը յիշէ իւր պատմութեան մէջ, բայց ամենէն աւելի ինքնին հետամուտ եղած է Հայաստանի մէջ զանազան յիշատակարանները և աւանդութիւնները հետախուզել իւր գործոյն վաւերականութիւն և ստուգութիւն տալու համար. վասն զի այսպէս կ'ասէ. «Որ ինչ 'ի սկզբանց անտի շինութեանց աշխարհիս Հայոց, 'ի Հայկայ աղեղնաւորէ և 'ի Նորուն զարմից և ցկալթոս և վաւաշոտ Շամիրամայ արկելն Արարատանեայց, և 'ի Նմանէ յայս և յայսց եւս յաւէտ ձեռնակերպաց և շինուածք յիշատակաչերբոյն յերկիրս մերում եղեն, մեր առ առնեալս անհնարակ հասեալ և աչօք տեսեալ։

Զգաւեալ և 'ի հեռաւոր աշխարհս, մինչև ցԿիւլուրս և Շուշեթացիս և առ լեռնամէջն Կաւկասայ և յԱՀիդ մինչև 'ի մուտսն 'ի Պոնտոս և ընդ Տայաստանն և ընդ ամենայն հիւսիսականս և ընդ արեւելս, 'ի հեռաւոր գնալով տեսաք զգործ քաղաքաց և նախնեաց։ Այս ընթացքը բանած է Թովմա ժամանակաւ հնագոյն անցից նկատմամբք, որ օրինաւոր պատմագրի ձանք է. իսկ ժամանակաւ մերձաւորագոյն անցքերուն խնդրին ականատես եղած և այնպէս գրած է, որոյ համար և կ'ասէ. «Ոչ իբրև յայլոց համբաւոց տեղեկացեալ՝ ընծայեալ արձանագրուցանեմ քեզ սոսյօք բանից պաճուճեալ առասպելս, այլ ականատես և ականջալուր և իմով իսկ ձեռօք շօշափեալ. պատմեմ քեզ հաւաստապէս զեղելոցն զզարմանս»։

Ինչպէս տեսանք, Թովմայի երկասիրութեան բուն նպատակն է Արծրունեաց ցեղի պատմութիւնը աւանդել, բայց որովհետև սոյն ցեղը Հայաստանի մէջ յայտնի էր Հայկազունեաց նախապատուական հարստութենէն 'ի վեր, ուստի և Թովմայի պատմութիւնը մեր ազգային սկզբնական ժամանակներէն սկսած է և Արծրունեաց ցեղի պատմութեան հետ այլ և այլ դէպքեր ևս յեղյեղուած. Թովմայի պատմական երկասիրութիւնը բաժանուած է չորս դպրութեան.

որոց առաջինն կը սկսի մեր ազգի սկզբնաւորութենէն եւ կ'աւարտի Արշակունեաց թագաւորութեան հետ. երկրորդն կը սկսի Վարդանանց պատերազմէն և կը հասնի մինչեւ Բուղայ ոստիկանի գալուստն 'ի Հայաստան. երրորդն կը սկսի Բուղայի հալածանքներէն և կը հասնի մինչեւ Սմբատ խոստովանողի որդի Աշոտոյ ժամանակները. Իսկ չորրորդն կը սկսի Գրիգոր Դերենիկի, նորա որդւոց Աշոտոյ, Գագիկի և Գուրգենի գործքերէն և նոյնա կ'աւարտի. Վերջին երկու դպրութիւնները առաւել ընդարձակ են և մանրապատում. վասն զի Թովմայի մանկութեան ժամանակի և ականատես անցից պատմութիւնը կը պարունակեն. Հինգերորդ դպրութիւն մի եւս կայ, որ մինչեւ Ժ դարը կը հասնի, բայց այս Թովմայի գործը չըհամարուիր, այլ յետին ժամանակաց շարայարողի. Թովմայի պատմութեան մէջ քանի մի ազգային երկասիրութիւններ կը յիշուին, բայց մինչեւ ցայսօր գտնուած չեն. Այսքա են՝ Դ. Գիւտ Խորենացւոյ պատմութեան, Աննայորդ Պատմութիւն Հայոց՝ Ամբրէի և Թէոդորոսի, Համառօտ Պատմութիւն Վարդանայ՝ Աբրահամ խոստովանողի և այլն.

Թովմայի պատմութեան անցքերը մի առ մի համառօտագրելը մեր նպատակէն

արտաքոյ է , որովհետեւ իւր ժամանակակից եկեղեցական անցից վրայ արդէն խօսած ենք . միայն կը յաւելունք , որ այն արժանաւոր պատմութիւնը , որ յառաջ միայն 'ի Պօլիս (1852) տպուած է , բնագրին համեմատ և ըստ չէ լոյս ընծայուած (1) ։

(1) Տպագրութեան ժամանակ աստուածաբանաբար 'ի բաց հանեալ հատուածոց մէջէն արժան կը համարինք հետեւեալը առնուլ գրչագրէն , և 'ի լրութիւն 287 երեսին , զետեղել այս տեղ , սակաւ ինչ բացատրելով իմաստից մթութիւնը ։

« Կայ առ այլ աստուածական Թուղթ Գագկայ անուանել զեկեղեցին (Նորակերտ) փրկչական անուանակոչութեամբն մակաձայնել , ոչ ուղղակի առ հաւատոյ մատուցեալ . զի Նեստորականաց և Քաղկեդոնիին է այս իմացմունք , այլովքըն եւս երկաբնակօքն , որք Բանին տուն և տաղաւար պատ 'ի կաւսեն առնել մարմին զանդուղեալ աստեղին , և ոչ միութեամբ բնութեամբ Բանին մարմին լինելով . այլ տուն Քրիստոսի սուրբ առաքեալքն են և ամին այլոց սրբոց դասուց , որպէս ասաց Պօղոս . « Դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք » . և դարձեալ՝ տուն Աստուծոյ եմք մեք . և դարձեալ մարգարէին ասէ . « Գնացից 'ի նոսա և բնակեցայց 'ի նոսա » ։ Այլ Քրիստոս՝ իւր ոչ տուն և ոչ տաղաւար ասի . այլ մի Տէր Յիսուս Քրիստոս յԱստուծոյ և 'ի մարդկանէ կատարեալ ։ Ապա եթէ ոչ պաշտելի եղիցին , որ փրկիչն անուանեսցի և երկրպագելիք աստուածային երկրպագութեամբքն որ է յոյժ ծիծաղելի , և պարզապէս յայտնի առանց կասկածանաց ասի Աստուած՝ եկեղեցին և մարմին Բանին , և եւս յաւելլի ծիծաղելին ։ Եւ կերիցեն քարինք և փայտք և այլ կանչք երկրպագեղէնք . որպէս և զայն , որ 'ի նմայն պատարագի մարմին և արիւն Որդւոյն Աստուծոյ , մանաւանդ թէ ինքն իսկ ճշմարտապէս Որդին Աստուծոյ . և դարձեալ յոյժ ծիծաղելի է . և այս առ այժմ բաւականասցի մասնաւորութեանց [illegible]

Իններորդ դարուն մէջ կը յիշատակուին մի քանի մանր բանագէտներ եւս, ինչպէս են— ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԺԻՇԿ, Թարգմանիչ Դիոնեսիոսի պատմութեան.— ԴԱՒԻԹ ՎԱՆԱՀԱՅՐ, որ իբր թէ Շապուհ Բագրատունւոյ պատմութեան մէջ քանի մի ճառ յաւելցուցած է. — ՍՏԵՓԱՆՆՈՍ աշակերտ Մաշտոց կաթողիկոսի, որ Մաշտոց Գիրքը օրինակած է (893) և իւր վարդապետի վարքը գրած. — ԳՈՒՐԳԷՆ ԱՐԾՐՈՆԻ, Ընձեւացեաց Տէրն, որ Եղիշէի վկայաբանութիւնը թարգմանել տուած է տաճկերէնէ 'ի հայերէն (873), ըստ մակագրին "Յօգնականութիւն անձին իւրոյ և ամուսնոյ իւրոյ Հեղինէի աստուածասէրի և որդւոց իւրոց Տաճատայ և Սահակայ".

Այն հատուածի իմաստն այս է. Գաւթիկ կամեցած է Նորակերտ եկեղեցին փրկչի անուամբ յորջորջել. բայց ոչ թէ Նեստորականաց և Քաղկեդոնականաց նման Փրկչի մարմինը Բանէն բաժնելով և նոյն մարմինը եկեղեցի և տաճար համարելով Բանին, այլ Փրկչի անուանը միայն եկեղեցւոյ վրայ դնելով։ Վասն զի կ'ասէ, նոքա՝ որ մարմինը Բանէն բաժնելով եկեղեցի կամ տաճար կը համարին և միանգամայն նոյն մարմինը կը պատարագեն, կը նշանակէ թէ՝ նոյն եկեղեցւոյ քարերը, փայտերը և այլ երկաթեղէն կահքերը կ'ուտեն, որ շատ և շատ ծաղրելի է. իրաւ է կ'ասէ, որ առաքեալք և ամէն մարդիկ տաճար և եկեղեցի Աստուծոյ կը կոչուին, բայց ոչ թէ նոյն ինքն Փրկիչն և Աստուած. և ոչ մարմին Փրկչին. վասն զի մարմինն Բանէն բաժնելը՝ անմտաց գործ է.

Ուսումնականք Ժ դարու. — Երկասիրութիւնք Անանիայի Նարեկացւոյ, Խոսրովի Անձեւացւոյ, Գրիգորի Նարեկացւոյ և պարունակութիւնք իւրաքանչիւրոցն. — Քանի մի ուսումնականք. — Երկասիրութիւն Ասողկայ. — Արտաւազդ Մաղաքիանի և Տաճատ վարդապետ։

Տասներորդ դարու մէջ Հայաստանի նշանաւոր ուսումնավայրքն էին — Կամրջաձորոյ վանք՝ Արշարունեաց գաւառի մէջ. Հնձոց կամ Կարմիր վանք՝ Կարնոյ մօտ. Հոռոմոց վանք՝ Շիրակայ մէջ, որ ապաստանարան եղաւ Ռոմանոս կայսերէն հալածուած միաբանից. Նարեկայ վանք՝ Ռշտունեաց գաւառի մէջ. Ապարանից եպիսկոպոսանիստ տեղը՝ Մոկաց գաւառի մէջ. Ցախացքար մենաստան՝ զոր Ասողիկ "բարձրահռչակ և սուրբ առաքինաստանդ" կը կոչէ. Մարմաշէն կամ Մարմարաշէն վանք՝ Շիրակայ մէջ։ Իսկ սոյն դարու նշանաւոր մատենագիրն են սոքա։

ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ. — Ազգային պատմիչներ-ըը մեծապէս կը գովեն Անանիա, մեծ փիլիսոփայ, գիտնական, ըստ [illegible] և այլ մատենագիրներ տալով թէ և իւր գրուածներն մեր ձեռքը հասած չեն, որ կարենանք ըստ արժանւոյն գնահատել։ Անանիա Նարեկացւոյ անուանք յիշուած երկասիրութիւններն են — Հերքուած

մոլորութեան Թոնդրակեցւոց, զոր կը յիշատակեն Մագիստրոս և Ներսէս Շնորհալի. Մծղնէութեան աստուածային Բողլոց, հետեւողութեամբ Եփրեմի, Ոսկեբերանի և Կիւրղի. Ադեքսանդրեան կանոնադրութեան, և այլն.

Ինչպէս իւրաքանչիւր մատենագրի, նոյնպէս և Անանիայի տուած գովեսանները՝ իրենց կեցած դարերու մտաւորական զարգացման չափով պարտինք ընդունել, ապա թէ ոչ կամ տարիկ նուաղեցուցած և կամ տարիկ բարձրացուցած կը լինինք որ և իցէ հեղինակի արժանաւորութիւն : Աւստի, որչափ որ Անանիայի գրուածները մեր ձեռքն հասած չեն, այնու ամենայնիւ կարեւոր դուշակել, որ իւր դարու ուսումնականութեան չափով նշանաւոր անձն եղած է և Նարեկայ վանքի աստուածաբանական պաշտօնի մէջ իւր օրինակով նոյն վանքը ուսումնասիրութեան վայր դարձուցած է : Այս նկատմամբ ուրեմն, ինչպէս ամէն գեղեցիկ և շահաւէտ գործոց հիմնադիր, նոյնպէս և Անանիա Նարեկացի արժանի է մեծ երախտագիտութեան :

ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵՒԱՑԻ. — Սա իւր մանկական հասակէն հետամուտ կը լինի ուսման և գիտութեան և Անանիա Նարեկացւոյ եղբայր դառնալէ ետ ամուսնանալով կ'ունենայ երեք որդի — Յովհաննէս, Սահակ և Գրի-

գոր — և յետ ժամանակաց. Անձեւացեաց գաւառին եպիսկոպոս կ՚ընտրուի։ Խոսրով իւր բարեպաշտութեամբ և քրիստոնէական իմաստութեամբ նշանաւոր եղած է տասներորդ դարուն մէջ և իւր աստուածասէր հոգին պարզապէս կը փայլի իւր գրուածոյ երկասիրութեան մէջ, զոր շարադրած է իւր եպիսկոպոսութեան ժամանակ։

Խոսրովու երկասիրութիւնն է՝ Մեկնութիւն Ժամագրոց, որոյ վրայ ամփոփ և ստոյգ գաղափար ունենալու համար՝ հարկաւոր է նոյն իսկ Ժամագրքի պարունակութեանը կատարելապէս հասու լինել։ Ժամագիրքը, որ մեր քրիստոնէական բարեպաշտութեան և եկեղեցական ժամերգութեան հանապազօրեայ Աղօթամատոյցն է, կը պարունակէ իւր մէջ այնպիսի սքանչելի աղօթքներ, մաղթանքներ, քարոզներ և երգեր, որոնք բարեպաշտ զգացմանց և քրիստոնէական ջերմեռանդութեան վճիտ բղխումներ են և այնպիսի խնդրուածներ, որոնք ամեն ժամանակ և ամեն դիպուածի մէջ ամենահարկաւոր են քրիստոնէի համար, որ կը փափաքի իւր Արարչի և իւր երկնաւոր Հօր հետ խօսակցիլ։ Խոսրով իսկն զգալով Աղօթամատոյցի պարունակութեան մեկնութիւնը՝ իւրեն նուիրական պարտք համարած է զայն մեկնել իւր աղօթասէր հօտի համար, որպէս զի իւրաքանչիւր

որ հասկնայ և զգայ՝ թէ ինչ զգացմուն-
քով պատրաստուած է, ազդեւորէ, հրապարակային
ժամերգութեան ժամանակ, և ինչ է զօր Ռու-
ռուսաստանեան Եկեղեցին կամ հաւատացե-
լոց բազմութիւնը կը հայցէ երկնաւոր Հօ-
րէն, միահամուռ գոռմռմամբ և միաբար-
բառ շրթամբք։ Խոսրով իւր մեկնական
երկասիրութիւնը բարեխիղճ կերպով կա-
տարելու համար՝ ընթերցասիրած է իրմէն
առաջ եղած եկեղեցական Հարց խորհրդա-
ծութիւնքը, որոց շատերու անուններն ու
հատուածները կը յիշատակէ։ Խոսրովի եր-
կասիրութեան մէջ մեկնուած են միայն այն
մաղթանքներն ու քարոզները, որոնք իւր
ժամանակ Ժամագրքի պարունակութիւնը կը-
կազմէին, և հետեւապէս այժմեան Ժամա-
գրքի ամբողջ մեկնութիւնը չէ. վասն զի
մենք գիտենք, որ Խոսրովէն զկնի Ժամագրը-
քի պարունակութիւնը շատ ընդարձակուած
է, մանաւանդ Ներսէս Շնորհալւոյ ժա-
մանակ։

Խոսրովի երկասիրութիւնը, բաց 'ի մեկ-
նական մասերէն, կը պարունակէ նոյնպէս
ժողովրդեան և եկեղեցականաց ուղղած հա-
մառօտ յորդորականներ, որոնք զեղուն են բա-
րեպաշտական զգացմունքով, և որովհետեւ
գլխաւոր նպատակն եղած է հաւատացեալ-
ներն հաւաքել Ս. Գրոց ընթերցման և ա-

ղօթասիրութեան , ուստի անեղ անեզ խիստ գեղեցիկ ձեւերով բացատրած է Սուրբ Գրոց ուսման և աղօթից կարեւորութիւնը , որուն ապացոյց՝ արժան կը համարիմք հետեւեալ տողերը առաջ բերել . « Աստուածածաքրութիւն 'ի Գրոց ծնանի 'ի մարդս . . . Եւ արդ՝ պատուեսցուք զԳիրս Սուրբս վերծանութեամբ , որ են պատճառք մեզ ամենայն բարեկաւութեան : Փափագեսցուք սիրով 'ի վերծանութիւն Գրոց Սրբոց և յընթեռնուլն կրկին հոգ յանձին բերցուք . — Սի , զի իմասցուք զընթերցեալն և միւս եւս՝ զի անմռաց 'ի միտ կալցուք , մանաւանդ թէ՝ գործով կատարեսցուք և լիցուք առնողք օրինացն . զի մի զրկեսցուք 'ի մեծագոյն բարեացն թեթեւամտութեամբ » : Իսկ աղօթից վրայ երկարօրէն խօսելէն զկնի այսպէս կը պարզաբանէ աղօթելու օգուտը . « Իսկ զպտուղ աղօթից յամենայն ժամու պահանջիմք յԱստուծոյ և յամենայն հասակի և 'ի դիպուածի : Տղայոց բարւոք ընդունելի է աղօթքն և պահպանակ յերթ և 'ի մուտս : Երիտասարդաց գործակից . ծերոց՝ յոյս հաստատութեան . քահանայից՝ պսակ պայծառանաց . ժողովրդոց՝ պարիսպ ամրութեան : զինուորաց՝ վահան փրկութեան . Թագաւորաց՝ ցնծութիւն . իշխանաց՝ ուղղութիւն . դատաւորաց՝ ըզգաստութիւն . Ճգնաւորաց՝

մարտակից · կուսանաց՝ կատարելութիւն · սգաւորաց՝ սփոփանք · բերկրեցելոց՝ հրճուանք · Նեղելոց՝ անդորրութիւն · խաղաղացելոց՝ զգուշութիւն · արանց՝ գործակից · կանանց՝ անակից · ճանապարհորդաց՝ ուղեկից · Նաւորդաց՝ առաջնորդութիւն · առողջոց՝ խնդութիւն · հիւանդաց՝ մխիթարութիւն · մեղուցելոց՝ քաւութիւն · արդարոց՝ խնդութիւն · Ննջեցելոց՝ Թօշակ կենաց և յոյս բարեաց . . . ։

Սրովհեանե Փօմադրքի վրայ ուրիշ պատեհ առթիւ դարձեալ պիտի խօսինք, ուստի այսքանը բաւական համարելով այս միայն կը յաւելունք Խոսրովի երկասիրութեան մասին, որ եթէ Նարեկ մեկնած մաղթանքներն ու քարոզները նոյնութեամբ թողլով և աշխատասիրած մեկնութիւնը ընտրանօք համառօտելով ու աշխարհաբար թարգմանելով միասին տպագրուի, խիստ արդիւնաւոր կը լինի բարեպաշտ աղօթասիրաց համար, և այնչափ քրիստոնէական ոգի կարող է ներշնչել, որ երբեք նոյն արդիւնաւորութիւնը չյառաջացուիր քանի մի նոր ժամանակիս Պիէտիստական գիտնականաց չոր ու ցամաք տեսաբանկներէն, որոնք երբեմն դատապարտեր գործ կը դրուին դպրոցաց մէջ։ Ս. Տանն զի Խոսրովի գրչաւոր նշանակը եղած է իւր երկասիրութեամբ քրիստոնէական ուսմունքներ

ուսուցանել, որուն համար և ինքն յայտնապէս ասած է. «Որովհետև շատերու մէջ ամենամեծ ազնուութիւն տեսայ, սակայն արժան համարեցի եպիսկոպոսութեանս պարտուց համեմատ այս գրուածքը յօրինել, որ կարդան և ուսանին, վասն զի անկարելի է միայն խօսքով (քարոզով) կարեւոր դարման մատուցանել»:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ. — Անձեւացեաց Խոսրով եպիսկոպոսի որդին, ծնաւ 951 Թուականին, և իւր մանկութեան հասակէն Ռըշտունեաց գաւառի Նարեկայ վանքի առաջնորդ Անանիա վարդապետի խնամոցն յանձնուեցաւ: Գրիգորի վարուց սրբութիւնը, մաքուր սիրտը և անզբաղ միտքը առաջնորդեցին զինքը իմաստութեան մէջ զարգանալու և աստուածախօս հանճարներէն մին դառնալու: Բայց և վեց տարեկան հասակին մէջ արդէն շատ իշխաններ Գրիգորին կը դիմէին իրենց ինչ ինչ տարակուսանաց լուծումն առնելու: Սակայն ինչպէս արեգական ջերմութիւնը երբեմն գարշահոտ գոլորշիներ կը յարուցանէ գետնէն, նոյնպէս և սրբասուն մարդկանց կեանքը և բարեպաշտական ջերմութիւնը կրքեր կը յուզէ աշխարհիս մէջ: Այնպէս նախանձեցան և Գրիգորին, որոյ դէմ չարամիտներ ամբաս-

յուղեցան անհլութեամբ և գնալով Պոլ-
սոյ կաթողիկոսարանը՝ ամբաստանեցին զԳրը-
իգոր իբրեւ Թերամիտ 'ի հաւատոց, բայց
չը կրցացին իրենց նենգ նպատակին հաս-
նիլ և յիմանալ. որովհետեւ Գրիգոր ոչ միայն
աստուածաբանական քննութեան մէջ, այլ իւր ա-
ռաքինական վարուց համբաւն եւս աւելի
հռչակեցաւ. վասն զի առաքինութիւնն ու
վարուց սրբութիւնը մահ չունի, և մինչ-
դեռ Թշնամիք կը կարծեն Թէ արատաւորե-
լով կը մահացնեն, ընդհակառակն աւելի կը
կենդանացնեն. Այս փորձուած ճշմարտու-
Թիւն է ամեն ժամանակի.

Գրիգոր իւր անձն մենաւորական կենաց
և գրաւորական վաստակոց նուիրելով ըն-
Թերցասիրեց և շարադրեց մինչեւ իւր 60
տարեկան հասակը և վախճանելով Թաղուե-
ցաւ Նարեկայ վանքի մէջ, ուր մինչեւ ցայ-
սօր աւանդութեամբ կը ցուցնեն իւր գե-
րեզմանը. Գրիգոր Նարեկացին գրած է գըր-
քաւորապէս այն տեսակ նիւթերու վրայ,
որոնք մարդոյ վախճանական նպատակը կը
կազմեն. Գրիգորի երկասիրութեան բուն
հանգամանութիւնն է այս — 'ի ներքուստ մարդ-
կային սրտի խորշը և 'ի վերուստ աստուածային անհուն
ծարաւախառնութիւնը. Գրիգոր այս երանելով վա-
ռուած աստուածային բանաստեղծ մի կը
ներկայանայ մեզ իւր գրուածոց մէջ, բա-

նիւ յորդառատ և զգալմամբ զեղուն ։ Կը ներբողէ ինչ որ աստուածային է , կը պարսաւէ ինչ որ մարդկային տկարութենէն է ։ Մերթ կը յափշտակուի և կ'ամբարձրանայ թեւով աստուածային սիրոյն և մերթ կը խոնարհի և կը հեծէ մարդկային վայրաքարշ կրից վրայ ։ Գրիգոր այն հոգիներէն է ... որ աստուածային սիրով կը ճենճերի , արտասուքով կը ժայթքի և ժայթքելով կ'արտասուէ ։ Համառօտիւ ասենք , Գրիգոր այնպէս կը պատկերացնէ զԱստուած և զմարդ , որ ամեն երկիւղած սրտերու մէջ խորին ապաշխարութեան կը թողու իւր կենդանի երանգներով ։

Գրիգոր Նարեկացւոյ երկասիրութիւններն ասոնք են գրութեան ժամանակի կարգաւ ։ — Պատմութիւն խաչին Ապարանից , որոյ պարունակութիւնը համառօտիւ այս է ։ Մոկաց Դաւիթ արքայատուն եպիսկոպոսին եղբօրորդին , (որ զինուորելու գնացած էր 'ի Պոլիս Վասիլ և Կոստանդին կայսերաց ժամանակ) 'ի պատուոյ գերեզմանի Դաւթին պարգեւ կ'ընդունի յիշեալ կայսերներէն Սեւնոյ Փայտի մասն և այլ նուիրական ընծաներ և կը դառնայ Մոկաց գաւառն Դաւթի քեռորդի Ստեփանոս եպիսկոպոսութեան ժամանակ ։ Այս պարգեւները կ'ամփոփուին , նախ Դաւթի հանգստարանի մէջ , յետոյ Յովհաննէս Կարապետի տա-

ձարին մէջ, և ապա Աստուածամօր եկեղեցւոյն մէջ։ Այս վերջին փոխադրութեան հանդիսին ներկայ կը գտնուէին Արծրունի թագաւորազն հարազատներն՝ Սենեքերիմ, Գուրգէն և Աշոտ, ինչպէս որ Խաչիկ պատմութեան մէջ փոխադրութեան հանդէսի նկարագիրն ևս պատմուած է։ Այս առթիւ գրած է Գրիգոր նոյնպէս խօսք ներբողն և նորա հետ միասին Աստուածածնի ներբողն — «Գուռ մարք խնկեց, և այլն»։

Այս երեքն ևս գրուած են Ստեփանոս եպիսկոպոսի խնդրանօք, ինչպէս կը ցուցնէ իւր մի Ընծայական առ նոյն եպիսկոպոսն։ Սակայն Նարեկացւոյ այն գրուածոց մէջ գտնուած քանի մի անժամանակակից անցքերն և ինչ ինչ իմաստներն տեղի կու տան կարծել, որ այլոց ձեռքով յետագայ ժամանակաց յաւելուած են։

Ճառ ի Գովեստ Առաքելոց, որոյ մէջ առաքելական կոչման մեծութիւնը բացատրուած է և Աղօթամատեան Գրքէն առաջ յօրինուած է, ինչպէս և կը յիշուի ՁԹ. 2. Գլխոյն մէջ. «Որոց (առաքելոց) զգովեստն արժանաւորութեան ըստ իմում կարի յայտնել բանի պաշտեցի»։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՑ ԵՐԳՈՅ. — Այս երկասիրութիւնը գրած է Նարեկացին իւր երիտասարդական հասակին մէջ, Ընծայելով Թա-

դասոր Գուրգէն Արծրունիի խնդրանօք, որուն ուղղած է և իւր համեստ Ընծայականն։ Աշըգ Երգոյ Գիրքը, որ իւր փառաւոր իմաստներով և գեղեցիկ նկարագիրներով, Փեսայի և Հարսի անունով, Քրիստոսի խանդաղակաթ սէրը կը պատկերացնէ առ Եկեղեցին, երբեմն տկարամիտ մարդկանց գայթակղութեան առիթ եղած է։ Այս պատճառաւ Եկեղեցւոյ նախնիք Հարք հաւատացելոց ուղղամտութիւնը անսայթաք պահպանելու համար՝ մեկնած են նոյն Գիրքը, բարեպաշտութեամբ զեղուն զգացմունքներով։ Նախնի մեկնիչներուն մէջ յայտնի է մանաւանդ Գրիգոր Նիւսացին, որ Ոլոմպիադա ազնուական տիկնոջ խնդրանօք բացատրեց Աշըգ Երգոյն, այն գայթակղութիւնները վերցնելու դիտմամբ, որով ոմանք Բիւզանդինի մէջ տկարամտութեամբ նոյն Գիրքը աշխարհական մտօք շարադրուած կը համարէին։ Մեր Նարեկացին իւր մեկնութեան մէջ հետեւած է Գրիգոր Նիւսացւոյն, բայց այնպիսի համառօտախօս և պարզ եղանակ բռնած է, որ Լուսաւորչական բանաստեղծներէն ոմանք Յոհան Ոսկի-Բերան կ'անուանեն Նարեկացւոյ երկասիրութիւնը։ Այս պարզութեան դիտաւորի շարժառիթն այն եղած է, որպէս զի ոչ միայն հմուտները, այլ և հասարակ ժողովրդին ընթեռնուլ և կարենան կարդալ

դիւրութեամբ հասկանալ և երբէք չմտու-
ցանել իրենց սրտերուն մէջ գայթակղական զգացմունքներ։ Երգ Երգոյի վսեմ հոգին ըմբռնելու համար՝ բաւական է միայն որ նիւթական նկարագիրներին՝ հոգեւորի փոխենք և Քրիստոսի անհուն սէրը պատկերացնենք մեզ, որով սիրած է զԵկեղեցին, իւր անձը զոհելով։ Աշխարհի մէջ սէր մի չէ կարող հաւասարիլ Քրիստոսի սիրոյն, հետեւապէս և ոչ Գիրք մի կարող է այնպէս յարմարիլ Քրիստոսին և Եկեղեցւոյն, ինչպէս Երգ Երգոյն, երկնաւոր Փեսայի և Հարսի սքանչելի սիրոյն նկարագրութեամբ։ Որուն կարող է վայելչապէս յարմարիլ, և մի՛ կարէ լինիլ Երգ Երգոյի նկարագրած այն Սեւ և Գեղեցիկ հարսն, եթէ ոչ մարդկութիւնը, որ Սեւ էր պատուիրանազանցութեամբ և սակայն այնչափ Գեղեցիկ և սիրելի, որ Քրիստոս նորա սիրոյ համար մահ յանձն առաւ և սեւութիւնը իբրեւ ձիւն սպիտակացնելով՝ հարսնացոյց իրեն հետ և յաւիտենական միութեան դաշն հաստատեց։

Աղօթք կամ Նուէրք, որ կը կոչուի նմանապէս Ողբերգութիւնք, և կազմուած է 95 գլուխներէ, որոց վերտառութիւնն է « Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ »։ Նարեկացւոյ այս երկասիրութիւնն՝ այնպիսի հանրական ընդունելութիւն գտած է Հայաստանեայց Եկեղե-

ցած զաւակաց մէջ և այնպիսի յարգ՝ համ-
մայն քաղաքիաց առջեւ, որ երկարօրէն զօրացանել այս տեղ՝ աւելորդ կը համարինք։ Այսչափ միայն կ'ասենք, որ Նարեկացւոյ Աղթամական կամ Աղուերական երկասիրութեան մէջ անկներեւ կը նշմարուի Սուրբ Գրոց լի ու լի հմտութիւն, երկիւղած սիրտ, վառ եռանդ, կորովի ճանաչողութիւն աստուածային կատարելութեանց և մարդկային վախճանին, և այս ամենուն հետ՝ յորդութիւն վսեմ իմաստից և դարձուածոց։ Նարեկի մէջ կը նշմարուին կրկնութիւնք իմաստից։ Նա այս շատ բնական է, որովհետեւ Նարեկն պատմական և իմաստասիրական գիրք չէ, այլ աղօթական, և ջերմեռանդութեամբ վառուած սրտի համար յորդութիւնը բնական յատկութիւն է, կամ այսպէս ասենք. սրտի հառանքը՝ չափոյ և սահմանի տակ չ'ամփոփուիր. միտքն է միայն որ չափով և սահմանով կը արտայայտէ։ Աստի, եթէ մտային գրուածոց մէջ տրամաբանութիւնն է գովելի. սրտային գրուածոց մէջ՝ գովելին է ազնիւ զգացմանց յորդութիւնը, ճոխութիւնը և ջերմութիւնը։

Նարեկի պատուականութիւնը աղօթքներ ըլլալով՝ անշուշտ կարող է հասկանալի լինիլ միայն ջերմ սիրտ ունեցողներուն։ Իսկ

անտիրաներուն ոչ միայն անհասկանալի. այլ և գուցէ ձանձրալի թուի ։ Արդ հետևեալ որոշ-տայքն երկարութիւն հասկանալու հա-մար՝ սիրտ հարկաւոր է ։ Այս այնչափ ըզ-գալի է, որ կարելի է ասել թէ մի և նոյն ընթերցողի համար մի և նոյն Նարեկն եր-բեմն հասկանալի է և երբեմն անհասկա-նալի, նայելով ընթերցողի սրտի փոփոխա-կան ջերմութեանն կամ սառնութեանը ։ Դուցէ այս է պատճառն, որ ոմանց համար Նարեկն մթին և խրթին գիրք երևցած է, որ և Կ. Պոլսոյ Պատրիարքըն Յակոբ Նալեան և Վենետիկի Մխիթարեան Ուխտէն Հ. Գաբրիէլ Աւետիքեան երկարօրէն մեկնած են զայն ։

Նարեկի յիշատակարանին մէջ կ՚աւան-դուի, որ Աղօթամատոյց գրքի յօրինմանը օժանդակած է Նարեկացւոյ Յովհաննէս եղբայրն․ սակայն այս օգնութիւնը աւե-լի եղբայրական խորհրդակցութիւն պիտի համարինք, քան թէ գործակցութեամբ եր-կասիրութիւն. . .

Գիրքը որ Նարեկացին շարադրած է նմա-նապէս նաև երկասիրութիւններ, ինչպէս են Գան-ձեր, Մեղեդիներ և Տաղեր, որոց մէջ կը փայլի բանաստեղծական ոգի, հանճար և աշխոյժ ։ Գանձերուն թուովն երեք են․ այն է՝ ի Գը-րոշ Հոգւոյն Սիոնի, ի Խաչն և Աստուածածին․ բաւկ

տաղերն ու մեղեդիները քանի՜ն աւելի են ։ Կան նմանապէս և մի քանի այլ երկասիրութիւններ, այն է Թովմա, Ա՛նանիա, Կիրակոս և այլն, որոնք Նարեկացւոյն կ՚ընծայուին ։

Այս դարու մէջ կը յիշատակուին քանի մի ուսումնասէր անձինք, որք են․ — ԽԱՉԻԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ, որ գրադարան հաստատեց Շիրակ գաւառի մէջ․ ԴԱՒԻԹ ՎԱՆԱՀԱՅՐ, ՊԵՏՐՈՍ՝ ՄԵԿՆԻՉ ԳՐՈՑ, ՄՈՎՍԷՍ ՏԱՐՕՆԵՑԻ, ՍԱՐԳԻՍ, ՍՏԵՓԱՆՈՍ ՄՈԿԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ, որուն կ՚ընծայուի Աբրահամու երգոց շարականը, ԴԱՒԻԹ ՄԱՀԿՈՏՆ, ԴԱՒԻԹ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈԿԱՑ և այլն ։ Բայց սոցա երկասիրութիւնքն մեզ հասած չեն, և որոշակի չեն յիշատակուիր պատմութեանց մէջ ։

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԱՍՈՂՆԻԿ կամ ԱՍՈՂԻԿ․ — Մեր պատմագրաց մէջ նշանաւոր տեղ ունի Ստեփանոս Տարօնեցի, որ և երաժշտական երգոց հմտութեան պատճառաւ Ասողիկ կը կոչուի ։ Ստեփաննոս երկասիրած է իւր պատմութիւնը Գագիկ Ա. Թագաւորի և Սարգիս Ա կաթողիկոսի հրամանաւ, որ առեղծագործութենէն սկսելով հասուցած է մինչև Քրիստոսի 1004 թուականը ։ Նախնեաց պատմութեան նկատմամբ հետևած է Եւսեբիոսին և Խորենացւոյն ։ Երեք Գիրք բաժնուած է այս պատմական երկասիրութիւնը, որոց

երրորդը միայն իւր ժամանակակից անցքերը կը պարունակէ ։ Իսկ առաջին երկուքի մէջ կը խօսուի համառօտիւ Իսրայէլացւոց ծագման, Եգիպտոսի Պտղոմեանց Թագաւորաց, Ասորոց, Մարաց և Պարսից Իշխանականաց. մեր Արշակունի և Բագրատունի Թագաւորաց, Սասանեան ցեղի արքայից և Հագարացւոց Ամիրապետաց վրայ ։ Իւր ժամանակակից անցքերը պատմած ժամանակ բաւական լոյս կը ծագէ Ասողիկ ազգային պատմական կենաց վրայ և այս պատճառաւ իրաւամբ մեծ յարգանաց արժանացած է հետեւեալ դարուց պատմիչներէն, մինչեւ անգամ Մագիստրոսէն կոչուած է Սրձանէկ ծայրագոյն ծեր ։ Ասողիկ ականատես լինելով յունական կրօնական հալածանաց, զոր բորբոքած էին Հայոց դէմ, սուրբ նախանձախնդրութեամբ վառուած կը խօսի նոյն անցքերուն վրայ ։

Ասողկին կ՚ընծայուի նմանապէս՝ Մեկնութիւն ինչ Գրոց Երեմիայ մարգարէին, սակայն այս երկասիրութիւնը ցարդ երեւցած չէ ։

Նոյն դարու մէջ կը յիշատակուին քանի մի գրուածքներ եւս, ինչպէս են Ճառ ընդդէմ Արիոսեանց, Եւտիքեանց, Նեստորականաց, զոր գրած է մի անանուն վարդապետ, Կարուց Թագաւոր Մուշեղ Բագրատունւոյ խնդրանօք, այսպէս ուղղափառութեամբ ։ Մէկ քաղ բանաստեղծութեանց, որոց իմ.

Մուշեղ Բագրատունի, պերճաբանող և հանճարեղ գունակայեալ առ ծայրագոյն խորոց խոհեմագոյն ըստ գործնականին և տեսականին գրող ստորոգութեանց»։

Բացայայտութեան պատուիրանաց, զոր գրած է ՄԱՂԱԶՈՒՆԵԱՑ ՏԷՐՆ ԱՐՏԱՒԱԶԴ հրամանաւ Ստոմայ Սնձեւացւոյ։

Հարց պատասխանի, զոր երկասիրած է ՏԱՃԱՏ անուն վարդապետ մի։ Այս երկասիրութիւններն անուամբ և եթ կը յիշատակուին, բայց տակաւին լոյս տեսած չեն։

Դ.

Ուսումնականք ԺԱ դարու. — Երկասիրութիւնք Յովհաննու Կոզեռն վարդապետի. Գրիգորի Մագիստրոսի, Պետրոսի Գետադարձի, Անանիայի Սանահնեցւոյ, Սարգսի Սեւանեցւոյ, Արիստակիսի Լաստիվերտցւոյ. Գրիգորի Վկայասիրի և պարունակութիւնք իւրաքանչիւրոյն. — Գէորգ. Թէոդորոս և Սիմէոն վարդապետք. — Պօղոս Տարօնեցի.

ՍՈՅՆ ԴԱՐՈՒ նշանաւոր ուսումնականքն էին՝ Զօրագետաց մէջ Հաղբատ և Սանահին վանքերին, որք շինուեցան Աշոտ Ողորմածի բարեպաշտ անուամբն Խոսրովանոյշ թագուհւոյ աստուածասիրութեամբ, և յետոյ նորոգեցան Աղուանից Բագրատունի Կիւրիկէ թագաւո-

մի ձեռամբ և Հայաստանի եպիսկոպոսանիստ դարձաւ, որոյ մատենադարանը յիշատակարանաց մէջ անթուակալ գանձարան կոչուած է։ Անուանի էին նմանապէս Խլաթի վանքն, Արճէշին [illegible] Տրապիզոնի մօտ և Արգինայ վանքն Արարատայ Շիրակ գաւառի մէջ։ Իսկ մետասաներորդ դարու անուանի մատենագիրներն սոքա են.—

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԿՈԶԵՌՆ ՏԱՐՕՆԱՑԻ, որ ծաղկեցաւ Խաչիկ Բ կաթողիկոսի օրով, և այնչափ մեծ էր իւր համբաւն, որ, ըստ պատմելոյ Ուռհայեցւոյն, Պետրոս կաթողիկոսն Յովհաննէս թագաւորին ղրկեցին նորա մօտ զՍագիստրոս և այլ նշանաւոր անձինք, որպէս զի նոյն ժամանակի պատահած տարեգրական խառնաշփոթութեանց պատճառներն իմանան։ Թէպէտ և իրենց տուած պատասխանն տոմարագիտական չէր, այլ ըսել խորհրդական գուշակութիւն։ Վասն զի նոյն ժամանակի տոմարագիտութիւնը առաւելութիւն ծաղկած չէր և բնական երեւոյթներուն այլ տեսակ մեկնութիւններ կը տային։

Ժամանակագրութիւն կ'ասուանի, որ Կոզեռն վարդապետն շարադրած է Հայոց [illegible] մի, բայց ցարդ երեւան եկած չէ։ Շարադրած է նմանապէս երկարաբանութիւն մը [illegible] և [illegible] [illegible] [illegible]։ Ըստ

կերպացի եպիսկոպոսի խնդրանօք, եւ այն գրուածքէն մի հատուած միայն հասած է մեզ ։

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ, Վասակայ որդին, Պահլաւունի ցեղէն ։ Սա իւր հօր մահէն յետոյ միացաւ նախարարաց հետ, որոնք թագաւորեցուցին Գագիկ Բ. Բագրատունին ։ Նայց յետոյ Վեստ Սարգսի պատճառաւ ինքն եւս կասկածաւոր համբաւուելով թագաւորի առջեւ՝ Թողու Նարապատեան աշխարհն և առանձնացաւ 'ի Տարօն, ուր սկսաւ վանքեր շինել, 'ի թիւս որոց և Ս. Կարապետի ժամատունը ։

Յետոյ այն շինութիւնքն իւր Հրահատ զօրծակալին յանձնելով ինքն գնաց Բիւզանդիոն, ուր շատ մեծարանք գտաւ եւ Մագիստրոս ու Դուքս տիտղոսներն առաւ, որով և աւելի կասկածաւոր եղաւ Գագիկ թագաւորի առջեւ, Յունաց հետ ունեցած այն մտերմութեան պատճառաւ ։ Գագիկ թուղթ գրեց Մագիստրոսին, իբրեւ հայրենի իրաւանց մատնիչի վրայ, և պաշտպանողական պատասխան առաւ, բայց իւր կարծիքն չը փոխեց ։

Երբ Յոյնք Անի քաղաքն յափշտակեցին՝ Գրիգոր Մագիստրոս Կ. Պօլիս գնաց, ուր էր և Գագիկ, ուսկէ զի Բագրատունին

Թագաւորութիւնը կործանման վտանգէն ազատեն, բայց անկարող գտնուելով՝ իւր հայրենի ամրոցներն և ս — Անին, Կարսն և Կայծոն — Յունաց ձեռքը յանձնեց և Միջագետաց մէջ՝ ի փոխարէն քանի մի կալուածներ առնելով, այն տեղ քաշուեցաւ. իսկ Տարօնոյ մէջ ունեցած իշխանութիւնը յանձնեց Գրատնիկ Մամիկոնեանին.

Այս ժամանակէն յետոյ Մագիստրոս բակաւ պարապիլ աւելի մատենագրական երկասիրութեամբ և 1058ին կնքեց իւր կեանքը։

Մագիստրոս ունեցաւ նաև քանի մի նըշանաւոր աշակերտներ, ինչպէս են Սարգիս և Եղիաէ, որ եպիսկոպոսութեան աստիճանի հասան, և իւր որդին Գրիգոր Պահլաւունի կամ Վկայասէր, որ կաթողիկոսութեան աթոռն բարձրացաւ, ինչպէս արդէն խօսած ենք նախորդ պատմական Շրջանին մէջ։ Մեր մատենագիրներէն ոմանք գովութեամբ կը խօսին Մագիստրոսի հմտութեան վրայ, որոց գովեստներն մի առ մի յառաջ բերել այս տեղ շատ երկար կը լինի։ Սակայն կը մնայ մեզ իւր երկասիրութեանց վրայ խօսիլ։

Գրիգոր Մագիստրոսի երկասիրութիւններն սոքա են.

Ա. Թղթեր, որոց թիւն ութսունի կը հասնի և զորս կարենք երեք բաժանման վե-

րանձել, այն է վարդապետական, իմաստասիրական և բնական։ Այս թղթերուն մէջ նշանաւոր են. — Պատասխանի Ասորւոց կաթուղիկոսի թղթոյն, զոր Տիգրանակերտէն գրած էր առ Մագիստրոս իբրեւ գանգատ Թոնդրակեցիքն հալածելու համար, և խիստ զօրաւոր պատասխան ընդունեց Մագիստրոսէն։ — Թուղթն առ Աբրեհիմ Ամիրայ Հագարացի, որուն կինը հայ ըլլալով, Մխակեան ցեղէն՝ և ՚ի մանկութենէ քրիստոնեայ, գրաւոր կերպով խնդրած էր Մագիստրոսէն իւր մի քանի կրօնական տարակուսանքներուն փարատել, և Մագիստրոսն նոյն առաջարկութիւնք սիրով ընդունելով՝ գրած էր իւր թուղթը։ — Թուղթ դարձեալ առ նոյն Ամիրայ քրիստոնէական կրօնի մասին։ Մագիստրոս գրած է նմանապէս քանի մի թուղթեր, մեծ մասամբ անհասկանալի, առ Եփրեմ եպիսկոպոս Անիոյ՝ իրեն զրկած նուանց համար, առ Մամիկոնեան՝ կարմրախայտ ձկանց ընծայից համար, առ որդին իւր Վեստ Վահրամ և առ ծուլագոյն աշակերտոն։ — Թուղթ մի առ Պետրոս Գետադարձ կաթողիկոս, և երկու թուղթ առ առաջնորդն Սեւանայ Սարգիս և առ Յովհաննէս Սիւնեաց արքեպիսկոպոս, և այլն։ Առ Պետրոս և առ Սարգիս գրած թղթերով Մագիստրոս կը նկարագրէ իւր փորձերը,

զոր Պօղիկ Թագաւորէն կը կրէր . իսկ առ Յովհաննէս գրածով՝ գոհութիւն կը մատուցանէ այն մխիթարական Թղթոյն համար, զոր Սիւնեաց արքեպիսկոպոսն գրած էր առ Մագիստրոս, իւր Վասակ հօր մահուան համար, հոգեւոր մխիթարանք մատուցանելով:

Բ. Մագիստրոս, Թղթերէն զատ, ունի Ներբողական Գրուածներ, այն է Ներբող ի սուրբ Խաչն տարածքներով, բարեպաշտական զգացմունքներով զեղուն. Աղօթատետր ինչ, զոր ընծայած է Պետրոս Գետադարձ Հայրապետին, մի խաչանշան գաւազանի հետ, յաւելով երկար տեղեկութիւն ճարտասանական քերթութեան վրայ. — Հազարտողեան տաղաչափութիւն. որով չափու առած է Հին և Նոր Կտակարանաց պատմութիւնը, Մանուչէ Հաւարանցւոյ խնդրանօք, որուն հետ ծանօթացած էր Կիւզանդիոնի մէջ: Մանուչէ տեղեակ էր զանազան լեզուաց, նաև Հայերէնի և բաւական տեղեկութիւն ունենալով քրիստոնէական կրօնի վրայ՝ շատ անգամ կը կարծէր Աստուածաշունչն, ուստի խոստացաւ Մագիստրոսին՝ քրիստոնէական հաւատքն ընդունիլ, եթէ կարող լինի նա իւր հարցասիրութիւնը գոհացնել: Այս առթիւ գրեց Մագիստրոս Հազարտողեան Մ-[illegible] ; որուն վրայ [illegible] Մանուչէ՝ քրիստոնէական կրօնքն ընդունեց: Այս

քերթուածի ակզբնաւորութիւնն է. «Մեծ են գործք Աստուծոյ»:

Վերոգրեալ ինքնագիր երկասիրութիւններէն զատ Մագիստրոս պարապած է քանի մի յունական և ասորական գրոց թարգմանութեամբ, բայց այս թարգմանութիւններէն շատ սակաւ հասած են մեզ, և իւր երկասիրութիւններէն քանի մի թղթեր և ոտանաւորներ միայն հրատարակուած են, իսկ միւսները մնացած են առանց տպագրութեան: Մագիստրոսի գրաւոր վաստակոց լեզուաքննական նկատողութիւնը մեր նպատակէն արտաքոյ համարելով՝ այսչափ միայն կ'ասենք որ ընդհանրապէս խրթին են և մթին և նաև քանի մի հատն բոլորովին անհասկանալի, միայն վարդապետական գրուածքներն են, որ պարզ են և դիւրըմբռնելի:

ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁ, որուն հայրապետական կենաց պատմութեան վրայ արդէն խօսած ենք. իսկ գրաւոր երկասիրութեան կողմանէ իրեն կ'աւանդուին Շարականք Մարտիրոսաց և Հանգստեան և նոյն համառօտ և գեղեցիկ շարականները, որ ընդհանուր անուամբ կը կոչուին Մանկունք, որոց շատերը այնչափ ընտիր են. Թէ երգարանական շարադրոյն և թէ վսեմութեան իմաստից կող-

մանէ, որ նշանաւոր տեղ կը բռնեն Հա-րանկոցի մէջ։

ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ որուն, կ'ընծայուին հետեւեալ երկասիրութիւնները. — Մեկնութիւն չորեքտասան Թղթոց Պօղոսի, զոր գրած է 'ի խնդրոյ Գետադարձ Հայրապետին. — Բա՛ն Հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց, (Յունաց) զոր գրած է հրամանաւ Գետադարձին եւ որուն մէջ կը խօսի Հայոց եւ Յունաց մէջ միաբանութեան նիւթ եղած խնդրոց վրայ, այն է անխառնականութեան դէմ, Քրիստոսի մարմինն ապականացու համարողներուն դէմ, ներքինացեալներու դէմ, Քաղկեդոնի ժողովոյն դէմ, Վրաց բաժանման վրայ, պատկերաց վրայ, միւռոնին, բաղարջին, Քրիստոսի ծննդեան տօնին եւ երից սըրբասացութեանց վրայ. — Համեմատութիւն չորից Աւետարանչաց. — Ներբողեան Շողակաթի, այն է Վաղարշապատի Էջմիածնին աթոռանիստ կաթողիկէին. — Խրատք քահանայից. — Յաղագս Յովնանու Մարգարէի եւ Յովհաննու Մկրտչի. — 'Ի խաչելութիւն Պետրոսի. Այս վերջին գրուածներէն մի քանիին ուրիշ համանուն վարդապետի կ'ընծայուին եւ շատ հաւանական է։

ՍԱՐԳԻՍ ՍԵԽԱՆԵՑԻ, որ Մագիստրոսի գըլխաւոր Թղթակիցն է, գիտնական և քերթողագէտ, ինչպէս և Մագիստրոս կը վկայէ իւր Թղթոց մէջ ասելով. «Մ՛իշտ կարօտեալ եմ բանից քում և գրի. քանզի հզօր ես 'ի պօէտիկոսական մատենագրութեան, և սիրելի ինձ ոչ այլ ինչ՝ եթէ ոչ այնպիսի ինչ ընել կամ ասել»։ Սակայն Սարգսի Սեւանեցւոյ անուամբ երկասիրութիւն կամ Թարգմանութիւն առանձին երևցած չէ։ Նոյնպէս են ժամանակակիցք բանի մի վարդապետներ՝ ՍԱՄՈՒԷԼ, ԳԷՈՐԳ, ՏԻԳՐԱՆ ՊԱՀԼԱՒՈՒՆԻ, ուրոց ուսումնասիրութիւնը միայն կը յիշատակուի պատմութեանց մէջ։

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻ, որ Հայաստանի արհաւրալից ժամանակի ականատես, ականջալուր և սուգպատմող պատմագիրն է։ Լաստիվերտցւոյ պատմական երկասիրութեան քննիչներէն ոմանք կը յանդիմանեն զինքն, որ աւելի ողբ գրած է քան թէ պատմութիւն։ Սակայն այս դատողութեան խըստութիւնը ինքնին կը մեղմի, երբ ընթերցողը պատկերացնէ իւր աչաց առջեւ այն սոսկալի և արիւնահեղ տեսարանքն, այն աւերանաց, գերութեանց և վտարանդութեան արհաւրալից ժամանակամիջոցն, որուն մէջ Հայաստան՝ յաւիտենական վայրագ աւերութեան

և զօրականան մարդախողող բարբարոսութեան ենթարկեցաւ և աղէտից համագիւմարան դարձաւ։ Ըստ մեզ, կգայուն հայրենասէր մի, ինչպէս էր Լաստիվերտցին, այլապէս չէր կարող նկարագրել այն աղէտները, եթէ ոչ ողբալով և արտասուելով։ Վասն զի Հայաստանի հոյաշէն քաղաքները, ամրոցներն ու բերդերը քայքայուած, վանքերն ու եկեղեցիները աւերականաց մատնուած, զօրականք և ժողովուրդք անհնարին տառապանաց մատնուած, Թագաւորանիստն Անի՝ փառաւորուկ, Թագաւորն՝ վտարանդի և հայրապետական աթոռն՝ ամայի. այս ամէն սրտաճմլիկ տեսարաններն հանդիսատես թշուառ պատմագիրն ինչ կարող էր անել, եթէ ոչ ողբախառն տողերով աւանդել իւր պատմութիւնը, հառաչելով իւր սրտի խորքէն. «ՎԱՀ, Թագաւորըն (Գագիկ Բ.) անկեալ 'ի պատուոյ, իբրև զգերի կալանաւոր նստի 'ի հեռաւորնակ տեղիս . . . Հայրապետական աթոռն ամայացեալ՝ ցուցանի տխուր դիմօք, իբրև զկին նորահարսն մնացեալ յայրիութեան . . . յողբս փոխեցաւ մեզ ամենայն »։

Լաստիվերտցւոյ օրրան աւելի կը մորմաքի, երբ Դաւիթ Կիւրապաղատի և Աշոտ Բագրատունւոյ թագաւորութեան ժամանակի խաղաղաւէտ հայրենիքը կը համեմատէ Յովհաննէս Սմբատի և Գագիկի իշխա-

նութեան ժամանակի խռովայոյզ և տառապեալ հայրենեաց հետ։ Այս հակապատկերէն սաստիկ կը զգածի խեղճ պատմագիրն և այնպէս կը խօսի, կարծես թէ արիւն կը բղխէ սրտէն։ Լաստիվերացւոյ պատմական երկասիրութիւնը տպագրուած է թէ Հայերէն և թէ Գաղղիարէն։

Լաստիվերացւոյն կ'ընծայուին Ճառք մեկնութեան ընթերցուածոց, որ տակաւին տպագրուած չեն։

ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԷՐ, որդի Գրիգորի Մագիստրոսի։ Վկայասէրի կաթողիկոսութեան շրջանի պատմութիւնն արդէն ընդարձակօրէն աւանդած ենք, կը մնայ այժմ նորա գրաւոր երկասիրութիւններն յիշատակել։ Վկայասէրի երկասիրութեանց գլխաւորներն են. — Վկայաբանութիւն Սքէոյ, զոր թարգմանելով կարգի դրաւ և տօներ հաստատեց, որոց համար և Վկայասէր կոչուեցաւ. — Թարգմանութիւն Յովհան Ոսկեբերանի վրայ յօրինած Գէորգի Ներբողին. — Պատմութիւն Վարուց Ոսկեբերանի. — Վկայաբանութիւն Սրբոյն Գէորգայ, Եւդոքսեայ և Ոսոմելայ։ Վկայասէր իւր թարգմանական աշխատութեանց մէջ գործակից ունեցաւ ՍԻՐԱԿՈՍ գիտնական վարդապետն և ՄԱՏԹԷՈՍ քահանայն։

Այն ժամանակները ծաղկեցան ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ, որ քաղցրաւոյց վարդապետութեան համար Անղէկ կոչուեցաւ. ԹԷՈԴՈՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ, որ քաղցրանուագ ալէլուիա նուագելուն համար՝ Ըլխօսէկ կոչուեցաւ. ՍԻՍԻԱՆՈՍ կամ ՍԻՍԻՆԱՍ ՍԵԲԱՍՏԱՑԻ, որ իւր հայրենեաց մէջ նահատակուած քառասուն մանկանց վրայ ներբողեան գրեց. ՊՕՂՈՍ ՏԱՐՕՆԵՑԻ, որ Թէոփիստէ յոյն կրօնաւորի հակառակաճառութենէն ստիպեալ՝ մի սաստիկ գրուածք հրատարակեց՝ հարուածելով այն նենգժոտ մոլեկրօնութիւնն, որով Յոյնք նախատակոծ կ'առնէին Հայաստանեայց Եկեղեցին։ Պօղոս երկասիրած է նոյնպէս եկեղեցւոյ կարգաց Վերլուծութիւն, այսինքն պատճառ Տօնից, Ժամակարգութեանց Ընթերցուածոց, և Օ՛խսից։



ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Հայաստանեայց հայրապետութեան'ի կիլիկիա փոխադրութենէն մինչև վերստին փոխադրութիւնն յԱրարատեան նախկին աթոռանիստն Էջմիածին և մինչև սկզբնաւորութիւնն կիլիկիոյ ժառանգաւոր կաթողիկոսութեան.

1080–1441

Ա.

Համառօտ տեսութիւն

Հինգերորդ Շրջանին վրայ։

ՆԱԽԸՆԹԱՑ ՇՐՋԱՆԻՆ *մէջ տեսանք, որ Բագրատունի թագաւորական Հարստութեան անկումէն զկնի՝ ազգային գաղթականութեան հետ Հայաստանեայց հայրապետական Աթոռն ևս փոխադրեցաւ 'ի Կիլիկիա։ Ազգային կենաց այս յեղաշրջումէն Կիլիկիա պատմական նոր կերպարանք ստացաւ մեր Ազգին նկատմամբ, այսինքն մի կողմէն կանգնեցաւ այն տեղ Ռուբինեան իշխանական նոր Հարստութիւնն և միւս կողմէն վտարանդի և լեռներուն ապաստանած կաթողիկոսական Աթոռն որ աւուր աւելի հաստատութիւն ստացաւ։*

Կիլիկիոյ հայկական իշխանութեան կամ թագաւորութեան շրջանին մէջ, որ Գագիկ Բ.ի ազգական Ռուբէն իշխանապետէն սկսելով (1080) Ռուբինեան կոչուեցաւ, և մօտ 300 տարի տեւելով՝ Լուսինեան Լեւոն Զ. թագաւորի մահուամբ վերջացաւ, պիտի տեսնենք որ Հայաստանեայց Եկեղեցին յունական հարստահարութենէն տարուբերելով՝ կ'ենթարկի միանգամայն և Պապական ազդեցութեան և յերկուստէք նոր հրապուրանքներու մէջ կը ծփայ։ Ռուբինեան հարստութիւնն, Կիլիկիոյ գեղեցիկ և վաճառաշահութեան նպաստաւոր դիրքը պատճառաւ, սակաւ ժամանակի մէջ բաւական կը զօրանայ, բայց տիրապետող Հայ իշխանաց և թագաւորաց լատինական ազգի հետ ունեցած խնամութեանց և ակնածական յարաբերութեանց առթիւ Եկեղեցւոյ անկախութիւնը վտանգուելու կը մերձենայ։ Հետեւապէս պիտի տեսնենք Ներկայ Շրջանին մէջ, որ յունական հրապոյրներուն վրայ կը յաւելուն նմանապէս հռովմէական հետամտութիւններն, մեր Եկեղեցւոյ ինքնօրէն գոյութիւնը ստրկացնելու դիտաւորութեամբ։ Երկու կողմէն եւս կը յաճախեն բանագնացութիւնք և թղթակցութիւնք և մեր Հայրապետներէն ոմանք կը ստիպուին քանի մը ժողովներ կազմել և ջանալ պաշտպանել մեր

Եկեղեցւոյ ուղղափառութիւնը յունական և հռովմէական աններողամիտ պահանջումներն ու վիճաբանութիւնները մերժելու նպատակաւ ։ Սակայն Հայոց հայրապետաց այն քրիստոնէական խաղաղասիրութեան միջոցներն ոչ միայն չէին զիջուցաններ յունական և հռովմէական աններողամտութիւնն, որ ուղղակի միակերպութիւն և ստրկութիւն կը պահանջէր Հայաստանեայց Եկեղեցիէն, այլ ընդհակառակն ներքին խռովութեան տեղի կը տայ մեր Եկեղեցւոյ գաւակաց մէջ։ Հայոց արեւելեան վարդապետներն Եկեղեցւոյ անկախութեան կորուստ ու աղաւաղութեան վտանգ նշմարելով Օրբելեան կամ Կիլիկիոյ Հայ վարդապետաց ունեցած յարաբերութեանց մէջ յունականաց եւ հռովմէականաց հետ՝ սաստիկ կը յուզին և կը զայրանան ։ Այն պատճառաւ Լամբրոնեանք Կիլիկիայէն և Զորագետացիք Հաղբատէն առ ժամանակ մի նախատանաց կարկուտներ կը տեղան իրարու վրայ ։ Լամբրոնեանք կը նախատուին իբրեւ հայկական Եկեղեցւոյ նախնի պարզութեան աղաւաղիչներ և լատինական ու յունական նորաձեւութեանց մուծիչներ . իսկ Զորագետացիք կը նախատուին իբրեւ եկեղեցական բարեզարդութեան արգելիչներ և վաղեմի սովորութեանց կուրօրէն հետեւողներ ։ Ո-

րեւելեան վարդապետաց կասկածն երթա-լով աւելի կը զօրանայ եւ իրականութիւն կը ստանայ, քանի որ Եկեղեցիներու և Պապե-րու յարաբերութիւնները կը յաճախին մեր հայրապետաց ոմանց հետ, և մանաւանդ քանի որ լատինական Միաբանութեան կամ Ունիթոռութեան ջանքերը կ՚արծարծին Հայաստանի մէջ։ Ունիթոռութեան երե-ւոյթն աւելի պարզ կերպով կը յայտնէ, որ Պապականութիւնը, պատրելով մեր Արեւ-մտեան վարդապետաց քրիստոնէական հո-գին, և խաղաղասիրութիւնն իւր համար պատրուակ բռնելով, կը ճգնի Եկեղեցւոյ անկախութեան հիմունքը փորել և կրօնա-կան միութեան հետ՝ ազգայնութեան հոգին ջնջել։ Սակայն Արեւելեան վարդապետք շուտով առաջին կ՚առնուն այս կորստական երեւոյթին, չընայելով որ յանիրաւի պիտի դրօշմուին հակառակասէր և անխաղաղասէր մակ-դիրներով։

Այս միաբանական շփոթութեանց և Կիլիկիոյ ոմանց կաթողիկոսաց ու Հռոմայ պապերու յարաբերութեանց բուն աղբիւ-րըն որոնելու համար՝ եթէ ընդհանուր պատ-մութեան սոյն ժամանակեայ անցից վերայ հարեւանցի ակնարկ դարձնենք, ամեն բան կը պարզուի։ Սոյն միջնադարեան շրջանին մէջ, մինչդեռ Հայք պարսկական բռնութեան

և յունական հալածասիրութեան պատճառաւ իրենց բնիկ Հայրենիքէն գաղթելով ՚ի Կիլիկիա կ'ապաստանէին, Արեւմուտքն ևս կամ քրիստոնեայ Եւրոպան դէպ ՚ի Արեւելք արշաւելու խորհուրդներ կը յղանար։ Աշխարհն երկու բաժնուած էր, մի մասն Աւետարանին կը հպատակէր, միւսն Կուրանին, և թէպէտ երկուքն ևս երբեմն իրարու կ'ընդհարէին, բայց յաղթող և յաղթեալ տակաւին որոշուած չէր։ Շուտով խաչակրութեան արշաւանքներն սկսան դէպ ՚ի Արեւելք. Երուսաղէմը մահմետական իշխանութենէ ազատելու համար, որով և Եւրոպական ու Ասիական յարաբերութիւններն օր աւուր սկսան զօրանալ։ Կիլիկիոյ հայ թագաւորք և ժողովուրդք ևս քրիստոնէական սիրով ողջունեցին իրենց Եւրոպացի քրիստոնեայ եղբարքն, օժանդակելով և մտերմական յարաբերութիւններ հաստատելով, այնպէս կարծելով թէ բարոյապէս և նիւթապէս պիտի շահին այս մտերմութենէն. սակայն յետ ժամանակաց շատ սուղ նստաւ իրենց այս յարաբերութիւնը։ Վասն զի խաչակիր արշաւանաց տակէն առաւել աշխարհակալութեան և Պապական տիրապետութեան տենչանքներ երեւան ելան, քան թէ ազատութիւն Երուսաղէմի։ Ժամանակի պարագաներն հաստատեցին, որ Հռովմայ

Պապերը խաչակրութեան արշաւանքներ(1) հը բաստարակելով, ուրիշ նպատակ չունէին, եթէ ոչ Եւրոպայի տիրապետներն ու ժողովուրդը զբաղեցնել և իրենց նիւթական ոյժն ընդարձակել: Կարծ' ասենք, պապականութիւնն յարձակողական սուր տուաւ Քրիստոնէից ձեռքն, որ Աւետարանի սկզբանց դէմ էր, և սակայն Հախոխանամութիւնն այնպէս տնօրինեց, որ նոյն սուրը յետ ժամանակաց

(1) Թէպէտ և խաչակրութեան պատերազմն Արևմտեան կամ Հռովմէական Եկեղեցւոյ պատմութեանը կը վերաբերի, սակայն իբրև նշանաւոր երևոյթ մարդկային ազգի պատմագրութեան մէջ, հարկ կը համարինք հետևեալ համառօտ ծանօթութիւնը տալ:

Խաչակրութիւն կ'անուանեն այն արշաւանքները, որոնց մասնակցեցան Եւրոպայի զանազան թագաւորներն ու իշխանները (1096—1270) Հռովմայ Պապերու յորդորանօք, Երուսաղէմը Մահմետականաց ձեռքէն ազատելու համար. և որովհետև այն արշաւանաց համար զինուորեալներն ու մասնակիցներն իրենց հագուստի վրայ նշմէր խաչ կը կրէին, այս պատճառաւ խաչակիր կոչուեցան:

Ընդհանրապէս 8 Արևելեան խաչակիր արշաւանք կը հաշուին աշխարհագրական պատմութեան մէջ, որոց առաջինն կատարեցաւ Ուրբանոս Բ՛ պապութեան ժամանակ (1096—1100) Պետրոս անապատականի հրաւիրական քարոզութեամբ և Գոդֆրիտ Բուլիոնացու, Նորմանդիոյ դուքս Ռոբերտոս Բ՛ի, Տարենտոյի իշխան Բոհեմոնդի և այլոց առաջնորդութեամբ: Երկրորդն կատարեցաւ Եւգենիոս Գ՛ պապութեան (1174—1149) Ս. Բեռնարդոսի քարոզութեամբ և Ֆրանսիոյ թագաւոր Լուդովիկոս Է՛ի և Գերմանիոյ կայսր Կոնրադի առաջնորդութեամբ: Երրորդն կատարեցաւ Կղեմէս Գ՛ պապութեան ժամանակ, Գուլիելմոս արքեպիսկոպոսի քարոզութեամբ, և

ընդդէմ պապականութեան գործաւ և բոլոր զօրութիւնը քայքայեց, ինչպէս պիտի տեսնենք յաջորդ Շրջանին մէջ: Պապականութիւնը խաչակրութեան համար զինուորագններուն երկնից արքայութիւնը խոստանալով և մերժողաց վրայ բանադրանք, նզովք և դժոխոց սպառնալիք տեղալով՝ պատճառ դարձաւ միլիօնաւոր անմեղ ա-

Ֆրանսայոյ Թագաւոր Փիլիպ — Օգոստոսի, Գերմանիոյ կայսր Ֆրետերիկոս Բարբարոսայ և Անգղիոյ Թագաւոր Ռիչարդ Առիւծասրտի առաջնորդութեամբ: Չորրորդն կատարեցաւ Իննովկենտիոս Գ-ի պապութեան ժամանակ (1202—1204) Ֆուլք Նէօյլայու քարոզութեամբ և Ֆլանտրիոյ դուքս Բօդուէն Թ. Մոնֆերատի Մարքիզ Բոնիֆաս Բ-ի և այլոց առաջնորդութեամբ: Հինգերորդն կատարեցաւ Հոնորիոս Գ-ի պապութեան ժամանակ (1217—1221) Հունգարիոյ Անդրէ Թագաւորի և Երուսաղէմի ժան դը Բրիէն անուանական Թագաւորի առաջնորդութեամբ: Վեցերորդն կատարեցաւ Գրիգոր Թ-ի պապութեան ժամանակ (1228—1229) և Ֆրետերիկոս Բ-ի առաջնորդութեամբ: Իսկ Եօթներորդն և ութերորդն կատարեցան Իննովկենտիոս Դ-ի և Կղեմէս Դ-ի պապութեան ժամանակ (1248—1270) Ֆրանսայոյ Թագաւոր Ս. Լուդովիկոսի առաջնորդութեամբ:

Այսքան արշաւանքներէն զկնի, որոց մէջ միլիօնաւոր զոհեր եղան, քրիստոնեայք, աւելի յաղթուելով քան թէ յաղթելով, մի քանի գաղթականութիւններ հաստատեցին Պաղեստինի մէջ, սակայն այն գաղթականութիւնքն ևս կործանեցան և Երուսաղէմ դարձեալ Մահմետականաց ձեռքն մնաց: Այս արշաւանքներուն պատճառաւ Եւրոպայոյ Թագաւորներն իրարու դէմ զինեցան տիրապետութեան հոգւով և մէջ տեղը Պապութիւնն շահեցաւ, միլիօնաւոր ինչքերոց տէրութեամբ զօրանալով:

րիւններու հոսման և այնքան մարդիկ մեռան նոյն արշաւանաց միջոցին, որ մի նշանաւոր պատմաբանի ասածին պէս. «Եթէ ամեն կոտորածները յարութիւն առնէին, մի ընդարձակ երկիր կը բազմամարդէին»: Բայց ՚ի հարկ է այս արեանց վրէժը ժամանակն պահանջեց պապականութենէն:

Այսպէս ուրեմն, պապականութիւնը, խաչակրութեան արշաւանաց շնորհիւ Ասիոյ Արեւմտեան մասներու հետ յարաբերութիւններ ունենալով և հետեւապէս Կիլիկիոյ Հայ քրիստոնէից մտերմութենէն շահուելով, կը ձգնէր Հայաստանեայց Եկեղեցւոյ անկախութիւնը բառնալ քրիստոնէական միութեան պատրուակաւ. սակայն Նախախնամութիւնն, որ պարսկական և հագարական հալածանքներուն մէջ օժանդակած էր Հայոց Եկեղեցւոյն, անակնկալ միջոցներով ազատ կը պահպանէ նա և պապական միաբանութեան հետամտութիւններէն: Սակայն ցաւօք սրտի պիտի խոստովանինք, որ նոյն Շրջանին մէջ բարոյապէս վէրքեր կը կրէ մեր Եկեղեցին հռովմէականութենէն և յունականութենէն, այն է ներքին երկպառակութիւններ ազգային ամբողջութեան մէջ, վիճաբանական պղտորումներ Հաւատոյ անարատ համոզման մէջ և նորաձեւութիւններ վարդապետական ինչ ինչ բացա-

տրութեանց մէջ։ Ու այս վերջերն անհնարին էր որ չըկրէր. որովհետեւ հալածանքն հեթանոսութենէ չէր, որ աւելի ամրացուցիչ է, այլ դաւանաբանական և ծիսաբանական տարապարտ վիճաբանութենէ, որ առաւել տկարացնել և քրիստոնէական զօրութիւնը մանրել գիտէ, քան թէ կազդուրել։

Սկսինք ներկայ Շրջանի պատմութիւնը, և ակներեւ պիտի տեսնենք նոյն համառօտ տեսութեան ստուգութիւնը։

Բ.

Կաթողիկոսութիւն Գրիգորի Պահլաւունւոյ և Ներսէսի Շնորհալւոյ։

ԲԱՐՍԵՂ հայրապետի՝ մահէն զկնի՝ կաթողիկոս կ'օծուի Գրիգոր Գ. Պահլաւունի, որդի Ապիրատ իշխանի։ Գրիգոր Գ. իւր մանուկ հասակէն, ինչպէս արդէն գիտենք, իւր եղբայր Ներսէսի (Շնորհալւոյ) հետ դաստիարակուած էր օրինաւոր կրթութեամբ և Վկայասէրի խնդրանօք յանձնուած էր Բարսեղ կաթողիկոսի խնամոց. ուստի և կաթողիկոսացաւ իւր քսանամեայ հասակին մէջ, որուն վրայ արդէն վստահ էին, ինչպէս թէ՛ Բարսեղ հայրապետն, նոյնպէս և

ականատես ժողովուրդն. Սակայն հեռաւոր ազգայնոց մէջ բաւական շշուկ տարածուեցաւ այս մասին և Աղթամարայ Դաւիթ արքեպիսկոպոսն յաջողեցաւ մեծ կուսակցութիւն շահել իւր կողմն, և կաթողիկոսանալով Ձորոյ վանուց մէջ՝ նստաւ յԱղթամար, ուր էր (ըստ ոմանց) աջ, քող և գաւազան Լուսաւորչին, և մանաւանդ Վասպուրական աշխարհի համբաւն մեծ էր, և յիշատակն տակաւին կենդանի, որ աթոռանիստ եղած էր Արծրունիթագաւորաց.

Գրիգոր Գ. այս երկպառակութեան լուրն առնելով, ժողով կազմեց (1114) Սեաւ լերան վրայ և զԴաւիթ անվաւեր հրատարակեց, սակայն Դաւիթ հաստատուն մնաց իւր վիճակին մէջ և իրմէն յետոյ շարունակեցաւ Աղթամարայ կաթողիկոսութիւնն, որոյ յաջորդութիւնը կը տեւէ մինչև մեր օրերը.

Գրիգոր Պահլաւունի, որ միշտ կը մտածէր Հայաստանի Արեւելեան հօտին վրայ և հաստատուն աթոռ չունենալով, մերթ կը նստէր Շուղր անապատի մէջ, մերթ Կարմիր վանուց մէջ և մերթ այլ տեղեր՝ կամեցաւ փոխադրել յԱրարատեան աշխարհն. և այս առթիւ յատկապէս գիր գրեց Նպուսուար ամիրային, բայց շփոթութեանց պատճառաւ անկատար մնաց իւր իղձն և մտք

պուեցաւ կաթողիկոսական աթոռն հաստատել Խարբերդի և Արղնի մօտ՝ Ծովք գիւղին մէջ, որ իւր հայրենի իշխանական կալուածն էր : Գրիգոր հրաւիրեց իւր մօտ իւր կրտսեր եղբայրն և քահանայական աստիճան տալով Ներսէս անուանեց, յանուն Ներսիսի պարթեւի . ապա եպիսկոպոս ձեռնադրեց և այցելու կարգեց Հայաստանեայց ցրուեալ հօտին : Այս օրէն ՚ի վեր Ներսէս իւր եղբօր ամենամտերիմ գործակիցն եղաւ կաթողիկոսական գործոց մէջ, թէ բանիւ և թէ գրով, և իւր քաղցրուսոյց վարդապետութեան համար Շնորհալի գեղեցիկ մականունն առաւ :

Գրիգոր, կաթողիկոսական աթոռոյ վարչութիւնն իւր հարազատին յանձնելով, Երուսաղէմ ուխտի գնաց, և այն տեղ, ինչպէս կը պատմէ Սամուէլ պատմագիր երէցն, Լատինական մասնաւոր մի ժողովի մէջ պաշտպանեց Հայաստանեայց Եկեղեցւոյ վարդապետութիւնն, որուն վրայ այլատարազ կարծիքներ կը ձնուցանէին Լատինք, ինչպէս և Յոյնք :

Սակայն, ինչպէս սոյն Շրջանի, ընդհանուր տեսութեան մէջ պատմած ենք և յաջորդ գլուխներուն մէջ ևս առիթ պիտի ունենանք պատմելու, արտաքոյ յունական կրօնամոլութեան, մի նորօրինակ վնասա-

բեր երեւոյթ եւս Լատինաց կողմէն ար-դէն ՚ի վեր երեւելու վրայ էր ընդդէմ Հա-յաստանեայց Եկեղեցւոյ ։ Որչափ խաչակ-րութեան պատճառաւ Լատինք ծանօթա-ցան Արեւելքին եւ Կիլիկիոյ գաղթա-կան Հայք եւ կաթողիկոսունք յարաբերու-թիւն ունեցան նոցա հետ, այնչափ Լա-տինաց կողմէն մեր Եկեղեցւոյ անկախու-թեանը վտանգ սպառնացող երեւոյթներն աւելի զօրացան ։ Հայք, իբրեւ դարերով հարստահարուած ազգ, միշտ օգնութեան կարօտ էին, իսկ Յունաց եւ Լատինաց հա-մար՝ օգնելու սկզբունքն ոչ այլ ինչ էր, եթէ ոչ տիրապետել Հայ Ազգի հոգւոյն եւ մարմ-նոյն, այսինքն քաղաքական ազատութեան հետ՝ բռնաբարել կրօնական ազատութիւ-նըն եւս ։

Այս խռովութիւններն Գրիգոր Պահլա-ւունւոյ ժամանակէն արդէն սկսան յայտնի լինիլ ։ Յունական ծիսաբանական վէճերն ար-դէն կը յուզէին, շատ անգամ բռնի ստի-պելով, որ Հայք յունական արարողութիւն-քըն ընդունին ։ Հայաստանի Արեւելեան բաժնի եկեղեցիները մերթ ընդ մերթ տի-րապետող Ամիրաներէն կը կողոպտուէին, Կիլիկիոյ մէջ ներքին եւ արտաքին խռովու-թիւններն կը բորբոքէին անընդհատ պա-տերազմներով Յունաց հետ, եւ Գրիգոր

Պահլաւունեաց անունն ու համբաւը յայտնի էր Հռովմէական եկեղեցականաց, շատերուն, ինչպէս և Իննովկենտիոս պապը, որդէն հայրապետական քօղ և գաւազան ղրկած էր ՚ի ցոյց միաբանութեան և յերախտագիտութիւն այն ընդունելութեանը, զոր Հայք ցուցած էին Խաչակիրներուն Կիլիկիոյ մէջ, և Լեւոն հայ իշխանն իւր լատին կնոջ խնդրանօք վանք եւս շինած էր լատին կրօնաւորաց համար. Հետեւապէս Հայք սկսած էին նոր յարաբերութիւն ունենալ Լատինաց հետ, բայց այս յարաբերութեանց մէջ Հռովմէական պապերը կրօնական հպատակութիւն պիտի երազէին, Յոյնք եւս աւելի պիտի արծարծէին մոլեռանդութեան զայրոյթն, Արեւելեան Հայք պիտի տարակուսանօք պաշտպանէին և Հայաստանեայց Եկեղեցւոյ անկախութեանը սպառնացող արհաւիրներ նշմարելով պիտի զարհուրէին. Բայց ՚ի հարկ է, Աստուած, որ իւր Եկեղեցին չըմատներ երբէք մոլեռանդութեան և տիրապետութեան անտի- քրիստոնէական ոտնչքին, պիտի պահպանէր Հայաստանեայց Եկեղեցին ու Հայրապետութիւնն, ինչպէս պահպանած էր նախընթաց արհաւրալից դարերուն մէջ. Թէպէտ և մեծամեծ զոհերով.

Գրիգոր Պահլաւունի, որ Տղրուտաղէմէն

գաւառը ժամանակէն 'ի վեր Ծովք դղեկին մէջ կը նստէր և իւր հայրապետին գործակցութեամբ Եկեղեցւոյ ներքին բարեկարգութիւնը զբաղած էր և միջադիտական ամանց Յունաց և Ասորւոց Թոնդրակեան նոր վերբերուցած յուզմունքներին անդորրացուցած էր, տեսնելով թէ Սկիւթական հարձակումները կը սաստկանան Արեւելից մէջ, կաթողիկոսական ուխտին փոխադրեցաւ 'ի Կիլիկիա, և այն տեղ (1147) Հայրապետական Աթոռն հաստատեց Հռոմկլայի մէջ, որ Լատին տիկնոջ իշխանութեան տակ էր և յետ. ժամանակաց գնուելով կաթողիկոսական կալուած դարձաւ ։

Գրիգոր Պահլաւունի, խորին ծերութեան հասնելով, ժողով կը գումարէ Հռոմկլայի մէջ և ժողովականաց հաւանութեամբ կաթողիկոս կ'օծանէ իւր եղբայրն Ներսէս, որ առաքինական վարուք և իմաստութեամբ յայտնի էր ոչ միայն Ազգին, այլ և օտարներուն ։ Ներսէս, իւր ծերունազարդ եղբօր ձեռամբ օծուելէն և կաթողիկոսական բարձ առնելէն զկնի, մի գեղեցիկ ատենաբանութեամբ կը յայտնէ, որ ոչ թէ փափաքանօք, այլ 'ի հարկաւորութենէ Ազգին և 'ի յորդորանաց եղբօրն կը ստիպուի յանձն առնուլ Հայրապետական վեհն և ծանր պաշտօնն. ուստի և կ'աղաչէ որ ամենքն Աստուծոյ օծան-

դաւկութիւնը խնդրելն իրեն համար։

Ներսիսի ձեռնադրութենէն երեք ամիս յետոյ Գրիգոր կը վախճանի (1166) և Ներսէս իւր վսեմ կոչման համեմատ ասպարէզ կը մտնէ իւր պաշտօնավարութիւնները կատարելու։

Ներսէս տակաւին եպիսկոպոս էր, որ Յունաց միութենական խնդիրներն սկսած էին ստուկապէս յուզուիլ, և նա՝ արդէն Կիւռ Մանուէլ կայսեր փեսայ Ալէքս իշխանին գրով աւանդած էր Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնը, ինչպէս վարդապետականն, նոյնպէս և ազգային ծիսականըն։ Նորընտիր հայրապետը, չը նայելով որ այսպիսի մեծ խնդիր եղած է իւր առջեւ, որով պիտի մաքառի Յունաց մոլեռանդութեան դէմ, գրով և բանիւ, այս երկրորդական գործ համարելով, իւր մեծ ուշադրութիւնը կը դարձնէ Ազգի հոգեւոր շինութեան վրայ։

Այս ժամանակ Ազգը ցրուած էր ոչ միայն Մեծ և Փոքր Հայաստանի մէջ, այլ և Յունաստանի, Պարսկաստանի, Աղուանից աշխարհի, Եգիպտոսի և այլ սահմանաց մէջ. ուստի և արթուն հայրապետն, նախ՝ Ընդհանրական թուղթ կամ շրջաբերական կ'ուղղէ առ համօրէն որդիս Հայաստանեայց Եկեղեցւոյ, և առանձին յատուկ թղթեր ևս կը

դրէ կրօնաւորաց, վանորէից առաջնորդաց, եպիսկոպոսաց, քահանայից, իշխանաց, զօրաւորաց, քաղաքականաց, երկրագործաց և ամենայն ժողովրդականաց և կանանց, յիշեցնելով ամենուն իրենց պարտքն առ Աստուած, առ Ազգն և առ միմեանս, և յորդորելով զամենեսեան 'ի սէր, 'ի միութիւն և 'ի գործունէութիւն։

Եկեղեցւոյ Ժամանակագրութեան մէջ միաբերութիւն և փայլչութիւն պահպանելու նպատակաւ՝ բերել կը տայ Ա՛ւքենոցաց ուխտէն, Թեզենեաց անապատէն և այլ երեւելի վանքերէ հին օրինակներ Գրոց Ժամանակագրութեանց իրարու հետ համեմատելով և ինքնագիր շարականներով ու երգերով Ճոխացնելով՝ կը կարգաւորէ ըստ պատշաճի։

Եթէ չենք սխալիր, այս ժամանակագրական բարեկարգութեան և նորոգ Ճոխութեանը, իմաստուն հայրապետին գլխաւոր նպատակ կ'ունենայ, եւս առաւել ազգայնութիւն տալ Հայոց եկեղեցական Ծիսակատարութեանն և անոր պատուար քաշել ընդդէմ Յունաց, որք կը ջանային ծիսականապէս միակերպել մեր Եկեղեցին յունականին հետ։

Ներսէս, հովուական աչալրջութեանը և քրիստոնէական անսասանութեանը, Ա՛քեղդէ կոչուած Հայերէն եւս, որովհետեւ Լուսաւորչի ժամանակէն 'ի վեր Սամոսատ քաղաքին՝ մէջ

և այլ տեղեր հեթանոսական պաշտամունքներով կը վարուէին, 'ի քրիստոնէութիւն կը դարձնէ, ինչպէս յայտնի է իւր գրած թըղթէն առ Փոտոս եպիսկոպոս, որուն յարգոր կը կարդայ Արեւորդեաց դարձին համար ամենայն աշխատանք 'ի գործ դնել, և արդարեւ կը պսակուի այս հետեւողութիւնը։

Մինչդեռ Ներսէս այսպէս Եկեղեցւոյ ներքին շինութեամբ կը զբաղէր, յանկարծ կը հասնին Կիւռ Մանուէլ կայսեր պատգամաւորներն ու թուղթը (որ ուղղած էր առ Գրիգոր Պահլաւունի, բայց չև հասած՝ նա վախճանած էր և Ներսէս կաթողիկոսացած) միութեան խնդրոյն նկատմամբ, զոր ստանալով Շնորհալի հայրապետն՝ կը պատասխանէ արժանապէս, յիշեցնելով միանգամայն, որ Հայք անհաւատներէն այնչափ չեն նեղուիր, որչափ Յունաց ազգէն, որոնք Հայաստանեայց Եկեղեցւոյ պաշտօնեայքը կը հալածեն, սեղանները կը կործանեն, պաշտամունքները կ'այպանեն (ինչպէս և ինքն Կիւռ Մանուէլ, Գրիգորի կաթողիկոսութեան ժամանակ, Անտիոքայ Հայոց եկեղեցւոյն մէջ բունի Յոյն եպիսկոպոս դրած էր, որ. ամօթահար արտաքսուած էր) և այլ չարիքներ կը հասուցանեն, որոց ուրիշ պարման չկայ, բայց միայն յունական ատելութիւնն փոխել 'ի սէր, և հալածանքն՝ 'ի գթութիւն։

պետին, կը պայմանէր եպիսկոպոսաց գումար-մանը, որոց Թուղթ գրած էր 'ի Հայս, 'ի Վիրս, յԱղուանս, 'ի Պարսկաստան, յԱրեւմուտս և յայլ տեղիս, ինքն կը վախճանի 75ամեայ հասակին մէջ, (1173) եօթնամեայ կաթողիկոսութենէ զկնի, որ ըստ Թըւոյ ամաց Հայրապետութեան եօթն եպիսկոպոս միայն ձեռնադրած էր ։

Երկար ժամանակ անթաղ կը մնայ Տ՝Նորհալի հայրապետի մարմինն, որովհետեւ զանազան կողմերէ ժողովրդեան խուռն բազմութիւն կը դիմէր երանելոյն աջը համբուրելու և հրաժարական ողջոյն տալու հոգեւոր հօրն Հայաստանեայց ։ Հանգուցեալ հայրապետի եղբօրորդին Գրիգոր, որ հեռաւոր երկրի մէջ հիւանդութեան լուրն առնելով աճապարած էր կենդանւոյն տեսնելու, հազիւ թէ յուղարկաւորութեանը կը հասնի ։ Իսկ երբ կ'աւարտի յուղարկաւորութեան հանդէսն և երանելի հայրապետի մարմինն կ'ամփոփի Հռոմկլայի դամբարանին մէջ, բոլոր բազմութիւնն կը սկսի միաբերան աղաղակել և՝ զԳրիգոր՝ կաթողիկոս խնդրել ։ Ներկայ եպիսկոպոսները, բոլոր հանդիսականաց հետ, Գրիգորն եկեղեցին կը տանին և կ'օծեն կաթողիկոս, և նմանապէս նոյն օրը կ'որոշեն ամեն տարի Տ՝Նորհալւոյն տօնը կատարել և յիշատակել 'ի

չորս տարիք Հայրապետած։ Շնորհալի հայրապետին վրայ դարձեալ պիտի խօսինք իբր գրաւոր երկասիրութեանց արժանաւորութիւնը կշռադատելու ժամանակ։

Գ.

Շարունակութիւն յուզման միութեան խնդրոյն. — Գրիգոր Դ. Տղայ. — Գրիգոր Ե Գահավէժ. — Գրիգոր Զ Ապիրատ։

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ մահուան դոյժն 'ի Պոլիս հասնելով տրտմութեամբ կը համակէ կայսրն, պատրիարքն և բոլոր մեծամեծները։ Կայսրն մխիթարութեան թուղթ կը գրէ նորընտիր Գրիգոր կաթողիկոսին և Թէորիանէի ձեռքով ղրկելով կը յորդորէ միութեան խնդիրն 'ի գլուխ հանել։ Թէորիանէ ճանապարհին կ'արգելու զանազան դժուարութեանց պատճառաւ և կայսերական թուղթը կը ղրկէ այլոց ձեռամբ։ Գրիգոր Տղայ ընդունելով կը պատասխանէ, որովհետև ակներև կը տեսնէ, որ ինն տասնա-[illegible] խնդիրը պիտի վրդովէ Սսի հոգեւոր անդորրութիւնը, որ վարժած էր 'ի վաղուց անտի յարգել իր ազգային ծէսերն

ու առաքելական աւանդութիւնքն։ Ի՞ւ ար-դարև, այս միջոցին կը հասնի Ներսէս Շնոր-հալւոյն թղթոյն (զոր գրած էր հեռաւորնակ եպիսկոպոսաց վրայ) պատասխանն, որով կը յայտնեն՝ թէ սէրը մեր երկնաւոր Հօր պա-տուէրն է և մենք պատրաստ ենք յօժարու-թեամբ սիրել ամենայն մարդիկ, բայց ամե-նեւին թող չըստիպեն զմեզ Յոյնք մեր նախ-նի Հարց աւանդները փոխել։

Գրիգոր, տեսնելով՝ թէ Հայք ոչ մի կերպիւ պիտի չըհաւնին փոխել իրենց Եկե-ղեցւոյ վարդապետութիւնն ու արարողու-թիւնքը, թուղթ կը գրէ Մանուէլ կայսեր և կը խնդրէ 'ի բաց թողուլ իւր առաջարկու-թիւնքն և այս թուղթը կ'ուղարկէ մի Յոյն քահանայի ձեռամբ, յորմէ ինքն յունարէն կ'ուսանէր։ Իսկ միւս կողմէն Հայ վարդա-պետաց օգնականութեամբ, մանաւանդ Ներսէս Լամբրոնացւոյ, իւր առաջարկութեանց պատասխանը կը պատրաստէ և Լամբրոնա-ցւոյն կը յանձնէ ատենաբանութիւն յօրի-նել սիրոյ և խաղաղութեան վրայ. և, եթէ ժողովք գումարման հարկ լինի, հանդիսա-կանաց առջև կարդալ։

Կայսրն Գրիգորի թուղթն ստանալով՝ վերստին պատասխան կը գրէ, նոյնպէս և պատրիարքն, ստորագրութեամբ Յոյն ե-պիսկոպոսաց, որք և կը ստիպեն զԳրիգոր

ժողով գումարել։ Տասնամեայ կաթողիկո-սըն ; բայց բանադատութեան յանձնական Թղթոց, գիր գրելով՝ 'ի ժողով կը հրաւիրէ Հայոց եպիսկոպոսներն ու վարդապետները։ Սակայն ոմանք կը ժողովին, ոմանք 'ի կամս կաթողիկոսին կը Թողուն խնդրոց լուծումն, և ոմանք սաստիկ երգիծանաց Թուղթ կը գրեն կաթողիկոսին, խստիւ մերժելով յու-նական միութիւնն և զգուշացնելով՝ որ ա-մենևին ինքնագլուխ բան չը բանէ կաթո-ղիկոսն ։

Գրիգոր տղայ կուսակալուն պատասխա-նել խեր դէմ յուղուած ամբաստանութեանց, ջանալով համոզել, որ բաց 'ի սիրոյ և խա-ղաղութենէ ուրիշ միապարական նպատակ չունի Յունաց հետ։ Այս ատեն ընդդի-մադիր կողմէն Անի Բարսեղ եպիսկոպոսն կը ղրկուի 'ի Հռոմկլայ, ուր արդէն գու-մարուած էին բաւականին եպիսկոպոսներ և վանականներ և ժողովը կսկսի (1179)։ Նախ՝ կ'ատենախօսէ Ներսէս Լամբրոնացին և ա-պա Յունաց կայսեր և Մետրապօլտաց Թղթ-երը կը կարդացուին ու կը քննուին։ Յե-տոյ ժողովականաց խորհրդով Թղթեր կը գը-րուին Յունաց կայսերին, Պատրիարքին և ե-կեղեցականաց, որով կը բացատրեն Հայաս-տանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնը, 'ի միջի այլոց այս խօսքերն ևս գրելով. "Այլ

զի զմերս ծանիցէք կամս, թէ ոչ խորշիմք յաստուածախօս բանից սուրբ հարցն՝ որք աւանդեցին սրբոյ Եկեղեցւոյ զուղղափառ հաւատոյ դաւանութիւն, այլ ձայնակցիմք նոցին որպէս և լուայք և քարոզեմք յեկեղեցիս մեր և 'ի վերայ սորին հաստատեալ կամք ամենայն Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ Քրիստոսի լրութիւնս, որ և սրտիւ հաւատամք յարդարութիւն և բերանով խոստովանիմք փրկութիւն ». և այսպէս կ'ուղարկեն Թղթերն ։

Սակայն Թղթատարներն, ճանապարհոյին շփոթութեանց պատճառաւ, վերստին կը դառնան Կեսարիայէն 'ի Հռոմկլայ և յանկարծ կայսեր մահուան լուրը կը տարածուի Կիլիկիոյ մէջ, Թղթերը դարձեալ Հայոց կաթողիկոսի մօտ կը մնան և միութեան խնդրոյն յուզումն կ'ընդհատի մահուամբ կայսեր, որ անկուն հետամտողն էր միութեան ։ Թէպէտ և նոյն իսկ կայսրն, եթէ կենդանի մնար, անհնարին էր, որ միութիւնը կատարուէր. որովհետև երբ անաչառապէս քննութեան առնունք երկուց ազգաց կրօնական վիճակը և պատմական խռովութեանց խորը թափանցենք, կը տեսնենք անհերքելի որ Հայք Լատինին աւելով քրիստոնէական ներ կը հաւանէին, իսկ Յոյնք՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ անկախութեան բացարձակ

և ազգային աւանդութեանց ընջումն ։ Հետեւապէս , միութեան խնդիրն երեւակայական բաղձանք մ՚ էր և երբեք պիտի չիրագործուէր , ոչ Սամուէլի հետամտութեամբ և ոչ Գրիգորի կամ այլոց զիջողութեամբ ․ քանի որ երկուց ազգաց ոգին բոլորովին իրարմէ տարբեր են , և քանի որ Եկեղեցի կազմողն երկուց ազգաց ժողովուրդն էր և ոչ թէ մասնաւոր կայսր մի կամ հայրապետ ։ Պատմութիւնն ինքնին կը հաւաստէ մեր ասածն . որովհետեւ տակաւին և ոչ միութեան նշոյլ երեւցած, Զօրագետացի վարդապետներն , հանդերձ Շիրակացի և Սիւնեցի եկեղեցականօք այնչափ կը սոսկան և կը զայրանան Հռոմկլայի ժողովի մասին , որ սաստիկ յանդիմանութեան թուղթ կը գրեն Գրիգորին և կ՚ամբաստանեն , և սա իւր կողմէն նախատանաց թղթեր կը գրէ ։ Եւ ահա այսպէս , միութեան խնդրոյն յուզմամբ ոչ միայն չը մեղմանար յունական ատելութիւնն ու մոլեռանդութիւնն , այլ նոյն իսկ Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակաց մէջ մեծամեծ խռովութիւններ և երկպառակութիւններ կը յուզին . վասն զի Զօրագետացիք կամ Տուտէորդեանք , Շիրակացիք և Սեւլեռան Հայերէն շատերն կը միաբանէին զԳրիգոր չը ճանաչել իբրեւ կաթողիկոս , այլ կ՚ընտրեն Անի քաղաքի Բար-

սեղ· եպիսկոպոսին հպատակիլ իբրեւ կաթողիկոսի ։

Մինչդեռ այս վիճակի մէջ էր յունական միութեան խնդիրն, միւս կողմէն լատինական յարաբերութիւններն աւելի կը բազմանային Հայոց մէջ, որք և տեղի կը տային. մի կողմէն յունական ատելութեան զայրադին բորբոքման, և միւս կողմէն պապական միապետութեան տենչանաց արծարծման ։ Մանաւոր յարակցութեանց պատճառաւ Լուսիոս պապը պատուասիրական նուէրներ կը ղրկէ Գրիգոր Տղային, նմանապէս Կղեմէս պապն եւս թղթեր կը գրէ առ Գրիգոր և առ Լեւոն իշխան Հայոց, երբ Փրետերիկոս Գերմանիոյ կայսեր առաջնորդութեամբ Խաչակիրք վերստին 'ի Պաղեստին կը դիմեն, Երուսաղէմի գրաւելու համար, և կը խնդրէ օգնել Խաչակրաց` քրիստոնէական ընդունելութեամբ և պաշարու, և Հայք կ'օգնեն ըստ արժանւոյն և մեծամեծ խոստումներ կը լինին Փրետերիկոսի կողմէն Հայոց կաթողիկոսին և իշխանին ։ Սակայն կայսրն Եւրոպա չը դարձած` կը մեռնի և խոստումներն անկատար կը մնան ։

Գրիգոր Տղայ քսանամեայ կաթողիկոսութենէն զկնի կը վախճանի, և խորհրդով Լեւոն իշխանի, մեծամեծաց և եպիսկոպոսաց, կաթողիկոս կ'ընտրուի Գրիգոր Տղայի եղբօ-

ժողովին, (ըստ ոմանց բեւեռիդին) Գրիգոր Ե. որոյ մանկահասակ լինելուն պատճառաւ Լամբրոնացին սաստիկ կ'ընդդիմանայ ընտրական ժողովին մէջ, բայց չը յաջողիր խափանել ընտրութիւնը, որովհետեւ շատերն կաշառած ունէին, որ մի՛ գուցէ Լամբրոնացին իւր կաթողիկոսանալու համար կ'աշխատի։ Գրիգոր մանուկ կաթողիկոսն, տակաւ ժամանակէն զկնի ամբաստանութեան կ'ենթարկուի ոմանց եպիսկոպոսաց և իշխանաց կողմէն, որով և Լեւոն իշխանն կը ստիպուի նորընտիր կաթողիկոսը արգելանոցի մէջ դնել և գիր գրել Հայոց մօտաւոր և հեռաւոր եպիսկոպոսներուն, որպէս զի ժողովին արժանն խորհելու և տնօրինելու։ Լամբրոնացին կը մերժէ Լեւոնի հրաւէրն և հազիւ հազ Լեւոնի չորս հինգ գրութիւններէն ընտիպուած կը վիճանի Սիս դալ։ Սակայն դեռ եւս Երեւելեան եպիսկոպոսներն ու Լամբրոնացին Սիս չը հասած՝ Գրիգոր կը փախչանի աղէտալի մահուամբ, այն է, կամելով արգելանոցէն փախչիլ, կտաւեղէն պարան կը կազմէ և մէջքէն կապելով կը կախուի պարսպի բարձրութենէն, և պարանը խզուելով՝ քարերուն կ'ընդհարի և կը ջախջախուի, և այս պատճառաւ պատմութեանց մէջ կը կոչուի Գահավէժ կամ Քարավէժ։

Գրիգոր Գահավէժի վերջատասնամեայ

կաթողիկոսութենէն զնի. Լեւոն իշխանին
և ժողովական եպիսկոպոսաց հաւանութեամբ
կ'ընտրուի Շահան զօրավարի Ապիրատ որ-
դին (1195), և կաթողիկոսանալով կը կոչուի
Գրիգոր Զ. որ Ներսէս Շնորհալւոյ ժամա-
նակէն 'ի վեր արդէն յայտնի էր իւր համ-
բաւով: Տուտէորդեանք եւ Շիրակացիք
Լամբրոնացւոյ մասին նշմարելով ընտրու-
թեան մէջ, որուն հետ սատարիկ համակիր
էին, դարձեալ չէին հպատակեր նորընտիր
կաթողիկոսին, այլ իրենց իբրեւ կաթողի-
կոս կը ճանաչէին Անեցի Բարսեղ եպիսկո-
պոսն:

Այս եկեղեցական վարչութեան ներքին
երկպառակութեան հետ՝ արտաքին հարըս-
տահարութիւնք եւս կը յաճախեն Վրաց
և Յունաց կողմէն: Վրացիք մի Հայոց ե-
կեղեցի կը հրդեհեն, Օտարիկը իրենց հետ
չը տօնելու պատճառաւ, և քառասուն ադա-
թաւորներ կ'այրեն. իսկ Մելիկեցի Յոյնք կը
սկսին Հայոց ազգէն չարախօսել և Պօլսոյ
ու այլ տեղերաց մէջ գտնուած Հայերն նե-
ղել և տառապեցնել, կրկին մկրտել շատե-
րըն և վերստին ձեռնադրել, ստիպելով ա-
մեն ծէս յունականին հետ միակերպ կա-
տարեն: Այս յունական մոլեռանդութիւնք
խաղաղելու նպատակաւ՝ Լամբրոնացին Պօ-
լիս կը ղրկուի, իբրեւ պատգամաւոր կա-

թողիկոսի և Լեւոն իշխանի կողմէն ։ Սակայն անկարող կը գտնուի առաջին տանուլ եւ-ցատուցք որոտի յետ կը դառնայ ․ իսկ հարստա-հարութիւնները կը շարունակին , շատ Հա-յեր բռնի կը ստիպուին յունանալ և շատե-րըն տարաբնակ կը հալածուին Ալէքս Անգե-լոս (Հրեշտակ) կայսեր իշխանութեան ժա-մանակ , ինչպէս կը գրէ Գրիգոր վարդապե-տըն Սկեւռացի ։ Այս մոլեռանդութեան հուրը առաւել բորբոքելու համար՝ Յոյնք այնպէս համբաւած էին , իբր թէ Հայոց հայրապետութեան կատարածը հասած է ․ ուստի հարկ է անշուշտ Հայոց քահանայքն վերստին ձեռնադրել , եւ այս յունական շաղփաղփութիւնը մերժելու համար երկար նամակ կը գրէ Լամբրոնացին առ Ախլան ա-նուն ոմն ։

Մինչդեռ Յունաց կողմէն կրօնական յուզ-մունքներն կը շարունակին , Լատինաց կող-մէն մտերմական երեւոյթներն աւելի նըշ-մարելի կը լինին ։ Լեւոն , քաղաքական ընդ-արձակելով իւր իշխանութիւնն ու համբաւը , կը փափաքի թագաւոր օծուիլ և կը թըղ-թակցի Հռովմայ Կելեստինոս Պապին եւ Ֆրետերիկոսի որդի Հենրիկոս Զ Գերմանիոյ թագաւորի հետ , յիշեցնելով Ֆրետերիկո-սի խոստումն ․ ուստի և Պապն ու թագա-ւորն Մոգունտիոյ եպիսկոպոսի ձեռամբ ար-

քաղաքական թագ և արծուէնշան դրօշ կը ղրկեն Լեւոնին. սակայն ընդ նմին կ՚առաջարկեն նոյնպէս քանի մի խնդիրներ՝ ծիսական փոփոխութեանց նկատմամբ, որոց գլխաւորն էր տօները լատինականին համեմատ կատարել և Ճրագալոյցին՝ պահքը չլուծանել, և այսպէս եկեղեցական խնդիրը կը սողոսկի պատուաւորական պարգեներու տակ։ Սակայն այս առաջարկութիւններն, որչափ որ ըստ երեւոյթին հաւանութիւն կ՚ըստանան Լեւոնէն և կաթողիկոսէն, իրօք չեն կատարուիր և Հայք իրենց նախնի սովորութեան վրայ հաստատուն կը մնան։ Շուտով հրաւիրանաց գրեր կ՚ուղարկուին Լեւոնի և Կաթողիկոսի կողմէն պանազան տեղեր, որով և կը ժողովին ՚ի Տարսոն եպիսկոպոսունք, վանահարք, իշխանք, զօրավարք և զօրք, նմանապէս Լատին և Յոյն երեւելի անձինք, և Գրիգոր կաթողիկոսի ձեռամբ Թագաւոր կ՚օծուի Լեւոն (1198), Յայտնութեան Տօնին, ուր կ՚ատենապանէ Ներսէս Լամբրոնացին, առաւել շքեղութիւն տալով հանդիսին։ Յունաց Աղէքս Անգելոս կայսրն այս թագաւորութեան լուրն առնելով՝ ինքն ևս թագ կը ղրկէ և կը յորդորէ իւր ղրկածն պարծ դնել և ոչ լատինականն, սակայն Լեւոն երկուքն ևս փոխփոխանակի կը գործածէ։ Բայց եկեղեցի

թէ Լեւոն աւելի նախապատիւ համարէր ազգային անշուք թագ մի՝ օտարաց շքեղազարդ թագերէն, որոց տակ հպատակութիւն քան թէ ինքնիշխան ազատութիւն կը ծածկուէր, թէ՛ իրեն և թէ՛ իւր յաջորդաց համար և որոնք պիտի երկարատեւ չըմնային Ռուբինեան ցեղի իշխանաց գլխոյն, ինչպէս և չըմնացին իսկ։

Զօրագետացիք և Շիրակացիք լսելով՝ որ Սիսիկիոյ եպիսկոպոսներէն և վարդապետներէն ոմանք հաւանութիւն ցուցած են լատինական աւանդութեանց, սաստիկ վըրդովմամբ գիր կը գրեն առ Լեւոն Թագաւոր և կ'ամբաստանեն զԼամբրոնացին իբրև գլխաւոր համամիտ նորաձեւութեան. ուստի և Լեւոն կ'ըստիպուի Լամբրոնացւոյ եղբայր Հեթում Սեբաստոսի միջնորդութեամբ համոզել զԼամբրոնացին, որ տեղի չըտայ նորաձեւութեանց և ազգային խռովութեան, ապա թէ ոչ եպիսկոպոսական իշխանութենէ կը ձգուի։ Այս պատճառաւ երկար գիր կը գրէ Լամբրոնացին առ Լեւոն, զինքն արդարացնելու համար. բայց տակաւ ժամանակէն զկնի՝ սաստիկ ցաւով կը մեռնի քարոզութեան ժամանակ և նոյն ցաւով կը վախճանի, թողլով բազմաթիւ գրաւոր երկասիրութիւններ, որոց վրայ պիտի խօսինք առանձինն։

Լեւոն Թագաւորին շատ եկեղեցիներ և վանքեր շինել կու տայ, բազմաթիւ պատերազմներ կը մղէ օտարաց հետ, բայց միանգամայն խաղաղութեամբ կը սկսի վարել Լամբրոնի Հեթում և Կոստանդին իշխանաց հետ. և Գրիգոր կաթողիկոսն կ'ընտրուի միջամտել և այս ազգային իշխանական յուզմունքները խաղաղել. և այն. ինչ կը հասնի իւր խաղաղասիրական նպատակին, ինքն ևս կը վախճանի, յետ եօթնամեայ կաթողիկոսութեան:

Դ.

Երկպառակութիւն կաթողիկոսական ընտրութեան համար. — Կաթողիկոսունք՝ Յովհաննէս Մեծաբարոյ, Անանիա, Բարսեղ և Դաւիթ Գ. Արքայակաղնեցի. — Հալածանք ընդդէմ Զօրագետացւոց. — Կոստանդին Ա Բարձրբերդցի. — Յակոբ Ա Տարոնացի:

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼՒՈՅ հայրապետութենէն զկնի արդէն ազգային եկեղեցական վարչութեան մէջ սկսած էր ՚ի վեր ելնել մի ներքին երկպառակութիւն և հիւսիսային ու արևելեան Հայք կասկածանօք կը նայէին Կիլիկիոյ փոխադրուած կաթողիկոսութեան աթոռոյն վերայ. Այս երկպառակութիւնը քննական

հետեւանք էր յունական և լատինական յա-
րաբերութեանց, որոց մէջ ակամայ կը գըտ-
նուէին Կիլիկիոյ հայրապետներէն ոմանք։
Այս երկպառակութիւնը տուաւել կը ճա-
րակէ Գրիգոր Անաւարզեցի վախճանելէն զկնի,
նոր կաթողիկոսի ընտրութեան համար։ Ո-
մանք կը ցանկան Սեբաստիոյ Անանիա եպիս-
կոպոսն՝ կաթողիկոս ընտրել, որ ազգական
էր Պետրոս Գետադարձին, և կէսքն, յորդո-
րանօք Լեւոն Թագաւորի, կը ցանկան Սսոյ
Յովհաննէս եպիսկոպոսն ընտրել, որ միանգա-
մայն Թագաւորի ազգականն էր։ Մինչդեռ
մի կողմէն Յովհաննէս կ'ընտրուի և կը ձեռ-
նադրուի Հռոմկլայի մէջ, միւս կողմէն ևս
կ'ընտրուի Անանիա Սեբաստացի, Կեսարիոյ և
Փոքր Հայոց ժողովրդի հաւանութեամբ։
Սակայն ժամանակէն զկնի Լեւոնի և Յով-
հաննէս Անծարարոյ կաթողիկոսի մէջ գըժ-
տութիւն կը ծագի և Թագաւորի կամքով
նոր կաթողիկոս մի ևս կ'ընտրուի Սսոյ մէջ,
այն է Տէր Դաւիթ Գ։ Այս դէպքն աւելի
առիթ կու տայ Փոքր Հայոց բնակիչներուն
աւելի ամուր պաշտպանել Անանիայի կաթո-
ղիկոսութիւնը։ Բայց ընդ նմին Հռոմկլայեցիք
ևս իրենց կաթողիկոս կ'անուանեն Ներսէս
Բարսեղ եպիսկոպոսն։ Ուր ահա այսպէս մի
և նոյն ժամանակի մէջ չորս անձինք անխոր-
հրդաբար կաթողիկոսական անուն կը կրեն

և ըստ այնմ Հայաստանեայց հոգևոր հօտը ՚ի չորս կուսակցութիւնս կը բաժանի ։

Այս կաթողիկոսական վարչութեան բաժանման միջոցին՝ նոր խնդիր մի կը ծագի ։ Զաքարէ Սպասալարն և իր եղբայրն Իւանէ Աթաբէգն, որոնք մեծ համբաւ ունէին և կը զօրավարէին Վրաստանի թագաւորութեան մէջ, թուղթ կը գրեն Յովհաննէս կաթողիկոսին (որովհետև Դաւթի ընտրութիւնը տակաւին լրած չէին) և Լեւոն թագաւորին, և կը խնդրեն, որպէս զի ներուի իրենց — Ա. շարժական սեղան ունենալ զօրաբանակի մէջ և քահանայ՝ պատարագելու համար, և Բ. Աստուածածնի Վերափոխման և Խաչի տօները ըստ ծիսից Վրաց կատարել ։

Թագաւորն և կաթողիկոսն Դաւիթ, Զաքարէի առաջարկութեան վրայ խորհելու համար ժողով կը գումարեն (1204) Սիս քաղաքի մէջ շրջակայ եպիսկոպոսներէն և խորհրդակցելով հետևեալ ութ կանոնական որոշմունքն կը ղրկեն Զաքարէին, այն է — Ա. Պատարագել սարկաւագօք, դպրօք և քահանայական զգեստուք — Բ. Շարժական սեղան ունենալ և ՚ի պատահել հարկին բացօթեայ վրանի մէջ պատարագել ։ — Գ. Պատարագ մատուցանել ոչ միայն ննջեցելոց, այլ և կենդանեաց համար ։ — Դ. Վերափոխման տօնը կատարել Օգոս. 15 և Խաչի տօնը՝ Սեպ.

14. Յունաց և Վրաց եկեղեցիներուն մէջ.—Ե. Յայտնութեան և յարութեան Ճրագալու- ցին պահքը լուծանել միայն ձկամբ և իւ- ղով.—Զ. Յարգել Փրկչի և սրբոց պատկեր- ները.—Է. Նշանից դպիր ձեռնադրելոյ՝ սար- կաւագ չձեռնադրել.—Ը. Կանոնական սահ- մանի մէջ փակել, որ կրօնաւորները սեպհա- կան ստացուածք չունենան և միս չուտեն. Իսկ Յովհաննէս կաթողիկոսն իւր կողմէն կանխապէս կը դրկէ Զաքարէին մի եկեղե- ցանման վրան, մարմարոնեայ շարժական սեղան, սպասներ և քանի մի եկեղեցական պաշտօնեայք.

Զաքարէ այս կանոններն ու ընծաները ստանալով՝ ժողով կը գումարէ (1205) Լօ- ռի քաղաքի մէջ, ուր կը գտնուէր իւր ազ- գականն Գրիգոր Տուտէորդին՝ Հաղբատայ եպիսկոպոսն, Սանահնի Յովհաննէս վարդա- պետն, Դաւիթ Քոբայրեցին, Անիի Սարգիս եպիսկոպոսն (ըստ որում Բարսեղ արդէն վախճանած էր) Բջնոյ Սրթանէս եպիսկոպոսն և այլ եկեղեցականք. Ժողովի մէջ կը կար- դացուին վերոգրեալ ութ կանոնական ո- րոշմունքն. սակայն ժողովականներէն ոմանք կը հաւանին և շատերն կ'ընդդիմանան, ինչ- պէս Տուտէորդին, Յովհաննէս և Դաւիթ վարդապետներն և այլք, և այսպէս ժողովն կը լուծուի. Զաքարէ Սպասալարն սաստիկ

կը զայրանայ և իւր կամքը բռնի յառաջ վարել կը ջանայ, ինչպէս և արդէն կը հրամայէ պատարագ մատուցանել, ուր և Տարօնացի Խաչատուր վարդապետն 'ի սկիզբն պատարագին կ'երգէ իւր յօրինած Խորհուրդ խորին երգը, որ մինչեւ ցայսօր եւս կ'երգուի Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ։

Զաքարէ, ջանալով խապառ նուաճել իւր ընդդիմադիրներն, իւր զայրոյթն 'ի բռնութիւն կը փոխէ և ամենքն կալանաւորել կը ճգնի։ Տուտէորդին կը փախչի Պետակայ վանքը. Մխիթար Գօշ անուանի վարդապետին մօտ, բայց յետոյ այն տեղէն ելած ժամանակ կը բռնուի և կը կալանաւորի. իսկ միւսներէն ոմանք կը փախչին և ոմանք յերկիւղէ կը հնազանդին Զաքարէին։ Շփոթութիւններն ու պառակտումներն կը յաճախին Հարաւելից մէջ և համբաւն մինչեւ Կիլիկիա կը հասնի, որով շատ կը տրտմին Լեւոն թագաւորն և Յովհաննէս կաթողիկոսն. վասն զի Դաւիթ արդէն վախճանած էր և նոյն տարւոյն մէջ Անանիա Սեբաստացին եւս վախճանելով և Յովհաննէս միայն մնալով կաթողիկոսութեան մէջ՝ հաշտուած էր Լեւոնի հետ։

Զաքարէ տեսնելով որ կրօնական խռովութիւններն ու շփոթութիւններն երթալով աւելի կը զայրանան և կը տարածին, ժողով

կը գտնուի (1207) Անիի մէջ, (զոր նոր ա-ռած էր Պարսից ձեռքէն) ուր կը հրամայուի և Մխիթար Գօշի, տակայն տակաւին ժողո-վական խորհուրդն չէր սկսած՝ աղմուկ և շփո-թութիւն կը յուզի և անկատար կը մնայ։ Ժողովականներէն շատերն կ'աքսորուին Զա-քարէի ձեռամբ, և ի վերջոյ Իւանէ Աթա-բէգին միջնորդութեամբ կ'ազատին։ Իսկ Աը-սական ուխտն առաջարկութիւններէն մի քանիսն կիրառութեան մէջ կը մնան և մի քանիսն իսպառ կը մերժուին։

Զենք տարակուսիր վերոգրեալ դէպքե-րէն հետեւցնելու, որ Զաքարէի հալածա-կանական վարմունքն դատապարտելի է պատ-մութեան անաչառ դատաստանին առջեւ։ Վասն զի, իշխանական սաստ և պատուհասք ՚ի գործ դնել այն տեղ, ուր միայն խորհուրդ և համոզումն կը պահանջուի, այս կը նշա-նակէ սիրոյ տեղ՝ սուր շողացնել, որ պատե-րազմական գործի է և ոչ եկեղեցական ժո-ղովի։

Զաքարէն, իբրեւ զաւակ Եկեղեցւոյ, իրաւունք ունէր միայն իւր կարծիքը յայտ-նել. իսկ Ասակեան առաջարկութեանց ըն-դունելութիւնն կամ մերժումն ընդհանուրի որոշման գործ էր։ Այս է եկեղեցական ժո-ղովի անբռնաբարելի սկզբունքն. և ուր այս սկզբունքն կը պակսի, այն տեղ ժողովը վըճ-

ւորական նշանակութիւն չունի, ինչպէս և չունեցան իսկ այն ամեն ժողովներն, որոնք, առանց ընդհանուր Ազգի հաւանութեան, եղան, միայն յունական և լատինական Թե-լադրութեամբ, և բաց 'ի ազգային երկպա-ռակութիւններէ՝ ուրիշ շահաւէտ արդիւնք չունեցան։ Եթէ Ազգին համար, Ազգն և ոչ եկեղեցական ժողովներու կարօտութիւն և ժամանակ ունէր իւր բազմատառապանաց մե-ճակին մէջ։

Եւ ահա՛ այսպէս, մինչդեռ Արեւելեան Հայոց մէջ տակաւին երկպառակութիւննե-րըն կը շարունակէին, սաստիկ վրդովմունք կը ծագի Կիլիկիոյ սահմանի Հայոց և Լա-տինաց մէջ և Լեւոն Թագաւորն կ'բռնադատ-ւի բոլոր լատինական կղերը արտաքսել, ո-րոնք սկսած էին երկպառակութեան սերմանս սերմանել։ Այս մասին Թղթակցութիւններ կը լինին Պապերու կողմէն, բայց Լեւոն չանսար բնաւ, և սակաւ ժամանակէն զինքն կը վախճանի, որուն տեղ Թագ. կը կալէ իւր Զապէլ դուստրն, Յովհաննէս կաթողիկո-սի և իշխանաց հաւանութեամբ։ Շատ չանցնիր կը վախճանի. Նոյնպէս և կաթողի-կոսն, 18ամեայ կաթողիկոսութենէն զինքը, և կը յաջորդէ Կոստանդին Ա. Բարձրբերդցին.

Սորա կաթողիկոսութեան ժամանակա-միջոցին Սկիւթական և Հոնական բարբա-

րաններն, կամ, աւելի պարզ ասել, Թաթարական բռնաւորներն՝ Չինգիզխան, Չօլաղէդին, Չարմաղան, Բաչու և այլք արիւնով կը լուան Ասիական երկիրները, մանաւանդ Աղուանից աշխարհն, Վրաստան և Հայաստան, և ամեն բարբարոսական կոտորածներով և անպատուութեամբ կը սասանեցնեն քրիստոնեաները, և երբեմն ևս խոշտանգելով կը ստիպեն իրենց հաւատն ուրանալ: Ցաւելի նոր ամուսին՝ Հեթում Թագաւորն և Կոստանդին կաթողիկոսն ոչ միայն անձեռնհաս կը լինին օգնել Արևելեան Հայերուն, այլ հազիւ հազ Կիլիկիոյ մէջ յուզուած պապական և յունական խնդիրներով կը զբաղին, և եկեղեցական ներքին բարեկարգութեանը հսկելու համար (1243) ժողով կը գումարեն Սիս քաղաքի մէջ և 25 կանոններ կը հաստատեն, մեծ մասամբ նախնական կանոններէն առնլով, որոնք գըլխաւորապէս եկեղեցականաց պարտուց կը վերաբերին և ժողովրդի հետ ունեցած յարաբերութեանց:

Այս 25 կանոնաց վերջինն՝ վերջին Օծման կը վերաբերէր., զոր Հռովմայ Պապը խնդրած էր կաթողիկոսէն իւղով կատարել, սակայն այս պապական առաջարկութիւնն ամենևին չընդունուեցաւ Ազգի կողմէն, որովհետև ընդդէմ էր Հայաստանեայց Ե-

կեղեցւոյ սովորութեան, որ միայն աղօթ-
քով կը կատարէ ։

Այս կանոնները կ'առնու Վարդան Բար-
ձրբերդցի վարդապետն և կը տանի Հայաս-
տանի զանազան կողմերն, իբրև այցելու,
ունենալով իւր հետ կաթողիկոսի կողմէն
շրջաբերական թուղթ առաջնորդներուն և
իշխաններուն գրուած, որով կ'ուրախանան
ամենքն՝ և այսպէս Վարդան, յետ այցելու-
թեան, դառնալով 'ի Հռոմկլայ, կ'ուղեւո-
րի անտի վերստին իւր մենարանն՝ Ընդրէի
վանքն և կը պարապի ընթերցասիրելով և
ուսուցանելով ։

Առաջ տեսցինք արդէն, որ լատինական
յարաբերութիւններն միանգամ սկսելով ան-
դադար պիտի վրդովէին Հայաստանեայց
Եկեղեցւոյ վարդապետական անդորրու-
թիւնը, և այսպէս իսկ կատարեցաւ ։ Վասն
զի, Կոստանդնի կաթողիկոսութեան ժամա-
նակ 'ի վեր երևեցաւ Լատինաց կողմէն
Հոգւոյն Սրբոյ բղխման խնդիրն, և Պապերն
սկսան պահանջել Հայոց վարդապետական
դաւանութիւնը այս մասին ։ Սակայն որչափ
որ լատինական պահանջումներն յարատեւե-
ցան և Հայոց վարդապետներէն ոմանք լա-
տինական դարձուածներով կամեցան վար-
դապետել, այնու ամենայնիւ Հոգւոյն Սըր-
բոյ բղխումն աստուածային անհաս խոր-

հողմներէն մին լինելով անլուծանելի մնաց, և Հայք իրենց նախնական կիրառութիւնը պահպանեցին, Հոգւոյն Սրբոյ բղխումն ի Հօրէ ասելով և ոչ ըստ Լատինաց և Յունաց։

Քրիստոնէական կրօնի վարդապետութեան մէջ ամենէն վնասակար ընթացքն է բառերու վէճ յարուցանելն։ Վասն զի, բառերու վէճն տեսակ մի ժանտախտ է, որ քրիստոնէից միտքը կը ճարակէ և սէրը կը ցամաքեցնէ սրտերէն։ Եկեղեցի մի, որ յաճախ բառական վէճեր կը յարուցանէ, կը նշանակէ որ չուզեր Քրիստոնէութեան հոգին ճանաչել, որ սէր կը պահանջէ հաւատացեալներէն և ոչ տարապարտ շատախօսութիւն։ Վասն զի, բառական վէճերն ամենեւին վախճան չունին, և որչափ յուզուին այնչափ պիտի յարատեւեն, ինչպէս և մինչեւ ցայսօր կը տեւեն Յունաց կողմէն Քրիստոսի բնութեան վէճն և Լատինաց կողմէն Հոգւոյն Սրբոյն բղխման, և երկար դարերով մեծաքանակ էջեր գրուած են մատենագրութեանց մէջ։ Բայց մեր բաղձանքէն հեռու լինելով այս տեսակ նիւթոց վրայ երկար խօսիլը, դարձեալ մեր պատմութիւնը շարունակենք։

Կոստանդին կաթողիկոսն, Լատինաց նորարծարծ վէճերուն մէջ բաւականին տարուբերելով և Եգիպտոսի Սուլթաններէն

Կիլիկիային հասած հարստահարութեանց եւ ականատես լինելով, 47 ամեայ կաթողիկոսութենէն զկնի կը փոխանցի խորին ծերութեան մէջ։

Ե.

Վիճակ Եկեղեցւոյն Հայաստանեայց. Յակոբ Ա. Տարօնացի. Կոստանդին Բ Սսեցի. Ստեփաննոս Դ. Գրիգոր Է Անաւարզեցի. Կոստանդին Գ Լամբրոնացի։

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ վիճակը խիստ տխուր կերպարանք կ'առնու վերոգրեալ կաթողիկոսաց հովուապետութեան ժամանակ։ Արտաքին հարստահարութիւնները կը տեսնուին Արեւելից մէջ Թաթարական խաներէն եւ Կիլիկիոյ մէջ Եգիպտական Սուլթաններէն. բայց ոչ պակաս կը տեսնուին ընդ ներս եւ եկեղեցական ներքին գժտութիւններն ու աղաւաղումներն։

Կոստանդին Բարձրբերդցւոյ մահէն զկնի՝ նոր կաթողիկոսի ընտրութիւնն բաւական՝ կը յետաձգի եւ ի վերջոյ (1268) կ'ընտրուի Յակոբ Ա. Տարօնացի կամ Կլայեցի, որ Ներսէս Շնորհալւոյ Ընդհանրական Թղթերն օրինակել տալով՝ կը ղրկէ իւր ժամանակի եպիսկոպոսներուն, ուսուցիչներուն, վարդապետու-

ներքուն և այլն, պատասխանելով որ լուռ այնմ վարքին իրենց կեանքը և հոգին հասնին վերայ: Իսկ ինքն Եկեղեցւոյ ներքին բարեկարգու-թեանը կը ղեկավարէ, որոյ կաթողիկոսութեան ժամանակ կը յայտնուին Մեծին Ներսէսի նշխարքն, Թէփլի աւանի մէջ, ինչպէս կը յի-շատակուի Երզնկացի Յովհան վարդապետի յօրինած Աւ շղոս անձաւ ընտրելոց շարականներին մէջ:

Յակոբ Ա. կը վախճանի և նոր կաթողի-կոսի ընտրութեան համար խռովութիւններ կը ծագին: Լեւոն թագաւորն կ'աշխատի կաթողիկոս ընտրել տալ Գրիգոր Անաւար-զեցին. բայց վանականք և առաջնորդք կը դիմադրեն, ասելով թէ՝ Հռոմէ է, նաև դիւ-րահաւան, որ կարող է առաւել աղէտից պատճառ դառնալ քան թէ անդորրութեան: Ասոնք կը ցանկան Սիւնեաց Տարսայիճ իշ-խանին որդի Ստեփաննոս քահանայն ընտրել, որ այն ժամանակ եկած էր ի Կիլիկիա ե-պիսկոպոս ձեռնադրուելու՝ Սիւնեաց աշխար-հին վրայ, սակայն սորա ընտրութեանն եւս շատերն անհաւան կը գտնուին: Ի վերջոյ կ'ընտրուի Կոստանդին Բ. Կատուկեցի (1287), որ և Պրօնագործ կը կոչուի մականուամբ: Սա եպիսկոպոս կը ձեռնադրէ Ստեփաննոս Օրբէլեան (ըստ ոմանց Ուռպէլեան) որդի Տարսայիճ իշխանին և կը դարձնէ Սիւնեաց աշխարհն, որ յետոյ անուանական արքեպիսկոպոս կը

հանդիսանայ ընդդէմ յաջողեալ դաւանակցութեան։ Սակայն՝ սակաւ ժամանակէն զինքն տապալել զժառանգութիւն կը ծագի Հեթում Թագաւորի և Կոստանդին կաթողիկոսի մէջ, որոյ պատճառաւ և կաթողիկոսն Աթոռէն կը զրկուի ու կ'աքսորուի. և նորա տեղ կաթողիկոսանայ Ստեփաննոս Դ. Հռոմկլայեցի (1290)։ Սա Հեթում Թագաւորի հրաւիրանօք Հռոմկլայէն Սիս կը կոչուի, բայց որում տարին վէճեր սկսած էին յուզել Յունաց և Հայոց մէջ Զատկի տօնի կատարման համար, և կ'որոշուի Զատիկը կամ՝ Օտարադատօնին Յունաց հետ տօնել. սակայն այս որոշումն ամենևին ընդունելութիւն չը գտներ Ազգէ կողմէն, և դարձեալ կը շարունակեն իրենց նախնական սովորութիւնն։

Ստեփաննոսի կաթողիկոսութեան ժամանակ Եգիպտոսի Սուլթան բռնաւորն արիւնհեղութեամբ կը թաթաւէ բոլոր Կիլիկիա, Հռոմկլայի ամրոցը կը գրաւէ աւերմամբ, կաթողիկոսարանն կը կողոպտէ և եկեղեցւոյ սպասները կը յափշտակէ, ընդսմին և Լուսաւորչի աջն (բայց յետոյ կը դարձունէ)։ կաթողիկոսն կը գերուի Եգիպտոս միւս գերելոց հետ, և այն տեղ դառն չաւոք պանդխտութեան մէջ կը վախճանի. 4ամեայ կաթողիկոսութենէն զկնի։

Ստեփաննոսէն յետոյ կ'ընտրուի Գրիգոր

Մնաւարդեցի և կաթողիկոսական աթոռն կը փոխադրուի ՚ի Սիս, մանն մը Հռոմկլային արդէն աւերուած էր: Գրիգոր՝ Յայսմաւուրքի ընթերցուածները կը համառօտէ բառաւորդ. անոնց և կը յաւելու շատ բաներ յունարէնէ և լատիներէնէ թարգմանելով: Կը հետամտի բանի մը ծէսեր, ըստ յունականին և լատինականին սովորութեան, յարմարել, և ինքն առանձին տօնացոյց կը յօրինէ: Սակայն այս փոփոխութիւնները ամենուն չեն ընդունուիր, այնպէս որ երբ կը բերէ Արեւելեան վարդապետներին Գրիգորի կաթողիկոսանալն և գաղտնի ջանքերին՝ սատարիկ կը զայրանանին, ըստ որում առաջուց արդէն Հռոմէական կը կոչէին, ժողով կը գումարեն Փոքր Սիւնեաց մէջ և ստորագրութեամբ առաջնորդ եպիսկոպոսաց և վարդապետաց սատարիկ յանդգնութեան թուղթ կը գրեն, որով երկարօրէն ազգային նախնական ժողովներուն թուարկելէն և յունական ու լատինական միակերպութեան վնասներն բացատրելէն զկնի՝ կը սպառնան ամենեւին կաթողիկոս չը ճանաչել զԳրիգոր, եթէ համարձակի նախնական սովորութիւնները աղաւաղել:

Գրիգոր առ ժամանակ մը կը լռէ, սպասելով իւր դէմ բորբոքուած յուզմունքին, և այս միջոց գանելով՝ վերստին

թուղթ կը գրէ Արեւելեան քանի մը վարդապետաց իւր առաջին մտադրութիւնն յառաջ տանելու համար. սակայն, այս անգամ դիմադրութիւնն եւս աւելի կը սաստկանայ։ Ուստի Գրիգոր յամառելով իւր մտադրութեան վրայ թուղթ կը գրէ Հեթում Թագաւորին՝ օգնել իւր այն ձեռնարկութեանը. ՚ի կատար հասուցանելու համար եւ ժողով գումարել. իսկ ինքն դաւանութեան գիր պատրաստելով կը յանձնէ Հեթումի որդւոյն՝ Լեւոն Թագաւորին. բայց իւր ազգավնաս խորհրդոց կատարումն չը տեսնելով՝ կը վախճանի (1306), իւր 14ամեայ կաթողիկոսութեամբ խռովութիւն միայն յուզելով Ազգի մէջ։

Լեւոն, ցանկալով Գրիգորի մտադրութիւններն յառաջ վարել, ժողով կը գումարէ Սիս արքայանիստ քաղաքին մէջ, ոչ միայն Նոր կաթողիկոսի ընտրութեան համար, այլ եւ Գրիգորի դաւանաբանական թուղթը կամ նամակը կարդալու եւ քննադատելու համար։ Այս ժողովին մէջ, ուր ներկայ կը գտնուին բաւականին եկեղեցականք եւ նոյն ինքն Լեւոն, իւր հայրն Հեթում եւ այլ իշխանք, վերստին կաթողիկոս կ'ընտրուի Կոստանդին Բ. Պրօնագործ, որ առաջ մերժուած էր Աթոռէն եւ շատերն, գուցէ յերկիւղէ Թագաւորին, հաւանութիւն կը տան. ժող-

վաճառն ուրախութեան․ բայց երբ կերակուրն գործադրել, առատակի խաղաղութիւն կը ծագի ժողովրդեան մէջ․ ուստի եւ ոչ միայն անգործութիւնը կը մնան, այլ եւ շատերն կը թըշնամանան կանթեղիկաւ, Լեւոնի եւ Հեթումի հետ (որ թագաւորահայր կը կոչուէր, թէեւ Լեւոն իւր եղբօր որդին էր,) թէ ինչու նոյն կանոններն Սիս մէջ կը պահպանեն․ եւ այսպէս զանազան ամբաստանութեամբ կը մատնեն Թաթարաց Գերագոյն իշխանին, որ խաբէութեամբ իւր մօտ կոչելով զՀեթում եւ զԼեւոն եւ այլ իշխաններ, բոլորն միասին սպանանել կը տայ․ Այսպիսի չարիքներ կը ծնանին անհամ ծիսապահական հեռասնոտութիւններէն, ինչ տեղ որ Ազգին համամտութիւնը չը կայ․

Լեւոն Դ.ին կը յաջորդէ իւր Օշին եղբայրն, եւ որովհետեւ ապէտոց պատճառն եկեղեցական խնդիրներն էին, եպիսկոպոսներն ու վարդապետներն 'ի ժողով կը հրաւիրէ, բայց նորա կը մերժեն նոր Թագաւորի հրամանը․ Սակայն մեծ բազմութիւն քահանայից, աշխարհականաց, վանականաց, ընդ նմին բազմաթիւ արք եւ կանայք ինչ՝նէին Սիս կը ժողովին եւ ահագին աղմուկ յարուցանելով իսպառ կը նանդրագրեն Սսական ժողովին որոշումներն, որ Գրիգոր Անաւարզեցւոյն դաւանագրոյն ճնշմամբ յառաջուած էր․ Օ-

չին զայրանալով շատերը կը մատնէ բանտից, կապանաց, սպառնալեաց և մինչև անգամ մահուան, բայց չը յաջողիր և ոչ մի ծիսական փոփոխութիւն ընդունել տալ. իսկ Կապանոյ Գրիգոր եպիսկոպոսն բաժակին մէջ ջուր խառնելուն համար կը սպաննուի ժողովրդէն : Այս խռովայոյզ միջոցին Երուսաղէմի Սարգիս եպիսկոպոսն հրովարտակ կը հանէ Եգիպտոսի Սուլթանէն և շատ եպիսկոպոսներ իւր կողմը շահելով պատրիարք կ'ընտրուի Երուսաղէմին, (1311) որով և կ'սկսի Հայոց Երուսաղէմի Պատրիարքութիւնը, թէև այն պատրիարքութեան գոյութիւնը աւելի հին ժամանակաց մէջ սկզբնաւորուած կ'երևի, որուն ապացոյց է Երուսաղէմի վանուց մէջ գտնուած Աբրահամ պատրիարքի անուամբ տապանագիրն, որ 1250 թուականը կը կրէ :

Օշին վերստին փորձ կը փորձէ Ատանայի մէջ ժողով գումարել իւր ծիսափոխական մտադրութիւնը յառաջ տանելու համար, բայց դարձեալ անյաջողութեան հանդիպելով խայտառ կը հրաժարի առաջարկմունքէ : Օշին իւր երկրին ներքին և արտաքին աղէտալի վիճակը տեսնելով որուն գլխաւոր պատճառն ինքն էր, Կապանի Յակոբ եպիսկոպոսն Արեւմուտք ղրկելով օգնութիւն կը խնդրէ, պապին միջնորդութեամբ ; եւրոպական թագաւորներէն . սակայն փոխանակ

օգնութեան, յորդորական թուղթ միայն կըստանայ պապէն, որոյ նպատակը կըլլնի լատինական ծէսերը յառաջ վարել Հայոց ժողովրդի մէջ. և այն 'ի զուր աշխատանք։

Օշինին կը յաջորդէ Լևոն Ե, որոյ թագաւորութեան ժամանակ Եգիպտոսի Սուլթաններն լսելով՝ որ Հայք ընտանութիւն ունին Լատինաց հետ և շարունակ պատգամաւորութիւններ և թղթակցութիւններ կը լնեն, աւելի կը զայրանան և Թաթարներու ու Թիւրքմէններու հետ միանալով՝ Կիլիկիա կ'ասպատակեն, անհնարին տառապանքներ հասուցանելով քրիստոնէից։

Այս տառապանաց լուրը պապին հասնելով՝ կը ջանայ վերստին յորդորել Եւրոպական թագաւորներն, որ Արևելք արշաւեն և քրիստոնէից օգնեն, բայց ապարդիւն կը մնայ պապական յորդորը։ Այն ժամանակ Կոստանդին պրօնագործ կաթողիկոսն կը վախճանի և կը յաջորդէ Կոստանդին Գ. Լամբրոնացի (1323), որ անձամբ Սուլթանին կ'երթայ և խաղաղութեան դաշն հաստատելով՝ առ ժամանակ մի պատճառ կը դառնայ աղէտից դադարման։ Սակայն կարճ ժամանակէն զկնի այս դաշն կը լուծուի լատինական յարաբերութեանց առթիւ և եգիպտական աւերմունքներն կը շարունակին, ինչպէս վերջը պիտի տեսնենք։

Չ.

Յակոբ Բ. Սսեցի. — Սկզբնաւորութիւն Ունիթոռութեան. — Աղմուկ կրօնական. — Մխիթար Քռնեցի. Մեսրոպ Արտազեցի. Կոստանդին Դ. Պօղոս Ա. Թէոդորոս Բ.

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՅ մահէն զկնի կաթողիկոսական Աթոռն կը բարձրանայ Յակոբ Բ. Սսեցի, քեռորդի Գրիգոր Անաւարզեցւոյ, (1327), երբ արդէն ներքուստ և արտաքուստ արհաւիրները կը տիրէին։ Արհաւիրքներ, որոնք ոչ միայն Հայոց քաղաքական ոյժը կըսպառեն, այլ և բարոյականըն սաստիկ կը տկարացնեն կրօնական երկպառակութիւններով։

Յակոբայ կաթողիկոսութենէն մօտ տասն տարի առաջ Բարդուղիմէոս լատին եպիսկոպոս, Յովհաննէս պապի հրամանաւ Ատրպատականի կողմերը գալով, կըսկսի քարոզել և վարպետութեամբ եկամուտներ պատրաստել լատինականութեան համար։ Քռնեցի Յովհաննէս հայ վարդապետն, որ աշակերտ էր Նչեցի Եսայի վարդապետին, կ'երթայ կը յարի Բարդուղիմէոսին և լատիներէն ուսանելով կըսկսին զանազան գըրքեր թարգմանել՝ Հայաստանի մէջ տարածելու համար։ Յետ ժամանակաց դառնա-

րով Յովհաննէսը՝ Քռնի աւանը՝ կը գրէ իւր աշակերտակիցներուն, որ ժողովին եւ Բարդուղիմէոսի հետ խօսին ու խորհին կրօնական եւ ծիսական վարդապետութեանց վրայ։ Աշակերտակիցներէն ոմանք կը ժողովին եւ մոլեռանդութեան ուխտը կ'ուխտեն ազգային աւանդութիւններն խիստ թողուլ եւ բողոքական պաշտամունքներով վարիլ։ Երբ կրակին իրենց նենգ ուխտը կատարելու աշխատին եւ ժողովրդին եւս ծիսափոխութիւն քարոզել, դժուարութիւններն ու աղմուկները կը սաստկանան։ Այսպէս վարդապետն յանդիմանական գիր կը գրէ Քռնեցւոյն եւ իւր համախոհներուն, որ թողուն իրենց ազգավնաս ընթացքը, սակայն նոքա չեն անսար եւ կը շարունակեն իրենց մոլորութիւնը։ Հայոց առաջնորդներն ու վարդապետները զայրանալով հալածական կ'առնեն Քռնեցեան կարգափոխներն եւ ոմանք կը կալանաւորին Լեւոն թագաւորի հրամանաւ։ Հալածեալ ծիսափոխներն Լեւոնի վրայ ամբաստանութիւններ կը գրեն պապին, ներկայացնելով իբրեւ խափանիչ ուղղափառութեան, եւ այս պատճառաւ Պապը կը ժխտէ իւր խոստումը, որով դրամական օգնութիւն խոստացած էր Լեւոնին եւ գիր կը գրէ Յակոբ կաթողիկոսին՝ չը հալածել Քռնեցեան դասախումբը, եւ կաթո-

զինուոր կը ճանչնայ կերպով մը խաղաղական, բայց չը յաղթողներ ։ Ընդդրուագմէրու կը մեռնին եւ Պունեցին ՚ի Հռովմ կ'ապաստանին եւ Յով-հաննէս պապէն օժանդակութիւն գտնելով ու հրաման առնելով կը դառնայ եւ կը հաս-տատէ Հայաստանի մէջ Պոնտիկեան Միհրա-րայ խորհը, որ լատիններէն Անիթոս կը կոչ-ուին ։ Պապէն վաւերացուած այս Անիթոսու-կան կարգաւորները կրօնական զանազան վան-քեր շինել, լատինական գրքեր թարգմանել եւ իբր թէ ժողովուրդն ՚ի մոլորութենէ յուղ-ղափառութիւն դարձնելու ջանալ ։ Այլ որ Անիթոսութեան կը յարի, կը տեսնուի նոր միրտութիլ ու ձեռնադրութիլ եւ Դոմենիկեան կարգի լատինական զգեստը հագնիլ ։

Անիթոսութեան գլխաւոր արդասնեակ-ներ կը դառնան Սրմիոյ Ներսէս եպիսկոպո-սըն, Պալքէնց եւ Կարնոյ եպիսկոպոսն Մխիթան Պէկ, որք կը սկսին Հայոց միրտութեան ու պատարագը երկպայելի քաղաքներ եւ բաղա-նիքներու, տուներու եւ այգեստաններու մէջ շատերը ծածուկ միշտել, որովհետեւ ստատիկ երկիւղ կը կրէին յայտնապէս ի-րենց ցնորքները գործ դնելու ։ Վասն զի Ազ-գըն իրենց դէմ էր ։ Յակոբ կաթողիկոս եւ Լեւոն թագաւորն իշխանական ատեանը Ա-նիթոսներէն ոմանք կ'աքսորեն, ոմանց պատ-ժէ կտրատեան եւ ոմանք կը կապանաւորեն,

որոնց հետ Ամենան և Ներսէս եպիսկոպոսա-
ները , ու կարգէ և եկեղեցական հաղոր-
դութենէ ետ կը լուծուին : Ամեկայն կեր-
ծաւորութեամբ բանաստեղծութենէ վերստին
ապաւինելով՝ Ներսէս Կանեցոյ քերդին մէջ
կ'ամփոփուոյ և գեղաթողիկոսն ամբաստանելով
խառնակութիւն կը յուզէ և հաղիւ հազ քար-
կոծուելէ զերծանելով հեռացող անդեր
կ'ապաստանի : Կաթողիկոսն գիր կը գրէ պա-
պին Ինոկենտիոս ուղղել և Եկեղեցւոյ
խաղաղութիւնը ապահովել . բայց Ինոկենտի-
ոսն խռովքը կը յանձնէ Թադէոսին ու
կաթողիկոսը ամբաստանել գրով պապին
առջեւ և այսպէս իր դիրքը ապահովել :

Այն միջոցին եգիպտական բռնաւորներուն
վերստին կ'սպառնային Կիլիկիա և Լեւոնին
որդուն կը պահանջէին , որ ամենեւին չը
թողնելով պատերազմ և կամ Մսրեւմանեան Թա-
գաւորաց հետ : Լեւոն կ'երդնու և երկիրը
փոքր ինչ կը խաղաղի . բայց Բենեդիկտոս
պապին , ընդդէմ խոյսի , իրաւունք կը հա-
մարի կոնդակաւ Լեւոնի երդումը լուծել
և ազատել , որ իր ընտանութիւնը չըպահե-
լեցնէ Մսրեւմաներէն : Լեւոն կոփորէն կը
հաշտուի և կը դրժէ իր երդմունք և այսպէս
Եգիպտացիք գալով Կիլիկիոյ կատարելութեամբ Կի-
լիկիա թափուելով՝ բերդերուն անգամ կը կոր-
ծանեն : Կաթողիկոսն Յակոբ կը գժտուանքի

Լեւոնի արարմանց դէմ և Լեւոն զայրա-
նալով՝ աթոռէ կ՚ընկէնու կաթողիկոսն և
տեղը կը հաստատէ Մխիթար Գռներցին :
Ներսէս Պալիենց, իսկոյն կը դիմէ Մխի-
թար կաթողիկոսին, պաշտպանութիւն գըտ-
նելու յուսով. բայց չընդունուիր. ուստի
և զայրացած կը դիմէ Բենեդիկտոս ԺԲ Պա-
պին, որ Աւինիոն քաղաքի մէջ էր,
և կը մատուցանէ գրքոյկ մի, Ունիթոռա-
կան խումբի հնարագիտութեամբ յերիւր-
ուած և 117 գլխաւոր յօդուածներէ բաղ-
կացած, որոց մեծ մասն ստայօդ զրպարտու-
թիւններ էին Հայոց դաւանութեան վրայ.
բայց յիշուած էր նմանապէս որ Հայոց կա-
թողիկոսն ամենեւին պապական գլխաւորու-
թիւնը չընդունիր և իւր ընտանութիւնը
Լատինաց հետ միայն արտաքուստ և առ-
երեւս է : Պապն իսկոյն սոյն գրքոյկը Կիլիկիա
կը ղրկէ և թուղթ կը գրէ Լեւոնին ու Կա-
թողիկոսին որ ժողով գումարեն և պատաս-
խանեն գրքոյկի պարունակութեանը : Տակա-
ւին ժողովը չգումարուած՝ Լեւոն կը վախ-
ճանի, իսկ Մխիթար կաթողիկոսն նորընտիր
Կոստանդին Թագաւորի հետ (որ ՚ի հօրէ
Լատին էր) եպիսկոպոսներ և վարդապետ-
ներ կը հրաւիրէ ՚ի Սիս, ուր քննութեան
կ՚առնուի Ունիթոռական գրքոյկն, կը գրուի
պատասխան և պաշտպանութեան ձեռքով

կը զիջուի Բենեդիկտոս պապին, որ արդէն փախստական էր. ուստի իւր յաջորդը Կղեմէս Զ կ՚ընդունի պապադաւանութիւնն ու պատասխանատուութիւնը և սաստիկ կ՚ուրախանայ. բայց որով, Անտիթեաց ինքնահանընար զղջախոստութեանց հերքումէն զատ, պատասխանատուութեան մէջ կայծին քանի մի շողքորթութիւններ եւս. որք խիստ հաճոյական էին պապին և որոց համար գոհունակութեան կոնդակներ կը գրէ Հայոց կաթողիկոսին և թագաւորին։

Կոստանդին թագաւորն յայտնապէս կը սատարէ Հայերուն, որ լատինական ծիսին վարին, և այս պատճառաւ կը սպանուի զօրականներէն և կը յաջորդէ իւր եղբայրն Գուիդոն, որ նմանապէս կը սպանուի իւր նախարարին ընթացքով փարատելու համար և կը յաջորդէ Կոստանդին անոր 'ի հօրէ հայ, որ և կը սկսի մտերմաբար թղթակցիլ պապին հետ, Երուսաղէմի թագաւորաց օժանդակութեանը ապաւինելով։ Եգիպտացւոց Մելիքեան այս լատինական մտերմութեան առթիւ Կիլիկիա կը յարձակին քրիստոնէական կրօնքը սպառնալով ջնջելու, որով և սաստիկ պատերազմներ կ՚ըլլային։ Կոստանդին օգնութեան կը խնդրէ Երուսաղէմէն և կը խոստանայ, յետ յաղթութեան, բոլոր Հայերն լատինացնել ծիսիւք և դաւանութեամբք։

Մխիթար եւս գրութեանց կը խնդրէ պատ-
ճէն դաշնադրութեանց կրօնական հայրապետութե-
քին ու պատճառներն նշաններին, զորս կը յուզէին
Լատին կրօնաւորներն, և իր հայրապետա-
կան իշխանութեան արգելք կը դառնային։
Պապը կաթողիկոսի թուղթը, (որուն մէջ
պապութեան համաձայնական ներածութիւն և կայսրին)
կը ներկայացնէ Ներսէս Պալենցին և միւս
Ունիթոռներուն, ասոնց ալ դէպ նախատական։
Բայց նոյն կը հաւատայ որ Մխիթարայ
գրութիւնը լոկ քաղաքավարական է. իսկ իր
րօք ոչ պատշաճական գլխաւորութիւն կրնանա-
չէ նա և ոչ Կիլիկիոյ ղրկուած պապական դեսպա-
պաններուն կ'անուանէ։ Պապը կը փրկէ և
գրաւոր երդումն կը պահանջէ կաթողիկոս-
նէն. բայց ստակաւ էն պատասխանն չըմբռնու-
նած կը վախճանի։ Կաթողիկոսն գրաւոր եր-
դումն չըտար, այլ միայն Օձնիս Մասեցին
(Երբենեան կաթողիկոս) Ինքն Պալենցի եր-
թալով կերպով մը կը հանէ Լեռնակենաց իշխա-
ջ նոր Պապին առջև և դաւանելով 'ի Կիլիկիա
Մխիթարայ մահուն զինք վերստին կաթողի-
կոս կ'ընտրուի (1355), և 4 տարիէն յետոյ
վախճանելով՝ աթոռը կը յաջորդէ Մեսրոպ
Արտազեցին, Թէոդորի վանուց վանահայրը։

Կրօնական վէճերն անընդհատ կը շարունա-
նակէին, մանաւանդ Ունիթոռաց շնորհիւ,
և Հայ եկեղեցականներէն ոմանք տեղեակ եղան

Զբաղումն պատմագրութեան ։ Ուստի Նորբերթոսի կաթողիկոսին ժողով կը գումարէ Սիս մէջ, ուր և ժողովականաց համաձայնութեամբ պատուէր կը գրուի ամէն տեղ, որ անփոփոխ պահպանեն Հայաստանեայց Եկեղեցւոյ աւանդական սովորութիւնն, այն է անապակ գինեաւ պատարագելն։ Մեսրոպի կաթողիկոսութեան չորրորդ տարւոյն մէջ Կոստանդին թագաւորն կը վախճանի և տեղը կ'ընտրուի Լեւոն Զ Լուսինեան, Գուխոնի ազգական[illegible] թագաւորութեան ժամանակամիջոցը Սուրբնե անցիշխանութեան վերջին ձգնաժամը կը կազմէ և պատերքին ու ներքին աղէտից յորդութեան սարսափելի վայրկեանը։ Այն կազմէն ապացուցին քաղաքական կացութիւնը կը բացայայտ Եգիպտոսի և Բաղդատի Սուլթանաց ապիւնահեզ յարձակմունքներով և միւս կողմէն կաթողիկոսական իշխանութիւնն արհաւրաց մէջ կը տատանի։ Լեւոն, քանի մի պատերազմներ մղելէն ըզկնի, կը կալանաւորուի և քանի մի կաթողիկոսունք, որոնք Մեսրոպայն կը յաջորդեն, ինչպէս են Կոստանդին Գ, Պօղոս Ա և Թէոդորոս Բ, Թագաւորական կը չքին և հալահաց ձեռնադրութեան և միւռոնի օրհնութեան համար կ'արժանանան կաթողիկոսարանի եկեղեց տուներ. որովհետեւ Սիլվիս արհաւրանաց ասպարէզ կը դառնայ։ Լեւոն Թա-

գաւորն հպատակութենէ ազատուելով և Երուսաղէմէն Եւրոպա անցնելով՝ կը թափառի Սպանիոյ, Իտալիոյ, Անգղիոյ և Գաղղիոյ մէջ, օգնութիւն գտնելու և իւր իշխանութիւնը կանգնելու յուսով. բայց չըհասնելով իւր նպատակին՝ կը վախճանի (1393) Փարիզի մէջ և կը թաղուի Կելեստինեանց վանքի մէջ, որուն հետ կը թաղուի նմանապէս և Լուսինեանց թագաւորական Հարստութիւնը։

Թէոդորոս կաթողիկոսն եւս կը կալանաւորուի Մելիք Օմար բռնաւորէն և կը սպաննուի (1395) 18ամեայ կաթողիկոսութենէն զկնի։

Այսպէս ահա Կիլիկիոյ վերջին թագաւորներն և խեղճ կաթողիկոսներն ո՛չ միայն չեն շահիր լատինական ընտանութենէն և յարաբերութենէն, այլ մի կողմէն եգիպտական Սուլթանաց զայրոյթը առաւել գրգռելով՝ պատճառ կը դառնան Լուսինեանց թագաւորութեան բարձման, և միւս կողմէն Եկեղեցւոյ ներքին խաղաղութիւնը կը վրդովեն տարապարտ ժողովներով, ծիսական վէճերով և կրօնական երկպառակութիւններով։ Թողունք անել այն տղաւոր վարդապետութիւններն ու դաւանաբանական խնդիրները, որոնք լատինացեալ Ունիթոռաց շնորհիւ կը յուզուին Հայաստանի մէջ բա-

նիւ՝ և՛ գրով և Եկեղեցւոյ նախնիքին անարատութիւնն ու պարզութիւնը պաշտպանելու կը ձգտին։

Է.

Դարձեալ մի քանի խօսք Ունիթօռաց վրայ.— Լանկ-Թամուրեան արշաւանքները.— Հաւատարմութիւնք.— Կաթողիկոսունք.— Կարապետ Ա Կեղեցի, Դաւիթ Դ. Կարապետ Բ. Յակոբ Բ. Գրիգոր Ը Խանձողատ. Պօղոս Բ Առաքելեցի. Կոստանդին Ե Վահկացի. Յովսէփ Գ Սսեցի. Գրիգոր Թ Մուսաբէկեան։

(1396_1440).

ՈՒՆԻԹՕՌԱՑ գլխաւոր կեդրոնատեղին էր Սիւնեաց աշխարհի Քռնայ գաւառն, և այս պատճառաւ կը կոչուին նաև Քռնեցիք կամ Քռնիեցիք. իսկ իրենց քարոզութեան վայրերն էին գլխաւորապէս Քռնայ, Նախիջեւան (ուր կը նստէր իրենց առաջնորդ եպիսկոպոսն) Երնջակ և Գողթան գաւառները, և Թաւրիզու, Մարաղու և Սուլթանիոյ կողմերը։

Այս Ունիթօռական վրդովման միջոցին, որ երբեմն կը սաստկանար զանազան երկպառակութեամբ, և երբեմն կը մեղմանար, կային Հայոց մէջ ևս նշանաւոր վարդապետ-

ներ, որոնք բանիւ և գրով ընդդէմ կը զինէ-ին Ունիթոռութեան: Նշանաւոր վարդապետ-տաց կարգէն էր Յովհաննէս Որոտնեցին, մականուանը Կախիկ, Վանանդ գեղջէն, Իւա-նէ իշխանի որդին, որ կանխապէս աշակեր-տելով Նչեցի Եսայի վարդապետին, ինքն եւս Տաթեւու վանաց մէջ կ'ուսուցանէր վարդապետական ուսմունքներ: Սորա աշա-կերտներէն էին Մաղաքիա վարդապետ և Գրի-գոր Տաթեւացի, որոց առաջինն իշխանաց և մեծամեծաց ձեռքով շատ Ունիթոռներ կը պատուհասէ և ինքն թունաւորուելով Ու-նիթոռներէն կը մեռնի; ինչպէս կը պատմէ իւր աշակերտն Թովմա Մեծոփեցի: Իսկ երկ-րորդն նախ ուսուցիչ կը կարգուի Ապրակու-նեաց վանքին մէջ և ապա իւր վարժապետէն մահէն վերջ կը փոխադրուի Տաթեւու վան-քը, ուր հաւաք և կը կոչուի Տաթեւացի, և այս տեղ ուսուցչութեան հետ միասին ան-պարտելի ախոյեան կը հանդիսանայ Ունիթո-ռութեան դէմ, մանաւանդ գրաւոր երկա-սիրութեամբք, որոց վրայ պիտի խօսինք ներ-կայ Շրջանի մատենագրական պատմութեան մէջ, ինչպէս և պիտի խօսինք սորա ժամա-նակակցաց վրայ:

Մինչդեռ մի կողմէն Ունիթոռութիւնը կը վրդովէր Հայաստանեայց Եկեղեցւոյ ներ-քին խաղաղութիւնը, միւս կողմէն եւս Մու-

ընծայեցան թագաւորութեան բարձրացման մինչդեռ 'ի մէջ Անգլիականութեան արիւնոտ սուրը սկսաւ. եր բարձել Հայաստանի զաւակները ։ Բանագէտներ և գիտուններ սակաւ ժամանակի մէջ կը փայլեցնէին, ընտանեկին ու անձնապաշտները փառասիրական ժողովրդեան ապաստանարան դարձած էին, ինչպէս էր 'ի ժամանակս Վարդանանց ։ Իսկ կուսակալութեան, հայ-դենշուանեաց, որք ոմն թագաւորութեան-րուն եւ սովամահներուն թիւ չը կար ։ Կամին որ թէ Անգլիականութի և թէ իւր յաջորդաց ժամանակ Հայաստանի Ռուբե-նեանց մինչեւ Ռուբինեանք, Վահէն մին-չեւ Սմբատայ հաստատեա թէ տեղ չը-մնաց, որ աւերման և արիւնհեղութեան չը հանդիպի ։ Թողուենք ասել, որ շատերը գե-րուեցան և շատերն եւս իրենց գաղթեցան զանազան երկիրներ, որոց մէջ բազմաթիւ էին մնացականք Պօլիս գաղթականներն ։ Թէև այսու և Անգլիականութեանց արշաւանաց մի-ջոցին գաղղիս հասնելու Հայոց ազգի կեան-քը տեսակ մի նահատակութիւն էր, ինչ-պէս և կ'ասէ յիշատակարան մի. «Ն յիշատակ էին նահատակներ, մինչեւ նոքա մինչեւ զի-տել զի թէ բազմութեան նոցա, որ պատ-կերն գնաս ։ բայց ժամանակներին պատ-միչներին ասկանել յանուամբ եւս անձինքներ կը թուէին, որք մանրամասնութեան իւրենց հա-

ւատքը չուրանալուն համար, և որոց մէջ կա-յին եպիսկոպոսներ, կաթողիկոսին Աղթամարայ Զաքարիա, վարդապետներ, քահանաներ, դեռ անհաստատ պատանիներ ու օրիորդներ, և ուր հաստատուն այրք և կանայք. Բայց մեր ա-մի պատմիչներուն այս նահատակութեանց դէպքերը՝ շատ երկար կը լինի։ Սակայն հար-ցաքննութեան թողլով կարդալ ուր հարկին է, դառնանք դարձեալ մեր պատմութեան թելը շարունակելու։

Թէոդորոս Բ՝ն կը յաջորդեն Կարապետ Ա. Սսեցի մականուանեալ (1396), Պօղոս Գ. Կարապետ Բ (1402) և Յակոբ Գ (1409), որ կաթողիկոսական աթոռն կը դրուէ առանց համաձայնութեան Սսոյ ռամկաց միաբանից և յատկապէս պաշտպանողութեամբ Կիլիկիոյ ամիրային։

Յակոբ Գ՝ի կաթողիկոսութեան ժամանակ Վասպուրականի առաջնորդներն ու իշխան-ներն միաբանելով յիշխանութեան կ'ընկենուն Աղթամարայ կաթողիկոսն և կը գրեն 'ի Կի-լիկիա, որ խնդիրք հաճ և հաւան են Սսոյ կա-թողիկոսին. հաղորդակցին . . . ուստի և Յակոբ օրհնութեան գիր կը գրէ յիշեալ իշխաններ-ուն և առաջնորդներուն. սակայն Աղթա-մարայ կաթողիկոսի պաշտպաններին վերաբերմին կը նեղացանեն. իսկ Յակոբն եւս իւր հա-կառակորդներին թիւնաւորուելով կը վախճ-

ժամի երկամեայ կաթողիկոսութենէ զկնի ։

Խաչատուր Թիւանենը կը յաջողի կաթողիկոսական ընտրութեան համար և Գրիգոր Ը Խանձողատ կը յաջողի ընտրուիլ · սակայն եօթնամեայ կաթողիկոսութենէն զկնի կ'աքսորուի Անեցիներէն անտուր բերդ մը, ուր և կը փախճանի ։ Կաթողիկոսական փոփոխութեան այս տարօրինակ ժամանակին Արևելեան Հայք արտաքին թշնամեաց ստէպ ստասպանքներուն մատնուած ըլլալով՝ չէին կարող դարման մատուցանել · այլ միայն խորհրդով եպիսկոպոսաց և վարդապետաց գիր կը գրեն՝ Երուսաղէմի Պօղոս առաջնորդին, որ ծննդեամբ Արարատեան էր, որպէս զի Սիս երթայ և խաղաղութեան ու օրինաւորութեան միջոցներ խորհի ։ Պօղոս Կիլիկիա երթալով՝ կը խօսի Հայրապետանոցի միաբաններուն և կը յորդորէ անձնական կիրքերն ի բաց թողուլ՝ արժանաւոր կաթողիկոս մը ընտրել ։ Նոքա միաբան համաձայնութեամբ կ'ընտրեն զնոյն ինքն Պօղոսն, որ կրկնակի բարեկարգութեան ձեռնարկել, բայց ամենաւին իւր նպատակին չը հասած՝ կը փախճանի, 12 ամեայ կաթողիկոսութենէն զկնի, և կը յաջորդէ Կոստանդին Ե. Վահկացի ։

Կոստանդնի կաթողիկոսութեան երկրորդ տարւոյն մէջ Եւգինեոս Դ. Հռոմէական պապը կամենալով ձայնով զատ միաբանել, բոլոր քր-

ըմբոստանալէից միաբանութեան. կամ լաւ եւս ասել պապականն իշխանութեան հպատակե-ցնելուն համար՝ կոնդակ մը կը դրէ ինչպէս Յու-նաց պատրիարքին, նոյնպէս եւ Հայոց Առա-ջնորդին կաթողիկոսին, եւ կը ղրկէ Երուսա-ղէմի Յակոբի պատրիարքին Հայոց, որ հաս-ցնէ կաթողիկոսին. Առաջնորդին պապական կոնդակին ստանձնալով եւ խնամելով, որ առանց համաձայնութեան եպիսկոպոսաց Մեծին Հայ-ոց, կարող չէ վճռական պատասխան տալ, պապականն կոնդակին կը ղրկէ Տիգրանակերտա-ցի Մ՚կրտիչ Նորոյ մականուանն եպիսկոպոսին, որ համբաւաւոր էր նոյն ժամանակի, եւ նա պատասխանելով յիշեալ կոնդակին՝ կը գրէ որ Հայք բաց ՚ի տիեզերական նախնին ե-րեք ժողովներէն չեն կարող ուրիշ ժողովի մասնակցիլ, երկրորդէն յիշեցնելով քաղկե-դոնական ժողովի անցքերը, եւ այս պատաս-խանադրութիւնը կը ղրկուի կաթողիկոսին Ըզգըլմեհ սարկաւագի Տեառնէ, որպէս զի անօրինէ ՚նա, ինչպէս արժանն է։

Առաջնորդին մինչդեռ կը խորհի այս պատ-ասխանադրութիւնը ղրկել առ պապն, թուղթ մի կը ստանայ Պ՚ըրխոս իմացնելով Սարգիս վարդապետէն, դրուած ստորագրամբք անձերոյն պապական հիւպատոսի, որով կը յորդորէր մասնակցիլ պապին մասնաւորեալ ժո-ղովին. Կաթողիկոսն կը նեղանայ ընդոյն ինքն

Սարգիս վարդապետն իւր քանի մի ընկե-
րակցաց հետ Իտալիա երթայ։ Յառաջ քան
այն վարդապետաց ժամանելն՝ ժողովն կը գու-
մարի Փերրարա քաղաքի մէջ, ուր երկար վի-
ճաբանութիւններ կը լինին Յունաց և Լա-
տինաց մէջ, և անկէ կը փոխադրուի 'ի Փլո-
րենտիա, ուր նոյնանմանապէս վէճերն կը շարու-
նակին և աւարտին. Հայոց պատգամաւոր-
ները չը հասած՝ ժողովը կ'աւարտի։ Այս ա-
տեն որոշուի թէ պապը ժողովական համաձայ-
նութիւնը Հայոց վարդապետաց կը տայ
Հայաստան բերելու, բայց թէ ինչ անցքեր
կ'անցնին այս վերադարձին ժամանակ Հայ-
ոց կողմէն, ամենևին յիշատակութիւն չը
կայ պատմութեանց մէջ. միայն այսչափը
յայտնի է, որ Փլորենտեան ժողովի համաձայ-
նութիւնը, որոյ գլխաւոր կէտերն էին
ամէն եկեղեցեաց ընդունել տալ Հոգւոյն
սրբոյ Բղխումն 'ի Որդւոյ, պապին Գլխաւորութիւնն,
քաւարանն, պետրոսեանական պահերն բաց լատինականին գա-
նէլը, Ջրախառն պատարագներն և այլն, երբէք Հա-
յաստանեայց Եկեղեցւոյ դռնէն ներս մը-
տած չէ. Հետևապէս կ'երևի որ հայ
պատգամաւորաց երկամեայ ճանապարհոր-
դութիւնն ապարդիւն աշխատանք եղած է։

Կոստանդին կաթողիկոսն պատգամաւո-
րաց վերադարձէն մի տարի առաջ կը վախճանի
և կը յաջորդէ Յովսէփ Գ. Սսեցի, որուն կա-

թողիկոսութիւնը հազիւ թէ մի քանի ամիս կը տեւէ և այն ևս դժգոհութեան տեղի տալով, որ և վախճանելով՝ կ՚ընտրուի Կիւրեղոր Բ. Մուսաբէկեանց։

Նախընթաց քանի մի կաթողիկոսաց պատմութենէն կը տեսնենք ահա որ Կիլիկիա տառապանաց մէջ էր, կաթողիկոսարանն կիսաւեր, ժողովուրդն վտարանդի և կաթողիկոսունք կ՚ընտրուէին առանց հաւանութեան ազգին և մանաւանդ առանց գիտութեան առաջնորդաց և իշխանաց մեծին Հայոց, և այսպէս Կիլիկիոյ աթոռն խորթացած էր ազգին առջեւ։ Մանաւանդ կը ցաւէին Արեւելեան Հայք, որ Կիլիկիոյ մէջ տեղ տեղ ծիսափոխութիւնք և աղաւաղումներ մուտ գործած էին, ուստի կը խորհէին հայրապետական Աթոռն վերստին փոխադրել ՚ի Վաղարշապատ։

Կիւրեղոր Մուսաբէգեանց կաթողիկոսանալով իսկոյն հինգ եպիսկոպոսներ կը ձեռնադրէ, որոնց վրայ Կիլիկիոյ միւս եպիսկոպոսներն բողոք կը գրեն Արեւելեան Հայոց և կ՚աղաչեն խնամք տանիլ կաթողիկոսական վիճակին վրայ, որ անշքութեան հասած է, հեռանալով ազգային ընդհանրութեան և գործակցութեան նախնական սկզբունքէն։ Արեւելեան առաջնորդներն ու վարդապետները վաղուց արդէն ծանօթ լինելով կաթողիկո-

ութեան տխուր վիճակին, բայց արտաքին վրդովմանց և հեռաւորութեան պատճառաւ չըկարենալով պաշտպանութիւն մատուցանել, երբ բողոքագիրն կը ստանան, միաբան հաւանութեամբ կը գրեն Գրիգոր Մուսաբէգեանին՝ գալ և Էջմիածին նստիլ, բայց նա յանձն չառնուր։ Ուստի կ'ըստիպուին մեծագումար ժողով գումարել Վաղարշապատի մէջ, բազմաթիւ եպիսկոպոսներէ, վանահայրներէ, երէցներէ, իշխաններէ, տանուտէրներէ, և այլն, իսկ չեկողներէն գրաւոր հաճութիւն կ'ընդունին, և այսպէս հաւանութեամբ Ազգին կաթողիկոս կ'ընտրուի Կիրակոս Վիրապեցին (1441) և կը նստի Էջմիածին։ Բայց որովհետև կաթողիկոսական աթոռոյ այս փոխադրութիւնն առանձին պատմական շրջան կը կազմէ Էջմիածնի մասնաւոր, կաթողիկոսութեան տեւողութեան հետ, ուստի առ այժմ թողունք զայս և իբրև լրումն նախորդ շրջանին՝ խօսինք նախ մատենագրական վիճակի և եղած երկպառակութեանց վրայ։



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.

Համառօտ տեսութիւն. — Ուսումնականք ԺԲ դարու. — Մատենագրական երկասիրութիւնք Յովհաննէս Սարկաւագի, Ստեփաննոս դաստիարակի, Գրիգորի Պահլաւունւոյ, Ներսէսի Շնորհալւոյ և պարունակութիւնք իւրաքանչիւրոցն։

ԱԶԳԱՅԻՆ մատենագրութեան հարստութիւնն կամ լաւ եւս ասել մտաւոր և բարոյական կենաց զարգացումն սերտ կապակցութիւն ունի ազգային պատմական վիճակի և կացութեան հետ։ Մեր ազգային պատմական կեանքն ուսանելէն զկնի կարող ենք արդէն դուշակել և չափել նորա մտաւորական և բարոյական զարգացման աստիճանը։ Ի՞նչ էր մեր ազգային վիճակը ԺԲ դարէն մինչև ԺԶ դարն, եթէ ոչ անընդհատ հարստահարութիւններ արտաքին թշնամեաց կողմէն, կրօնական վէճեր և բռնաբարութիւններ Յոյն և Լատին եկեղեցեաց կողմէն, և մանաւանդ վերջին ժամանակները ներքին երկպառակութիւններ՝ Անիշխանութեան

եղանակն ։ Հետեւաբար ՚ի զուր կը լինի մա-
տենագրական բաղդատագրութեան [illegible]
որոնել այն Շրջանին մէջ եւ ազգային կար-
գադրութի՝ մտաւորական եւ բարոյական ։
Այսոն դէ՝ Մոզէն ընդհանրապէս արհեստական-
նաց եւ փոփոխման մէջ էր եւ մատենագրական
զարգացման միակ [illegible] են
վանքեր եւ մենաստաններ, եւ այդ թուին է
կրօնական գրուածոց մեկնութիւններ եւ սակա-
ւին պատմական անցից ժամանակագրութիւններ
կամ նկարագրութիւններ ։ Ինչպէս ազգային պատ-
մական կեանքեն կարելի է խոր մտաւորական
եւ բարոյական վիճակը կշռել, նոյնպէս մա-
տենագրութեան [illegible] եւ եղած
երկասիրութեանց անուանքեն կարելի է Ազգի
վիճակը պատկերացնել ։ Բայց այս՝ Համեմա-
տական կշռադատութիւնն անգամ գծուա-
րին է բաղդատմանն իրերւ առաջ եւ [illegible]
ենթադրել մեր ազգին նկարագիրը, որովհետեւ
ոչ թէ մատենագրաց եւ թէ գրուածոց եր-
կասիրութեանց մասնաւոր յաջողութիւն-
ները եւ մասնաւոր գրուածոց ազդեցութիւն
են բայց թէ ազգային փառաւորութենէ յա-
ռաջացած [illegible] ։ Այդ ատենն ու-
րիշ [illegible], երբ մատենագր[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] թէ [illegible]

ուսմանց մեր և թէ միաձայնութեամբ, այսինքն գլխաւորացն կրօնականաց ։

Երրորդ դարու գլխաւորք ուսուցիչքն էին — Կիւրեղ՝ փոքր Հայոց մէջ. Աստուածատուր Սիւնեաց մէջ. Պետրոս՝ Մեծ Հայոց մէջ. Աստուածատուր՝ Կեսարիոյ ... մէջ. Պատմագրութեան դարուն մէջ. Նոյն ... դարուն մէջ ... ։

Հինգերորդ դարէն յետոյ նշանաւոր են երկրպագութեան դարու մատենագրութիւնք, և եթէ նուազիցէ Հայոց դպրութեան պատմեգէն դար կը կոչուի, երկրորդն անշուշտ կոչւող է ... դար, որուն մէջ ... Հայ մատենագրութեան մէջ ։ Երկրպագութեան դարու մատենագրութիւնք ... են, որոնց երկրպագութեան ... գերն ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ, Եպիսկոպոս Տարօնոյ ... Սա ... Տօր ... և Հայաստանի ... կ'ուղարկէր և այն ... կը կրթուի և կը ... մէջ ։ Կը ... Հայոց ... ուսումն ... գրութեան ... որ ...

շարժառիթն էր, քանզի իւր կարգաւորած տու-մարը, որ Սարկաւագադիր կը կոչուի, հաստա-տութիւն չգտանէր Անիին մէջ, այլ այն տու-մարը կը գործածուէր, որ Կամրջաձորեցի Սամ-ուէլ կաթողիկոսի օրով հաստատուած էր.

... Յովհաննէս Սարկաւագ մեծ փոյթ կ'ու-նենայ մանկանց դաստիարակութեան հա-մար և ի վերջոյ Հաղբատայ վանքին առաջ-նորդ կը կարգուի. և [illegible] աշակերտելը վարժել կը պատրաստէ [illegible], որ իւր [illegible] նահանգէն. Վրաց Դաւիթ թագաւորը [illegible] համբաւէն՝ իրեն թագաւորը [illegible] [illegible] առջեւ և [illegible] [illegible] :

Յովհաննէս Սարկաւագի անուանը յիշա-տակուած երկասիրութիւնները այսոնք են:

1. Պատմութիւն, որուն սկսած է Սելճու-կեանց. Տուղրիլեանց. Ալփասլանայ և իւր որդւոյն Մելիք Շահի արշաւանքներէն. սակայն այս պատմական երկասիրութիւնը մեզ հա-սած չէ. Թէպէտ և վերջին դարուց քանի մի պատմիչներն՝ Կիրակոս, Վարդան և Միխի-թար Այրիվանեցի յաճախակի կը յիշատա-կեն նորա պատմութիւնը և տեղ տեղ հա-տուածներ կ'առնուն:

2. Ճառ յաղագս տիեզերագիտութեան, որուն գե-ղեցկագէս կը նկարագրէ [illegible] [illegible] Աստուծոյ և փորձական, և մի [illegible]

մի կը յիշեցնէ քահանայապետական [illegible] [illegible] քերթը և նոյն [illegible] կոչման հանդիսաւոր խորաններ կ'առանձնէ . 3. Ներբողեան, զորս կը յիշատակէ [illegible] [illegible], [illegible] [illegible] երգութեամբ լի . 4. Մաշտոցը, որուն մէջ ամեն հաւատքի և [illegible] մէջ զանազան [illegible] գիրք [illegible] խորհուրդ [illegible] և [illegible] մեծամեծ [illegible] զանազ. 5. Շարականն Սրբոյ Գէորգայ [illegible] — [illegible], որոց նոյն արժանաւոր քահանայից [illegible] հանդիսաւոր [illegible] երգած է քահանայ [illegible] կոչման [illegible] [illegible] . 6. Ի Սեբաստիա, որ մի՛ հրաման և գեղեցիկ քերթուած է սարեակ թռչնոյն վրայ . 7. Բանք մի [illegible] [illegible] երկրաւորութիւններ [illegible] [illegible] [illegible] . Բան խրատու առ [illegible] և այլն, որոնք մեզ հասած չեն։ Սոյնք նաև քանի մի աստուածաբանական գրուածներ այն խորհրդոյ վրայ, որոնք [illegible] [illegible] [illegible] Հայոց և Յունաց մէջ։

Յովհաննէս որչափ որ Սարկաւագ կը կոչուի ընդ Հայաստանի, ընդ [illegible] կոչուի և վերջ [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] նին : Յովհաննէս Սարկաւագի աշակերտածներուն մէջ նշանաւոր են ԻԳՆԱՏԻՈՍ ՄԵԾԱՐԳՈՅՆ և ՍԱՄՈՒԷԼ [illegible] [illegible], որ Կ. [illegible] և Յովհաննու [illegible] [illegible]։

ներ շարադրուած են, Հիւսիսեւ [illegible] Բովանդ. [illegible]
եղած [illegible] եւ Հայ նշանաւոր մեկնիչներուն ։

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՄԱՆՈՒԿ, որ կը [illegible]
Ճուղը [illegible] Կարսախի մանկանց [illegible]
[illegible] ողջանեցի մարդավարութիւնը կը
քարոզէր որբանոցաց [illegible] մայրէն, եւ որուն
միայ աշակերտաց. Պարսից հայրապետին եւ իւր
[illegible] ու գաւառական իրեն [illegible], յոր-
դորելով շարունակ քարոզելու, եւ եկեղեցւոյ
այն [illegible] ձեռնարկներ եւ Կարսախի մայն
քի առաջնորդութիւն իրեն յանձնեց։ Մանու-
կեանները [illegible] գանձարան երկրաչափութիւն
նորս շարադրուած է, որոց մէջ յառաջաբան կը
յիշուի իւր Կոստանդնուպոլսոյ Պատրիարքը Մ[illegible]
հայրապետը, բայց մեզ հասած չէ. աշակերտ
իւր մեծ Համբարձում [illegible]
պատմէ իւր [illegible] աշակերտութեան Պիլիպոս
Գանձակեցին եւ իւր հայրապետ Մելքոնս
Շմաւոնեան, եւ Մաթէոսի ու Իգնատիոս միա-
բանականեն։

ԳՐԻԳՈՐ ԳԱՒԱՌԱՑԻՆ, որուն [illegible]
բայց [illegible] [illegible] խառնուած եւ իւր
Հայրապետական [illegible] աստուածաբանութեան [illegible], կը
[illegible] [illegible] [illegible] [illegible] իւր [illegible]
[illegible] եւ երկրաչափութեան [illegible]։
Գրիգոր մեծ փորձ կը [illegible] [illegible]

ծաղկեցաւ և նորա հրամանաւ. Սամուէլ երէցն կը շարադրէ Քրոնիկոնն կամ Ժամանակագրութիւնն, Իգնատիոս վարդապետն՝ Ղուկաս Աւետարանի մեկնութիւնն, Ներսէս Շնորհալին՝ իւր այլ և այլ գրուածները. իսկ Սարգիս Շնորհալին՝ կաթողիկեայց թղթերուն մեկնութիւնը: Գիրքը՝ ինքն անձամբ երկասիրած է Սևանեաց շարականը՝ Խորհրդոյն՝ անձամբ. Օծագործագրքի երկրորդման շարականները՝ Անձինք նուիրեալ այս խորհուրդ. և մի ընտիր մեղեդի՝ 'ի Յարութիւն՝ Ի յերկնուստ՝ արփի.

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ. — Շնորհալին թէ Հայոց հայրապետաց և թէ մատենագրաց շարքին մէջ խիստ նշանաւոր տեղ կը գրաւէ: Սորա հայրապետական գործերն արդէն տեսած ենք, նկատենք այժմ իւր գրաւոր երկասիրութիւնները:

Շնորհալւոյ երկասիրութիւններն արժանապէս գնահատելու համար երկու զատուածներ — Արձակ և Չափաբերական: Առաջին կարգին կը վերաբերին՝ աստուածաբանութիւն, թղթեր, վարդապետական գրուածներ, մեկնութիւններ, խրատներ և աղօթքներ. իսկ երկրորդ կարգին՝ ողբ, քերթուածներ, վիպասանութիւն և շարականներ ու երգեր.

Շնորհալին, որ 'ի մանկութենէ կրթեալ

ուած էր Մանփիանեան Մանուէլ վարժապետին մօտ և շարունակ. ջերմեռանդ էր իր եկեղեցւոյ հայրապետութեան։ Նիկողոս Պալճեանու իր կաթողիկային, երբ կղզեցաւ ի հասարակաց ընդհանրութեանց Հռոմէականէն և իր եղբայր կաթողիկային ձեռքէն ընդունելով հայրապետական գաւազանները, կաթողիկոսական քողն ու մատանին և աթոռն վրայ բազմելով, կը քանայ իր բազմաթիւ գերանն և մեծապատիւ բազմութեան առջև։ կը խօսի մի գեղեցիկ Լուսաւորչական. որով կը բացատրէ հովուական պաշտօնոյ ծանրութիւնը, իր անկարողութիւնը և ժողովրդեան ձայնին հպատակութիւնն իրեն. սասանսոծ այն ձայնի։ Իսկ երբ իր եղբայրն կը վախճանի՝ Ընդհանրական թղթով կը հրատարակէ նորա մահուան գոյժը, այսպէս կը վերջէ ողորմութեան վերջաւո-րութեան մի և յետոյ գեղեցիկ խրատներ կ'ուզէ բոլոր հայրենեաց հօտին. Նախ խրատը կ'ուզէ կրօնաւորներուն՝ երկինք առաջնորդ նմանելով. յետոյ վանաւորաց առաջնորդներուն՝ այլ կանոնով իրենց յանձնուած վիճակներուն եղբայրութեան մատակարարելու պաշտօնն. տաղաւ եպիսկոպոսներուն՝ զորս մերթ վեր և մերթ վար կը կոչէ և կը յորդորէ անխտիր կատարել իրենց վսեմ պաշտօնները. յետոյ քահանայից՝ զորս Աստուածոյ ժողովրդեան և գերադասութիւն, հայր և տէր կ'անուանէ։ Նաև

կարգաւ սրբոյնելոյն խորաններ կ'աւանդէ իւ-րանցաց, վիճաւորաց, քաղաքականաց, եպիս-կոպոսաց, ժողովրդականաց, և կանանց, և այսպէս խորհուրդ ընդ հանրաց հայոց. Հայաստա-նեայց Եկեղեցւոյ մեծ գերադասութիւնն՝ ա-մենուն կը յայտնէ նոյնեայ պարագան, նոյնեայ կոչումն և նոյնեայ առաքելական գործակցու-թեան մասին ու պատիւ:

Այս Ընդհանրականին վրայ նշանաւոր են Շնորհալւոյ միւս թղթերն, զորս գրած է թէ՛ իւր եղբօր հրամանաւ և թէ՛ իւրն ա-ռանձինն և որոնք են հետևեալներն. — 1. Թուղթ առ Ալեքսիոս իշխանն Մանուէլ, փեսայ Մանուէլ կայսեր, յորում մէկտեղ Հայաստանեայց Եկե-ղեցւոյ դաւանութիւնը կը դնէ և այսպէս կը պաշտպանէ այն աստուածաբանական վարդապետութեան, զորս Յոյնք ամբաստանէին մեր Եկեղեցւոյ ուղղ-դաւանութեան, կարգաց և ծիսից նկատմամբ:

2. Թուղթ առ կայսրն Մանուէլ, որ խնդրած էր Գրիգոր կաթողիկոսէն Ներսէս Շնորհալին ու-ղարկել զ'Ներսէս: Շնորհալին այս թղթով կը ծանուցանէ իւր եղբօր մահը, և իւր նոր ընտրուած կաթողիկոսութեան պաշտօնին ծան-րութիւնն յայտնելով՝ կը պատասխանէ որ չէ կարող Ներսէս Շնորհալին երթալ:

3. Թուղթ առ Մանուէլ կայսր երկրորդ ան-գամ, զոր կը գրէ Շնորհալին Թէորիանոսի խնդրանաց յաւելեալ կանոնականները՝ վերայ

ամբողջ՝ համար, որ յառաջուած էր Թէորիա-
նոսի միաբանութեանը, որ անձամբ եկած
էր կայսեր կողմէն առ Շնորհալին.

4. Թուղթ առ նոյն կայսրն երկրորդ անգամ, որով համառօտիւ կը յուշէ Շնորհալին թէ ինչ մտօք Հայոց Ս. Եկեղեցին կը դաւանի ի Քրիստոս.

5. Թուղթ առ Միքայէլ պատրիարք Յունաց, դարձեալ առ ատենին խնդրոյն միաբանութեան.

6. Թուղթ առ համօրէն եպիսկոպոսունս և վարդապետս Հայոց աշխարհին. — Սկսեալ Յորժամ միութեան խնդրոյն անդրդուելի կը յուզէին և ստասնակ կը ձանձրացնէին զՇնորհալին, այս պատճառաւ Ներսէսի հայրապետական նորմարերով որ յունական միջնորդութիւնը ոչ ինչ այլ իսկ յաջողի, ուստի ինքնին չուզելով այլ ևս թղթակցիլ, առանձին թուղթ կը գրէ Հայաստանեայց համօրէն եկեղեցականաց, Շղթայից աշխարհէն մինչև Սեբաստիա և Մելիտինեան կողմերը, և յունական հաւատոյ միութեան ծանուցանելով՝ կը յորդորէ, որ ամէնքը խորհին և պատասխանի զանոնք, ի պատասխանի Հայոց՝ ազգային պատասխանատուութեան և մերձաւորութեան յունական պահանջմունքներուն։ Յունաց ևս կը ծանուցանէ, որ առանց համաձայնութեան համօրէն եկեղեցական և ժողովրդական դասուց խորհրդակցութիւն կարող չէ ինքն Յունաց առաջար-

կաթուղիկոսներին եւ ոչ մին ընդունեցին ։ Մականունն Շնորհալին խաւր առ նոյն գրած ըղձականական թղթոյն պատասխանը վախճանւելին չկարացած կը վախճանի (1172), որուն մահուան գուժն առնելով կը հառաչէ կայսրն ասելով ։ « Մեծ եւ արթուն [illegible] մի բարձաւ Աստուծոյ Եկեղեցիէն » ։

Ներսէս Շնորհալին, ինչպէս 'ի վերոգրեալ թղթերէն, ունի այլ եւս մնացական թղթեր առ այլ եւ այլ անձինս գրուած, որք են.

1. Գիր [illegible] 'ի [illegible] Ա[illegible] է Արայ. — Արար քաղաքի Սարգսեան [illegible] պատը փափագմամբ [illegible]՝ Շնորհալին [illegible] [illegible] առաքինութեամբ եւ [illegible] [illegible] կը [illegible] դրէ [illegible] եւ վերադարձնելով այն [illegible] գիրը կը գրէ առ [illegible] յորդորելով՝ որ [illegible] [illegible] 'ի [illegible] Աղէի եւ Ներսեսեայ.

2. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] եւ [illegible] [illegible] [illegible] կը [illegible] եւ կը [illegible]) [illegible] գիր կը գրէն առ Շնորհալին [illegible] գիտել եւ [illegible] [illegible] [illegible] [illegible].

[illegible]

3. [illegible]

4. [illegible]

5. [illegible]

6. [illegible]

7. [illegible]

[illegible]

1. [illegible]

2. [illegible]

3. [illegible]

4. [illegible]

քան թէ Սարգիս Շնորհալւոյ մեկնութիւ-
նքն։ 5. Հաւատոյ խոստովանութիւն անուանեալն և քա-
ղանդերի աղօթքն, որ յորջորջուած է սրահական
քանի և չորս ժամուց Հաւատոյ։ 6. Թուղթն
Նամակի Կիլիկեցւոց նորընտրելոյն ... առ Իսահակ
ւորին Հայաստանեայց։ 7. Խրատ ժամերգ-
գութեան, որոնց վրայ ապացէն նախկինաց
գանձարանն Շնորհալւոյն մէջ խօսած էինք, թէ
ինչպէս Մարտիրոսաց և Ներսիսեանց վարդա-
պէտն Աստուածաբանութեան հետ որքանակից էր, ըստ-
ջել անկարելի, վասն զի այնչափ կենդանութիւնը
ընդ հանդուրժել գրքին մէջ, խօսա կարգա-
լով. որպէս զի նորանալ աստուածութիւնը
չորսաբերդին նախնեաց պատմութեանց մէջ։

Ներսէս Շնորհալւոյ արձակ գրուածոց
վրայ խօսեցինք զի յառաջ բերել յառաջ բերենք
նորա չափաբերականն կամ քերթողականն եր-
կասիրութիւնքն։

Ներսէսի չափաբերականն երկասիրութիւն-
քըն արժանաւորութեան ունին մեր Հայոց
մատենագրութեան մէջ առաջնակարգ, որ իբր զարդ
անմահական քերթողականութեան դար մը կը
զինուց և աշխարհագրութեանց, որով առ
Հայերն կենդանութեան գաղափարականն
էր՝ բանաստեղծութեան հանգերն ու աշխոյժը։
Ներսէսի քերթողականութեանց մէջ խօսք մը ա-
զատին սեպհական մտքին, զոր նոր երկայն
բանաստեղծութեան Հայրապետական ու երգերը, զորս

[illegible]

այն կարող ենք ասել, որ աստուածային սի-
րով վառուած մարդ մը այնչափ կարող է ար-
տադրել խոր զգացմունքներ, որչափ արտա-
յայտած է Ներսէս Շնորհալին իւր հոգե-
բուղխ նուագներով. Թէ ինչպէս մարդիկ ըն-
դարձուած են նոյն նուագներով ի սկզբանէ,
և այսօր զգածում են այսու հետև. Թէ քանի
սրտեր յուզուած են և այսօր յուզումն
բարեպաշտ խորհրդներով, և քանի ջերմ ար-
տասուքներ թափուած են և այսօր թա-
փումն անոնց զգայուն աղօթականներու աչ-
քերէն, այս անոնք կարող են խօսանս յայ-
տարար լինել նոյն նուագաց վսեմութեանն
ու գեղեցկութեանը. իսկ լեզուով ու գրը-
չով որքան խօսինք, դարձեալ լաւկին խօսած
չենք լինիր.

Շարականներէն ու երգերէն յետոյ նը-
շանաւոր են Ներսէսի յետագայ քերթու-
թիւնները. — 1. Ողբ Եդեսիոյ, զոր երկայնա-
բան է փոխաբերաբար Հայրապետն իւր եղ-
բօրորդի Սարգսի իշխանի խնդրանօք Եդե-
սիա քաղաքի ու երկրին վրայ, որ ու երկրցա-
ւ ահագին կոտորածներով Զանգի Ամիրայի
անգթութեամբ.

2. Յիսուս Որդի. — Այս ոտանաւոր եր-
կասիրութիւնը կարող է համարուիլ իբրև
համառօտ պատմութիւն Հին և Նոր Կտա-
կարանաց, աղօթական ձևով շարադրուած.

Ս. յիշեցեր՝ կ'երեւայ, որ ընթերցողը նախապատուի ունեցած է Ս. Պրոյ աստուածաբանութիւնը ըն-ւարձակել և գիտութեանց կենդանի առանձնել ընդ-թերցողաց, որուն վրայ երաշխաւորել հայա-գիտութեան մէջ՝ Յակոբ Վ. Սիսեցի գնահատել այսպէս կոչուած է՝ Ս. ... ազգային աստուածաբանութիւնը։

3. Բան հատուած. — Նոյն Ներսէս իր երկ-րայր Պրեզար կաթողիկոսի հետ Օտտոյ դը-դերանի աստուածաբանութ, ինչպէս աստուածաբանութեան գիտութեան մէջ. Նոյն մեկնու-թեան մէջ երկխօսութեամբ է այս շարադրե-բանական գրուածքը, ուր հերքել իր եզնայր ծնողաց և հայրապետաց վարդապետին։

4. Յաւելուած երկրին և ... — Այս երկխօսութիւնը շարադրուած է Ը ... Սեբաստացի բժշկապետ եւ աստուածաբանի խնդրանօք. ... զի աստուածաբանութեան մի հաստատեալ ... այսպէս է. "Սեբաստացի բժիշկ, ընկեր իմ Ներսէս. ... ։

5. Վ ... — Այս երկխօսու-թեան մէջ համաձայնութիւն աստուածաբանական է ... աստուածաբանութիւնն ... ։ Ներսէսի ... հաստատել ... աստուածաբանութիւնն կը հաստատէ։

Աստուածաբանական մեր երկխօսութիւններն այսպէս եղեն ... Ս. ... ։ Ս. ... Ա. ... եւ այլ ... ։ ...

Գրագիտական ճաշակի և անձի մասին խօսիլ Ներսէսի երկասիրութեանց վերայ մեր նպատակէն արտաքոյ է, միայն այսչափ կ'ասենք, որ աստուածաշնչաբանութեան մէջ հետեւած է արաբական նոյնավերջութեան, որոյ յաճախութիւնն ու նոյնաձայն միակերպութիւնը սակաւ ինչ ձանձրացուցած է քերթութեանց ոճը։ Բայց այնու ամենայնիւ կանոնաւորութիւնն ու փափկութիւնը շարունակ պահպանուած է։

Ներսէս Շնորհալի իւր հոգեշունչ երգերը ջանացած է մինչեւ անգամ հասարակ ժողովրդեան և զինուորաց ըմբռնելի ընել, ու առաք և Կիրակոս կը պատմէ, որ Ներսէս իւր ռամկայի երգասացներուն ուսուցած և պատուիրած էր, որպէս զի, գիւղերուն հունձութեան ժամանակ, փոխանակ վայրաբարոյ աշխարհականներու, երգեն «Յիշեսցուք 'ի գիշերի» ու արտասուալից նուագը։

Այսպէս ահա ակներեւ կը տեսնենք որ Ներսէս, ինչպէս իւր հայրապետական կոչման, նոյնպէս և գրական ասպարիզին մէջ, անխոնջ վաստակաւոր եղած է, որով և իրաւամբ «Շնորհալի» գեղեցիկ մակդիրին արժանացած։ Եւ երբ կը մտածենք, որ Ներսէս իւր մատենագրական երկասիրութիւններն շարադրած է արհաւիրալից ժամանակներու և հայրապետական ծանր պաշտօնին մէջ, իւր

յաւիտեան առ փառս քո առնել կը զբարեպաշտութեան մեզ հաւանեալ.

Բ.

Երկասիրութիւնք վարդապետաց. Սարգսի Շնորհալւոյ, Ներսիսի Լամբրոնացւոյ, Մատթէոսի Ուռհայեցւոյ, Սամուէլի Անեցւոյ, Մխիթարայ Հերացւոյ, Գրիգորի Տղայոյ, Մխիթարայ Գօշի, Խաչատրոյ Տարօնացւոյ և այլոց քանի մի վարդապետաց և պատմագրութիւնք իւրաքանչիւրոյն.

ԻԳՆԱՏԻՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ.— Սա աշակերտեալ էր Գրիգորի Պահլաւունւոյ, Ներսիսի Շնորհալւոյ և Սարգսի Շնորհալւոյ, որ Կարմիր վանքին մէջ իւր ուսման ընթացքը կատարելով առաջնորդեց. Շատեր աշակերտ ալ։ Գրիգոր Պահլաւունին առաջարկեց Իգնատիոսին Ղուկասու Աւետարանին մեկնութիւնը գրել, բայց սա ՚ի սկզբան իւր անկարութիւնը խոստովանելով հրաժարեցաւ, բայց վերջապէս սուրբ Թարգմանչացն աղօթիւքն (1146) սկսաւ մեկնել, հետեւելով մեծաւ ջանիւ Ոսկեբերանին։ Իգնատիոսի մեկնութեան երկասիրութիւնը համառօտագրուած է ներսիսեան, որոց մէջ փառքին կը փայլէ Ս. Գրոց տեղեկութիւն և աստուածաբանական հմտութիւն.

ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ, աշակերտակից Իգնատիոսի եւ այլոց ընկերաց։ Կարմիր անապատի մէջ իւր ուսումը լրացնելէն զկնի առանձնացաւ Սեաւ լերան Քարաշիթաւ վանքը եւ սկսաւ մեծ եռանդով ընթերցասիրութեան տալ իւր անձը։ Նախ սկսաւ Կաթողիկէից եօթն առաքելական թղթերն մեկնել, հետեւելով գլխաւորապէս Գրիգոր Նազիանզացին, Նիւսացին, Բարսեղին, Եփրեմին եւ Ոսկեբերանին։ Սարգիս իւր մեկնական երկասիրութեան մէջ ազդու պերճախօսութեամբ կը յարձակի մոլութեանց դէմ եւ փառաւորապէս զմայլմամբ կը դրուատէ առաքինութիւնը։ Սարգիս Շնորհալւոյ մեկնութիւնն երկու տեսակ է, ընդարձակ եւ համառօտ, յորոց վերջինն իւր ծերութեան հասակին մէջ աշխատասիրած է (1166)։

Սարգիս Շնորհալին ցանկալով ընթերցողաց միտքը լուսաւորելէն զատ՝ սրտին վրայ եւս ազդել եւ շարժել, մեկնութեան հետ աշխատասիրած է Յորդորակներ, որոնք իրաւ գեղեցիկ են եւ ճշմարտական։ Այս յորդորակներուն մէջ կ'երեւի վայելուչ պերճախօսութիւն, որոնք թէ գործնականաց եւ թէ իմաստից կողմէն երկասիրութեան նշանաւոր մասը կը կազմեն։

ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ. — Ծնաւ 1155ին, որոյ հայրն էր Լամբրոնի Օշին իշխանն, իսկ մայրը՝ Ներսէս Շնորհալւոյ եղբօր դուստրն Շահանդուխտ. Լամբրոնացւոյ մկրտութեան անունն էր Սմբատ, բայց Սկեւռայ վանքին մէջ ուսումը զարգացնելէն և հայ, յոյն, լատին և եգիպտական լեզուներ սովորելէն և համբաւ ստանալէն զկնի՝ Շնորհալին կոչելով առ ինքն քահանայական աստիճան տըւաւ, իւր անունն օծութեան հետ իրեն տալով:

Տակաւին քսան երեք տարեկան էր Ներսէս, Տարսոն քաղաքի եպիսկոպոսութեան և Սկեւռայ վանքի առաջնորդութեան պաշտօնն ընկալաւ և առաւել համբաւն տարածուեցաւ: Բայց արդէն պատմական մասին մէջ կարդացինք, որ սորա դէմ բաւական ամբաստանութիւններ եղան և ինքն ստիպուեցաւ իւր անձն արդարացնելու համար զանազան թղթեր գրել, որոց մէջ կ'երեւի, որ իւր վրայ եղած ամբաստանութեանցը գըլխաւոր շարժառիթն էր այն կասկածն, որով կը կարծէին Լամբրոնեցւոյն փառքապետը՝ թէ Ներսէս [illegible] հռոմէացիներու կամ լատինացուցնելու կը ձգտի և եկեղեցւոյն ծիսից մէջ նորութիւններ կը մուծանէ:

Ներսէս կը վախճանի իւր 46 տարեկան հասակին մէջ, թողլով բաւականին գրաւոր

երկպառակութիւններ, որոց նշանաւորներն են.

1. Ընդդիմաբանութիւնն, որ խռովեցաւ Հռ-ոմկլայի ժողովքին մէջ, Գրիգոր Տղայի կաթողիկոսութեան ժամանակ։ Ընդդիմախօսութեան գլխաւորը Նիւթն է քրիստոնէական ընդհանուր սէրն ու միաբանութիւնը հռչակել, և որչափ գովելի է իւր դիտաւորը, դժբաղդաբար Յունաց և Լատինաց համար սէրն ու միաբանութիւնն առիթ բան չէր, եթէ ոչ Հայաստանեայց Եկեղեցւոյ ստրկութիւնը. ուստի և Հայաստանեայց ատենաբանութիւնն ապացուցանելու համար, որովհետեւ աւելի որոշեց աւելի յունականն և լատինականն միջամտութեանց իրմէն աւելի հեռանալ աւելով նշանաւոր եղէն թէ ինչ բաներու մէջ կը կայանան։ Ներսէս և Գրիգոր Հայաստանեայց յետոյ զգացին, յունական մերձաւորութիւնները ատեններով, որոնց համար և յատկապէս Մխիթարեան պէտք գործեն գանելու և օգտուտ չբառնացաւ։ Հայաստանեայց անկախութիւնը զօրոյն է այերձախօս գաղձանաւորներով և խնամողներով, և այս պատճառաւ Լուսաւորչի քրիստոնէականներէն ամենը զինքը Պետրոսեանեցին և Ակիւղոսեանն կը նախանձեցնեն.

2. Անթիոքեան Պարտքադին, որ երկպառակեց Հայաստանեայց Տէրոս Լևոնեան առաջնորդ

նանք Գրագիտական և արուեստագիտական եր-
կայր ու քաղաքական զինուորութիւնն Ի բաց Թողլով
այս միայն կարող ենք համառօտակի ասել, որ
Մ'ամէնէ տաճկի երկրագործութեան մէջ կը փոր-
ձի նախնական հայր հայրենասիրութեան ։
Արտաշխարհ կերպով կը ներկայացնէ ամենից մա-
ղուրցի մարդասիրութիւնն քրիստոնէական
կրօնի սրբութեան համար ։ Կը ներկայացնէ
Տաւրոսի Հայոց զինուորութիւնը, որոնք
Խաչակրաց պատերազմ կ'արթուննէ ։ Կը փա-
ռաւորէ հայրենիքին պաշտպանող քաջերն
ու հօտը խնամող հովիւներն ։ Կը գրաւէ
Ի'ազգասէրներուն ցեղին սէրերն ։ Թագաւորն
Գագիկ Բ. որ գիտութեանց և քաղաքակրթու-
թեանց անուանի եղաւ, իւր հայրենիք մա-
ռանգութենէն զրկուելու մանաւանդութեանց
և պատմչաց, ու Թշուառութեան մէջ իր
կեանքը կնքեց ։ Ի խորոց սրտէ կը խօսի Մա-
Թէոս Փանեկոց դէմ, յունական միաւորու-
թեան դէմ, որոնք մախանաց գործակից
եղան անգղիստանեայ քանակլաներուն Հա-
յաստանն աւերելով բոլորը ։ Կ'ատանքէ նա
այնպիսի պատմական անցքեր Յունաց և
Հայոց վրայ, զորս իւր ժամանակակից պատ-
միչներն ամենեքին յիշատակած չեն ։ Կ'ատա-
ղէ նա և իւր պատմութեան մէջ երկու ազ-
նիւ յիշատակարաններ, այն է Զմէկիկ Թա-
գաւորի առ Աշոտ Թագաւորն Հայոց գրած

Թուղթն և Գրագիրքի խառած աստուածաբա-նութիւնն Կ. Պօլսոյ Սաֆիա եկեղեցւոյն մէջ. Գրուած կամ Տռանկին կայսեր և յունական եկեղեցի առաջնոր ՚ի պատշաճաբանութիւն դաւա-նութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ.

Մ՝աղթէոսի պատմական երկասիրու-թեան Շարայարութիւնը կըրցին Գրիգոր երէցն, որ կը պատմէ Յունաց Կոստանդնա կայսեր առա-ջնորդութիւնը Ճ՝ալիսս և ՚ի Կիլիկիա. Եղեսիոյ առումն Զ՝անգի խանէն ձեռքով, Խլիճեց Արսլանայ Թշնամական և բարե-կամական յարաբերութիւնն Սուլթանաց հետ, Խաչակրաց քանի մի դէպքերն և Վ բաց Թագաւորաց Լ՝եւոն և Թորոսին քաղաքաց հա-ւաքած զօրութեանց, և այլն (1).

ՍԱՄՈՒԷԼ ԵՐԵՑ ԱՆԵՑԻ, աշակերտ Գէորգ Մեղրեցի վարդապետին, քան ասենք Յովհաննէս Սարկաւագի, ժամանակակից Մ՝աղթէոսի Ուռհայեցւոյ. Սորա երկասիրութիւնն է Ժամանակագրութիւն կամ Պատմութիւն զոր գրած է Գրիգոր Պահլաւունի կաթողիկոսի խնդրա-նաց, ինչպէս կ՚երեւի ընծայականէն. Սամու-ելի ժամանակագրականն երկասիրութիւնը

(1) Մ՝աղթէոս Ուռհայեցւոյ երկասիրութեան Ֆրանսերէն թարգմանութիւնը տպագրուած է ՚ի Փարիզ. ընդարձակ ծա-նօթութիւններով. իսկ հայերէնն՝ ՚ի Սուրբ Աթոռս Հայոց Երուսաղէմի.

կրտսերն Մաղաքիա․ և կը հասնի մինչեւ Քրիս-տոսի 1179 թուականը․ բայց իրմէն յետոյ ու-րիշք շարունակութիւնը գրած են մինչեւ Հայոց ՌՃԽԵ թուականը․ Սամուէլ իրեն առաջնորդ բռնած է հին ժամանակաց հա-մար Եւսեբիոս ժամանակագիրն և Մովսէս Խորենացին, և որչափ որ հնարաւոր է իւր գրուածքը, այնչափ գեղեցիկ․

ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ, բժշկապետ․ հմուտ աստղաբաշխական, տրամաբանական և հելլենական գրութեան, մեռած Ներսէսի Շնորհալւոյ․ Գրիգոր Տղայի խնդրանօք երկասիրած է բժշկական գրուածք մի այն վերնագրով — Ջերմանց Մխիթարութիւն — անուան պատճառն այսպէս բացատրելով․ «Զի սա մխիթարէ զբժիշկն՝ ու զհիւանդն․ իսկ զհիւանդն տառա-պութեանս»․ Գիրքը գրուած է երեք ան-ուն ջերմանց վրայ․ առողջապահիկ երկրնքա-կա, հետեւելով Պարսիկ, Արաբացի, Յոյն և այլ բժիշկներու․

ԳՐԻԳՈՐ ՏՂԱՅ, որդի Վասիլ եղբօր Շնոր-հալւոյն․ Գրիգոր Տղայի երկասիրու-թիւնքը գլխաւորապէս թղթեր են․

1․ Թուղթ առ Կիր Մանուէլ, որով կը պա-տասխանէ նորա միաբանական թղթին․ Շնոր-հալւոյ մահուան ատեն գրուած․ յայտ-

նեղով ըստ նմին որ յայժմ պետութիւն է. այն ծիսական փոփոխութիւններն մուծանել Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ, զորս Յոյնք կը պահանջէին :

2. Երկու թուղթ առ նոյն կայսրն և առ Միքայէլ Պատրիարքն Յունաց, որոց մէջ դաւանաձեւոյ Յունաց առ ուղղափառ միութեան խնդրոյն վրայ կը խօսի.

3. Թուղթ առ Հաղբատեցիս և առ Տաթևեցիս որոց մէջ բուռն կերպով կը խօսի Գրիգոր Տղայ Հայրապետացս և նախնեացն Տեառնտիրոջն դէմ, որոնք ամբաստանած էին զնիքսն իբրև հակառակ հաւատոյ ուղղափառութեան և մուծիչ նորաձեւ ծիսից :

4. Թուղթ առ [illegible] [illegible], որով կը պաշտպանէ այն ամբաստանութիւններուն, զորս յարուցած էին հիւսիսային վարդապետներն իրենց դէմ և յանդիմանած էին, որ կը խոստանայ առանց գիտութեան [illegible], յանձնական միութեան խնդրոյն մէջ, որ ըստ ամենայնի ճշմարիտ է [illegible] անդրադարձութեան ու Եկեղեցւոյ ազգային անկախութեանն և նախանձախնդրութեանց. Երկու թուղթ ևս կը յիշատակուին Գրիգոր Տղայի անուամբ, գրուած առ Լուկիոս պապն Հռոմէից և առ կայսրն Մանուէլ, բայց այս թղթերն տակաւին երեւցած չեն. Այս թղթերն զատ Գրիգոր

[illegible]

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ. — [illegible]

[illegible]

թանց իշխանին. Նորա ճգնին և Զաքարէ ու Իւանէի Աթաբակարարաց. Նոյն վանքն, որ միաբանի ուսումնասիրական գեղեցկագրոյն կը լինի, կանգուն է մինչեւ ցայսօր. Մխիթար կրօնական գանձագան ինքնուրոյն պատմածուն, որ յուզուածէին արեւելեան փառքաւորեալց և Զաքարէ Աթաբակութեան մէջ. Ինչպէս խանդարկը արդէն, Ինչ քաղաքը կը հրաւիրուի, իրրեւ հաւաքատուն որ փառքաւորեալ, ժողովին ներկայ գտնուելու. Նոյն ժողովն կը լուծուի խաղաղութեան ու ... Մխիթար, որոյ հմտութեան վրայ մեծ գովեստով կը խօսին Կիրակոս և Վարդան պատմիչները, կը վախճանի խորին ծերութեան մէջ (1213) թողով հետեւեալ երկասիրութիւնները.

1. Դատաստանագիրք, Վախթանկ իշխանի և Շահնշահ Աթաբեկին խնդրանօք գրուած. Նոյն երկասիրութեան յառաջաբանին մէջ Մխիթար ընդարձակ կը բացատրէ գրքին նպատակը և ապա կը դնէ դատաստանական կանոնները, հանելով աւանդաբար և քաղաքական օրէնքներուն հիմունքները միացունել, գլխաւորապէս առնելով Ս. Գրքէն, առաքելական և ժողովական սահմանադրութիւններէն և ասոր աղբերաց քաղաքացիին օրէնքներէն. Նոյն երկասիրութեան հայերէնութիւնն թարգմանուած և տպագրուած է Վրաններէն.

2. Ճառք, որ կը բերէ նաև միւս բնիկոց զանազան Թէոդորոսի փոխերուն և խորհրդականութեան զանազան կը համառօտէ։

3. Մեկնութիւն Եզեկիէլի, զոր ոմանք Ա-սորւոյ կ'ընծայեն։

4. Ողջոյն, որոնք պատարագի մատուցման ժամանակին կարդացուին. Համառօտ երկարացուած է և խիստ սրտաշարժ խնդրուածքներ կը պարունակէ իրենց մէջ։

ԽԱՉԱՏՈՒՐ ՏԱՐՕՆԱՑԻ, ժամանակակից Մխիթար Գոշի և առաջնորդ Հաղարծնի վանուց Գուգարաց աշխարհին։ Սորա անունովը զանազան երգեր կան Գանձարանաց և Տաղարանաց մէջ, որոց գեղեցկագոյները խոր. ա-նունը կը յօդեն և քանի մի հատն Խաչատուր Կեչառեցւոյն կ'ընծայուին։ Տաղարանացս երգոց մէջ նշանաւոր է Խորհուրդ խորին, որ պատարագի ժամանակ կ'երգուի։ Կ'ասուի նմանապէս, որ երաժշտական խազը Տարօնացին բերած է Ընդհանրական կամ Վե-րին Հայաստանի մէջ։ Այս ժամանակաց մէջ կը ծաղկէին նմանապէս հետևեալ վարդապետ-ները. — ԴԱՒԻԹ ՔՈԲԱՅՐԵՑԻ, հակառակորդ Զաքարէ Սպասալարին, որ երկարաբանած է Լամբրոնացի Ներսէսի Գրիգոր Նարեկացւոյն Պատարագամատոյցին(?)։ Թարգմանութիւն յանձնարարութեամբ Մխիթարի և Զենոբեանի Յոհանու, որոյ ամբողջն չկայ։ ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵ-

ՌԱՅԻ, որ Լամբրոնացւոյ Վարդապետութիւնը գրած է։ ՊՕՂՈՍ, որ Եսայեայ Մարգարէ-ութիւնը մեկնած է։ ԱՐԻՍՏԱԿԷՍ և իւր աշա-կերտն ԵՓՐԵՄ, որ Շնորհալիէն յետոյ Մատ-թէոսի Աւետարանը մեկնած է։ ՍՏԵՓԱՆՈՍ ՏԻՐԱՑՈՒ վարդապետ, որոյ ուսումնականու-թիւնն կը գովուի, բայց գրաւոր գործ չունի։

Գ.

Ուսումնականք ԺԳ դարու. — Գրիգոր Տարօնացի, Գէորգ Սկեւռացի, Մխիթար Անեցի, Վանական վար-դապետ Տաւուշեցի, Վարդան Վարդապետ, Կիրակոս Գանձակեցի, Յովհան Երզնկացի և աշակերտք իւր, Սմբատ պատմիչ, Ստեփաննոս Օրբելեան, Յովհան Ո-րոտնեցի, Գրիգոր Ծաղեւացի, Գրիգոր Խլաթեցի, Առաքել Սիւնեցի, Գէորգ Երզնկացի, Թովմաս Մեծո-բեցի՝ և գրաւոր երկք իւրաքանչիւրոց։

ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ դարու ուսումնա-կանքն են, բացի նախագրեալներէն, Մեղրուն կամ Մանեայ այրն Դարանաղեաց, Խորանա-շատ՝ Արցախու մաս, Օձնբեր Վասպուրա-կանի մէջ, Ս. Նշանեան Դուգամպաց մէջ, Դա-ղարդ կամ Սևանեց վանք՝ Տարոնոյ մէջ։

Իսկ սոյն դարու մատենագիրներն այսքան են. —

ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲԵԱՆՑ կամ ՄԻՍԻՐԵԱՆՑ, մե-տերիմ Նորնախիջևանի Նախիջևանցւոյ. Սա շարա-գրած է Նեղեղեցին ի Նորակէս Նախիջևանցին, բանդի մի Ռուսեր. շարադրած Յովհաննու Ոսկե-բառեւերտին « Ընտրովիան աշխատաութեան », և իւր իւր Նօթերներ.

ԳԷՈՐԳ ՍԿԵՒՌԱՑԻ կամ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ, որ մեկնած է Եսայեայ մարգարէութիւնը, Հայոց Հեթում թագաւորի առաջարկու-թեամբ, հետեւելով Ոսկեբերանին, Եփ-րեմին և Կիւրղի Աղեքսանդրացւոյն:

ՄԽԻԹԱՐ ԵՐԷՑ ԱՆԵՑԻ, որոյ անուամբ կը յիշատակուին Հնախօսական Պատմութիւն Հա-յոց, Վրաց, Պարսից և Արաբացւոց, Պիր-արեւու և լուսնի խաւարման վրայ, և ծը-րագիր Աշխարհներ աստեղագաշխութեան վը-րայ, բայց այս գրուածներն ցարդ երեւցած չեն:

ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ, Տաւուշեցի, որ Խորանաշատ վանքը կը շինէ աստուածային անուանելով և ապա իւր Կիրակոս Գանձակե-ցի աշակերտին հետ, Թաթարական արշա-ւանաց պատմութեան, կ'առանձնանայ ղովէկանձեւ մի այրի մէջ; ուր կը ժողովին շատերն իրեն աշ-խակերտներու. Թաթարաց ահէն շատ ընտա-

Նեղեալներ եւս այս ամրոցը կ'ապաստանին և երբ Թշնամիներէն կը պաշարուին ; Վանական վարդապետն իւր հետ կ'առնու իւր Սարգիս և Յովհաննէս աշակերտներն ու Թաթարաց զօրավարին կ'երթայ, սիրով կ'ընդունուի և հրաման կ'ստանայ, որ ամրացածներն աներկիւղ ելնեն ամրոցէն. սակայն երբ կ'ելնեն, Թշնամիք կը յարձակին ; [illegible] կը յափշտակեն, շատերն կ'աքսորեն և շատերը կը ծախեն, որոց մէջ կը լինի նոյն ինքն Վանական վարդապետն, զոր յետոյն դահեկանով քրիստոնեայք կը գնեն և այսպէս վերստին Խորանաշատ կը դառնայ և կը սկսի իւր աշակերտաց հետ հայրենեաց աղէտներն ողբալ և նկարագրել։ Վանական վարդապետ Կոստանդին կաթողիկոսի օրով յուզուած եկեղեցական խնդիրներուն եւս կը մասնակցի գրով, որուն վրայ արդէն խօսած ենք. Վանական կը վախճանի Խորանաշատին մէջ, խոր ծերութեան մէջ Թողլով իւր բազմաթիւ աշակերտներն, որոց մէջէն Կիրակոս վարդապետն կը փոխանորդէ ուսուցչական պաշտօնին.

Վանական վարդապետի երկասիրութիւնքն են. — 1. Մեկնութիւն Յոբայ, ծաղկաքաղ Բոքայրեցւոյ համանուն երկասիրութեան : 2. Տօնական չարականներ, « [illegible] » : 3. [illegible]

ընկճման վրայ. լատինական աստուածութեանց։ 4. Համեմատութիւն Հին և Նոր Կտակարանաց։ 5. Հարցմունք և Պատասխանիք։ 6. Պատմութիւն, որ Վարդանի և Կիրակոսի յիշատակութեան համեմատ Վանականի ամենէն նշանաւոր և կարևոր երկասիրութիւնն է, սակայն կորուսած է։

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ, աշակերտ Վանականայ, որ յԵրուսաղէմ ուխտագնացութեան ժամանակ Կիլիկիոյ մէջ մեծ ընդունելութիւն կը գտնէ Կոստանդին կաթողիկոսէն ու Հեթում թագաւորէն և նոյն կաթողիկոսէն շրջաբերական առնելով կը դառնայ Արևելեան Հայաստան։ Վարդան Կիլիկիոյ մէջ գտնուած ժամանակ կը թարգմանէ Ասորւոց Միքայէլ Պատրիարքի Ժամանակագրութիւնն (1) օգնականութեամբ Իշոխ անուն ասորի քահանայի, և 'ի Մեծն Հայաստան դարձած ժամանակ նախ կը նստի Կայենոյ ձորի Անդրէի վանուց մէջ, ուր կը գրէ իւր պատմութիւնն, յետոյ Խոր Վիրապ առանձնանալով աշակերտներ կ'ուսուցանէ, ինչպէս և Սաղմոսավանից և Թեղենեաց վանքի մէջ։ Իսկ իւր կենաց վերջին տարիներն Հաղբատա-

(1) Այս ժամանակագրութիւնն, որոյ Գաղղիարէնն միայն յառաջ տպագրուած էր. Հայերէնն եւս 'ի լոյս ընծայեցաւ Ե. Այթունեան վարդապետէն.

վանից մէջ անցուց, ուր շարադրեց Երգոց Երգոցն մեկնութիւնն և վախճանեցաւ 1271ին։

Վարդանայ երկասիրութեանց մէջ նշանաւոր են. Ընդհանուր պատմութիւն, Աշխարհագրութիւնն սկսած մինչեւ իւր ժամանակն, մօտ 6000 տարուան պատմութիւն, կարճ համառօտ։ Այս պատմութեան մէջ կ'աւանդուի, որ Վարդան Հուլաւու խանին կը ներկայանայ, Հեթում Թագաւորի, Վրաց Դաւիթ արքայի, Անտիոքայ լատին իշխանի և շատ ազատազգի Պարսիկներու և քանի մը Հայ վարդապետներու և քահանաներու հետ, մեծ ընդունելութիւն կը գտնէ Խանէն, հարցասիրական խօսակցութիւն կը բացուի երկուսի մէջ, զոր մի առ մի կը յիշատակէ, սակայն դառնալու ժամանակ իւր գիրքն աւազակները կը յափշտակեն և ինքն յետ ժամանակաց գտնելով ծախու կ'առնէ։

Մեկնութիւն Դանիէլի, Մեկնութիւն Սաղմոսի, Հաւաքատու Յովհաննէս եպիսկոպոսի խնդրանօք գրուած, համառօտ քան Լամբրոնացւոյ համանուն երկասիրութիւնն. Մեկնութիւն Հնգամատենին Մովսիսի, Հաւաքատու Համազասպ եպիսկոպոսի և Սանահնի Գրիգոր Փակակալ վարդապետի խնդրանօք գրուած (1261)։ Մեկնութիւն Երգոց Երգոցն, իւր աշակերտ Կիրակոս վարդապետի խնդ-

րանոց գրուած (1261)։ Այս մեկնական գըր-ուածոց մէջ հետեւած է Վարդան յունա-կան և հայկական նախնի Հարց։ Նշխարք ի Լուսաւորչին, խնդրանօք Հայրապետայ Համա-զասպայ առաջնորդի։ Շարական ի պատիւ Յո-վակիմայ և Աննայի, խնդրանօք Հեթում Թագա-ւորի, որուն վերջը յատուկ մաղթանք կայ Թագաւորի և Հայրապետի կենդանու-թեան համար։ Շարական Երկոտասան Ա-ռաքելոց՝ ի յԱնանեան ծովին, Թարգմանչաց՝ Սրբ. Լուսաւորչին։ Աղօթք, Նմանութեամբ Մխի-թարայ Գօշի. Աշխարհագրութիւն Հայաստանի, համառօտ, որ թարգմանուած է Գաղղիե-րէն, Սէն-Մարթէն արեւելագէտի աշխա-տութեամբ, Ասիական Ընկերութեան. սակայն այս վերջին երկու երկասիրութիւնքն մի այլ Վարդանայ կ'ընծայեն ոմանք, Բարձրբերդ-ցի մականուամբ։

ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, աշակերտ Վանա-կան վարդապետի։ Նա երկասիրած է պատ-մութիւն Ս. Գրիգոր Լուսաւորչէ ժամա-նակէն սկսելով մինչեւ իւր ժամանակնե-րըն՝ առելի Եղիշեցւոց վարդապետաց վրայ խօսելով։ Նա կը պատմէ ընդարձակօրէն Թաթարաց աւերմանն և հարստահարութեան անցքերըն, որոց ինքն ականատես գտնուած է շատ տեղ։

Անծին. Վարդանայ ժամանակակից կը համարուին. հետեւեալ մատենագիրները — ՎԱՐԴԱՄ կամ ՎԱՐԴԱՆ և ՄԽԻԹԱՐ ՍԿԵՒՌԱՑԻ, որոնք խիստ սաստիկ չարադրածներ յօրինած են պապականութեան եւ պապին դէմ, որ Կոստանդին կաթողիկոսի ժամանակ կը յորդորէր զՀայերն՝ պապական գլխաւորութիւն ընդունելու։ Զարմանալի չէ՛ սոյն հեղինակաց սաստկայոյզ գրուածներն, որովհետեւ պապականութիւնն այնպիսի գաղափարներ կ'ուզէր տարածել Հայաստանի մէջ, որոնք բոլորովին օտարոտի էին, ինչպէս են Պետրոսի առաքելապետութեան, պապական յաջորդաց գերիշխանութեան և անսխալականութեան անհեթեթ գաղափարներն։ ԿԻՐԱԿՈՍ ԱՐԵՒԵԼՑԻ, որ Սիս քաղաքի մէջ, Հեթումի թագաւորութեան ժամանակ Յայսմաւուրք հաւաքած է, 170 ճառեր ինքնին յաւելցնելով։

ՅՈՎՀԱՆ ԵՐԶՆԿԱՑԻ, որ կը կոչուի նաև Պլուզ՝ կապուտաչեայ, լինելուն պատճառաւ, և Ծործորեցի, Արտազու գաւառի Ծործորի վանքի մէջ շատ բնակելուն պատճառաւ։ Յովհան, Երզնկայ քաղաքի Սարգիս արքեպիսկոպոսի որդին, իւր ուսման առաջին ընթացքը կը կատարէ Սեպուհ լերան սուրբ Սինա անապատին մէջ, և ապա ճանապար-

հորդելով զանազան հեռաւոր տեղեր, և յատկապէս 'ի ձորն Կայենոյ 'ի Հաղբատ և 'ի Սանահին առ Վարդան վարդապետ։ Երզնկացւոյ ժամանակ կը գտնուին Մ՝եծին Ներսիսի Նշխարքն Թիլն աւանի մէջ և Նորա հայր Սարգիս արքեպիսկոպոսի ձեռքով կը փոխադրուին յԵրզնկայ։ Կը կարծուի որ այս գիւտի և փոխադրութեան պատմութիւնը Երզնկացին գրած է, ինչպէս և յօրինած է շարական մի 'ի պատիւ Ս. Ներսիսի, որ երգուած է նոյն եկեղեցւոյ նաւակատեաց և օծման հանդիսին մէջ, զոր Լեւոն Գ. Հայոց Թագաւորն հրամայած էր կառուցանել 'ի պատիւ սրբոյն։ Նոյս դէպքէն բաւական ժամանակ յետոյ, (1280), կանոններ կը գրէ Սրբոյն Գրիգորի վանուց միաբաններուն համար այս վերնագրով — Կանոնք և սահման միաբանութեան եղբարց, որ ապաստանեալքն միով միաբանեցան յեղբայրութիւն միանձանց յԵրզնկայ։

Նոյս Յովհան կը ճանապարհորդէ 'ի Կիլիկիա, ուր մեծ ընդունելութիւն կը գտնէ Յակոբ կաթողիկոսէն և ուսումնարանին վերակացու կը կարգուի։ Մ՝եծարանք կը գտնէ նաև Լեւոն Թագաւորէն և իրբ Նորա որդիքն Հեթում և Թորոս ատպետական Նորահաստատ կարգին համեմատ Զինւոր կ'ընտրուին, նոյն հանդիսին մէջ կը խօսի Երզնկացին մի ճառ, որ այժմ կը գտնուի Ճշմա-

ածին, և այսպէս աւելի հանգաւ կարապանեայ և կը գրաւէ Հեթումի մտերմութիւնը։

Այս տեղէն կ'անցնի Յովհան Արտազու գաւառի Թադէի վանքը և մեծ սիրով կ'ընդունուի տեղւոյն Զաքարիա եպիսկոպոսէն և իւր ծերութեան օրերն այն տեղ կ'անցընէ։ Մինչդեռ Յովհան Թադէի վանուց առանձնութեան մէջ էր, Անաւարզեցի Գրիգոր կաթողիկոսն կամելով ժողով գումարել՝ 'ի Սիս կը հրաւիրէ զՅովհան և զԶաքարիա. սակայն դոքա չէին երթար, և ժողովք չըգումարուած՝ կաթողիկոսն կը վախճանի և կը յաջորդէ Կոստանդին, որ կամելով իւր նախորդի ժողովական բաղձանքն 'ի կատար հանել, կը հրաւիրէ ուրիշ վարդապետաց հետ Երզնկացին ևս 'ի Սիս։ Սակայն սա ամենեւին տեղէն չը շարժիր, որովհետեւ կը տեսնէ որ Արեւելեան վարդապետք, մանաւանդ Ստեփաննոս Օրբէլեան, սաստիկ ընդդէմ են Սսական ժողովի գումարման։

Երզնկացի տակաւին կենդանի, լատին քարոզիչներն Հայաստան կը գան սիրոյ և միաբանութեան պատրուակաւ, յորոց Յովհան սակաւ ինչ լատիններէն ուսանելով Թովմաս Աքուինեցւոյն աստուածաբանութեան մէկ մասն կը թարգմանէ։ Իսկ այս քարոզիչներու շնորհիւ Ունիթոռական խմբակն կը կազմուի, որոց վրայ առջէն խօսած ենք։

Եղանակացոյց երկրագործութիւններն են հե-տեւեալներն. — Ամենաբերկան Բեղունակ, զոր գրած է Յակոբ կալթաղիկոսի խնգրանոց ։ Բան յաղագս երկնային շարժմանց, զոր գրած է Տփխիսի Սամէկ իշխանի որդի Վախթանկի խնգրանոց. Նոյն ժամանակներս աստեղա-բաշխական հասկացողութեան համեմատ ։ Նոյն նիւթոյն վրայ գրած է 1000 տուն ո-տանաւոր եւս, Նալյոց իշխանի թախանձա-նօք ։ Ներբող ի սուրբ Լուսաւորիչն, զոր յօ-րինած եւ կարդացած է Սեպուհ լերան Գր-իգորի վանքին մէջ, բազմախուռն ուխտա-ւորաց առջեւ, որոնք տարուէ տարի նոյն լերան վրայ կը համախմբէին գեղեցիկ սո-վորութեամբ Լուսաւորչի անմահ յիշատակը պատուելու ։ Այս ներբողին մէջ ճարտա-սանական լեզուով նկարագրուած է Յով-հաննու գեղեցիկ հայրենագաւառն, մանա-ւանդ Մանեայ այրքն եւ Սեպուհ ու Դարա-նաղեաց լերինքն ։ Ներբողն կը սկսի այս-պէս — Յարաշարժ խնդութեամբ բերկրեալ ։

Ամենաօրհնեան Ամոլինի, որով շարայարած է Ներսէսի Շնորհալւոյ անկատար թողած մեկ-նութիւնը ։ Խրատական, որով զանազան զգու-շաւորութեան խրատներ յօրինած է հասարա-ցելոց համար ։ Տաղք եւ Շարական, որոց մէջ նշանաւոր են Զ քահանեաց տաղերն — Յանձնեալ ձամ օրհնեալ եւ Այսօր յոյժն հոգայնոյն ։ Լուսաւորչի

չարչարականներն – Եղիշէի անձնայն և Աշոտ Երկա-
թոյեան, որոնք անհետացեալ ձեռագիրք գտնուեցին
են։ Աբրայի Ներսիսի շարականն – Առ դրան
անձամբ, և Խոստովանութեան շարականն – Յաւ-
ուրս վերջին ժամանակի։ Ընդհանրապէս ունի մաս-
նաւորապէս քանի մի տաղաչափական գրուա-
ծքներ, բայց այնքան նշանաւոր չեն։

Ընդհանրացուցեալ աշակերտակից է ՆԵՐՍԷՍ ՏԱ-
ՐՕՆԱՑԻ, որ գրաւոր երկասիրութիւն թողած
չէ, բայց ունեցած է աշակերտներ ՅՈՎՀԱՆ
ԵՐԶՆԿԱՑԻ, ԵՍԱՅԻ ՆՉԵՑԻ և ՄԽԻԹԱՐ ՍԱ-
ՍՆԵՑԻ, որոց մէջ համբաւաւոր է Երզնկա-
ցին, որ Պլուզ եւս կը կոչուի, (ըստ ա-
ւանդութեան 15 տարի միայն թրջած ա-
պակ կերակրուելոյն համար) և երկասիրած
է համառօտ Մեկնութիւն պատարագի, որ քա-
նի մի անգամ տպագրուած է։

ՍՄԲԱՏ ՊԱՏՄԻՉ, Հեթում թագաւորի
եղբայրն, որ Գունդստապլ կը կոչուի, որ ըս-
պարապետ կամ ախոռապետ կը թարգման-
ուի։ Սա երկասիրած է համառօտ ժամանա-
կագրական պատմութիւն, որ կը սկսի Քրիս-
տոսի 951 թուականէն և կը հասնի մին-
չեւ 1331ն։

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՕՐԲԵԼԵԱՆ, որդի Տարսա-
յիճ իշխանին Սիւնեաց, եպիսկոպոս Հայրե-

նական զուարթութիւն։ Ստեփաննոս երկասիրած է Պատմութիւն, որուն մէջ մանաւանդ կը խօսի Հայաստանեաց եւ Օրբէլեան իշխանցեղապետաց վրայ, եւ ընդհանրապէս Հայոց, Վրաց եւ Թաթարաց վրայ։ Մոնղոլաց եւ Թաթարաց արշաւանքներուն ժամանակակից լինելով ճշդիւ կը նկարագրէ այս կատաղի ցեղերը՝ թէ ինչպէս Արալի ափունքներէն եւ Ալթայի լեռներէն իջնելով աւերեցին Ասիա եւ Եւրոպիա։

Ստեփաննոսի պատմական երկասիրութիւնն, բաց 'ի այն արժանաւորութենէն որ ունի պատմական անցից նկատմամբ, մանաւորապէս հետաքրքրական է եկեղեցական իրողութեանց պարունակութեան կողմէն։ Վասն զի, կը պատմէ զանազան կաթողիկոսաց եւ վարդապետաց գործքերը, կ'աւանդէ զանազան թղթեր եւ դաւանաբանական գըրութիւններ, վանքերու պատմութիւններ եւ մանաւանդ մի առ մի կը յիշատակէ Սիւնեաց եպիսկոպոսութեան եւ եպիսկոպոսաց պատմութիւնը։ Ստեփաննոս այն եպիսկոպոսներէն մին է, որ սաստիկ ընդդէմ էին Կիլիկիոյ մէջ եղած տարապարտ ժողովներուն, ուստի եւ սաստիկ յուզմամբ կը խօսի յունական եւ լատինական միաբանական հըբաղձանքներուն դէմ։

Եկեղեցականաց դպրութեան մէջ կը յիշա-

տակաւին այլ եւս քանի մը մատենագիրներ, որոց ոմանց երկասիրութիւններն երեւցած չեն ցարդ. և ոմանց գրուածներն ալ ձեռն չունենալով կարող չենք նկատողութեան առ-նուլ։

Զորեքտասան և հնգետասաներորդ դա-րուց մէջ գլխաւոր ուսումնարանքն էին, բաց ՚ի վերոգրեալներն, Երնջակայ գաւառին մէջ՝ Ապրակունեաց վանքն, Սիւնեաց գաւառին մէջ՝ Տաթևու վանքն, Բզնունեաց գաւառին մէջ՝ Աստուածածնի վանքն (Մուխարայ կոչուած) Արճի-շու մօտ ; ուր նմանապէս և Մեծոփայ վանքն։

Այս դարերուն մէջ, որովհետեւ Ոսկի թուական գրուածքներ ևս ՚ի վեր կ'երեւին Հայկական մատենագրութեան մէջ, հակա-ռակաւէր և տաղտուկ պարունակութիւնն-րով, ուստի մենք այնպիսիքն զանցառութեան տալով, որոնք ըստ ամենայնի սաստն արհա-մարհանաց արժանի են, կը յիշատակենք մի-այն այն մատենագիրներն, որոնք պաշտպան հանդիսացան Հայաստանեայց Եկեղեցւոյ անկախութեանն, իրենց գրուածքներով, որք և են սոքա.

ՅՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑԻ, որ և Կախիկ. — Այս Տաթևու վանքին մէջ ուսուցչական և վար-դապետական պաշտօն վարելով, շատ աշա-կերտներ կ'ունենայ և կ'երկասիրէ զանազան

քարոզներ և մեկնութիւններ, որոց մէջ սաստիկ կը կշտամբէ Ունիթոռաց աղանդներըն ու Թերամիտ վարդապետութիւններն։ Սորա աշակերտներէն էր Սարգիս վարդապետ, որ սաստիկ պատուհասեց առաջ Ունիթոռներն, ինչպէս առաջ պատմեցինք։

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ, աշակերտ Որոտնեցւոյն, որ նախ Ապրակունեաց և ապա Տաթեւու վանաց մէջ կ'ուսուցանէ ու կ'աշակերտէ շատերն և Ունիթոռական խռովայից վիճաբանութեան ժամանակ հզօր ախոյեան կը հանդիսանայ ընդդէմ Թշնամեաց Հայաստանեայց Եկեղեցւոյ, բանիւ և գրով։ Սա երկասիրած է ընդարձակ Քարոզգիրք և առանձին Գիրք Հարցմանց։ Թողլով այն երկասիրութեանց մանրամասն նկարագրութիւնը, որ մանաւանդ աշխատութեան կարօտ է, այսչափ միայն կ'ասենք, որ Գրիգոր Տաթեւացին ԺԴ. դարուն մէջ միակ վարդապետն է, որ Ունիթոռական աղանդին յորձանքին դիմադրելով՝ յաջողած է պապանձեցնել հակառակորդներն. իւր ընդարձակ հմտութեամբ և անձանձրոյթ տքնութեամբ։ Ժամանակակիցքն պատուած են այսպիսի նշանաւոր անձի յիշատակը փառաւոր արձանով, որ մինչեւ ցայսօր կանգուն կայ Տաթեւու վանքին մօտ։

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԼԱԹԵՑԻ, որ և ԾԵՐԵՆՑ.— Գրած է սա զանազան ճառեր և ներբողներ Սրբոց վրայ ; նոյնպէս երգեր, տաղեր և գանձեր ։ Երկասիրած է նմանապէս իւր ժամանակի նահատակաց պատմութիւնը, յաւելլով Յայսմաւուրքի մէջ, և ինքն մարտիրոսանալով այլազգիներէն (1425) թաղուած է Արծկէոյ քաղաքի մօտ եղած Ստեփաննոս Նախավկայի վանքին մէջ ։

ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԻՒՆԵՑԻ, երկասիրած է զանազան ոտանաւորներ, Ադամգիրք անունով, նոյնպէս և քանի մի ներբողեաններ ։

ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՑԻ, որոյ երկասիրութիւնքն են — Լուծմունք գրոց Գրիգորի Աստուածաբանին. Խրատ վասն կիրակնութեան Մաշտոցի և քանի մի քարոզներ ։ Սորան աշակերտեցան Յակոբ վարդապետ Գրիմեցի, Յովհաննէս վարդապետ Կոլոտիկ, Մատթէոս և Տիրատուր վարդապետք, որոնք աշխատասիրած են զանազան մեկնական և քարոզական գրուածքներ ։

ԹՈՎՄԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԵԾՈՓԵՑԻ որ գրած է Լանկթամուրի արշաւանաց Պատմութիւնն ՚ի Հայաստան ։ Թովմայի երկասիրութիւնն առաւել արտասունքով գրուած է քան թէ

մեղանով, վասն զի ոչ միայն ինքնին ականատես եղած է արիւնահեղ կոտորածներուն և աւերմունքներուն, այլ և քանի մի անգամ տանջանքներ և կալանաւորութիւններ կրած։ Թովմայ, որ Աղիովիտ գաւառի Բաղջբերունեաց գեղջէն էր, Մեծոբայ վանքին մէջ վարդապետանալով երևելի հանգիստացած էր նմանապէս Աւետարանի մշակութեան մէջ։ Սա ինքն գործակից եղաւ հայրապետական Աթոռոյ փոխադրութեանն Սսէն Էջմիածին, ներկայ գտնուեցաւ Վաղարշապատու ժողովին, ուր կաթողիկոս ընտրուեցաւ Կիրակոս Վիրապեցին (1441), և արդիւնաւոր կեանքով վախճանեցաւ (1448)։ Չորեքտասան և հնգետասան դարուց մէջ կը յիշատակուին նմանապէս քանի մի ուսումնասէրներ և գրագէտներ, բայց ոմանք գրաւոր երկասիրութիւն թողած չեն և ոմանք եթէ թողած են, մասնաւոր բաներ են. ուստի մատենագրութեան վրայ այսքան խօսիլն բաւական համարելով անցնինք այժըմ շարունակել մեր պատմութիւնն 'ի փոխադրութենէ կաթողիկոսական Աթոռոյն 'ի Սսոյ Էջմիածին։



ՎԵՑԵՐՈՐԴ ՑՐՋԱՆ

Հայրապետական Աթոռոյ փոխադրութենէն յէջմիածին մինչեւ 'ի բաժանումն Լատինամոլաց 'ի ծոցոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ։

1441–1700

Ա.

Վիճակ Հայաստանեայց Եկեղեցւոյ.—կաթողիկոսունք՝ Կիրակոս Ա. Վիրապեցի. Գրիգոր Ժ. Զաքարիա Բ. Արիստակէս Բ. Սարգիս Բ. Արիստակէս Գ. Թադէոս Ա։

ԵՐԲ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ *Հայրապետական Աթոռն երկարատեւ տատանողականութենէ զկնի վերստին յԷջմիածին փոխադրեցաւ և Կիրակոս Վիրապեցին կաթողիկոսացաւ, Գրիգոր Մուսաբեգեանցն ալ իբրեւ կաթողիկոս 'ի Սիս մնաց։ Եւ այսպէս Ազգն երեք կաթողիկոսական աթոռներ ունեցաւ յԷջմիածին, 'ի Սիս և յԱղթամար, (որ մասնաւոր աթոռ եղած էր* 1113 *թուականէն, Դաւիթ կաթողիկոսութենէն 'ի վեր) որոնք կը տեւեն մինչեւ մեր օրերը։ Սակայն այս բաժանումը լոկ աթոռական եղած է և ոչ եր-*

քէք ժողովրդային կամ տարբեր դաւանութեան ։ Այս բաժանմամբ երբէք խախտած չէ ժողովրդային միութիւնը՝ և թէպէտ երեք աթոռոց կաթողիկոսներն երբեմն իրարու դէմ զինած են և հակառակութիւններ յարուցած , բայց բարեբաղդաբար Ազգը միշտ հաւատարիմ մնացած է իւր մայրենի Եկեղեցւոյ վարդապետական, դաւանաբանական և ծիսական միութեանը , Էջմիածնի Աթոռը հանուր հայրապետական աթոռ համարելով, իսկ Սսոյ և Աղթամարայ աթոռներն՝ մասնաւոր կաթողիկոսական ։ Եթէ պատմագիտական նուրբ աչքով նայինք , կը տեսնենք որ այս աթոռոց սկզբնաւորութիւնն ու տեւականութիւնը հետեւանք է Ազգի քաղաքական վիճակի տարբերութեան ։ Ազգային ինքնօրէն քաղաքականութեան բարձումէն եւ տարբեր քաղաքական իշխանութեանց ենթարկուելէն յառաջ եկած է այս կաթողիկոսական երեքնութիւնը ։ Մի կողմէն քաղաքական տարբեր իշխանութեանց հակակիր ազդեցութիւններն և միւս կողմէն հայկազն ժողովրդի ցրուածութիւնը և միակ կաթողիկոսութեան հետ ունեցած հաղորդութեան դժուարութիւնքն առիթ տուած են մանաւանդ Էջմիածնի և Սսոյ կաթողիկոսութեանց առանձին գոյութեանն ու տեւականութեանն , վասն զի արդէն տե-

առնք նախընթաց Շրջանին մէջ, թէ ինչ գժուարութիւններ կային Արեւելեան Հայոց համար յարաբերութիւն ունենալ Արեւմտականաց կամ Եւրոպացւոց հետ: Եթէ նուրբ նայինք, նոյն գժուարութիւններն աններեւ կը տեսնենք մինչեւ ցայսօր: Իսկ Աղթամարայ կաթողիկոսական գոյութեան եւ անկախութեան գլխաւոր պատճառն իր կղզիական դիրքն եղած է, քան թէ մի այլ պարագայ: Հետեւաբար, եթէ մտածենք որ կաթողիկոսութիւնը մի վսեմ պարտականութիւն է եւ ոչ լոկ անուանականութիւն, եթէ մտածենք որ կաթողիկոսական օրինաւոր, պատշաճաւոր եւ համաձայն աթոռակալներ կարող են աւելի նպաստել Ազգի մինակին եւ դիւրել զանազան իրողութիւններ եկեղեցական վարչութեան, եպիսկոպոսական ձեռնադրութեան եւ այլ ժողովրդային մտաւոր յարաբերութեանց մասին, կը տեսնենք որ կաթողիկոսական երեքնութիւնն ամենեւին նպատակայարմարութիւն կարող չէ ունենալ: Քանի որ Եկեղեցին ու ժողովուրդն մի է, քանի որ իշխող տէրութիւններն քաղաքականօրէն տարբեր ազդեցութիւն ունեցած են եւ ունին Ազգին վրայ, կաթողիկոսական երեքնութիւնը կամ երկուութիւնը կարելի եղած է եւ է. Այս երեքնութիւնն ինքնին կը միանայ, երբ

Անոր յաջորդն իւր Աշխէտեցւոյ համար Հայ-րապետութեան Նախնի կրաւունքներն մե-րահաստատել և քաղաքական ազդեցութիւն-ները ու վաւանդները անկախ և ազատ կա-ցուցանել : Թողունք այս, և ներկայ Շր-ջանի պատմական թելը շարունակենք :

Սիրական Վ. Խրապեցեան, Էջմիածնի մէջ կա-թողիկոսական օծումն ընդունելէն զկնի, շր-ջաբերական գիր կ'ուղղէ Հայաստանի վիճա-կաւոր եպիսկոպոսներուն և նոյնպէս Սսոյ, Աղթամարայ և Աղուանից կաթողիկոսներուն յորդորելով զամենեսեան 'ի սէր և 'ի խա-ղաղութիւն : Այս կարգաւորէ Հայրապետա-կան աթոռն, ստորագրութեամբ Թովմայ վար-դապետի Մծնաբեցւոյ, կը նորոգէ Վաղար-շապատի Հռիփսիմեայ տաճարն և այլ վանօրայք և եկեղեցիք, և մինչդեռ այնօրինակ բարե-կարգութեամբ կը պայծառացի, յանկարծ քանի մի եպիսկոպոսաց և վանականաց շնորհիւ Սիրական կը զրպարտուի իբրև կախարդ և հերձուածող, կը չարախօսուի Արարատեան գաւառի օտարազգի իշխանին առջև: Եւ մինչդեռ չարախօսները կը յարձակին կաթո-ղիկոսը գահընկէց ընել, նա կը փախչի և կը թաքչի, ուր հակառակորդները փոխեցին կա-թողիկոսն. կ'ընտրեն եպիսկոպոսն Անուշաւան Գրիգոր. իսկ Սիրական կը վախճանի, կարե-մեայ կաթողիկոսութենէն զկնի : . . . . .

Գրիգորը Ժ. Սեբաստացի կը շարունակէ Ակ-ռանկայի կաթողիկոսը Թաղած նորոգութիւն-ները՝ ու բարեկարգութիւնները, երեն գոր-ծակից ունենալ Ներսէս անուն մը վար-դապետ և կ'անուանէ Մեծոփեցի։ Սակայն այս պարագաները, որ միայն կաթողիկոսայ պահուած էր, ժամանակագրաց մէջ սովորական գտնուող կաթողիկոսական փոխանորդներ-րու կամ աթոռակալներու համար, և շատե-րու հեղինակութիւնը Ներսէսի տալով՝ աթոռի կը տայ պատմական հակառակութեանց եւ հայրապետական անուանց շփոթու-թեան։

Գրիգորի կաթողիկոսութեան ժամանակ Օսմանցիք կը տիրեն Կ. Պոլսոյ և Սուլթա-նին Մէհմէտ Ֆէթիհ արքունի հրովարտա-կաւ Յունաստանի և Ըստամբոլոյ Հայկազանց վրայ առաջնորդ կը կարգէ (1461) Պռուսայի Յովակիմ եպիսկոպոսը, Փռուսիոյ, այսինքն Պատ-րիարք անուանել, յորմէ և կը սկսի Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնն և կը տեւէ մինչև ցարդ զանազան արատութիւններով։ Իսկ բուն Հայաստանի մէջ ներքին և արտաքին աղմուկներն՝ անընդհատ կը տագնապեն զԱզգն ու Եկեղեցին. Կ'երեւակէս աթոռա-կալը և Գրիգոր կաթողիկոսի մէջ սաստիկ գժտութիւն կը ծագի և կաթողիկոսարանի Սարգիս անուն վարդապետը Լ. ռաստուրչէ

աչքը Էջմիածնէն դարձնելով. Պաղտախամուան կը փախչի, որպէս զի Ջահան Շահի օգնութեամբ յինքն յափշտակէ կաթողիկոսական իշխանութիւնը։ Սակայն Աղթամարայ Զաքարիա կաթողիկոսն իրազեկ լինելով այս անցքին կը դիմէ ՚ի Թաւրէժ նոյն Շահին առջեւ, զանազան նուէրներով յետ կ՚առանու Լուսաւորչի աջն և իշխանական պատուով դառնալով յԷջմիածին, Գրիգորն ու Արիստակէսն կը մերժէ և ինքն կ՚աթոռակալէ իբրեւ ընդհանուր կաթողիկոս, իւր իշխանութեան ներքեւ առնելով նըմանապէս և Աղթամարայ աթոռն։ Իսկ Սարգիս վարդապետը կը կարգէ կաթողիկոսական փոխանորդ, եպիսկոպոս ձեռնադրելով յԷջմիածին,

Զաքարիա կը յաջողի Ջահան Շահէ և Ջհանգիր Սուլթանէ հրովարտակութիւններն խաղաղել և Հայաստանեան աւերումներն առժամանակ մի դադարեցնել։ Սակայն Գրիգորի և Արիստակէսի ձեռքով կը չարախօսուի իբրև բազմագանձ և ձախ որ Ջահան Շահի որդւոյն առջեւ և ուրանալով թէ անհնարին պէտք է լինի կաթողիկոսական իշխանութիւն վարել Էջմիածնի մէջ, ծածկաբար Լուսաւորչի աջն առնելով կը փախչի յԱղթամար, շատ մեծարանք գտնելով թէ՛ եկեղեցական նախարարադի իշխաններէն և թէ՛ ժողովրդենէն։

Զաքարիայի փախուստէն յետոյ Գրիգոր կը վախճանի և Արիստակէս կ՚աթոռակալէ իբրև կաթողիկոս և Սարգիս կը վարէ փոխանորդութիւնն։ Սակայն Արիստակէս Բ չորս տարիէն յետոյ կը վախճանի առանց նշանաւոր գործոյ և կը յաջորդէ Սարգիս (1466)։

Սարգիս կաթողիկոսանալէն զկնի կը ջանայ Լուսաւորչի աջը դարձուցանել Աղթամարէն, բայց անհնարին կը լինի։ Վերջապէս, ըստ պատմական աւանդութեան, Վրթանէս եպիսկոպոս ոմն ծպտեալ կերպարանօք Աղթամար մտնելէն և երկար ժամանակ մնալէն յետոյ կը յաջողի նոյն սուրբ աջն յԷջմիածին դարձնել, և այս ճարտարութեան համար Փակակալ կը կարգուի Էջմիածնի։ Սարգսի կաթողիկոսութեան ժամանակ Սսոյ կաթողիկոսն էր Յովհաննէս Թուլկուրանցի, որ թողած ունի քանի մի տաղաչափական գրուածքներ։ Սարգիս 24 ամեայ կաթողիկոսութենէն զկնի կը վախճանի և կը յաջորդէ Արիստակէս Գ. առանց նշանաւոր ինչ գործողութեան, և սորան կը յաջորդէ իւր փոխանորդն Տէր Թադէոս Ա։

Բ.

Եղիշէ Բ. Զաքարիա Գ. Սարգիս Գ. Գրիգոր ԺԱ. Ստեփաննոս Ե Սալմաստացի. Միքայէլ Սեբաստացի. Բարսեղ Բ. Գրիգոր ԺԲ. Ստեփաննոս Զ. Առնչացի. Թադէոս Բ. Առաքել Վաղարշապատեցի. Դաւիթ Ե. Մելքիսէթ։

Թադէոսի մահէն յետոյ կը յաջորդեն մի զկնի միւսոյ Եղիշէ, Զաքարիա, Սարգիս, Գրիգոր (1503–1541), որոց կաթողիկոսութեան վրայ ազգային պատմութեան յիշատակարանք մանաւոր տեղեկութիւններ չեն աւանդեր։ Միայն այս յայտնի է, որ այն ժամանակին մէջ Հայաստանի ժողովուրդը կը տառապէր զանազան բռնակալաց հարստահարութեան տակ և կաթողիկոսունք բռնադատուած էին հայրապետական աթոռն իրենց փոխանորդներուն յանձնել և փոխարանդի շրջիլ այս ինչ կամ այն ինչ բռնաւորի սիրտը շահելու և ժողովուրդը ըստ կարեաց մխիթարելու համար։ Իսկ Ստեփաննոսի և Միքայելի վրայ, Չամչեանն, առնլով լատին գրուածներէ, երկար վէպեր կը պատմէ ՚ի նպաստ հռովմէական պապութեան, սակայն չենք կարող հաւատ ընծայել, որովհե-

տեւ ազգային տպագրութեան մէջ նոյն միջ-ոցներու նշանագրերն անգամ չենք տեսներ։ Անոնց այսպիսին՝ գտուցէ հաւանական է, որ Աւետիքեանց Ծաղկարարհորդած է Ալ․ Բրսայ իրեն յաջորդ թողով Միքայէլ Սեբաստա-ցին, և Միքայէլ Նախարարեան երկիրը հա-լածանքներէն խուսելով մեկնած է ի Սե-բաստիա, ամենայն կարգելով իրեն տեղ Նարսէս վարդապետ։ Միքայէլ կը վախճա-նի (1569) և կարգաւ կը յաջորդեն Գրիգոր ԺԱ. Աստուածատուր Ջ. Թադէոս Բ. Առաքել Վաղարշապատեցի, որ առանց իմանալու կաթողի-կոսանալով և ազգս բռնաւորաց հարստահա-րութեանց տուրք տալով կաթողիկոս կը ձեռ-նադրէ իւր փոխանորդն Դաւիթ և ինքն կ՚ա-ռանձնանայ մենաստանական վանքի մէջ իւր կեանքն անցնելու։ Առաքելի կաթողիկոսու-թեան ժամանակ Միքայէլ կաթողիկոսութեան միջնամին ևս խիստ աղէտալի էր, որովհետև երկու անձինք իրարու նեխ կաթողիկոսա-ցած էին, այն է Առաքել, Տէրունուր հրա-ժարեցաւ պատրիարք Կ. Պոլսոյ և Յովհան-նէս ամն։ Այս երկպառակութեան շարժա-ռիթն թուր անիրաւակերտողաց ազգեցութիւ-նն էր; որոնք, առանց Ազգի հաւանութեան, կարգաւ առնելով զանազան փառաւոր եկեղե-ցականներէ և վարդապետներէ իրաւունք կը տային կաթողիկոսանալու և կը պաշտպանէ-

ին. ընդդէմ կաթոլիկ վարդապետաց ։

Պրուսիա, ծանր հարկապահանջութենէ ազատելու համար, որուն ենթարկուած էր անդամն Լեհաստանի, իբրեւ անդամ անկից կ'ըլլայ Միութեան եպիսկոպոսը Պրուսիոյ, որով կը լինին երկու կաթողիկոսութիւնք ։

Անջատեալ Պրուսիոյ եւ Միութեան, նոյն պէս եւ իրենց քանի մը անդամակցաց եւ յաջորդաց կաթողիկոսութեան գլխաւորաց եւ Լեհաստանի ու Հռոմի ժամանակակից տարաձայնեներուն վրայ խիստ մոլեռանդութեամբ կերպիւ կը խօսի Լուտերի պաշտամունքին, զոր անհնարին է ընթեռնուլ առանց սոսկալու ։ Սակայն եւ մեր ընդհանուր անգլիկանութեան համար բաւական համարելով նոյն պաշտամունքին մասնաւորապէս առնել հարցմունքը նորան, կը լռենք միայն Հայրապետութեան, Լեհաստանի եւ Հոլլանդայի նոյն ժամանակներ միջնակին համար նկարագրին եւ եթէ պատմենք. Ճշմարտութեան ազատ ճշմարտութիւնը ծանր պատիժով եւ հարկաց տակ կը հիւծի եւ կը մաշի ։ Կաթողիկոսացթիւն կը բազմանայ, բայց ոմանք փախստեան եւ թափառական եւ ոմանք տառապանքութեան եւ տարագրութեան մէջ կը դեգերին եւ կը տանջուին ։ Լեհաստանէն ու փախստեայքն կը կորսուին, մանաւանդ կը ջարդուին ։ Հոլլանդայի Ամենատեանց եւ

Պարսկական անհաշտութեան և պատերազմներուն պատճառաւ երկու ազգին մէջ կը գողդողայ և կը զարհուրի ։ Մի կողմէն Ճահաբսանեանք Արարատեան ընդարձակ գաւառն կ՚աւերեն և ժողովուրդը բիւրերով Պարսկաստան կը տարագրեն, և միւս կողմէն Տաճկաց աւազակախումբերն Հայաստանի միւս գաւառներն ասպատակութեամբ և արիւնհեղութեամբ կը լնուն ։ Անիշխահայրենաբնակներն այս վիճակը կը կրեն Պարսիկներէն և Օսմանցիներէն , Լեհաստանի գաղթական Հայերն ևս Հռոմէական Յեզուիթեաց մոլեռանդութեան և հալածանաց կը մատնուին , եկեղեցիները կը փակուին և կը բռնաբարուին իրենց կրօնքը փոխելու և լատինանալու ։ Թողունք ասոնք որ Պոլսոյ մէջ պատրիարքական խռովութիւններն , Երուսաղէմի մէջ յունական մոլեռանդութիւնն ընդդէմ տեղական միաբանութեան Հայոց և Սսոյ մէջ կաթողիկոսական պայտաց զանցառութիւններն ևս քան զևս կը յաւելուն Եկեղեցւոյ ցաւալից վշտակցութիւնը ։

Այս խառնաշփոթ ժամանակին մէջ խառնաշփոթ է բուն ամենայնի և կաթողիկոսաց կեանքն , և անպատկառ են ներհակութիւնք և գահընկեցութիւնք , ինչպէս պիտի տեսնենք ։

Մելքիսեթ , որ կրկին աթոռակից , և

ազնուական. կարգեցաւ Դուքսին, պատուական հարկապահանջութեանց խորհրդով։ Ի Պոլիս կը դիմէ Նապատ գանձերու յուսով և կաթողիկոսութեան հրաժարելով պատրիարք կ՚ընտրուի փոխանակ Տիրատուր վարդապետի. սակայն մի տարիէն վերջ կը զրկուի պատրիարքական իշխանութենէն ժողովուրդեան ձեռքով։ Պօլսէն կը դառնայ Էջմիածին և Դուքսի կաթողիկոսի հետ կը թաղջի յանձանօթ աթոռոյ, պարտատէրներէն չը նեղուելու համար։

Աթոռոյ պարտքերն օր աւուր կը ծանրանան և երկպառակութիւններն ու բարբարոսութիւնքն կը յաճախեն Հայաստանի մէջ, որով և կը սաստկանան Դուքսի և Մելքիսէթի վէճերն։ Այդա, հաւանութեամբ այլոց վարդապետաց, կը միաբանին կոչել Տիգրանակերտի առաջնորդ Աբրահամ եպիսկոպոսն Եդեսացի և կաթողիկոս ձեռնադրել այն. պայմանաւ, որպէս զի վճարէ Աթոռոյ պարտքերը, որովհետև ինքն ճոխ էր ստացուածով, աղքատասէր և միաբանասիրութեան անուանի իւր բանիմացութեամբ։ Աբրահամ հրաւէրն ընդունելով կ՚ուղեւորի նախկին Ջուղայ քաղաքը, ուր կը ժողովին Մելքիսէթ, Դուքսի, եպիսկոպոսունք և վարդապետք, խորհելու ազգային և եկեղեցական նեղութեանց վեճակին և Աբրահամի կաթողի-

կուսանոցը վրայ, բայց զանազան դժուարու-թիւններ անցնելէ կ'ենթարկուի և խորհուրդը կը խափանուի։ Դաւիթ և Մելքիսեթ կ'ա-ռանձնանան Սիւնեաց գաւառի Տաթեւու վանքը և Սրապիոն կը մնայ 'ի Ջուղայ քարո-զել և մխիթարել ժողովուրդը։ Ջուղայեցի Հայք այնքան կը գրաւին և կ'ոգեւորին Սրապիոնի քարոզներէն և առաքինի վարքէն, որ իսկոյն առնելով իրենց հետ Էջմիածին կը տանին և այն տեղ ընտրողական ժողով կազմելով մեծաշուք հանդիսիւ կաթողի-կոս կ'օծեն զՍրապիոն (1603), անուանելով Գրիգոր ԺԴ.։

Դաւիթ և Մելքիսեթ լսելով Սրապիոնի կաթողիկոսութեան համբաւը կը խորհին թողուլ Տաթեւու վանքը և ուղեւորել Սպա-հան, Հայազգի ժողովուրդին նպաստ գըտ-նելու և իշխանական պաշտպանութիւն վճարելու, որ իրենց անուանն էր։ Սակայն Դաւիթ կը մնայ Հայաստանի մէջ, և Մելքիսեթ միայն կ'եր-թայ Սպահան և կը ներկայանայ Շահաբասու-ին ժամանակաւորութեան [illegible]։ Սա-կայն Շահ-աբբաս, առաջին խորհրդակցութեան [illegible]-լով Մելքիսեթէն, կը պատուէ [illegible], կը [illegible] Հայաստանի [illegible], որուն [illegible] կը [illegible], և իսկոյն [illegible] Մելքիսեթ [illegible] կաթողիկոսութեան [illegible]

տուածներով իսկ արշաւանքներուն. կը գտնենք ի Հայաստան, կը տեսնենք Հայաստանի մէջէն կողմերէն, կ'առնէ Երեւան քաղաքը. և այսպէս իրեն ձեռք կորսուած զՊարսկաստան և Օսմանեան զինուորութեան իրենց հասարակաց արշաւանաց. դէպ պարսկաստանեայց պարագաներն...

Պարսկութիւն և Անգղիութիւն ձեռնը տալով տակաւին իրենց զօրաց զանակով կը հասարակաց Շահաբասին և կ'առաջադրին նորա այսպիսի լեզուներէն. Արդարեւ եւս առանց տաղանդ կը կրէ Գ տարի մէջ Շահաբասէն. կը խօսէ տանիքներ զատեն տանջանքներով. իսկ բոլոր ատեաններուն ամէն զատ նաև կը վճարէ զուրի կերանելով և կը դառնայ Տիգրանակերտ (Ամիդ) ուր կը փոխանցի երկրայանց կառավարութեան զինուորութեան զինքն.

Այն ժամանակին մէջ, (1605) Օսմանցիք կը գինդին ընդդէմ Պարսից, առասի և Շահաբաս հրամանն կը հանէ աւերել Հայաստանն և զերել բնակիչները, որոց հետ կը զերութիւն նեղեալները Պարսկութեան և Անգղիութեան այլ երկրաւորաց և վաճառականաց հետ. և կը կողոպտուի Ջղալօղլիէ Հայաստանէ տարագիր Աթոռն. Նոյն ժամանակէն է այս առաջնորդ առաջնորդութեան անցնելով 14 հազարէն աւելի զերդաստանք զերելով փոխադրուն. Արդ բազմաթիւ զաւակներ բոլոր պարագաներին. առ զինուորն, անհամար զարգացած և առաջնորդութեան ազգ

ունեցողութեանցն Հայոց մատրանց եղան, Թէպէտ և [illegible] [illegible] [illegible] Համապատասխանի [illegible] [illegible] աստուածաբանականները, ինչպէս դա- [illegible] և դերասանաց պատմութիւնները և այլ գործերը: [illegible] այս [illegible] գերեզմանատու- թեանց և [illegible] [illegible] այն միջնա- կին [illegible] [illegible], որոնք են Օւ- [illegible] [illegible] երկինքը բոլորովին անստոյգ գտնուին և մնացածներ միայն կոչմէն եւս կա- ռեցան իւր երկինքը բաղդատմամբ եւ:

Այս գերեզմանատուներն Պարսկաստան հանդերձ կը բնակին Սասանեանց հանդէպ և քաղաքը չինելով այն տեղ՝ կ'անուանեն Նոր Ջուղայ. Սահակեան Մելքիսէթ միջնա- Պարսկաստանի [illegible], այլ Համադանինէն փոխուելով կը [illegible] Նորվան քաղաքի մէջ. ինչ Պօղոսի կը մնայ Ն. Ջուղայ գերեզմանատ- րոց հետ: Միջոցին այս գրութեան համար էր հոգաբարձուներ Սիմոն և վանեցւոց քայ բնակութեան, Սարգսեան (որ Եջմիածն- [illegible] հետ չէ), առաջնորդ Սարգիս ե- պիսկոպոսն Պարսկաստանի կոչեցեալ զորման յութեան [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible]: Եջմիածնական Սէթա- [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. Մէ-

գիտէք թ. Մերձաւոր խաղաղութիւնն [illegible] առնելով Հռոմայեցւոց կը մնէին. Հնութիւնք [illegible] և Սիրոյ նշխարքներ. որոնք [illegible] և Ս. [illegible] [illegible] [illegible] [illegible] գաղղիացի [illegible] կը [illegible] և կ'ամփոփուին 'ի Հռոմ. վասնզի [illegible] կը [illegible], [illegible] կ'առնուն և իրենց կ'ըստանան Պապականութենէն։

Իսկ [illegible], որ [illegible] նուաստ էր իւր զանազան [illegible] [illegible] Համայն կ'ամբաստանութեան Էջմիածնի մայրաքաղաքին, որոնք կը բողոքեն 'ի Պ. [illegible] առ [illegible] կաթողիկոս։ Տարագրուած Պ. [illegible] եւս, որոնք շարունակ Հայրենեաց [illegible] կը տառապէին և շարունակ իրենց [illegible] Հայաստանի [illegible] [illegible] միշտ Հնարք կը խնդրէին [illegible] [illegible] [illegible] կը հանդիպին։ Շահը [illegible] Պ. [illegible] այս Հայրենասիրական [illegible] [illegible] [illegible] կը խորհէր [illegible] խորհրդով Էջմիածնի [illegible] և [illegible] 'ի Պ. [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible], [illegible] ժողովուրդն այլ եւս չէր [illegible] իւր Հայրենիքը իւր Էջմիածինը և Հայրապետական [illegible] [illegible] [illegible] Պ. [illegible] մէջ։ Էջմիածինք և [illegible] կը [illegible] [illegible] Շահը [illegible] Էջմիածինն [illegible]

կայծ մը ունեցածներ, ամառանոցներն և ուրիշ նը-շանաւոր տեղերէ քարեր հանել տալով նախ յԱսպահան և ապա ի Ջուղայ կը փոխադ-րէ, որոնց կը դիմաւորէ ժողովուրդն հան-առաջնորդներով և արտասուելով և կը հանգ-բուրէ այն քարերն իբրև թանկագին ա-ւանդք Հայրենեաց, իբրև աստանդական յիշատակարանք հայրապետանոցին։ Մելքի-սէթի ամբաստանութեան գլխաւոր կէտն քարերու փոխադրութեան համար տուած չար խորհուրդն էր։ Այս ամբաստանութեան համար Դաւիթ կաթողիկոսն Ջուղայեցւոց խնդրանօք Էջմիածին կը դիմէ, բայց կ'ար-գելուի Մելքիսեթէն Էջմիածին մտնելու, որով և երկար հակառակութիւններ տեղի կ'ունենան. Շահաբաս վերադարձին յԱսպահան կը դիմէ և կը զայրանայ սպառնալով զՄելքի-սէթ, սակայն նա Էջմիածնէն Պարսից նախա-րարի ձեռքերը (որուն շատ բարեկամ էր) մահուանէ կ'ազատի, խոստանալով ծանր տուգանքներ վճարել, սակայն անկարող կը գտնուի։ Սուտոփ (1620) եպիսկոպոս կը ձեռ-նադրէ զՄովսէս վարդապետ և հրաման կը տայ միաբան օրհնել Էջմիածնի մէջ. (որով հետև Դաւիթ՝ տարագրուած կը շրջէր յԱսպահան և ի Ջուղայ) որպէս զի նպաստ գտնէ ժողովրդեան, սակայն իւր նպատակին չը հասնիր։ Սուտոփ երկար տառապանքներու

թէև յետոյ իւր եղբօրորդին Սահակ կա-
թողիկոս կ'օծէ և ինքն կը փախչի 'ի Պոլիս.
սակայն և այն տեղ ամենևին ընդունելու-
թիւն չը գտնէր. Պօլսէն կը դիմէ Մելքիսէթ
'ի Լեհաստան, 'ի քաղաքն Լվով. ուր քաղ-
մաթիւ հայազգի ժողովուրդ կար: Մելքի-
սէթ ընդդէմ կամաց ժողովրդեան Նիկոլ
Թորոսովիչն եպիսկոպոս կը ձեռնադրէ և այս
պատճառաւ անհադին դժուարութիւնք կը ծա-
գին: Մելքիսէթ Նիկոլի ձեռնադրութե-
նէն զկնի Կամենից քաղաքը կը քաշուի և
այն տեղ կը վախճանի, երկար ժամանակ
ազգի տառապանաց առիթ տալով և ինքնին
տառապելով: Մելքիսէթի ձեռնադրած Նի-
կոլն լատինականութեան ընդունելով և Յե-
զուիթներէն օգնութիւն գտնելով սարսա-
փելի հալածանքներ կը հանէ Լեհաստանի
հայ ժողովրդեան դէմ, որով եկեղեցիները
կը փակուին, հայական ծիսակատարութիւ-
նը կ'արգելուի, և այսպէս յետ ժամանակաց
Լեհաստանի գաղթականք իսպառ կրօնա-
փոխ լինելով ստիպմամբ՝ կ'անհետին պատմա-
կանութեան անդունդին մէջ, իրենց ազգայ-
ին դաւանութեան հետ կորուսանելով ի-
րենց անունն ու ազգայնութիւնը, որոյ մնա-
րաղաստատուած անցից նկարագրութիւնն մի ա-
հագին ժամանակի նիւթ կարող է կազմել-
քան. Թէ այն պատմական դառնագրքի:

Դ.

Սահակ Դ. Մովսէս Գ. Փիլիպպոս Աղբակեցի. Յակոբ Դ Ջուղայեցի. Եղիազար Անթապեցի. Նահապետ Եդեսացի.

ՍԱՀԱԿ Դ. եղբօրորդի Մելքիսէթի, որ կաթողիկոսացած էր իւր հօրեղբօր կամքով և ոչ ընտրութեամբ Ազգին, կը մատնուի նմանօրինակ տառապանաց, ինչպէս Մելքիսէթ, մանաւանդ որ ժողովրդեն եւս ընդունելութիւն չը գտներ, որոնք իրմէն աւելի զԴաւիթ նախամեծար կը համարէին, որ իւր ծեր հասակին մէջ անգամ սիրելի էր յաչըս ժողովրդեան։ Սահակ ջանալով իւր հօրեղբօր թողած ծանր պարտքերէն ազատուիլ և տեսնելով թէ անկար է ինքն և չարունակ կը նեղուի հարկապահանջներէն, կը փախչի ՚ի Վան, որ Օսմանցւոց իշխանութեան տակն էր։

Սահակի փախչելէն զկնի հաւանութեամբ Ազգին (1629) կաթողիկոս կ՚ընտրուի Մովսէս Գ. որ փակակալ էր Էջմիածնի։ Շահաբաս կը մեռանի և կը յաջորդէ Շահ-Սէֆի, ուստի և Մովսէս խորհրդով ազգայնոց կ՚աճապարէ շուտով յՍպահան, կաթողիկոսական հաստատութեան հրովարտակն կ՚ընդունի

թագաւորէն և միանգամայն կ՚ազատէ Էջ-միածինը տարեկան հարկէ, որուն ենթարկուած էր բարբարոսութեան շնորհիւ ։ Մովսէս կը դառնայ յԷջմիածին հայրապետական ծանր պաշտօնը վարելու և Սահակ լսելով նորա կաթողիկոսանալը, ինքն ևս ջանահը-նար կը լինի Օսմանեան Տէրութեան մէջ առանձինն կաթողիկոսութիւն վարել ։ Այս երկպառակողիչ արարման առաջն առնելու համար, Մովսէսի աշակերտն, Փիլիպպոս վար-դապետ, անձամբ Սահակին կ՚երթայ և կը համոզէ յետս կալ իւր միտադրութենէն, նոյն-պէս և Ազգին մէջէն շատերն կը ջանան Սա-հակի Թիւր խորհուրդներն ցրել և յատկա-պէս եկամուտներ կը խոստանան ։ Բայց նա կը յամառի և Սաղ Յովհաննէս կաթողիկոսի եղբայր Պօղոս վարդապետը կը ղրկէ ՚ի Պօլիս առ Զաքարիա պատրիարքն, որ հակառակ էր Մովսէսին, և պատրիարքի միջամտու-թեամբ հրովարտակ կը ստանայ Սուլթան Մուրատ Դ-էն, որ կաթողիկոսական աթոռ հաստատելով ՚ի Տարոն Ս. Կարապետի վա-նուց մէջ ազատօրէն վարէ իւր պաշտօնն, անկախ Էջմիածնի կաթողիկոսէն ։

Մովսէս կաթողիկոսն և Փիլիպպոս վար-դապետն զանազան գրեր կը գրեն Սահակին դադարել հակառակասիրութենէ, նմանա-պէս կը յորդորեն զնա և Տէրունականները ։

Սակայն Սահակ չյաջողեցաւ, կը մեռնի․ Խնդրին որ սատանային կը մեծնայ և Եղիազարին կը հաւանի, սակայն հաւատարմութեան՝ որդի Մովսէսանի հրաւիրատակը կարելի է որ դարձեալ իւր Սահակ մի կողմէն, և Մովսէսեանք միւս կողմէն, խնդրանատոյց կը լինին Եղիազարին․ Մովսէսեանք կը յաջողին և Սահակ տանջանաց կը մատնուի Եղիազարի հրամանաւ և կը բռնադատուի յուրացութիւն հաւատոյ Սակայն Մովսէսեանց պղերանոք կ'ազատի տանջանքէ և խաղաղ հրաժարելով իւր միտաղրութենէն կը դառնայ յԷջմիածին. և այն տեղ առանձնական կեանք կը վարէ, առանց որ և իցէ գործոյ խառնուելու մինչև իւր մահը։

Մովսէս, անկասկած մեծապէս հակառակութեան դէմ հետեւանքներէն, կը սկսի (1631) նորոգել և վայելչացուցանել ոչ միայն Էջմիածնի շինուածքը, այլ և կարգ և կանոն կը դնէ միաբանից համար, աստուածային պաշտամանց ժամանակները կ'որոշէ, որ աղաւաղուած էր, դպրատունը կը կանգնէ Էջմիածնի մօտ Յովհաննավանքի մէջ և Հայաստանի մենաստաններուն մէջ վայելչութիւններ կը մուծանէ. Էջմիածնի անօթները կ'ազատէ, որոնք պարտուց համար գրաւ դրուած էին իւր նախորդաց ձեռօք։

Մովսէս, որ իւր վարդապետութեան և

եպիսկոպոսութեան օրէն բաւական՝ երկիր-ներ ճանապարհորդած էր, այն է 'ի Պոլիս, Կեսարացի Գրիգոր պատրիարքի օրով, յորմէ և եպիսկոպոսացած էր, Եգիպտոս, Երու-սաղէմ, ուր լուսարարութեան պաշտօն վարած էր և ապա Սեբաստացի (ըստ այլոց Գան-ձակեցի) Գրիգոր Պարոն Տէր պատրիարքի կոնդակաւ նուիրակութեան ելած, խիստ սխրալի գործեր կը գործէ յօգուտ Եկեղեց-ւոյ և 'ի պարծանս Հայաստանեայց Հայրա-պետութեան, որուն վրայ սքանչանալով կը խօսի Առաքել պատմագիրն ։ Սակայն Միք. Չամչեան առանց պատմական հայեցի աղ-բիւր ցոյց տալու, անհիմն կերպիւ կը պատ-մէ, որպէս թէ Մովսէս կաթողիկոսն քանի մի նամակներ գրած է Պապին հպատակու-թեան համար, որուն՝ ապացուցանքներն միայն գուցէ հաշին հաւատք ընծայել։

Մովսէս կը վախճանի եկեղեցաշէն սրբա-րագործութեամբ և կաթողիկոս կ'ընտրը-ւի (1633) Նորա աշակերտն Փիլիպպոս Աղբակեցի, որ իւր նախորդի անկատար թո-ղած նորոգութիւններն ու բարեկարգու-թիւնները կը ջանայ 'ի գլուխ հասուցանել, ձեռնտուութեամբ Սպահանի Հայ ժողո-վրդոյ։ Փիլիպպոս կաթողիկոսն կ'ուղևորի Երուսաղէմ, ուր Սսոյ Ներսէս կաթողի-կոսի և Երուսաղէմի Աստուածատուր պատ-

րիարքի խորհրդակցութեամբ ժողով կը կազմէ Նորաշէնի մէջ, զանազան կանոններ կը հաստատէ Էջմիածնի և Սիս կաթողիկոսաց մտերմական յարաբերութեանց համին, ինչ ինչ նորոգութիւններ կ՚ածէ Ս. Յակոբեանց վանուց մէջ և այս կը դառնայ 'ի Պօլիս։ Նոյն տեղ ևս, ուր պատրիարքական հակառակութիւններ և շփոթութիւններ կային և պատրիարքութիւնը փոփոխակի կը յափշտակուէր զանազան հակառակորդներէ, կուսակցութիւններն անդադար կը յուզուէին 'ի վնաս անձանց և հանրութեան, այս ամեն խռովութիւնները կ՚անդորրացնէ ազդու քարոզներով և նոր պատրիարք կը հաստատէ հաւանութեամբ ամենեցուն։ Փիլիպպոսի 'ի Տաճկաստան գտնուած ժամանակ Նիկոլ Թորոսովիչն, որ խռովասէր և լատինասէր վարուք ատելի եղած էր Լեհաստանի ժողովրդին և միանգամայն եպիսկոպոսութենէ լուծուած Փիլիպպոսի նախորդներէն, կը դիմէ առ Փիլիպպոս և խոնարհութեամբ կը յաջողի պատրել հայրապետին գթածութիւնը, ներումն առնլով և այս դառնալով 'ի Լեհաստան կը սկսի աւելի խռովութիւնք վարել ժողովրդեան հետ և դաւանափոխութեան առիթ տալ։

Փիլիպպոս կաթողիկոս Պօլսոյ խռովու-

Թիւնները անդորրացնելէն, եկեղեցեաց պարտքերը վճարելէն և Էջմիածնի տեղ՝ Յովհաննէս Մուղնեցին պատրիարք հաստատելէն զկնի կը դառնայ յԷջմիածին և կըսկսի զանգակատուն կառուցանել, սակայն նոյնն տակաւին կիսակատար, ինքն կը վախճանի 22 ամեայ կաթողիկոսութենէն զկնի և կը յաջորդէ (1655) Յակոբ Դ. Ջուղայեցի։ Ընտրութեանը ատեն, որ Միք. Չամչեան ջանացած է Փիլիպպոս կաթողիկոսն եւս արտաստաւորել, որպէս թէ հաստատութեան թուղթ գրած է Հռովմայ պապին։

Յակոբ Ջուղայեցի կ'աշխատի իւր նախորդի կիսակատար թողած նորոգութիւնները աւարտել և միաբանականցն կը յաւելու նորանոր շինուածներ։ Կը ջանայ հայեցի տպագրութիւնը վայելուչ յարդարել, որոյ համար և Ծարեցի Մատթէոս սարկաւագն կ'ուղարկուի յԱմստերդամ կատարելագործելու գրոց գաղափարներն կամ ձևերն ճարտար արուեստաւորաց ձեռքով, որ յետոյ աւելի ընտիր կը յարդարուի Ղուկաս Վանանդեցւոյ աշխատութեամբ։ Յակոբայ կաթողիկոսութեան ժամանակ վերստին կը յուզին Պօլսոյ պատրիարքական խռովութիւնները, ուր պատրիարքական պաշտօն կը վարէին ոչ միայն եկեղեցական անձինք, այլ և աշխարհականներ, որովհետեւ իշխանները կը

տալէն այս մարդիկ Օսմանեան Տէրութեան հովանաւորեալներն․ Մինչդեռ Պօլսոյ մէջ խըռովութիւններն կը յուզէին, Այնթապցի Եղիազար վարդապետն, որ երբեմն պատրիարք էր, պատրիարքական փոխանորդ կը կարգուի Երուսաղէմ։ Նա հետզհետէ մարդկընելով՝ կը հետախուզէ Ս․ Յակոբեանց վանուց յիշատակարաններն և յայտագիրներ գտնելով ըստ այնմ կը հետազօտէ և պղնձեայ երկու թանգեկով ոսկի և արծաթ կը գտնէ և նոյն դրամներով կը գնէ ընդդէմ Յունաց, որոնք ջանահնար էին Հայոց տնօրինական ուխտատեղիքն յափշտակել և Ս․ Յակոբայ վանուց տիրել։ Եղիազար կը յաջողի Յոյներն յաղթահարել, բայց միանգամայն ջանահնար կը լինի ոչ միայն Երուսաղէմի պատրիարքութիւնն առնուլ, այլ և կաթողիկոսութիւն՝ Օսմանեան Տէրութեան մէջ բնակած Հայոց վրայ։ Այս Խաչատուր կաթողիկոսի սիրտը գրաւելով՝ կաթողիկոս կ'օծուի նորա ձեռօք Բերիոյ մէջ, օրհնութեան նամակներ կը գրէ Օսմանեան հպատակ ազգայնոց և ապա կ'ուղեւորի Երուսաղէմ, սակայն կը վարի անտի Աստուածատուր պատրիարքէն և կրկին շրջիլ Եգիպտոս, Ասորիս և այլ տեղեր, հաստատութեան հնար գտնելու յուսով։

Յակոբ կաթողիկոս, Եղիազարի այս ա-

Նախիջեւանայ արքայից ըսելով, ազգասիրութեան կոնդակներ կ'ուզէ, զանազան տեղեր. որ-պէս զի զգուշանան Եղիազարի անպատեհ ա-րարքէն եւ Լուսաւորչեան աթոռոյ պառակ-տումէն: Այս առթիւ Յակոբ կ'ուղեւորի 'ի Պօլիս, Նորայայց խռովութեանց առաջն առ-նելու: Եղիազար իրեն դէմ սաստիկ արգելք-ներ տեսնելով Ադրիանուպօլսոյ Եպարքոսէն նորոգ հաստատութեան հրովարտակ կը հա-նէ կաթողիկոսութեան համար եւ կը դառնայ 'ի Պուրսա: Սակայն անդ եւս ընդդիմու-թեան հանդիպելով կը դառնայ 'ի Պօլիս, ուր շատերէն ընդունելութիւն կը գտնէ իբ-րեւ կաթողիկոս:

Յակոբ, որ փոխանակ ուղղակի Պօլիս դիմելու, նախ Երուսաղէմ գնացած էր, որ-պէս զի տեղական պատրիարքի ձեռքով Ե-ղիազարն ամէն տեսակ գործակալութենէ հրաժարեցնէ, երբ Երուսաղէմէն կը մեկնի 'ի Պօլիս դառնալ, Եղիազար արդէն իւր պատրիարքական եւ կաթողիկոսական հաս-տատութեան հրովարտակն առած՝ Պօլսէն 250 ուխտաւորներու հետ միասին կ'ուղեւորի յԵրուսաղէմ, ուստի մեկնած էր Յակոբ:

Յակոբ Պօլիս հասնելով եւ Եղիազարի ա-րարմանց տեղեկանալով կը դիմէ յԱդրիա-նուպօլիս, կը խափանէ Եղիազարի հաստա-տութեան հրովարտակը եւ ինքն ծանր. ըն-

ծանօթով Եպարքոսին նոր Հռովմայեցւոց կը հանէ իրեն համար, որպէս կաթողիկոս համօրէն Հայոց։ Եղիազար այս լուրն առնելով Երուսաղէմէն կը մեկնի և Ռեմլէ կը բընակի։ Իսկ Յակոբ կաթողիկոս իւր գործը վճարելէն զկնի կը դառնայ յԷջմիածին։

Երուսաղէմի և Պօլսոյ պատրիարքական աթոռներուն վերստին շփոթութեանց մէջ կը յուզին. Եղիազար ձեռք կը բերէ Երուսաղէմի պատրիարքութիւնը Աստուածատուրի մահէն զկնի, միանգամայն կաթողիկոսական անուն կրելով. Պօլսոյ մէջ եւս պատրիարքութիւնը կը բռնաբարուի զանազան անձինքներէ։ Յակոբ կաթողիկոսն կըստիպուի Էջմիածնէն վերստին Պօլիս երթալ խաղաղութեան ելք գտնելու համար։ Պօլսէն խաղաղասիրական թղթով կը հրաւիրէ զԵղիազար, բայց Զատիկը մերձեցած լինելով Եղիազար կը յապաղէ իւր երթալն ՚ի Պօլիս։ Իսկ յետ Զատկին երբ կ՚ուղեւորի առ Յակոբ կաթողիկոս, Յակոբ կը վախճանի և կը թաղուի Պերայի կամ Պէյօղլուի Հայոց գերեզմանատան մէջ։ Եղիազար վերստին կը դառնայ յԵրուսաղէմ և համարձակ կը վարէ պատրիարքութեան և միանգամայն Օսմանեան հպատակ Հայոց կաթողիկոսութեան պաշտօն, Երուսաղէմի մէջ յատուկ եկեղեցի շինելով և Էջմիածին անուանելով։

Յակոբ կաթողիկոսի մահէն վերջը Էջմիածնի կաթողիկոսական Աթոռն երկու տարի պարապ կը մնայ ։ Այս խորհրդով Էջմիածնի միաբանից և հաւանութեամբ Երեւանի պարոնին իշխանին՝ Եղիազար կը հրաւիրուի Երուսաղէմէն յԷջմիածին կաթողիկոսական պաշտօն վարել համօրէն Ազգին համար ։

Եղիազար Երուսաղէմէն Պոլիս դիմելով հաստատութեան հրովարտակ կ'առնու և կ'երթայ յԷջմիածին ։ Եղիազար ձեռնամուխ կը լինի շինութեանց և նորոգութեանց ։ Կը կանգնէ երկու փոքր զանգակատուններ և կը նորոգէ Զօրավերոյ եկեղեցին ։ Եղիազարու կաթողիկոսութեան ժամանակէն կը սկսին Պոլսոյ մէջ կրօնական վէճերն և պառակտութիւններն, որոց վրայ պիտի խօսինք յաջորդ Շրջանին մէջ ։ Հայերէն ոմանք լատինական դաւանութեան կը յարին և ատելութիւնը կը սպրդի Եկեղեցւոյ զաւակաց մէջ ։ Առաջին անգամ ըսելի կը լինին տարբեր անուններ համամայր զաւակաց մէջ, այն է Կաթոլիկ . Ֆռանկ . Ուղղափառ, ո՛չ ուղղափառ և այլն բառեր ։

Եղիազար այս նորամուտ պառակտմանց դէմն առնելով կը ջանայ խաղաղութեան ելք գտնել և մինչդեռ կը խորհի բանիբուն և խաղաղարար մարդիկ ղրկել ՚ի Պոլիս, կը վախճանի (1691), ինն տարի Էջմիածնի մէջ կաթողիկոսութիւն վարելէն զկնի ։

Եղիազարին կը յաջորդէ իւր աջակիցն Նահապետս Եդեսացի, որ հանդոյն իւր նախորդին շինութեանց կը պարապի և աղքատաին խնամութեանց առաւել ատենելս կը ջանայ։ Նահապետին կաթողիկոսութեան առաջին տարիներուն մէջ Լատին կրօնաւորք ոմանք, Յիսուսեան կարգէն, Արարատեան աշխարհն գտնելով և Վրաստանին հանդիպելով հիւրասիրական ընդունելութիւն կը գտնեն կաթողիկոսէն. բայց որովհետեւ իրենց գաղտնի նպատակը միայն մարդ որսալ էր, ուստի գաղտագողի խորամանկութիւններ կը բանեցնեն կաթողիկոսի առջեւ։ Նահապետս իւր կաթողիկոսութեան հինգերորդ տարւոյն մէջ թուղթ կը գրէ Հռոմայ Իննովկենտիոս ԺԲ պապին և կը խնդրէ սէր ցուցանել պանդուխտ Հայերուն, ինչպէս ինքն կը ցուցնէ Լատիններուն։ Նահապետս կաթողիկոսի վրայ ամբաստանութիւն կը յուզի, որպէս թէ կամի ազգը լատինացնել և այս պատճառաւ դահընկէց կը լինի ու կ՚աքսորուի և կ՚աթոռակալէ Ստեփաննոս Ջուղայեցի, որ ամբաստանութեան գլխաւոր առիթն էր։ Սակայն Ստեփաննոս տասն ամսէն վերջ կը զրկուի աթոռակալութենէ և կը բանտարկուի, ամբաստանութիւններ գրելով։ Նահապետս կաթողիկոսի վրայ առ Եփրեմ պատրիարքը Պօլսոյ Ստեփաննոս կը մեռ-

նի տպագրատանի՝ մէջ և Նահապետս արձակ համարձակ կը շարունակէ իւր կաթողիկոսութիւնն և իւր գործունէութեան պատասխանաւոյն հետ կ'ընդունի Հռովմայ պապէն, ձեռամբ Կարինեցի Խաչատուր վարդապետին, քանի մի ընծաներ, ընդ որս և մի փառազարդ աթոռ։

Նահապետի թղթակցութիւնը Հռովմայ պապի հետ վարանման մէջ կը ձգէ Պօլսոյ Հայերն, որոնք արդէն լատինական միաբանութեանց մէջ կը յուզէին, և Եփրեմ պատրիարք կը ստիպուի ստուգել Նահապետի վրայ եղած կասկածները, սակայն ինքն կ'աքսորուի և իրեն կը յաջորդէ Աւետիք, որոյ ձեռամբ և աքսորանքն է կ'ազատի Եփրեմ։ Խռովութիւններն երթալով կը սաստկանան, լատինամիտներու կողմէն եկեղեցւոյ անկարգութիւններ և բուն Հայոց կողմէն հալածանքներ կը յաճախեն և բանտ ու աքսորանք տեղի կ'ունենան։ Բայց այս օրինակ ազգային փոթորիկներն ընդարձակ խորհրդածութեան կը կարօտին քան թէ նկարագրութեան, ուստի կը թողունք այս մասին յաջորդ Շրջանին մէջ սակաւուք խօսելու։ Այս խռովութեանց ժամանակ կը վախճանի Նահապետ կաթողիկոս (1705) և Հայրապետութեան Աթոռն պարապ կը մնայ մօտ երկու տարի։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.

Ընդհանուր տեսութիւն և մատենագիրք:

Յաճախ արհաւրանաց, աւերանաց, և գաղթականութեանց պատճառաւ ուսումն նախկին յառաջադիմութիւնն գոգցես կը դադարի ներկայ Շրջանին մէջ: Այն վանքերն, որոնք երբեմն ուսումնավայրք էին, գոգցես կը նմանանան և շատերն կ'աւերին: Թէպէտ և կը յիշուին պատմագրութեան մէջ զանազան ուսումնախնդիր վարդապետներ, թէպէտ և կը յիշատակուին զանազան կաթողիկոսաց թղթեր, բայց օրինաւոր երկասիրութիւններ խիստ պակաս են, մանաւանդ որ եղածներէն շատերն ևս տպագրուած չեն և առ ձեռն չունինք, որ կարենանք գնահատել: Թէպէտ և Եկեղեցւոյ սոյն ժամանակեայ [illegible] օրինաւոր [illegible]ութիւն [illegible] Հաւանական [illegible] որ

ժամանակակից ձեռագիրներն տպագրուելին ։ Շատերն գուցէ տպագրուած չեն այն պատճառաւ, որ լատինականութեան դաւաններ կը պարունակեն իրենց մէջ և կամ ստորին ոճով գրուած են։ Բայց պատմական քննութիւնը ոճոյն չը նայիր, այլ յիշատակարանաց մէջ աւանդուած անցից, եղելութեանց և փաստից։

Նշանաւոր ուսումնասէրներն ու մատենագիրներն ներկայ Շրջանին մէջ սոքա են. — ՈՍԿԱՆ ԵՐԵՒԱՆՑԻ, ՎԱՐԴԱՆ ՑՈՒՆԱՆԵԱՆ. ՅԱԿՈԲ ՀՈՂՈՎ և ՆԱՐՍԵՂ, որոնք տպագրութեան հետամուտ եղան. սակայն Աստուածաշնչի տպագրութեան մէջ տեղ տեղ աղաւաղեցին Նախնեաց ընտիր Թարգմանութիւնը, և որչափ գովելի է իրենց փոյթն ու եռանդը Ս. Գրոց տպագրութեան և տարածման համար, այնչափ պախարակելի է իրենց արած ինքնահաճ փոփոխութիւններն։

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԼԵՀԱՑԻ, միաբան Էջմիածնի, որ Թարգմանած է Յակոբ Կաթողիկոսի հրամանաւ Դիոնէսիոս Արիսպագացւոյն գիրքը, Յովսեպոսի պատմութիւնը, Յաղագս պատերազմին Հրէից, և շարադրած է բառարան ՚ի հայ և ՚ի լատին լեզու։

ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՒՐԻԺԵՑԻ, որ երկարեր է, [illegible] ժամանակէն [illegible] (1601

1662) պատահած անցքերն, այն է Շահաբասի, իւր յաջորդաց, Պարսից և Օսմանեանց պատերազմներու պատմութիւնը և ընդ նմին Հայոց ազգի կրած տառապանքներն։ Առաքել վարդապետի պատմութիւնը, որչափ որ կարգաբանութեամբ չէ, սակայն խիստ սրտաշարժ է և մանրապատում։

ՂՈՒԿԱՍ ՎԱՆԱՆԴԵՑԻ, որ Ոսկան վարդապետին աշխատակից եղաւ տպագրութեան արուեստը կատարելագործելու Հայոց մէջ և զանազան մատեաններ տպագրելու։

ԵՐԵՄԻԱ ՉԵԼԵՊԻ ՔԷՕՄԻՒՐՃԵԱՆ, որ զանազան գրքեր շարագրած է, այն է պատմական, վիճաբանական և այլ այսպիսիք։

ԿՈՄԻՏԱՍ ՔԱՀԱՆԱՅ, եղբայր Երեմիայի, որ իւր ժամանակի պատմական համառօտ յիշատակարանը գրած է (ստուգութեան կարօտ), և Մ՛ԷԿՆ–ԲԷ–Ն Գործոց Առաքելոց՝ ոտանաւոր բանիւ։

ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՐՆԵՑԻ, աշակերտ Փրոփականդայի, որ քարոզագիրք շարագրած է և աստուածաբանական ինչ ինչ երկասիրութիւններ, լատինական հետեւողութեամբ։

ՇՐՋԱՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ

1700—1867

Ա.

Համառօտ տեսութիւն։

ՆԵՐԿԱՅ ՇՐՋԱՆԻ պատմագրութիւնը խիստ տխուր երեւոյթներ ունի Հայաստանեայց Եկեղեցւոյն նկատմամբ։ Եթէ առաջին շրջաններուն մէջ հալածանքներն ու մոլեռանդութիւններն արտաքին էին, այն է Պարսկական, Հագարական, Յունական եւ Հռովմէական, ներկայ Շրջանին մէջ ներքին կռուական պառակտումներն եւս կը յաւելնուն։ Ունիթոռական վրդովմունքներն Արեւելեան Հայաստանի մէջ եւ Պապական հետամուտութիւններն՝ Կիլիկիոյ մէջ կարծես թէ երկար ժամանակ աստ եւ անդ արմատներ տարածելով յանկարծապէս պառակտման սերմեր կ՚ընձիւղեն. Ներկայ Շրջանին մէջ։ Պապականութիւնը վեշտասաներորդ դարէն ի վեր բազմաթիւ ժողովուրդներ կորուսանելով իւր ծոցէն Արեւմուտքի մէջ, գոգցես

Ջանահնար կը լինի նոյն կարատեան տեղը լու-ցուցանել Հայոց տառապակիր Ազգի ան-դամներն որսալով։ Ժամանակն եւս կ'օգնէ Պապականութեան, Հայոց ազգին նկատ-մամբ։ Հայոց հայրապետական Աթոռոյ հարստահարեալ վիճակն և Պօլսոյ ու Երու-սաղէմի պատրիարքութեանց շփոթութիւն-ները լայն ասպարէզ կը բանան Պապականու-թեան առջեւ անկրկիւղ ձուկն որսալու Հայ ազգայնութեան յուզուած և պղտորուած ջու-րոյն մէջ։ Արդէն Լեհաստանի և Մաջառստա-նի (Հունգարիոյ) Հայերը կրօնքով և ազգու-թեամբ զոհ գնացած էին Պապականութեան և արդէն բաժանման դուռն բացուած էր Պօլսոյ գաղթականաց համար։ Ամենափոքր հո-վէ պատահման հրդեհը պիտի բորբոքուէր և եղբայր եղբօր դէմ յառնելութիւն վառուէր։ Այսպէս իսկ եղեւ։ Հետեւապէս պիտի տեսնենք, որ ներկայ Շրջանին մէջ երկար խռովայուզութիւններէն յետոյ մեր Ազգի մի հատուածը Պապականութեան կը յարի և իրեն համար առանձին եկեղեցի կը կազմէ։ Պիտի տեսնենք, որ այս հատուածը կամ պա-ռակտումն խիստ աղէտալի դէպքերով կը կատարուի և սուր սպիներ կը թողու ազ-գային մարմնոյ մէջ և մանաւանդ ամենա-տխուր էջեր ազգային պատմութեան մէջ։ Քանի մի պատրիարքներ և եպիսկոպոսներ

կը ճանչնան նոյն պատուականութեան առաջին ատենուլ մերթ սաստիւ, մերթ յորդորանօք և մերթ ժողովներով, բայց անհնարին կը լինի։ Նոյն կողմէն եւս շատ անգամ կերպերն այնպէս կը զայրանան, որ զանազան մասնութիւններ կը լինին և Տէրութիւնը կստիպուի միջամտել և սաստել բանտիւ և աքսորանքով։ Հաստուածեալներուն պաշտպանութիւն կը գտնեն Գաղղիական դեսպանէն, իսկ Յունականներուն մեծ մասամբ Օսմանեան Տէրութեան հովանաւորներէն, և այսպէս ամեն տեսակ ազգամիջան դէպքեր և մինչեւ անգամ սպանութիւններ առաջ կ'ունենան։ Պատմական անաչառ դատաստանը կստիպէ զմեզ և ոչ մի կողմն արդարացնել, որովհետեւ ինչպէս որ Հաստուածեալներուն գործած կրօնափոխութիւնը և իրենց մայրենի Եկեղեցւոյն դէմ տեղացած անարգանքներն դատապարտելի են, նոյնպէս ոչ սակաւ դատապարտելի է և միւս մասին գործ դրած հալածարական միջոցները։ Արդէն Պապականութիւնը Հայոց Ազգէն որսեր պիտի ընար, բայց չենք տարակուսիր ասելու, որ այնչափ բազմաթիւ պիտի չըլլնէին, եթէ միւս կողմէն հալածարական միջոցները պակսէին։ Նախկին ժամանակի ոգին այնպէս էր, դէպքերն այնպէս կը թելադրէին եւ Հայաստանեայց Եկեղեցին որ շարունակ

ներողամիտ եղած էր տառապողաց դէմ, չը կարողաց նոյն վիճակի մէջ պատմութիւն իւր ծագէն բաժանուած զաւակներուն դէմ, որոնք ստորնե-րէն ։ուելի սկսան նախատել, հայհոյել և անարգել իրենց Մայրը։ Որչափ որ նախատակ չունինք այս դասուն ժամանակի մանրապատում անցքերն մի առ մի գրել, որոնք զգայուն Հայու երեսն ամօթահար կը կարմրեցնեն. որչափ որ զզուելի են մեզ համար այն կրօնական վիճաբանութիւններն, որոնք հատուածեալներն իրենց մայրենի Եկեղեցւոյ դէմ գրած են. որչափ որ անհնարին վիշտ է մեզ համար այս պատուական յիշատակութիւնը արթնցնել մեր ազգային պատմութեան ընթացքին մէջ, այնու ամենայնիւ չենք կարող դէթ նշանաւորներու վրայ ակնարկ չը ձգել։ Սկսինք ուրեմն։

Բ.

Կրօնափոխական յուզմունք. — Յիշատակութիւնք քանի մի ախուր անցից. Կաթողիկոսութիւնք՝ Աղէքսանդր Ջուղայեցի. Աստուածատուր Համատանեցի. Կարապետ Ուլնեցի. Աբրահամ Բ. Խոշաբեցի. Աբրահամ Գ. Կրետացի. Ղազար Ջահկեցի. Պետրոս Այնթապցի։

ՀԱՅԱՍՏԱՆԻ քաղաքական անկախութեան և Թագաւորական Հարստութեան ան-

կումէն, զինք Հայաստանեայց Եկեղեցին և ազգային կրօնքը համարուած էր. բովանդակ Ազգին համար կեդրոն միութեան և անկախութեան: Եկեղեցին համարուած էր նմանապէս և Հայրենիք գաղթականն և հայրենազուրկ հայուն համար: Ուստի մայրենի Եկեղեցւոյ ծոցէն բաժնուիլն ոչ միայն լոկ կրօնափոխութիւն էր, այլ և ազգուրացութիւն: Բայց դժբաղդաբար այս կրօնափոխական բաժանումն արդէն այրդած էր Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակաց ոմանց մէջ և կը խածրէր շատերուն սրտերը: Եղիազար կաթողիկոսի օրէն 'ի վեր, ինչպէս տեսանք առաջինը, պատմականն հուրը սկըսած էր արծարծիլ: Այս պատմականն միջոցին բանի մը պատահարներունը Կ. Պոլսոյ կը փոփոխին, մերթանին կը հաստատուին, ինչպէս յայտնի է հետեւեալ պատահարաց պատմականն ոխութ անցքերէն, այն է Եփրեմի, Աւետիքի (1), Կայծակն Պօղոս վարդապետի,

(1) Այս ժամանակի անցից նկարագրութեան ուսումնասիրութեան արժանի է — Երկու Մեծ Պատրիարք Հայոց — վերնագրով տետրակն, զոր հրատարակած է (1871) Մոսկովայ Արգոյ խմբագիրն Կ. Ս. Իւթիւճեան՝ թարգմանելով Մարիոս Թօփէն Գաղղիական հնախօսաց պատմական երկասիրութիւնէն: Այս վաւերական աղբիւրներէ քաղուած գըրուած երկն խաղաղ կը փարատէ այն մութը, զոր ճեզուիթական ջանաքներ եղած են կուտակելու ազգային պատմական կէտից վրայ, ներկայ Ընթերցի մէջ:

Մատթէոս Եւդոկացւոյ, Քիւրճիմանճի Մարտիրոս վարդապետի, Անդրէաս Երզնկացւոյ, Իսահակ վարդապետի Սեբաստացւոյ, Յովհաննէս վարդապետի Զմիւռնացւոյ և Յովհաննէս Երիցու Գանձակեցւոյ. Այսպէս ամենքը, բաց չափու իրենց հակառակութեան, մերթ օրինաւոր և մերթ ապօրինի միջոցներով, կը ջանան պատուականն առաջին առնուլ, բայց դժբաղդաբար յուզումն աւելի կը տատանա-նայ եւ Գանձակեցւոյ պատրիարքութեան ժամանակ Պապականութեան յարանուններն կը խորհին իրենց համար առանձին եկեղեցի հաստատել և պատրիարք ընտրել, բայց չեն յաջողիր, որովհետեւ Տէրութեան առջեւ Հայ Ազգի ներկայացուցիչն միայն Հայկական պատրիարքն էր. Այսպէս առանձին պատրիարք չունենալը մի արգելք չէր պապականամիտներուն բազմանալուն, որովհետեւ մի կողմէն արդէն բաց էր իրենց առջեւ Լատինական եկեղեցիները և լատին կրօնաւորները շարունակ կը յորդորէին Հայերը, որ ամենեւին մայրենի եկեղեցին չերթան և հաղորդակցութիւն չունենան իրենց ազգականաց հետ, և միւս կողմէն Մխիթար Սեբաստացին արդէն (1700) կանուխէն ի Պոլիս գալով, (1703) աշակերտներով Մորայի Մեթոնի քաղաքն անցնելով (որ Վենետիկոյ իշխանութեան ներքեւ էր) և այն

ատեղ, մէկ նահատակութիւն չենթարկուիլ հրամանաւ պատրիարքին Հրաժարեց, և տարւոյս անոր (1717) Մ. Սեբաստացւոյ Վ. վարդապետ եղբօրն փոխադրութեամբ սկսած էր հիմն դնել այն Միաբանութեան, որ օր աւ-ուր երթալով և մանաւանդ Եւրոպացիէն խոր-թանալով պիտի ոչ միայն իրենինն կուրօրէն հպատականէր Պապութեան բաժնին, այլ և գրա-գիտութեան տարածելու պատրաստական այնքան Ջանասէր պատուական հեղինակութեամբ Հայ ազգը թիւնաւորել, ազգային պատմագիտական պատա-ռուածը աւելի լուսել, նախնի մատեններէն մը-տարբերութեամբ և պատմական մեկնութեամբ մտքերը պարզաբերել և շարունակ Հռոմէ և Պապ-ականել, կարծելով թէ այս առնելով մեծ պաշտօն կը մատուցանէ Աստուծոյ։ Թողունք նախատինքները, թշնամանքները և պայքա-րին ատելութիւնն ընդդէմ Հայաստանեայց Եկեղեցւոյ, որոց մի առ մի յիշատակութիւնը տաղտկալի են փափկասիրտ ընթերցողաց և ազգային սրտից։

Այսպէս ահա Գանձակեցւոյ պատմու-թեան ժամանակն կրօնափոխութեան պատահումն և խռովութիւններն արդէն սաստիկ զայրացած էին և միանգամայն Նշա-նաւորին պատրիարքական Աթոռն ծանր պար-տուց տակ կը հեծէր։ Իսկ Էջմիածնի կա-թողիկոսական Աթոռն ոչ պակաս փոփոխակնու-թեան մէջ էր թէ առանձինն իւր վիճակին

հասնոր և թէ Պօղոս խոստովանողաց անոյշ քերթողն հասնոր. Նահապետ կաթողիկոսին մահէն եր-կու տարի վերջ (1707) Հայաստանեայց ընտրուած էր Աղեքսանդր Ջուղայեցին, որ չը կարենա-լով հեռանալ դաւանական մտատանջութիւններէ ազգայ-ին սրտառուչ անհանգստութեան, գիր կը գրէ Կղեմէս ԺԱ. պապին անդի չը տալ երկպառակութեան ծայրոց բաղդաւորեցաւ Ազգին մէջ և չը սերմա-նել որոմն կրօնափոխութեան, որ նախատեսիչը է Ֆռանկտէութեան. Թէպէտ և Ս. Զանգ-չեան (՚ի Հայրէ և իւր կուսակէն հետևանող-ներէն) անհիմն մեկնութեամբ Աղեքսանդրին առ Պապն գրած աստուածաբանական կամ պարտատուա-կան բառերէն գայթակղելով երգաթի-ցուցած է, որպէս թէ հաստատութեան թուղթ գրած է ՚ի դիմաց Ազգին, մեծա-Ազգն, մանաւանդ այն միջացին, Պապական-նութեան այնչափ կը զարհուրէր, որչափ մի կորստական անդունդէ.

Աղեքսանդր կը վախճանի գառն վշտա-կրութեան մէջ և կը յաջորդէ Աստուածա-տուր Համադանեցի, որ կ'աշխատի քանդել նորոգութիւններ առնել Էջմիածնի մէջ Ա-ղեքսանդրի կաթողիկոսութեան. Թուականին մէջ Կ. Պօլսոյ պատրիարք կ'ընտրուի Յով-Ա. Կոլոտեան վանուց միաբան Բաղիշեցի Յովհաննէս վարդապետն. Սոյն ...-նեալ և կը ջանայ ազգային պատրիարքարանը

բարեկարգելով եւ հեղինակութեամբն բռնանալ : Այ-
բուռ առաքելոյն եւ Պօղոսի պաշտպանութեան թիւ Ննկեր
Հռոմէն կը դառնէ, որ առ ժամանակ մը մնա-
ցած էին եւ իւր քննիչութեան Գրիգոր Վար-
դապետ մեծարոյ Ս. Լուսաւորչի կը հաստա-
տէ պաշտօնիւ Երուսաղէմի Աթոռոյն, որ ջնջ-
ւած պատկերք իւր մերձ ուխտ տաճարի կ'աշխա-
տի եւ կը հաստատուցանէ Երուսաղէմի պատրիարքն
եւ այս պատճառաւ Տփղիսեցիք կը կոչուէ : Նայ
յայտնի է Ս. Յարութեան տաճարի նորո-
գութեանը կը ծառանկէ Յովնան եւ Լամբ-
րոնայ հետ, եւ շատ շինութեանց հետ Ս.
Յակոբեանց տաճարն եւս կը նորոգէ : Նոյն-
պէս Յովհաննէս պատրիարքն Պօլսոյ մէջ
շատ եկեղեցիներ կը շինէ եւ կը նորոգէ, եւ
վախճանելով կը թաղուի Պալաթիոյ եկե-
ղեցւոյ գաւթին մէջ : Այս երկու պատ-
րիարքներուն եւ այն խռովայոյզ ժամանակին
մէջ մեծ ծառայութիւններ կը մատուցանէն
Ազգին : Իսկ Աստուածատուր կաթողիկոսն,
իւր հայրապետութեան առաջին տարինե-
րուն մէջ Ռուսիոյ հետ խաղաղական կեանք
ունենալով զինքն կը մտադրուի այլ Թաւրի-
ոնկայ [illegible] յերկիր [illegible] Խանհաճից Պարսի
խանեին, որ Երեւանի կը պատանեցնէր, եւ մի
քանի, Օշականի գիւղի մէջ, երեսուն տարի
[illegible] կը [illegible]
կը [illegible]

նէն գլխի, որոյ մայրաքաղաքն կը [illegible] Հռոմէ-ականաց [illegible] մէջ. Աստուածատու-րի կաթողիկոսութեան վերջին տարիներուն մէջ, այն է 1723ին, Տրապիզոնցի Աբրահամ առաջնորդն Խալպու հեռանալով Հայաստա-նեայց Եկեղեցւոյ ծոցէն կ'երթայ 'ի Լիբա-նան և այն տեղ կը հաստատէ լատինացեալ կրօնաւորաց վանքն և ապա Պապին հրամա-նաւ լատինահայոց կաթողիկոսութեան հի-մք կը դնէ, ինքզինքն կաթողիկոսանալով. 1868ին այս կաթողիկոսութիւնը կը միանայ Պոլսոյ Հռոմէականաց պատրիարքութեան հետ և բոլորովին Պապին կը հպատակի Անտոն Հա-սունի շնորհիւ, և յետ այնորիկ Հասունեան և Հակահասունեան կուսակցութիւնները կը գոյանան, որոնք ցարդ կը տեւեն.

Աստուածատուրին կը յաջորդէ Կարապե-տեան Ուլնեցի արքեպիսկոպոս [illegible], որ կ'ընտրուի Պոլսոյ մէջ և կը ջանայ հակառա-կութիւնները խաղաղել, բայց 'ի զուր. Կը ճանապարհորդէ առ Անգլիացիս և Ռուսա-կըս, ազատելով խաղաղութեան լուր տա-նելու Արարատեան աշխարհէն, որ Օսմա-նեան և Պարսկական պատերազմներուն մէջ կը ծփար. բայց չյաջողելով կը դառնայ Էջ-միածին և Կամենայ կաթողիկոսութենէն [illegible] կը վախճանի, մինչդեռ առաջին Պոլսոյ մէջ լատինահայոց խռովութիւնները և Ս-

բանաստեղծի մէջ յաճախական հրատարակու-թիւններն կը բաղդատէին ։

Կարապետս Ուլնեցւոյն կը յաջորդէ Աբ-րահամ Բ. Մշեցի, առաջնորդ Մշոյ (1730), և երկու խորան կը կանգնէ Էջմիածնի տա-ճարին մէջ յանուն Ս. Լուսաւորչին և Յա-կոբ Մծբնայ հայրապետին, վախճանելով 5ամեայ կաթողիկոսութենէն զկնի ։

Աբրահամին կը յաջորդէ Աբրահամ Գ. առաջնորդ Թեքիրտաղի, որ ներկայ էր իւր նախորդին մահուանն Էջմիածնի մէջ ։ Աբրա-համ կ'աւանդուի թէ հրաւիրեցաւ Թահ-մազ-Գուլի խանէն Մուղան դաշտը առ իւր օրհնելու և Թահմազի մէջքը կապելու ի նշան թագաւորութեան, և այս մեծամեծ պարգևներով Էջմիածին դառնալով կը վախճանի (1737) ։

Աբրահամի մահուընէն զկնի կաթողիկոսական ընտրութիւնն կը յետաձգի, որովհետեւ ու-մանք կը կամին Երուսաղէմի Գրիգոր պատ-րիարքն ընտրել, որ տակաւին կենդանի էր, և ոմանք Ղազար Ջահկեցին, առաջնորդն Ս. Միաբանից ։

Էջմիածնի միաբանութենէն շատերն Թուղթ կը գրեն Պօլիս, Գրիգորի կաթողիկոսութեան համար, որ և իսկոյն կ'ընտրուի հաւանու-թեամբ Յովհաննէս Կոլոտի, որ տակաւին կենդանի էր, իսկ ոմանք ծածուկ Ղազար

Ջահկեցւոյ փոխանորդն ամբաստանագիր առաքելով կը դրկեն և նորա կաթողիկոսութիւնը կ'ուզեն. Գրիգոր երբ կը լսէ այս, իսկոյն կը հրամայէ նոր խռովութեան առիթ չը տալու համար և ընտրութիւնը Ղազարին կը վիճակի.

Ղազար, տակաւին արքունի հրովարտակ չստացած, կ'ուղեւորի յԷջմիածին և մեծ շքով կը մտնէ Աթոռը, ուր քաղաքապետաց միջոց եւս չունենալով որ դժկամակած էր ուղեւորութեան տարապայման շքեղութեան վրայ, կ'անցնի ի Կարս և ապա կասկածելով երկար մնալը Օսմանեան սահմանի մէջ, շուտով կ'անցնի Պարսից սահմանը և (1737) կաթողիկոս կ'օծուի Էջմիածնի մէջ: Քանի մի տարիէն յետոյ Շահ Նատիր Խանի հետ ունեցած գժտութեան համար կը բանտարկուի և Թահմազի ձեռքով կ'ազատի: Այլ պալատի նախարարի հետ ունեցած գըժտութեան պատճառաւ կը բանտարկուի Թահմազէն հինգ ամսոյ չափ, զրկուելով թէ կաթողիկոսութենէ և թէ շատ ստացուածքէ: Իսկ եղբայր Տէր Յովսէփի ձեռամբ կ'ազատի և վերստին կը հաստատուի իւր իշխանութեան մէջ: Սա կանոնաւորէ Պետրոս (Թիֆլիզեցի կարգեցեալ) և Ալեքսանդր վարդապետները իբրեւ ամենապատուներ և խնդրանքով իշխանաց բանտէ կ'ազատէ: Սերանին պարտաւորեալ (1746) Պետրոս վարդա-

պետն Սեւան կղզին կ՚աքսորէ, բայց և ինքն շատերու ձեռամբ Թահմազին կը մատնուի և Էջմիածնի Սթուոյ սուսացուածքներն ծախելով և մեծ տուգանք տալով կ՚ազատի տառապանքէ ։ Էջմիածնի միաբաններն զայրանալով կը բողոքեն ՚ի Պօլիս, ուր պատրիարք էր Յակոբ Նալեան (որուն վրայ յետոյ պիտի խօսինք) և աթոռէ ընկենլով կ՚աքսորեն ՚ի Սեւան կղզին և նորա փոխանակ կը կացուցանեն Պետրոս վարդապետն ։ Սակայն Ղազար տասն ամիսէն զկնի ազատուելով Սեւանայ աքսորանքէն կը դառնայ յԷջմիածին, Պետրոսը կը ղրկէ ՚ի Ջահուկ մի անենեկի մէջ կալանաւորելով, ուր և կը վախճանի սովէն և տրտմութենէն ։ Ղազար այս անցքէն յետոյ տարի ու կէս եւս կ՚աթոռակալէ և կը վախճանի (1750) ընդ ամենն մօտ 13ամեայ կաթողիկոսութենէն զկնի։ Կաթողիկոսական աթոռոյ այս խղճալի վիճակէն, Տաճկաստանի մէջ յուզուած լատինական խռովութիւններէն և Երեւելեան Հայաստանի մէջ կատարուած Պարսկական հարստահարութենէն առաջ դիւրին է գուշակել Հայաստանեայց Եկեղեցւոյ այն ժամանակւոյ տառապալից վիճակը։

Գ.

Կաթողիկոսունք. — Մինաս Ակնցի. Աղեքսանդր Բ Պօլսեցի. Սահակ Ե Կեսարացի. Յակոբ Ե Շամախեցի. Սիմէոն Երեւանցի, Ղուկաս Կարնեցի. Դանիէլ Գաւ-ալեկեցի.

Սոյն կաթողիկոսներէն առաջին չորսը խիստ կարճատեւ եղան, կ'ունենան իրենց ընտրութեաննին յետոյ։ Մինաս Ակնցին (1751) Պօլսոյ մէջ ընտրուելէն եւ Էջմիածնի մէջ օծուելէն զկնի մի տարի միայն աթոռակալելով կը վախճանի։ Աղեքսանդր Պօլսեցին եւս կ'ընտրուի նոյն քաղաքի մէջ եւ Էջմիածին կաթողիկոսական օծումն ընդունելով տարի ու կէսէն յետոյ կը վախճանի։ Սահակ Կեսարեցին, Ահագին կոչեցեալ, որոյ ընտրութեան ժամուն մեծամեծ յուզումներ կը պատահին, Պօլսոյ մէջ մի տարի մնալէն զկնի կ'անցնի 'ի Կարին, ուր կը մնայ երեք տարի, չը կամելով Էջմիածին երթալ։ Սահակի համար ժողով կը գումարուի Պօլսոյ մէջ (Յակոբ Նալեանի պատրիարքութեան ժամանակ), կաթողիկոսութենէ կը մերժուի եւ առանց Էջմիածին երթալու եւ օծումն ընդունելու կը վախճանի (1759) եւ կը թաղուի Լուսաւորչի վանքին մէջ, որ 'ի Կարին։ Սահակին տեղ կ'ընտ-

բուլի Յակոբ Շ. ամենախելացին և չորս տարի հան-գստութեամբ վարելով իր իշխանութիւնը կը վախճանի Էջմիածնի մէջ։ Այսպէս աննշան կ'անցնին այս կաթողիկոսաց կարճատեւ կեանքը, բայց սոցա կաթողիկոսութեան ժամանակ լատինահայոց յուզմունքներն անընդհատ կը շարունակէին, ընդ նմին և փոփոխութիւնք Երուսաղէմի և Պոլսոյ պատրիարքութեանց։

Յակոբ Շ. ամենախելացւոյ մահէն զկնի ժողով կը գումարուէր Էջմիածին՝ նոր կաթողիկոսի ընտրութեան համար, ուր երկար խորհրդակցութիւններէն յետոյ հինգերորդ գումարման մէջ կ'ընտրուի Սիմէոն Երեւանցի, որ իսկոյն թուղթ կը գրէ և իր ընտրութիւնը կը ծանուցանէ Տաճկաստանի ազգայնոց և նոցա հաւանութիւնն եւս կ'ընդունի։ Սիմէոնի կաթողիկոսութեան ժամանակ հայ վարդապետներէն ոմանք, մանաւանդ Զմիւռնիոյ առաջնորդ Աստապատցի Աբրահամ վարդապետն, կը խորհէին Պոլսոյ մէջ կաթողիկոսական փոխանորդութիւն հաստատել. սակայն այս խորհուրդը կը մերժուի, որովհետեւ պատրիարքութիւնն արդէն կաթողիկոսական փոխանորդութիւն էր։ Սիմէոն կաթողիկոս, որոյ հայրապետութեան ժամանակ անպակաս էին պարսկական հարստահարութիւնք, կը յաջողի Տպարան հաստա-

տեղ Յիզմիրնի եւ Տոխաթցւոց տպագրելը՝ որպէս զի Սուրբ Լուսաւորչեանց տպագրած ա-նացուցներուն չը կարօտի, և յառաջիկային առ-նուլոր բարեկարգութիւնները տանելէն զինքը Իզմիրնայի մէջ՝ կը վերածանի 17 տարեայ կաթողիկոսութեանը զինք, թողով բարձր համբաւ բոլոր Ազգին մէջ(1)։

Սիմէօնին կը յաջորդէ Պօղոս Կարնեցի (1780), որոյ կաթողիկոսութեան ժամանակ, Պօլսոյ պատրիարքն էր Զաքարիա, իսկ Սսոյ կաթողիկոսն էր Թէոդորոս, որոյ ընտրութեան և օծման հանդէսը կատարուած էր Պօլսոյ մէջ։ Պօղոս վարդապետ կը ծանօթ Իզմիրնոյ միաբանից մէջ, ուսեալ Թէ իր աշակերտակից Թէքիրտաղցի. Աշրդին վարդապետի հետապնդութեանը կամի Հաղ-տատանեայց Եփրատացին միացնել Համթելըայ Եկեղեցւոյն հետ։ Այս կամքը երեւցնել սոյլ կերպարանք կ'առնու, ուստի և Պօղոս ստորին կը խաղաղանքէն Իզմիրնոյ միաբաններէն և կ'արքորդուի։ Ասկեցյն ետքը նուաստութեանը Վարդ ծերունի կասկածը կ'առ-նուի և գաղտնապահած կերպարանաւ ի Տփխիս և անտի Յերուսաղէմ։

(1) Յաւ է մեզ տեսնել, որ Գ. Աւետիս Պերպերեան, իւր աշխատասիրած մատեանը, պատմութեան Իսահակեան մէջ, իրաւ արդարանց է հայրենասէր և եկեղեցասէր Սի-մէօն կաթողիկոսի համբաւն, անհամեմատ ներկայացնելով զնա իբրեւ փոփոխիչ հայրենի ծիսից և աւանդութեանց։

Ղուկասի փոխանորդն և մահէն վերջ Էջ-միածնի միաբաններն կը ծածուցանեն Տաճ-կաստանի ազգայնոց որ կաթողիկոսի ընտ-րութեան հաւանութիւն խորհելու : Եւ մինչդեռ խորհրդեան մէջ կը մնին. Յովսէփ արքեպիս-կոպոսն Արղութեան, Երկայնաբազուկ անուա-նեալ, որ Ռուսիոյ նորոգ գաղթական Հայ-ոց նուիրակն ու առաջնորդն էր և միանգա-մայն սաստիկ մտերիմն կայսերական Թագուհ-ւոյն, (որուն հետ Հայոց թագաւորութեան վերահաստատման դաշնադիր անգամ պատ-րաստած էր), կը յաջողի կաթողիկոսական ընտրելի ներկայանալ Ազգին, ուստի և հրա-վարտակ կը հանուի Օսմանեան Տէրութե-նէն որ երթայ յԷջմիածին օծուելու : Սա-կայն մինչ Ռուսաստանէն կը հասնի Տփխիս և մեծաշուք ընդունելութիւն կը գտնէ իւր իշխանազուն ազգակիցներէն, յանկարծ ա-նակնկալ մահուամբ կը վախճանի անդ ա-ռանց Էջմիածին երթալու և կաթողիկոսա-կան օծումն ընդունելու :

Յովսէփի մահուան լուրն Պոլիս կը հաս-նի, Էջմիածնի միաբան Ենեկցի Դաւիթ ե-պիսկոպոսն և հաւանութեամբ Ազգին կա-թողիկոս կ՚ընտրուի Պոլսոյ Դանիէլ պատրի-արքն : Դաւիթ իւր աւետաւոր ընտրու-թեան Դանիէլի. կ՚աճապարէ յԷջմիածին և բռնի կը գրաւէ կաթողիկոսական աթոռն :

Այս պատճառաւ սաստիկ վէճ կը ծագի Պուլթի և Պանիկէնցի մէջ . և կը սկսէ մեծ երկու տարի . անդի ատրպոյ անծանօթ է : դրդ-ութեանց երկու կուսակցութեանց — Պու-թեանց և Պանիկէնեանց ։ Ի վերջոյ Պանիկէնց կը յաջողի Էջմիածին մտնել և Պուլթին ու նախագահութեամբ ձգել յիշխանութենէ . և ա-յս ետքն (1902) Կաթողիկոսական աթոռը բարձրանալով իշխանութիւն կը մնայ թա-փուր ։ Պուլթի և Պանիկէնցի մէջ ծագած դժուարութեան անցքերը խիստ անծանօթ են . Ներքին պատճառաւ չենք ուզեր կրկնել ։

Դ.

Կաթողիկոսութիւն Եփրեմի . — Յուզումներ և ժողովներ 'ի Պոլիս . — Առաջնորդութիւն Ներսիսի 'ի Տփխիս . — Պատերազմ Ռուսաց և Պարսից . — Աքսոր Ներսիսի . — Կաթողիկոսութիւն Յովհաննիսի Կարբեցւոյ . — Էջմիածնական Կանոնադրութիւն Ռուսաց տէրութենէն խմբագրուած և տրուած . — Կաթողիկոսութիւն Ներսիսի . — Պատրիարքութիւն Մատթէոսի և հաստուած Բողոքականութեան . — Կաթողիկոսութիւն Մատթէոսի . — Ազգային շարժումն 'ի սահմանադրութիւն իրաւանց Հայաստանեայց Եկեղեցւոյ . — Ընտրութիւն Գէորգայ Պոլսեցւոյ . — Շփոթ վիճակ Սսոյ և Աղթամարայ Աթոռոց .

ԴԱՆԻԷԼԻ մահուընէն վերջ (1810) կաթողիկոս կ'ընտրուի Եփրեմ Ձորագեղցի, որ 'ի սկզբանէ

ղամիրա եւ Հերզոգարոյ, որոյ կաթողիկոսութեան միջոցին լատինականացութիւնը արդէն քաղաքական տեւոյ զնացած էր ՚ի Պօլիս եւ Տաճկաստանի քանի մի քաղաքներուն մէջ: Պօլսոյ Պօղոս պատրիարքին Աղեքսանդրուպոլեցի, կաթողիկոսէն հաւանութիւն առնելով եւ Յունաց հետ խորհրդակցելով, Օտարազգիք խտտորութեան կը մերժէ, որոյ համար երբեմն մեծամեծ զժտութիւններ կը ծագէին Հայոց եւ Յունաց մէջ, մանաւանդ Երուսաղէմ: Պօղոս կը ջանայ լատինամիտ Հայերին եւս միաբանին միացնել Հայաստանեայց Եկեղեցւոյ հետ, բայց ապարդիւն կը մնայ իւր աշխատանքն եւ խաղաղութիւններն աւելի կը սաստկանան: Այս միութեան շարժառիթը կը լինի աւելի Օսմանեան Տէրութիւնը, որ կը հրամայէ Պօղոս պատրիարքին բոլոր Հայերին իւր պատասխանատուութեան տակ առնել, որովհետեւ Լատինահայք տակաւին առանձին պատրիարք չունէին: Պօղոս կը յօժարի եւ երկու կողմէն բուն Հայերէն եւ հաստատուած ազգայիններէն զանազան իշխանք եւ եկեղեցականք ՚ի ժողով կը գումարին միութեան վերայ խորհելու: Ժողովական խորհրդները կը տեւեն Ծննդեան 8դ օրէն մինչեւ Նաւա. Զատկերշաբաթին: Այս մասնաւոր ժողովականներէն զինի կը լինի ազգական ընդհանուր ժողով Այսր եւ

կեղեցւոյ մէջ աւետարանահաւատներէն եւ եկեղեցա-
կաններէն, ուր Պօղոս առաքեալին [illegible] ատենա-
ներէն յետոյ կը կարդայ [illegible] կողմէն տարածուած
[illegible] թուղթն, որոյ ինչ ինչ
[illegible] կը [illegible] եւ [illegible] հաւատա-
թեան [illegible] ժողովրդականութեան
կը [illegible] Քանի մը
հանդիսաւոր [illegible] եւ [illegible]
կը լինին եւ երկու կողմէն ալ [illegible]
[illegible] կը հաւատան, մանաւանդ որ [illegible]
[illegible] ճշմարտութեան [illegible]
[illegible] եւ [illegible]
[illegible] չը կարդալ եւ Յովհան Աստուածաշնչին,
Պետրոսի եւ Մովսէսի [illegible] չը [illegible]
[illegible] գէթ Պօղոսի մէջ։

Այսպիսի շատ [illegible] մեծ խառնակութիւն
կը ծագի ժողովուրդեան մէջ, մանաւանդ երբ
Պօղոս առաքեալին միւս [illegible] իւր կ'որհ-
նէ եւ եկեղեցիներուն կը ղրկէ հիւանդներն
օծելու, ընդդէմ [illegible] հա-
ներայց Եկեղեցւոյ, [illegible] կը
կոխուի, [illegible] եւ [illegible]
յանդիմանական թղթեր կ'ուղղուին Պօ-
ղոս առաքեալին, մանաւանդ [illegible] եւ գրը-
խառնակութիւններ կը [illegible] եւ այսպէս [illegible]
[illegible] կը [illegible]
ներն։ Եւ Պօղոս առաքեալը կ'աղաչէ որ
[illegible]

ծոցն ․ որում ՚ի սկզբանն հաւատարմութիւն չա-
նէր յայտնապէս ․ Իսկ Արքեպիսկոպոսն պատուիրակութեան
ժամանակէն ,՝ որ յանձնած էր Պապութիւն ․ Խոր-
հուրդ կը լինի առանձին պատուիրակութեան
փոխանորդը կարգաւորել ՚ի Միջին Հռովմէա-
կան վարդապետութիւնն , որպէս զի նոյն փո-
խանորդին ձեռամբ այլազգութեան հպատակներն իւ-
րեանց հաղորդութիւն Հռովմէականին Հայոց ․ Հայ-
ոց առաջնորդութեան փոխանորդը կ'ընդունի
Լուսինեան Անտոն վարդապետն և Հռովմէա-
դաւանութեան կարգին նորան փոխանորդը կը կար-
գուի Պետրոսեան Պօղոս Մարուշ վարդա-
պետն ․ և այս անուններ աւելի մեծերը կը յա-
ջորդ առանձին պատուիրակէ անուանել , որոյ անդ
քան զ ձեռնասնորդներն էին Հռովմէական մայրա-
նեաստեղծերը ․ Այսպ խնդիրը յայտնապէս աւելի
կերպարանեց կ'առնէր ․ Այն մեծագին Մուրադ
կը տիրէին Նշանաւորեան պատուանին (որուն
վրայ յետոյ պիտի խօսինք) ․ Հռովմէադաւանութեան
այս անոցքն առիթ բանելով կը պնդէին
Տէրութեան առջեւ թէ Հայերն , որպէս
թէ Մուրադեան Հայերը հետ միանալով
պիտի ապստամբին Տէրութենէն ․ ուստի կը
պահանջէին ազդարարել որ երկնց Հռովմէ-
ական առանձին պատուիրակ անունով ․ որ-
պէս զի չարաստուածութ. երկինց հաւատար-
մութիւնը Տէրութեան առջեւ քան Հայ-
ոց պատրիարքաւ ․ Այս առթիւ Պապն և Սուլ-

բռնադատ պատուիրակներուն և այլ նշանաւոր անձ-
ձինք Ի. Պիոսը կը խօսուի, որոնցմէ զի և-
րաշխաւորութիւն յանձն առնուն. թէ՛ բնուն
Հայոց և թէ՛ Հռոմէադաւան Հայոց համար ։
Այս նորա հռոմէադաւանաց պաշտպանութիւնը
Ներքինէն յետոյ, մինչև Հայոց համար կը խառ-
նուած երաշխաւորել ։ Այս պատճէնաւ Յոյնք
պաշտպանիչած էին Օսմանեան Տէրութեան
դէմ, Սուլթան Մահմուտին հրաման հանել
որ Գաղղիոյ, Անգղիոյ և Ռուսիոյ դեսպան-
ները Ճանձիւնին և նաճառակէս պաշտօնէին Հռ-
ոմէադաւան Հայերը, որոնք չէր կամեցան
զատ և միասնող Անգլի հետ և համակարգան պաշտ-
րինարքի պատասխանատուութեան տակ մնալ-
նել ։ Այս առհմ պատճէն կրոնիցի պարապակայեաց
և Հռոմէադաւան Հայոց աքսորն, որոնց
մէջէն շատերն ախտաժէտը երկար խտանիլ ։ Իսկ մերա-
ւոյն Հայաստանեայց Անդրեցոց ծոցը դա-
ռնալներուն կ'ապատէին ։

Այս (1829) Գաղղիոյ և Անգղիոյ դեսպաններուն միջնորդութիւն Պոլսոյ կը դառնան, Սուլթան Մահմուտին խնդրով տուած ժամանակին, կը խնդրեն Հռոմէադաւան Հայոց դարձն աքսորանքէն ։ Աքսորանքէ կը դառնան նորա, և նոյն (1830) Նուիրակն Հայր Անտոնի Նու-արքեպիսկոպոս ձեռնադրուած Պիոս Ը. Պապէն, կը դառնայ Հռոմէն ի Պոլիս իբրև մետրոպոլիտ Հռոմէադաւանաց Հայոց ։ Սա-

կոչի՛ Նեստորականաց հերձուածոյ ընծայել Ի.
Պռոկղին չընդունուածութը և պատուէն Հռովմայ-
ական պատասխանագիրը կը կարդայ Սահակ Ե-
րեւան Յակոբ վարդապետն, և պատասխան առա-
ջինն հաղթելապաշտնն, բայց երկիրներուն աշխար-
հական կամ քաղաքականն պատասխանը կը կո-
չուի։ Նայելով երկրորդ և վաճառական խառ-
նակութեան յետոյ Հայաստանեայց
Եկեղեցւոյ պատմական մի մասն կը բաժնուի
մնացեալ գրքէն և Պատմութեան Հայկական
ազգ առանձին երկրորդի և վերջաւորութիւն կը
կազմէ 'ի ցոյց ազգի բոլոր Հայութեան։ Այս
Թողնենք մենք այս անուշ անցքն և դառ-
նանք վերջին մեր պատմութեան։

Ամենայն Եփրեմ կաթողիկոս կ'աթոռա-
կալէր յԷջմիածին, որու հաւատարիմն Ներ-
սէս արքեպիսկոպոս Աշտարակեցի Տփղիսի մէջ
Վրաստանի և Իմերէթի Հայոց առաջնորդ-
դական պաշտօնը կը վարէր։ Ռուսական և
Պարսկական պատերազմի նշաններն կ'երեւ-
ային։ Ներսէս կը գրէ Եփրեմ կաթողիկոսին
Էջմիածնէն գալ և Հաղբատու վանքի մէջ
նստիլ, որ Տփղիսու մօտակայ էր։ Եփրեմ
Հաղբատ կու գայ, բայց Ներսէս քաղաքներ
համեմատ ժողովուրդը կը յորդորէ, որ Ռու-
սական արքունական ծառայութեան։ Ռուսաստա-
նեանք կը սիրէ բոլոր ժողովուրդեան մէջ, ո-
րովհետեւ ամենքը կը յուսան, որ Պարսկա-

կամ քաղցէն պաշտպանելով. և Ռուսաց Հայկազն-
[illegible] մտնելով՝ պիտանի երկրին
կութիւն և բարօրութիւն փափաքէին. Պատա-
բաղձականն [illegible] ընդդէմ կը մե-
նին (1826) և Ներսէս ազատաբաղձական շարժ-
ման գլուխն անցնելով ոչ միայն Հայոց և կե-
րակուր կը մատակարարէ Ռուսական զօրքին,
այլ և յառաջացնէր Հայկական հեծելազօր կը
հանէ առանձին [illegible] և գործելով.
և ինքն անձամբ կը մասնակցի, ստորև տե-
ղեկութիւններ հաղորդելով Ռուսաց զօրա-
պետներուն Պարսկական զօրաց մասին. Այս
ամէն զոհողութիւնները կը կատարէ Ներ-
սէս, որովհետև առաջնոյ խոստումն ըն-
դունած էր Ռուսաց Տէրութենէն, որ յաղ-
թութենէն զկնի Հայոց Ազգն ազատ պիտի
լինի և անկախ իշխանութիւն պիտի ունենայ
Արարատեան գաւառի մէջ. Ռուսք կը յաղ-
թանակեն, պատերազմները կը դադարին և
Ներսէս կը սպասէ խոստացած անկախու-
թեան ու ազատութեան իր Ազգին հա-
մար, սակայն ի զուր. Պասկևիչ և [illegible]
սոմսկի զօրապետներու մէջ գժտութիւն կը
ծագի և Ներսէս միջամտելով [illegible] կը
գրգռէ իր դէմ Պասկևիչի թշնամութիւ-
նը. Ներսէս կը պահանջէ Ռուսական խոստ-
ման կատարումը և Պասկևիչ կ'առաջարկէ
Ներսէսին անձամբ Պետրբուրգ երթալ. և

Կոչոնէր հետ խօսակցիլ։ Ներսէս կ'ուզէր ապէ պատարագէն յետոյ ՚ի Ռուսիա, սակայն երբ Պօղ գեւօրը կ'անցնի, Ռուսիոյ մէջ հրաման կղաւանդոյ Տէրութենէն երթալ՝ ՚ի Բեսարաբիա և միաձայնութեան պաշտօն վարել։ Ներսէս կը զգայ որ իրեն խոկալէս աքսորուած է Պետերբուրգի Թշնամական թելադրութեամբ, բայց կը հպատակի և հաւանելով Բեսարաբիա կ'երթայ։ Զը մոռանանք ասել, որ բազմաթիւ Հայեր, որոնք Տաճկաց և Պարսկաց սահմաններէն գաղթած էին ազատութիւն և բարօրութիւն վայելելու յուսով Ռուսիոյ հովանաւորութեան տակ, տառապին նեղութիւններ և տառապանքներ կը կրէին Պետերբուրգէն, երկար ժամանակ անբնակ մնալով և սովէ ու նեղութիւններէ մեռնելով, որոց համար Ներսէս շարունակ կը հառաչէ իր աքսորանաց մէջ, վասն զի գլխաւորապէս իրեն պատճառ եղած էր այս գաղթականութեան։

Ներսէս կը մնայ ՚ի Բեսարաբիա, Եփրեմ ցաւօք և հեծութեամբ կը վախճանի և (1831) կաթողիկոսն՝ ընտրուի Յովհաննէս Կարբեցին, որ և կը հաստատուի Ռուսական հրամանագրաւ։ Ռուսիոյ Տէրութիւնն իւր տուած խոստումը չը կատարելէն զատ կը մոռնայ կաթողիկոսական Ազատութիւնն եւս ստրկութեան ենթարկել և կանոնց կա-

մերոց Հայոց Հոգեւոր ազատութիւնն եւս խեղդել, որուն դէմ մեղանչած չէին երբէք Գաղղիական եւ Հաւատարական քանոնութիւնքն ներքն։ Կայսերական հրամանաւ քանի մի անգամ մասնաժողովներ կը հրաւիրուին անդամակցութեամբ քանի մի կաշառակերի եւ օտարամիտ Հայերու, եւ ահա (1836) Կայսերական կնքով վաւերացած Նոր Կանոնադրութիւն մի երեւան կ'ելնէ Հայաստանեայց Եկեղեցւոյ վարչութեան համար։ Կանոնադրութիւն, որով բոլորովին կը սահմանափակուի հայրապետական իշխանութիւնն, եւ կ'ենթարկուի Նախագահեալ Սինոդի եւ Պրոքուրորի իշխանութեան, միջնորդութեամբ առ աննորդաց համատարութիւն եւ արձակումն կը յափշտակուի ժողովրդի եւ իւր Հայրապետի ձեռքէն, եկեղեցական գանձերն կառավածուոր երաշխաւորութեան ներքեւ կը դըրուին, եւ բոլորովին տակն ու վրայ կը լինի Հայաստանեայց Եկեղեցւոյ առաքելական վարչութեան ձեւն ու եղանակն եւ ըստ ամենայնի քաղաքականութեան քօղոյն տակ կը ծածկուի։ Կը պայմանի, թէ Կարբեցի կաթողիկոսն երբ այս կանոնադրութիւնը Ռուսիոյ Տէրութենէն կընդունի եւ կը կարդայ, այլայլած մեղաքը գետին կը ձգէ եւ կ'ասէ. «Եթէ իմանայի որ այսպիսի Կանոնադրութիւն պիտի առաջարկուի ինձ, ես

երբէք կաթողիկոս չէր ըլլար ։ Սակայն Ռուս-ական ահաւոր Տէրութեան երկիւղն կը լռե-ցընէ՛ անոնց ձայն և իրաւունք և Սահմանա-դրութիւնն կը սկսի գործադրուիլ ։

Յովհաննէս կաթողիկոս կը վախճանի (1842) և Ազգի հաւանութեամբ կ'ընտրուի Ներ-սէս Ե Աշտարակեցի (1843), որ առաջուն Բեսարաբիոյ աքսորանաց մէջ էր 1829 թը-ւականէն 'ի վեր ։

Ներսէս Բեսարաբիոյէն կ'ուղևորի 'ի Պետրբուրգ և (1844) այն ինչ կը պատրաս-տուի այն տեղէն դառնալ դէպ 'ի Կովկա-սան և ապա Էջմիածին, օտար դաւանու-թեանց Դեպարտամենտի (տեսչութեան) դիրեկտորը (նախագահ) Սկրիպիցին Կայսեր հրամանն կը ներկայացնէ Ներսէսին և կ'առա-ջարկէ Հայաստանեայց Եկեղեցին Ռուսաստա-նին հետ միացնել ։ Ներսէս վեհանձնաբար կը մերժէ այն վտանգաւոր առաջարկութիւնը, որով պիտի հարուածուէր Հայաստանեայց Եկեղեցւոյ ինքնօրէնութիւնը, որ հիմնուած է Հայոց Ազգի հազարամեայ չարչարանաց հիման վրայ ։

Ներսէս դառնալով Էջմիածին կը շա-րունակէ իւր պաշտօնը մի կողմէն ազգային բարեսիրութեան հանճար ցուցնելով, ինչպէս և իւր անձնուրացութեան ժամանակն արդէն կանգնած էր Թիֆլիսի Ներսիսեան վարժա-

րանն, և մինչև կոչմէն Ռուսիոյ Տէրութեան հետ անընդհատ իր գործունէութիւններին շարունակելով։ Ներսէս ամեն կերպով կ՚աշխատէր ոչնչացնել Ռուսիոյ տուած Կանոնադրութիւնն, ամեն ձևով չը ճանաչելով ու հակառակելով իւր իշխանութիւնը քաղաքականութեան շրջանին մէջ։ Սակայն իւր դէմ կը դրդուէ ոչ միայն Ռուսիոյ Տէրութիւնն, այլ և քանի մը ստորադաս իշխանաց և եպիսկոպոսաց ատելութիւնը, որոնք անխտրաբար գաղտնի բողոքներ կը գրեն Ներսիսէն առ Տէրութիւնն Ռուսիոյ։ Ներսէս այս ամենը կ՚իմանայ, բայց երբեք չը վհատիր, այլ կը շարունակէ իւր մեծ աշխատանք։ Ռուսիոյ Տէրութեան կողմէն (1857) Կաթողիկոսական Փոխարքայի միջնորդութեամբ կ՚առաջարկուի Ներսիսին պատուանշան և ադամանդակ վեղար, որպէս զի հրաժարի իւր պահանջմունքներէն եւ խաղաղութեամբ վարուի Տէրութեան հետ, սակայն Ներսէս կը մերժէ այս առաջարկութիւնը և իւր պահանջողական գրութիւններին կը շարունակէ, բայց տակաւ օրէն յետոյ, նոյն թուականի Փետրուար ամսոյն մէջ, գիշերը յանկարծամահ կը մեռանի Թիֆլիզի մէջ, գրիչը ձեռքին և կիսակատար թուղթը սեղանակին վրայ, զոր կը գրէր յանուն Տէրութեան Ռուսիոյ։ Թէ ինչ անցքեր կ՚անցնին այս մահուան միջոցին, չենք

ուզէր մի առ մի գրել, պատմելու իրերու ժամանակակից դէպքը այդքէն շատ անգամ գրուած է։ Ներսէսի մարմինը Թիֆլիզէն կը փոխադրուի եւ Էջմիածին կը թաղուի, որոյ տապանին վրայ կը քանդակուի — ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ — վերջերուս սրբադրուցին։

Ներսէսի յաջորդի ընտրութեան եւ կաթողիկոսութեան վրայ խօսելէն առաջ քանի մի խօսք եւս մեր ազգէն հաստատուեալ Բողոքականաց վրայ խօսինք։

Մինչդեռ մի կողմէն Հռոմէադաւան ազգայնոց խռովութիւններն ու կրօնական վէճերն կը յուզէին, միւս կողմէն եւս Բողոքական Միսիոնարներն (քարոզիչներն) կամաց կամաց սկսած էին Տաճկաստանի մէջ դպրոցներ բանալ, Հայ մեծամեծաց հետ բարեկամանալ եւ քարոզելով՝ մարդերը պատրաստել նոր պաշտամանց համար։ Մաթէոս պատրիարքի ժամանակ (տակաւին կենդանի էր Ներսէս կաթողիկոսն), բողոքական քարոզիչներն արդէն խմբած էին շատերու-միտքերը։ Մաթէոս պատրիարքն սկսած էր արդէն կրօնական վիճաբանութիւններ բողոքական քարոզիչներու հետ, բայց այն այս վիճաբանութիւններն արդէն երկուքն էին հալածանաց առիթ տուին։ Բողոքականութեան յարողներն վերջերեւելու վրայ էին եւ Մաթէոսի բռնած քաղաքականութեան ընթացքը խիստ

Ձեռնտու եղաւ բողոքական քարոզիչներու նպատակին, վասն զի հալածել՝ կը նշանակէ տարածել։ Ու ահա, այսպէս, մի կողմէն բողոքական քարոզիչներու հետամտութիւնը, միւս կողմէն Լուսաւորչականութեան ջատագովներու թեթեւամտութիւնը եւ միւս կողմէն Մատթէոս պատրիարքի անխոհեմ ընթացքն պատճառ կը լինին եւ մեր եղբայրներէն մի մասն կը հեռանայ մայրենի Եկեղեցւոյ ծոցէն եւ Լուսաւորչականութեան յարելով առանձին հաստատած կը կազմէ առանձին աղգային ընտրելով իւր հաւատը։ Այս նոր բաժանումն եւս սաստիկ կը վրդովէ Հայաստանեայց Եկեղեցւոյ խաղաղութիւնը, ինչպէս վրդոված էր արդէն Հռովմէական բաժանումն։

Ներսէսի մահէն յետոյ Ռուսաստանի Հայոց ողջամիտ մասն կը խորհի կաթողիկոսն Տաճկաստանէն ընտրել, որպէս զի առաւել ազատօրէն կարող լինի Հայաստանեայց իշխանութիւն վարել և այն քաղաքական դժուարութեանց առաջն առնուլ՝ որուն ենթարկուած էր կաթողիկոսական վարչութիւնը Ռուսական Կառավարութեան շնորհիւ։ Ընտրութիւնը Մատթէոսին կը վիճակի, որ արդէն հրաժարած էր պատրիարքութենէ։ Մատթէոս տակաւին ի Պոլիս, Ռուսիոյ անհաւանութիւնը կը յաղթէ,

ռեալական Հայոց պատմագրութենէն շահաւէ-տով. Մատենագրութիւն մի խմբագրել և տպագրա-գրել տալ, որպէս զի Մատթէոս Էջմիածնի երթալէն գիտի կատարէ։ Սակայն անշնորհք ազգայնոց խորամանկութեամբ այս մատենագրու-թիւն պատրաստուածը կը բացուի և կը խափանուի։

Մատթէոս կաթողիկոսն կ'ուղեւորի ՚ի Տփխիս և անտի Էջմիածին։ Ի սկզբան նորա յուսալից ընթացք կը բռնէ ազգային յա-ռաջադիմութեան նկատմամբ, յարգելով ժողովրդեան կամքը և զանազան քաղաքաց մէջ դպրոցական Կանոնագրութիւններ վա-ւերացնելով և Հոգաբարձութիւններ հաս-տատելով, Էջմիածնի Մատենադարանի կար-գաւորութեան համար փութաջան անձինք նշանակելով և մանաւանդ, որ աւելի մեծն է, Ռուսաց Տէրութենէն (1836) տրուած Կանո-նադրութեան տեղ՝ եկեղեցական վարչութեան Նոր Կանոնադրութիւն խմբագրել տալով բանիմաց Հայերու ձեռամբ և Տէրութեան մատու-ցանելով ՚ի հաստատութիւն։ Սակայն այս յուսալից ընթացքը երկար չը տեւեր, ա-ռաջարկած Կանոնադրութիւնն այլ եւս չը դառնար Տէրութենէն, ստորադաս եկեղե-ցականք և աշխարհականք ամենք կը յաջողին շատ դիւրութեամբ Մատթէոսի միտքը խոտո-րել և հեռ. ՚ի սկզբան յարգած սկզբունքէն

ներու դէմ ապստամբելով։ Պատրիարքները եւ ուսումնականաց ամենքին բարեկամ Մատ-թէոսն շարունակ հանդիսաւորապէս կը մերժէր, խաղաղասէր մնալով այդպէս ձեռքը։ Սահմանա-դրութենէ մերժուած երեսփոխանութեան թե-լադրութեամբ մի ահագին բողոքագիր կը պատրաստուէր Էջմիածնի մէջ 116 յօդուած յանցանքներ պարտաւորելով Մատթէոսի վե-րայ եւ յանուն Ներսէսի կ'ուղարկուէր զանա-զան բողոքներ, որպէս զի հաստատութեամբ Ներսէս կաթողիկոսն Նիկողայոսէն ձգուէր։ Բո-ղոքութեան, նշանակելով այս միաբանական իրա-ւունքներն դատողական շարժառիթներ։ (Թէ եւ Մատթէոսի թերութիւններն ձանձրացելով հան-դերձ) կ'անձնատրէր առաջ անմամուլներ դրկելով կաթողիկոսն ու Էջմիածնի Միաբանութիւնը իրարու հետ հաշտեցնել։ Հաշտութիւնը կը հաստատուէր, բայց Մատթէոս խօսքով գերի կը դառնայ անմիջ ձեռքը եւ կրկին իւր բուն պաշտպաններուն դէմ զինքը եւ Ռուսաց Տէրու-թեան ու Միաբանութեան կամակատար ծառայել կը-նայ։ Ասկէ որ մինչեւ անկարծ ձայն կը տարածուէր, որ Մատթէոս իմացած էր բաղ-ձայ կաթողիկոսութեան հրաժարագիրը եւ Տէրու-թեան թղթակից ամբաստանութեան կնիքը վերցնել մինչեւ իւր մահը, իւր պաշտօնը մի Տեղապահէ յանձնելով։ Այս ապարանքը թիւններն մինչեւ Պոլիս կը հասնէին եւ սահմանէն

ակել. կը բառնին կաթողիկոսականն. Ն.Թուայ ախուռ և տարբառամ վկՃակի բուրերն։ Սամաթեայի հրաժարմունք կը խափանուի, բայց այն անձինքն, որոնք մեքենայ բարեգործեր էին, խնամելով որ Սամաթեայ փոխախոսութեան ենթակայ անձն քննելով, անշուշտ օր մի այնտի վերբառնին իրենց դէմ զինքի, զանազան նախանձոր խորհուրդներ յղանալու կրթարանին, և աչնան յանկարծ (1865) Օգոստոս ամսոյն մէջ, Սամաթեայի մահուան գոյժը կը տարածուի։ Սամաթէոս կը վախճանի և ածապարանոց կը թաղուի իբրև ժամանակախօսահայր։

Նշմարանելի Ն.Թուայ ախուռ վկՃակին, որ արդէն Սամաթէոս կաթողիկոսի կենդանութեան վերջին տարւոյն մէջ գրուած էր ոչ միայն Իռուսաստանի, այլ և Տաճկաստանի ազգայնոց ուշադրութիւնը, առաւել ևս կը գրաւէ նորա մահէն զկնի։ Տաճկաստանի ազգայինք, որ արդէն (1860) Օսմանեան բարեխնամ Տէրութենէն Սահմանադրական Վարչութեան արտօնութիւններ ստացած էին և Իռուսաստանցիներէն աւելի ազատ էին կաթողիկոսական Ն.Թուայ վկՃակին վրայ խորհելու, Սամաթէոսի կենսէն զկնի իսկոյն ետանդուն կերպով կը սկսին հայրապետական խնդիրը յուզել։ Շուտով Սահմանադրական արտօնութեամբ Երեսփոխանականն Ընդհանուր Ժողով կը գումարուի, քննելի այնդանակ

և կաթողիկոսական վիճակի տարտամութեան պատճառը Ռուսաց Տէրութենէն (1836) տրուած Կանոնադրութեան մէջ անտեսելով՝ առանձին Ս. Ատենաժողովոյ կը յանձնուի, որ քննէ և Տեղեկագիր մատուցանէ Ընդհանուր Ժողովին։ Ս. Ատենաժողովը խիստ անաչառ կերպով կը կատարէ իւր պաշտօնը. Ռուսաց տուած Կանոնադրութեան վնասակար և Հայաստանեայց Եկեղեցւոյ անկախութեան և նախնականութեան դէմ եղած բոլոր կէտերն կը պարզէ և Տեղեկագրով կը մատուցանէ Ընդհանուր Ժողովին, որ երկար գիտութեան և խորհրդածութեան ենթարկուելէն զկնի՝ խոյսա կը հաստատուի Ռուսաց տուած Կանոնադրութեան վնասակարութիւնն և բոլոր ժողովականաց հաւանութեամբ կը վճռուի, որ նոյն Կանոնադրութիւնը բոլորովին բարձուի և նորա տեղ (եթէ անհրաժեշտ հարկ կայ) ընդհանուր Ազգի գիտակցութեամբ ըստ վարչական նոր Կանոնադրութիւն խմբագրուի Հայաստանեայց Եկեղեցւոյ Տեսչութեան համար։ Մոռացանք ասել, որ Սսոյ և Աղթամարայ աթոռներն ևս այն ժամանակ խիստ աղէտալի վիճակի մէջ լինելով, նոյն Աթոռներն ևս խորհրդածութեան առարկայ կը դառնան Ընդհանուր Ժողովի և կաթողիկոսական Ս. Ատենաժողովի համար. և կը խորհուի,

որ Աղթամարն ու Սիսն եւս բարեկարգու-թեան և օրինաւորութեան վերադառնային Էջ-միածնի Աթոռոյն հետ միութեան։

Այս ազգային շարժումներուն կը յաջորդ-դէին կաթողիկոսական ընտրութեան խոր-հուրդներն, այն է Ազգը կ'որոշէ Էջմիածնի Թափուր Աթոռոյն և Սսոյ ու Աղթամարայ Աթոռոց (որոց ներկայ կաթողիկոսներն ինքն-ընտիր և ապօրինաւոր դատուած էին) հա-մար կաթողիկոսներ ընտրել, և ապա Ազգի ընտրելոց հաստատութեամբ Հայաստանեայց Եկեղեցւոյ Սահմանութեան միջնակը ապահո-վել, յատուկ Կանոնագրութիւն խմբագրե-լով և ամբողջութեան ու համընթացութեան դրութիւնը զօրացնելով։ Ժողովներ կը գումարին ընտրութեան համար և երեք Ա-թոռոց ընտրելիներն կ'որոշուին։ Սսոյ և Աղթամարայ ընտրութիւններն տարաձայնու-թեան մէջ կը մնան (1)․ իսկ Էջմիածնի համար կ'ընտրուի Տ․ Տ․, Գէորգ Պօլսեցի եւ Տաճկաստանի քուէից առաւելութեամբ սպաս-

(1) Յետ ժամանակաց (1871) Կիլիկիոյ Հայ ժողովրդեան և Տաճկաստանի Ազգային Իշխանութեան Ժողովոյ քուէ-արկութեամբ ու վաւերացմամբ Սսոյ կաթողիկոս կ'ընտրուի Տ․ Տ․ Մկրտիչ Մարաշցի։ Սակայն ներկայ պատմական երկպառակութիւնն 1868ին շարադրած լինելով և 1867 Թուականն ժամանակագրական եղելութեան անհնարով՝ բարւոք գտանեցինք անփոփոփոխ հրատարակել, առանց յաւելուլ քանի մի տարիներու դէպքերն յիշատակելու։

ծառաւ Կ՚ընդունուի նաև Սուրբ Աստուածածնի մէջ։ Մինչդեռ Ըշգը էր խորհի, համբաւաւոր կաթողիկոսի ներկայութեամբ, եկեղեցական Մ արչութեան, Մուրոյ տուած Պալատէնեայի մերժման և նոր վարչական Կանոնադրութեան առաջոյն խմբագրութեան մասին յուզուած խնդիրներուն վախճանական որոշումն տալ, Տ. Տ. Գէորգ (1867) համբաւաւոր Կաթողիկոսն կ՚ուղեւորէր յԷջմիածին և ամէն խնդիր կը մնայ անկատար։

Սակայն մենք, որ կը հաւատանք և կը խոստովանինք, որ ճշմարիտ իրաւունքը մահ չունի և հայկական ներկայ սերունդը կարող չէ անտարբեր աչօք նայիլ իւր բազմադարեան և բազմաչարչար Մօր վիճակին վրայ, յուսով ենք որ մեր Եկեղեցւոյ իրաւանց պաշտպանութիւնը, յարատեւութիւնը և քրիստոնէական բազմադարեան պայծառութիւնը պիտի մնայ իբրև առաջին նուիրական պարտք թէ ներկայ և թէ ապագայ սերունդքին համար, և որ կաթողիկոսն որ աղօթէ այս համբաշխ գործոյ արդիւնաւորութեան համար, դարուց ՚ի դարս օրհնութեամբ պիտի յիշուի իւր անունն ու յիշատակն։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.

Համառօտ ակնարկ ԺԸ. և ԺԹ. դարուց մատենագրական վիճակի վրայ. — Մատենագիրք։

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ դարու վերջերէն և ԺԹ դարու սկզբէն մի մասնաւոր վերակենդանութիւն՝ նշմարելի կը լինի հայկական մատենագրութեան մէջ՝ աշխարհական պատմագրութեան սկզբնաւորութիւնն. և նորանոր դպրոցաց հաստատութիւնն պատճառ կը լինին մտաւորական զարթմութեան։ Մէկ կողմէն Մխիթարեան Միաբանութիւնն. և միւս կողմէն Եւրոպական լուսէն շահուած ազգային բանագէտներ հետամուտ կը լինին թարգմանութեանց և ինչ ինչ օգտակար հեղինակութեանց։ Սակայն այս շարժման մէջ առաւել նշմարելի է աշխարհային քան թէ եկեղեցական մատենագրութեան յառաջադիմութիւնն։ Մխիթարեան միաբանից երկասիրութեանց վրայ խօսիլն անդէպ կը համարինք. փոխան զի նոցա կրօնական կամ եկե-

ղեցական գրուածներն առ հասարակ արա-պական ոճով խառնուած ու մեծ մասամբ թշնամանք են մեր Եկեղեցւոյն դէմ, և հե-տեւաբար մեր կողմէն սառն արհամարհա-նաց արժանի քան թէ հետազօտութեան . Իսկ աշխարհային կամ գիտնական գրուածոց և թարգմանութեանց նկատողութիւնը մեր նպատակէն դուրս է . վասն զի մեր մտադ-րութիւնը գրաւողը գլխաւորապէս եկեղե-ցական գրուածքներն են ։ Մեր բուն ազգա-յին հեղինակաց երկասիրութեանց աշխար-հային և գիտնական մասերու հետազօտու-թիւնը կը թողունք ազգային պատմական մատենագրութեան և միայն համառօտիւ կը նկատենք եկեղեցական մատենագիրներն , որոց մէջ նշանաւոր են . —

ՀԱՆՆԱ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑԻ , որ գրած է իւր ժամանակակից անցից պատմութիւնը , մա-նաւանդ Երուսաղէմի պատրիարքութեան և Սուրբ Տեղեաց դէպքերն , սահմանափակ տեսութեամբ ։

ՅԱԿՈԲ ՆԱԼԵԱՆ , որ երկասիրած է 20-24 հատոր գրուածքներ , յորոց տպագրուած են Զէն հոգեւոր , Վէմ հաւատոյ , Մեկնութիւն Նա-րեկի , Գանձարան ծանուցմանց , և պատմեն իւր ժամանակին յուզուած էին [illegible]

Հայոց վէճերն, դաւանաբանական իւր երկա-սիրութիւնները պաշտպանողական են եւ յարձակողական ։

ՊԵՏՐՈՍ ՂԱՓԱՆՑԻ, որ երկասիրած է խիստ սրտաշարժ տաղեր եւ տաղաչափական հատուածներ, որոց մէջ կը փայլի բանաստեղծական մաքուր զգացմունքներ, թէ կրօնական եւ թէ հայրենասիրական ։

ՍԻՄԷՈՆ ԵՐԵՒԱՆՑԻ, որ Տօնացոյցն ու Մաշտոցն կանոնաւորած է, ինչ ինչ խրատական գրուածոց երկասիրութեամբ հանդերձ ։

ՊԵՏՐՈՍ ԲԵՐԴՈՒՄԵԱՆ, որ աստուածաբանական քաղուածոյք շարադրած է ։

ՄԻՔԱՅԷԼ ՍԱԼԼԱՆԹԵԱՆ, որ հռոմէադաւանութենէ դառնալով երկասիրած է Կրօնագիտութիւն եւ քանի մի հատուածներ ընդդէմ հռոմէականաց, թողունք իւր քերականութիւնն, ճարտասանութիւնն եւ տրամաբանութիւնն ։

ՊՕՂՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ Անդրիանուպօլսեցի, երկասիրած է Թանգարան իւրայ եւ Տետրակին

Ս. Գրոց, որոց մէջ յայտնապէս կ'երեւի իւր հմտութիւնը բաղդատական եւ կրօնական ուս- մանց մէջ.

ԳՐԻԳՈՐ ՓԵՇՏԵՄԱԼՃԵԱՆ, երկասիրած է, ի միջի այլոց, Լուսաւորչի Վէմը, որ մեկնու- թիւն է Հաւատոյ Հանգանակին.

ՆԵՐՍԷՍ Ե. ԱՇՏԱՐԱԿԵՑԻ, իւր 14 ամեայ կաթողիկոսութեան մէջ անընդհատ գրած է զանազան թղթեր առ վիճակաւորսն, առ- ազգայինսն եւ առ Ռուսիոյ Տէրութիւնն, որոց տպագրութիւնն խիստ մեծ լոյս կարող է տարածել իւր գործառնութեան եւ նոյն ժամանակեայ անցից վրայ.

ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ, որ շարադրած է մօտ 12 կտոր երկասիրութիւններ, որոց գլխ- խաւորներն են.– Հանդէս ուղղափառութեան Հայ- աստանեայց Եկեղեցւոյ. Բանք ճարտ եւ Քարոզ [illegible] նեայ: Մատթէոս մեծ հմտութեան տէր չըլ- լալով՝ իւր գրուածներն մեծաւ մասամբ ժողովածոյք են համանման իմաստներով՝. Մատթէոսի գրուածոց մէջ խիստ շատ հա- կասութիւններ կան, որ անհմտութեան նշ- շան է եւ մանաւանդ որ կամելով Հայաստա- նեայց Եկեղեցին պաշտպանել Բողոքական- նութեան դէմ՝ [illegible]

տարբեր խառնուած է Պատմականութեան մէջ :

ԱՐՍԱՊԵՏ Վ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ, միաբան Ս. Էջմիածնի Սինոդի գրասենեակ մէջ նշանաւոր են Հերթական բազմաթիւ [illegible] և Օրագիր [illegible] Հայոց [illegible] Կ. Պ. Համառօտ [illegible] մեծ ծառայութիւն մատուցած է Աշխարհագրութիւն Հայոց քաղաքներ մեր պատմական կոտեներին, Հանդերձ գիտնական ծանօթութեամբք :

Այնէն մեր նախորդաց [illegible] չը [illegible] մի մի չիշատակել նեղիկց դարու մէջ և ընեղած եկեղեցականութիւնները և օրագրութեանց մէջ հրատարակուած նշանաւոր յօդուածներին, այնուհետ տեւանւ էր յայտնապէս որ ժամանակի գաղդ [illegible] յառաջ գնացած է աշխարհաբարականով քան թէ եկեղեցականաց մէջ, միանգամայն Նախնին դարուց ժամանակագրութիւնները մեծ մասամբ եկեղեցականք էին : Այնէն մի կարգեն տուրգարի է եկեղեցականաց ժամանակագրական յառաջադիմութիւնը, մին ալ կարգեն խուսափողականն է ժողովրդի դասին չափահասութիւն, որ և թէ յայտարարուէ, անի չուչու այնուհետ յառաջ բերին եւ ընտրեր եկեղեցականներու, որոց կարօտութիւնը արդէն զգալի եղած է ոչ միայն աշխարհականաց, այլ և եկեղեցականաց դպրոցին մէջ :

ԱՄՓՈՓՈՒՄՆ

Մեր եկեղեցական պատմութեան բազմադարեան ընթացքին մէջ տեսանք ակներեւ, որ մեր Եկեղեցին շարունակ հալածանաց մէջ գտնուած է, թէ հեթանոս և թէ քրիստոնեայ ազգաց կողմէն, և հալածանքը քրիստոնէական Եկեղեցւոյ դրօշմն է։ Տեսանք հալածանքներ Պարսից կողմէն, հալածանքներ Հագարացւոց կողմէն, հալածանքներ Յունաց և Լատինաց կողմէն, հալածանքներ Բողոքականաց կողմէն, և սակայն այն եւս տեսանք որ այս ամէն հալածանքներուն առարկայ մեր Եկեղեցին։ Պարսկական և Հագարական հալածանքներուն մէջ զոհուեցան անթիւ նահատակներ ու մարտիրոսներ, իսկ Յունական, Լատինական և Բողոքական հետամտութիւններուն որս եղան քանի մը ազգային հատուածներ. և սակայն Հայաստանեայց Եկեղեցին միշտ կանգուն մնաց, և այս մի պատմական հաստատուն ապացոյց է, որ իւր դաւանանքը երկնային Ճշմարտութիւն է. որովհետեւ սուտ դրութիւն մի կամ դաւանանք կարող չէ երբէք երկար տեւել, մանաւանդ անընդհատ հալածանաց մէջ։ Տեսանք որ թէեւ քանի մի կաթողի-

կրօնական մասնաւոր աթոռներ վեր երևա-ցին Ազգին մէջ, այն է Աղթամար, ի Սիս և վերջին ժամանակներս ի Գանձասար (1), սակայն Ընդհանուր Հայրապետութիւնը միշտ նուիրական մնաց ընդհանուր Ազգին համար ։ Այս մասնաւորներն Ազգի վտա-րանդութենէն և ժամանակի պատահական դէպքերէն ծնունդ առին և ոչ երբէք ազ-գային երկպառակութենէ կամ կրօնական տարբերութենէ ։ Վասն զի ժողովուրդը միշտ նոյն մնաց իւր Եկեղեցւոյ դաւանու-թեան նկատմամբ ։ Տեսանք, որ մեր Եկե-

(1) Գանձասարայ կաթողիկոսութեան վրայ մենք մասնա-ւորապէս չը խօսեցանք մեր պատմական ընթացքին մէջ, ո-րովհետև, իբրև ընծիւղ Աղուանից կաթողիկոսութեան, Սիւնեաց մետրապօլիտներն, որոնք սկսան Գանձասար նստիլ, Աղուանից կաթողիկոս կ'անուանէին և սակայն իրենց իշխա-նութիւնը դարձեալ մետրապօլիտական կամ արքեպիսկոպոսա-կան էր ։ Սսոյ և Աղթամարայ կաթողիկոսութեանց և Երու-սաղէմի ու Պոլսոյ պատրիարքութեանց վրայ ետև այնչափ խօսեցանք, որչափ մեր ընդհանուր նիւթի հետ ունեցած կապակցութիւնը կը ներէր, իսկ մասնաւոր խօսիլը անդէպ համարեցինք, պատճառաւ չուզեցինք Եկեղեցւոյ ընդհանուր պատմութիւնը մասնաւոր աթոռներու պատմութեան վերածելու։ Մեր նպատակն էր եկեղեցական պատմութեան մէջ առաւել նոյն իսկ Եկեղեցւոյ կամ ժողովրդի կեանքը պատկերացնել, և եթէ ընդհանուր կաթողիկոսաց յաջորդական կարգը ան-ընդհատ պահպանեցինք, այն ևս ուրիշ նպատակաւ չէր, եթէ ոչ կաթողիկոսաց յիշատակութեամբ նոցա ժամանա-կակից անցքերն յիշատակել և անոնց դիւրութիւն տալ գտա-[illegible] ։

ընդայց ներքին կեանքին այն ժամանակուան միայն ակնարկ մը ըրած էի, երբ Լատինական և Յունական քաղաքականութիւններուն մասին. գործերէն Ազգին մէջ և գաւառականութեան հակառակութիւններ ունեցան անձնեցան. երբ Հայոց առաջնորդներուն հակառակութեանց դէմ հակառակութեամբ պատասխանեցին. Տեսանք պառակտութեան մէջ, որ գլխաւորաբար այն կաթողիկոսներուն թերի գործունէութեան կերեւ պատրաստութեանց մէջ, որոնք առանց ազգային գիտակցութեան կամ համաձայնութեան մ'Թոռ բարձրացան. Այս ամենը տեսնելէն զկնի՝ կը մնայ մեզ այժմ համառօտիւ պատկերացնել, թէ ինչ կը պահանջէ մեր Ազգի և Եկեղեցւոյ օգուտը ներկայիս մէջ։

Մեր Ազգի և Եկեղեցւոյ օգուտը կը պահանջէ որ աշխարհականք և եկեղեցականք միասին գործեն. վասն զի այս է մեր Եկեղեցւոյ բուն ոգին և առաքելական բազմադարեան յատկանիշը. և այս հոգին է որով կարողացած է ատեն հալածանաց և բռնութեանց և ուրախութեամբ կրել իւր խաչը ալէկոծեալ Հայրենեաց և Պանդխտութեան մէջ։

Մեր Ազգի և Եկեղեցւոյ օգուտը կը պահանջէ այնպիսի դրութեան մէջ դնել մեր Ընդհանուր Հայրապետութեան միաձայնքը, որ

[illegible] որ Տէրութեան հպատակութենէ ա-
զատ և անկախ ըլլալով կառավարուելու այն ատեն
Տէրութեանց պաշտպանութիւնը վայելել,
որոց հովանաւորութեան տակ հաստատուած
կը գտնուի մեր Ազգն. վասն զի առանց այս
ընդհանուր իրաւանց կարող չէ երբեք ընդ-
հանուր կրօնական միութեան կեդրոն ըլլալ
բոլոր Ազգին համար և ընդհանուր կաթո-
ղիկոսութեան կոչումն ալ վերացականու-
թիւն կը մնայ և ոչ իրականութիւն։

Մեր Ազգի և Եկեղեցւոյ օգուտը կը
պահանջէ Աղթամարայ և մանաւանդ Սսոյ
կաթողիկոսութիւնն այնչափ պահպանել,
մինչեւ որ Էջմիածնի կաթողիկոսութիւնն
իւր նախնական ազատ և անկախ վիճակն ու-
նենայ և իւր ընդհանուր կոչման համեմատ
կարող ըլլի գործել։ Վասն զի Աղթամարայ
և Սսոյ Աթոռոց գոյութիւնք ամենեւին
վնասակար չէ ազգային միութեան, քանի
որ Ազգը 'ի հոգեւորս միշտ անխռովաբար կը
պահպանէ իւր միութիւնը, և նոյն աթոռոց
գոյութիւնը լոկ քաղաքական պարագանե-
րու վրայ կայացած է։

Մեր Ազգի և Եկեղեցւոյ օգուտը կը
պահանջէ սոսկ մակերպութիւններէ իս-
պառ հեռու կենալ, իւր զուտ ազգային եկե-
ղեցական դաւանութիւնն ու աւանդու-
թիւններն անխախտ և անբռնաբարելի պահ-

տալնել, միշտ սէր և համակրութիւն ցոյց տալ մեր հաստատուածեալ հաւատքնական և քաղաքական եղբայրներուն, որպէս զի վերստին գտնեն իրենց մայրենի Եկեղեցւոյ ծոցը. վասն զի մեր Եկեղեցին, մեր քաղաքական ինքնօրէնութեան անկումէն և հայրենական միութեան խախտումէն 'ի վեր, տեսակ մի նուիրական Հայրենիք դարձած է մեզ համար. և հետեւապէս մեր ազգային կրօնական ընդհանուր միութիւնը խիստ նպաստաւոր է նոյն իսկ մեր ազգայնութեան յարատեւութեանն ու յառաջադիմութեանը: Մեր ազգային հաստատութիւնները երբէք չը պէտի կարենան խոր արմատ բռնել պապականութեան և բողոքականութեան հողոյն վրայ. Նոքա երբ և իցէ պիտի հակամիտին գտնել. ուստի մեզ կը վայելէ սկիզբն նոցա դարձը աճապարեցնել:

Մեր Ազգի և Եկեղեցւոյ օգուտը կը պահանջէ օրինաւոր դպրոցները բազմացնել ամեն քաղաքներու և գիւղերու մէջ և քրիստոնէական լոյս և գիտութիւն ծաւալել ժողովրդի մէջ, որպէս զի պատրաստուին և իրաւանց ուսման մէջ վարժին, յառաջադէմ ազգաց մէջ օրինաւոր տեղ գրաւեն, որով և ազատ լինին օտար յարձակումներէ, թէ՛ լոկ քաղաքականին և թէ՛ լոկ կրօնականին:

Մեր Ազգի և Եկեղեցւոյ օգուտը կը պա-

հանջէ միշտ պահպանել իւր առաքելական սովորութիւնը կաթողիկոսի ընտրութեան մասին, այն է միշտ ազգովին ընտրել ընդհանուր կաթողիկոսը և ընդհանուր Ազգի առջև պատասխանատու կացուցանել։ Վասն զի ինչպէս ազգովին ընտրութիւնը, նոյնպէս և կաթողիկոսի պատասխանատուութիւնը հայրապետական վարչութեան անհրաժեշտ պայմաններէն մին եղած է Հայաստանեայց Եկեղեցւոյ հիմնադրութեան օրէն ՚ի վեր։

Այսպէս ուրեմն, այս համառօտ ամփոփումով կնքելով մեր ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, կը խնդրենք վերին Նախախնամութենէն, որ անխախտ և անսասան պահէ մեր Եկեղեցին մինչեւ ՚ի կատարած աշխարհի, ինչպէս պահպանած է երկար դարերէն ՚ի վեր, ՚ի փառս անուան իւրոյ և ՚ի շինութիւն իւրոց ճշմարիտ երկրպագուաց։



ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Բ.

Գ.

Դ.

Ե.

Զ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ.

Դ.

Ե.

Զ.

ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Քրիստոնէութեան դիմամարտութեանց մազդակրօնութեան դէմ մինչեւ Մահմետականութեան եւ՝ Յունական աններողամտութեան հալածանքները։

450—640

Ա.

Դ.

Ե.

Զ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.

Բ.

ՉՈՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Յունականութենէ եւ Մահմետականութենէ կրած հալածանքներէն մինչեւ կաթողիկոսական Աթոռոյ փոխադրութեան եւ բաժանման ներքին յուզումներն։

640–1080

Ա.

Բ.

և Սիօն. — Ժողով 'ի Պարտաւ Աղուանից. — Եզայի կաթողիկոս. — Նահատակութիւն Արծրունի իշխանացն Համազասպայ և Սահակայ. — Բողոք առ Ամիրապետն. — կաթողիկոսունք՝ Ստեփաննոս Ա. Յովաբ, Սողոմոն. Գէորգ Հոյլորբուկ. Յովսէփ Բ. և տառապանք իւր. — կաթողիկոսունք՝ Դաւիթ Բ. Յովհաննէս Ովայեցի. — Տառապանք Եկեղեցւոյն և Ազգին 'ի Բուղայ Թուրքկանէ. — Նահատակութիւնք. — Ստեփաննոս կոն. Սմբատ Խոստովանող. — կաթողիկոսութիւն Զաքարիայի Կոտայեցւոյ. 310

Գ.

Դարձ գերեալ նախարարաց. — Թղթակցութիւնք Զաքարիա կաթողիկոսի Հայոց և Փոտ պատրիարքի Յունաց. — Ժողով 'ի Շիրակաւան. — կաթողիկոսութիւն Գէորգայ Գառնեցւոյ և թագաւորութիւն Աշոտոյ. — Ակնարկ Բագրատունի թագաւորութեան վերայ. — Գէորգ կաթողիկոս իբրև հաշտարար. — կալանաւորութիւն նորա. — Մաշտոց Բ Եղիվարդեցի. — Յովհաննէս Դրասխանակերտցի. — կալանաւորութիւն նորա Յուսուփ ոստիկանէն. — Հալածանք և տառապանք 'ի Յուսուփայ. — Նահատակութիւն Սմբատայ խոստովանողի. — Պաշտպանութիւն Եկեղեցւոյ և կալանաւորութիւն Հայ աբեղանց. — Բարբարոսութիւնք Յուսուփայ և քրիստոնէական վկայութիւն քաջաց. — Տօն Նահատակաց. 323

Դ.

Սով 'ի Հայաստան. — Թուղթ մխիթարանաց 'ի Նիկողայոս պատրիարքէն Յունաց. — Թուղթ Յովհաննէս կաթողիկոսին առ կայսրն Յունաց. — Ներքին խռովութիւնք և երեք թագաւորք 'ի Հայաստան. — Վերջ ոստիկան և կաթողիկոսն Յովհաննէս. — Նահատակութիւնք և գերութիւնք. — Գրաւումն կաթողիկոսարանին Դունայ. — կաթողիկոսունք՝ Ստեփաննոս Բ և Թէոդորոս Ա. — Թագաւորութիւն Աբասայ և շինութիւն վանօրէից. — Կենցաղ վանականաց. — Եղիշէ կամ Եղի-

Ե.

Զ.

Է.

Ը.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.

Բ.

Դ.

Ե.

Զ.

Է.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.

Բ.

Գ.

ՎԵՑԵՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Հայրապետական Աթոռոյ փոխադրութենէն յԷջմիածին մինչև 'ի բաժանումն Լատինահայոց 'ի ծոցոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ ։

1441—1700

Ա.

Բ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՇՐՋԱՆ
1700—1867

ցական կանոնադրութիւն Ռուսիոյ տէրութենէն խմբագրուած և տրուած. — Կաթողիկոսութիւն Ներսէսի. — Պատրիարքութիւն Մատթէոսի և հաստատուած Բողոքականութեան. — Կաթողիկոսութիւն Մատթէոսի. — Ազգային շարժումն ՚ի պաշտպանութիւն իրաւանց Հայաստանեայց Եկեղեցւոյ. — Ընտրութիւն Գէորգայ Պոլսեցւոյ. — Շփոթ վիճակ Սսոյ և Աղթամարայ Աթոռոց.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.

Հարեւանցի ակնարկ ԺԸ և ԺԹ դարուց մատենագրական վիճակի վրայ. — Մատենագիրք։

ԱՄՓՈՓՈՒՄՆ



